831.54
Ջ-54

ԱՐԾԱԿԱՐՄԻՐ

ԱՆԱՀԻՏ ԴԵՎԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Երևան 1977
Գրական հանրամատչելի
գրական հանրագիր

Ար–2
Ա–84

Պատմվեպ Արշակ Երկրորդ թագավորի տիրապետության շրջանի մասին, երբ վճռվում էր հայկական ամուր պետականությունը պահպանելու կենսական հարցը:

ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека ЕГУ
186723
2502932707

Ա $\frac{70808\ (225)}{705(01)77}$ —227—77 (Տ)

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1977



ԱՌԱՋԻՆ

Գլուխ առաջին

Ներսեսը քանդեց լայն գոտին, որ կապված էր մեջքի կողմից, ապա հանեց անթնդան և բազմախորշ պատմուճանը, ու վրան մնաց միայն հովազի մի կարճ մորթի, որ մեջքից իջնում էր մինչև ազդրերի կեսը։ Հետո օծվեց յուղով, որպեսզի մարմինը լպրծուն լինի, և հակառակորդը չկարողանա նրան բռնել։ Ցուղը նաև աներկյուղ էր դարձնում գիրկընդխառն կռվի մասնակիցներին, որովհետև նրա մեջ զորացուցիչ բնություն կար։ Այս սովորական արարողությունը կատարելուց հետո նա մտավ ասպարեզ, որը գետնից կես ոտնաչափ բարձրությամբ գորգապատ մի պատվանդան էր, ընդարձակ սրահի կենտրոնում։

Միշտ, երբ Ներսեսը ասպարեզ էր ելնում, լռություն էր տիրում դահլիճում, կատակներն ու սրախոսությունները միանգամից կտրվում էին, և բոլորը, շունչները պահած,

ակամա այլայլված. հետևում էին մրցմանը։ Ու թեև ամենքն էլ անխտիր սիրում էին Ներսեսին, բայց ոչ ոք չէր ուզում ասպարեզ ելնել նրա հետ մրցելու, որովհետև զվարճությունը նա դարձնում էր գործ, նենգափոխում խաղի իմաստը ու վերածում մահու և կենաց հարցի։

Ներսեսը թեքվեց գեպի ախոյանը, մի ձևոքով բռնեց նրա բազուկը, իսկ մյուսը ամուր դրեց նրա վզին։ Հենց այդ պահին նա զգաց դիմացինի տաք շունչը, օտար հոտը խփեց քթին և, արյան համ առած գազանի նման, լարվեց, գրգռվեց ու չարացավ։ Նա միշտ ատելությամբ էր լցվում ախոյանի հանդեպ, ով էլ նա լիներ, անգամ իր ամենամտերիմ ընկերը. աչքերը վառվում էին թունոտ ոխակալությամբ, ոռնդները թեթևակի դողում էին ու լայնանում, և հաղթելու սուր տենչը դառնում էր մի անասելի ծարավ, որը եթե չհագենար, տեղնուտեղը կխեղդեր նրան։ Եվ այդ ժամանակ ախոյանի թկկուզև գերազանցող ուժն ու ճարպկությունը դառնում էին անկարևոր, կորցնում իրենց առավելությունը, ու մրցման բնական օրենքներին փոխարինում էր հաղթելու շատ հասարակ և շատ տարրական ցանկությունը։

Ախոյանը ճիգեր էր գործադրում և ջանում էր թիկունքը վեր պահել գետնից։ Երբ դա նրան հրաշքով հաջողվեց, ու նա էլի կանգնեց ոտքերի վրա, նրանց բազուկները խառնվեցին իրար և սկսեցին քաշել միմյանց։ Երկու քրտնած, կատաղած, յուղից փայլող հոգնած մարմիններ, որոնք ոչ թե գեղեցկություն էին ցուցադրում, այլ ծանր ու տաժանակիր աշխատանք, հուսահատ մոլեգնությամբ թպրտում էին նախշավոր գորգի վրա և անզուսպ մոնչում։

— Ուրեմն, դու հրաժարվո՞ւմ ես կատարել իմ հրամանը,— հանկարծ լսվեց սաստիկ զայրացած մի ձայն,— և դո՞ւ համարձակվում ես հրաժարումդ ի ցո՞ւց դնել բոլորին։ Ինձ հակառակվելու համա՞ր ես կատարելագործում զինվորական արվեստդ։

Արքան էր, որ իր թիկնապահների ու սենեկապետ Դրաստամատի ուղեկցությամբ մտել էր պալատին կից այս միհարկանի շինությունը, բայց մթնոլորտն այնտեղ այնքան

թեմ էր ու շիկացած, որ մնացել էր անկատ։ Հեռվից մի փոքր հետևել էր գիրկընդխառն կռվին, հիացել Ներսեսով, և դա առավել մեծ զայրույթ էր պատճառել նրան։

— Ինձ հայտնեցին քո որոշումը, արքա,— անակնկալի եկած, բոլորի հետ միասին ծնկի չոքեց Ներսեսը,— բայց, ներիր իմ հանդգնությունը, դու իմ կարծիքը երբեք չես հարցրել։

— Այս երկրում միայն մի հոգու է իրավունք շնորհված կարծիք ունենալու,— էլ ավելի կատաղեց արքան։— Եվ իմ կամքն այն է, որ դո՛ւ դառնաս ամենայն հայոց կաթողիկոս։

— Ես զինվոր եմ, արքա,— արժանապատվությամբ պատասխանեց Ներսեսը։— Ես իմ հավատարմությունը հաճախ եմ ապացուցել։ Ուրեմն, իմ հավատարմությո՞ւնն է պատճառը, որ արժանանում եմ այդ պատժին։ Ուրեմն, պետք է զղջա՞մ հավատարմությանս համար։

— Զինվորի դերը հեշտ է, սենեկապետ։ Ես այդ դերի համար շատ մարդիկ ունեմ։ Իսկական երջանկությունն այն է, որ մարդ մի հոգու դեր կատարի։ Անփոխարինելի դեր։ Ես քեզ տալիս եմ այդ հնարավորությունը։ Էլ ի՞նչ ես ուզում։

— Չեմ ուզում անփոխարինելի լինել։ Վախենում եմ, արքա։

— Իսկ ես չե՞մ վախենում,— թեթևակի քմծիծաղ տվեց արքան և ձեռքը թափթփացրեց Ներսեսի ուսին։— Չէ՞ որ իմ դերն էլ է անփոխարինելի։ Սրանից հետո մենք միասին կվախենանք։ Ոչ դու մենակ կլինես, ոչ էլ ես։

— Քեզ համար դա երևի հաճելի վախ է, արքա։ Ինձ համար՝ անծանոթ ու նողկալի։ Մենք չենք կարող միասին լինել։

— Վերջին խո՛սքդ,— անհամբեր և կոպիտ ասաց արքան։

— Ես մնում եմ քո զինվորն ու սենեկապետը։

— Կապե՛լ դրան,— արքան գազազած հրամայեց իր թիկնապահներին։

Թիկնապահները թափվեցին Ներսեսի վրա, ոլորեցին

թևերը և ամուր կապեցին։ Ներսեսն այնքան ապշած էր անակնկալից, որ փորձ էլ չարեց դիմադրելու։ Ամեն ինչ այնքան արագ կատարվեց և այնքան անսպասելի, որ նա մի պահ կորցրեց մտածելու ընդունակությունը։ Մնաց միայն բնազդը։ Հիմա նա կարող էր միայն վախենալ, մրսել, շոգել, քաղց զգալ... Բութ հայացքով նայում էր շուրջը, տեսնում մարդկանց, որոնք թեև կարծես ծանոթ էին իրեն, բայց հիմա միայն բարձրահասակ էին կամ ցածրահասակ, գեր կամ նիհար, բարեկամ կամ թշնամի, վտանգ էին սպառնում կամ չէին սպառնում...

— Բայց ես շատ մեղքեր ունեմ, արքա,— հանկարծ անհանգստացավ Ներսեսը և զարմացավ, թե արքան ինչպես գլխի չի քնկել այդ։— Եթե իմանայիր իմ մեղքերի չափն ու մեծությունը... էլ ինչպե՞ս կարող եմ ես հավիվ դառնալ... Տեսնո՞ւմ ես, իմ մեղքերը պաշտպան են ինձ... Դրանք էլ հո չե՞ս կարող խլել ինձնից...— Անհանգստությունը հետզհետե վերածվեց ուրախության, և նա որոշակի գերազանցություն զգաց իր տիրոջ հանդեպ։— Մեղքերի քաղցրությունը... Ի՞նչ երանություն է հիշել, արքա... Ստորություն... Վախ... Դավաճանություն... Դաժանություն... Խաբեություն... Դու ինձ ստիպեցիր ոչ թե խորշել այդ ամենից, այլ կարոտել... Այ, հենց հիմա ես կարոտում եմ...

— Վառե՛լ շորերը։ Մինչև վերջին կտորը։

Ներսեսը նոր նկատեց, որ թիկնապահներն իրենց հետ բերել էին իր բոլոր զգեստները։ Դցել էին իրար վրա ու կապոց սարքել։ Նա տեսավ նաև իր պոզպատյա սուրը՝ ոսկի պատյանով, ականակուռ, մաքգարտազարդ գոտին, որոնք, ավարի պես, դրեցին արքայի ոտքերի առջև։ Երկու թիկնապահ զգեստների կապոցը դուրս տարան վառելու, որպեսզի անցյալից ոչ մի հուշ չմնա։ Ներսեսին թվաց, թե անցյալն իրոք այսքան առարկայական է ու շոշափելի, թե իր կյանքի բոլոր մեծ ու փոքր դեպքերը, բոլոր հույզերը, ուրախություններն ու տխրությունները, ամոթալին ու հպարտության արժանին, երազներն ու սպասելիքները հավաքեցին մի կապոցի մեջ, վերցրին զինվորի կոշտ ձեռքերով ու տարան վա-

ռելու։ Ահա ուր որ է ծուխը կբարձրանա, կցնդի օդում ու ոչինչ չի մնա։ Նա նոր գլխի ընկավ, որ երբեք առիթ չի ունեցել տեսնելու, թե ինչ է մնում այրված զգեստներից։ Ի՞նչ է մնացորդի անունը։ Ի՞նչ հոտ է արձակում։ Ի՞նչ անուն ուներ, ի՞նչ հոտ ուներ, ի՞նչ արժեր իր անցյալը։ Հանկարծ նա հիշեց անթեզան և բաղմախորշ պատմուճանը, հիշեց լայն գոտին, որ մենամարտից առաջ հանել էր վրայից։ Մի անասելի ուրախություն հորդեց նրա սրտից, մի լուսավոր և պայծառ հույս, որ գուցե չնկատեն դրանք, և անցյալից գոնե ինչ-որ պատառ մնա իրեն։ Բայց նկատեցին։ Տարան ու վառեցին։ Ներսեսի կոկորդը սեղմվեց, և արցունքներն անձայն թափվեցին այտերից։ Դահլիճի կենտրոնում, արքայի առջև, կանգնած էր կիսամերկ մի մարդ՝ մեջքից մինչև ազդրերի կեսը հովազի մորթիով ծածկված։ Շփոթված ու անօգնական մի մարդ, որ չգիտեր, թե հիմա ով է ինքը։

— Դուք բոլորդ անօրեն եք ու պիղծ,— հուսահատ գոռաց նա։— Ես չեմ կարող ձեզ հովիվ լինել ու ձեր մեղքերն ինձ վրա վերցնել։ Եթե վերցնեմ, դուք է՛լ ավելի մեծ չարիքներ կգործեք։ Ուրեմն ի՞նչ, բոլորը վայելեն մեղք գործելու հաճույքը, իսկ ես զրկվե՞մ։ Միակ զրկվա՞ծը լինեմ։

— Կտրե՛լ վարսերը։

Թիկնապահներից մեկն արագ մոտեցավ կապկպված Ներսեսին, բռնությամբ ստիպեց նստել աթոռին ու սկսեց խուզել նրա երկար ու գանգուր վարսերը։ Ինչպե՞ս արքան կիսատ թողեց մենամարտը։ Ինչպե՞ս փչացրեց գիրկընդխառն կռիվը։ Եթե մի պահ, գոնե մի պահ ուշանար, նա անպայման կհաղթեր...

— Ես ցուի կյանք եմ սիրում, ախր դու լա՞վ գիտես,— Ներսեսն աթոռի վրայից դեռին գցեց իրեն, ծնկաչոք սկսեց մոտենալ արքային ու աղաչանքով խոսել։— Ջեխություն... Գինարբուք... Հարճերի հոտը... Նրանց զով մարմինները... Դու այդ հոտերից չե՞ս հարբել, արքա... Այդ զովությունից սարսուռ չի՞ անցել մարմնովդ...

Ապա մի ակնթարթ, ցավ պատճառելու չափ հստակ, իրեն տեսավ նրա հետ պառկած։ Նրա, որ անուն չուներ, որովհետև

ամենագեղեցիկն էր կանանցից, այնքան գեղեցիկ, որ չէր կարող իրական ու նյութեղեն լինել։ Պառկած էր նրանից մի փոքր հեռու, ազնիվ ու մաքուր հոգնածությամբ, ուղղակի ու պարզունակ երջանկությամբ, որի տակ ուրիշ ոչ մի իմաստ, ուրիշ ոչ մի խորություն չկար։

— Լվա՛լ մարմինը։ Թող անուշ ու արբեցնող բուրմունքներ տարածվեն շուրջը։

Դրաստամատի նշանով՝ թիկնապահներն ու դահլիճում հավաքված սեպուհները հեռացան, և նրանց փոխարեն ներս մտան մի քանի սևազգեստ պառավ կանայք։ Նրանք բերեցին տաք ջրով լցված մի մեծ տաշտ, քանդեցին Ներսեսի կապերը, նրան մտցրին տաշտի մեջ և ցածր ու մեղմ ձայնով, միալար ու թմրեցնող մի երգ երգելով, սկսեցին լողացնել։ Տգեղ, կնճիռների մեջ կորած, պառավ վհուկներ էին, մեծ ու ոսկրոտ ձեռքերով։ Ներսեսը բարձրաձայն հեկեկում էր, բայց պառավները ոչ լսում էին նրան, ոչ էլ տեսնում։ Կարծես տաշտի մեջ մի անկենդան իր էր դրված։ Երևի նրանց հիմնական զբաղմունքը դիակ լվալն էր ու հագցնելը։ Ներսեսն արդեն հաշտվել էր իր ճակատագրի հետ։ Եթե ամեն ինչ կատարվեր ըստ կարգի ու պատշաճի, գուցե նա իր մեջ ուժ գտներ դիմադրելու։ Բայց նրա ախոյանը շատ նենգ էր ու ճարպիկ, իսկ այս մրցախաղի կանոնները անծանոթ էին Ներսեսին։

— Աղաչում եմ, դեռ մի գնա, —հանկարծ տենդագին փայլեցին նրա աչքերը, և նա տաշտի միջից շշուկով դիմեց արքային.— Ես անառակություն եմ ուզում... Վերջին անգամ... Ինձ մի օր ժամանակ տուր... Մինչև վաղը... Վաղն առավոտյան ես կվերադառնամ...

— Թույլ չեմ տալիս, սենեկապետ։ Որովհետև ես քո աչքերից տեսա, թե որքան մեծ և անկեղծ էր քո թախանձանքը։— Նա ուղղվեց դեպի սրահի ելքը, դռան մոտ անսպասելի կանգ առավ, շրջվեց և զայրացած գոռաց կոկորդով մեկ.— Սո՛ւտ է։

— Ի՞նչն է սուտ, տեր արքա,— շփոթվեց տաշտում կանգնած մերկ մարդը։

— Դու համաձայն ես կաթողիկոս դառնալու։ Հենց առաջին օրից։ Եթե ներքուստ համաձայն չլիներիր, դու չէիր համարձակվի իմ ներկայությամբ այդքան անպատկառ լինել, չէիր հանդգնի ինձ վիրավորել։ Դու ինձ հետ խոսում էիր ինչպես հավասարը հավասարի։ Արդեն որպես ապագա կաթողիկոս։— Եվ ծաղրանքով ավելացրեց.— Բռնվեցի՞ր, Վեհափառ... Դու ինձ այլևս երբեք չես կարողանա խաբել... Իմացիր, որ առաջին քննությունն է միշտ վճռում ամեն ինչ... Դու վատ բռնեցիր այս քննությունը...

Արքան, թիկնապահների ու Դրաստամատի ուղեկցությամբ, դուրս եկավ դահլիճից։ Ներսեսն ապշած նայում էր փակ դռանը և խուսափում էր իրեն խոստովանել, որ գուցե ճիշտ էր արքան։ Գուցե նա սրտի խորքում իրո՞ք ուզում էր կաթողիկոս դառնալ և ճարպկորեն թաքցնում էր իրենից։

Այդ միտքն է՛լ ավելի խոցեց նրան, ու նա դարձյալ հեկեկաց, չզգալով, որ պառավ վհուկները արդեն անուշահոտ յուղեր էին քսում իր մարմնին։ Իսկ դրանց արձակած հոտը հենց այն կոպիտ սահմանագիծն էր, որտեղ վերջանում էր անցյալը և սկսում անիմանալին։ Այնքան խորհրդավոր, հրապուրող ու վախեցնող, որ մարմինն ակամայից խուտուտ էր գալիս։

Հայր Մարդպետն էր։ Մեծ մարդպետության պատիվը կրող ներքինին։ Նա, ով Արշակի հորը՝ Տիրան թագավորին, գրգռել էր նախարարների դեմ և կոտորել տվել Ռշտունյաց ու Արծրունյաց ավագ տոհմերին, նույնիսկ էգերին ու մանուկներին։ Պատմիչն ասում է, որ միայն երկու ծծկեր երեխա էին փրկվել՝ Մեհրնդակ Ռշտունու որդի Տաճատն ու Արծրունի Վաչեի որդի Շավասպը, որոնք կոտորածի ժամանակ իրենց դայակների մոտ էին։ Բայց նրանց ևս բերել, հանձնել էին Տիրան թագավորին։ Տիրանը հրամայել էր փողոտել երեխաներին, որպեսզի Ռշտունիներն ու Արծրունիները այլևս

քառավիղ չունենային։ Սակայն Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները, հայոց զորքերի զորավարները և Թագավորի որդու՝ Արշակի դայակները, ինչպես ավելացնում է պատմիչը, մերկացրել էին սրերը՝ մանուկների կյանքը պաշտպանելու, և մի-մի երեխա թևի տակ դրած, փախել էին Տայքի իրենց ամրոցները ու երկար տարիներ այնտեղ բնակվել, հեռու ցաշվելով հայոց գործերից։ Նրանք խնամել էին Շավասպին ու Ճաճատին և հետագայում իրենց աղջիկներին կնության տվել նրանց, ու դրա շնորհիվ Ռշտունյաց և Արծրունյաց տոհմերը նորից բազմացել էին ու հզորացել։

Ներսեսը ծանոթ էր այդ անցքերին և միշտ աշխատել էր խուսափել այս մարդուց։ Սակայն դատելով անցքերի հեռավորությունից, կարելի էր ենթադրել, թե Հայր Մարդպետը կա՞մ այն ժամանակ շատ երիտասարդ էր, կա՞մ հիմա շատ ծեր էր։ Մինչդեռ բոլորն էլ միշտ այսպես էին նրան հիշում ու ճանաչում։ Ոչ ոք չէր կարողանում լուծել տարիքի առեղծվածը։ Գուցե դա էր պատճառը, որ ներքինու անձնավորությունը պարուրված էր մի խորհրդավոր և անթափանցելի քողով, որ ակամայից պալատում նրան դարձնում էր հարգելի ու ազդեցիկ։ Մի ժամանակ նույնիսկ լուրեր տարածվեցին, թե Ռշտունիներին ու Արծրունիներին կոտորել տվողը այս Հայր Մարդպետը չէր, այլ նույն տոհմից, նույն անունով մի ուրիշ նախարար։ Շատերը պատրաստակամությամբ հավատացին դրան, որովհետև բոլորին էլ անհանգստացնում էր այն միտքը, թե այլապես ինչու բանսարկուն մինչև հիմա անպատիժ ապրում է իրենց շրջապատում և թե ինչու են իրենք հանդուրժում նրան։ Սրտի խորքում խիստ կասկածելով այդ վարկածին, նրանք, խղճի հանգստության համար, ձեռնտու համարեցին ենթադրությունն ընդունել որպես ճշմարտություն։ Միակ մարդը, որ այդ լուրերը ոչ ժխտեց, ոչ էլ հաստատեց, ինքը Հայր Մարդպետն էր։

Պառավ կանայք արդեն վաղուց հեռացել էին, և մինչ աբեղաները կգային Ներսեսին նոր հանդերձներ հագցնելու, նա որոշ ժամանակ բոլորովին մենակ մնաց այս հսկա ու անլուսամուտ դահլիճում։

Հենց այդ արանքում էլ եկավ Հայր Մարդպետը։ Նա շատ անսպասելի հայտնվեց, մի ակնթարթ հանկարծ երևաց սյան ետևում և ապա ստվերի պես արագ անցավ, կարծես առանց նկատելու Ներսեսին։ Հետո Ներսեսը նրան տեսավ դահլիճի տարբեր անկյուններում, որոնցից ոչ մեկը մյուսի շարունակությունը չէր և կապ չուներ նախորդի հետ. մեկ խորքում, մեկ դռան մոտ, մեկ շատ մոտիկ, մեկ էլ ուղիղ հակառակ կողմում... Նա քայլում էր գլուխը կախ և կենտրոնացած, կարծես ինչ-որ բան էր փնտրում ոտքերի տակ։ Հայացքը ոչ մի անգամ չուղղվեց Ներսեսի կողմը, կարծես նա չկար, գոյություն չուներ։ «Չի տեսել, չի տեսել»— մտովի իրեն համոզում էր Ներսեսը։ Բայց և այնպես ինչ-որ բան, ինչ-որ անբացատրելի, անմեկնելի բան մատնում էր, որ Հայր Մարդպետը նկատել է նրան, որ նախքան գալն էլ գիտեր, թե նա այստեղ է, նույնիսկ եկել էր հենց նրա համար, որ նա այստեղ է... որ Ներսեսն էլ գիտեր, զգում էր այդ ամենը... «Չի տեսել, չի տեսել, չի տեսել... չի...»։ Մարդպետի անակնկալ տեղաշարժերը երկյուղ պատճառեցին Ներսեսին, մանավանդ այս տարօրինակ պահին, երբ աշխարհում չկա, չի կարող լինել մեկը, որ հագուստ չունենա, նույնիսկ բրդղջյալ ամենահեռին աղքատը, որ գոնե կարճ ու գյուրապատառ պարեհնակ ունի, մերկության պահպանակ... Իսկ ինքը, Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Հուսիկ կաթողիկոսի թոռը, Աթանագինեսի և Տիրան արքայի քրոջ՝ Բամբիշի որդին, միակն է հիմա բովանդակ աշխարհում, որ չունի իր զգեստը. հները վառեցին, նորերը չբերեցին։ Ներսեսը հանկարծ սարսափով գլխի ընկավ, որ Մարդպետը դիտմամբ էր ընտրել իր կյանքի հենց այդ պահը։

Իսկ ամենաանհասկանալին, ամենավայրենին այն էր, որ այդ վիճակը սկսել էր դուր գալ Ներսեսին։ Աշխարհում եղակին լինելու, միակը լինելու գիտակցությունը, այս ամբողջ արտասովոր իրադրությունը կամաց-կամաց հպարտությամբ էր լցնում նրան, գերազանցության զգացում էր ծնում նրա մեջ։ Գերազանցություն ոչ թե ուրիշների, այլ

նախ և առաջ իր հանդեպ։ Իր անցյալի և ապագայի հանդեպ։ Անցյալի ու ապագայի այս կարճատև ընդմիջմանը, այս անկրկնելի ու հրաշալի արանքում նա կարող էր առանց տատանվելու մարդ սպանել, կարող էր նաև իր կյանքը զոհել ուրիշի համար, կարող էր գողություն անել, կարող էր նաև ամբողջ ունեցվածքը հենց այնպես տալ որևէ աղքատի, նա հիմա ազատ էր ընտրություն կատարելու, պատրաստ էր մնալ սենեկապետ, զինվոր լինել, կաթողիկոս դառնալ, ապստամբ, ավազակ, անբան հարբեցող, կնամոլ, ժուժկալ, առաքինի, ստահակ... Իսկ եթե ուզում են, որ կաթողիկոս դառնա, ի՞նչ կա որ, կդառնա։ Եթե պետք է, կդառնա՛։ Նա իր մեջ ուժ կգտնի շուռ տալու երկիրը, մարդասիրություն սերմանելու ամեն քայլափոխին, բարեգործությամբ լցնելու շեներն ու ավանները... Բայց երջանկությունը կտևի մինչև դառնալը, իսկ երբ դարձավ, երբ ընտրությունն արդեն կատարվեց, ամեն տեսակ երջանկություն միանգամից կվերանա։ Մարդ պետք է միշտ նախաշեմին ապրի, սենեկապե՛տ Ներսես, կաթողիկո՛ս Ներսես, նախաշեմին կանգնելու պահն է միայն օրհնության արժանի, աստված մի արասցե, որ թեկուզ մի քայլ անես նախաշեմից, անմիջապես ապականության հոտ կգա։

Հայր Մարդպետը հանկարծ հայտնվեց ասպարեզի՝ գետնից կես ոտնաչափ բարձրությամբ պատվանդանի մոտ։ Ասես գետնից բուսավ։ Լուռ նստեց պատվանդանի ծայրին, հավաքեց ծնկները, գրկեց ձեռքերով, հայացքն ուղղեց ինչոր անորոշ կետի։ Ներսեսը զարմանքով նկատեց, որ Հայրը համակրելի մարդ էր, բարի դեմքով և վստահություն ներշնչող կապույտ, շատ կապույտ աչքերով։ Ներսեսը հազիվ էր իրեն զսպում, որ չգոռա։ Ուզում էր գոռալ, որպեսզի գրավի նրա ուշադրությունը։ Նրա դեմքին երևաց խեղճուկրակ մի ժպիտ, և նա հեռվից ձեռքի մի անորոշ շարժում արեց դեպի Հայր Մարդպետը, այսինքն, նայիր, այս կողմ նայիր, ախր ես այստեղ եմ, ես եմ, ե՛ս։ Հետո նա տեղնուտեղը իրեն բռնեց հանցանքի վրա, որովհետև կիսամերկ մարդու նախանձով ուսումնասիրում էր Մարդպետի զգեստ-

ները, հաճույք ստանալով ամեն մի չնչին մանրամասնից։ Նա գլխին դրել էր կոնաձև, ծայրը տափարակ կտրված խույր՝ միաձույլ վիժակով, որ շուրջանակի ծածկում էր ծոծրակը... Ներքուստ կրում էր վտավակ, որ խորշերով իջնում էր մինչև ծնկները... Թեկանիքը դաստակների մոտ դսպված էին երիզաձև հավելվածով... Վտավակի վրայից հագել էր պատմուճանը, որ, խորշեր կազմելով, առաջլողմից ամփոփվում էր դեպի վեր, իսկ ստորոտի երկու ծայրերից կախված էին մի-մի ուռ...

— Պատժվում են ոչ միայն դավաճանության, այլև հավատարմության համար,— Ներսեսը ցնցվեց, որովհետև հանկարծ լսվեց Հայր Մարդպետի ձայնը, որ կարծես ոչ թե նրա բերանից էր հնչում, այլ դահլիճի տարբեր անկյուններից։— Չէ՞ որ երկու դեպքում էլ նույն հարցն է ծագում. ինչո՞ւ է դավաճան. ինչո՞ւ է հավատարիմ։ Հենց այդ «ինչու»-ն է հավասարեցնում, նույնացնում ամեն ինչ։— Եվ Հայր Մարդպետը, որ մինչև հիմա շարունակում էր չնայել Ներսեսին, նոր միայն հայացքն ուղղեց նրան, ասես նոր տեսավ և ավելացրեց հայրական նախատինքով.— Օրինակ, ինչո՞ւ ես դու հավատարիմ։ Ո՞րն է քո շահը։ Չէ՞ որ շահ ունես։ Տեսնո՞ւմ ես, որքան պախարակելի է քո հավատարմությունը, ամոթալի և անպատվաբեր։— Օդում սավառնող ձայնը աստիճանաբար որոշակի դարձավ, վերադարձավ իր տիրոջը և արդեն պատկանեց իրական մարդու։— Վերացականությունն է ամենամեծ ուժը, սենեկապետ, վերացականությունը։ Դու աշխատիր արանքում ապրել, դավաճանության և հավատարմության արանքում... Թեև այդ արանքը վաղուց լի է մարդկանցով և ազատ տեղ գրեթե չկա։— Հայր Մարդպետը վեր կացավ տեղից, և հիմա արդեն լրիվ առարկայական էր նրա գոյությունը, միանգամայն տեսանելի ու շոշափելի։ Նա մոտեցավ Ներսեսին, պտտվեց նրա ջուրջը, ապա կռացավ, հավաքեց գետնին թափված նրա վարսերը, պահեց ափի մեջ և ափսոսանքով դիտեց։— Այսպիսի չքնաղ վարսերը արժանի չեն կորչելու։ Ես սրանք կպահեմ իմ ամենաթանկարժեք տուփի մեջ։— Նա թեքվեց Ներսեսի կողմը և շշնջաց նրա ականջին.— Եթե երբևիցե

տխրես և հուսահատությունը խեղդի քեզ, եթե սիրտդ չափից ավելի ճզմվի և խցիդ առաստաղը չափից ավելի բարձր թվա կամ չափից ավելի ցածր, դու կգաս ինձ մոտ, կբացես իմ ամենաթանկարժեք տուփը, կնայես քո երբեմնի վարսերին, և հուշերը, հուշե՛րը, սենեկապետ, քեզ կտանեն իրենց հետ։ Հեռո՜ւ, հեռո՜ւ...

Նա վարսերը խոթեց գրպանը և, ինչպես անսպասելի հայտնվել էր, այդպես անսպասելի էլ անհետացավ։

Ներսեսը վախեցած նայեց կիսաբաց դռան կողմը և մտովի աղոթեց, որ շուտ բերեն զգեստները, թող սև լինեն, ոչի՜նչ, թող կապո՜ւյտ լինեն, դեղի՜ն, նարնջագո՜ւյն, թող ինչ անհեթեթ գույնի ուզում է լինեն, միայն թե շուտ բերեն, շո՜ւտ... Ընտրություն կատարելու ազատությունը արդեն դեմ էր առել կոկորդին և խեղդում էր նրան, նա մտքում այնպիսի հրաշագործ ծրագրեր էր կազմում, այնպես թեթև էր թռչում օդում, այնքան ուժ ու եռանդ էր զգում, այնքան շատ էր սիրում ու ատում, որ վախենում էր ինքն իրենից։ Մի քիչ էլ ձանձրանում։ Մի քիչ էլ զզվում։

— Հը՞, ի՞նչ եղավ, Դրաստամատ, ի՞նչ կատարվեց, ի՞նչ հասկացար։

— Գլխիդ վայ ես տալու, արքա։ Ներսեսը ձեռնասուն դարձողներից չէ։

— Ներսեսն ո՞վ է, սենեկապետ։ Իմ ի՞նչն է։

— Քո... հորաքրոջ որդին...

— Տիրանի քրոջ Բամբիշի որդին։ Իմ արյունակի՛ցը։ Կաթողիկոսը պետք է իմ մարդը լինի։

— Դու այսօր հակասեցիր ինքդ քեզ, արքա։ Դու ուժեղացրիր հունասերներին։ Կաթողիկոսությունը վերադարձրիր Գրիգոր Լուսավորչի տոհմին։ Բայց չէ՞ որ դու համակիր չես նրանց։

Արդեն վաղուց սովորություն էր դարձել, մի տեսակ ներքին պահանջ, որ արքան իր ամեն քայլն ստուգի սենեկապետի միջոցով։ Նա անսահման հավատում էր Դրաստամա-

տին, գնահատում նրա խելքն ու խորաթափանցությունը։ Ու երբ նա երբեմն սխալվում էր կամ ինչ-որ բան մինչև վերջ գլխի չէր ընկնում, Արշակը չտեսնված ուրախանում էր, մանկական հրճվանք ապրում, և տրամադրությունը միանգամից բարձրանում էր։ Նա մոռանում էր իր ով լինելը և այդ փոքր ու չնչին առավելություններով հպարտանում։ Երբեմն նույնիսկ դիտմամբ որևէ անտրամաբանական քայլ էր անում և ուղղակի ցնծում, որ իր խոշոր և հաղթանդամ սենեկապետը, իր սիրելի Դրաստամատը, խճճվել է ու գլուխ չի հանում։ Դրաստամատը ճիշտ էր, որ կաթողիկոսությունը վերադարձնելով Լուսավորչի տոհմին, արքան ուժեղացնում էր հունասերներին։ Ուժեղացնում էր, առանց նրանց համակիր լինելու։ Սակայն բանն այն է, որ պարսկասերները հզորացել էին, և նրանց ուժը արդեն լրջորեն անհանգստացնում էր արքային։ Հարկավոր էր հավասարակշռություն ստեղծել, անընդհատ ուշադրությամբ հետևել, թե որ կողմն է թեքվում կշեռքի նժարը, որպեսզի անմիջապես օգնության հասնի մյուս կողմին։

— Գիտե՞ս հիմա ինչ պատկերացրի... Պալատի հրապարակը.. Եվ բազմություն... Խուռներամ բազմություն... Ու ես նրանց մեջ եմ, Դրաստամատ... Չորս կողմից սեղմում են ինձ ճզմում... Շունչս կտրվում է... Կողոսկրերիս ճայթյունն եմ լսում... Բայց դիմանո՞ւմ եմ... Դեմքիս՝ երջանիկ և հիմար մի ժպիտ... Մի ծերունի ուշագնաց եղավ... Հղի մի կին արու զավակ ծնեց ամբոխի մեջ... Եվ այդ բոլորը գիտե՞ս ինչու... Որովհետև ահա ուր որ է թագավորն է երևալու... Որպեսզի գոնէ մի պահ տեսնեն նրան... Ես էլ կուզենայի նրանցից մեկը լինել... Ոտքերիս մատների վրա ձգվել... Վիզս պոկվելու աստիճան երկարել... Այդ նույն երջանիկ ու հիմար ժպիտով.. է՞, սենեկապետ, երանի չէ՞ր իմանայի թե որն է ճիշտ և որն է սխալ...

Չէ, չէ, կաթողիկոսի ընտրությունը ճիշտ էր։ Թող ով ինչ ուզում է ասի։ Բայց կա մի կետ, երբ նա միայն իր բնազդին է վստահում։ Արշակունյաց ցեղի արյամբ անցած, թագավորությունն ատամներով պահելու, ամեն պահ թակարդներից փախչելու, իշխանության քաղցրությունն զգալու փոխարեն

իշխանությունը կորցնելու տանջանքներով անցած բնաղդին։ Ներսեսը նայել գիտեր։ Խոսել գիտեր։ Փառահեղ արտաքին ուներ։ Ժողովուրդը կգնա նրա ետևից։ Կհավատա նրա խոսքին։ Արշակը հիացմունքով էր հիշում, թե քիչ առաջ ինչպիսի արժանապատվությամբ էր Ներսեսն իրեն պահում արքայի առաջ, ինչպիսի համարձակությամբ էր իր խոսքերը շպրտում նրա երեսին, ինչպիսի կրքոտությամբ գիտեր մի բան ուզել կամ չուզել, մի բան սիրել կամ չսիրել։ Որքա՜ն գեղեցկություն կար նրա ըմբոստության ու թախանձանքների մեջ։ Արշակը ի սրտե խղճաց նրան։ Այդպիսի մարդը արժանի չէր հոգևորականի ճակատագրին։ Նրա սուրը կարող էր հրաշքներ գործել, մետաղի անկենդան կտորին շունչ ու մարմին տալ, փառաբանել մարդու և մետաղի դաշինքը, նրա բազուկների մեջ կարող էին տեղ գտնել և՛ սերը, և՛ ատելությունը, նա կարող էր շեղվել կյանքի տրամաբանությունից, և թող օրհնվի այդ շեղումը, նա կարող էր չսպասել իր մահվանը, այլ հենց ինքը փնտրեր նրան, անպատկառ և լկտի խիզախությամբ, և թող օրհնյալ լինի այդ խենթ ու խելառ որոնումը, և գուցե նրան գտներ ռազմի դաշտում կամ ճմրթված սպիտակ սավանի վրա, որևէ հրաշալի էգի ծոցում։ Իսկ հիմա նա կմեռնի բնական մահով։ Ամեն ինչ նրա կյանքում կլինի հանդարտ և իմաստուն։ Ամեն բան կունենա իր պատճառը, իր բացատրությունը։ Ամեն ինչ՝ ճիշտ ու տեղին։ Անգամ սայթաքումը՝ չափավոր ու ձևված։ Եվ չի լինի ոչ մի գեղեցիկ ու փառավոր սխալ։

Բայց ինչ արած, որ նրան խորտակեցին հենց իր բարեմասնությունները։ Թող անգույն մարդ լիներ և հանգիստ ապրեր, իր համար։ Իսկ Արշակին Ներսեսի պես մի այր էր պետք։ Կաթողիկոսը հավասար է արքային։ Նա է երկրի երկրորդ դեմքը։ Եվ արքայի կողքին պետք է կանգնի ուժեղ և պինդ անհատականություն։ Բայց ի՛նքը, ի՛նքը... Ինքը ի՞նչ պակաս էր Ներսեսից։ Թե՞ իր սուրը ընդունակ չէ անհամբերությունից քրտնելու պատյանի մեջ։ Թե՞ իրեն հայտնի չեն անանուն հարճերի պարգևած սիրո շոգ գիշերները, որոնցից ամեն մեկը տարբեր է մյուսից և իր անունն ունի

Տե՛ղն է քեզ, Ներսես։ Ինչո՞ւ արքան պիտի մոռանա իրեն, տանջվի ու տառապի ուրիշների համար, իսկ իր հորաքրոջ որդին անամոթաբար լողա վայելքների մեջ, լինի իր անձի տերը, ինքն իր աստվածը, ինքն իր արքան, մինչդեռ իսկական արքան իրեն նվիրաբերի ուրիշներին, որոնցից մեծ մասի դեմքն էլ չի տեսել, չի ճանաչում, անգամ գոյությունը չգիտի։ Տե՛ղն է քեզ, Ներսես։ Թող նա էլ ծառայի անծանոթ մարդկանց, թող իմանա վերացական և անհասցե ծառայության ամբողջ ահավորությունը։ Եվ եթե առաջ բագինների վրա զոհեր էին մատուցում, անգամ կենդանի մարդկանց, ապա արքաները ամեն օր են զոհում իրենց։ Տե՛ղն է քեզ, Ներսես։ Հիմա դու էլ քո ազնիվ դեմքով կանգնիր բագինի առաջ և անընդհատ զոհիր քեզ, օր-օրի վրա զոհիր, կաթիլ առ կաթիլ, չեչաքարով մաշիր քեզ, ոչինչ, ոչինչ, քերծիր մաշկդ, քամիր հյութերդ։ Ո՞վ է ասել, որ քո ճակատին գրված է մեռնել անհեթեթ ու նախանձելի մահով, սպիտակ ու ճմրթված սավանի վրա... Եվ ինչո՞ւ սպիտակ, և ինչո՞ւ ճմրթված, և ինչո՞ւ սավան, և ինչո՞ւ հրաշալի էգի ծոցում։ Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի օրհնյալ լինի այդ պահը։ Այս ամենը մի ակնթարթում կորցրին իրենց բանաստեղծականությունը և նույնիսկ գռեհիկ թվացին արքային։ Նա մի անասելի խանդ զգաց Ներսեսի հանդեպ, նրա անցյալի հանդեպ, անգամ ապագայի հանդեպ, որը չի իրագործվի, չէ, չի իրագործվի, հաստա՛տ չի իրագործվի։ Եվ հենց չիրագործվելու համար էլ արքան կսիրի նրան։ Արդեն սիրում է և սրտանց խղճում։

Բացի այդ, կար ևս ոչ պակաս կարևոր մի հանգամանք։ Արշակին թագավոր էր կարգել պարսից արքան։ Բյուզանդացիների աչքում դա չափազանց խոցելի ու աններելի կետ էր նրա կենսագրության մեջ։ Իսկ եթե կայսրը նրան կարգեր թագավոր, նա խոցելի կդառնար պարսիկների համար։ Հայոց արքան միշտ է խոցելի։ Մոր արգանդից, իր ծնունդից, իր առաջին ճիչից, իր առաջին ինքնուրույն քայլից, երբ բոլորին թվում է, թե նա այլևս չի կառչում շրջապատի իրերից։ Եվ հիմա արքան պետք է կայսրի սիրտն առնի՝ հոգևոր իշխանությունը տալով բյուզանդական կողմնորոշում ունեցող Լուսավորչի տոհմին, պետք է ինչ-որ չափով թոթափի

Գրադարան
Библиотека ЕГУ

իր մեղքը կայսրի առաջ և ինչ-որ չափով մեղավոր դառնա արքայից արքայի առաջ։ Նորից այդ հավասարակշռությունը, նողկալի, սիրտ խառնող հավասարակշռությունը։ Երկիրը վխտում է լարախաղացներով, որոնց դրամ և ուտելիք են բաշխում ապրուստի համար, իսկ գլխավոր լարախաղացին, լարախաղացների արքային, փոխարենը տալիս են թագ, այ, ա՛յս թագը, տես, ի՞նչ գեղեցիկ է, գլանակերպ, թեթևակի կոնաձև, չափավոր բարձրությամբ և ավարտված ճառագայթներով, որոնք մերթ ժանեձև են, մերթ կազմված իրար վրա նստող երեք կարգ մարգարիտներից, ստորև՝ խոշոր և վերևը՝ փոքր, այ, ա՛յս թագը, որից կախված է վիժակը՝ երեք ծվեններ բաժանված, որոնցից լայնագույնը ծածկում է ծոծրակը և երկու նեղերը, ականջապանները, իջնում են ականջների ուղղությամբ, թագն ու վիժակը համակ եղերված են խիտ մարգարիտներով, այ, ա՛յս թագը, որ նա պետք է պինդ պահի գլխի վրա և չթողնի, որ հանկարծ գետնին ընկնի, որովհետև այնտեղ, լարից շատ ներքև, հեռավոր գետնի վրա, վզները վեր ցցած, շունչները պահած, ինչ-որ մարդուկներ պարզել են ձեռքերը և սրտատրոփ սպասում են...

Երբ նոր էր Արշակն իր թագն ստացել, նրա առաջին գործը եղավ սիրաշահել պառակտված և հայոց միաբանությունից անջատված նախարարներին։ Պատմիչն ասում է. «Եվ Հայաստան աշխարհի թագավորությունը նորոգվեց ու պայծառացավ, ինչպես առաջ. մեծամեծներն իրենց գահերում, գործակալներն իրենց աստիճաններում։ Եվ առաջին գործակալ-հազարապետ նշանակվեց շինականներին շենացնող Գնունյաց ցեղը, որպեսզի իբրև ամբողջ երկրի հազարապետներ՝ հոգատարությամբ խնամեն աշխարհաշեն, աշխարհը կերակրող գյուղացիությունը։ Նույնպես և սպարապետության՝ զորավարության գործում, ճակատ առ ճակատ նիզակներով կռիվ մղելու համար, նշանակեց փառավոր և ազնվազգի, աղավնակիր դրոշակներով, արծվի՝ Վարուժանի նշաններով, աներկյուղ ու քաջասիրտ նախամարտիկ, քաջանուն, բարենշան, բարեհամբավ ու բարեգործ, պատերազմական գործերում հաջողակ Մամիկոնյանների ցեղից,

թուն նախնյաց կարգերի համաձայն, որին երկինքը միշտ և հանապազ պարգևում էր հաղթության ու քաջության բարի անուն պատերազմական գործերում, և տվեց նրանց զորավարության իշխանություն Մեծ Հայքի բոլոր զորքերի վրա։ Այս ցեղերից զատ՝ խոնարհ աստիճանի գործակալներ, որոնք թագավորի ներկայությամբ բարձերի վրա բազմում էին, պատիվները գլխներին,— չհաշվելով մեծամեծ նահապետներին ու տանուտերերին, լավ միայն գործակալներ՝ ինը հարյուր բարձ էին կազմում, որոնք թագավորական սեղանի ուրախության մասնակից էին լինում, բացի հոտընկայս սպասավորության պաշտոնյաներից»։

Իրենց պաշտոններում վերականգնվեցին Հայր Մարդպետը՝ որպես ներքինապետ, Սմբատ Բագրատունի ասպետը՝ որպես թագադիր, Գարջույլ Խոռխոռունին՝ որպես թիկնապահ... Զգեցուցանող կամ հանդերձապետ՝ Գնթունիների տոհմից, մատակարար կամ համբարակապետ՝ Գաբեղյան տոհմից, տակառապետ՝ Գնունիների տոհմից։ Եվ դեռ՝ դահճապետ, որսապետ, հավնունիք և արծվեկիրք, շահ ախոռապետ, քարտուղար, գրչունիք, նամակունիք... Նրան իմաստուն թվաց իր քայլը, որով տանյակ նախարարներ պարտապան էին դառնում իրեն և ստացած պատիվների դիմաց՝ պարտք մնում հավատարմություն, համերաշխություն, միաբանություն։ Իր գործունեությամբ ոգևորված, նա նույնիսկ վստահ էր, թե աշխարհում ինքն է առաջինն այդ խորամանկությանը դիմել։ Սակայն հետզհետե պարզվեց, որ կա է՛լ ավելի իմաստուն և է՛լ ավելի մեծ ճշմարտություն. պարտապան լինելու մոռացումը և պարտքը չվճարելու աշխարհի հինավուրց և բնական օրենքը։ Ուրեմն, իմաստությունը ոչ թե առհասարակ պաշտոն բաժանելն էր, այլ միայն մերձավորներին, ազգականներին, արյունակիցներին պաշտոն տալը, մարդկանց, որոնք արյան կանչով են շղթայված իրար հետ։ Կաթողիկոսը պետք է իր մարդը լինի։ Բոլորը, ովքեր քիչ թե շատ բարձր դիրք են գրավում արքունիքում, պետք է իր մարդիկը լինեն։ Եվ արքան, արդեն ծեծ կերած, արդեն համեստացած, այլևս չէր համարում, թե ինքն է առաջինը դիմել այդ խորամանկությանը, այլ համոզված էր,

որ դա է իշխանության գլխին կանգնած մարդու ապահովության ամենատարրական երաշխիքը։

— Բյուզանդիայի և Պարսկաստանի հաշտությունը խաբուսիկ է, արքա,— նրա մտքերն ընդհատեց Դրաստամատը։— Ինքդ էլ քաջ գիտես, որ պատերազմն անխուսափելի է։ Դու պետք է վճռես ում կողմը բռնել։

— Իսկ ինչո՞ւ պիտի որևէ մեկի կողմը բռնեմ,— Դրաստամատի ճշմարիտ խոսքերից և ստույգ տրամաբանությունից արյունը խփեց արքայի երեսին։— Ես ուզում եմ ի՛մ կողմը լինել։ Ինքս ինձ հետ։ Եթե կռվում եմ՝ ի՛մ իշխանների դեմ, որ անհնազանդ են ինձ։ Եթե դաժան եմ՝ ի՛մ շինականների հանդեպ, որ դժգոհ են ինձնից։ Օ՜, եթե իմանայիր, ինչքան եմ ուզում դաժան լինել, Դրաստամատ։ Անիմա՜ստ դաժան, քմահաճույքի՜ համար։ Ոչ թե վախից և զգուշությունից, այլ իմ ուժի գիտակցությունից։— Նա մի պահ լռեց, կանգ առավ, հենվեց արքունի պարտեզի հաստաբուն ծառերից մեկին և դառը քմծիծաղ տվեց։— Ներիր, սենեկապետ, ես հանդգնեցի մի պահ մոռանալ, որ փոքր ազգի թագավոր եմ։ Եթե ուզում ես մեկին երիցս անիծել, թող փոքր ազգի թագավոր դառնա։— Մեջքը սահեց ծառաբնի վրայով, նա պտղեց և ատելությամբ շարունակեց.— Խորամանկ պիտի ապրես։ Պիտի ապրես քծնելով։ Վախ ու դողի մեջ։ Ամեն մի քայլդ կախված ուրիշի քայլից։ Երբ խոսում եմ մեկի հետ, նրա աչքերում կարդում եմ՝ դու ի՞նչ թագավոր ես, թագավորը ՆՐԱՆՔ են։ Գիտե՞ս ես ինչի համար եմ նրանց պետք։ Որպես վարդարանք, թանկարժեք ադամանդ, ազնիվ ցեղական ձի։ Որովհետև եթե թագավոր ունես, ծառադ էլ ինչ-որ արժեք է ստանում։ Թագավորի՜ ծառա... Ի՞նչ է դուրս գալիս, սենեկապետ։ Դուրս է գալիս, որ ես եմ իմ հպատակներին ծառայում, և ոչ թե նրանք ինձ...

Իսկ երկրի անկայունությո՞ւնը, խախտությո՞ւնը, նրա գլխին կախված բազում չարիքնե՞րը... Այդ ամենը մարմնավորված են ոչ թե բոլորի մեջ հավասարապես, այլ միայն մի՛ հոգու, միա՛յն մի հոգու, արքայի մեջ։ Նրանց թվում է, թե այդ ցավը նրանն է միայն։ Նրա հետ է ծնվել։ Ժառանգություն է մնացել հողերի, ճորտերի ու ամրոցների հետ։

Արշակը չարախնդաց մտքում, որովհետև նրանք չգիտեն, որ արքայի հետ այդպես ստոր վարվելու մեջ թաքնված է նաև իրե՛նց ցավը։

— Ես ինձ իրավունք չեմ վերապահում մասնակից դառնալու քո խոհերին, արքա,— դաժան ուղղամտությամբ նորից խոսեց Դրաստամատը։— Իմ պարտքն է միայն հիշեցնել, որ դու պետք է ընտրություն կատարես։ Կա՛մ Բյուզանդիա, կա՛մ Պարսկաստան։ Կա՛մ հունասեր խմբակցություն, կա՛մ պարսկասեր։ Դու քո ուժը չունես, արքա։

— Ունեմ, Դրաստամատ, աստվա՛ծ վկա, ունեմ։— Նա վեր կացավ, միանդամից աշխուժացավ, և աչքերում մի մոլեռանդ փայլ երևաց։— Մարդկային մի հոծ բազմություն... Մի ահռելի ծով... Մի ամբողջ հրաբուխ... Եվ նրանք իմ կողմնակիցը կդառնան... Ես կստիպեմ սիրել ինձ... Ամեն ինչ ստիպել է պետք... Սերն էլ պետք է ստիպելով շահես... Ծրագրեր ունեմ, Դրաստամատ, ծրագրե՛ր... Չեմ պատմում, որպեսզի խորհուրդ չտաս ինձ... Ես հիմա միայն քո խորհրդից եմ վախենում... Ճիշտ խորհրդից...— Ձայնը հանկարծ դաժանացավ, չարացավ ու հրամայեց.— Ճաշի հրավիրիր նախարարներին։ Բոլորին անխտիր։

Ամեն հայ թագավոր իր անունով մի քաղաք է կառուցել և թողել երկրին։ Արշակը ևս հետևեց իր նախորդների օրինակին և վճիռ արձակեց մի նոր քաղաք կառուցելու և անունը դնելու Արշակավան։ Նա հրամայեց նախարարներին, որ ամեն մեկը, իր ուժերի ներածին չափ, շինականներ ուղարկի, ինչպես նաև դրամ տրամադրի Արշակավանի կառուցման համար։ Եվ նրա զարմանքն ու զայրույթը սաստիկ մեծ եղան, երբ համոզվեց, որ իր տգետ ու հաստավիզ նախարարները, իր ճարպակալած իշխանները հապաղում են կատարել արքայական հրամանը, պատճառաբանելով, թե նախկինում այդպիսի քաղաքները կառուցվել են բռնի գաղթեցումների միջոցով և առանց նախարարների մասնակցության։ Նրանք հրամանը կամ մոռացած էին ձևանում, կամ պատշաճը չխախտելու համար մի քանի շինական ուղարկում, համարելով, որ իրենց պարտքը կատարեցին։ Երևի կարծում էին,

թե արքայի ատամները հաշվված են։ Գուցե նաև մարտահրավե՞ր էին նետում, ուզում էին խեղճացնե՞լ նրան։ Էլ ի՞նչ երևի, էլ ի՞նչ գուցե։ Դա հաստատ այդպես էր։ Բայց Արշակունի Արշակ ես, Մեծ Հայքի թագավոր ես, ինչ ես, իմացիր, որ իսկական առաջնորդը նա է, ով այդ անհնազանդությունից էլ օգուտ կքաղի, հենց իրենց դեմ շուռ կտա, սատանայական միտք կհղանա։ Թե տղամարդ ես, հղացի՛ր, ծնի՛ր, երկնի՛ր այդ միտքը։

— Ճաշի հրավիրիր նախարարներին,— կրկնեց նա։— Բոլորին անխտիր։

Արքան հանկարծ գրկեց Դրաստամատի ուսը, ուղիղ նայեց նրա աչքերին, երկար նայեց և սառը տոնով դիմեց նրան.

— Ի միջի այլոց, ես մոռանում եմ քեզ հարցնել, գու հո չե՞ս նեղանում, որ ես իմ սիրտը միշտ բացում եմ քո առաջ։ Հո չե՞ս վիրավորվում։

— Ինչո՞ւ, արքա,— շփոթվեց Դրաստամատը։

Եվ արքան նորից երեխայի պես հրճվեց, որ շփոթություն էր մատնել իր սիրելի, իր ազնիվ Դրաստամատին։

— Չէ՞ որ ես թագավոր եմ, իսկ գու բնդամենը՝ սենեկապետ։ Մեր միջև մեծ տարածություն կա։ Հո չե՞ս նեղանում, որ ես անցնում եմ այդ տարածությունը։ Չէ՞ որ այն պատկանում է ոչ միայն ինձ, այլև քեզ։

— Դու ինձ վստահում և սիրտդ բաց ես անում իմ առաջ, որովհետև ինձ ոչնչություն ես համարում, արքա,— հեշտությամբ իրեն տիրապետեց Դրաստամատը և նորից գարձավ չոր ու ցամաք, վառ զգացմունքներից զուրկ և ճիշտ գատող նախկին սենեկապետը։— Քեզ համար հարմար է ինձ հետ անկեղծ լինել։

— Տեսնո՞ւմ ես, գու էլ զենք ունես։ Իշխանությունն իմ ուժն է, իսկ ոչնչությունը՝ քոնը։ Պատկերացրու, որ մենք ինչ-որ տեղ հավասար ենք։

— Այդ զենքը գու ես ինձ տվել, արքա։ Մի՞թե քիչ են անզեն ոչնչությունները։ Իսկ իմ ոչնչությունը քո կողքին է արժեք ստանում։

Արքան բաց թողեց Դրաստամատի ուսը, խոժոռվեց,

Տոքով փորփրեց պարտեզի հողը, և նրան սկսեց տանջել այն հարցը, որ գուցե ինքն այստեղ էլ է խաբվել, այստեղ էլ է տանուլ տվել և վատ է ճանաչել իր սենեկապետին։

— Հո չե՞ս քծնում,— մռայլ հարցրեց նա։

— Դա իմ պարտականությունների մեջ չի մտնում, արքա,— արժանապատվությամբ և առանց որևէ հույզի պատասխանեց Դրաստամատը։

— Գնանք, սենեկապետ, վայել չէ սպասեցնել կաթողիկոսին,— անմիջապես հանգստացավ արքան և մտածեց, որ, չէ, տանուլ չի տվել, այս մեկը տանուլ չի տվել։ Նա քայլերն ուղղեց դեպի միջնաբերդի հիմնական մուտքը՝ Ծրդատա դուռը, բայց ինչ-որ բան հիշեց և ասաց.— Իմ ամենամտերիմ ընկերոջը, Եփրեմ ազատին պալատ հրավիրիր։ Ասա թող սպասի ինձ։ Արքան կաշխատի անպայման ժամանակ կորզել և ճատրակ խաղալ նրա հետ։

Մանկության ընկերոջը տեսնելու ցանկությունը անսպասելի թափով ծնվեց նրա մեջ և հրամայական պահանջ դարձավ։ Վաղուց չէր հանդիպել Եփրեմին, վաղուց ճատրակ չէր խաղացել նրա հետ, ի՛նքը, երախտամոռ ընկերը, քիթը ցցած, իրեն մեծ բանի տեղ դնող, իրեն երևակայող արքան։ Չէ, գործերը լավ չէին, ուրեմն լավ չէին գործերը, եթե հանկարծ այսպիսի բուռն պահանջ զգաց մանկության ընկերոջը տեսնելու։ Նա նայեց Դրաստամատին, որ քայլում էր ձիգ ու շիտակ մարմնով, սառը, անկենդան հայացքով, մեծ ու հանգիստ քայլերով, և նրա դեմքին թեթև ու աննկատ մի ժպիտ երևաց։

— Բայց դու մի անհանգստացիր... Մի մտահոգվիր, սենեկապետ... Ինձ դուր է գալիս թագավոր լինել...

Եկեղեցու առաջ խուռներամ բազմություն էր հավաքվել, ճիշտ այնպիսի, ինչպիսին արքան էր երազում Դրաստամատի հետ զրուցելիս։ Բայց նա բազմության մեջ չէր և արդեն չէր դժգոհում այդ մտքից, այլևս չէր ափսոսում։ Երբ ամբոխ էր տեսնում, թեկուզ հանդեսների համար հավաքված ամբոխ,

թեկուզ իրին երկրպագող, իրեն աստվածացնող ամբոխ, միևնույն է, մի պահ մոայլվում էր և ինչ-որ անորոշ վախ զգում։ Ոչ թե ուղեղով, այլ ստամոքսով, մաշկով, քթանցքով։ Երևի դա ևս նրա արյանն էր անցել իր նախորդների մեջ կուտակված բնազդներից։ Սակայն այդ վիճակը տևում էր ընդամենը մի ակնթարթ, որից հետո արյան փոխկանչը խլանում էր, և նա սիրով էր լցվում իր հպատակների հանդեպ։

Ամբոխի մեջ շշուկ տարածվեց, որ արքան է գալիս։ Նա երևաց առանց թիկնապահների, միայն սենեկապետ Դրաստամատի ուղեկցությամբ, երևաց իր ամբողջ շքեղությամբ ու փայլով։ Նա երկար, առատ մազեր ուներ, որոնք բոլորակ հատմամբ իջնում էին մինչև ծոծրակի կեսը։ Դեմքը ծածկված էր խիտ մորուքով։ Մարգարտյա երկտակ վարսակալի վրա դրել էր բեհեզյա ուղղաբերձ խույրը։ Սպիտակ, խորշավոր օձիքով և գոհարներով եզերված պատմուճանը, որի լայնությունը արքայական ճոխությունն էր խորհրդանշում, իջնում էր մինչև ծունկը, թեզանիքն ավարտվում էին ուսերի մոտ, ի տես դնելով ներքնակ պարեգոտը, որ ծածկում էր նրա ձախ բազուկը, աջն ազատ թողնելով։ Պարանոցից կախված էր մարգարիտներով ու ակներով ընդելուզված քառամանյակը։ Մեջքին կապել էր ոսկեհուռ լայն կամարն ու թուրը, կրծքին՝ լանջափառ ապիգակը։ Պատմուճանի վրա կրում էր ընտանի առաջին գույնը համարվող ծիրանի քղամիդը, որ աջ ուսի մոտ ճարմանդված էր ականազարդ շիգղով։ Ականջներից կախված էին մանեկաձև գինդեր։ Ոտքերին հագել էր խրացավոր կարմիր կոշիկներ։ Սա էր թագավորը, այս ամեն մի մանրամասնը, այս բոլոր մանրուքները, որոնցից ամեն մեկի մեջ մի-մի խորհրդավոր և անիմանալի գաղտնիք էր թաքնված։

Ամբոխը ինքնամոռաց հրճվանքով ու ցնծությամբ ողջունեց իր արքային, ապա կիսվեց, ճանապարհ բացեց, և մարդկանցից գոյացած միջանցքով արքան անցավ ու մոտեցավ եկեղեցու մուտքին։

Եկեղեցու զանգերն սկսեցին զողանջել։ Դա նշան ծառայեց, որ քաղաքի մյուս եկեղեցիներն էլ հնչեցնեն իրենց

զանգերը։ Ամբողջ Արտաշատը, ահել թե ջահել, կին թե տղամարդ, դուրս էր թափվել տներից և քաղաքի սալահատակված փողոցներով հոսել, հոսել ու կանգ առել միջնաբերդի մոտ գտնվող եկեղեցու առջև։ Ամենուրեք մարդկանց գլուխներ էին և միևնույն կողմն ուղղված աչքեր։ Մարդիկ միմյանց պատմում էին այն, ինչ առանց այդ էլ տեսնում էին բոլորը։ Բայց հաճույքով լսում էին իրար։ Կարծես տեսածին և՛ս մի վկայություն էր պետք, որպեսզի այս անկրկնելի պատմական տեսարանի կշիռը է՛լ ավելի մեծանա և դառնա մի ամբողջ սերնդի հիշողություն։

Զանգերի զողանջը հետզհետե առավել ուժգնացավ, տարածվեց, ծածկեց, կլանեց ամբողջ քաղաքը։ Թվում էր, թե ամեն ինչ ձայն էր արձակում, նաև շենքերի պատերը, նաև տանիքները, նաև փողոցի քարերը, նաև միջնաբերդի պարիսպը... Եվ այդ համատարած ձայներից թնդում էր ամբոխի սիրտը, ամբոխի, որ հիմա մի ամբողջություն էր, մի հայացք, մի աչք, մի սիրտ, մի երազանք, մի բնավորություն, մի խառնվածք, մի անցյալ, մի կենսագրություն։ Եվ երկու սեր։ Մեկն արքայի համար, մյուսը՝ նորընծա կաթողիկոսի։

Երկու շարքերով եկեղեցուց դուրս եկան սևազգեստ հոգևորականները, խաչեր և բուրվառներ բռնած։ Եվ այդ երկու շարքերի միջով անցնում էր Ներսեսը, ոտքից գլուխ սև, գեղեցիկ ու սրբացած։ Նա ապաշխարած մարդու տեսք ուներ, անցյալին վեհանձնորեն հրաժեշտ տված, անցյալի բոլոր կրքերի ու մտքերի հետ հաշիվները փակած, նոր ծնված, և բաց ճակատով ու ավնիվ աչքերով՝ հայացքն աշխարհին ու մարդկանց ուղղած։ Արքան հասկացավ, որ Ներսեսն ընդունել է իր ճակատագիրը։ Ոչ թե հաշտվել, այլ ընդունել է։ Նա հավատում է իրեն, հավատում է իր առաքելությանը, իր նոր ծննդին, ինչպես կարող է հավատալ այս քարին, այս թփին, այս բազմերանգ գույներին, իրեն ուղղված այս հազարավոր աչքերին։

Ամբոխը, մի մարդու պես, ակնածանքով ծնկի չոքեց։ Քաղաքը կարծես մի ակնթարթում առաստաղ ունեցավ, ունեցավ տանիք, միասնական մի տանիք, որ միանգամից փլվեց կաթողիկոսի ոտքերի առջև։ Ինչ փույթ, որ նա դեռևս

կաթողիկոս չէ, սարկավագ է տակավին և դեռ հեռավոր ճանապարհ պիտի կտրի մինչև Դամիրքի Կեսարիա քաղաքը, որտեղ կաթողիկոսների կաթողիկոս երանելի Եվսեբիոսը սարկավագ Ներսեսին նոր միայն պիտի ձեռնադրի Մեծ Հայքի եպիսկոպոսապետ։ Ոչ ամբոխը, ոչ էլ արքան, ի տես այս սնազգեստ երիտասարդի, հավատ չընծայեցին օրենքի ու կարգի կարևորությանը, առաջին անգամ լինելով՝ սրտով և մտքով մերժեցին ավանդության ուժը։ Սա՛ է Մեծ Հայքի կաթողիկոսը, ամենայն հայոց հայրապետը, ամենասուրբ հայը, այս նորընծա սարկավագը։ Արքան, այս եռուն մթնոլորտով տարված, իրեն ձուլված զգաց ամբոխին, մի մարմին դարձավ նրա հետ, վերացավ իրեն ու ամբոխին բաժանող անջրպետը, և նա աղոթեց, որ այդ զգացողությունը հարատև լինի, հարատև լինի մանկության ընկերոջը հանդիպելու, նրա հետ ճատրակ խաղալու ներքին սուր պահանջը, սովորական ու հասարակ զգացմունքների, սովածանալու, մրսելու, բորիկ ոտքը քերծելու, ծանր բեռ կրելու, խմբովի ժայռաբեկոր գլորելու, խմբովի տուն շինելու և տանիք ծածկելու անհագ ծարավը։ Այ, թող այս պահը, միայն այս պահը օրհնյալ լինի, և ոչ թե այն, ինչ քիչ առաջ, միջնաբերդի պարտեզում, նա անգթորեն ու նենգաբար վերագրեց իր հորաքրոջ որդուն։

Հազարավոր ձեռքեր ձգվեցին, ուղղվեցին դեպի ամենասուրբ հայը, նրան դիպչելու, մաքրվելու, հոգսերից ու ցավերից ազատվելու, վաղվա երջանիկ օր ունենալու բուռն տենչանքով։ Հազարավոր հիվանդներ, հաշմանդամներ, խեղանդամներ, կույրեր, համրեր, մուրացիկներ, անօթևան ծերեր ու պառավներ, աստվածային մի ուժ ստացած, ամբոխի միջից ճամփա էին ճեղքում և իրենց գցում ապագա կաթողիկոսի ոտքերի տակ, նրա օրհնությունն ստանալու։ Մայրերն իրենց հիվանդ զավակներին, թևերի վրա առած, մեկնում էին դեպի կաթողիկոսը և օրհնություն հայցում, հրաշք էին աղերսում նրա ձեռքերի հպումից։ Իսկ ով երջանիկ էր, ուզում էր էլ ավելի երջանկանալ, ով հարուստ էր, ուզում էր էլ ավելի հարստանալ, ով հաջողակ էր, ուզում էր էլ ավելի մեծ հաջողություն, բոլորը՝ է՛լ ավելի,

է՛լ ավելի, է՛լ ավելի, միայն ու միայն՝ էլ ավելի, միայն թե՝ է՛լ ավելի...

Զինվորներն ստիպված եղան միջամտել ու ետ մղել ամբոխին։ Ամբոխը ընդդիմացավ, ամեն մարդ հույսը դրած այն բանին, որ իր ընդդիմությունը չի նկատվի և չի պատժվի, քանի որ ինքը հիմա ինքը չէ, այլ հորձանքի մի աննշան մասը, հեղեղի մի կաթիլը, քանի որ ոչ ոք այդ հորձանքի մեջ չունի իր առանձին դեմքը, և ամբոխը մի ընդհանուր ու միասնական դեմք ունի միայն, քանի որ այս հրմշտոցը ոչ թե իր արմունկների ու ոտքերի շարժման, այլ ամբոխի խորքերից եկող, մութ խորքերից ծնվող, իրենց մեջ և իրենցից դուրս գտնվող ուժի արդյունքն է։ Բայց և այնպես զինվորներին հաջողվեց զսպել ամբոխին և տարածություն պահպանել սև հանդերձներ կրողների ու խայտաբղետ զգեստներ հագնողների միջև։ Հիմա արքան արդեն հնարավորություն ուներ մոտենալու երիտասարդ սարկավագին, որն այլևս իր հորաքրոջ որդին չէ, այլ գրեթե հայոց կաթողիկոս։ Ամբոխի և իր միջև, ամբոխի ու արքաների միջև գոյություն ունեցող դարավոր անջրպետը նորից կանգնեց հասակով մեկ։ Մի ակնթարթում, առանց հիվանդագին ապրումների, հոգս ցնդեց ամբոխի հետ ձուլվելու երջանիկ զգացողությունը, և միայն արքան իրավունք ստացավ ապագա կաթողիկոսի օրհնությունն ստանալու։ Մի պահ նրանք կանգնեցին դեմդիմաց և նայեցին իրար որպես երկու դատապարտվածներ։ Ապա արքան հուզմունքով ծնկի չոքեց Ներսեսի առջև ու երկյուղածությամբ համբուրեց նրա աջը։ Եվ նորընծա ու նորընտիր հովիվը, դեռևս առանց այդ իրավունքն ունենալու, խաչակնքեց ու օրհնեց արքային։

Գլուխ երկրորդ

Պալատի միօրինակ կյանքում կուտակված ձանձրույթն այնքան էր խտանում, որ չդիմանալով իր իսկ ուժին, ժամանակ առ ժամանակ հրաբուխի պես ժայթքում էր, և

օդ էին թռչում վառ, պսպղուն գույներ, շենշող ժպիտներ, պեծ ու կրակ կատակներ, խեղդված շշուկները փոխվում էին լիաթոք ձայների, և բամբասանքն անգամ մի տեսակ բարիանում էր։

Պալատը պատրաստվում էր ճաշկերույթի։

Խոհակերոցում ծաղարարները՝ ունելիները, ակիշները, շերեփներն ու մսահանները ձեռքներին, կանգնած էին կրակարանների շուրջը, որոնց վրա հանգչում էին երիզանման շրթերով պղնձե կաթսաները, տափարակ ու գնդաձև սաները, խեցեղեն ու մետաղյա պույտերը՝ բերանը փորից անձուկ, լայնաբերան, գրեթե հարթ կողերով կճուճները, ձվաձև, ծանծաղ հատակով ու երկար բնով տապակները և ցած ոտներով ու խաչաձև ձողերով հրավանդները՝ երկաթյա նուրբ և սրածայր շամփրերը վրան շարված... Եվ այս բոլորը զվարթ ձայնակցում էին իրար, անհամբերությունից ասես թովում ճթթացող կրակի վրա, համ ու հոտ նվիրելով հրաշեկ կրակից քրտնած, կարմրած մետաղից ու եռ եկող հեղուկներից խենթացած բարիքներին։

Գետնափոր, աղյուսե բոլորակ որմերով թոնիրներում հացեփյացները քաղցրաբույր հաց էին թխում և ամփոփում հյուսկեն սակառների ու տաշտաձև թափուրների մեջ։

Գինին, որ արևի հուշից փրփրած էր ու արբեցած, ճաշակներով լցնում էին արծաթյա թակույկների մեջ, որոնք լայնշի էին, պարանոցավոր ու լայնաշուրթ, երկու կարճ ականջանման կանթերով։ Օշինդրի, վարդի, մկնսոխի, Գապալասի ու սերկևիլի գինիներից բացի, սավարափոր կարասներում ու մետաղյա կահույքներում պահվում էին նաև մեղրի ու կիտրոնի օղի, որոնց մեջ խոստում կար մարդուն՝ ինքն իրեն մոտենալու և ինքն իր հետ լինելու։

Տաճարը, որտեղ սովորաբար տեղի էին ունենում պալատական ճաշկերույթները, քառանկյուն մի շենք էր, երկարությունը, լայնությունն ու բարձրությունը քառասնական կանգուն, ներքուստ՝ անսյուն ու գմբեթավոր, շուրջանակի՝ կամարակից խորաններ ու խորշեր, որոնց վրա նստած էին մի-մի ոսկեզարդ լուսաճաճանչ գմբեթ, որմերը ծածկված էին իրախճանքի և ըմբշական տեսարանների ու գազան-

ների կենդանագիր նկարներով։ Դռները՝ մանրաքանդակ ու երկբացիկ։ Պատերին ամրացված էին աշտանակներ, իսկ խճանկարված հատակին, իրարից ոչ հեռու, կանգնած էին եռաստեղ շարժական ջահեր։

Սպասավորները միացնում էին լայն, քառակուսի սեղանները և ծածկում ազնիվ օթոցներով։ Սեղանների շուրջը դասավորում էին բազմականները, որոնք նույնպես քառակուսի էին՝ ձևացած երեք միահար երեսներից։ Բազմականների վրա՝ ոսկեշող երանգներով բարձեր։ Եթե ամեն բազմական լեզու առներ, ապա կպատմեր, թե որքան մարդկային կիրք է ծախսված իր համար, թե ինչպիսի քնքշությամբ են տիրոջ ձեռքերը հպվել իր արմունկներին, համենայն դեպս՝ միայն այս փայտի կտորը գիտի և աշխարհում ոչ մի կին արարած դեռ չգիտի, թե որքան քնքուշ կարող են լինել աղամարդու ձեռքերը, թե ինչպես է տիրոջ մեջքը ամուր կպել, սեղմվել թիկնակին, կարծես ճգնելով ձուլվել նրա հետ, իսկ երբեմն էլ, անգամ զրույցի ամենաթեժ պահին, բնազդաբար և զգուշությամբ քսվել նրան, կարծես ստուգելու նրա գոյությունը, ամրությունը, հավատարմությունը, համոզվելու, որ, չէ, չի խախտված մարդու և աթոռի կապը։ Բանն այն է, որ նախարարները տաճարում ունեին իրենց հատկացված տեղերը, որոնք կոչվում էին գահ կամ բարձ։ Այդ բարձերը նրանց տրվում էին ըստ տոհմի ավագության և երկրում գրված դիրքի։ Պատվասեր նախարարների համար խիստ մեծ նշանակություն ուներ, թե որ տեղում են իրենք նստած։ Եվ այդ տեղի պատճառով հաճախ եղբայրասպան արյունալի պատերազմներ էին լինում։ Այդ վիճակին վերջ տալու համար պալատում կազմվում էր գահերի հատուկ ցուցակ՝ գահնամակը, որ վավերացվում էր ամեն թագավորի օրոք։ Արշակի ժամանակ գահնամակի առաջին չորս տեղերը զբաղեցնում էին Տոփաց, Աղձնյաց, Կորդվաց ու Գուգարաց բդեշխները, ծայրամարզերի կիսանկախ իշխանները՝ սահմանապահը կամ գահերեց արքունի տաճարին։ Ապա գալիս էին Սյունյաց տերը, թագակալ իշխանության Բագրատունյաց ասպետը, Արծրունյաց նախարարը, Խոռ-

խոռունի մաղխազը, Մամիկոնյան սպարապետը, ընդամենը՝ հարյուր նախարար ու տանուտեր։

Այդ օրը միջնաբերդի պարսպին կանգնած զինվորները ստեպ-ստեպ թաշկինակ էին ճոճում, տեղեկացնելով հյուրերի գալուստը։ Կոշնականները գալիս էին իրենց ծառաներով, ժանում Տրդատա դռնից, իջնում նժույգներից և, աջը սրտին մոտեցնելով, ողջունում իրար ու միմյանց ձեռք սեղմում։ Ապա ռաճարի հատուկ սրահում հանում էին գրատները՝ կնգամենիք, գայլենիք, աղվեսենիք, որոնք, արքունի քղամիդի պես, բազուկներն ազատ թողած, ճարմանդված էին աջակողմյան ուսի մոտ և իջնում էին պատմուճանին հավասար։ Աղացած խոտով՝ օշնանով, նրանք ձեռքերը լվանում էին նգուլրի մեջ՝ մի կոնք, որ ներսում ուներ մազանման ծակոտկեն խուփ, որի միջից ջուրն իջնում էր հատակը։ Նման հանդիսավոր օրերի նախօրյակին նրանք լողանում էին տանը, օծվում անուշաբույր յուղերով, ապա զբաղվում մազերի հարդարանքով։ Հյուսված գանգրագեղ մազերը, կանանց նման ուռուցիկ և պսակաձև, հավաքում էին գլխի շուրջը։ Վարսակալն էր գլխի միակ զարդը, որ թողնվում էր անծածկույթ։ Նույնիսկ թագավորը խնջույքի ժամանակ թագը հանած էր լինում։ Թագը հանգչում էր հատուկ սենյակում, որ կոչվում էր վանք պատմուճակացն։ Բոլորն էլ մեջքներին կարմիր մետաքս գոտի էին կապել՝ որպես իշխանական նշան։ Հագել էին գույնզգույն մուկեր՝ նշատերև զարդերով։ Մատներին կշտապանակ էին դրել, որ զարդ էր և ոչ կնքելու մատանի։ Առանձնաշնորհյալները կրում էին խույր, գումարտակ, մարգարտազարդ վզնոց ու գինդեր։ Աչքի ընկած նախարարներին թագավորը նվիրել էր մի-մի կարմիր մաշիկ, երկու կարմիր մաշիկ կարող էր հագնել միայն ինքը, թագավորը, ինչպես նաև՝ սեղանի վրա միայն նա իրավունք ուներ գործածելու ոսկի գդալ, պատառաքաղ ու բաժակներ։ Խնջույքի ժամանակ նախարարները չէին հանում սուրն ու թուրը, և այլևս ոչ ոք չէր հիշում, կամ ձևացնում էր, թե չի հիշում, որ այդ սովորությունը գալիս էր արքունիքի դառը փորձից, երբ անզեն ու անպաշտպան իշխանները հաճախ զոհ էին դառնում թագա-

վորի վրեժխնդրությանը։ Թագավորն էլ այլևս չէր մտածում վամ ձևացնում էր, թե չի մտածում, որ դա ուղղված էր նախ և առաջ իր անձի դեմ։ Եվ, այսպես, նախարար ու թագավոր, երկուստեք համաձայնությամբ, երբեմն մոռանում էին իրենց դարավոր թշնամությունը և, մինչև ատամները զինված, հավաքվում խրախճանքի։

Վասակը կարճ ոտքեր ուներ ու կարճ ձեռքեր, բայց երբ քայլում էր, կողքից դիտողը կարող էր անմիջապես կռահել, որ սպարապետը չգիտի իր ոտքերի ու ձեռքերի կարճության մասին։

Հիմա նա նորից պալատում էր, շրջապատված շքեղ ու շլացնող հարստությամբ, որից նա մի տեսակ անպաշտպան էր դառնում միշտ։ Եթե այստեղ դավադիրներ հարձակվեին իր վրա, նա իրեն կզգար մի անվարժ պատանի, որ դեռ չի իմանում, թե ինչպես են սուրն օգտագործում։ Դրա համար բաց դաշտ էր պետք, երկինք, հորիզոն։ Նրան թվում էր, թե դատարկ պալատը լի է շշուկներով։ Նա շշուկ էր լսում պատերից, սյուներից, գորգերից, մարմարե աստիճաններից և հետզհետե արագացնում քայլերը, որպեսզի փոշու պես չնստեն, չկպչեն զգեստներին ու ղենքերին։

Խարդավանքի, դավի, չարախոսության ու զրպարտանքի շշուկներ էին դրանք, որոնք, սակայն, չէին ծնվել այսօր, այլ հարյուրամյակների պատմություն ունեին։ Պատերը ներծծել էին այդ շշուկները, խառնել իրենց մեջ ամփոփված կավի, ավազի ու քարի հետ, կարծես ավելի պնդանալու ու դիմացկուն դառնալու համար։ Շշուկներ այն մասին, թե ինչպես Խոսրով Կոտակի օրոք սրի քաշվեցին մի փուչ պատճառով թշնամացած երկու նախարարական հզոր տները՝ Մանավազյաններն ու Որդունիները, որոնք հավիտյանս վերացան աստարեզից։ Նաև այն մասին, թե ինչպես մեծ ու հասուն այրերի դիվանագիտության զոհը դարձավ տասնհինգամյա մանուկ Գրիգորիսը, որին հայրը՝ Վրթանես կաթողիկոսը,

Վրաց ու Աղվանից աշխարհներն ուղարկեց որպես եպիսկոպոսապետ, իսկ մասքուինները, իմանալով, որ Քրիստոսի օրենքները արգելում են ավարառությունը, հափշտակությունը, սպանությունը, ագահությունը, ուրիշի ունեցվածքներին աչք դնելը, սաստիկ զարմացան և մանկահասակ եպիսկոպոսապետին նահատակեցին, կապելով ձիու պոչից և քարշ տալով ծովեզրյա Վատնյա դաշտում։ Թե ինչպես Վրթանեսի մյուս որդին՝ Հուսիկ կաթողիկոսը, անարժան Տիրան թագավորին թույլ չտվեց եկեղեցի մտնել, բիրերով ծեծ ու ջարդ կերավ և սպանվեց հենց եկեղեցու մուտքի մոտ։ Թե ինչպես աշխարհատեր մեծ իշխան Մանաճիհր Ռշտունին, ի հեճուկս բարի մարդկանց խրատների, ութ հարյուր անմեղ բանտարկյալների գահավեժ ժայռից թափել տվեց Վանա ծովն ու ոչնչացրեց։ Թե ինչպես պարտված Հայաստանը միշտ ներկայացել է կնոջ կերպարանքով, տխուր-տրտում նստած հռոմեական դրոշի առաջ, ձեռքը ծնոտին տված։ Թե ինչպես հայ կանայք դրա համար երբեք չեն ների իրենց տաքարյուն ու մեծախոս տղամարդկանց, չեն ների նրանց կարճամտությունը, անհեռատեսությունը, ոչ թե գլխով, այլ միայն հույզերով գործելու ախտն ու արատը։ Թե ինչպես՝

— Արքան այսօր հազարապետին զրկելու է գահից, նստեցնելու է Գնթունու ու Սահառունու միջև։

— Ի՞նչ է արել որ։

— Արքունի հարկերի մի մասը յուրացրել, տարել է իր գավառը։

Բայց սա արդեն որոշակի շշուկ էր, բառերի վերածված շշուկ, մարդկային ծույլ և խաղաղ ձայներ, որոնց ուղղությունն էլ կարելի էր գուշակել, պատկանելությունն էլ։ Երևի սպասուհիներ էին կամ վարձակներ։

Վասակը գլուխը թափ տվեց ու շարունակեց քայլել պալատի դատարկ միջանցքներով։ «Այ քեզ Հայաստան»,— ինքն իրեն ժպտաց սպարապետը։ Եթե նրան հարցնեին, թե ինչ բան է Հայաստանը, նա, առանց երկմտանքի, կվերապատմեր այս խոսակցությունը։ Կվերապատմեր բառ առ բառ։ Ջավելացնելով ու չպակասեցնելով ոչինչ։ Ամենքն ամեն ինչ գիտեն։ Գիտեն, թե ով է գահ ստանում և ով է

գահից զրկվում։ Թե ով ումից հետո է նստելու տաճարում։ Ում հողն են բռնագրավելու և ում են նվիրելու։ Որ մեղքի և որ ծառայության համար։ Ով ինչքան հարկ է տալիս։ Ով ում է պարտք։ Եվ ինչքան է պարտք։ Ում բերքն է այս տարի առատ, ումը՝ սակավ։ Ով ում հետ ինչ խոսեց, որտեղ խոսեց, որ թփի մոտ, որ ժայռի տակ. որ պատի կողքին։ Ամե՛ն ինչ գիտեն։ Գիտեն նույնիսկ, թե ում մտքին ինչ կա։ Քո մասին գիտեն նաև այն, ինչ ինքդ դեռ չգիտես։ Ամե՛ն ինչ գիտեն, ամե՛ն ինչ։ Եվ իմանալը ամեն մեկն իր իրավունքն է համարում։ Ոչ ոք չի հանդգնում ժխտել, որ շինականը շինական է, կրտսեր նախարարը՝ կրտսեր նախարար, ավագ նախարարը՝ ավագ նախարար, արքան՝ արքա։ Չէ, ոչ ոք չի ժխտում։ Բայց մտովի, ո՛չ ոք մտովի չի ընդունում այդ սահմանը։ Մտքով ամեն մեկը սեղան է նստում արքայի հետ։ Խորհուրդներ տալիս նրան։ Սովորեցնում, թե ինչ պիտի անի։ Ում պիտի քշի պալատից և փոխարենը ում բերի։ Եվ մտքում որոշածը տարածում է անմիջապես, և ամեն օր մի նոր լուր է ծնվում ու շրջում երկրով մեկ։ Ա՛յ քեզ Հայաստան։ Բոլորը ճանաչում են իրար, բոլորը ազգական են միմյանց, խնամի, բարեկամ, հարևան։ Բոլորը քեֆ են արել իրար հետ, թաս բարձրացրել, կենաց ասել, գովել, փառաբանել միմյանց, ամուսնացել իրար հետ, երեխաներ բերել, հետո այդ երեխաներն են իրար առել, բազմացել, ցրվել տարբեր գավառներ, և նրանց թվացել է, թե շատ են իրարից հեռացել, բայց ինչքան էլ հեռացել են, ընդամենը մի քանի օրվա ճամփա է բաժանել նրանց։ Իսկ այն, որ իբր մեր գավառները բոլորովին կտրված են իրարից, որ հայոց նախարարությունները անանցանելի լեռներով ու ձորերով են բաժանված միմյանցից, որ ձմռանը ձյան հաստ շերտի տակ ծածկվում ու կորչում են ճամփաները ու կածանները, այդ մենք ենք հնարել, մե՛նք, մեզ մխիթարելու, մեր արժանապատվությունը պաշտպանելու համար։ Դու Զվիկի թոռը չե՞ս։ Էն, որ երդիկից ընկավ ու ոտը կոտրեց։ Իսկ դու Հրսիձորի Մեհարի փեսան չե՞ս։ Ա՛յ քեզ Հայաստան։ Եվ դեռ քո հարևանները, աշխարհի մի ծայրից մինչև մյուս ծայրը բազմած Բյուզանդիան ու Պարս-

կատանը, որտեղ տարբեր վայրերում քարե ժամացույցները տարբեր ժամանակ են ավետում կեսօրվա գալուստը, ուզում են քո խեղճուկրակ մարմնից էլի մի պատառ պոկել, էլի մի բան փախցնել, որպեսզի է՛լ ավելի բիթ թթի ապրենք, կատակվենք իրար վրա և միմյանցից ծածկենք հորիզոնը։ Որպեսզի է՛լ ավելի շատ ճանաչենք իրար, է՛լ ավելի բան իմանանք միմյանց մասին, է՛լ ավելի խառնվենք ուրիշի գործերին, դրացու, Զվիկի, Հրսիկարի Մեհտոի, հարևան գյուղի շինականի և... մեզա՞ քեզ, տեր, մեզա՞... և պալատի ու արքայի գործերին։ Որպեսզի երկրում թեկուզ երկու հոգի էլ անծանոթ չմնան իրար։ Որպեսզի երկրում չմնա և ոչ մի գաղտնիք։ Եվ երկի՛ր չմնա, երկի՛ր։ Այ քեզ Հայաստա՛ն։

Սամվել և Մուշեղ Մամիկոնյանները հեռու էին քաշվել ավագ ու կրտսեր նախարարներից, որոնք խումբ-խումբ զբաղվում էին տանտերի տարբեր անկյուններում։ Մեկը Վահան Մամիկոնյանի որդին էր, մյուսը՝ Վասակ սպարապետի։ Զարմիկները քշփշում էին իրար ականջի ու անընդհատ ծիծաղում։ Ոչ ոք առանձնապես ուշադրություն չէր դարձնում նրանց ծիծաղի վրա, որովհետև էլ ինչի՞ վրա պիտի ծիծաղեն երիտասարդները, եթե ոչ իրենց սիրային արկածների։ Լավ է, լավ է, թող ուրախանան, թող զվարճանան։ Մի տես, թե ինչ հրաշալի երիտասարդություն է աճում Հայաստանում, տղաներ, քաջ, գեղեցիկ։ Արյունը նո՛ր է դալիս նրանց մարմիններում։ Թող նո՛ր գա, թող թշշա, թող փրփրի։ Հիմա որանց ժամանակն է, մերն՝ ի՛նչ, մերն անցավ, անցածն էլ չեմ վերադարձնի, մեզ մի քանի տարվա կյանք է մնացել՝ մինչև որ ստքնեբս մեկնենք։ Հիմա մեր պարտքն է որանց պահպանել, մեր փորձը հաղորդել նորերին, արժանի հետնորդներ ունենալ։ Սրանցն է ապագան, այս խելոք կտրիճներինը։ Մեզանից հետո թող գան, թող բարով կառավարեն։ Ինչ կա որ, գա է աշխարհի օրենքը, ո՞վ է ասել, թե մենք հավիտենական ենք։ Լավ է, լավ է, թող ուրախանան, թող զվարճանան, թե չէ վաղն այլևս ժամանակ չեն ունենա։ Հասկանան, թե ինչ ծանր բեռ է իշխանությունը, կկանգնեն

այդ բեռի տակ, որ հեռվից թեթև ու քաղցր է թվում, ու չունչերը կկտրվի։ Հետո կամաց-կամաց կսովորեն, բայց էլ չի՛ լինի երիտասարդություն, էլ չի՛ լինի։ Հայտնվի փորը, փոքր, կոկիկ փորը, բայց այդպես չի մնա, կմեծանա՛, կմեծանա՛։ Հետո զառիվերը կսկսես դժվարությամբ բարձրանալ։ Հետո կգան հիվանդությունները։ Հանգիստ կաց, հանգի՛ստ, գգա, ամեն ինչ հերթով գգա։ Իսկ հիմա ինչքան արագ ուզում է ծիծաղիր, որդիս, ծիծաղիր։ Ծիծաղը լավ բան է։ Ծիծաղը առողջություն է։ Ծիծաղեք, արծիվներ, ծիծաղեք։ Ծիծաղը ջահելություն է։ Իսկ ջահելությունը մեր ապագան է։ Հասկա՛ց։

Մինչդեռ Սամվելն ու Մուշեղը ծիծաղում էին ոչ թե իրենց սիրային արկածների, այլ հենց ծերուկների վրա։ Որովհետև վստահ էին, թե իրենք ընդունակ են անելու այն, ինչ չի կարողացել անել այս էքսակենդան ծերուկներից և ոչ մեկը։ Տես, տես, հազիվ է ոտքերը քարշ տալիս, բայց մինչև վերջին շունչը չփչի, պիտի պալատ գա, աչքի առաջ լինի միշտ, որ հանկարծ չմոռանան իրեն, հանկարծ անմասնակից չմնա որևէ գործի։ Նա գիտի այս երկրի օրենքները։ Ի՞նչ կարևոր է, թե ինչ ես արել, ինչ օգուտ ես տվել երկրիդ, կարևորն այն է, որ աչքի առաջ լինես միշտ, ամեն տեղ երևաս, խոսես ու խոսես, փայլփլուն և գայլնզգույն ճառեր ասես, կենաց խմես ու կենաց լսես քո մասին։ Փեշդ բացես ու փառք հավաքես։ Անկողնում էլ փեշդ բռնած քնես, որ հանկարծ մի կտոր փառք չընկնի ու անհետ չկորչի։ Սմբատ Բագրատունի թագակալ ասպետի քիթը քար եկավ, ու նա, ստիպված, ձեռքը տարավ քթին։ Եվ ի՞նչ։ Հենց ձեռքդ հեռացրիր, այլևս փառքիդ տերը չես։ Փառքի մի փշրանք ընկավ գետին ու գլորվեց։ Գուցե թագակալության տիրոջո՞ն էր։ Եվ նա մնաց Սմբատ Բագրատունի ասպետ։ Գուցե ասպետությա՞ն տիրոջոն էր։ Եվ նա մնաց Սմբատ Բագրատունի թագակալ։ Գուցե երկո՞ւսն էին՝ թագակալն ու ասպետը։ Եվ մնաց միայն Սմբատ Բագրատունի։ Եթե՞ Սմբատ Բագրատունի։ Քթիդ վրա չղայնացիր, քթի՛դ, և ոչ թե աշխարհի։ Գլորված փառքը տեսավ Գարջույլ մաղխաղ Խոմխոռունին, անենտ կուցավ,

աննկատ վերցրեց, աննկատ գցեց պարղած փեշի մեջ։ Եվ դարձավ Թագակապ ասպետ մաղխազ Գարջուլ Խոռխոռունի։ Անիմաստ է թեև, բայց լավ է հնչում։ Ծերերի երկիր է Հայկ Նահապետի ստեղծած երկիրը։ Ոչ թե միածին որդի Քրիստոսի, այլ ծերերի պաշտամունքն է այնտեղ իշխում։ Ծերությունն է սրանց միակ առավելությունը։ Ոչ թե խելքը, ընդունակությունը, կրթությունը, այլ միայն և միայն ծերությունը։ Իսկ չահելությունը թերություն է, մե՜ծ, խոցելի՜, աններելի՜, աներևակայելի՜, անհանդուրժելի՜, անթույլատրելի՜, անտանելի՜ թերություն։ Հապա՜։

— Հը՞, տեր Մամիկոնյան, շատ ենք սպասելո՞ւ, որ պատերազմ լինի։ Ե՞րբ ես իմ կյանքը պաշտպանելու։

Սմբատ Բագրատունին էր, միակը, որ իրավունք ուներ կրելու մանր մարգարիտներից երեք փաթ վարսակալ՝ առանց ոսկու և ակնեղենի։ Կարճահասակ, պինդ ոտքերով Վասակը ամեն անգամ կատաղում էր նրա նույն անհամ կատակը լսելով և ամեն անգամ էլ պարտվում՝ նրա անսահման տափակության առաջ, որի մեջ հզոր, անպարտելի ուժ և կենսունակություն կար։ Եվ հայոց սպարապետը, որ մարտի դաշտում բազմիցս փայլել էր իր հաղթանակներով, միշտ պարտված էր վերադառնում պալատից։ Նա այստեղ մի տեսակ խեղճ ու անպաշտպան էր զգում իրեն և շփոթմունքից աշխատում էր սիրաշահել բոլորին։ Նրա պատմուճանի նիրսում մի գրպան կար, որտեղ զանազան թանկարժեք զարդեր էր պահում։ Երբ զգում էր, որ դիմացինը խորամանկում է իր առաջ, նա որևէ առիթ էր գտնում և այդ զարդերից մեկը նվիրում նրան։ Որպես ինքնապաշտպանություն։ Երբ զրուցակիցը նրբորեն խայթում էր, նրան էլ էր մի բան նվիրում։ Որպես վահան, որի ետևում կարելի էր թաքնվել ու ոչինչ չտեսնել։ Իսկ երբ քծնում էին, նա գրպանի ամենաթանկարժեք զարդն էր տալիս նրան։ Որպես պատնեշ նրա և իր միջև։ Եվ բոլորը հպարտությամբ կրում էին քաջ ու առաքինի սպարապետի հուշանվերները, չկասկածելով, որ դրանցից յուրաքանչյուրը խաղաղ կյանքի պարգևած պարտությունների անխոս և տխուր վկայություններն են։

— Տեր Գնունի,— Սմբատ Բագրատունին շշնջաց ծերու-

նազարդ իշխանի ականջին, որ, հակառակի պես, ծանր էր լսում,— տեղյա՞կ ես, որ արքան մտադիր է գահից զրկել Անդովկ Սյունուն։ Ուզում է նրան նստեցնել Խոռխոռունու և Մամիկոնյանի միջև։

Մի քիչ բարձր ստացվեց, և շատերը լսեցին, բայց ոչինչ, լսում են՝ լսեն։

— Իսկ ինձ հայտնել են, որ Կամսարականին է տեղաշարժելու։ Նստեցնելու է Գաբեղենից տիրոջ ու Դիմաքսյան իշխանի միջև։

— Ողջույն երիտասարդներին,— ուշացումով տաճար մտավ Մերուժան Արծրունին և առաջինը հանդիպեց Սամվելին ու Մուշեղին։ Հովանավորի տեսքով թփթփացրեց նրանց ուսերին և, առանց կանգ առնելու, միացավ ծերուկներին։ Մուշեղն ու Սամվելը ատամները սեղմեցին և թշնամաբար նայեցին նրա ետևից։ Հատկապես չէին սիրում Մերուժանին, որովհետև թեև երիտասարդ էր նա, բայց արդեն մեծ կշիռ ուներ արքունիքում և գահնամակում երրորդ տեղն էր զբաղեցնում՝ Սյունյաց ու Բագրատունյաց նախարարների գահերից հետո և մաղխազ Խոռխոռունու ու սպարապետ Մամիկոնյանի գահերից առաջ։ Անդովկ Սյունին նկատեց Մուշեղի ու Սամվելի թշնամական հայացքները և ժպտադեմ մոտեցավ նրանց։

— Եթե դուք նստեք մեր փոխարեն, մեզանից էլ վատ կլինեք,— ասաց նա մեղմորեն և առանց նախատինքի։— Որովհետև մեզանից ավելի խելոք եք և ընդունակ։ Հենց դա է սարսափելին։— Եվ ժպտադեմ էլ հեռացավ, ուսի վրայից մի քանի բառ նետելով Մուշեղին ու Սամվելին.— Աստված չանի, որ դուք գրավեք մեր տեղերը։

— Արքա՞ն,— ընդհանուր աղմուկի մեջ լսվեց սենեկապետ Դրաստամատի հուժկու ձայնը, և միանգամից լռություն տիրեց։

— Գահնամակում փոփոխություն չկա՞, սենեկապետ։

— Նախարարական աթոռների հերթականությունը նույնն է, արքա։

— Ուրախ եմ իմանալ, որ ուրեմն չի խախտված մեր միաբանությունը։ Եվ քանի որ ոչ ոք չի պատժվել, ոչ ոք չի մեղանչել գահի դեմ...ոչ թե իմ, այլ գահի... թող ամեն մարդ նստի սահմանված տեղում։

Այս սավորական արարքությունից հետո նախարարները գրավեցին իրենց տեղերը, և նորից բազմականի արմունկն ու տիրոջ ձեռքերը կպան միմյանց, նորից բազմականի թիկնակն ու տիրոջ մեջքը քնքշորեն քսվեցին իրար՝ որպես մարդու և աթոռի սիրո ու հավատարմության խոստում։

Դրաստամատը, շունչը պահած, հետևում էր արքային, և միայն ինքն էր կռահում տիրոջ հայացքում թաքնված տենդագին իրարանցումը։ Եվ աղոթում էր մտքում, որ տերը չսխալվի հանկարծ։ Առաջին անգամն էր, որ արքան իր ծրագիրը չէր հայտնել Դրաստամատին։ Ուրեմն, խելառ ծրագիր էր դա, ուրեմն, նա գիտեր, թե որքան հեշտությամբ սենեկապետը կջրի նրա հղացումը և քարը քարին չի թողնի։ Հիմա նա կուրորեն կռվի է նետելու իրեն՝ կա՛մ հաղթելու, կա՛մ տանուլ տալու համար։ Տեր ամենակալ, քո աջը հասնի, գո՛ւ օգնես այս խելառ Արշակունուն։

— Իշխան Վաչակ, դու էլի՞, ըստ կարգի, վերջին տեղն եմ զբաղեցնում,— հարցրեց արքան։

— Չեմ դժգոհում բախտից, արքա։

— Վաղուց չես տեղաշարժվել, իշխան։ Հարևաններդ են մեղավոր։ Ոչ ոք չի ուզում մեղանչել գահի դեմ, որպեսզի տեղ բացվի քեզ համար։ Դու նրանց վրա նեղացիր և ոչ թե ինձ։

— Երախտապարտ եմ, որ արժանացա ուշադրությանդ, արքա։

Իշխան Վաչակը, որ վախից գամվել էր աթոռին, միկերպ վեր կացավ, զգալով, որ խոսակցությունն այդքան շուտ չի ավարտվի։ Բոլորը, զուսպ ժպիտով, նայեցին շփոթահար Վաչակին և է՛լ ավելի սիրեցին իրենց բազմականները։ Սիրեցին նաև արքային։ Սիրեցին նաև Վաչակին։ Սիրեցին նաև իրար։

— Քո տեղն ու վիճակը ինձ թելադրում են համակրել քեզ, իշխան,— շարունակեց արքան։— Ես ուզում եմ, որ

այսօր դու իմ տեղը նստես։ Գոնե մի օրով։ Իսկ ես կնստեմ քո տեղը։

— Ես գոհ եմ իմ վիճակից, արքա,— ասաց Վաչակը։

— Դու չգիտե՞ս, իշխան, որ եթե արքան թեկուզ մեզմ էլ խոսի, թեկուզ շշուկով, դա արդեն հրաման է։ Ուրեմն, բարի աքա՞ղքն էլ այս երկրում պիտի հրամանով իրագործվի։

Արքան վեր կացավ և նախատինքով նայեց իշխանին։ Վեր կացան նաև նախարարները։ Իշխան Վաչակն իր թուլացած ոտքերը մեծ ճիգով տարավ հետը ու կանգնեց արքայի բազմականի բարձր թիկնակի ետևում, և այնտեղից միայն նրա գլուխը երևաց։

— Դե, իշխան, ես այսօր իմ տեղը զիջում եմ քեզ։ Եղբայրաբար։ Առանց քեզ ծաղրելու կամ նվաստացնելու մտադրության։

Արքան արագ տեղափոխվեց և ուղեց նստել ամենածայրի բազմականին, բայց նկատելով թիկնակի ետևում պատսպարված իշխան Վաչակի գլուխը, ուղղեց կիսով չափ աջակողմն ծալած ոտքերը ու մեղմորեն դիմեց նրան.

— Նստիր, որ ես էլ նստեմ։

Իշխան Վաչակը շվարած գուրս եկավ թաքստոցից ու մեքենաբար նստեց արքայի բազմականի ծայրին։

Արքան ևս նստեց։ Նստեցին նաև նախարարները, և մի պահ քար լռություն տիրեց։ Համենայն դեպս, տարօրինակ էր, թեկուզև այսպիսի իրավիճակում, մի ուրիշ մարդու տեսնել Արշակունիների բազմականին նստած։ Եվ, այդ տեսարանից թևավորված, ամեն մեկն իրեն պատկերացրեց հենց նույն տեղում։ Հայրուր նախարար իրար ետևից նստեցին արքայի բազմականին, նրանցից մեկը նույնիսկ ձեռքով արեց իր նմանակին։

— Իսկ հիմա պատմիր, իշխան, թե ի՞նչ ես զգում իմ տեղին։

Արքայի ձայնը լսելուն պես, բոլոր նախարարները անմիջապես թողեցին նրա բազմականը, վերադարձան իրենց տեղերը։ Միայն Մերուժան Արծրունին էր, որ դեռ մի փոքր էլ նստեց։ Եվ էլի տաժողը եղավ դռան մոտ կանգնած

խեղճուկրակ մի զինվոր, որ հազիվ մի կերպ հանդգնել էր՝ իրեն պատկերացնելու այդ նույն բազմականին, բայց ափսոս, որ ուշացավ, բախտը չբերեց, արքայի ձայնը լսելով, նա կես ճանապարհից վախեցած ետ եկավ ու էլի կանգնեց դռան մոտ։

— Պատմիր, իշխան, ի՞նչ կաներիր, եթե իմ տեղը լիներիր։

Պոռթկաց նախարարների ծիծաղը, և բոլորն ավելի հարմար տեղավորվեցին իրենց բազմականների վրա, ըմբոշխնելով մոտալուտ հաճույքը։

— Մի ծիծաղեք, իշխաններ։ Ես խստիվ դեմ եմ ձեր ծիծաղին։

Ապա, համակ ուշադրություն դարձած, արքան անհամբեր սպասեց իշխան Վաչակի խոսքին, և ամենքը դժգոհ գլխի ընկան, որ նա իսկապե՛ս կատակելու մտադրություն չուներ։

— Ես...— Իշխան Վաչակը հանկարծ լսեց սեփական ձայնը, որ շատ օտար ու տհաճ հնչեց իր ականջին։— Ես կբարձրանայի ու ման կգայի սեղանի վրա...

— Ես հասկանում եմ, դու, անշուշտ, չէիր բարձրանա ու ման չէիր գա սեղանի վրա։ Քեզ պարզապես այդ հնարավորությունն է գրավում։ Ուրեմն, քեզ համար դա՞ է թագավորության խորհրդանիշը։ Հետաքրքիր է։ Ուրի՞շ, իշխան, ուրի՞շ։

— Ես կհրամայեի, որ նախարարները խուզեն իրենց մազերը և արքային ներկայանան միայն ճաղատ գլուխներով,— վախից մի փոքր համարձակ դարձավ իշխան Վաչակը։

— Ուրի՞շ, իշխան, ուրի՞շ,— ոգևորվեց արքան։

— Եթե ես մեղք գործեի, կստիպեի, որ ամբողջ երկիրը պաս բռնի ինձ համար,— է՛լ ավելի համարձակ շարունակեց իշխան Վաչակը, արդեն առանց լսելու իր ձայնը։— Ես կարգելեի, որ այն գույները, ինչ ես եմ հագնում, հագնի մեկ ուրիշը։ Ես իմ սեփական գույները կունենայի։

— Ուրի՛շ ուրի՛շ,— էլ ավելի ոգևորվեց արքան։

— Երբ ձի հեծած որևէ տեղ գնայի, ես կհրամայեի, որ իմ չորս բդեշխները. եառճ շորեր հագած, վազեին իմ երկու

կողքերից,— և իշխան Վաչակն արդեն ամբողջ մարմնով տեղավորվեց բազմականի վրա, մեջքը հենեց թիկնակին և ամուր կառչեց աթոռի արմունկներից։

— Ուրի՛շ, ուրի՛շ,— գրեթե գոռաց արքան։

— Իսկ երբ գահին նստեի, բդեշխները կկանգնեին պատվանդանի աստիճաններին, ձեռքերն իրար վրա դրած, իբրև նշան, որ ամբողջ կյանքը նվիրել են իրենց տիրոջը։— Ապա, ինքն իրեն մոռացած, իր ափերից դուրս եկած, նա մաղձով ու չարությամբ ավարտեց իր խոսքը.— Ես բոլոր խեղճերին ու աղքատներին կոչնչացնեի... Չէի թողնի, որ նրանց հոտը տարածվեր ամենուրեք... Իմ երկրում կմնային միայն նրանք, ովքեր հարուստ են... Ովքեր առողջ են... Ովքեր գեղեցիկ են...

Նորից խոր լռություն տիրեց, և բոլորի այլայլված հայացքները գամվեցին երջանկությունից կարմրած իշխան Վաչակին։ Եվ այդ երջանկությունը երևի ավելի երկար տևեր, եթե իշխանը նոր միայն, այ հենց նոր, չնկատեր, որ իր կարճ ոտքերը չեն հասնում գետնին։ Դա միանգամից սթափեցրեց նրան, և նա զգուշությամբ նորից նստեց բազմականի ծայրին։

— Աստված մի արասցե, որ դու դառնաս թագավոր,— մռայլ և կիսաձայն ասաց արքան։— Նույնիսկ ես սոսկացի քո խոսքերից։

— Իսկ դո՞ւ... դո՞ւ ինչ ես զգում իմ տեղը, արքա,— կարեկցանքով հարցրեց իշխան Վաչակը։

— Թեև այստեղ շատ համեղ և շատ ընտիր կերակուրներ կմատուցվեն, բայց պալատական ճաշկերույթներից առաջ ես տանը, համենայն դեպս, կուշտ կուտեի։

— Ուրի՞շ, արքա, ուրի՞շ։

— Ես կծիծաղեի բոլոր նրանց վրա, ովքեր չանում են գոնե մի աթոռով առաջ գնալ։

— Հետո՞, արքա, հետո՞։

— Ես միշտ ճշմարտախոս կլինեի։ Չէի քծնի։ Չէի ծռմռվի։ Քեզ դուր գալու համար կաշվիցս դուրս չէի գա։

— Ինչո՞ւ, արքա, ինչո՞ւ։

— Որովհետև, միևնույն է, ես ամենավերջինն եմ, ես Եյդպիսի խնդիր չունեմ։

— Հետո՞, հետո՞։

Հանկարծ նրա գեմքը ցավից այլանդակվեց, նա կծկվեց, գարձավ մի բուռ, ձեռքը տարավ փորին, ու ճակատը ծածկվեց ատոր քրտինքով։ Ապա մի պահ, չգիտես ինչու, ժպտաց, ժպիտը երևաց բերանի ծայրին, ծռմռված շրթունքների վրա և անմիջապես հանգեց։

— Ի՞նչ պատահեց, իշխան,— անհանգստացավ արքան,— գուցե վատառո՞ղջ ես։

— Կանցնի, արքա, կանցնի...

Արքան արագ մոտեցավ իշխան Վաչակին, հոգատարությամբ սրբեց նրա ճակատի քրտինքը և շրով լի բաժակը մոտեցրեց նրա շրթունքներին։

— Ես ուզում եմ դուրս գալ տաճարից, արքա,— ցածրաձայն խնդրեց իշխան Վաչակը։

— Ոտաց ճանապարհ,— նրա ականջին շշնջաց արքան,— բնական պետքա՞վ, իշխան։

Իշխան Վաչակը գլխով արեց, և այդ օրվանից նրա հիշողության մեջ վառ մնաց ոչ թե իր կրած նվաստացումը, այլ արքայի ցուցաբերած հայրական հոգատարությունը։ Նա կպատմի բոլորին, ամեն ինչ մանրամասն կպատմի, առանց իրեն մազաչափ անգամ խնայելու, միայն թե՝ հասնի ավարտին, հասնի այս հուզիչ հոգատարությանը, հպարտանա դրանով, ինչպես ուրիշներն են հպարտանում՝ արքայի պարգևած կարմիր մաշիկով։

— Գնա, իշխան, տեր ընդ քեզ։

Իշխան Վաչակը դուրս գնաց, և դարձյալ պոռթկաց նախարարների միահամուռ ծիծաղը։ Միայն նախավերջին բազմականին նստած կոչնականը չէր մասնակցում այս ուրախ ծիծաղին, որովհետև հիմա ինքն էր հայտնվել ամենավերջին տեղում...

— Բայց ես իրոք չէի ուզում նրան ծաղրել կամ նվաստացնել,— նրանց ծիծաղն ընդհատեց արքան։— Ես իսկապես հարցեր ունեի տալու։ Ինձ, ոչ թե նրան։

Նա նստեց իր տեղը ու երկար ժամանակ, գուցեև դիտ-

մամբ, կռացավ սեղանի տակ և զրաղվեց տոքերի թաթերին հանգուցված ժապավենաձև ճոխ խրացներն ամրացնելով։ Ապա հանկարծ ուղղվեց և կտրուկ դիմեց սեղանակիցներին.

— Ես ձեզ հրավիրեցի, որպեսզի հարցնեմ բոլորիդ, թե ինչո՞ւ մերժեցիք մարդիկ տրամադրել Արշակավան քաղաքի կառուցման համար։

— Արքա, դու մեզ ճաշի ես հրավիրել և ասված թողել,— անվրդով ասաց Մերուժան Արծրունին, և որքան ակամա զարմացավ, որ մի՞թե տղամարդը կարող է այդքան գեղեցիկ լինել։— Հավատացնում եմ, որ մենք, իշխան Վաչակի նման, ճաշկերույթից առաջ երբեք կուշտ չենք ուտում տանը։

— Մի սրախոսիր, Արծրունյաց տեր։ Ավելի լավ է պատասխանիր, թե ինչո՞ւ մարդ չես ուղարկել, որ մասնակցի իմ քաղաքի կառուցմանը։ Ո՞վ պիտի, ըստ քեզ, կառուցի քաղաքը։ Ե՞ս։

— Դա լավ միտք է, արքա։ Ես առաջարկում եմ, որ նախարարներն իրենք կառուցեն։ Գոնե կյանքներումս մի անգամ տեսնենք, թե ինչի են ընդունակ մեր այս փափկասուն ձեռքերը։— Ու նայելով երկար մատներով սպիտակ ձեռքերին, նա անպատկառ ծիծաղեց։

— Առանց այդ էլ փոքր երկրները լցված են հապիտներով։ Եվ գիտե՞ս ինչու։ Որովհետև հապիտներին չեն պատժում։ Ուզում ես ավելացնե՞լ նրանց թիվը, Մերուժան Արծրունի։

— Բայց ես իմ շինականներին ուղարկել եմ, արքա։ Հանգիստ է խիղճս։

— Ծաղր ու ծանա՛կ։ Մի բուռ մարդ է ուղարկել և հանգիստ է համարում խիղճը։

— Արշակավանը հեռու է իմ երկրից, արքա,— արժանապատվությամբ միջամտեց Ներսես Կամսարականը։— Մինչև գան, մինչև հասնեն... Ինձ թվում է, ավելի հարմար է մոտիկ տեղերից հավաքել մարդկանց։

— Մոտի՞կ... Դու շատ մոտ ես ինձ նստած, տեր Կամսարական... Տես որքան մոտ ես...— Նա վեր կացավ և արագ, շատ արագ մոտեցավ իշխանին ու ձեռքը գրեց նրա ուսին։— Տեսա՞ր, ձեռքս ինչ շուտ հասավ քեզ...— Ապա

բռնեց Ներսես Կամսարականի թևից, արմունկը դրեց սեղանին, նույնն արեց նաև ինքը ու ափը հագցրեց նրա ափին։— Ով հաղթի, թող նրա ասածը լինի...— Տենդից վառվող աչքերով նայեց շուրջը, թե ով կարող էր հանդիսապետ լինել իրենց մրցմանը։ Գուցե սպարապե՞տը։ Չէ, նա հաստատ չի խրախուսում իր այս քայլը։ Դեմքից արդեն իսկ երևում է, որ տղայություն է համարում իր արարքը։ Տիրի՛թը, Տիրի՛թը։ Իր արյունակի՛ցը։ Տանո՛ւ մարդ։ Այ թե ով կլինի հանդիսապետ։— Տիրի՛թ,— գոռաց նա։ Տիրիթը ձեռքը ուժգին խփեց սեղանին և դրանով մրցման սկիզբն ազդարարեց։ Արքայի և իշխանի ափերը ամուր կպան, գրկեցին միմյանց, մատները խրվեցին իրար մեջ, և ով ինչքան ուժ ուներ ներսում, որքան կամք, ոխ ու չարություն, մի ակնթարթում ի մի հավաքեց ու տվեց բազուկներին։ Հիմա ոչ արքա կար, ոչ նախարար։ Կային պրկված ու կարմրատակած վզերով երկու կատաղած տղամարդ։ Եվ խուժանը, որ շունչը կտրած, հետևում էր մրցմանը։ Կովի՛ն, կովի՛ն, ո՞չ թե մրցմանը։ Որբեմն միասնական մի բացականչություն էր թռչում բոլորի բերանից՝ որպես հիացմունք կամ որպես հիասթափություն։— Ուզում եք, որ ես պարտվեմ, չէ՞։— Արքայի խզված ձայնն էր։ Չար ու հեգնական ձայնը։ Նա գիտեր, որ նրանցից յուրաքանչյուրը իր բազուկների ուժն ու զորությունը, իր ողջ նենգությունն ու ատելությունը, ոչ միայն իր, այլև հոր, պապի, ապուպապի, յոթ պորտի, տասը պորտի, հարյուր պորտի, ամբողջ ազգուտակի ոխն ու քենը տվել-հանձնել է Արշարունիքի ու Շիրակի տեր Ներսես Կամսարական իշխանին։ Բայց և այնպես առավելությունը արքայի կողմն էր։ Ոչ թե ուժի կամ տարիքի իմաստով։ Ի՞նչ ուժ, ի՞նչ տարիք։ Դրանք այս պահին ոչինչ չեն որոշում։ Մի դրախմու արժեք էլ չունեն։ Թեկուզ թող հարյուր ցուլի ուժ անցած լինի Կամսարականի բազուկներով, մեկ է, արքան պիտի հաղթի։ Նա ուրիշ ելք չունի։ Նա ստիպված է հաղթել։ Պարտավո՞ր է։ Երկրորդ ճանապարհ չկա և չի կարող լինել։ Հենց սա էլ նրա առավելությունն էր։ Եվ նա հաղթեց։ Ներսես Կամսարականի ձեռքը թուլացած ընկավ սեղանին։ Արքան, ծանր շնչելով, ձեռքը թափ տվեց մի քանի անգամ, հետո պատանեկան

հրճվանքով վերադարձավ տեղը, ընկողմանեց բազմականի մեջ ու սկսեց դատակը շփել։— Էլ ի՞նչ էիր թպրտում, այ Ներսես... Կուղարկես մի քանի հարյուր շինական... Ամենաաժդահաներին ու ամենահաղթանդամներին... Տղաներիդ էլ կուղարկես... Փեսաներիդ էլ... Բարեկամներիդ էլ... Լսո՞ւմ ես... Թե չէ, այս դատարկ սեղանը վկա, բնաջինջ կանեմ տոհմդ...

Արքայի հաղթանակը գոհունակություն պատճառեց բոլորին, անգամ նրա ամենաոխերիմ թշնամիներին։ Գուցե նույնիսկ հենց իրեն, Ներսես Կամսարականին, չնայած նա ամեն ջանք թափել էր չպարտվելու համար։ Ուրեմն՝ անխախտ մնաց իշխանության տրամաբանությունը։ Ուրեմն՝ նաև ամե՛ն մեկի իշխանությունը։ Բայց գոհունակությանը խառն էր նաև վիրավորվանքի զգացողությունը։ Խախտվել էր իշխանության գարավոր ու ավանդական պատկերացումը։ Ամեն ինչ կարելի էր ներել արքային, ամեն ինչ, բացի սրբապղծությունից։ Ո՞վ է լսել, որ թագավորը լակոտի պես կռվի բռնվի ինչ-որ նախարարի հետ։ Թագավորը պետք է հատուկ արտաքին ունենա, հատուկ շարժուձև, հատուկ կեցվածք, հատուկ խոսելակերպ, նա պետք է միշտ պատվանդանի վրա կանգնած լինի, որպեսզի նրան դիմելու համար ստիպված վիզդ երկարես։ Թագավորը հենց սա՛ պետք է ունենա, հենց միայն սա՛։ Այսքանը լիուլի բավական է երկրի համար։ Մնացածը նախարարներն իրենք կանեն։ Մինչդեռ այս ծուռ Արշակունին ուզում է հենց այդ մնացածն իր վրա վերցնել, իսկ հայոց թագավորների հիմնական պարտականությունը՝ ադամանդի պես շողշողալը, նա ոտնակոխ է անում ամեն քայլափոխին և չի թողնում, որ նախարարներից յուրաքանչյուրը, ադամանդի շողերից կուրացած, էլ՛ ավելի հարգի ինքն իրեն, է՛լ ավելի բարձրանա ինքն իր աչքին, է՛լ ավելի հավատա ինքն իր ուժին, այնքան հարգի, այնքան բարձրանա ու այնքան հավատա... որ դեմ գնա արքային ու մի գեղեցիկ օր գահընկեց անի նրան։

— Բոլորի՞ հետ ես մրցելու, տեր արքա,— հարցրեց զառամյալ Կենան Ամատունին։— Ուրեմն, ով քեզ հազիվ, էլ շինական չի՞ ուղարկի Արշակավան։

—Սա՞ ով է,— ընդգծված զարմանք ցույց տվեց արքան։— Ո՞վ ես դու։ Ես նույնիսկ քո անունը չգիտեմ։ Չհամարձակվես հիշեցնել։ Իմ ուղեղում տեղ չկա քեզ համար։

— Իսկ իմ ուղեղում...

— Հը՞, քո ուղեղում՝ ի՞նչ...

— Քաղաք կառուցելու համար վարձկաններ են պետք, արքա...

— Պատերազմ հո չի՞, որ միանանք,— երկար տատանումից հետո մեջ ընկավ նաև Վարձա Ապահունին, որովհետև նրա փառասիրությունն այն աստիճան հիվանդագին էր, որ նա չէր կարող հանկարծ որևէ բանի անմասնակից մնալ։

— Ապա մի վեր կաց։ Վեր կաց, վեր։ Մոտ եկ։— Վարձա Ապահունին հնազանդվեց, մոտեցավ արքային ու մտքում հայհոյեց իրեն, որ կրակն ընկավ իր տխմարության երեսից։— Չոքիր արքայիդ առաջ։— Ու երբ վրդովմունքի մի ալիք անցավ տաճարով մեկ, արքան անկեղծ զարմացավ, շատ զարմացավ, թոթվեց ուսերը և տարակուսանքի ժպիտով դիմեց բոլորին.— Ասում եմ, չոքիր արքայիդ առաջ։ — Վարձա Ապահունին մինչև ականջները կարմրեց ու չոքեց։ Սրանք հիմա են արքայի վրա այսպես զայրացած, հիմա՛։ Մի քանի օրից կմոռանան և կհիշեն միայն իր չոքելը։— Համբուրիր քղամիդս,— լարվեց արքան, ու երբ Ապահունյաց իշխանը համբուրեց քղամիդը, էլ ավելի սրվեց նրա լարվածությունը, և նա հիստերիկ գոռաց.— Ներքև՛, ստորո՛ւ, ստորո՛ւ, էլ ավելի ներքև։— Ու երբ այդ պահանջն էլ բավարարվեց, արքան առավել զայրացավ, որովհետև դրանով ասես պատնեշ կանգնեցրին իր առաջ ու կոտրեցին թափը։ — Սա չե՞ս ընդամենը, Ապահունյաց տեր։ Էլ ի՞նչ ես ինձ խելք սովորեցնում։ Թե՞ կարծում ես, որ անուժ է արքան։

Ապա, առանց որևէ խոսքի, անսպասելիորեն դուրս եկավ տաճարից։ Թիկնապահներն ուզեցին հետևել նրան, բայց նա, ձեռքի շարժումով, թույլ չտվեց։

Նա խորը շունչ քաշեց պարտեզում, նայեց դեպի խիտ ու երկտակ խավարը և սկսեց արագ քայլել, կարծես ինչ-որ տեղ էր շտապում։

Հեռացավ խճապատ ծառուղուց, մտավ ցեխի մեջ և քիչ

մնաց սայթաքեր։ Ստեղերի սուր ճյուղերը ճանկռոտեցին երեսը, և փշոտ թփուտները ծակծկեցին ոտքերն ու ձեռքերը։ Դա չարացրեց նրան ու մղեց է՛լ ավելի արագացնելու քայլերը։ Հետո, նույնքան անսպասելի, հևիհև կանգ առավ, ասես նոր գլխի ընկնելով, թե ինչն էր իրեն ձգել, բերել այս կողմերը։ Եվ նա ուշադիր ականջ դրեց քամուց սվսվացող տերևներին, որոնք, անկասկած, ինչ-որ բան էին ուզում ասել նրան։ Նա ճգնեց կենտրոնանալ, առանձնանալ ինքն իր հետ, անէանալ սեփական մարմնի մեջ, որպեսզի կարողանա գուշակել տերևների լեզուն և տանջող հարցերի պատասխանն ստանալ։ Ծանր ու խեղդող պահերին այդպես են վարվել իր ոչ հեռավոր հեթանոս նախնիները՝ Արմավիրի Սոսյաց պուրակում, և նա առաջին անգամ կյանքում, այս հասուն տարիքում, ցավ պատճառելու չափ հստակ, զգաց իր կապը նրանց հետ, զգաց արյան փոխկանչը ու մտովի օգնություն աղերսեց իր անծանոթ պապերից՝ Աշխադարից, Գարթամասերից, Սանատրուկից, Վաղարշից, որպեսզի նրանք թարգմանեն ծառերի շշուկները։ Բայց նրանք խավարի մեջ լուռ շարվեցին նրա առջև, բոլորը միևնույն գեմքով, միևնույն հասակով, միևնույն տարիքով ու միևնույն հագուստներով։ Եվ նա հաղիվ զսպեց կոկորդում սեղմված արցունքները, խոստովանելով, որ մոռացել է նրանց դասերը, էլ չի հասկանում նրանց լեզուն, խեղդել է իր մեջ նրանց ձայները և օտարացել նրանց աղոթքներին։ Եվ հանկարծ տեսավ, որ խավարի մեջ պատվել-պատվել ու նորից հայտնվել է... տաճարի առջև։ Ժպտաց իրեն-իրեն, որովհետև մեծասիրտ հեթանոս աստվածները այս անգամ էլ խղճացին նրան, մի անգամ էլ ներեցին և ստիպեցին տաճար վերադառնալ, որպեսզի կիսատ չմնա իրենց անառակ որդու ծրագիրը։

— Եթե ամեն մեկս այսպես մտածի, այս երկրում ոչ մի նոր քար չի դրվի, ոչ մի նոր պատ չի կանգնի,— տաճարում վրդովված ոտքի ելավ Տիրիթը։

— Ձայնդ տաք տեղից է գալիս, արքայազուն իշխան,— հեգնեց Վահան Մամիկոնյանը։— Դու ոչ հող ունես, ոչ շինական։ Քեզ համար հեշտ է երկրի բախտով մտահոգվելը։

Եվ մի ահավոր աղմուկ-աղաղակ ընկավ տաճարում։ Բոլորը վեր կացան տեղներից ու հարձակվեցին իրար վրա։ Հիշեցին, թե ով է Արշակավանին մոտիկ և ով է հեռու։ Ով ինչքան շինական ունի։ Ով է իրավացի և ով է անիրավ։ Ով է էն գլխից էլ միշտ այսպես անազնիվ եղել։ Ով քանի տարի առաջ ինչ անմաքուր բան է արել։ Ում հայրը երբ իրեն ստորաբար է պահել։ Ում մայրը ում հետ է պառկել։ Ով է օրինական զավակ և ով է ապօրինի։ Ով է ումից հող խլել հարյուր տարի առաջ։ Ում տոհմն է ավելի հին և հարուստ։ Ով է զտարյուն հայ և ով է եկվոր։ Ում հողն է ի սկզբանե եղել Հայաստան, ումը՝ հետո։ Ու գնա՜ց, Շարադրվե՜ց ամբողջ հայոց պատմությունը։ Հայկ Նահապետից մինչև իշխան Վաչակ։

Արքան ցեխոտ ոտքերով ներս մտավ, կծկվեց, կուչ եկավ անկյունում և ցավից խոշոր բացված աչքերով դիտեց իր երկրի մեծամեծների այս տխուր հանդեսը։ Հետո դանդաղ, գլուխը կախ, քայլեց դեպի բազմականը ու սպասեց, մինչև որ բոլորը նկատեն իրեն ու, թերևս, լռեն։ Նկատեցին ու լռեցին։ Եվ արքան, որքան որ սեր ուներ իր մեջ, որքան ցավ ու անկեղծություն, որքան հավատ ու համոզմունք, անմնացորդ դրեց իր խոսքերի, իր ձայնի, իր աչքերի, անգամ շարժումների մեջ։

— Եթե ես թույլ լինեմ, դուք էլ թույլ կլինեք... Ինձանով, արքայով, այս աթոռով, այս գահով է որոշվում ձեր ուժի չափը... Մի՞թե այդքան բան չեք հասկանում...— Լռեց մի պահ, կարծես վիրավորված, որ այս հասարակ ճշմարտությունների մեջ ստիպված է այդքան հույզ և անկեղծություն դնել։— Եթե ես թույլ լինեմ, կուտեք իրար...

— Գոնե բարկությունդ ինձ վրա թափեիր, արքա,— գեղեցիկ, սպիտակ ատամները ցույց տալով, ժպտաց Մերուժան Արծրունին։— Ես սիրում եմ ուշադրության կենտրոնում լինել։

— Ներեցեք, իշխաններ... Ես ինձ արքայավայել չպահեցի... Խոնարհաբար ներողություն եմ խնդրում... Քեղնից, Ապահունյաց տեր... Եվ հատկապես քեզնից, իշխան Ամա-

տունի։... Անունդ էլ լավ գիտեմ... Ինչպե՞ս չիմանամ... Ծնկներիդ եմ մեծացել... Ես ետ եմ վերցնում իմ հրամանը... Մանավանդ, որ բոլոր նախարարություններն էլ հեռու են Արշակավանից...

— Ուրեմն, վերջապես ճաշը կմատուցվի,— փորձեց սրամտել Մերուժանը, և բոլորի դեմքերին հանգստություն իջավ։ Ու մի ներքին, թաքուն գոհունակություն, որ իրենց գործն արեցին, խեղճացրին արքային։ Սրանից հետո թող քիչ թպրտա Արշակունին։ Թող հիշի, որ ինքն էլ, ի վերջո, մի նախարար է։ Թող իր ուժը Այրարատում բանեցնի։ Թող դնսուդեն չերկարացնի ձեռքերը և ախորժակն էլ զսպել իմանա։ Եվ հիշի, անպայման հիշի, որ ամեն գավառ իր թագավորն ունի։ Այ, այսպե՞ս ներողություն կխնդրես, Տիրանի որդի։

— Սենեկապետ, հրամայիր մունետիկներին, որ բոլոր հրապարակներում, բոլոր գավառներում, բոլոր կողմերում տարածեն արքայական նոր հրամանը։ Թող կանչեն, որ արևելքի և արևմուտքի խաչմերուկներում, Տրապիզոնից Մասիսի ստորոտով մինչև Պարսկաստան ընկած ճանապարհին, Հովիտ կոչված Կոգ գավառում կառուցվում է Արշակավան նոր քաղաքը, որտեղ ապաստանի իրավունք են ստանում բոլոր նրանք, ովքեր կկարողանան այնտեղ ընկնել, բնակվել ու աշխատել։— Ձայնը հանկարծ մեղմացավ, և նա առօրեական տոնով դիմեց վտանգի հոտ առած նախարարներին.— Հիմա, իշխաններ, հիմա ճաշը կբերեն։— Ապա շարունակեց հանդիսավոր ու հաղթական, աչքերում մոլեգին ու երջանիկ մի փայլ։— Եթե մեկը մեկին պարտք է, եթե մեկը ուրիշին վնասել է, թող գա Արշակավան, և նա ապահով կլինի։ Եթե մեկը մյուսի արյունն է թափել, կամ մեկի գույքն է գրավել, կամ որևէ մեկից երկյուղ ունի, թող գա Արշակավան, և նրա դեմ դատ ու պահանջ չի լինի։ Եթե պարտատերը Արշակավան գա պարտքը պահանջելու, առանց դատի ու դատաստանի նրան բռնեն ու դուրս անեն։ Հիմա, հիմա, իշխաններ, համբերեք մի քիչ... Ես հրավիրում եմ գողերին, ավազակներին, արյունապարտներին, մարդասպաններին, գանձագողերին, խարեբաներին, գրպանահատներին

ներին, ժլատներին, կանանց, որոնք իրենց ամուսիններին են թողել, տղամարդկանց, որոնք իրենց կանանց են թողել ու փախել և հատկապես...— Մի պահ լռեց ու ժպտաց, նայելով ծիրանի քղամիդին կպած փշերին։— Եվ հատկապես ծառաներին, որոնք դժգոհ են իրենց տերերից։

Նախարարները շանթահարված ոտքի ելան, շրջապատեցին նրան և շվարած հայացքները անխոս հառեցին վրան, կարծես կարեկցելով ցնորված արքային, որը նորից կռացել էր սեղանի տակ ու զբաղված էր կոշիկների խրացներն ուղղելով։

— Դու կործանում ես մեզ, արքա,— կիսաձայն ասաց Ներսես Կամսարականը։

— Նախ իրեն է կործանում արքան,— դեռ չհավատալով ականջներին, առաջ եկավ Մերուժան Արծրունին ու կանգնեց արքայի գլխավերևում։— Խաժամուժ ամբոխը կավերի, կթալանի երկիրը։ Եվ քո անունից, արքա։

— Ուշքի եկ, արքա,— ձեռքը հայրաբար նրա ուսին դրեց Անդովկ Սյունին։— Դու ոճրագործների բույն ես ստեղծում։

— Դու պատժում ես նաև քո բարեկամներին,— նախատեց Սմբատ Բագրատունին,— նրանց, ովքեր ենթարկվել են քո հրամանին։ Հապա էլ ո՞րն է տարբերությունը։

— Ո՞ւր է կաթողիկոսը,— հուսահատ գոչեց Կենան Ամատունին,— ինչո՞ւ չի վերադարձել Կեսարիայից։

— Արքա, հրաժարվիր քո որոշումից...— Հոր ձայնը լսելուն պես, Սամվելը ամոթից շիկնեց ու աշխատեց չնայել Մուշեղին, մանավանդ որ Վասակ սպարապետը չէր մասնակցում այս նվաստացուցիչ տեսարանին և շարունակում էր մեն-մենակ նստած մնալ սեղանի մոտ։— Ասա, որ կատակել ես... Ասա, որ կատակից հետո փառավոր ճաշկերույթ կտրվի... Գուսաններ կգան... Առատ գինի կթափվի սեղանին... Եվ անպայման մինչև լո՞ւյս, արքա... Ջմոռանաս ավելացնել՝ մինչև լո՞ւյս...

— Ես մի ճորտ ունեմ... Անունը՝ Ասպուրակ... Մի բութ, անբան անասուն... Աչն ու ձախը չի տարբերում...— Վարդանն էր, Վահան և Վասակ Մամիկոնյանների եղբայրը, Մամիկոնյան տոհմի նահապետը։— Հատուկ ուսուցիչ եմ

վարձել, որ նրա հետ հունարեն պարապի... Ամեն մի ճիշտ արտասանած բառի համար այդ անասունը շաքար էր ստանում ինձանից... Իսկ ամեն սխալի համար՝ մտրակի հարված...— Եվ, խեղճացած ու ահաբեկված, նա շուրջը նայեց ու ժպտաց հիմար մի ժպիտով։— Ուրեմն... Ուրեմն, Ասպուրակը, իմ Ասպուրակը... Իմ բարի, իմ համակրելի այդ անասունը... Ուրեմն, նա կարող է փախչել ինձանից և անպատիժ մնալ... Դեռ ինձ տեսնելիս էլ՝ հայհոյել... Իսկ պատկերացնո՞ւմ եք՝ եթե հանկարծ հունարե՞ն հայհոյի...

— Իրավացի է արքան,— համեստաբար միջամտեց Տիրիթը։— Ներեցեք, իշխաններ, որ խառնվում եմ ավագներիդ խոսակցությանը։ Ինչո՞ւ արքան պիտի վստահի մեր հավատարմությանը, երբ ամեն մեկս իր քթից այն կողմ ոչինչ չի ուզում տեսնել։ Մի կողմից պարսիկներն են չոքել մեր բկին, մյուս կողմից բյուզանդացիներն են մեզ կրծում։ Արքան ուզում է իր ուժն ստեղծել, ռամիկների ու շինականների հետ դաշնակցել, ուզում է հզոր թիկունք ունենալ։ Այ սա՛ պիտի հասկանալ ու գնահատել։

— Ես էլ կարծում էի, թե սա Արշակունիների հերթական կամակորությունն է,— ազնվորեն խոստովանեց Ներսես Կամսարականը։— Լավ գլխի ընկավ Տիրիթը, իշխաններ, ճիշտ կռահեց։— Ապա նոր միայն գիտակցելով իսկական վտանգը, ծանր քայլերով մոտեցավ արքային։— Քեզ մինչև վաղը ժամանակ, արքա։ Գուցե բարկությանդ մոլուցքի մեջ դու ինքդ էլ չհասկացար քո որոշման ահավորությունը։

— Ոչ, արքա, քեզ ժամանակ՝ մինչև ես խոսքս ավարտեմ,— վճռական ասաց Մերուժան Արծրունին, և արքան հիացմունքով ու ափսոսանքով նայեց նրան, մտածելով, թե ինչեր կաներ ինքը, եթե այդպիսի դաշնակից ունենար կողքին։— Աստծով եմ երդվում, որ կզղջաս, եթե չհրաժարվես քո հրամանից։ Իսկ եթե հրաժարվես, դու նորից տեղ ունես մեր գլխի վրա։

— Դրաստամատ, հրամայիր մունետիկներին,— անվրդով ասաց արքան։

Դա արդեն նշան էր, որ նախարարներն այլևս անելիք չունեն այստեղ։ Արքան սեփական ձեռքով խզում էր կապերն

իր երկրի մեծերի հետ։ Դու գիտես, պարթև Արշակունի։ Բայց տես, որ լզղլաս։ Հետո լասես, թե նախարարներս երես դարձրին ինձանից։ Իզուր ես ինքդ քեզ համար փոս փորում, իզո՜ւր։ Համենայն դեպս, հայոց նախարարները երբեք արքայի կարիքը չեն զգացել, իսկ արքան... այն էլ ինչպե՜ս... Ով մեկ առ մեկ բոլորը դուրս եկան տաճարից։

— Ապաստանի իրավունք ձեզ էլ է տրվում, իշխաններ,— նրանց ետևից զվարթ գոչեց արքան։— Իմ քաղաքում ես ձեր նկատմամբ էլ անզոր կլինեմ։

Ապա դեմ առ դեմ հանդիպեց Վասակ սպարապետին, որը լուռ նախատինքով նայեց նրան։ Արքան անսպասելի գրկեց սպարապետին, ամուր սեղմեց կրծքին, համբուրեց և, նրա ուսերից բռնած, անխոս տարավ, ուղեկցեց մինչև դուռը ու ճամփու դրեց։

— Տիրիթն ինձ դուր չեկավ, արքա,— դռան մոտ ասաց տաճարում մնացած վերջին նախարարը՝ Հայր Մարդպետը, հետո գլուխ տվեց ու հեռացավ։

Դրաստամատը լավ էր հիշում, ինչպե՜ս չհիշեր, որ վաղուց պալատում ճաշկերույթ չէր տրվել, վաղուց տաճարում տասնյակ գդալներ, պատառաքաղներ ու դանակներ չէին աղմկել, չէին լխկլխկացել միասին՝ ի լուր աշխարհի, որ հայոց տերության մեջ իշխում է միասնություն ու համերաշխություն։ Նա տարիներ շարունակ երազում էր այն երանելի պահը, երբ ծառաները, տաճարապետի ուղեկցությամբ, ներս կմտնեն սկավառակներով ու ափսեներով և կբերեն արքայական սեղանի ճաշերի չորս հաստատուն տեսակները. ջրալի կերակուրներ ընդեղենով կամ մսի ջուր՝ ախորժակ բանալու համար, չորքոտանիք, թռչնեղեն ու ձկնեղեն։ Չորքոտանիներից ամենից ավելի հարգի էին վայրի կենդանիները, որ որսում էր կոչնական ազատանին։ Թռչուններից՝ կաքավը, ագարը, սագը։ Վանա տառեխը բերում էին արքունի ձկնարանից՝ Առեստավանից։ Խորովում, տապակում կամ եփում սաների մեջ՝ վրան քացախամեղր ցանելով։ Դրաստամատը հիմա մեծագույն հրճվանքով կդիտեր, թե ինչպես հայոց ընտրանին կհարձակվեր փառահեղ կերակուրների վրա, անխնա կոչնչացներ, կչորացներ ամբողջ սեղանը,

մի անգամ ևս հաստատելով իր հավատամքը, թե ուտելուց մեծ իմաստություն և խորհուրդ չկա աշխարհում։ Նրանց ծնողների համերաշխ ու միասնական կափկափյունը զգուշացում կլիներ Բյուզանդիային ու Պարսկաստանին, որ այստեղ գիտեն նաև դաշնակցել և ձեռք ձեռքի տալ։ Հապա գինարբո՞ւքը... Միավորվածության ցույցի գագաթնակե՞տը... Սեղանները պիտի դատարկեին, լվանային և բազմականների հետ միասին տեղափոխեին տաճարի ծայրերը, որպեսզի կոչնականները նստեն պատերի մոտ և առջևն ազատ լինի՝ գուսաններին և վարձակներին դիտելու համար։ Տակառապետի առաջնորդությամբ ներս պիտի մտնեին սպիտակազգեստ մատուվակները, ձեռքներին թակույկներ ու գինեհան ճաշակներ՝ նվագներով, տաշտերով, բաժակներով և ուրիշ ըմպանակներով հանդերձ։ Գինին և օղին պիտի լցնեին բաժակակալ սկուտեղների մեջ և դնեին կոչնականների առջև։ Առաջին հասարակաց արբունքը կոչվում էր նվագ ուրախության։ Դա մի բաժակ էր, որ բաժակաճառից հետո, «անուշ ասենք միմյանց» խոսքով, փոխանցվում էր մեկը մյուսին՝ որպես հավասարության նշան։ Հետո պիտի գային գուսաններն ու վարձակները՝ թմբկահարք, սրնդահարք, քնարահարք և փողահարք։ Պիտի հնչեին սիրային, վիպական ու ներբողական նվագներ, որ պատմելու էին հայոց վաղեմի թագավորների ու դյուցազունների կյանքը, Արտաշեսի և որդվոց վարքը, Վահագնի ծնունդը, Սաթենիկի առևանգումն ու հարսանիքը, Արտավազդի անեծքը... Բացի երգելուց, նրանք պիտի նաև հացկատակություն անեին՝ խելացնոր շարժումներով զվարճացնելով հանդիսականներին։ Վարձակները պիտի ցուցադրեին իրենց փափուկ մատների աշխուժությունը չնարի լարերի վրա, երգեին ու պարեին։ Սպասավորները պիտի աղանդներ բերեին՝ մսով խմորեղեն, և ապա՝ խրնձոր, վարունգ, թութ, ամիճ, թուզ, սերկևիլ ու չոր մրգեր՝ սոլուտեղներով և խաներով... Կշտացած և հարբած նախարարները պիտի բարիանային և սեր բացատրեին միմյանց, կենաց ասեին իրար մասին, և պիտի պարզվեր, որ այս սեղանի շուրջ են հավաքվել աշխարհի ամենաազնիվ, ամենամտքուր, ամենահայրենանվեր մարդիկ, ամենաանձնա-

զոհ, ամենախելացի, ամենահեռատես, ամենա՛, ամենա՛, ամենա՛։ Ու երկրի այն կարևորագույն հարցերը, որ երկար ժամանակ լուծում չէին գտնում ոչ գործնական հավաքներում, ոչ էլ պաշտոնական հանդիպումների ընթացքում, վեճերի ու գժտությունների առիթ դառնում, լուծվում էին միայն այստեղ, սեղանի շուրջը, քանդվում էին բոլոր հանդույցներն ու կծիկները, այստեղ էին ծնվում ու խորտակվում կենսագրությունները, այստեղ էին հորինվում ու սարքվում ազգային նոր գեմքերն ու անունները, նոր տաղանդներն ու հանճարները, բայց ո՛չ մի շնորհալի, մ՛ չ մի խոստումնալի...

— Ինչո՞ւ ես քեզ պատեպատ խփում, արքա,— ընդհատվեց մտապատկերը, և Դրաստամատը տեսավ գատարի տաճարն ու միայնակ արքային, որ հանգցրել էր բոլոր աշտանակները և թողել միայն մեկը։ Եվ առաջին անգամ լինելով, սենեկապետի ձայնը հնչեց մեղմ ու վշտակից։

— Հը, ի՞նչ եղավ, ի՞նչ հասկացար, ի՞նչ արեցի, սենեկապետ,— մոայլ հարցրեց արքան։ Նա կանգնել էր աշտանակի գլխին, և դեմքը լուսավորվել, անջատվել էր շրջակա խավարից։ Ձեռքերը դրել էր ճրագի բոցի վրա, կարծես այդ թույլ բոցը կարող էր հանել նրա մեջ կուտակված ամբողջ ցուրտը։

— Դու մենակ մնացիր, արքա։ Բոլորովին մենակ։ Դո՛ւ ընտրեցիր քո մենակությունը։ Ինչո՞ւ։

— Որ իմանամ, թե ով եմ ես և ինչ արժեմ... Ինձ դուր է գալիս մենակությունը... Ազնիվ մետաղի ձայն ունի...

— Կա՛մ Բյուզանդիա, կա՛մ Պարսկաստան,— համառ ողջամտությամբ պնդեց Դրաստամատը։— Երրորդ ճանապարհ չկա, արքա։

— Եփրեմին ասացի՞ր, որ ինձ սպասի։— Այդ հիշեցումից նեղն ընկած, նորից ձեռքը փրփուրին մեկնեց արքան։— Ես մի կերպ ազատ ժամանակ կգտնեմ և ճատրակ կխաղամ հետը։

Ծառաները, մինչ այդ, տեսել էին, թե ինչպես նախարարները մեկ առ մեկ դուրս եկան տաճարից, բայց քանի որ

ոչ մի նոր կարգադրություն չէր արվել իրենց, ներս էին մտել տաճարապետի ուղեկցությամբ, ափսեներով ու սկավառակներով բերել ճաշերը, կիսամութի մեջ անաղմուկ դասավորել սեղանի վրա ու կանգնել բազմականների ետևում՝ պատրաստ սպասարկելու։

— Իսկ եթե նախարարները համաձայնեին՝ շինական ուղարկել, արքա... Եթե՝ համաձայնեին...

— Ցտեսա՞ր, ամեն ինչ արեցի, որ չհամաձայնեն,— թեթևակի ժպտաց արքան, որովհետև սպասում էր, որ Դրաստամատն այդ հարցն անպայման կտա իրեն։— Արշակավանը կդառնար սովորական քաղաք... Միավորված հայրենիքի գաղափարը նրանք ամեն օր կծամեին, կուլ կտային կերակրի հետ և ապահով տեղ կթաղեին... Արտաքնոցնե՞ր...— Պատի վրա նրա հսկայական ստվերը ձգվեց ու ծալվեց առաստաղին։ Ձայրացած ձայնն իջավ ու դարձավ վերին աստիճանի մտերիմ ու մարդկային։— Ես արշակավանցիներին արտոնություններ կտամ... Կազատեմ հարկերից... Չեմ թողնի, որ մեկը մյուսի հաշվին ապրի... Եվ նրանք կսիրեն ինձ... Ատամներով կպաշտպանեն իրենց քաղաքը... Իրենց ազատությունը... Մինչև վերջին շունչը կկռվեն... Էլ ստիպված չեմ լինի սոզալու մեկ պարսիկի, մեկ բյուզանդացու առաջ... Եթե վաղը պատերազմ սկսի, էլ զորք չեմ մուրա իմ նախարարներից... Ես իմ սեփական ուժը կունենամ...

— Սատանայական բան ես մտածել, արքա,— սառը քաղաքավարությամբ գնահատեց Դրաստամատը։— Վախենալու բան։

Արքան հեռացավ աշտանակից ու հանկարծ տեսավ պատրաստ սեղանը, որ պայթում էր առատությունից։ Գամվեց տեղում, երկար նայեց սկավառակներին ու ափսեներին, որոնցից տաք գոլորշի էր բարձրանում, և ճաշերի ախորժելի հոտը ասես եկավ ու խփվեց նրա երեսին։ Նա դանդաղ քայլերով ուղղվեց դեպի իր տեղը և խավարի մեջ մեն-մենակ նստեց հսկայական սեղանի գլխին։

— Ուշադիր լսիր, սենեկապետ... Կմորթես մի ցուլ...

Փորոտիքը կմաքրես... Եվ նրա գործարանների ֆիրքով որոշել կտաս իմ ճակատագիրը...

— Բայց դա միջագիտություն է, արքա,— սարսափից գունատվեց Դրաստամատը։— Հեթանոսությո՛ւն...

— Ցուլը քիչ է արքայական ճակատագրի համար,— քմծիծաղ տվեց արքան և մի տեսակ դաժան բավարարվածություն զգաց, որ ծանր կացության մեջ գցեց Դրաստամատին։— Հավերի շարժումները ևս կդիտես... Եվ հավահմայությունը ինչ որ որոշի, կգաս, կպատմես ինձ...

— Ի սեր Քրիստոսի,— տագնապով ծնկի չոքեց Դրաստամատը,— մոռացիր հեթանոսությունը... Քո պապերը հրով ու սրով ստիպեցին մոռանալ... Մոռացիր, արքա, մոռացիր...

— Կատարիր հրամանս։

— Չեմ կարող մեղք գործել... Չեմ կարող պղծված հկեղեցի մտնել...

— Կատարի՛ր,— արհամարհանքով ֆշշաց արքան։— Դու սեփական կարծիք կարող ես ունենալ միայն այն դեպքում, եթե դա պետք լինի ինձ։

Եվ քանի որ նոր կարգադրություն այնպես էլ դեռ չէր արվել, դարձյալ ըստ կարգի, ներս մտան գուսանները, ձեռքներին մի-մի բամբիռ՝ գնդանման փոքր տուփ, դեպի վեր ձգված երկար բազկով, վրան՝ անասնոց մորթուց սարքած երկու կամ երեք լար։ Մագոգաձև կտնտոցները խփեցին լարերին և սկսեցին նվագել ու երգել։

Հնծավ քաջ թագավոր Արտաշես իր գեղեցիկ սև ձին,
Եվ ճանեց ոսկե օղով կարմիր կաշե պարանը,
Եվ անցավ ինչպես սրաթև արծիվ գետի միջով...

Սպասավորներից մեկը, դարձյալ ըստ կարգի, վերցրեց արքայի խեցեղեն պնակը և ուզեց ճաշ լցնել, բայց արքան ձեռքի շարժումով արգելեց նրան։ Ապա հենց ինքն էլ կճուճից մածուն լցրեց պնակի մեջ, հաց փրթեց և սկսեց ուտել, հսկա և մութ տաճարում ծերուկի պես իրեն-իրենն փնթփնթալով. «Ով էր ասում, որ ձեռնակոփի բռնվես Կամսարականի հետ.... Ձեռքս մինչև հիմա ցավում է... Չէ, էլ

առաջվանը չի մնացել... Շուտ եմ հոգնում... Ախորժակս էլ այն չի... Շուտ-շուտ եմ սովածանում, բայց քիչ եմ ուտում... Միայն թե մարդ չիմանա... Աստված չանի, որ մարդ իմանա...»։

Եվ հանեց ոսկե օղով կարմիր կաշե պարանը,
Զգեց ալանների օրիորդի մեջքին,
Եվ շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը...

«Մերուժա՜ն... Առյուծի պես մարդ է... Ինչ անենք, որ թշնամիս է... Ուրեմն իրավունք չունե՞մ սիրելու...— Ապա հիշեց իր առանձնաշնորհյալ վիճակը, որին վազուց էր վարժվել, և հիշելով՝ երեխայի պես հրճվեց ու հպարտացավ.— Արքան ամեն ինչի իրավունք էլ ունի...»։

Ոսկե անձրև էր գալիս
Արտաշեսի փեսայության ժամանակ,
Մարգարիտ էր անձրևում
Սաթենիկի հարսնության ժամանակ...

Արքան հանկարծ նկատեց, որ Դրաստամատը դեռ չէր գնացել և, դռան մոտ կանգնած, կարծես ականջ էր դրել գուսանների երգին։ Նրանց հայացքները մի պահ հանդիպեցին իրար, և արքային թվաց, թե սենեկապետը դեռ մի շատ կարևոր բան էլ ունի իրեն հաղորդելու։ Նա ձեռքով լռեցրեց գուսաններին ու հարցական նայեց Դրաստամատին։

— Կամ Բյուզանդիա, կամ Պարսկաստան,— համառորեն կրկնեց Դրաստամատը, հայացքն, անվախ, արքային հառած։

— Իսկ իմ քաղաքը...— խեղճացավ ու կծկվեց արքան, և աչքերում աղաչանք երևաց։— Իմ քաղա՜քը, սենեկապետ...

— Երրորդ ճանապարհ չկա, արքա։

Գլուխ երրորդ

Ուրեմն, ի՞նչ, մինչև վերջին շունչը, մինչև մահկանացուն կնքելը սրբությա՞մբ ապրի, ապրի անանձնական կյանքո՞վ, իրեն նվիրաբերի ուրիշների՞ն, անընդհատ բարի՞ք

գործիս։ Բայց չէ՞ որ դու այդպես էլ ապրել ես, այ Նեքսես, էլ ի՞նչ ես փնթփնթում։ Ճիշտ է, այդպես է ապրել, բայց այն, ինչ մինչև հիմա բնական վիճակ էր, ինչի մասին նա չէր մտածում, ինչպես որ չի մտածում, թե քայլելիս ոտքերն ինչպես պիտի գործեն, ուտելիս ձեռքերն ինչ պիտի անեն, հիմա դառնում էր ծրագիր, ապրելու պարտադիր ձև։ Նույնիսկ ամենաանիծ մարդու համար սոսկալի էր իմանալ, որ մինչև կյանքիդ վերջը պարտավոր ես առաքինի մնալ։ Ծանրագույն պատիժ էր հավիտյանս դատապարտված լինել ինչ-որ բանի. ինչպես մահվան, ստրկության, դժբախտության, այնպես էլ ազատության, ապահովության ու երջանկության։ Նա խիզախ ծրագրեր էր մշակում մտքում, հատատատ համոզված էր, շատ, շատ էր համոզված, ինչպես՝ այս քարի պնդությանը, երկնի արդար կապույտին, իր մինուճար որդու՝ Սահակի փափակ ր-ի փոքրինչ կոշտ արտասանությանը, ախր շա՞տ էր համոզված, որ լուսավորություն և մարդասիրություն պիտի սերմանի իր խաչված երկրում, որտեղ թռչունների պես չվող բազում մայրաքաղաքներ են եղել, տեղից տեղ փախչող շքեղ ու վախեցած մա՞յր քաղաքներ, իր դաղվա՞ծ երկրում, որտեղ ոչ թե մտնում, այլ իջնո՞ւմ են տուն, գետնափոր, անդուռ, անլուսամուտ տունք՝ շրհորի բերանի նման լայն բացվածքով և մարդկանց ու անասուններին բաժանող միջնորմ-վարագույրով... Բայց էլի ինչ-որ բան խանգարում էր մինչև վերջ հավատալու սեփական ուժերին, էլի ինչ-որ բան գալիս, բռնում էր փեշից, փաթաթվում ոտքերին ու ետ-ետ ձգում։ Եվ որքան խիզախում էր մտովի, նույնքան էլ պակասում, բարակում էր հավատը, որովհետև դա ևս նույն պարտադիր ծրագրի մասն էր դառնում։ Նա լի էր վճռականությամբ ամենուրեք դպրոցներ հիմնելու, բացելու անկելանոցներ, ուրկանոցներ, աղքատանոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ, օթևաններ՝ ճամփորդների և օտարականների համար, վերացնել մուրացկանությունը, հորդորել թագավորին, նախարարներին, բոլոր հարուստներին ու իշխանավորներին՝ գութ ունենալ ծառաների, ստրուկների ու աշակերտների հանդեպ, ծանր հարկերով չնեղել նրանց, քանի

որ աստված ընդհանուր է ամենքի համար, արգելել մերձավորների ամուսնությունը, արյունախառնությունը, բազմակնությունը, անասնական ախտերը, հարբեցողությունը, սուտ երդումը, արվագիտությունը, իգությունը, անասնագիտությունը, մեռելներին ողբալու հեթանոսական կարգը՝ երաժշտական գործիքների նվագակցությամբ, հատուկ պարերով, ինքնակեղեքումով, ոճիրներով... Հայոց աշխարհը դարձնել վանականների մի ընդհանուր միաբանություն։ Բայց ցավն էլ հենց այն էր, որ նա ՉԷՐ ԿԱՐՈՂ ՉԱՆԵԼ այդ բոլորը։ Եթե կարողանար, եթե հնարավորություն ունենար, թեկուզ չնչին, թեկուզ մազաչափ հնարավորություն ՉԱՆԵԼՈՒ, եթե դա իրենից կախված լիներ, իր կամքից ու ցանկությունից, եթե ի՛նքը վճռեր և ոչ թե վճռված լիներ ի վերուստ, նա առավել հեշտությամբ գործի կլծվեր և գլուխ կբերեր իր բարեգործությունները։ Ուրեմն, իր անձը, իր եսը՝ ոչի՞նչ, ուրեմն, իր կամքը չունի՞ ոչ մի արժեք, ուրեմն, այդ աստիճան անխուսափելի՞ է սուրբ մարդ լինելը։ Իսկ ո՞ւր է ինքը այդ բոլոր բարեգործությունների մեջ։ Որտե՞ղ է Աթանագինեսի ու Բամբիշի արդին։ Չկա բարեգործը։ Կա միայն բարեգործությունը։ Նա հալվել, ձուլվել, անհետացել է դրանց մեջ։ Եվ իր եղունգը շարժեցող մի թշվառական, որ փողոցում ողորմություն է տալիս մուրացիկին, ավելի տեր է իր անձին, քան հազարավոր մուրացիկներին փրկողը։ Որովհետև նա անհատ է, իսկ ինքը՝ գործիք։ Որովհետև նա այդ պահին այդպես ուզեց և այդպես արեց։ Իսկ ինքը չուզի՞ էլ պիտի անի։ Բայց մյուս կողմից էլ, հակառակի պես, այնքան լի էր վճռականությամբ, որ այդ զգացողությունը դարձել էր վախեցնելու չափ առարկայական ու պատկերավոր. ահա ուր որ է նա դուրս կգա երկրի շեներն ու ավանները և, սերմնացանի նման փեշը բռնած, բարություն շաղ կտա չորս կողմը։ Եվ նա զգում էր, բնազդով որսում էր, թե որքան շինծու էր իրենից պոկ չեկող այդ տեսիլքը, որքան արհեստական էր իր հանդերձներին կպած այդ մտապատկերը։ Դե որ այդպես է, եթե փակուղի է դիմացը ու ոչ մի ելք չկա, եթե տառապանքն էլ ուղի չի ցույց տալիս, հանուն այդ նույն բարի գործերի՝ պետք է առանց խղճի խայթի

դեն նետել հավատի հարցը և հույսը դնել ավելի պարզ ու հասկանալի բաների վրա. ուժի և իշխանության։ Նա ուժով և իշխանությամբ կիրագործի իր ծրագրերը, ինչպես իր պապի պապը՝ Գրիգոր Լուսավորիչը, որ հրով ու սրով ստիպեց մարդկանց ընդունելու իր բերած բարիքները։ Նա ևս կստիպի մարդկանց՝ երջանիկ լինել։ Բայց... էլ ի՞նչ բայց, ելքը կա՞, կա՞ փակուղին խորտակելու միջոցը, «ցնծացեք Տիրոջով, ով արդարներ, գոհացեք Տիրոջից՝ քնարով, տասը թելավոր սաղմոսարանով սաղմոս երգեցեք նրան, նոր երգ երգեցեք, քնարը լավ ածեցեք ցնծության բարձր աղաղակով...» Բայց... էլ ի՞նչ բայց, եթե ուժն ու իշխանությունն են թե՛ չարի, թե՛ բարու միակ ու միակ զենքերը։ «Ես ողջակեզներով քո տունը կմտնեմ, կհատուցեմ քեզ իմ ուխտերը, պարարտ ողջակեզներ կմատուցանեմ քեզ խոյերի զոհի բուրմունքով, պատարագ կբերեմ արջառներ նոխազների հետ...» Բայց ուժն ու իշխանությունը, այ պնդաճակատ սարկավագ, անցյալի զինվոր և ապագայի կաթողիկոս, ուժն ու իշխանությունը բնական վիճակ չեն մարդու համար, և այդ անբնական վիճակում արվող ամեն քայլի մեջ, թեկուզ և ամենամարդասիրական, աննկատ սողոսկում է արհեստականությունը։ Եվ փակուղին դարձյալ, ամբողջ հասակով մեկ, կանգնեց նրա առաջ։ Փառք Տիրոջ, որ կանգնեց։ Փառք, հազա՞ր փառք, որովհետև նա նորից իր տառապանքի հետ է, որ միակ սփոփանքն է, միակ խորհուրդը, միակ լույսը։ Թող փակուղին միշտ լինի, թող միշտ լինի փակուղին քանդելու տառապանքը։ Թող քանդվի և նորից կանգնի, քանդվի և նորից կանգնի, քանդվի և նորից կանգնի... Որովհետև, եթե լրիվ քանդվեց, դեմ կառնես մեծագո՛ւյն փակուղուն, որ չգիտես որտե՞ղ է, ի՞նչ է, կա՞, թե՞ չկա, արժե՞ կռվել նրա դեմ, թե՞ չարժե, ինչո՞ւ է պետք կռվել և ինչո՞ւ պետք չէ... Եվ արդյոք իզուր չե՞ն եղել քո հաղթանակները մյուս բոլոր փակուղիների դեմ...

Տեր ամենակալ, հեռու պահիր ինձ այդ իմաստությունից, մի՛ բացիր աչքերս, մի՛ լուսավորիր ինձ... Մի քիչ, մի քիչ անգետ թող ինձ...

Իսկ եթե ոչ մի տառապանք էլ չկա՞, եթե նա սարքո՞ւմ,

հորինո՞ւմ է տառապանքը, որպեսզի իր ինքնագոհությունը զարդարի։ Տառապանք-խորաքանդակ։ Տառապանք-հարթաքանդակ։ Տառապանք-նախշանկար։ Տառապանք-մանրանկար։ Տառապանք-տառապանք։ Եթե իրոք տառապում ես քեզ շղթայող հակասություններից ու կասկածներից, եթե այդ հանգույցների ու կծիկների մեջ իրոք քեզ ես փնտրում և ափերդ բերանիդ տարած՝ ձայն ես տալիս ինքդ քեզ, քո կորած, մոլորված անձին, էլ ինչո՞ւ ես անատելի հրճվանք զգում ապագայի ծրագրերից, ինչո՞ւ ես հպարտանում ինքդ քեզանով, բարձրանում ինքդ քո աչքին, ինչո՞ւ քո անձը չես անջատում քո բարեգործություններից, չէ՞ որ այդ հորթային հրճվանքը փոքրացնում է քո բոլոր ծրագրերը։ Նա դրանք իր համար էր անում, ոչ թե ուրիշների։ Աղքատին ձեռք մեկնելով, նա իրեն էր գոհացնում ու բավարարում և ոչ թե աղքատին, իր մասին էր մտածում, ոչ թե նրա, աղքատի մեջ իրեն էր տեսնում, իր վեհանձնությունը, իր ազնվությունը, իր անձնազոհությունը և ոչ թե նրա թշվառությունը։ Սիրելով մուրացիկին, նա իրեն էր նախ և առաջ սիրում։ Էլ ո՞րն է տարբերությունը իր և աղքատին ձեռք չմեկնողի միջև, իր և մերձավորին չսիրողի միջև։ Էլ ի՞նչ ամենասուրբ հայ։ Եվ առհասարակ ի՞նչ է նշանակում այդ ամենան, միակը, անկրկնելին։ Եթե մարդ ունի հագուստ, եթե քոր է գալիս նրա դաստակը, եթե քաղցածանում է, ծարավում, եթե ատամն է ցավում, եթե քրտնում է, եթե մի կերակրատեսակ հավանում է, մյուսը՝ ոչ, եթե միզել է ուզում, եթե մեկին սիրում է, մյուսին չի սիրում, էլ ինչպե՞ս կարող է ոչ միայն սուրբ, այլև ամենասո՞ւրբը լինել։ Եվ մի՞թե անբարոյականություն չէ՝ թեկուզ ձգտել դրան, թեկուզ փորձ անել, չէ՞ որ քո նրբայրները սովորական մարդիկ են։ Սովորական են թե՛ նրանց առաքինությունը, թե՛ ստորությունը։ Անբարոյականություն էր հավատալ իր սրբությանը, դրանով իսկ՝ է՛լ ավելի սիրել իրեն։ Եվ որքան շատ բարիք գործես, որքան մեծ բարիք, իմացիր, որ նույնքան էլ պիտի խորացնես բարեգործի եսասիրությունը։ «Տեր իմ, իմ վեմ և իմ բերդ և իմ ազատիչ, ով իմ ամրություն, ով իմ ապաստան և փրկության եղջյուր, ով իմ բարձր աշտա-

բակը... Ցույց տուր ինձ ճիշտ ճանապարհը... Հաշտեցրու ինձ իմ անձի հետ... Մտերմացրու մեր երկուսին... Ինձ և ինձ... Վստահություն ներարկիր մեր միջև... Բարություն սերմանիր միմյանց հանդեպ... Մի թող, որ հաշտեմ ինքս ինձ... Փարատիր իմ կասկածները... Մի թող ճշմարտության ճանապարհից վազելու... Այդ վազքը երկմտություն է Տիրոջ հանդեպ... Չի դու ես միակ ճշմարտությունը... Իսկ ե՞ս քո հլու կամակատարը...

Բայց դու մի խորամանկիր, ներսես։ Դու նախ քեզ հետ լեզու գտիր, հետո՝ ասածու։ Ինքդ պարզիր քո հաշիվները։ Որովհետև եթե անելանելի պահին ամեն ինչ Տիրոջ վրա ես գցում, նշանակում է, ոչ թե դու ես նրան փնտրում, այլ ուզում ես, որ նա քեզ որոնի ու գտնի։ Ուրեմն... Ուրեմն ոչ մի բիծ չունենա՞ կյանքում, ոչ մի արա՞ատ, ոչ մի խոցելի պա՞հ։ Լավ, բիծն ու արատը մի կողմ թողնենք, թեկուզ թուրությո՞ւն էլ չունենա։ Բախտը չբերեց, բա՞խտը։ Նա շառավիղն է այն տոհմի, որ Քրիստոսի հավատը հաստատեց Հայաստանում և տվեց կաթողիկոսների մի փայլուն համաստեղություն, երեք տուրբ հայկական անուն՝ Գրիգոր, Վրթանես և Հուսիկ։ Դե արի ու շունչ քաշիր այսքան սրբերի մեջ։ Դե արի ու մարդկային բան որոնիր քո մեջ։ Ես հպարտ եմ ձեր նվիրական անուններով, հպարտ եմ, որ ձեր ազնվական արյունն է հոսում իմ մեջ, բայց այդ հպարտությունը ծանր է նստած ուսերիս, ձեր տուրբ վարքը ժայռի պես ընկած է իմ ճանապարհին, և ես ուզում եմ շարդել այն, սրբել, հանել իմ ճանապարհից։ Ես չեմ թողնի, որ ձեր սրբազան հիշատակը խանգարի ինձ։ Որովհետև, անցնելով մարդկայինի սահմանը, ես չեմ հասկանա իմ նմաններին։ Թույլ տուր հրաժարվել իմ տուրբ նախնիներից, Տեր իմ, մոռանալ իմ հարազատներին, իմ արյունակիցներին, իմ սիրելի, շա՞տ սիրելի պապերին, որոնց առաջ ոչնչություն եմ ես, ոզորմելի գաճաճ, անարժան թոռ։ Բայց ա՞ռ եմ ես, լավ թե վատ՝ սա է քո ծառան։ Ընդունիր ինչպես որ կամ։ Որովհետև սխալվելիս անգամ, ես քե՞զ համար եմ սխալվում։ Որովհետև որբանալու քո պատգամը մերժելիս, ես դարձյա՞լ քեզ համար եմ մերժում։ Քեզ համար եմ մնում մարդ, և չկարծես, թե դա

հարթում, հեշտացնում է իմ համփան, վերացնում փշերն ու տատասկները, կամրջում ձորերն ու անդունդները։ Չի հարթում, չի հեշտացնում, չի վերացնում, չի կամրջում։ Իմ տառապանքը ես ոչ ոքի չեմ տա։ Մի զրկիր ինձ իմ դառնահամ, իմ լեղի տառապանքից և մի՛ տուր ինձ սրբերի թորած տառապանքը։ Ես քեզ համար եմ այս մեղքը գործում, քե՛զ համար եմ արժանանում քո զայրույթին, քեզ համար է, որ չեմ վախենում, չեմ խուսափում քո պատիժներից, քեզ համա՛ր եմ ես ըմբոստանում քո դեմ։ Ես քո անունից պիտի ստիպեմ մարդկանց՝ երջանիկ լինել։ Պիտի ստիպեմ բախտավոր ապրել։ Աշխա՛րհն էլ կործանվի, երկի՛նքն էլ փուլ գա ու թեկուզ մի՛ հոգի մնա երկրիս երեսին, ես գտնելու եմ նրան, բռնելու եմ նրա օձիքից, կրնկակոխ հետևելու եմ նրան և սովորեցնելու եմ երջանիկ լինել։ Եթե դրա համար հարկ է մի ամբողջ կյանք զոհաբերել, աղաչո՛ւմ եմ, մի կասկածիր իմ համառությանը, մի երկմտիր իմ պնդությանը, ես կտամ իմ կյանքը նրան, առանց մի պահ անգամ տատանվելու, առանց իմ անձը խնայելու, միայն թե ստիպեմ, որ նա երջանիկ լինի։ Մարդիկ չգիտեն, որ պարտավոր են երջանիկ լինելու։ Եվ ես խոստանում եմ քեզ, երդվում եմ քո սուրբ անունով, որ կհիշեցնեմ նրանց՝ իրենց պարտքը, կսովորեցնեմ, կհամոզեմ, կպարտադրեմ, ծնկաչոք կպաղատեմ, կսպառնամ, ուժ կգործադրեմ, կընտելացնեմ, կվարժեցնեմ... Իմ տոհմը ոչ միայն սրբերի է տվել, այլև անառակ, անխրատ, անարժան մարդկանց, իմ հայր Աթանագինեսին և իմ հորեղբայր Պապին։ Թույլ տուր նրանց օգնությանը դիմել։ Սովորել նրանցից՝ մարդ լինելու արհեստը։ Եվ եթե կուզես իմանալ, ես նրանց եմ պարտական, որ այսպես ատամներով եմ կառչած մարդկանց արանքներում լինելու երազանքից։ Ես առաջինը կկանգնեմ նրանց շարքում։ Ես դեպի քեզ կառաջնորդեմ նրանց երթը։ Բայց մի՛ ստիպիր շարքից անջատվել, ինչպես իմ սուրբ պապերն են անջատվել ու կողքից քայլել։ Մի ստիպիր, որպեսզի ես անհնազանդ չլինեմ քեզ։ Ես փորձեցի օրերով սոված ու ծարավ մնալ, որպեսզի զրկանքներով հրաժարվեմ իմ մարդկային անցյալից, բայց սովն ու ծարավը ինձ

ավելի մոտեցրին մարդկանց, ավելի սուր հիշեցրին իմ ծագումը։ Եվ ես կարոտեցի ինձ։ Կարոտեցի մարդուն։ Իմ հորը, իմ հորեղբորը։ Կարոտեցի մարդկային մի պատմություն՝ իր բոլոր ստվերներով ու արատներով։ Ոչ թե սուրբ պապերիս մաքուր և անարատ կյանքը, այլ հորս ու հորեղբորս դառը և ամոթալի պատմությունը թող ուժ տա իմ բազուկներին, տասնապատկի՛, հարյուրապատկի՛, հազարապատկի՛ հավատս քո և իմ հանդեպ...

Տասներկու տարեկան հասակում Հուսիկին հարկադրեցին ամուսնանալ Տիրան արքայորդու աղջկա հետ։ Հայրը, Վրթանես կաթողիկոսը, հույս ուներ, որ այդ բռնի ամուսնությամբ Լուսավորչի տոհմում կշարունակվի արու զավակների հաջորդականությունը և խնամիական կապ կստեղծվի արքունիքի ու եկեղեցու միջև։ Մանուկ Հուսիկը միայն մի գիշեր ապրեց իր կնոջ հետ, զզվեց մերձեցումից ու այլևս չմոտեցավ նրան։ Երբ կինը երկվորյակ արու զավակներ ծնեց, նա հեռացավ տնից։ Զավակներից մեկի անունը դրին Պապ, մյուսինը՝ Աթանագինես։ Շուտով կինը վշտից մեռավ, ամուսնուն ազատելով անախորժ վիճակից։ Խոսրով Կոտակին փոխարինած Տիրանը, որ աղջկա դժբախտ մահից հետո չափազանց լարվել էր Հուսիկի դեմ, այնուամենայնիվ, հունասեր խմբավորումից զգուշանալով, հարգեց նրա ժառանգական իրավունքները և նրան Կեսարիա ուղարկեց՝ կաթողիկոս ձեռնադրվելու։ Իսկ երբ տեսավ Բյուզանդիայի թուլությունը և մեն-մենակ մնաց պարսկական վտանգի առաջ, նա թեքվեց պարսիկների կողմը և վերջապես հնարավորություն ստացավ վրեժ լուծելու փեսայից։ Խե՜ղճ մորեղբայր, խե՜ղճ հայոց բռնակալ։ Ինչպե՞ս ատեմ ես քեզ, լեզուս ինչպե՞ս պտտվի քեզ անիծելու, ինչպե՞ս ես քեզ չներեմ պատիս սպանության համար, եթե ոճիր գործելիս անգամ կապված են ձեռքերդ, եթե նույնիսկ արքունի սովորական ստորություն կատարելիս պետք է նայես երկու հզոր հարևաններիդ, Բյուզանդիային ու Պարսկաստանին։ Խե՜ղճ, խե՜ղճ մարդասպան։ Հուսիկը Տիրանին արգելեց եկեղեցի մտնել, ասելով, թե նա անարժան է։ Կատաղած թագավորի

հրամանով նրան բրածեծ արեցին և սպանեցին եկեղեցու մուտքի առաջ։ Հուսիկին պետք է փոխարիներ կամ Պապը, կամ Աթանագինեսը։ Բայց ոչ մեկը, ոչ էլ մյուսը ձգտում չունեին հոգևորական դառնալու։ Հունասեր նախարարները բռնի ուժով նրանց հարկադրեցին սարկավագ ձեռնադրվել։ Սակայն զուր էին այդ ջանքերը, աշխարհիկ վայելքներին նվիրված երկվորյակ եղբայրները զինվորական ծառայության մտան, ամուսնացան թագավորի քույրերի, իրենց մորեղբոր աղջիկների հետ և հրաժարվեցին աստծո ժառանգությունից։ Կաթողիկոսի աթոռին նստեց Դանիել անունով ասորի մի եպիսկոպոս։ Պապն ամուսնացավ Վարազդուխտի հետ, որից զավակ չունեցավ։ Նա կապվեց Տարոն գավառի Հացյաց գյուղի մի կնոջ հետ և այդ հացեկացի հարճից ունեցավ Վրիկ անունով մի որդի։ Աթանագինեսն ամուսնացավ Բամբիշի հետ, որը նրա համար ծնեց մի արու զավակ, անունը՝ Ներսես։ Մի անգամ երկու եղբայր հարբած գնացին Տարոնի Աշտիշատ գյուղը, որտեղ նրանց պապ Գրիգորը կործանել էր Վահագնի մեհյանի բագինները և հենց այդ նույն տեղում կառուցել առաջին սուրբ եկեղեցին։ Նրանք մտան աստծո տաճարը և քեֆ արեցին վարձակների ու գուսանների հետ։ Եպիսկոպոսներից մեկը, հենց այդ նույն վարձակներին կաշառելով, թույլ դնել տվեց գինու մեջ ու սպանեց անօրեն եղբայրներին։ Բայց ժողովրդի մեջ տարածվեց, թե այդ Տիրոջ հրեշտակն է փայլակի նման հանկարծ երևացել և տեղնուտեղը խփել, սպանել եղբայրներին։ Ոչ ոք չէր համարձակվում եկեղեցի մտնել։ Դուռը բաց էր մնացել, և ոչ մեկը չէր հանդգնում անգամ անցնել դռների մոտով։ Ամիսներ անց նրանց մարմինները նեխվեցին, քայքայվեցին, ու նոր միայն մարդիկ սիրտ արին ներս մտնելու և հավաքելու նրանց չորացած, ցամաքած ոսկորները։ Միասին ծնված երկվորյակ եղբայրներին միասին էլ թաղեցին Ագարակ կոչված եկեղեցու բակում։ Ներսեսն ամուսնացավ Վարդան Մամիկոնյանի աղջկա՝ Սանդուխտի հետ, որը ջահել հասակում մեռավ, նրան թողնելով Սահակ անունով մի արու զավակ։

Հիշելով այս պատմությունը, ես հիմա փառավոր սեղան

կբացեմ, արքայավայե՛լ սեղան, որ անամոթաբար կպայթի առատությունից, և ես կօրհնեմ երկվորյակ Պապի ու Աթա-նագինեսի անառակությունն ու կենսասիրությունը, կօրհնեմ նրանց բոլոր ախտերն ու արատները, որովհետև այդ նրանք են կանգնած իմ ու նախնիներիս միջև, նրանք են ընդհատում, խզում մեր կապը և չեն թողնում, որ իմ սուրբ պապերը խանդարեն ինձ՝ անմնացորդ ծառայելու քեզ։

Եթե որևէ մեկը մեղք գործի, ես ու նա ենք գործել այդ մեղքը։ Եթե մեկը գողություն անի, մենք միասին ենք արել գողությունը։ Եթե մեկը մարդ սպանի, մենք միասին ենք կատարել սպանությունը։ Եթե մեկը սուտ երդում տա, մենք միասին ենք սուտ երդում տվել։ Եթե մեկը տանջի իր ճորտին, մենք միասին ենք ճորտին տանջել։ Եթե մեկը քո անունն արատավորի, մենք միասին ենք արատավորել քո անունը։ Բայց եթե մեկը փառավորի անունդ, լինի անբիծ ու առաքինի, այդ նա է միայն անբիծն ու առաքինին, միայն նա, մեն-մենակ, առանց ինձ։ Ես իմ անձը անջատում եմ նրանից, ես նրա հետ չեմ կիսում քո օրհնությունը, չեմ խլում նրա բաժինը։ Միայն թե մի արգելիր հրաժարվել արբությունից, մի արգելիր հավատալ, որ կաթողիկոս լինելը ընդամենը գործ է, աշխատա՛նք, գործ է բարություն սերմանելը, գործ է մարդկանց երջանկացնելը, աստծուն ծառայեցնելը, սեփական անձը ուրիշներին նվիրաբերելը, և ես, քո ծառան, պիտի աշխատեմ ճիշտ այնպես, ինչպես դարբինը, զինագործը, բրուտը, ոսկերիչը, հողագործը...

Թեև լուսանում էր արդեն, բայց Ներսեսը դեռ շարունակում էր թափառել դաշտում, որը, հայրենի մյուս դաշտերի նման խաբված, ձգվո՛ւմ էր, ձգվո՛ւմ, սակայն չէր հասնում մինչև հորիզոն՝ բախվում էր սարերին ու կոտրվում։

Ներսեսը լեզու էր գտել աստծո և ինքն իր հետ։ Դրա համար պետք էր բարձրանալ դեպի Տերը, բայց Տիրոջն էլ, իր հերթին, պետք էր մոտեցնել իրեն։ Մարդու աստվածացումն ու աստծո մարդկայնացումը։ Եվ իր հաշողությունից

ցնծալով, նա պատրաստ էր մոռանալ սև սքեմը և թավալվել խոտերի ու վայրի ծաղիկների վրա։ Բայց այդ էր պակաս, որ նա այդպես անմտորեն և անօգուտ արտահայտեր իր ցնծությունը։ Նա իր ուրախությունը կթափի մարդկանց վրա, և վա՜յ նրան, ով առաջինն իր վրա կկրի նրա խնդության պոռթկումը։ Նա վճռեց ուրախության ծանրությունը կիսել իր Պապ հորեղբոր և հացեկացի հարճից ծնված որդու՝ Վրիկի հետ, որն իսկ և իսկ հորն էր քաշել։ Արկածախնդրությունից դրդված, այդ անառակը խնդրել, աղաչել էր Ներսեսին՝ նրա շքախմբի մեջ մտնել որպես ծառա։ Մանավանդ որ ոչ ոք չգիտեր նրանց ազգակցական կապի մասին։ Վրիկն ուզում էր աշխարհ տեսնել, նա մինչև հիմա գիտեր միայն, թե ինչ է նշանակում հայկական ցոփ կյանք ու զեխություն, հիմա ուզում էր բյուզանդականի համը ևս տեսնել։

Շքախումբն իջևանել էր Հայաստանի և Բյուզանդիայի սահմանագլխին, Առյուծ լեռան մոտ։ Կարծես մի ամբողջ բանակ էր եկել թշնամու դեմ ճակատելու՝ խորաններով ու վրաններով, հովանոցներով ու սրահակներով, ընտիր նժույգներով ու սպառազեն զինվորներով։

Ծառայապետ Վրիկի վրանը, ինչպես և Ներսեսինը, փոքր էր ու անշուք՝ ի տարբերություն նախարարների ընդարձակ և հարմարավետ խորանների, որոնցից յուրաքանչյուրի վրա ծածանվում էր տիրոջ դրոշակը՝ տարբեր զինանշաններով՝ ոսկեհյուս արծիվ, վիզը լարած ցուլ, նետընկեց աղեղ...

Խորանների շուրջ արածում էին ձիեր, որոնց մեծ և խելացի աչքերում ոչ թե արձակ դաշտերի ու անապատների, այլ սանձի ու թամբի կարոտ կար։

Ներսեսն իր հետ վերցրեց հանգած խարույկների մոտ նստած զինվորներից երկուսին, կանգնեցրեց հորեղբոր որդու վրանի առջև, իսկ ինքը ներս մտավ։

Վրիկը քնած էր առավոտվա խոր քնով՝ գետնին փռված շոր խոտերի վրա։ Դեմքը մանկան պես խաղաղ էր ու անխռով։ Շնչառությունը՝ հանգիստ ու համաչափ։ Սա էր իսկական Վրիկը, իհա՜րկե սա էր, այս անմեղ պատանին, որի մասին հենց ինքը՝ Վրիկը, ոչինչ չգիտեր։ Այդ հիմար տղան աքլորանում էր, թե ինքը հասել է կործանման խորխորատին

և այլևս փրկություն չունի։ Ես քեզ կպատմեմ, թե ինչպիսին է քո դեմքը քնած ժամանակ։ Եվ դու կիմանաս, թե ով ես դու։ Ես քեզ գտա, հայտնաբերեցի, հայտնագործեցի, երկնեցի քեզ, և դու արդեն ազատում չունես ինձանից։

Նա ծնկի չոքեց, կռացավ Վրիկի վրա, հայրաբար շոյեց նրա մազերը և շշնջաց ականջին.

— Դու պետք է վերադառնաս, Վրիկ... Իսկույն վերադառնաս...

— Ի՞նչ է պատահել,— վախեցած, տեղից թռավ Վրիկը։

— Դու պետք է վերադառնաս,— մեղմ կրկնեց Ներսեսը։

— Ինչո՞ւ,— զարմացավ Վրիկը,— ի՞նչ վատ բան եմ արել։

— Կգնաս վանք,— հանդարտ շարունակեց Ներսեսը,— գրել կարդալ կսովորես, ճարտասանություն, իմաստասիրություն, քերթողություն, երգեցողություն...

— Բայց ես չեմ ուզում,— դեռևս ուշքի չեկած, կարծես մղձավանջի մեջ, ընդդիմացավ Վրիկը։— Ի՞նչ վանք։ Գժվել ես, ի՞նչ է։

— Դու դժբախտ ես, Վրիկ։ Ես իրավունք չունեմ հանգիստ նայելու քո դժբախտությանը։ Ես պիտի փրկեմ քեզ։ Հենց քո ձեռքից պիտի քեզ փրկեմ։

— Ո՞վ ասաց, որ դժբախտ եմ,— վիրավորված հարցրեց Վրիկը։— Առավոտ շուտ ի՞նչ է փչել խելքիդ։

— Դու այդ չգիտես։ Բայց ես գիտեմ։ Հաստատ գիտեմ։

— Ես աշխարհի ամենաերջանիկ մարդն եմ,— ծիծաղեց Վրիկը և անպատկառորեն ձեռք տվեց Ներսեսի սև պարեգոտին։— Քեզնից էլ երջանիկ։

Ներսեսը ներողամտաբար շարժեց գլուխը։

— Ոչ, Վրիկ։ Բայց ես ուզում եմ, որ դու երջանիկ լինես։ Եվ կլինես։ Ես քեզ խոստանում եմ։

— Ի՞նչ ես ուզում ինձանից,— ջղայնացավ Վրիկը։— Ի՞նչ ես կպել, պոկ չես գալիս։

— Դու լավ տղա ես, Վրիկ,— գորովանքով ժպտաց Ներսեսը։— Ես արդեն գիտեմ այդ։ Բայց ուզում եմ, որ դու էլ իմանաս։ Եվ կիմանաս, շուտով կիմանաս։

— Ձեռք քաշիր ինձանից, Ներսես։ Գնա քեզ համար ուրիշ մարդ գտիր։

— Դա անհնար է, Վրիկ,— կտրական ասաց Ներսեսը։— Թող մտքովդ չանցնի, որ ես ձեռք կքաշեմ քեզնից։

— Թե զղջացել ես ինձ վերցնելուդ համար, էլ ի՞նչ ես սար ու ձոր ընկել։ Ես հենց հիմա կթողնեմ, կհեռանամ։

— Չէ, Վրիկ, չեմ թողնի։ Հազիվ ես ձեռքս ընկել։ Դու պետք է ամուսնանաս։ Եթե հարկ լինի, բռնի կամուսնացնեմ քեզ։ Դու պետք է ընտանիք կազմես, երեխաներ ունենաս։

— Այն, ինչից զրկվել ես, ուզում ես ի՞մ մեջ տեսնել։ Քո պակասներն ուզում ես իմ հաշվի՞ն լրացնել։

— Ես ուզում եմ քեզ երջանիկ տեսնել։— ջերմեռանդությամբ պնդեց Ներսեսը։— Եվ կտեսնեմ։ Անպայման կտեսնեմ։

— Դու նախանձում ես ինձ, Ներսես։ Իմ ազատությանն ես նախանձում։

— Դու չգիտես քեզ ինչ է պետք։ Բայց ես գիտեմ։ Եվ ես քեզ մենակ չեմ թողնի։

— Իզուր մի համոզիր ինձ, Ներսես։— Վրիկը վեր կացավ և սկսեց կապոցը հավաքել։— Խնայիր ժամանակդ։

— Բայց ես արդեն վճռել եմ,— երջանկությունից արբած, ասաց Ներսեսը։— Ես չեմ թողնի, որ դու կործանվես։

— Ի՞նչ ես վճռել,— արհամարհանքով հարցրեց Վրիկը։ — Գուցե քեզ իսկապե՞ս թվում է, որ ես քո ծառաներից մեկն եմ։

— Ես սիրում եմ քեզ, Վրիկ։

— Ապօրինի ծնունդներին ո՞վ է սիրել, որ դու ինձ սիրես։ Մնաս բարով, Ներսես։

Կապոցը ձեռքին, նա ուղղվեց դեպի մուտքը, բայց երկու զինվորներն անմիջապես հայտնվեցին ու փակեցին նրա ճանապարհը։

Վրիկը հարցական նայեց հորեղբորորդուն։

— Սխալվում ես, Վրիկ։ Ես իմ սերը կապացուցեմ քեզ։—

Եվ նա հանգիստ դարձավ զինվորներին ու խաղաղ ձայնով դիմեց նրանց.— Կտանեք վանք։ Եվ մինչև վերադարձս աչքներդ վրան կլինի։ Մնաս բարով, Վրիկ։

Զինվորները բռնեցին Վրիկի թևերից, բայց նա սկսեց կատաղորեն դիմադրել ու սաստիկ հայհոյել։ Ներսեսը հրճվանքով նայում էր նրան։ Ահա առաջին երջանիկ մարդը։ Իր առաջին ծնունդը։ Իր գյուտը։ Եվ նա անչափ, անչափ ուրախ էր Վրիկի փրկության համար։ Հիմա նա, դարբնի, զինագործի, բրուտի, ոսկերչի կամ հողագործի նման վաստակած, կվերադառնա իր վրանը, ախորժակով նախաճաշ կանի և հանգիստ սրտով կքնի մինչև կեսօր։

Զինվորները ոլորեցին Վրիկի թևերը, ամուր կապեցին մեջքի կողմից և սկսեցին քարշ տալ։

Ներսեսը դուրս եկավ վրանից, խանդաղատանքով լցված՝ նայեց իր արյունակցին և, որպես հրաժեշտ, ձեռքը թափահարեց օդում։

— Չեմ ուզում երգեցողություն,— հուսահատ գոռում ու լալիս էր Վրիկը։— Չեմ ուզում երգեցողություն...

Մի պահ նա պոկվեց զինվորների հուժկու աքցաններից, վազեց դեպի Ներսեսը, դեպի այդ կանացահանդերձ դավաճանը, ուզեց թքել ու հայհոյանք շպրտել երեսին, բայց հանկարծ շվարած և թուլացած կանգ առավ։ Բարի դեմքով, մաքուր, անարատ աչքերով, խաղաղ ու ժպտերես մի մարդ էր կանգնած նրա առջև։ Հոգնած ու տանջված մի մարդ։ Այդ խաղաղությունն ու ազնիվ ժպիտը սարսռեցրին Վրիկին, ինչ-որ անհասկանալի վախ ծնեցին նրա մեջ։ Միաժամանակ՝ մի անբացատրելի պատկառանք ու երկյուղածություն։ Ենթարկվելով անմեկնելի ուժին, նա ակամա ծնկի չոքեց Ներսեսի առաջ և, մոռացած իր դժբախտությունն ու վիրավորանքը, հիացմունքով շշնջաց հենց այն բառերը, որ մի ակնթարթում խորտակեցին այն ամենն, ինչ Ներսեսը հազիվ էր կառուցել մեծ շարշարանքով։

— Բայց դու մարդ չես, Ներսես... Սուրբ ես դու... Սո՜ւրբ...

—Ես պետք է հեռվից սկսեմ, Հայր Մարդպետ։

— Ի վերուստ սահմանված կարգ է, իշխան Տիրիթ։

— Պետք է խորամանկե՞մ, նախապատրաստե՞մ քեզ, շոշափե՞մ տրամադրությունդ, նրբորեն ոստա՞յն հյուսեմ։

— Դա հարգանքի ցույց կլինի իմ հանդեպ, իշխան։

— Իսկ եթե միանգամի՞ց մտքինս ասեմ։

— Դա ևս կընկալվի որպես վստահություն։ Որպես յուրովի հարգանք, իշխան։

— Ես սիրում եմ յուրովի գործել։ Ոչ բոլորի նման։

— Ուրեմն, իմ Տիրիթը պետք է ազնիվ ու անբիծ մնա։ Մեր օրերում դա է միակ յուրովին։

Այս հանդիպումը կայացավ Տիրիթի նախաձեռնությամբ։ Նա երկար ժամանակ գլուխ էր կոտրում հանդիպման վայրը որոշելու համար։ Ընտրում էր խելքից, մտքից դուրս տեղեր, որպեսզի աննկատ մնան, և ոչ ոք ոչինչ չկասկածի։ Հայր Մարդպետին հայտնի էր միայն, որ Տիրիթն ուզում էր նրան տեսնել «հույժ գաղտնի գործով»։ Նա ներողամիտ ժպիտով մերժեց նրա ընտրած բոլոր վայրերը և հանդիպումը նշանակեց պալատի պարտեզի սյունազարդ ճեմելիքում՝ ի տես բոլորի։ Դա էր միակ ապահով ու անխոցելի տեղը։

Ջահել աքլորների՞ս տեսեք։ Հա ոտքի տակ են ընկնում։ Ինչքան էլ շատացե՞լ են վերջերս։

Նա խղճաց այս նիհար, գունատ ու տգեղ պատանուն, որ ոտքից գլուխ ջղերի կծիկ էր։ Նա սիրում էր թույլ, անհաջողակ և դժբախտ մարդկանց։ Երբ ուժեղ և ազդեցիկ նախարարներից որևէ մեկը, թեկուզ իր թշնամին, անհաջողություն էր կրում և ընկնում պատվանդանից, նա առաջինն էր ձեռք մեկնում, պատրաստ էր անգամ վերջին շապիկը տալ։ Բոլոր միջոցներով օգնում էր նրան ոտքի կանգնելու և վերականգնելու նախկին դիրքը։ Ոչինչ չէր խնայում դրա համար, ոչ

եռանդ, ոչ դրամ, նույնիսկ սեփական շահն ու անվտանգությունն էր ոտնատակ անում։ Բայց հենց որ հասնում էր նպատակին, և ձախողակ նախարարը վերստին դառնում էր առաջվա պես ուժեղ ու աղդեցիկ, Հայր Մարդպետն անմիջապես խզում էր կապերը և սառնությամբ լցվում նրա հանդեպ։ Եվ եթե առիթ ներկայանար նրան տապալելու, ինքը դարձյալ առաջինը կլիներ դավադիրների շարքում, քանի որ նա, այդ երախտամոռը, իր հարստությամբ ու իշխանությամբ հարբած այդ թշվառականը, խաբել, դավաճանել էր իր բարերարին, հետևաբար՝ արժանի էր վրեժխնդրության։

Մերուժանի ավազակախումբը անսխալ ընտրություն էր կատարել հայոց գահի համար, մատը դնելով այս վանող և անդուր տղայի վրա։ Հայր Մարդպետը համախոհ էր նրանց, բայց և այնպես ավազակախումբ էր կոչում իր հոգուն հարազատ պարսկասերներին։ Երբեք չէր մասնակցում նրանց հավաքներին, երբեք չէր բացվում նրանց առաջ, երբեք չէր վստահում խմբովի զրույցներին։ Չէր սիրում՝ բոլորին միասին վերցրած, բայց առանձին-առանձին մոտ էր ամենքի հետ և վստահում էր յուրաքանչյուրին։

Իսկ ուրիշ Արշակունի կա՞ր, որ հնարավոր լիներ ընտրություն կատարել։ Ներքինինե՛ր, մտովի նրանց հայհոյեց պալատի ներքինապետը, անպտուղ, անսերմ, անբերրի ներքիններ։ Գնելն էր մյուս Արշակունին, բայց նրան հունասերներն էին արդեն թիրախ դարձրել. Ուրեմն, Տիրիթին ոչ թե ընտրել էին, այլ ինքն էր ընտրվել։ Նրա ճակատին գրված էր հայոց թագը կրել գլխին։ Նա ստիպված էր դավաճանել հորեղբորն ու զարմիկին։ Թեկուզ աշխարհի ամենաառաքինի մարդն էլ լիներ։ Ո՞վ է այս խեղճուկրակը, ո՞վ է այս ողորմելին, ի՞նչ է իրենից ներկայացնում, որ դավաճանությունը կամ հավատարմությունը նրա կամքից կախված լինի։ Կան երկու արքայազն ու երկու քաղաքական հոսանք։ Հետևաբար, նրանցից մեկը բաժին է ընկնում մի հոսանքին, մյուսը՝ երկրորդին։ Թպրտալու տեղ չկա, ջահել իշխաններ, քեզ համար էլ չկա. Արշակունի Արշակ, երեքդ էլ պիտի ատեք իրար, երեքդ էլ պիտի դավաճանեք միմյանց։ Երկու արքայազն, երկու հոսանք։ Եվ մի թագավոր։ Պարզ թվաբանու-

թյուն, պարզ ճակատագիր։ Ի՞նչ կարող ես անել։ Այստեղ ոչ ինքը մեղք ունի, ոչ արքայազնները, ոչ արքան, ոչ սիրուն Մերուժանը, ոչ էլ տերտերների պետ Ներսեսը։ Մեղքը մեզ-նից դուրս է։ Եթե կուզես իմանալ, մեղքը հենց այն է, որ եթե երեք խնձոր ունես և մեկը վերցնում են քեզնից, մնում է երկուսը։ Ոչ թե երեքը, հինգը, տասը, այլ երկուսը։ Միա՛յն երկուսը։ Եվ վե՛րջ։ Ոչ խղճի խայթ, ոչ տատանումներ, ոչ վեճ, ոչ կասկած, ոչ զղջում։ Երկու խնձոր։ Եվ այդ երկուսի մեջ բարոյականությունը ոչ մի գործ չունի։ Բարոյականությունը թույլ և վիճելի տեղերում է գլուխ բարձրացնում։ Սա էլ քեզ համար, Պարույր Հայկազն, ներիր՝ Պրոերեսիո՞ս, ճառերիդ մեջ օգտագործիր մի տեղ, օգտագործիր, օգտագործիր, ամոթով չես մնա հոռոմների առաջ։

✦✦✦

— Եթե դու ուզում ես իմ օգնությամբ դավ նյութել որևէ մեկի դեմ, ես պատրաստ եմ քեզ օգնելու,— դիտմամբ հենց այդտեղից սկսեց Հայր Մարդպետը, որպեսզի դաս տա մոտիկի մասին այդքան հեռուներից սկսած իշխանին։— Բայց եթե այդ մեկ ուրիշն էլ խնդրի քո դեմ դավել, չեմ թաքցնում, որ անկարող կլինեմ մերժել։

— Ինչպե՞ս թե, իշխան,— շվարեց Տիրիթը, միանգամից այդքան բան լսելով։

— Իրավունք ունե՞մ արդյոք խտրություն դնելու,— մի տեսակ անօգնական ու անպաշտպան դարձավ Հայր Մարդպետը ու թեև նրան թվում էր, թե ինքն այդ պահին դերասանություն էր անում, բայց իրականում միանգամայն անկեղծ էր ու անմիջական։— Կաչակցեմ երկուսիդ էլ։ Թող հաղթի նա, ով ավելի ճարպիկ է։ Բնության օրենքներին մեղք է միջամտել, իշխան։

— Լավ, լավ, համաձայն եմ,— կարճ կտրեց Տիրիթը, և հիմա էլ ինքը փորձեց դաս տալ ծերուկին։— Դու պետք է ներշնչես արքային, որ Գնելն ուզում է թագավոր դառնալ։

— Փառանձեմի՞ն ես սիրահարված։

— Ի՞նչ Փառանձեմ,— շփոթվեց Տիրիթը։

— Գնելի կնոջը։

— Եթե մտքերս կարդաս, ես այլևս չեմ վստահի քեզ,— բռնկվեց Տիրիթը։— Դու պիտի չհասկանաս ինձ, որպեսզի ես քեզ վստահեմ։

— Փառանձե՛մ... Մարմինս քոր է գալիս ամեն գեղեցիկ բանից... Գեղեցիկ ձիուց, կնոջից, բնության պատկերից... — Մի ակնթարթ Հայր Մարդպետն առանձնացավ ինքն իր հետ, միայն մի ակնթարթ, հետո նորից կանգնեց հողի վրա, Տիրիթի կողքին, և արձակեց իր հերթական բախտորոշ վճիռը, պատմակա՛ն վճիռը։— Դու ճիշտ ես։ Պետք է բաժանվեն այդ երկուսը... Երջանկությունը բթացնում է մարդկանց... Դարձնում ծույլ և անզգա... Ճարպակալում է մարդկանց հոգին...

— Բայց դո՞ւ ինչու ոգևորվեցիր, Հայր Մարդպետ,— զգուշացավ Տիրիթը։— Դու չպետք է շահագրգռված լինես։ Քպետք է անձնական դրդապատճառ ունենաս։ Որպեսզի ավելի հեշտ հաջողության հասնես։

— Մի անցիր իմ սահմանը, իշխան,— բարեհոգի ժպտաց ծերունին։— Գործ չունես։ կխճճվես։

— Իսկ Արշակը կհավատա՞։

— Արքա՛ն, որդիս, արքա՛ն,— մեղմ նախատինքով սաստեց Հայր Մարդպետը։— Վայել չէ անունով կոչել նրան։

— Կհավատա՞ Արշակը,— անհամբեր կրկնեց Տիրիթը։

— Կհավատա։ Վատ են նրա գործերը։

Սիրուն Մերուժանն ու նրա ավազակները սիրաշահում էին Տիրիթին, առանց հաղորդակից դարձնելու իրենց ծրագրերին։ Երևի այդպես էին վարվում նաև հունասերները Գնելի հետ։ Ոչինչ, հետո կիմանան։ Այն օրը, երբ թագը կդնեն մեկնումեկի գլխին։ Բայց շան բախտ ունի այս գունատ պատանին, բանից անտեղյակ՝ հանճարեղ միտք է հղացել՝ աչք տնկելու զարմիկի կնոջը և, դրանով իսկ, մաքրելու իր ճամփան։ Ուշադրությո՛ւն, երեք խնձորներից մեկն արդեն առնում են։ Եվ դա այնքան արդար ու ազնիվ ճշմարտություն է, որ Հայր Մարդպետը ինչ-որ թթվաշ համ զգաց բերանում և կուլ տվեց թուքը։

— Գիտե՞ս ինչ եմ մտածում, իշխան,— նա ձեռքը թեթե-

վակի հպեց Տիրիթի ուսին, և նրանք սկսեցին դանդաղ քայլել սյունազարդ ճեմելիքում։— Կանցնի հարյուր տարի, այս ծառը՝ կանգուն կմնա, բայց ես ու դու չենք լինի։ Դա քեզ չի՞ շարացնում։ Ինչո՞ւ ոգին պիտի մեռնի, իսկ նյութը պիտի մնա։ Մեր կրքերը, չարչարանքներն ու տառապանքները, մեր ամբողջ պայքարը վերջին շնչի հետ, այ տես,— նա կլորացրեց շրթունքներն ու փչեց,— այսքան հեշտ ու տեսանելի՝ անհետ կորչելու են։ Քո այս պահի լարված վիճակը ինչ ասես չարժե, այնպես չէ՞, իշխան։ Մի ամբողջ աշխարհ։ Եվ ի՞նչ։ Մի՞թե վիրավորական չէ, որ սա էլ ոչ մի հետք չի թողնելու։ Սեծվա՞ծ բան եմ ասում։ Իսկ դու կարո՞ղ ես ավելի մեծ ճշմարտություն ասել, քան այն, որ մենք հիմա քայլում ենք։

— Մենք հիմա մտածում ենք արքային լարել Գնելի դեմ, — անհամբերությամբ ճշտեց Տիրիթը։

— Մենք հիմա քայլում ենք, իշխան, քայլում։ Իսկ քո ասածի մեջ այնքա՞ն վիճելի բան կա։

— Հայր Մարդպետ, դու ինձ վերջնական պատասխան տուր,— հուսահատվեց Տիրիթը։ —Կամ այո, կամ ոչ։

— Նախ վերլուծենք, որդիս, վերլուծենք։ Տեսնենք ինչ ենք անում։ Չսխալվենք հանկարծ։— Եվ նա սկսեց խոսել ինքն իր հետ, անկեղծորեն փորձելով գտնել, թե ինչն է թույլատրելի և ինչը՝ ոչ։— Եթե ոգին ժամանակավոր է, իսկ նյութը՝ մնայուն, ուրեմն, ազնվությունն ու անազնվությունը հավասար են, ուրեմն, նույն բանն են չարն ու բարին։ Էլ ինչպե՞ս հավասար չլինեն, ինչպե՞ս նույն բանը չլինեն, եթե մնայուն արժեքը այս ծառն է միայն։ Հակառակի պես էլ ինչ այլանդակ ծառի դեմ առանք... Ուզում ես ասել, որ մարդու գո՞րծն է մնում նրա մահից հետո։ Որ ոգին այդ ձևո՞վ է մեզանից հետո նյութ դառնում։ Դա իմ ու քո հնարածն է, որպեսզի սիրունացնենք մեր տառապանքը։ Ուրեմն, այսպես, սիրելի Տիրիթ, զարմիկի կնոջը սիրահարվելը նույնքան մեղք է, որքան և չսիրահարվելը։ Եվ արքայի մոտ զարմիկին ամբաստանելը նույնքան անմեղ բան է, որքան և չամբաստանելը։— Եվ նա բարի ժպտաց, քանի որ արդեն գտել էր «այո»-ի ու «ոչ»-ի սահմանումը։— Ուզո՞ւմ ես, չամ-

բաստանենք... Եվ դու կտեսնես, թե դա ևս որքան հնշտ բան է...

Պատմիչն ասում է, որ Տիրան թագավորի օրոք Հայաստանը շարունակում էր կովախնձոր մնալ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև։ Բայց պատմիչը ոչ մի տեղ չի ողբում «վայելչակազմ, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով ու երկնագեղ հասակով» Հայկ Նահապետին, որը, հյուսիս և հարավ, արևելք ու արևմուտք ունեցող այս լայնածավալ աշխարհը թողած, բերեց, երկիրը գցեց ուժեղների ոտքերի տակ, տարանցիկ ճանապարհների խաչմերուկում՝ որպես հավիտենական կովախնձոր, որպես անեծքի խարան նրա գրոշի վրա։

Կոստանդ կայսրը զբաղված էր արևմուտքի իր հակառակորդների դեմ կռվելով, հույսը դրած Դիոկլետիանոս և Կոստանտին կայսրերի կողմից Միջագետքում կառուցված ամրությունների վրա, որոնք անառիկ պատվար էին պարսկական հարձակումների դեմ։ Տեսնելով Բյուզանդիայի թուլությունը, Տիրանը թեքվեց Պարսկաստանի կողմը, թեև չէր մոռանում կայսրին հավատարիմ մնալու պարտականությունը, մանավանդ, որ նա երեք հոգու պատանդ էր ուղարկել Բյուզանդիա՝ իր փոքր որդի Տրդատին ու երկու թոռներին՝ Տրդատի որդի Գնելին ու իր մեռած անդրանիկ զավակի տղային՝ Տիրիթին։ Երեք նապաստակ, որոնք գիշեր-ցերեկ մաքրում էին իրենց համար նախատեսված տապակները, հետևում, որ կրակարանը հանկարծ չհանգչի, և ամեն օր տիրոջը սնակների վրա մատուցում իրենք իրենց...

Երբ Կոստանդ կայսրը 348 թվականին, արևմուտքի հետ հաշիվներն արդեն փակած, անձամբ պատերազմի գնաց Շապուհի դեմ, Տիրանն ստիպված էր միանալ նրան՝ ընդդեմ իր բարեկամ պարսիկների։ Սինգարայի մոտ պարսիկները ջախջախեցին բյուզանդացիներին, և Տիրանը չարաչար պատժվեց։ Շապուհը կուրացրեց նրան, ինչպես հնում Նաբուգոդոնոսորը Սեդեկիային՝ Հուդայի վերջին թագավորին, որ հանդգնել էր ապստամբել Բաբելոնի դեմ, թեև հենց

այնտեղից էր ստացել իր թագը։ Տիրանը ոչ այնքան տանջվում, որքան ամաչում էր իր կրած ահավոր պատժի համար, որովհետև ինչ-որ ծիծաղելի-ողբերգական բան կար դրա մեջ կամ որ նույնն է թե՝ հայի անհեթեթ բախտ։ Ախր նա պարսիկների բարեկամն էր, պարսիկների՝, և ուրեմն, պետք է բյուզանդացիների՝ դեմ կռվեր, բայց, փետուրի պես քամու բերանն ընկած, ձեռքերն ու ոտքերը կապկպված, միացավ բյուզանդացիներին ու կռվեց պարսիկների դեմ։ Թշնամի բյուզանդացինե՛րը պետք է կուրացնեին նրան, դա էր տրամաբանությունը ամեն ազգի համար, բայց ո՞չ հայի, և բարեկամ պարսիկնե՛րը նրան կուրացրին։ Միայն մի բան չես հասկանում այսքանից հետո. էլ ինչո՞ւ են քեզնից պատանդներ ուզում...

Շապուհը հայոց թագը տվեց Տիրանի միջնեկ որդուն՝ Արշակին, իսկ Կոստանդ կայսրը, նոր արքային սիրաշահելու և իր կողմը քաշելու համար, աղատ արձակեց երկու արքայազուն պատանդներին՝ Գնելին ու Տիրիթին։

Գործարքը կնքվեց, և Տիրիթը հանգստացավ։ Դեմքի մկանները, որ ջղաձգումից ասես խախտել էին իրենց դասավորությունը, եկան ու տեղն ընկան։ Նա անմիջապես վերափոխվեց, անճանաչելի դարձավ և մի ծայրահեղությունից հասավ մյուսին։ Հիմա նրա հայացքի մեջ ինքնավստահություն կար, զարմանալի անհոգություն ու թեթևություն։ Արդեն հովանավորի պես էր իրեն պահում, կարծես, այդ գործարքը կնքելով, նա չտեսնված լավություն էր արել Հայր Մարդպետին, և Հայր Մարդպետը մինչև կյանքի վերջը պետք է երախտապարտ լիներ նրան։

— Բայց իմացիր, Հայր Մարդպետ, հրաշալի տղա է իշխանը,— ուղիղ նրա աչքերին նայելով, հանդիստ ասաց Տիրիթը։

— Հայաստանում չկա մի նախարար, որ չսիրի նրան,— տեղնուտեղը վրա բերեց Հայր Մարդպետը։

— Նրանք իրենց զավակներին հանձնել են Գնելին, որ-

պեսդի դաստիարակվեն նրա բարի օրինակով,— ջերմեռանդ ավելացրեց Տիրիթը

— Նա անզուգական զինվոր է ու մարդիկ,— նույն ոգով շարունակեց Հայր Մարդպետը։— Սուսերամարտի, նշանառության և գունդ նետելու մեջ գերազանցում է բոլորին։

— Ի՞նձ էլ է գերազանցում,— հպարտությամբ ավելացրեց Տիրիթը։

— Գթասիրտ է, աղնիվ, ընկերասեր,— բարեխղճորեն թվարկեց Հայր Մարդպետը։

— Եվ փառավոր ամուսին,— խանդաղատանքով շեշտեց Տիրիթը։— Շատերը կնախանձեին նրանց երջանկությանը։

— Ես հիացած եմ քեզանով,— ասաց Հայր Մարդպետը, իսկապե՛ս հիացած նրա անամոթությամբ ու անպատկառությամբ։

— Չմոռանաս, որ նա իմ հորեղբոր որդին է,— արժանապատվությամբ հիշեցրեց Տիրիթը։

Եվ Հայր Մարդպետը, որ կյանքում հազար ու մի բան էր տեսել մինչև այս տարիքին հասնելը, մասնակցել հազար ու մի անաղնիվ գործարքի, նա, որ սովոր էր ոչնչով չզարմանալ, ոչնչից չապշել և ոչ մի բանից չխորշել, հիմա մի տեսակ կեղտոտված համարեց իրեն, ինչ-որ լպրծուն և թաց բան զգաց մաշկի վրա։ Ճիշտ է, նա ինքը ևս ընդունակ էր այդպիսի հանդուգն անպատկառության, նույնիսկ ավելի նողկալի, ավելի գարշելի, բայց միա՛յն ինքը և ոչ ուրիշը։ Կար մի սահման, որից այն կողմ նա չէր ներում ուրիշների ստորությունը և անկեղծորեն վրդովվում։ Ընդհանրապես, նա մի զարմանալի հատկություն ուներ՝ դեռ հեռվից ստորության հոտն առնելու, նույնիսկ այն ստորության, որ նոր էր ծնվում, նոր էր ձևավորվում, և եթե ինքը մասնակից չէր դրան, աշխատում էր ամեն գնով խեղդել այն, թույլ չտալ, որ լույս աշխարհ գա, գժբախտացնի ազնիվ ու շիտակ մարդկանց, իսկ եթե հնարավոր էր՝ նաև պատժել հեղինակներին։ Որովհետև նրանց արարքները հիմնված էին մերկ և անձնական նեղ շահերի վրա, չունեին բարոյական կամ իմաստասիրական հենարան։ Տեսություն չունեին ոտքերի տակ։

— Ես ուրախ եմ, որ դու սիրում ես քո զարմիկին։ Ես ծեր եմ և աղտերով լի։ Թշնամանք և նախանձ կարող են միայն իմ մեջ ծագել։ Լավ է, որ քո մեջ չկա։ Քեզ համար շուտ է դեռ։— Եվ Հայր Մարդպետը հենց այնպես, իմիջիայլոց, նույնիսկ հազիվ լսելի ձայնով, ավելացրեց.— Միայն ափսոս, որ ուզում է թագավոր դառնալ։

— Մի՞թե թերություն է երիտասարդությունը, մի՞թե մեղք է տաքարյուն և անփորձ լինելը,— արդեն վերջնականապես իր դերի մեջ մտած, աչքողջ հոգով ու սրտով զարմիկին պաշտպանեց Տիրիթը։— Խափանիր նրա մտադրությունը, Հայր Մարդպետ։ Ի սեր աստծո, խափանիր։ Նրա իսկ լավության համար։

— Նաև մեր։ Նաև արքայի ու հայրենիքի.— Տիրիթի լացակումած ձայնից և հուզմունքից ամաչելով, ուղղեց նրան Հայր Մարդպետը։— Ես կաշխատեմ ճշգրիտ իմանալ նրա մտքերը։ Բայց որ իմանամ էլ, գաղտնի կպահեմ քեզնից։ Թող այսքան վաղ չխռովվի քո հոգին։

Սա որ թագավոր դարձավ, առաջինն իմ գլուխը կուտի։ Բոլոր նրանց գլուխները, ովքեր քիչ թե շատ օգնել են նրան՝ գահին տիրանալու։ Եվ նա այդ կանի ոչ թե ուժից, այլ թուլությունից։ Թուլությունից է, որ կծնվեն կասկածներն ու վախերը։ Հետո հերթը կգա այն գլուխներին, որոնց միջոցով նա հաշվեհարդար տեսավ մյուսների հետ։ Եվ այսպես շարունակ։ Մինչև այն գեղեցիկ օրը, երբ հանկարծ կպարզվի, որ նա, իր թուլության շնորհիվ, դարձել է ուժեղ թագավոր։

— Ես քեզ կվարձատրեմ, իշխան,— գործնական ասաց Տիրիթը։— Առատ։ Շատ առատ։

— Հետո, հետո,— նեղացավ Հայր Մարդպետը։— Մի փչացրու գաղափարը։

Գլուխ հինգերորդ

Երսեսը ինչ-որ ծանոթ ու հարազատ աղմուկ լսեց։ Քիչ է ասել լսեց։ Աղմուկը, որ մինչ այդ դարան մտած սպասում էր նրան, ապտակի պես հանկարծակի իջավ դեմ-

քին, դաղեց, կսկծեց, այրեց երեսը, կարծես հիշեցնելով նրա դավաճանությունն ու դասալքությունը։

Սուսերամա՞րտ էին խաղում պալատին կից միհարկանի շինության մեջ։ Հակառակի պես՝ առավել անզուսպ ու կատաղի, քան սովորաբար։ Սրերի հարվածները, պողպատի զրնգուն և ազնիվ ձայնը, որ թունդ էր հանում նախկին զինվորի ու սենեկապետի հոգին, հիմա հնչում էր որպես ինքնավար մի դավանանք, որպես առանձին աստվածություն։ Եվ եթե Քրիստոսին ուրանալն է պղծություն, ապա ինչո՞ւ և ինչո՞վ պղծություն չէ առհասարակ որևէ հավատի ուրացումը։ Ինչո՞ւ այդ նույն Քրիստոսը չպիտի պախարակի քեզ, որ դու դավանում ես նրան, մի ուրիշ բանի ուխտազանց լինելով։ Ո՞րն է այստեղ արդարությունը։ Չէ՞ որ Ներսեսն իր ամբողջ կյանքում, իր ամեն մի քայլով, գովերգել, փառաբանել է մարմնի ուժն ու գեղեցկությունը, աշխարհիկ տաք վայելքները, առողջ և անամոթ կենսասիրությունը, այդ ամենը ապրելու սովորական կերպից վերածել է հավատի, բարձրացրել պատվանդանին և պաշտամունք դարձրել։ Իսկ հիմա ձևացնում է ամենայն լրջությամբ, թե երակների մեջ արյունը հանդարտ հոսում է իր համար, չի խենթանում, չի փրփրում, չի ընդվզում տիրոջ դեմ, որ բազուկները չեն ուռչում ժանգոտած, ծուլացած ուժից, որ ձեռքերը չեն կարոտում սրի կամ թրի կուվանը, չեն կարոտում շոյանք ու քնքշություն։ Եվ հոգու այս անմիտ աղքատացումը, այս վայրենի ամայացումը, այս անխիղճ մզումը իբր հոգուն ծառայել է նշանակում։ Ինչպե՞ս ես դիմանում, աստված, քո ծառաների փարիսեցիությանը, երեսպաշտությանը, չէ՞ որ դու հո լավ գիտես, որ ես և իմ նմանները ջնջում ենք քեզ, հետևաբար, գործում մեծագո՞ւյն մեղքը, քեզ հավասարեցնելով հասարակ մահկանացուներիս։

Ներսեսը սփրթնեց ու վախեցավ։ Որովհետև ներքին մի թուլություն և անհանգիստ ուժ նրան մղում էր խելառ պոռթկումի՝ դեն նետելու սև ու երկար սքեմը, կրնկով խփելու սատանայաբար գայթակղեցնող այս դռանը, ներս խուժելու, առաջին իսկ պատահած մարդու ձեռքից խլելու սուրը և նետվելու կռվի։ Նա ինքն իրենից կլուծի իր զրկանքների

վրեժը, կհանի արհեստական կյանքով ապրելու ոխը իրենից և, ամենակարևորը, դաս կտա այս փսլնքոտներին, թե ինչպես են շշնջում պողպատե սրին, ինչպես են սիրաշահում, ինչ գաղտնի ու անկրկնելի բառեր են փսփսում նրան, ինչպես են անքակտելի դաշն կապում հետը և ինչպես, ինչպե՞ս են հաղթում նրա հետ ձեռք ձեռքի տված։ Գոռացեք, ոգևորվեք, թպրտացեք և ինչո՞ւ չգոռաք, ինչո՞ւ չոգևորվեք ու չթպրտաք, եթե ձեզ հետ չէ ձեր լավագույն ախոյանը, ձեր ամենաուժեղ հակառակորդը։ Թեև տխրեիք պիտի։ Թեև կարոտեիք պիտի։ Կատուն չքացել է, և մկներն են հրապարակ ելել։ Մկների տոն է, մկների խրախճանք։ Այս ի՞նչ օրի հասար, Ներսես։ Մի՞թե դու արժանի էիր ամենասուրբ հայը լինելու։

Բայց փառք երկնավորին, հազար սաղմոս թող ձոնվի նրան, որ Ներսեսն այդ պահին փրկության ելք ուներ։ Անհետաձգելի գործ էր սպասում նրան։ Մի գործ, որի մեծությունը կասկածից վեր էր։ Երկրի բախտն էր հիմա նրա ձեռքին։ Նրա ու թագավորի։ Եվ այդ բախտը չէր կարող երկու ձեռքերի մեջ մնալ։ Կամ ինքը պիտի խլեր այսօր ևեթ, կամ թագավորը։ Կամ ամենայն հայոց կաթողիկոսը այսօր պիտի հաղթեր, կամ արքան։ Իմ մեջ կուտակված ուժն ու հաստատակամությունը թող նվեր լինեն ձեզ, իմ անցյալի բարեկամներ ու ախոյաններ, կովեցեք առանց ինձ և բարի հիշեցեք մեղավորիս, ես դրանք կծախսեմ ուրիշ մենամարտում։ Արքայի՛ դեմ։

Բայց և այնպես... Նա կյանքը կտար ստուգելու համար, որ եթե այդ մեծ պարտքը հիմա չլիներ ուսերին, եթե ազատ ու անգործ լիներ այս պահին, ուժ կգտնե՞ր արդյոք իր մեջ՝ թքելու ամեն ինչի վրա և տղամարդու պես համարձակ՝ վերադառնալու դեպի իր անձը, դեպի իր նախկին դավանանքը...

Եվ նա տխրեց, շա՞տ տխրեց այն մտքից, որ, ո՛չ, չէր գտնի...

Ու այդ տխրությանն ապավինած, այդ անվտանգ տխրությամբ զրահավորված ու մխիթարված, իրեն լրիվ ապահովագրած, նա խաղաղ ժպիտով մտավ պալատ։

✦✦✦

Արքան իմացավ, որ Ներսեսը սպասում է գահատրահի քնդունարանում և երեխայի պես շփոթվեց։ Հավաքեց սպիտակ պատմուճանի փեշերը և պալատի սյունազարդ ճեմելիքից, որտեղ նա հարցուփորձ էր անում հազարապետ Վարազ Գնունուն՝ տարվա հարկերի մասին, շտապեց դեպի պալատ։ Թեև գիտեր, անշուշտ, որ կաթողիկոսն արդեն Հայաստանում էր և հենց ինքն էր նախարարների մի խումբ ուղարկել, որպեսզի սահմանի վրա, Առյուծ լեռան մոտ դիմավորեին նրան, բայց և այնպես նա հանկարծակիի եկավ։ Մանավանդ, որ Ներսեսը հայտնվել էր առանց շքախմբի, առանց պատշաճ հանդիսավորության։ Ո՞վ է այս քահանայապետը, որ վերադարձել է Կեսարիայից։ Ի՞նչ տեսակ մարդ է այս նորընծա հայոց կաթողիկոսը։ Արդյո՞ք կճանաչի նրան։ Կհիշի՞ Իր հորաքրոջ որդո՛ւն, իր հարազատի՛ն, իր արյունակցի՛ն։ Եվ ինչո՞ւ ինքը չի կարողանում զսպել ոտքերի արագ ընթացքը, չի կարողանում սանձել իր ներքին տագնապը։ Անհամբերությունի՞ց, որ բոպե առաջ ստանա այս հարցերի պատասխանը, թե՞ պարզապես կարոտից, զարմիկին գրկելու, կրծքին սեղմելու բուռն ցանկությունից։ Նա միշտ սիրել է Ներսեսին, թող այդ մեկը լավ իմանա, օղ անի ականջին։ Եթե արքան չլիներ, նա մինչև կյանքի վերջը կմնար սովորական զինվոր ու սենեկապետ, որին պիտի հրամայեին, քշեին աջ ու ձախ, հետը վարվեին այնպես, ինչպես կամենային։ Չէ՞, նա թույլ չէր տա, չէր հանդուրժի այդ անպատվությունը։ Այդ էր պակաս, որ արքայի քթի տակ նրա սիրելի մարդուն նսեմացնեին։ Պարզ չէ՞ միթե, որ ես քեզ մեծագույն պատիվները պիտի տայի, դարձնեի իմ փոխանորդը, նստեցնեի իմ կողքին, ինձ հավասար։ Ի՞նչ կա այստեղ զարմանալու։ Հորաքրոջ որդի։ Եթե իմ տեղը լիներիր, դու էլ նույն կերպ կվարվեիր։ Ասա, կվարվեի՞ր, թե ոչ։ Չէ, չէ, ասա, խնդրո՛ւմ եմ, ասա։ Կվարվեի՞ր, կվարվեի՞ր։ Ես քեզ լավ եմ ճանաչում։ Գիտեմ քո ազնվությունն ու վեհանձնությունը։ Եվ նա հանգստացավ, նրա փոխարեն պատասխանելով։ Ես հավիտյանս երախտապարտ կլինեի քեզ, ինչ էլ որ անեիր, թեկուզ իմ համոզմունքներին

Հակառակ բան, չէի կանգնի քո ճամփին, ոտք չէի մեկնի, որ սայթաքես ու ընկնես։ Կաթողիկոս չի Ներսեսը, ոչ էլ ինքն է արքա, չէ՞ որ այդ բարձրագոչ անուններից բացի կա նաև արյան կապ, մոտիկ ազգակցություն, տեսակի նույնություն։ Եթե նրա մատից արյուն գա, իր սիրտն է մղկտալու։ Հապա էլ ո՞ւմ սիրտը։ Եթե նրա ոտքը փուշ մտնի, իր հոգին է ցավելու։ Հապա էլ ո՞ւմ հոգին։ Իսկ եթե իրեն մի բան պատահի, զարմիկի աչքերից է քունը փախչելու, նա է գիշերցերեկ տանջվելու։ Հիմա, հիմա, Ներսես, մենք մեր կարոտը կառնենք իրարից... Ավելի արագ չեմ կարող քայլել, շունչս կտրվում է... Հիմա, հիմա...

Ընդունարանի դուռը բաց էր, և նա հեռվից տեսավ հորաքրոջ որդու լայն ուսերը։ Կռահեց, որ սև զգեստները լավ էին նստում վրան և շատ էին սազում նրան, և դա բնազդորեն մի մութ ու անբացատրելի անհանգստություն պատճառեց իրեն։ Նա դանդաղեցրեց քայլերը և ոտքերն այնպես զգույշ գցեց միջանցքի գորգապատ հատակին, որ ծպտուն իսկ չլսվի։ Հասավ դռանը և ահա ուր որ է պիտի ներս մտներ, բայց սիրտ չարեց ու արագ ետ դարձավ։ Մի պահ ամբողջ մարմնով հենվեց միջանցքի պատին, շունչը տեղը գցեց, ուժ հավաքեց և ապա, ընդգծված ինքնավստահությամբ, ձեռքերը լայն տարածած, մտավ ընդունարան։

— Ա՜, Վեհափառ, դու վերադարձել ես Կեսարիայից... Ի՞նչ են խոսում մեր մասին... Ինչքան քիչ խոսեն, ինչքան քիչ հիշեն, այնքան լավ... Ի՞նչ նորություն...

— Ամենամեծ նորությունը քո արարմունքն է,— միանգամից պայթեց Ներսեսը։— Սա ի՞նչ անխոհեմություն է։ Սա ի՞նչ մանկամտություն է։ Քո ամեն մի քայլը մի անակնկալ է։ Մի՞թե չգիտես, որ ամբոխի ձեռքը չի կարելի ուժ տալ։

Արքան նոր գլխի ընկավ, որ իրենք ոչ ողջագուրվեցին, ոչ էլ մարդավարի բարևեցին իրար։ Դա բնավ չզարմացրեց նրան, ոչ էլ հուսախաբ արեց։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Արշակավանը պիտի կատաղեցներ այս կանացահանդերձ մարդուն։

Նա բաց արեց զահասրահի երկփեղկ, ոսկեգույն դուռը, թեթևակի գլուխ տվեց կաթողիկոսին և նրան ներս հրավիրեց։

Ընդարձակ գահասրահի պատերին ամրացված էին եզջերուի և վարազի գլուխներ, սրեր, դաշույններ, նետեր, աղեղներ ու տեգեր։ Պատվանդանի վրա դրված էր գահը՝ բարձր թիկնակով, լայն բազուկներով, որոնք վերջանում էին առյուծի գլուխներով, իսկ գահի վրա և ոտքերի առաջ փռված էին հովազի մորթիներ։

Արքան դիտմամբ չնստեց գահին, այլ տեղավորվեց Ներսեսի կողքին, մի ուրիշ բազկաթոռի վրա։

— Մի՞թե այսպես պետք է լիներ մեր առաջին հանդիպումը, Ներսես,— խոր ափսոսանքով ասաց նա, ձեռքը մտերմաբար դնելով զարմիկի ծնկին։

— Այս ի՞նչ քաոս ես ստեղծել երկրում,— նույն վրդովմունքով շարունակեց Ներսեսը, և արքային թվաց, թե ծերունական մարմնի վրա երիտասարդ մարդու գլուխ էր դրված, որովհետև նրա տարիքին չէին սազում ոչ այդ տոնը, ոչ էլ այդ խոսքերը։— Ոտնակոխ ես արել օրենք ու սրբություն... Ջնջել ես տիրոջ ու ծառայի սահմանները... Անիշխանություն է տիրում շորս կողմը... Թույլ ես տվել, որ մարդկանց մութ բնազդներն արթնանան... Արշակավանը լցրել ես տերերից փախած ծառաներով... Ետ վերցրու հրամանդ, քանի հրաբուխը չի ժայթքել... Քանի չի պայթել աղետը...

Արքան վեր կացավ, դանդաղ քայլերով ու մռայլ դեմքով բարձրացավ պատվանդանի վրա, մոտեցավ գահին, մի պահ այդպես անշարժ կանգնեց, ապա հենց որ շրջվեց, դեմքին անմիջապես ժպիտ երևաց, ու նա նստեց իր սովորական տեղը, այցելուից բարձր ու հեռու։

— Ասե՞մ գինի բերեն։ Վաղուց խմած չես լինի։

— Ինչպե՞ս ես համարձակվում, արքա,— շփոթվեց Ներսեսը։

— Դե լավ, մի քաշվիր, մենք ու մենք ենք, Վեհափառ։ Դու միշտ էլ գինու սիրահար ես եղել։ Ուրեմն, զգեստիդ գույնը փոխելով, դո՞ւ էլ փոխվեցիր։

— Ինչպե՞ս է պատվում լեզուդ, արքա՛,— շդիմացավ ու ընդոստ վեր կացավ Ներսեսը։

Լավ է, որ գոնե գավազանը չխփեց գետնին, թե ոչ ավելի

նս կարվեր երիտասարդ դեմքի ու զառամյալ մարմնի հակասությունը։

— Մենք հո լա՞վ ենք ճանաչում իրար, Վեհափառ,— անփույթ շարունակեց արքան, համառորեն չնկատելով Ներսեսի զայրույթը։— Հիշո՞ւմ ես, ինձնից մի օր էիր խնդրում... Մինչև առավոտ... Ես մերժեցի քեզ... Չեմ էլ հիշում, թե ինչի համար էիր խնդրում... Բայց խիղճս տանջում է մինչև հիմա... Տալիս եմ այդ օրը, Վեհափառ... Ի սրտե... Որդիաբար...

— Ես նամակով իմ բողոքը կհայտնեմ կայսրին, և քո բոլոր նախարարները կստորագրեն այդ բողոքի տակ,— սպառնաց գունատված կաթողիկոսը և գավազանը խփեց գետնին։

Արքան վեր թռավ տեղից, նետվեց դեպի կաթողիկոսը, չոքեց նրա առջև, համբուրեց ձեռքը և, աչքերը նրան հառած, նախատինքով շշնջաց.

— Ներսե՞ս...

— Մի ստիպիր նզովել քեզ,— է՛լ ավելի ինքնավստահ դարձավ Ներսեսը, հրճվելով, որ իր սպառնալիքը ազդեց արքայի վրա։— Դու խախտեցիր երկրի բոլոր հիմքերը... Գոնե աստծուց վախեցիր...— Ապա մեղմությամբ և հաղթած մարդու մեծահոգությամբ դիմեց ծնկաչոք արքային.— Վերացրու Արշակավանը... Հաշտվիր նախարարների հետ...

— Միայն մի դեպքում։— Արքան վեր կացավ և ընդգծված բծախնդրությամբ սկսեց մաքրել պատմուճանի փոշին։— Եթե հիշեցնես, թե ինչի համար էիր խնդրում այդ մի օրը։ Այն էլ՝ մինչև առավոտ։

— Գիտե՞ս, թե ով է այսօրվանից քո ամենամեծ հակառակորդը։

— Դո՛ւ,— ժպտաց արքան։

— Եվ դա քեզ չի՞ վախեցնում։

— Շատ։ Շա՛տ է վախեցնում։ —Արքայի խոստովանությունը միանգամայն անկեղծ էր, և դա է՛լ ավելի շփոթեցրեց Ներսեսին։ Արքան ձեռքը դրեց կաթողիկոսի ուսին, հասկացնելով, որ նա պետք է նստի։ Եվ, իրոք, Ներսեսը նստեց։ Ար-

քան անշտապ վերադարձավ իր տեղը ու հանգիստ տեղավորվեց գահի վրա։ Ամեն ինչ՝ ըստ կարգի ու պատշաճի։ Հիմա արդեն կարելի էր գործնական տոնով շարունակել խոսակցությունը ամենայն հայոց կաթողիկոսի հետ։— Ենթադրենք, թե Արշակավանի համար անցար նախարարների կողմը և կովեցիր իմ դեմ։ Պատրաստ եմ ընդունել նույնիսկ, որ դու ինձ կհաղթես։ Իսկ քո ծրագրե՞րը։ Չէ՞ որ ծրագրեր ունես։ Եվ ինչ հանդո՞ւգն, ինչ փայլո՞ւն ծրագրեր։ Դու մտադիր ես ամենուրեք բաց անել դպրոցներ, անկելանոցներ, ուրկանոցներ, աղքատանոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ ու օթևաններ։ Տեսնո՞ւս ես, որքան ուշադիր եմ կարդացել նամակդ և որքան մանրամասն եմ հիշում։ Որովհետև տպավորվել, մեխվել է ուղեղիս մեջ։— Հանկարծ ձայնը տհաճորեն բարակեց, և նա, առանց տրամաբանական անցումի, սկսեց ծղրտալ։— Իսկ ո՞վ է հոգալու այդ բոլոր ծախսերը։ Կարծեմ պետությունը, ե՛ս, այնպես չէ՞։— Հետո, նույնքան անսպասելի, կրկին անցավ գործնական տոնի։— Ես քեզ փող կտամ։ Շատ փող։ Եվ հոգեր։ Իսկ դու, փոխարենը, չես խառնվի Արշակավանի գործերին։

— Գնե՞լ ես ուզում ինձ,— վիրավորվեց Ներսեսը։

— Բայց որքան թա՞նկ գնով, Վեհափառ։

Հեգնանք չկար նրա խոսքի մեջ։ Նա իրոք չհասկացավ, թե ահագին գումար և հողեր ստանալու գեպքում ի՞նչ կար այդտեղ վիրավորական։ Մի՞թե նա չգիտեր, որ եթե կռվի է մտնում, ապա կողմերից մեկը պիտի հաղթի, մյուսը՝ պարտվի։ Հա չե՞ն կարող երկուսն էլ հաղթել կամ երկուսն էլ պարտվել։ Է՛. չեղա՛վ, չեղա՛վ, Վեհափառ, չի կարելի սպիտակ ու փափլիկ ձեռքերով կռվի նետվել։ Սովորիր քերծվել մի քիչ. ցավ զգալ. տղամարդու պես սեղմել ատամները։ Եթե կուզես իմանալ, վիրավորականը հենց այն է, որ դու սկզբից ևեթ վստահ էիր քո հաղթանակին և չէիր սպասում, որ ինքդ ծեծ կուտես։ Որովհետև չէիր հարգում ինձ։

— Դու կարող ես հանգիստ խղճով համաձայնել այս գործարքին,— ոգևորված սկսեց համոզել աղքան. ազնիվ ու բնական վստահությամբ, թե աշխարհում չկա մի բան, որ

ինքը չկարողանա գնել։— Ապա կշռի վրա դիր քո ծրագրերը և Արշակավանը։ Ո՞րն է ավելի կարևոր ու հրատապ։ Քո՞ տեսանկյունից, քո՞։ Պարզ չի՞, որ՝ ծրագրերը։ Լավ, ենթադրենք, թե ինձ հաղթեցիր։ Բայց արժե՞ արդյոք քո ծրագրերը զոհել հանուն այդ հաղթանակի։ Թեկուզև կարևոր հաղթանակի։

— Ես շատ եմ ուզում, որ իրականանան իմ բարեգործությունները,— խեղճացավ Ներսեսը և ճգնեց անպայման բացատրել, նույնիսկ ապացուցել, թե ինչու ինքը համաձայնելուց բացի ուրիշ ոչ մի ելք չունի։— Շատ եմ ուզում, արքա։

— Ըստ որում՝ առաջին անգամ ամբողջ հայոց պատմության մեջ,— նույն ոգևորությամբ սիրտ տվեց նրան արքան, և այդ պահին երկուսն էլ կարծես համախոհներ էին, որոնք մի ընդհանուր գործի էին լծված։— Եվ դու տես, թե որքան կլավանա ժողովրդի վիճակը։ Ուրեմն՝ նույնքան էլ կպակասի դժգոհների թիվը և կթուլանա Արշակավանը։ Նույնիսկ ավելորդ կդառնա։ Տեսնո՞ւմ ես, ես քեզ չեմ զրկում Արշակավանի դեմ կռվելու հնարավորությունից։ Նույնիսկ ինքս եմ քեզ զենք տալիս։ Եվ, առհասարակ, ինչո՞ւ ես այդքան անհանգստանում, չէ՞ որ նախարարները ձեռքները ծալած չեն նստի և ինչ որ հարկն է՝ կանեն Արշակավանի դեմ։— Ձայնը աննկատելիորեն խստացավ ու մետաղի երանգ մտավ մեջը։— Բայց առանց քո անմիջական մասնակցության, Վեհափառ։ Առանց քեզ։

— Ես իրավունք չունեմ համաձայնելու այդ գործարքին,— հուսահատ բացատրեց Ներսեսը, այսինքն, ես պատրաստ էր համաձայնելու, միայն թե՝ հասկանային իրեն, ըմբռնեին իր վիճակի անելանելիությունը։— Եվ ընդհանրապես որևէ գործարքի։

— Բայց չէ՞ որ, Արշակավանը կառուցելով, ես էլ եմ քո նման հոգում ժողովրդի մասին,— անարդարության դեմ առնելով, մի պահ նեզացավ արքան։— Ճիշտ է, թե՛մ տեսանկյունից, բայց հոգում եմ, չէ՞, էլ ինչո՞ւ ենք վիճում, Վեհափառ, ինչո՞ւ ենք թշնամանում։

— Ես ու դու պարտավոր ենք ամբոխի մասին հոգալու, բայց ուժ տալ ձեռքին՝ երբեք։

— Համաձայնիր, համաձայնիր, Վեհափառ, եթե ուզում ես օգնել ժողովրդին,— վրա տվեց արքան, զգալով իր մոտալուտ հաղթանակը։ Միայն թե աստված ուժ տա, որ վերջին հարվածները լինեն դիպուկ ու ճշմարիտ, որովհետև միշտ չէ, որ դիվանագիտությունը պետք է ստի վրա հիմնվի։— Մինչև ե՞րբ պիտի մեր ժողովուրդը խավարի մեջ մնա, Վեհափառ։ Մինչև ե՞րբ Պարույր Հայկազնները ասպարեզ չպիտի գտնեն իրենց հողի վրա և օտար երկրներ մեկնեն։ Մտածե՞լ ես երբևիցե, թե ինչու ոչ ոք այս երկրում մեծություն չի դառնում։ Քթներիս տակ ապրում են, իսկ մենք չենք էլ նկատում, բանի տեղ էլ չենք դնում։ Բավական է օտար տեղ ընկնեն ու համբավի տեր դառնան, որ մենք հպարտանանք նրանցով, կուրծք ծեծենք, երդվենք նրանց անուններով։ Մինչդեռ այդ մարդկանց պահել, պահե՞լ պիտի կարողանալ։

Արքան գոհ էր իր ճառից։ Ոչ միայն գոհ էր, այլև համաձայն էր իր մտքերին։ Եվ խանդավառությամբ էր լսում իրենն։ Նա չէր կարող չխոստովանել, որ թեև այս մարդը հենց առաջին իսկ քայլից հակադրվեց արքային, բայց խելացի էր ու հեռատես։ Ավելի վատ արքայի համար։ Ներսեսը գիտեր, որ քրիստոնեությունը ոչ հարկադրանքով, ոչ էլ դատարկ քարոզներով չես ամրապնդի ժողովրդի մեջ։ Հարկավոր էր ժողովրդի գիտակցության մեջ ներարկել Քրիստոսի հավատը, ժողովրդականացնել նոր կրոնը։ Իսկ ամեն մի նոր կրոն իր առավելության շոշափելի ապացույցն է պահանջում, թեկուզ՝ ժամանակավոր, թեկուզ՝ սկզբի համար։ Տվյալ դեպքում՝ ամենահարմար ապացույցը բարեգործությունն էր։

— Եթե այդքան պաշտպանում ես իմ ծրագրերը, ինչո՞ւ ինքդ չիրագործեցիր դրանք,— տեղին ու ժամանակին հարցրեց Ներսեսը։

— Որովհետև ես չեմ կարող հենց այնպես մարդասիրություն շաղ տալ չորս կողմը, եթե դա չի կապվում երկրի մեծ շահերի հետ,— ժպտաց արքան, գնահատելով զարմիկի հարցը և ափսոսալով, որ Մերուժանի կողքին՝ ևս մի արժանավոր հակառակորդ ավելացավ։— Ես էլ, իմ հերթին, նոր

հավատ պիտի հաստատեմ, Ներսես... Արշակավա՛նը... Քո հավատը՝ եկեղեցու հանդեպ, իմը՝ երկրի։

— Նեղն ես գցում ինձ, արքա։ Դու գիտես, թե որքան բուռն է իմ ցանկությունը, որ մարդասիրություն իշխե այս երկրում, և օգտվում ես դրանից։

— Մի համոզիր, Վեհափառ, մի համոզիր, որ ստիպված ես զիջում ինձ։ Դու մեծ նպատակը, Արշակավանի դեմ կռվելը, գոհում ես հանուն առավել մեծ նպատակի։ Քո ծրագրերի՛։

Արքան ծափ տվեց, և ներս մտավ սպասավորը, սկուտեղի վրա մի բաժակ գինի և մի բաժակ օշարակ բերելով։ «Ինձ էլ օշարակ»,— պահանջեց արքան՝ որպես հաշտության ու համաձայնության ցույց։ Նա մինչև վերջ զզվանքով խմեց քաղցր օշարակը, մտքում հայհոյելով դիվանագիտության ստորությունը, իսկ Ներսեսը ձեռք չտվեց բաժակին։

— Ես խորապես շնորհակալ եմ, որ դու կատարեցիր իմ առաջադրանքը,— երախտագիտությամբ ասաց արքան, դրկեց զարմիկի ուսը և գորովանքով սեղմեց կրծքին։ —Հաստատ գիտեմ, որ իմ հրովարտակը ոչ մի ազդեցություն չէր ունենա Եվսեբիոսի վրա, եթե դու ճարտար լեզու թափած չլինեիր։

— Իրավացի ես,— խայթեց Ներսեսը։— Քո հրովարտակը բանի տեղ դնող չկար։ Ես ինքս գլուխ բերեցի այդ գործը։ Միայն ինքս։

— Սա այնքան մեծ հարց է, որ բնավ կարևոր չէ, թե ում ջանքերով է լուծվել,— պարզ սրտով առարկեց արքան։— Եվ ես համառորեն շնորհակալություն պիտի հայտնեմ քեզ։

— Պարտավոր ես հայտնել։ Եվ ոչ թե մեկ, այլ տասն անգամ։ Եվ ոչ թե տասը, այլ հարյուր անգամ։— Եվ այդ նույն բանը կրկնելով, նա հետզհետե ավելի ջղայնացավ ու կորցրեց իրեն։— Եվ ոչ թե հարյուր, այլ հազար անգամ։

— Բայց մենք. ես ու դու, արքան ու կաթողիկոսը, էլ ի՞նչ ասեմ, ինչպե՞ս բացատրեմ, մենք միասին, մեր համատեղ ջանքերով, անկախ դարձրինք հայ եկեղեցին,— իր հերթին բորբոքվեց արքան։— Ո՞վ պետք է դրանում ավելի շահագրգռված լինի, է՞ս, թե՞ դու։

— Դո՛ւ,— ատելությամբ պատասխանեց Ներսեսը։

Բանն այն էր, որ արքան, Ներսեսին Կեսարիա ուղարկելիս, մի հրովարտակ էր տվել նրան, ուղղված կաթողիկոսների կաթողիկոս երանելի Եվսեբիոսին։ Այդ հրովարտակում նա պահանջում էր, որ Ներսեսը ձեռնադրվի ոչ միայն հայոց եպիսկոպոսապետ, այլև պատրիարք ինքնագլուխ։ Հույն եկեղեցին արևելյան քրիստոնեա եկեղեցիների համար եպիսկոպոսից բարձր միայն մի աստիճան էր ճանաչում՝ կաթողիկոս կամ եպիսկոպոսապետ, որը հավասարվում էր հույների մետրոպոլիտին կամ արքեպիսկոպոսին, բայց ոչ պատրիարքին, որ ամենաբարձր աստիճանն էր դիտվում եկեղեցական կարգի մեջ։ Եվ հենց դրա համար էլ, պատրիարք չունեցող հայ եկեղեցին մինչև հիմա ենթակա էր եղել հույն եկեղեցուն, բայց այսուհետև դառնում էր անկախ և ինքնուրույն։

— Ես չարաչար սխալվեցի, և իմ սխալը հետևորդներիցս ոչ մեկը չի ների ինձ,— Ներսեսը չարությամբ նայեց արքային, իսկ արքան չկարողացավ զսպել ժպիտը, որի մեջ չթաքցրած լիքը նենգություն կար։— Եթե սրանից հետո դու դժգոհ լինես ինձնից, կարող ես հեշտությամբ ինձ կարգալույծ անել։ Առանց հույն եկեղեցու համաձայնության։

— Եվ, ուրեմն, հայոց եկեղեցու կախումը հույն եկեղեցուց ավելի նախընտրելի է, քան նրա անկախությունը,— լրացրեց արքան։

— Քան թե նրա կախումը թագավորի իշխանությունից,— ուղղեց Ներսեսը։

Նա վերցրեց գավազանը և լուռ քայլեց դեպի դուռը։ Դռան մոտ շրջվեց, երկար, շատ երկար նայեց արքային, և արքան, ի պատիվ իրեն, չփախցրեց աչքերը։

— Համենայն դեպս, ես գնահատում եմ քո խորամանկությունը։ Շա՜տ նենգ խորամանկությունը։— Եվ Ներսեսը անսպասելիորեն ծիծաղեց։ Մի տեսակ բաց թողեց իրեն և ազատագրվեց իր սանձերից։ Ծիծաղեց ոչ թե որպես կաթողիկոս, այլ որպես զարմիկ։ Եվ քանի որ արքան կարոտել էր իր զարմիկին ու փնտրում էր նրան, նա ևս ծիծաղեց։ Ու երկուսով լիցքաթափվեցին։— Քո անասված ծրագիրն իրա-

կանացնելու, Արշակավանը կառուցելու համար դու պատրաստ ես նույնիսկ աստվածահաճ գործ կատարել։ Տեր ընդ քեզ։

Ի՞նչ էր մնում անելու պարտված, հուսալքված ու թեաթափ հայոց կաթողիկոսին։ Եթե առաջ լիներ, այն ազատ ու օրհնյալ օրերը, նա գինու մեջ կլողար վշտից, կսուզվեր մինչև կարասի հատակը, կդառնար գինի մղելու պարզուտ, դմբիչ-գավազան, որով հարում են գինին՝ բարվոքելու համար, կամ ամբողջ հոգով ու էությամբ կփարվեր, կպլվեր դմբիչին՝ բուսոց խրձիկի պես, որն իր համն է տալու ջահել ու խելառ գինուն, և իր տառապանքներն իրենց դառը համը կհաղորդեին աստվածային հեղուկին, ստիպելով նրան մի օրում հասնել, դառնալ հին ու ընտիր։

Հետո կպառկեր վարձակի հետ, ամենատգեղ վարձակի, ամենատարիքո՛տ, որն իր թառամած, կախ ընկած ստինքների վրեժը կհաներ այս ջահել ու նվնվան լակոտից, որպես կարապի երգ, որպես եռուն անցյալի հրաժեշտ, իր ուժերի վերջին մնացորդներն ի մի հավաքելով ու մինչև վերջ ծախսելով, որովհետև հաստատ գիտեր, որ այսուհետև ամռան գիշերները լինելու են տաք, իսկ ձմռան գիշերները՝ ցուրտ։ Եվ չի խախտվելու ոչ մի տրամաբանություն։ Ու այդ գերհասուն էգի հետ պառկելով, նրա հյութերն անգթորեն և դաժանաբար քամելով, նա մոռացության կմատներ իր ցավն ու տանջանքը, որովհետև՝ ցավ ու տանջանք կպարգևեր մեկ ուրիշի։

Այն ազատ ու օրհնյալ օրերը...

Իսկ հիմա նա մի մխիթարություն ունի միայն։ Վանքի խցերից մեկում ապրում է իր հորեղբորորդին՝ Վրեկը, իր գանձը, իր գյուտը, իր հայտնագործությունը, որը նրա համար թանկ է նույնքան, որքան իր ծնունդը, իր Սահակ որդին, վաղաժամ մեռած Սանդուխտ կնոջ ու իր պտուղը։

Նա դուրս եկավ Տրդատա գոնից, նստեց չորս կողմից փակ երկձի կառքը, որի մեջ շքեղ ու կակուղ մի բազմոց կար՝ զրոշապատված նվարտաններով՝ փեղկերի բաժանված ճոխ

վարագույրներով։ Վանքը շատ մոտ էր պալատին, և նա շուտ տեղ հասավ։ Կառքից գցեց իրեն, շտապ մտավ վանք և անհամբեր պահանջեց, որ իրեն առաջնորդեն Վրիկի խուցը։

Խցի առջև երկու վիթխարահասակ աբեղա էին կանգնած, որոնք հսկում էին մուտքը։

Ներսեսը մտավ խուցը, ապշած կանգնեց պատի տակ և հափշտակված նայեց իր հորեղբորորդուն։

Վրիկը քարե կիսամութ խցում, քարե նստարանին նըստած, հունարեն բառեր էր գրում մոմատախտակի վրա և այնքան կլանված էր իր գործով, այնքան կենտրոնացած ու խորասուզված էր իր պարտականության մեջ, որ չնկատեց ամենայն հայոց սրբին։

Ներսեսը խաղաղ ու բարի ժպտաց։

Մի ակնթարթում նրա բոլոր հոգսերն ու ցավերը դուրս մղվեցին մարմնից, և մի չտեսնված հանգստություն հոսեց երակների միջով, թեթևացրեց նրա հոգին։

Նա լրիվ մխիթարված էր։ Նրա տառապանքը լրիվ փոխհատուցված էր։ Եվ նա երկնքից մինչև գետին երախտապարտ էր իր զարմիկին։

Վրիկը գլուխը բարձրացրեց, նկատեց կաթողիկոսին, բայց առանձնապես վերաբերմունք չցուցաբերեց։ Նորից կախեց գլուխը, որովհետև դեռ մի բառ էլ էր մնում նախադասության ավարտին։ Հետո կրկին նայեց Ներսեսին և մի ծուռ ժպիտ երևաց հոգնած ու սմքած դեմքին։

Ներսեսը մոտեցավ նրան, աչքերը հառեց մոմատախտակին ու երանությամբ կարդաց հունարեն բառերը. «Թագուհին Հռոմ թագավորի բանին»։ Դա այն արձանագրությունն էր, որ Հռոմում գրված էր Պրոերեսիոսի պղնձե արձանի վրա։ Բանամբցության մեջ նա հաղթել էր հույն հակառակորդներին, և Կոստանդ կայսրը, անունը փոխած հայի պատվին, արձան էր կանգնեցրել հեռավոր Հռոմում։

— Երջանի՞կ ես, Վրիկ,— սրտի դողով շշնջաց Ներսեսը։

Վրիկը, դատապարտյալի ժպիտը դեմքին, գլխով արեց։

— Լավ է, չէ՞, գրել-կարդալ իմանալը։

Վրիկը գարձյալ գլխով արեց, այս անգամ՝ ավելի ջանասիրությամբ։

— Միայն հունարե՞ն ես գրում։ Թե՞ նաև ասորերեն,— քնքշությամբ ու խանդաղատանքով հարցրեց Ներսեսը։

— Ասորերեն էլ,— շշուկով պատասխանեց Վրիկը, կարծես մի մեծ գաղտնիք վստահելով նրան։

— Իսկ ուզո՞ւմ ես ամուսնանալ... Ընտանիք կազմել... Տուն-տեղ ունենալ... Կին, երեխաներ...— շունչը կտրած, հարցրեց Ներսեսը, անհամբեր պատասխանի սպասելով։

Վրիկը լուռ էր։ Դեմքի վրա մի քանի մկան խաղացին։ Անցյալի ինչ-որ մոռացված բան էր ուզում արթնանալ նրա մեջ, աչքերը փորձեցին նախկին փայլն ստանալ, կոկորդի մեջ ձայն էր հավաքվում, որն ուր որ է պիտի դուրս հորդեր, պիտի ժայթքեր, սրբեր, տաներ ամեն ինչ, հունարենն ու ասորերենը, խուցն ու վանքը, Պարույր Հայկազնին ու Ներսես կաթողիկոսին, դռան մոտ կանգնած երկու վիթխարահասակ աբեղաներին... Այս ամբողջ երջանկությունը... Բայց այդ թաքուն ուժն այնքան խորն էր, այնքան հեռու և այնքան մոռացված, որ դեռ չվերածնված, դեռ չարթնացած, խեղդվեց, համրացավ։

Եվ նա գլխով արեց։ Ուզո՛ւմ էր ամուսնանալ։ Ուզո՛ւմ էր ընտանիք կազմել։ Ուզո՛ւմ էր տուն-տեղ ունենալ։ Կին, երեխաներ...

— Լիքը, լիքը երեխաներ,— անկիրք փսփսաց նա։

Ու անձայն քրքջաց։

Գլուխ վեցերորդ

— Ճաշել եմ ուզում, Հայր Մարդպետ։

Ոչ էլ ուզում էր։ Պարղասպես գժվում էր ուրախությունից, հրճվում իր հաղթանակով։ Ինչո՞վ է սա տարբերվում այն ճակատամարտերից, որ Վասակ սպարապետն է ղեկավարում թշնամու գերազանցող բանակների դեմ։ Համենայն դեպս՝ ոչ իր նշանակությամբ։ Արշակավանի գործերից կաթողիկոսին մեկուսացնելը ուղիղ կեսն է հաջողության։ Բայց արի ու տես,

որ Վասակի հաղթանակները տեսանելի են ու շահեկան, ավելի գեղեցիկ են և տպավորիչ, իսկ արքայինը՝ սևագործ հաղթանակներ են, չորս պատերի մեջ պարփակված, հրապարակման ոչ ենթակա։ Ի վերջո, եթե շիտակ խոսենք, Վասակն ավելի ժողովրդականություն է վայելում, քան արքան։ Եվ ընդհանրապես սպարապետների աստղն ավելի է բռնում, քան արքաներինը։ Ես չեմ ժխտում ոչ քո տաղանդը, ոչ խիզախությունը, ոչ էլ նվիրվածությունը։ Բայց, ինչ ուզում ես ասա, քո գործի մեջ դերասանության պես մի բան կա, թատերական մի հմայք, գույնզգույն դրոշներ, պղնձե փողերի գոտեպնդող կանչ, նժույգների դոփյուն ու խրխինջ, արևի տակ փայլփլող սրեր ու սաղավարտներ... Ռազմի դաշտում մեռնելու մեջ անգամ ավելի վեհ ու առնական մի խորհուրդ կա, քան պալատի սյուներից մեկի տակ՝ անկյունից նետահարված կամ թունավորված։ Էլ չեմ ասում՝ հաղթանակից հետո... Ո՞վ է իմ ոտքերի տակ գորգեր փռել, ո՞վ է ծաղիկներ նետել, ո՞վ է ինձ ինքնամոռաց կեցցե՛ գոչել։ Ճիշտ է, փռել են, նետել են, գոչել են, բայց՝ իմ պաշտոնյաների կազմակերպելուց հետո, ո՛չ ինքնաբուխ, ո՛չ տարերային։ Մի խոսքով, քեզ ավելի է ծափ հասնում, քան ինձ։ Տոնը քեզ հետ է միշտ, իսկ առօրյան՝ ինձ։ Գիտե՞ս ինչն է ինձ մխիթարում... Այն, որ գուցե դու էլ ինձ ես նախանձում... Եթե ուզում ես, որ մեր այսքան տարվա սերը անխախտ մնա, նախանձիր ինձ, գոնե մի քիչ նախանձիր... Եղբայրաբար խնդրում եմ քեզ... Որպեսզի ես կարողանամ այսուհետև ևս սիրել քեզ...

— Հայր Մարդպետ, հրամայիր, թող բաց անեն արքունի մառանները և առատ մթերք ուղարկեն Արշակավան։

Հայր Մարդպետը հազիվ էր բերանը բացել և դեռ հայտնի էլ չէր՝ զգուշորեն առարկելո՞ւ էր, թե՞ գոհունակություն էր հայտնելու, երբ արքան բարկացած գոռաց.

— Ասում եմ՝ առատ մթերք ուղարկեն Արշակավան...

Միայն թե պարտվելու զգացողությունը ծանր կնստի Ներսեսի ուսերին։ Հանգիստ չի տա նրան։ Վրեժխնդրության կմղի։ Իսկ այդպիսի վրեժից վախենալ է պետք։ Եվ ընդհանրապես ամեն հաղթանակից հետո վախենալ է պետք։ Բայց

Ներսեսն այս անգամ գուցե ների նրան, հը՞։ Աստված իմ, ինչ լավ կլիներ, եթե ներեր։ Ինչ երջանիկ ու ապահով կզգար իրեն արքան։ Գուցե փողը հանգստացնի նրան։ Հապա իր նվիրելիք ընդարձակ հողե՞րը։ Արքայական գանձարանը վնաս է կրելու, անհատուցելի վնաս։ Անչափ թանկ է նստելու այս հաղթանակը։ Եվ մի՞թե ես քեզ հաղթեցի, Ներսես։ Վիճելի է, շատ է վիճելի։ Չէ՞ որ ես ուժեղացնում, ամրապնդում եմ քո իշխանությունը, և օրերից մի օր քո հեղինակությունն այնքան կմեծանա, որ արդեն կսկսի վտանգ սպառնալ ինձ։ Տեսնո՞ւմ ես, երկուսս էլ խաբած ենք ու խաբված։ Արի քարը փեշիցդ թափիր, և թող ոչ ոքի համարվի այս խաղը։

— Հայր Մարդպետ, եփրեմ ազատին ասա, որ սպասի ինձ... Ես անպայման ազատ ժամանակ կգտնեմ և ճատրակ կխաղամ նրա հետ... Ես միայն նրա հետ եմ կարողանում իսկապես հանգստանալ...

Ապրում ես, ապրում, մտածեց արքան, ու չես իմանում, թե ինչի համար։ Հետո հանկարծ հայտնագործում ես գոյությանդ իմաստը։ Եվ տա աստված, որ այդ իմաստը վերածվի ոչ թե բառերի, այլ որոշակի մարմին ստանա, միս ու արյուն դառնա։ Եվ ծնվի Արշակավանը։ Բախտից հալածվածների միջոցով նոր ուժ և նեցուկ ստեղծելու գաղափարը։ Այդ ժամանակ գուցեև պարզվի, որ կյանքիդ ամեն մի քայլը, առանց իմանալու, առանց գիտակցելու, նվիրել ես Արշակավանին, քո գոյության իմաստին, քո մոլությանը, քո սևեռուն գաղափարին։ Ինչ-որ հարցում, ասենք, զիջել ես մեկին և այսօր կարող ես վստահությամբ պնդել, որ Արշակավանի համար ես շեղել։ Երկու նախարար վիճել են իրար հետ, և, դիցուք, դու անցել ես երկրորդի կողմը, էլի՝ Արշակավանի համար ես շեղել։ Երկու նախարար վիճել են իրար հետ, և դիցուք դու անցել ես երկրորդի կողմը, էլի՝ Արշակավանի համար ես անցել։ Այդ բոլոր մեծ ու փոքր անցքերը, ժրաջան մեղվի պես, հյուսել ես իրար, համբերությամբ ի մի հավաքել, դիզել, բայց ոչ թե գումարել ես միմյանց, այլ համադրել, ոչ թե ավելացրել ես մեկը մյուսին, այլ դասակարգել, ու բավական է, որ ընդհանուր սղակից հանես թե-

կուզ չնչին թվացող մի դեպք, և Արշակավանը չի լինի, որ ընդհանուր շղթայի մեջ խախտես որևէ հաջորդականություն, և Արշակավանը չի լինի, որ այդ կապի մեջ քանդես որևէ համադրություն, և չի լինի, հասկացիր, չի լինի Արշակավանը։ Ուրեմն... Ա՜յ քեզ բան... Ուրեմն, ես ճիշտ եմ ապրել... Մտքովս էլ չէր անցնի... Իհա՜րկե, ճիշտ եմ ապրել, քանի որ այդ հազար ու մի բարդ հաշիվները այսօր եկել ու ինձ հասցրել են մինչև Արշակավան։ Ինչ-ինչ, բայց այս մեկը անակնկալ հայտնություն էր։ Մի հայտնություն, որից կարող ես միայն ժպտալ մի հիմար ժպիտով, անհարմար զգալ ինքդ քեզնից և այս տարիքիդ, այս դիրքիդ ու կոչումիդ, կույսի պես շառագունել, որովհետև հիմա ինչ-որ մեկը անպատկառությամբ նայում է ուղիղ աչքերիդ և անամոթաբար գովեստներ շռայլում քո հասցեին, երբ ոչ նա է հավատում իր խոսքին, ոչ էլ դու։ Հետաքրքիր է, համենայն դեպս։ Պարզվում է, որ ճիշտ ես ապրել, տասնվեցերորդ Արշակունի։ Ճիշտ ես ապրել ու չես իմացել։ Մեկ է, գլուխս չի մտնում։ Ով-ով, բայց ես ինքս հո լա՞վ գիտեմ, որ եթե հարկ է եղել խաբելու, խաբել եմ, եթե պետք էր անազնիվ բան անել, արել եմ, եթե անհրաժեշտ էր դաժան լինել, եղել եմ, եթե անխուսափելի էր սուտ երդում տալը, տվել եմ... Ինչ ասես, որ չեմ արել... Նա պատրաստ էր հնարավորին չափ մեծացնելու իր մեղքերը, խոստովանելու այնպիսի բաներ, որ մինչև հիմա խնամքով թաքցրել էր իրենից, նույնիսկ հնարելու, միայն թե շատ լինեին մեղքերը, խոշոր, ահավոր, աններելի... Դրանք հիմա արժեք ունեին, փոխել էին իրենց նախկին էությունը, հպարտության առարկա դարձել։ Իսկ դու... Դո՜ւ, դո՜ւ, ամենայն հայոց կաթողիկոս... Ինձ հո չե՞ս խաբի, քեզ հո չե՞ս խաբի, որ դժբախտ ես նոր հանդերձներիդ մեջ, որ անիծում ես այն օրը, երբ սուրդ խլեցին քո ձեռքից, բազուկներիդ ուժը կապանքի տակ դրին, անցյալդ այրեցին, վառեցին զգեստներիդ հետ։ Դո՜ւ, որ ամբողջ կյանքդ ազնիվ ես եղել, շիտակ, հավատարիմ, խիղախ... Նա հոժարակամ ավելացրեց նրա բարեմասնությունները, նույնիսկ հնարեց, միայն թե շատ լինեին զարմիկի առաքինությունները, խոշոր, անհատնում, անհաշվելի... Եվ դու,

ուրեմն, սխալ ես ապրել... Եթե հասել ես այս օրին, էլ ի՞նչ կասկած, իհա՞րկե սխալ ես ապրել։ Որովհետև գոյությանդ ամեն մի քայլը նվիրել ես այս օրվան, որովհետև կյանքիդ մեծ ու փոքր դեպքերը այնպես են դասավորվել, այնպես են հաջորդվել, որ շղթա առ շղթա, օղակ առ օղակ քեզ բերել, հասցրել են քահանայապետության։ Դե արի ու գլուխ հանիր, թանկագին զարմիկ։ Ես իմ սխալներով ճիշտ եմ ապրել, գտել եմ իմ Արշակավանը, կյանքիս իմաստը, իսկ դու, առանց սխալների, ճիշտ չես ապրել ու դարձել կաթողիկոս, ավելին՝ ինքնագլուխ պատրիարք, որի սանձերը արքայի ձեռքին են։ Ինչ խոսք, որ ես անսահման ուրախ եմ այս անսպասելի շրջադարձի համար, բայց և այնպես չեմ կարող, թեկուզ քեզ հետ միասին, չբացականչել. ա՜յ քեզ աշխարհ, ա՜յ քեզ առեղծված...

— Միայն թե արյուն չթափվի, Հայր Մարդպետ,— հանկարծ խոժոռվեց ու անհանգստացավ արքան։— Իսկ Արշակավանն առանց արյան չես կառուցի։

— Գիտեմ, արքա, գիտեմ,— հառաչեց Հայր Մարդպետը։ — Ես էլ հենց այն՝ասին եմ մտածում, թե ինչպես խուսափենք արյունից։— Նա մի պահ լռեց, որպեսզի իր հետագա խոսքերը տեղ հասնեն ու տպավորվեն արքայի ուղեղում։— Դրա համար մի քանի հոգու գլուխ է պետք, արքա։

— Մի քանի հոգո՞ւ։ Շատ է մի քանի հոգին։ Տանել չեմ կարող անվանական սպանություն։ Իսկ հազարների արյունը անուն չունի։

— Մարդասեր եղիր, արքա, խղճի մտոք գործիր։ Ավելի լավ է մի քանի հոգու զոհել, որպեսզի հազարավորների կյանքը փրկվի։— Եվ քանի որ արքան տարված էր իր հակասական մտքերով, Հայր Մարդպետը կարող էր ազատ քրքջալ։— Բացի այդ, հետաքրքիր է, երբ սպանությունն անուն ունի։ Մի մոռացիր, որ ես զինվոր չեմ, արքա։ Ես պալատական եմ։

Արքան սովոր չէր մեծ և արտակարգ ուրախությունների, չէր հավատում դրանց իսկությանը և դրա համար էլ թույլ չէր տալիս իրեն՝ մինչև վերջ հանձնվելու երջանիկ ու հարբեցնող տրամադրությանը։ Ինքնապաշտպանությունը նրան

մղում էր վերահաս ուրախությունը մթագնելու իր առօրյա հոգսերով ու ցավերով։

— Բայց դու այնպես ես խոսում, որ եթե կողմնակի մարդ լիներ, կմտածեր, թե առնվազն մարդասպանների հետ գործ ունի,— բարեհոգի ժպտաց արքան։— Ասա, ասա, մի քաշվիր։

— Բայց մենք ոչ քո, ոչ էլ իմ օգտին էինք խոսում, արքա։

— Ուզում ես ասել՝ Արշակավանի՞։ Միավորված հայրենիքի՞։ Կլինի՞, Հայր Մարդպետ, ես քեզ խոստանում եմ,— հանդիսավորությամբ հայտարարեց նա, կարծես դեմը մի ամբողջ բազմություն հավաքված լիներ։— Հազարավոր մարդիկ են փախել Արշակավան։ Նույնիսկ իմ ծառաներից շատերը...— հրճվանքով շեշտեց նա։— Ինձնից, ինձնի՞ց են փախել... Եվ իմ նախկին թշնամիները հիմա դաշնակից են ինձ... Պատկերացնում եմ նախարարների թթված մռութները... Ո՞նց են ինձ հայհոյում... Ո՞նց են ինձ անիծում... «Այդ ամբարտավան Արշակունուն սանձել է պետք»... Լսեցի՞ր Արծրունյաց իշխանի ձայնը... «Այդ սև և մազոտ թագավորին ես ծնկի կբերեմ»... Ճանաչեցի՞ր Կամսարականի ձայնը...

— Լսեցի և ճանաչեցի, արքա,— անվրդով պատասխանեց Հայր Մարդպետը։— Բայց դու շատ հարգալիր արտահայտվեցիր քո մասին։ Հավատացնում եմ, որ նրանց հայհոյանքն ավելի թունդ և ավելի սրամիտ կլինի։

— Ճաշել եմ ուզում, Հայր Մարդպետ,— ոգևորված կրկնեց արքան, այսինքն, թող իմ բարձր տրամադրությունը օրենք լինի ամբողջ պալատի, ամբողջ մայրաքաղաքի և ամբողջ երկրի համար։— Հրամայիր, թող բաց անեն արքունի մառանները և առատ մթերք ուղարկեն Արշակավան։ Ու եփրեմ ազատին էլ ասա, որ սպասի ինձ։ Ես ժամանակ կկորզեմ և անպայման ճատրակ կխաղամ իմ մանկության ընկերոջ հետ։

— Ինչո՞ւ էր իշխան Գնելն ապրում Այրարատում, արքա,— պարզ հետաքրքրասիրությամբ հարցրեց Հայր Մարդպետը, կարծես ինչ-որ բան հիշելով, որը հենց նոր, այ հենց հիմա, այս վայրկյանին ծնվեց նրա գլխում։ Իսկապես՝ ինչո՞ւ։— Մի՞թե նրան հայտնի չէր, որ արքայազուն իշխաններից

Այրարատում իրավունք ունի ապրելու միայն թագաժառանգը։

— Ուրեմն, Գնելն է,— սփրթնեց արքան Մարդպետի դաժան ու անակնկալ անցումից։— Ի՞նչ ես ուզում, Հայր Մարդպետ։

— Ինչո՞ւ քո հայրը Գնելին տվեց իր ամբողջ ունեցվածքը, գյուղերն ու դաստակերտները և հատկապես այն բանից հետո, երբ դու Գնելին քշեցիր Այրարատից,— էլ ավելի հանգիստ շարունակեց Հայր Մարդպետը և դարձյալ այնպիսի անշահախնդիր տոնով, որ կարող էր միայն նույն հարցն առաջ բերել՝ իսկապե՛ս, ինչո՞ւ։

— Գուցե իմ հայրը իր Տրդատ որդուն ավելի՞ էր սիրում, քան ինձ,— փորձեց պաշտպանվել արքան, նախընտրելով մարդկային սովորական բացատրությունը։ Սակայն բացատրության այդ ձևը չբավարարեց նրան։— Մտքի՛նդ ասա։— Հետո կտրուկ բարձրացրեց ձեռքը և չթողեց խոսել։ Ուզում էր էլի պաշտպանվել։ Թող Մերուժանի՛ն աչքը խոթեն, Կամսարականի՛ն, բդեշխների՛ն, թեկո՛ւզ Վասակին (աստված մի արասցե), բայց ո՛չ հորը, ո՛չ եղբոր որդուն, ո՛չ Ներսեսին։— Ես Գնելին հրամայեցի հեռանալ Այրարատից։ Եվ իմ հոր անեծքին արժանացա։ Հայրս ու եղբայրս այդ օրվանից թշնամացան ինձ հետ։ Ի՞նչ կա այստեղ անբնական։ Ես էլ նույն կերպ կվարվեի։— Չէ, այս մեկնաբանությունն էլ նրան թերի թվաց։ Շատ էր մարդկային։ Շատ էր հարմար։ Շատ հասկանալի էր ու տեսանելի։ Եվ հենց սրանք էին դրա թուլությունը։— Մտքի՛նդ ասա, մտքի՛նդ։

— Կայսրը պատանդ Գնելին հյուպատոսի կոչում տվեց և ուղարկեց Հայաստան,— Հայր Մարդպետն առանց կրքի արձանագրեց փաստը և աղնիվ մտահոգությամբ լարեց հիշողությունը, թե էլ ի՞նչ կարող է այսպես պատահաբար մտաբերել։

— Ինչո՞ւ այսքան անժամանակ խոսք բացեցիր, Հայր Մարդպետ,— արքան թշնամաբար նայեց Հայր Մարդպետին, քաջ իմանալով, որ այս մարդը չի խաբի, չի համարձակվի։ Ոչ ոք չի հանդգնի խաբել իրեն։ Եվ նա հիմա ավելի շատ վախենում էր իր ուժից, հեղինակությունից, իշխանու-

թյան անսահմանափակությունից, որոնք երբեք կասկածի տեղ չէին թողնում։— Հետո՞։

— Ինչո՞ւ կայսրը, բացի հյուպատոսի կոչումից, նրան տվեց նաև մեծ գանձեր և ահագին փող...

— Իմ դե՞մ ուղարկեց,— սկսեց բութ մատի եղունգը կրծել արքան։— Ինչո՞ւ։

— Այո։ Դու մերժեցիր կատարել կայսրի հրահանգը և նրան զորք չտվիր պարսիկների դեմ կռվելու համար։

— Ինչո՞ւ ես հիշեցնում այդ հեռավոր անցքերը, Հայր Մարդպետ,— զայրացավ արքան, որովհետև արդարանալու պահանջ էր զգում արդեն։— Ի՞նչ գուժ ես ուզում հաղորդել ինձ։

— Դու զանազան կերուխումների ժամանակ բազմիցս հոխորտացիր, թե Աքիլլեսից էլ ավելի քաջ ես ու արի։ Եվ թքել ես կայսրի վրա։

— Հոխորտացե՛լ եմ,— չդիմացավ ու գոռաց արքան։— Էլ ի՞նչ տանտեր, որ իր տանն էլ չհոխորտա։

— Բայց կայսրը, քեզ պատժելու համար, սպանեց իր մոտ պատանդ մնացած Տրդատ եղբորդ, Գնելի հորը։

— Հետո՞։

— Դու կներեի՞ր, արքա,— մեղմ հարցրեց Մարդպետը։ Այնքան մեղմ, որ արքան ցնցվեց։

— Բայց ես անուղղակի եմ նրա մահվան պատճառը դարձել,— խեղճացավ արքան, կարեկցանք ակնկալելով Հայր Մարդպետից։— Աստված է վկա՝ անուղղակի...

— Հորն սպանել, իսկ որդուն հյուպատոսի կոչում տալ... Նաև մեծ հարստություն...— տարակուսանքով ուսերը թոթափեց Հայր Մարդպետը։— Հակասություն չկա՞ այստեղ, արքա։

— Կա՛, կա՛, կա՛,— իրեն կորցրեց արքան։— Ի՞նչ ես ուզում ինձանից։

Եվ նրա այդ պարզունակ ու անօգնական հարցով երկու բան խառնվեց իրար. իր մեղքերն ու փաստերի ծանրությունը։ Մեկը խանգարում էր մյուսին։ Վրեժի ցանկությունն ու մեղքի գիտակցումը քաշում էին միմյանց փեշից և խլացնում իրար։

— Ինչո՞ւ քո թշնամի նախարարները իրենց զավակներին հանձնեցին Գնելի դաստիարակությանը։ Ինչո՞ւ հանկարծ բոլորը միաժամանա՛կ սիրեցին նրան։

— Փչացրիր ախորժակս, Հայր Մարդպետ,— մռնչաց արքան։— Շանսատա՞կ անեմ այդ լակոտին։

— Մի շտապիր, արքա,— հուսախաբվեց Հայր Մարդպետը, հաջողության հոտն առնելով։ Մի տեսակ թևաթափ եղավ։ Կորավ նախկին թրթիռը, վտանգի հմայքը, խաղի սրությունը, որից մարդու շունչն է կտրվում։ Եվ անմիջապես աչ կողի վրա զգաց իրեն տանջող ամենօրյա ծերունական ցավը։— Ի սեր աստծո, մի կորցրու զգաստությունդ։

— Ուրեմն, թագավո՞ր է ուզում դառնալ,— կարծես վանդակի մեջ ընկած, պատեպատ էր խփում իրեն արքան։

— Ուրեմն, թափո՞ւր է գահը։

— Ապացույց է պետք, արքա, ապացույց։

— Էլ ի՞նչ ապացույց։ Մի՞թե քո բոլոր ինչուները ապացույց չէին։

— Բայց դու գիտեիր այդ բոլորը, արքա։ Չէ՞ որ նորություն չէր քեզ համար։

— Գիտեի առանձին-առանձին։ Կողք կողքի չէի դրել երբեք։— Եվ ամուր բռնեց նրա օձիքից։— Դո՛ւ ինչու դրիր։

— Քո անսահման ուժն ու իշխանությունը քեզ դյուրահավատ են դարձրել, արքա։— Բայց ո՞ւմ հանդեպ՝ ի՞նչ, թե Գնելի, այդպես էլ անորոշ մնաց։ Եվ նա արժանապատվությամբ արքայի ձեռքերը հեռացրեց իր օձիքից։

— Ինչ կա որ, թող դառնա, —այս անգամ արդեն գիտակցաբար իրեն խեղճացրեց արքան,— եթե շատ է ուզում, ուրեմն, մի բան գիտի... Ինձնից երիտասարդ է, եռանդով լի... Ոնց որ թե հիմար էլ չի, չէ՞, Հայր Մարդպետ...

— Հաշտվեցի՞ր արդեն, արքա։

—Վաղուց եմ հաշտվել,— թուլացած, գահի պատվանդանին նստեց արքան, և մի զարմանալի անտարբերություն ու ծուլություն իջան նրա վրա։— Հոգնել եմ գահին կառչելուց, պալատական խարդավանքներից, ինձնից, քեզնից, քո կոկառցից... Թող գան, թող ուրիշներն էլ փորձեն... Թող ուզենան բան անել, ու ոչ ոք չհասկանա նրանց... Թող մե-

նակ մնան... Ինձնից էլ մենակ... Մենա՜ք, մենա՜ք, մենա՜ք, ջա՜ղ մենակ...— Հայր Մարդպետը վերցրեց եռաստեղ շարժական ջահը, զգուշորեն դրեց արքայի առջև ու աննկատ մի կողմ քաշվեց։ Արքան պարզեց ձեռքերը, սկսեց տաքացնել և շարունակեց ծերունու պես փնթփնթալ ինքն իրեն։— Իսկ ես կգնամ Արշակավան, նոր արքայի համար հող կփորեմ, գինի կխմեմ, կսովածանամ, կքնեմ իմ տկլորների հետ... Բայց կընդունե՞ն որ, Հայր Մարդպետ... Չէ՞ որ նրանք ատում են ինձ... Ես էլ՝ նրանց... Պատկերացնո՞ւմ ես, եթե երկու ատող կողմերը հանկարծ իրար միանան... Ինչեր ասես չեն անի... Աշխարհը շուռ կտան... Ի՞նչ Բյուզանդիա, ի՞նչ Պարսկաստան, ի՞նչ նախարարներ...— Մարած աչքերում նորից փայլ երևաց, նորից հայացքը կենդանացավ, և նա վեր թռավ տեղից։— Այ սա՛ Գնելը չի հասկանա... Ոչ ոք չի հասկանա բացի ինձանից...

Ի՜նչ-որ ինքը, միա՛յն ինքը արժանի է այս երկրի գլխին կանգնելու։ Ոչ թե բռնությամբ, խորամանկությամբ, հազար ու մի աղտոտ միջոցներով, այլ միանգամայն արդար ու ազնիվ փաստարկներով։ Ասեք, ասեք, ինչքան ուզեք ասեք, մի՞թե ես առարկում եմ, որ փառասեր եմ, փառասեր եմ, ինչո՞ւ չէ, մինչև ուղն ու ծուծը փչացած, վայելքներից խենթացած, հարստությունից հղփացած... Ավելացնե՞մ էլի... Սակայն չէ՞ որ եթե Գնելը լինի թագավոր, նույն բանն է դառնալու։ Ուրեմն, այս կետի վրա, մինչև այստեղ, մենք հավասար ենք։ Երկվորյակ ենք։ Նույն կաղապարից ելած։ Հայելի՝ միմյանց համար։ Բայց շարունակությունը լսիր։ Եղբոր որդի, շարունակությունը։ Ես ծրագիր ունեմ այս կործանվող երկրի համար, ստատանալական ծրագիր։ Դո՞ւ ինչ ունես։ Ունե՞ս որևէ բան փառասիրական տենչերից բացի։ Եթե ունես, եթե ավելի ճարտար միտք ես հղացել, եթե կարող ես հպատակներիդ ձեռքից բռնել և ահավոր վտանգից հեռացնել, փրկել նրանց, խնդրե՞մ, պայքարիր իմ դեմ ինչքան որ սիրտդ կամենա, ձգտիր դեպի այս փայտի կտորը, այս բարձրադիր գահը, թող արժանի լինի քեզ։ Բայց ախր իմ Արշակավանի դիմաց դու ոչինչ չունես դնե-

լու, այ դեղնակտուց պատանի։ Էլ ի՞նչ ես մեջ ընկել։ Ի՞նչ ես արմունկներով ճամփա բացում։ Որ ի՞նչ։ Եվ այստեղ արդեն ես քեզ կճզմեմ։ Եվ հեշտությամբ, առանց խղճի խայթի։ Թռունցքի մի հարվածով։ Որովհետև գահի հաշիվ չկա այլևս, կա միայն երկրի բախտը։ Դուցե գահի հարցում դու ես ավելի ուժեղ, բայց երկրի բախտը լուծելու հարցում՝ ես։ Ես և միայն ես։ Եվ դու չես դառնա տասնը-յոթերորդ Արշակունի։ Տասնվեցերորդը կա՛ դեռ։

— Իսկ եթե դու թշնամի՞ ես Գնելին և վրե՞ժ ես լուծում հիմա նրանից,— փորձեց մի վերջին սողանցք գտնել արքան, բայց ոչ թե Գնելի սիրուն, այլ սեփական խղճի հանգստության համար։— Դուցե իրո՞ք թշնամի ես, ու ես չգիտեմ։

— Ենթադրենք,— բնավ իրեն չկորցրեց Հայր Մարդպետը և նախընտրեց չծխտել այդ վարկածը։— Բայց ի՞նչ նշանակություն ունի, արքա, թե ես ի՞նչ դրդապատճառներից ելնելով եմ ճշմարտությունն ասում քեզ։ Ճշմարտությունը գրանից հո չի՞ փոխվում։

— Փոխվում է, այն էլ ինչպե՞ս է փոխվում,— չկարողացավ ուրախությունը զսպել արքան, որովհետև ներքինին մի փոքր հույս տվեց նրան՝ արյունից խուսափելու։ Եվ նա մտերմաբար գրկեց նրա ուսը։— Շահագրգռություն է մտնում խնդրի մեջ, Հայր Մարդպետ։ Ապա լավ մտածիր։ Մի անգամ էլ ստուգիր խիղճդ։ Դատավոր եղիր ինքդ քեզ։

— Երբ արքաները սահմանել են, որ արքայազուն իշխաններից Այրարատում իրավունք ունի ապրելու միայն թագաժառանգը, երևի մի բան իմացել են,— խաղաղ և հեզ ձայնով առարկեց Հայր Մարդպետը,— ցանկացել են գահի հավակնորդներին հեռու պահել պալատից։ Ես չեմ կարծում, որ դու հենց այնպես հետևեցիր նրանց օրինակին և միայն պատշաճ կարգը պահպանելու համար Գնելին հեռացրիր Այրարատից։

— Կարգը, ի՜հ՛րկե կարգը պահպանելու համար,— պատասխանեց արքան, բայց անմիջապես մռայլվեց և ձեռքը վերցրեց Մարդպետի ուսից։

Նա չէր էլ կասկածում, որ այս կոտած շունը ոչ մի սո-

զանցք չի թողնի։ Եթե նույնիսկ թողներ, արքան ինքը կփակեր։ Է՛, կուրացած Տիրան, նախկին հայոց թագավոր, որ իմ հայրն ես, իմ սերմանողը, իմ ծնողը. որին ես նման եմ ինչպես չրի երկու կաթիլ, վերջապես հերթը հասավ քեզ։ Չէի ուզենա, բայց հասավ։ Հասցրի՛ն։ Եվ ես արդեն ստիպված եմ հեռվից հեռու բացեիբաց խոսել քեզ հետ։

Դու չհաշտվեցիր այն մտքի հետ, որ թագավոր չես այլևս։ Եվ որ հատկապես՝ թագավոր է քո որդին։ Եթե ուրիշը լիներ, ո՞չ թե ես, գուցեև մի կերպ համակերպվելիր, այդքան հիվանդագին չընդունեիր քո անկումը։ Բայց տարիներ շարունակ մեծացնում ես որդուդ, խնամում, դաստիարակում, ապրել սովորեցնում, նույնիսկ երբ պատանդ են ուզում քեզնից, փոքր զավակիդ ես ուղարկում հեռավոր Բյուզանդիա, իսկ միջնեկ որդուդ, Արշակին, խնայում ես և քեզ մոտ պահում, ուրեմն, ամենից շատ նրան ես սիրում, նրա հետ ես ավելի կապված, և հանկարծ քո փոխարեն այդ նույն որդիդ է գահ բարձրանում։ Թող բարձրանա, իհա՛րկե, թող բարձրանա և միա՛յն նա, միա՛յն Արշակը, բայց հորդ մահից հետո, այ անառակ որդի, և ոչ թե նրա կենդանության օրերին։ Եվ դու ավելի քան վստահ ես, որ դա չլսված ու չտեսնված երախտամոռություն է իմ կողմից։ Որ ես եմ քո բոլոր դժբախտությունների միակ պատճառը։ Ե՛ս, որ պարզապես խաղալիք էի հզորների ձեռքին, ե՛ս, ում կամքը կամ ցանկությունը մի քոսոտ դրախմու արժեք էլ չունեին։ Պատահաբար թագավոր դարձա, պատահաբար էլ կարող էի չդառնալ։ Շապուհը ուզեց՝ դարձա։ Չուզենար՝ չէի դառնա։ Բայց դու չներեցիր ինձ։ Եվ միայն ինձ չէիր ներելու։ Միայն ինձ պիտի խանդեիր, քո ամենամոտիկ մարդուն։ Հենց նրա համար թեկուզ, որ ամենամոտիկն է նա։ Բայց չէ՞ որ, միևնույն է, քեզ գահընկեց արեցին։ Ավելի լավ չէ՞ր միթե, որ որդիդ փոխարիներ քեզ, և ոչ թե թշնամիդ։ Չէ՞, չէ՞, թշնամի՛ս, թշնամի՛ս, բայց ո՞չ որդիս։

Տիրանն իր թոռան հետ քաշվեց Արագածի փեշերին ընկած Կվաշ ավանը։ Դարձավ պարսկատյաց և թեքվեց Բյուզանդիայի կողմը։ Աստված միայն երկու սեր է ստեղծել հայ նախարարների համար։ Նրանք սիրում են ոչ թե ելկնի ան-

հատակ կապույտը, գլգլան առվակի հնհնհ վազքը, իրենց կողից ծնված կին արարածին, ընկերոջը, հայրենիքը, այլ պարսիկին կամ բյուզանդացուն։ Եթե նրանց նեղացնես ու վիրավորես, ոչ ոք տղամարդավարի չի հայհոյի քեզ, չի ապտակի, ձեռքը չի տանի սրի պատյանին, կանցնի պարսիկի կամ բյուզանդացու կողմը։ Եթե մարսողությունը վատ է, և տանջվում է ստամոքսի ցավից, կանցնի պարսիկի կամ բյուզանդացու կողմը։ Եթե կնոջ հետ կռիվ է արել կամ նրան կասկածում է դավաճանության մեջ, կանցնի պարսիկի կամ բյուզանդացու կողմը։ Իսկ թագավորը պետք է հայացքը անընդհատ աջ ու ձախ թեքի, բռնի փախչողների փեշերից, խնդրի, աղերսի, բացատրի, հասկացնի, սպառնա, վախեցնի, հետո, տեսնելով, որ բան դուրս չի գալիս, ինքն էլ, նեղացած, անցնի պարսիկի կամ բյուզանդացու կողմը։

Տիրանը օր ու գիշեր մի թաքուն միտք էր փայփայում գլխում։ Երազում էր Գնելին տեսնել հայոց գահի վրա։ Բայց դու ոչ թե քո թոռանն ավելի սիրեցիր, քան որդուդ, ոչ թե Գնելին ավելի գնահատեցիր, քան Արշակին, այլ թոռանդ ու որդուդ մեջ, ատելությանդ ու սիրուդ մեջ քո շահը տեսար միայն։ Եթե երիտասարդ ու անփորձ Գնելը թագավոր դառնար, նա չէր կարողանա ինքնուրույն ղեկավարել երկիրը, խորհրդատու էր պետք նրան, հուշարար, ճամփա ցույց տվող։ Եվ եթե մինչև հիմա թոռն էր բռնում կույր պապի ձեռքից, որպեսզի նա չսայթաքի, ապա թագավոր դառնալուց հետո կույր պապն էր առաջնորդելու թոռանը։ Եվ երկրի փաստական տերն ու ինքնակալն էր լինելու։ Դրա համար էլ արքան Վարդան Մամիկոնյանին ուղարկեց Գնելի մոտ, թե՝ «Ինչո՞ւ բնակվեցիր Այրարատում և հայրենի կարգը խախտեցիր։ Դու պետք է ընտրես երկուսից մեկը, կամ մահ ընդունել, կամ հեռանալ Այրարատից»։ Գնելը ենթարկվեց արքայի հրամանին ու գնաց Արշակունիների համար բնակության վայր սահմանված երեք գավառներից մեկում ապրելու՝ Հաշտյանք, Աղիովիտ կամ Առբերանի, մեկը՝ չորրորդ Հայքում, մյուսը՝ Տուրուբերանում, երրորդը՝ Վասպուրակա-

նում։ Գնելն ընդարձակ Աղիովիտը, որը գտնվում էր Ապահուն-նիքից արևելք՝ Վանա լճի հյուսիսային մասում։

— Գնելին կկանչես Շահապիվան, Նավասարդի տոնե-րին,— խիստ ցածր ձայնով հրամայեց արքան։— Կասես, որ թագավորը չկամեցավ Նավասարդի տոները առանց քեզ անցկացնել։ Կասես, որ նա բարեհաճ է քո հանդեպ, որով-հետև իմացավ, որ քո մեջ չկա չարություն, ինչպես չարա-խոսներն էին ասում։ Նա համոզվեց, որ մինչև հիմա իզուր էր քեզ ատում, մինչդեռ դու նրա կողմից արժանի ես սիրու։— Լռեց մի պահ, մինչև վերջ մարսեց իր վճիռը, ապա շշուկով ավելացրեց.— Կանչիր Գնելին, ուզում եմ խոսել նրա հետ։— Հետո նկատելով Հայր Մարդպետի դունատ և հարցական հա-յացքը, բացասաբար ու երկար շարժեց գլուխը.— Ուզում եմ խոսել...

Նա վերցրեց ջահը, բաց արեց գահասրահի դուռը, դուրս եկավ, բաց արեց ընդունարանի դուռը, դուրս եկավ։ Դուրս եկավ և արագ քայլեց միջանցքով։ Հայր Մարդպետը, թուքը կուլ տալով, կանգնել էր միջանցքի ծայրին ու սփրթնած նայում էր արքայի ետևից։ Արքան հանկարծ կանգ առավ հեռվում, շրջվեց, ջահը բարձրացրեց մութ միջանց-քում և ջղայնացած գիմեց դեպի անորոշ տարածությունը, ուր ինչ-որ տեղ Հայր Մարդպետն էր երևի կանգնած.

— Խոսել եմ ուզում...

Գլուխ յոթերորդ

— Զեմ թողնի գնաս,— ամուսնու ոտքերը գրկած, արցունքն աչքերին, ծնկալոք աղերսում էր Փառանձեմը։— Թույլ չեմ տա... Եթե դու այլևս անկարող ես ինձ ու քեզ պաշտպանել, ուրեմն, ես եմ պաշտպանելու մեզ...— Հետո, արձագանք չստանալով նրանից, հուսահատությունից ինչ-որ անբնական ուժ զգաց երակներում, մի տեսակ անսանձ, անխոհեմ վճռականություն, և ինչ որ լեզվի տակ եկավ, չա-րությամբ շպրտեց ամուսնու երեսին, կարծես իր երդվյալ

ու ոխերիմ թշնամուն հայհոյելով.— Իմ եղունգները քո թրից ավելի ուժեղ են... Իմ ատամները ավելի սուր են քո դաշույնից... Իմ կամքը ավելի ամուր է քո վահանից...— Հետո այդ ուժն ու վճռականությունը, մի մեծ հայտնության դեմ առնելով, միանգամից լքեցին նրան, ու նա հեկեկալով փլվեց գետնին։— Ուրեմն... Ուրեմն, իմ սե՞րն էլ ավելի ուժեղ է քո սիրուց...

— Ես պարտավոր եմ ենթարկվել նրան,— առանց կրքի պատասխանեց բազմոցին անշարժ նստած տղամարդը։— Մի համոզիր ինձ անհնազանդ լինել։

Փառանձեմը, վախեցած, մտովի աղոթում էր աստծուն, որ նա այլևս չվերադարձնի իր քիչ առաջվա անսովոր ուժն ու խելքից հանող, գետնից պոկող, մրրիկի պես խելահեղ վճռականությունը։ Նա միշտ թույլ և անօգնական էր եղել կյանքում։ Որովհետև հայրն էր կողքին՝ Սյունյաց Անդովկ իշխանը, ամենահզոր նախարարը, որ բդեշխներից հետո առաջին տեղն էր զբաղեցնում գահնամակում, առաջինն էր նաև զորանամակում, քանի որ պատերազմի ժամանակ տասնինը հազար չորս հարյուր հեծյալներից բաղկացած ընտիր այրուձի էր տալիս երկրին, նախարարական բոլոր տներից ամենաշատը։ Հորից հետո կողքին կանգնեց ամուսինը՝ գեղեցիկ, խիզախ, լայնաթիկունք... Եվ նա երջանիկ էր իր թուլությամբ, այդ թուլության մեջ նույնիսկ ինչ-որ ցուցադրական բան կար, կանացի հմայիչ մի խորամանկություն, կատվային խաբուսիկ մարմանդություն։ Նա ուզում էր, որ ղեկավարեն իրեն, ենթարկեն իրենց կամքին, անընդհատ ձեռքից բռնած մանչ դան, այն հաստատ համոզմամբ, որ նա կկորչի առանց տիրոջ։ Նա կրկնակի փաղաքշված էր զգում իրեն տղամարդու ուժեղ թևերի տակ, կրկնակի սիրված ու պաշտված։ Եվ այսպես, տարիներ շարունակ պահմտոցի խաղալով ինքն իր հետ, նա հավատաց, ընտելացավ այդ քնքուշ թուլությանը և դարձրեց իր սեփականությունը։ Եվ հիմա ուզում են ամենաթանկ հարստությունը խլել նրանից, նրա զարդերից լավագույնը, որը թեև ոսկուց կամ աղամանդից չէ, հասարակ, գունավոր ապակի է

ընդամենը, բայց արի ու տես, որ սիրտը դրան է կպել միայն։

Երեք օր առաջ նրանք դուրս էին եկել Աղիովիտ գավառի Զարիշատ քաղաքից և, Տիգրանակերտ-Մանազկերտ-Արտաշատ ճանապարհը բռնած, ուղևորվել դեպի Շահապիվան, Նավասարդի տոներին մասնակցելու։

Գնելը Փառանձեմին ստիպել էր հագնվել տոնական պատշաճությամբ, և նա լուռ ենթարկվել էր ամուսնու կամքին, ի սեր անցած օրերի երջանիկ հիշողության։ Փողոշուկ կոչված մարգարտահեր լարով հյուսել էր ծամերը, որոնք, գմբեթարդ ձևով, ողորկ նստած էին գագաթին և գլխի շուրջ կազմում էին ուռուցիկ ու ոլորուն մի պսակ, վրան՝ սաղավարտ, որ հեռավոր ճամփորդության ժամանակ օգտագործվում էր քողի փոխարեն։ Եթե սովորաբար պատմուճանը ծածկում էր ամբողջ իրանը, բազուկները և վիզը, ապա հիմա, ինչպես վայել է հանդիսավոր օրերին, վիզը, ուսերը և բազուկները բաց էին, կոնակի վրա՝ թեթևակի ճարմանդված, դեպի գետին ձգելով երկար ու առատ քղանցքները։ Բարակ մեջքը գրկել էր մարգարտի երկու զույգ կարգերով լայն կամարը։ Պատմուճանի վրայից մետաքսե մենթան էր հագել, անթեզան և կարճ մի հագուստ, որ ծածկում է միայն իրանը և վերջանում ժանեձև երիզով։ Վզից կախված էր քայլը՝ մարգարտաշար վզանոցը, իսկ մերկ բազուկների վրա ոլորված էր քողը, մեհեվանդի նման մի զարդ, կենտրոնում՝ ոսկե մեծ քարով։ Կոշիկները՝ սրակտուց, ցածր ու ոսկեզօծ...

Մինչդեռ ոտաբոբիկ պիտի գնար, մաղերն արձակ, կուրծքը բաց, շորերը զզգված, անեծքը շրթներին, արցունքը այտերի վրա ցամաքած... Պիտի գնար անհավասար կռիվ տալու դահիճների հետ, դոնեդուռ ընկնելու, պիտի մոռանար իր ծագումն ու դիրքը, պիտի իրար խառներ ողջ երկիրը, վայնասուն գցեր շորս կողմը, հրապարակներում կանգնած՝ մազերը փետեր, կուրծք ծեծեր, գութ աղերսեր, օգնության աղաղակ բարձրացներ... Այդպես մարդավարի պիտի գնար... Բայց ոչ այսպես զուգված-զարդարված, ոչ այսպես

զուսպ և արժանապատիվ, ոչ այսպես ազնվական ու անհոգի։

Գնելը ևս ոտքից գլուխ փայլում էր մահը ժխտող իր իշխանական հանդերձներով։ Հագել էր կարճ, ծնկներին իջնող, առջևը երկփեղկանի, կնգամենու մորթուց կարված մի վերարկու։ Թեզանիքը, հասնելով մինչև արմունկները, անութից վար երկճղվում էին, որպեսզի ազատ շարժվեին բազուկները։ Օձիքն ու վերարկուի քղանցքն ասեղնագործված էին։ Մեջքը գրկել էր կաշվե նեղ գոտին, որի ձախակողմից առկախ էր սուրը։ Զարդհյուս ու երկար պատմուճանի քղանցքը եռանկյունաձև բացվածք ուներ առջևից, իսկ երկու կողքերից մինչև ծունկը՝ մի-մի ճեղքվածք՝ դյուրությամբ քայլելու համար։ Ոտքերին՝ մուկեր։ Մազերն՝ արձակ, գունատ դեմքին ընկած։ Էլ ի՞նչ մահ, եթե այսքան մանրամասներ ունեին նրա հանդերձները, ապրելու այսքան ապացույցներ։

Երկուսն էլ ամբողջ ճանապարհն անցել էին ձիերով, Փառանձեմինը՝ սպիտակ, Գնելինը՝ մոխրագույն։ Սպիտակ ձիու վրա թամբի փոխարեն դրված էր ժանվար՝ փոքրիկ գահ պատվանդանով, գլխին՝ հովանոցակ։ Փառանձեմը նստել էր մեկուսի, երկու սրունքները մի կողմից կախված։ Ետևից, սայլերի վրա ուտեստներ ու խորաններ բարձած, եկել էին շքախումբն ու ծառաները։

Հեռվից, լիալուսնի լույսի տակ, երևացել էին Նպատ լեռը և Արածանիի փայլփլուն, արծաթ ժապավենը։ Դա նշանակում էր, որ մոտեցել էին Բագավանին, որից քիչ այն կողմ Շահապիվանն էր։

Նրանք կարող էին մի քանի ժամից տեղ հասնել, նույնիսկ անմտություն էր խորանի տակ գիշերելը։ Սակայն այր ու կին, հենց որ տեսել էին մթության մեջ կուտակված Նպատ լեռը, ակամա քաշել էին դանդանավանդները և պրկել հոգնած երիվարների կզակները։ Ձիերը կանգ էին առել, և երկու մտախոհ հայացք գամվել էին ծանր ու մեծ լեռանը։ Գնելը իջել էր ձիուց ու հրամայել, որ ամրացնեն խորանը։

Եվ հիմա, ընդարձակ ու շքեղ խորանում, ապակե սափորի մեջ վառվող ձեթի ճրագի շուրջը կծկված, իրենց հսկա

ատվերների հետ մեն-մենակ, այրվում, տապակվում էին մարդ ու կին։

— Ինչո՞ւ քո մասնակցությունը Նավասարդի տոներին հանկարծ այսպիսի կարևորություն ստացավ,— է՛լ ավելի էր շիկանում Փառանձեմը, այտերը տա՜ք, կաս-կարմի՛ր, ձայնը անճանաչելիորեն խռպոտ, աչքերում թույն և կրակ։— Ե՞րբ է նա քեզ պալատ հրավիրել... Ե՞րբ է իրեն հորեղբոր նման պահել... Նա է սպանել քո հորը... Նա է քեզ քշել պապի մոտից... Այդ ստրկամիտ, ոճրագործ ներքինին...

— Այդ ամենը ճիշտ է, Փառանձեմ,— հայացքը մի անորոշ կետի, սառը և անկենդան ձայնով պատասխանեց Գնելը։— Բայց նա մեր թագավորն է։ Եվ մենք պիտի ենթարկվենք նրան, որպեսզի բոլորն էլ իմանան, որ նա հայոց թագավորն է։

— Ես վերադառնում եմ... Տուն եմ գնում...— Ու նա ավելի ամուր կառչեց ամուսնուց, ավելի պինդ փարվեց նրան, և որովհետև դիրքը անհարմար էր, առավել որոշակի զգաց վտանգի հոտը։— Չեմ ուզում ամուսնուս իմ ձեռքերով հանձնել այդ մարդասպանին... Այդ արյան ծարավ դահիճներին... Այդ կուշտ ու կուռ ոհմակին...

— Ոչ, Փառանձեմ։ Եթե նույնիսկ քո կասկածներն իրավացի են, միևնույն է, ես պետք է ներկայանամ ինչպես կարգն է պահանջում։ Կնոջս, շքախմբիս ու ծառաներիս հետ։

— Որտեղի՞ց է այդ ստրկամտությունը քո մեջ,— խայթվածի պես վեր թռավ Փառանձեմը,— ինչպե՞ս ես կարողացել մինչև հիմա թաքցնել ինձանից։— Եվ սաստիկ վիրավորված, մի ակնթարթ նույնիսկ մոռացած մոտալուտ վտանգը, նա մռայլ հայացքով զննեց ամուսնուն։— Եթե ես մի պահ անգամ նկատեի, չէի հանդուրժի քեզ... Չէի թողնի, որ թեկուզ մատով կպչեիր ինձ...

— Ես նրան չեմ սիրում։ Չեմ հարգում։ Ոչ էլ վախենում եմ։ Լավ հիշիր, ոչ էլ վախենում եմ։

Գնելը ևս վիրավորվեց կնոջ մեղադրանքից։ Փառանձեմն իսկույն որսաց դա և բնազդորեն կռահեց, որ եթե վտանգի շեմին իրենք ընդունակ են իրարից նեղանալու, ուրեմն, որոշել են ապրել, ուրեմն, ամեն ինչ այնքան էլ անհույս չէ

գեռ, ուրեմն... շուտով կհավաքեն խորանները ու ետ կդառնան։

— Չե՞ս կեղծում, Գնել,— ուրախությունից դողաց Փառանձեմի ձայնը։— Երդվիր, որ չես կեղծում։

— Երդվում եմ։— Գնելը վեր կացավ, քնքշորեն բռնեց կնոջ ուսերից։ Գուրգուրանքով նայեց նրա աչքերին, կարծես աղերսելով հասկանալ իրեն, լինել ոչ թե կին, այլ բարեկամ ու համախոհ։ Եվ առաջին անգամ ճամփա ընկնելուց հետո խոսեց եռանդով ու ոգևորությամբ։— Բայց ես պարտավոր եմ նրան սիրել։ Պարտավոր եմ նրան հարգել։ Ես իրավունք չունեմ նրան չհավատալու, եթե նա Նավասարդի տոներին է հրավիրում ինձ։ Ես պարտավոր եմ նրանից վախենալու։ Ոչ թե նրանից, այլ արքայից։ Ով էլ նա լինի, արժանի, թե անարժան, քաջ, թե վախկոտ, առաքինի, թե կեղտոտ։ Մոռացիր, թե ով է նա։ Մոռացիր անունը, դեմքը, ձայնը... Անգամ կատարած գործերը...— Հետո կարծես արյունը խփեց գլխին, նա ձեռքերը հեռացրեց կնոջ ուսերից, մոտեցավ դույլին, ագահաբար մի թաս ջուր խմեց, կեսը թափելով զգեստների վրա, հետո թևքով սրբեց բերանը, սկսեց ետ ու առաջ քայլել իր ստվերի հետ ու ցասումով խոսել, բայց արդեն ոչ միայն կնոջ, այլև իր ու աշխարհի հետ։— Մեր դժբախտությունն այն է, որ մենք երբեք չենք մոռանում... Նրա մասին խոսում ենք ոնց որ մեր ընկերոջ... Ոնց որ հարևանի... Բամբասում, գովում, հայհոյում... Վերջիվերջո պիտի՞ այս անտերը երկիր դառնա, թե՞ ոչ... Ոչ, Փառանձեմ, մի համոզիր ինձ...— Նա կանգ առավ, կպավ խորանի կտավե կոշտ պատին և տխուր ժպտաց։— Ինչ արած, ես այսպես եմ ստեղծված... Գուցե ծիծաղելի է... Բայց կան բաներ, որ ինձ համար բարձր են թե՛ ինձնից, թե՛ իմ դաստակերտից, թե՛... մի նեղանա... գուցե նաև քեզանից...

Պիտի՞, պիտի՞ երկիր դառնա, թե ոչ։ Պիտի՞ ի վերջո ամեն մարդ իր տեղն իմանա, գլուխը կախ իր գործն անի և քիչ իրեն տանջի այն մտքից, թե հարևան գավառում ավելի լավ են ապրում, հարևան երկրում՝ է՛լ ավելի լավ, որքան հեռա-

նաս՝ էլ ավելի, իսկ Հնդկաստանում՝ դրախտ։ պես։ Պիտի՞ գա՞ այն օրը, երբ ոչ ոք այլևս չի լքելու իր երկիրը և չի մեկնելու հեռավոր ափեր՝ բախտ որոնելու և հետո էլ չի մեռնելու... Հայրենիքի կարոտից։ Պիտի՞ այս երկիրը սովորի թագավոր ունենալ, թե ոչ։ Թե՞ տանը տաքուկ-տաքուկ նստած, ամեն մեկը գլուխ է գովելու, որ հայկական գինու պես ընտիր գինի աշխարհում չկա, հայկական կերպասի պես կերպաս չկա, հայ զինվորի պես կռվող չկա... Թե՞ նրան պիտի թվա, որ այդ գերազանցությունից ինչ-որ բաժին էլ իրեն է հասնում, իր ընտանիքին, իր հինգ տարեկան թլիկ որդուն։ Պիտի՞ այս երկիրը արժանի դառնա թագավոր ունենալու, թե ոչ։ Թե՞ Աղձնիքի վրա թշնամու հարձակման լուրն առնելով, Գուգարքի հայը պիտի հանգստանա և ուրախանա, թե որքան հեռու է դեռ վտանգը իրենից։ Իսկ Գուգարքո՞ւմ... Գուգարքո՞ւմ... Գուգարքի պես անտառներ աշխարհի ոչ մի ծայրում չկան։ Պիտի՞ հայոց թագավորը կանչի իր հպատակին, և նա հլու-հնազանդ, առանց հրամանը քննարկելու, ներկայանա տիրոջը։ Պիտի՞, թե ոչ։

— Բայց ինչո՞ւ քո այդ մտքերը մինչև հիմա ինձ օտար էին ու անծանոթ։— Փառանձեմն ապշեց, որ մի՞թե սա այն մարդն է, որին ինքը ճանաչել է առանց մնացորդի, որին տրվել է ոչ միայն մարմնով, այլև ամբողջ էությամբ, ամեն գիշերը հատ-հատ նվիրելով նրան։ Իսկ նա ստորաբար խաբել է։ Թաքցրել է իրեն։ Ուրիշի դիմակով է անկողին մտել։ Եվ Փառանձեմն էլ ուրիշի ականջին է շշնջացել այն խոսքերը, որ անհնար է հետո հիշել, անկարելի՞ է։— Ես սովոր եմ, որ ի՛նձ համարեն ամենաթանկը։ Ես էի հորս ամենամեծ հարստությունը։ Եվ կարծում էի, որ քեզ համար էլ նույնն է։

— Ես քեզ սիրում եմ, Փառանձեմ,— չերմությամբ վառվեցին Գնելի աչքերը։— Եվ դու լավ գիտես դա։

— Քիչ է։ Շատ է քիչ։

— Մի՞թե քեզ ապացույց է պետք։

Պետք էր, այն էլ ինչպե՞ս։ Այն բանի համար, որ իր ականջին շշնջած խոսքերը Գնելն անկասկած հիշել է հետու։ Հա-

չորդ օրը նույնն է կրկնել։ Ամեն օր է կրկնել։ Գողի պես օգտվելով առիթից, որ Փառանձեմին թվացել է, թե առաջին անգամն է այդ բառերը լսում, թե ոչ ոք բացի նրանից ընդունակ չէ դրանք իմանալու։ Այն բանի համար, որ գիշերները առաստաղն ու գետինը չեն փոխել իրենց տեղերը, որ նա չի իմացել, թե ինչ է նշանակում անդունդի մեջ գլորվել առանց ցավի ու քերծվելու, չի իմացել անկումի հաճույքը, թեթևությունն ու մաքրությունը։ Այն բանի համար, որ նա փոս է ընկել ընդամենը, ցեխոտ և ցածրիկ մի փոս։ Իսկ պատմել է անհատակ անդունդների մասին։ Եվ, վերջապես, այն բանի համար, որ նա կարող էր որևէ բան ավելի սիրել, քան իր կնոջը։ Մի՞թե նրա բոցավառ երդումների մեջ, որոնք ամոթով ու զզվանքով է հիշում ինքը հիմա, թեկուզ հարևանցի ակնարկ է եղել այդ մասին։ Չի եղել, արևը վկա։ Եթե լիներ, գուցե այդ պայմանն էլ ընդուներ։ Բայց չի՞ եղել, չի՞ եղել։ Համատարած ամայության ու դատարկության մեջ եղել են միայն երկու հոգի, մի կին ու մի տղամարդ, որոնք դեռ չէին խաբվել, դեռ չէին կերել կենաց ծառի խնձորը։ Սո՛ւտ է, Գնելը կերել էր արդեն։ Եվ եթե իսկապես սիրում էր, թող նրան էլ մեղսակից աներ իրեն, մեղքի մեջ անգամ մենակ չմնար։ Իհա՛րկե ապացույց էր պետք, այն էլ ինչպե՞ս։

— Եթե հարկ լիներ, ինձ համար կդավաճանեի՞ր հայրենիքիդ,— անսպասելի մարտահրավեր նետեց նրան Փառանձեմը։

— Մի պզծիր լեզուդ,— զայրույթից կարմրեց Գնելը։

— Չէ, ասա, կդավաճանեի՞ր։

— Վայրենի հարցեր մի տուր։

— Ես կատեի և կանիծեի այն մարդուն, ով ընդունակ է փառքի, իշխանության կամ դրամի համար դավաճանել հայրենիքին,— և այդ պահին նա իրոք ամբողջ հոգով արհամարհում էր այդպիսի մարդուն։ Նա լռեց մի փոքր, ապա հատոկ շեշտեց.— Նույնիսկ՝ սիրո...

— Տեսնո՞ւմ ես, հենց ինքդ էլ պատասխանեցիր։

— Բայց ինձ համար դու պե՛տք է պատրաստ լիներիր,— սառը և հանգիստ, իր դատավճիռն արձակեց նա։...

— Փառանձե՛մ...— այլայլվեց Գնելը։

— Իմ ու քո միջև ես միայն ծայրահեղությունն եմ ընդունում,— հպարտությամբ ու մեծ արժանապատվությամբ ավելացրեց Փառանձեմը։— Ծայրահեղն եմ միայն պահանջում։

— Քո մտքերն էլ մինչև հիմա ինձ օտար էին ու անծանոթ,— ապշահար շշնջաց Գնելը։

— Ինչո՞ւ։ Պարզվեց, որ դու էլ ինձ նման ես։ Ամեն ինչում առավելագույնն ես սիրում,— թունոտ քմծիծաղեց Փառանձեմը։— Երբ սիրահետում էիր ինձ, հիշո՞ւմ ես որքան համառ էիր։ Շա՛տ։ Հիշո՞ւմ ես, ինչպես էիր թծնում հորս, ինչպես էիր սողում նրա առաջ, որպեսզի համաձայներ մեր ամուսնությանը։ Շա՛տ։ Ո՞նց էիր ինձ սիրում։ Շա՛տ։ Եվ որքան ստրկամիտ ես հիմա։ Շա՛տ։— Նա տեղնուտեղն զգաց, որ այդպես են դիմում միայն այն մարդուն, ում հետ միացնող կամուրջները քանդել են ուզում հիմնովին։ Զգաց նաև, որ ինքն այդպիսով կրկնակի անգամ էր կորցնում ամուսնուն։ Կորցնում էր արդեն ոչ միայն ֆիզիկապես։ Եվ նա ամբողջ հոգով խղճաց նրան, ոչ որպես օտար, այլ որպես սիրող կին, որպես ոսկր նրա ոսկրից, որպես մարմին նրա մարմնից, բայց, այդ բոլորով հանդերձ, չկարողացավ զսպել պոռթկումը, չկարողացավ ազատվել հորձանուտից, և նրա մեջ մի դաժան ցանկություն ծնվեց ոչնչացնելու այս սիրելի, հարազատ ու թանկագին մարդուն։ Ոչնչացնելով վերադարձնելու իրեն։ Խեղճացնելով, նվաստացնելով, վիրավորելով։— Բայց հիշիր, ես քեզ չեմ սիրել։ Ես քեզ տանել չէի կարող։ Ում ասես կպատկերացնեի ամուսին, բացի քեզնից։ Ինձ համար զզվելի էր նույնիսկ երևակայել, որ կարող ես շոյել ինձ, համբուրել... Քո հոտը, քո շարժումները... Բայց արի տես, որ հենց քեզ հետ էլ ամուսնացա...

— Բայց դու ինձ սիրեցիր, Փառանձեմ,— Գնելը տարակուսանքով փորձեց պաշտպանել իրեն։

— Հայրենիքի անունից ես խոսում։ Ի՞նչ հայրենիք։ Մանր-մունր իշխանները չե՞ն քո հայրենիքը։ Թե՞ հայրս Սյունիքում թագավոր չի զգում իրեն։

— Ո՛չ, Փառանձեմ, Արշակը պիտի հաղթի բոլորիս,—

մոլեռանդ հավատով պնդեց Գնելը։— Նրա ինչ լինելը պիտի մոռանան։ Պիտի մնա միայն հեքիաթը։ Երգեր պիտի հյուսեն նրա մասին։ Հրաշքներ պիտի պատմեն։ Դա ի՞նձ է պետք։ Իմ որդո՞ւն։ Իմ թոռա՞նը։ Իմ ծոռի՞ն։

Պիտի՞ արքան մի բան ձեռնարկի, թեկուզ չնչին, թեկուզ աննշան մի բան որոշի, և ամբողջ երկիրն անմիջապես չքննարկի այն, սխալներ չգտնի, խոցելի տեղեր չհայտնաբերի, ամեն մեկն իր տարբերակը չառաջադրի, ենթադրելով, թե ինքը շատ ավելի ճիշտ և շատ ավելի լավ կղեկավարեր երկիրը, միայն թե բախտը չի բերել, բախտը։ Սխալ է ծնվել։ Պիտի՞ նա արքայի անունը քիչ առնի բերանը, թե ոչ, ոչ պաշտի նրան, ոչ այպանի, ոչ պաշտպանի, ոչ մեղադրի, և եթե արքան որսի է գնացել, մտքովն իսկ չանցնի դժգոհելու, թե ինչքան որս կա՝ նա է խփում, ոչինչ չի մնում իրեն։ Պիտի սովորի՞ վերջապես շարք կազմել, դիմացինի ծոծրակին նայել, թե՞ ամեն մեկն իր համար մի կողմի վրա պիտի գնա, ուր որ պատահի, ուր որ աչքը կտրի։ Պիտի սովորի՞ միասին քար գլորել, միասին գերան տեղափոխել, միասին սիրել, միասին ատել, միասին տառապել և, ինչու չէ, երբեմն էլ միասին երջանիկ լինել։ Պիտի՞, թե ոչ։

— Մի գնա, Գնել... Դու կարող ես չգնալ այս հրավերին... Չէ՞ որ սա ոչ Բյուզանդիա է, ոչ Պարսկաստան... Հայաստան է սա... Եվ արքայի համար այնքան էլ հեշտ չէ հաշվեհարդար տեսնել անհնազանդների հետ...— Նա խելագարի պես գրկեց ամուսնուն և սկսեց համբուրել նրան, անճարակ համբուրել, ոտքերի մատների վրա բարձրացած, մի տեսակ տարօրինակ շտապողականությամբ, որպես սիրած կին, որպես թույլ արարած, որ ընդունակ է միայն աղերսելու և արտասվելու։— Սիրել եմ, Գնել... Շատ եմ սիրել... Իսկ՞ երկե սիրել եմ... Մի՛ գնա, մի՛ գնա... Ո՞ւմ է պետք այս նահատակությունը...

— Մինչև վերջին պահը մենք իրավունք չունենք կասկածելու,— անդրդվելի մնաց Գնելը,— իրավունք չունենք նրա մասին վատ մտածելու։

Փառանձեմը մի պահ այդպես էլ մնաց ոտքերի մատների վրա, և դեմքին մի տանջալի հարց երևաց, թե ինչպես մինչև

հիմա ամուսնու հետ համբուրվելիս երբեք կարիք չի զգացել մատների վրա բարձրանալու, և մի անհասկանալի երկյուղ ու դող անցավ նրա մարմնով։ Նա անմիջապես ետ քաշվեց, օտարոտի հայացքով նայեց այս առողջ ու պինդ մարդուն, որ այդպես խանդավառ էր գնում նահատակության, այդպես վստահ իր հնարած ճշմարտությանը, որ այդպես հեշտ էր լքում իր հարազատին, հանուն ինչ-որ խելացնոր գաղափարի, հանուն այնպիսի մի բանի, որ դուրս էր իրենցից, իրենց միապաղաղ ու ապահով կյանքից, իրենց միանման ու բախտավոր օրերից, քանի որ երջանկությունը նույն բնանկարի, նույն խոսքերի, նույն գործողությունների և նույն կահավորանքի մեջ է թաքնված լինում հիմնականում։ Եվ այդ երանելի միօրինակության մեջ նրանք երբեք գաղափարի կարիք չեն զգացել։ Էլ ի՞նչ գաղափար, եթե կուշտ ես ու երջանիկ։ Թող քաղցածներն ու դժբախտները գաղափար փնտրեն։ Կամ գուցե հենց նրա՞նք գաղափարի կարիք չունեն, գուցե հենց կշտությունից ու երջանկությունի՞ց են գաղափարները ծնվում։ Ինչ իմանար Փառանձեմը, որ երբ արքան հրամայեց նրանց հեռանալ Այրարատից ու բնակվել Աղիովիտում, և Գնելը սուսուփուս ենթարկվեց հրամանին, ինքը ոչ թե վախկոտություն պիտի տեսներ ամուսնու արարքի մեջ, այլ գաղափա՞ր, որից և պիտի ծնվեր դժբախտությունը։ Գաղափար, որ ոչ թե մարդու ետևից է գնում ստվերի պես, այլ առաջ ընկած։ Ոչ թե գաղափարը մարդու համար, այլ մարդը՝ գաղափարի։ Ու նա դիմեց իր վերջին զենքին, իր վերջին պաշարին, իր ատելությանը, իր արհամարհանքին։

— Մի՞թե դու չգիտես, որ բոլորը նախանձում էին քեզ, որովհետև դու ամուսնացել էիր Հայոց աշխարհի ամենագեղեցիկ կնոջ՝ Սյունյաց Անդովկ իշխանի աղջկա հետ...

— Ստում ես, Փառանձեմ... Դու երբեք այդպես չես մտածել քո մասին... Երբեք չես հավատացել դրան...— Գնելը տագնապի մեջ էր, որովհետև հետզհետե կորցնում էր իր ուժը, որովհետև հավատը խառնվում էր ընտանեկան վեճերի ու բախումների հետ և թուլանում, փոքրանում... Նա համոզում էր իրեն, որ Փառանձեմը ամոթով արտասանեց այդ խոսքերը, մեծ դժվարությամբ... Որ այդ անպատկառ

ինքնագովությունը մի տեսակ զոհողություն էր նրա կողմից, ինքնապաշտպանություն։— Ասա՛, ասա՛, որ դու քեզ չես հավատում, այլ ուրիշների խոսքին... Որ դրանով ես ուզում ինձ ետ պահել...

— Ոչ, Գնել, ես հիմա արդեն ինքս գիտեմ։ Ոչ թե ուրիշներին, այլ ինձ եմ հավատում։— Եվ չարագուշակ հանգստությամբ ավելացրեց.— Ես եմ Հայաստանի ամենագեղեցիկ կինը, երկրի առաջին տիկինը։

— Փառանձե՛մ...

Գնելն զգաց, որ սա արդեն կորուստ է։ Կորուստ է երկու թանկ բանի։ Կնոջ ու հավատի։ Հիմա նա ոչ մեկն ունի, ոչ մյուսը։

— Վերջին րոպեին, երբ զգաս դավը, դու կկորցնես քեզ, կմոռանաս սկզբունքներդ, կմնա միայն ատելությունը... Եվ որոշակի մարդու, արքայի հանդեպ... Դու այնքան ուժեղ չես, որ քո մոլեռանդ մտքերով մեռնես... Դու սիրո մեջ էլ բուռն էիր, բայց շուտ էիր հանգում...

— Փառանձե՛մ...

— Եթե քեզ սպանեն, ինչով ուզում ես երդվեմ... Մեր աղջկանով... Մեր սիրով... Մեր աստծով... Բոլոր սրբերով... Եթե քեզ սպանեն, ես կդառնամ այն զինվորի սիրուհին, որ քեզ վրա սուր բարձրացրեց... Ես կգտնեմ նրան... Եթե պետք լինի, ամբողջ կյանքումս կփնտրեմ... Խոտերի վրա կպառկեմ հետը... Ամենավերջին վարձակի պես... Ջեմ թաքցնի... Բոլորի աչքի առաջ... Միայն այդպես վրեժխնդիր կլինեմ քեզ... Բայց ինչո՞ւ զինվորի... Նա անմեղ է... Ես կգտնեմ գերագույն մեղավորին... Ես արքայի սիրուհին կլինեմ...

— Փառանձե՛մ...— Գնելը, քուրջի պես թուլացած, ընկավ ծնկների վրա, ափի մեջ առավ կնոջ պատմուճանի փեշը, սեղմեց ամբողջ ուժով, խեղճ ու անօգնական հայացքը հառեց նրան և ինչ որ ուներ-չուներ իր հոգում, դատարկեց, դուրս թափեց, շաղ տվեց նրա առաջ։— Հիշիր հարսանիքի օրը... Թագավորավայե՛լ հարսանիքը... Առաջին գիշերը... Քո թույլ հառաչանքը, որ անծանոթ էր երկուսիս էլ... Ու երբեք չկրկնվեց... Այն միակը, սուրբը... Որսը Նաղկաց լեռնե-

ռում... Երեների առատությունը... Ջրավետ անտառները... Եվ էլի հոգնած անկողինները... Գալարվող, թպրտացող մարմինները... Հեթանոս մեղքը... Զանգի ձայն ունեցող գիշերները... Մեղք, որ մեզ համար երբեք չդարձավ երկրային... Այն երանավետ, ազնիվ հոգնությունը, երբ «ես» և «դու» բաժանվում են իրարից, դառնում անկամ, անօգնական... Էլի համոզիր ինձ... Գոնե մի անգամ... Եթե մի անգամ էլ ինձ համոզես, եթե մի վերջին փորձ էլ անես, ես կերդվեմ բոլոր հին ու նոր աստվածներով, որ կմոռանամ և՛ իշխանություն, և՛ պարտք, և՛ միավորված հայրենիք... Կմոռանամ բոլոր երազները... Չի մնա ոչ մի արքա, ոչ մի կայսր... Եվ կասկա՛ծ, կասկա՛ծ... Շահապիվա՛ն... Կասկածի՛ քաղաք...

— Ուշ է, Գնել։ Դու չպիտի թողնեիր, որ ես քեզ լավ ճանաչեի։

Ապակե սափորի մեջ ձեթը վերջացել էր, ճրագը թուլացել, թուլացել ու հանգել։

Փառանձեմը նստել էր գետնին փռված բարձերի վրա։ Գնելը տեսնում էր նրան։ Կռահում նրա տեղը խավարի մեջ։ Գուշակում նրա դեմքը բարձերի վրա։ Օտար հայացքը։ Կախ ընկած մի ձեռքը։ Մաայլ, կեղտոտված մտքերը...

— Տաճատ, վառիր ճրագը,— չդիմացավ ու գոռաց Գնելը։

Մթությունն է՛լ ավելի խառնեց, խանգարեց նրա մտքերը։ Որովհետև հիմա ստիպված էր ավելին տեսնել։ Ավելի պարզ հասկանալ ամեն ինչ։

— Ինքդ վառիր ճրագը։

Չէր կարող։ Ուժ չուներ։ Եթե հանկարծ վառեր ու հանկարծ պարզվեր, որ անգամ մի չնչին մանրուք սխալ էր տեսել, այլ կերպ պատկերացրել, նա լրիվ կորած էր, լրիվ ոչնչացած։

Խավարի մեջ խարխափելով, նա գտավ կնոջը և գլուխը խեղճացած դրեց նրա ծնկներին։

— Գիտե՞ս ինչ եմ ուզում... Երեխայի պես հեկեկալ... Որ չայես գլուխս... Մխիթարես, որ ձիուց ընկնելը տղամարդու համար պետք է սովորական լինի... Որ ես փոքր եմ տակավին և դեռ շատ, շատ անգամ կընկնեմ... Քիթս արքա,

որովհետև հեկեկալիս քիթն անպայմա՞ն կվազի... Հանես շորերս, լողացնես, պառկեցնես անկողին և քնքուշ մատներով ծածկես վերմակը... Կոշտ է անկողինը, չես պատկերացնում որքան կոշտ է... Գիտե՞ս ինչու... Որպեսզի ես փոքրուց սովորեմ դրան... Եվ հասկանամ, որ աղնվական տղամարդուն անվայել է փափուկ տեղ քնել...— Արցունքներն առատ հոսում էին նրա աչքերից, խեղդում կոկորդը, պարպում, քամում նրա վերջին ուժերը։— Հիմա կին չկա ինձ համար... Չի կարող լինել... Կա միայն մայրական գգվանքի կարոտ...

— Ինձ համար արդեն միևնույն է, կգնաս, թե ոչ։

Այդ նախադասությունն ուղղակի դուրս թռավ նրա բերանից։ Նա կարող էր նաև այլ բան ասել։ Գուցեև կուզենար ասել։ Գուցե նույնիսկ շա՛տ կուզենար։ Եվ նորից ամեն ինչ կարգի կընկներ։ Նույն բնանկարը, նույն խոսքերը, նույն գործողությունները, նույն կահավորանքը, ամեն ինչ առաջվա պես, միօրինակ ու երջանիկ, միապաղաղ ու ապահով։ Բայց չասաց։ Չասա՛ց, չասա՛ց։ Չասա՛ց այն, ինչ հոգին էր թելադրում, այլ՝ ինչը որ անհրաժեշտ թվաց, հարմար երևաց այդ պահին, ակնթարթի պահանջը բավարարեց, սիրտը հովացրեց։ Եվ ժամանակին չասված մի նախադասության, ժամանակին չարտասանած մի քանի բառերի պատճառով փոխվեց, շուռ եկավ նրանց կյանքը, նրանց հետ միասին՝ նաև արքայի կյանքը, նաև բոլորի, նաև երկրի...

Գնելը շանթահարված վեր ցատկեց տեղից, ընկրկեց մի պահ, ու խավարը, խավարը, միա՛յն խավարը նրան մղեց հարձակվելու կնոջ վրա և հուսահատ կատաղությամբ համբուրելու նրան, ուր որ պատահի։ Փառանձեմն ամբողջ ուժով դիմադրում էր, իսկականից էր դիմադրում, ինչպես օտար ու բիրտ մի տղամարդու։ Նրանք շնչասպառ թավալվում էին գորգերի վրա, ցավ պատճառում իրար, վայրագորեն պատառոտում միմյանց շորերը, վիրավորական խոսքեր շպրտում իրար հասցեի։ Ու եկավ մի պահ, երբ Փառանձեմի ուժերն ապառվեցին, կամավո՛ր սպառվեցին, և նա արդեն փորձ չարեց մի անգամ էլ ճիգ թափելու, թեև դեռ կարող էր ի մի հավաքել մարմնի խորքերում թաքնված վերջին ուժերը։ Իսկ

Գնելի ուժը մեծացա՜վ, ավելացա՜վ, և աշխարհում այլևս ոչինչ չկար, որ ուզենար դիմանալ ու դիմադրել նրան։ Կոպտության ու բռնության երթը հաղթեց, սրբեց ու տարավ ամեն ինչ։ Դարձավ սիրելի ու ցանկալի։ Կարծես շեփոր փչեց խավարի մեջ կորած լեռների ու անտառների վրա։ Լռություն տիրեց մի պահ, ու արձագա՜նք լսվեց չորս կողմերից։ Եվ այդ գիշերվա պես ալեկոծ ու խելահեղ ուրիշ ոչ մի գիշեր նրանք ոչ ունեին, ոչ էլ ունեցան իրենց ամբողջ կյանքում։ Իսկ երբ մթության մեջ ուրվագծերը անջատվեցին միմյանցից և վերադարձան առարկաներին, երբ առարկաներն ստացան իրենց վաղեմի ու հաստատուն անունները, նրանք զգացին, որ է՛լ ավելի օտարացել ու հեռացել էին իրարից։

Գնելն արագ դուրս եկավ խորանից, նստեց իր մոխրագույն ձին և գնաց, ձուլվեց խավարին։

Գլուխ ութերորդ

Ես զգացի մահվան սուր հոտը, Արշակ։ Դավադրություն է սա, ոչ մի կասկած։ Ստոր, նենգ դավադրություն։ Նրանք, հայոց թագավորները, սովոր են ոչխարի հավատով գնալ օտար հրավերների և խնջույքի թեժ պահին զարմացած մեռնել։ Եվ հիմա, արյան մեջ նստած կեղտոտ բնազդով, ուզում են իրենց ցեղի դարավոր վրեժը լուծել, իմ հաշվին իրենց իշխանությունը հաստատել։ Ուզում են, որ Գնել իշխանն էլ սատկի զարմացած աչքերով...

Ներիր, Փառանձեմ, որ այդ ահավոր, այդ հուսահատ հայտնությունը հանկարծ մտրակեց ինձ և ցանկություն ծնեց իմ մեջ... Պատառոտել քո զգեստները... Ցավ պատճառել քեզ... Նվաստացնելով տիրել... Ինչպես իսկական տղամարդ... Ինչպես ամենահետին ռամիկ... Որպեսզի նորից հառաչանք լինի... Եվ նորից զնգա, և նորից մեխվի օդում...

Մնաս բարով, հայոց թագավոր... Թող չենանա, հզորա-

նա քո երկիրը... Թող ժողովուրդդ սովորի թագավոր ունենալ... Թող արժանի լինի դրան...

Մնաս բարով, Փառանձեմ... Ներիր ավելի և պակասի համար... Ես գիտեմ, դու մի պահ նորից ինձ սիրեցիր... Իսկականից սիրեցիր... Իմ անասնական ցանկությունը այլ կերպ հասկացար... Գնահատեցի՛ր... Դու իմ մեջ հայտնաբերեցիր ճշմարիտ տղամարդու... Եվ դա դուր եկավ քեզ... Քո գործն է... Աստված միշտ քեզ հետ... Երջանիկ եղիր առանց ինձ... Եվ քեզ հետ միասին թող երջանիկ լինեն ամենքը, նույնիսկ իմ թշնամիները, որոնց ես ներում եմ և որոնցից ինքս էլ եմ ներում խնդրում...

Իսկ ես ազատվեցի քեզնից, իմ մեծ սիրուց, իմ պարտքից, իմ դաստակերտից, իմ ձիուց, իմ հայրենիքից... Ազատագրման տոն է այսօր... Մնաս բարո՛վ, Գնել...

Ձին և մարդը, մի սիրտ, մի մարմին դարձած, թռչում էին միասին, ճեղքելով լուսնից նոսրացած, ցնցոտու պես ծվեն-ծվեն եղած խավարը։ Ձին չէր զգում մարդու ծանրությունը։ Մարդը ևս իր ծանրությունը չէր զգում։ Եվ իրար ձուլված, իրարից ոգևորվելով, նրանք սուրում էին առաջ, կիսամութից կիսամութ անցնելով։ Հայտնի չէ, թե ով էր ում տանում։ Ու այդ խելահույզ արագությամբ նրանք իրենց ազատագրումն էին փառաբանում։ Ձին կարծես գնում էր միանալու իր վայրի ցեղակիցների երամակին, գնում էր իր նախկին վիճակն ստանալու, նորից ձի դառնալու, իսկական, չընտելացած, չդաստիարակված, չթամբված ու չսանձված։ Մարդը ևս գնում էր իր ցեղակիցներին որոնելու, իր նախնական վիճակը վերագտնելու, նորից մարդ դառնալու, ապրելու բախտից հալածվածների հետ, պայքարելու մի կտոր հացի համար, պնդելու իր գոյության իրավունքը, կյանքում առաջին անգամ սեփական ուժերով իր տունը հիմնելու...

Դաշտն արձակ էր, օդը՝ հրաշալի, ջուրը՝ զուլալ, երկիրը՝ հանգի՛ստ, խաղա՛ղ, աշխարհը՝ այնքան լայն ու մեծ, որ

չէր կարող լինել ոչ մի դավադրություն, ոչ մի ստորություն, նույնիսկ ոչ մի դժբախտություն։ Նա համոզված էր դրանում, կուրորեն հավատում էր դրան և այս համոզմանը հանգել էր... այդ ամենից փախչելու գնով։

Արջաղբյուր տանող ճանապարհին, որտեղ արջի ոտնահետք չի եղել երբեք, ինչպես որ ջուր չի եղել Ջրաշատում, անտառ չի եղել Անտառամերձում, առյուծ չի եղել Առյուծ լեռան մոտերքում, եղել են միայն կարոտներ ու ձգտումներ, բախտից խռովումներ ու դժգոհանքներ, մի պատանի էր սպասում Գնելին, նույն կազմվածքով, նույն հասակով և նրան հիշեցնող դեմքով։

Պատանին ձին կապել էր ծառին և ջանասիրությամբ նրա կեղտերն էր մաքրում ճանապարհից։ Ճանապարհ ասվածն էլ մի հսկա դաշտ էր, անսկիզբ և անվերջ։ Նա կեղտը մի տեղից պարզապես տեղափոխում էր մի ուրիշ տեղ։ Նպատակի ահավոր բացակայություն կար նրա գործողությունների մեջ։ Մինչև այդ նա նույն ջանասիրությամբ մաքրել էր իր և ձիու շրջակա տարածությունը, քաղել մոլախոտերը, հավաքել քարերը և դարսել քիչ հեռվում...

Գնելը կանգնեցրեց ձին, ցած թռավ և մոտեցավ ծառային, որը հոգնած էր, քրտինքի մեջ կորած, բայց գոհ ու վաստակած։ Նրանք նախօրոք պայմանավորվել էին հանդիպել Արջաղբյուրի ճանապարհին։ Թեև Գնելը վստահ էր, որ աշխարհում չկա մի ուժ, որ կարողանար իրեն ստիպել արքայի հրամանին չենթարկվելու, բայց և այնպես հոգու խորքում գիտեր, որ այդպիսի ուժ, այնուամենայնիվ, գոյություն ունի։ Վա՜խը։ Միայն վախն է, որ կարող էր ոտնատակ անել ամեն տեսակի համոզմունք ու գաղափար, կարող էր մի ակնթարթում փշրել դրանք, հողմացրիվ անել, մարդուն թշնամացնել իր հավատի հետ և դառնալ նրա միակ վստահելի բարեկամն ու խորհրդատու։ Եվ նա չէր քաշվում, չէր ամաչում իր վախից, որովհետև հիմարներն են միայն, որ վախենալ չգիտեն, երևակայությունից ու մտածելու ընդունակությունից զուրկ մարդիկ։ Նույնիսկ քաջության ու խիզախության համար մի քիչ վախ է պետք, որպեսզի սխրագործությունը էլ ավելի ազնվանա, էլ ավելի մարդ-

կայնանա, որպեսզի այլևս ոչ ոքի չթվա, թե հերոսություն գործելը ընտրյալներին է միայն վիճակված։ Թող աստված նվազեցնի այն մարդկանց թիվը, ովքեր անմտորեն իրենց գցում են թշնամու փղերի ոտքերի տակ։ Այդ նրանք են սեփականացրել հերոսությունը, անմատչելի դարձրել, բարձրացրել նրա գինը։ Նա հիմա սիրում, փայփայում էր իր վախը, որը նրան հարկադրում էր ապրել, նորովի ընկալել այս աստղազարդ ու ծամծմված երկինքը, ձիու սմբակների գլխահան անող գոփյունը, գիշերվա հավիտենական գաղտնիքը, գոյության ցնծությունը։ Եվ եթե մինչև այժմ նա աշխարհը սիրում էր այնպես, ինչպես կցանկանար այն տեսնել, ապա հիմա սիրում էր՝ ինչպես որ կար։ Այս կատարյալ հաշտությունը կյանքի տոնն էր, կյանքի սաղմոսը, ապրելու ճիշն ու աղաղակը։

— Գիտե՞ս ինչու եմ կանչել։

— Այո, իշխան։

— Ապա ասա։

— Ես պետք է ծպտվեմ և առավոտ վաղ քո փոխարեն ներկայանամ Շահապիվան,— զարմանալի անկիրք պատասխանեց նա։— Որպեսզի կիսամութի մեջ չճանաչեն ինձ։ Եվ նրանք պետք է ինձ սպանեն։

Գնելը ցնցվեց։ Նա խստիվ կարգադրել էր իր դայակին, որ ճշմարտությունը թաքցնի նրանից։ Տաճատը ոչ մի դեպքում չպետք է իմանար, որ սպանվելու է դեռ Շահապիվան չմտած։ Ահա և յուրայինի, մտերիմ մարդու՝ դայակի առաջին դավաճանությունը։ Կարելի էր արդեն զանց անել իշխանի կարգադրությունը, քանի որ նա այլևս իր տերը չէ։ Երևի հիմա, գոնեդուռ ընկած, նոր տեր է փնտրում իր համար, նոր սանիկ։ Թքա՛ծ։ Ես քեզ էլ եմ ներում և քեզնից էլ ներում խնդրում, որ ակամա առիթ եմ տվել զավաճանելու ինձ։

— Ո՞վ է քեզ այդ հիմարությունն ասել,— զարմացած ձևացավ Գնելը։— Սա կատակ է։ Ամանորի կատակ։ Ես ուզում եմ զվարճացնել իմ ընկերներին։

— Ոչ, իշխան,— հարգալից նրան ժխտեց Տաճատը։— Ինձ սպանելու են։

— Այդ դեպքում... ինչո՞ւ ես եկել,— ապշեց Գնելը և կրկնեց հարցը, որպեսզի հարցի միջոցով ինքն էլ ինչ-որ բան հասկանա։— Եթե գիտես, էլ ինչո՞ւ ես գնում մահվան...

— Որովհետև եթե չգնամ, քեզ են սպանելու,— պատասխանեց Տաճատն այնպիսի սպառիչ տոնով, որ Գնելը ևս մի պահ իրավացի համարեց նրա համոզմունքը. իսկապես, ի՞նչ կա զարմանալու, մի՞թե տերը չի հասկանում, որ նրա կյանքն ավելի թանկ արժե, քան իրը։

Գնելը սկսեց հանվել։ Հանեց իշխանական պատմուճանը և մնաց վտավակով, առաջին հանդերձը, որ կրում են մերկ մարմնի վրա։

—Ահա և քո տերը,— դառը քմծիծաղ տվեց նա։

Տաճատը մի պահ, առանց հետաքրքրասիրությունը թաքցնելու, ակնապիշ նայում էր կիսամերկ տիրոջը։

Վտավակն իջնում էր մինչև ծնկները և դաստակների մոտ զսպվում երիզաձև հավելվածով..

Տաճատը չկամությամբ աչքը հեռացրեց տիրոջից, հանեց պարեգոտը և մնաց քաթանե կոշտ ստորնակը հագին։

Գնելը, նույնպես, հետաքրքրասիրությամբ զննեց նրան, կարծես ճգնելով կռահել, թե կարո՞ղ է արդյոք փոխարինել իր ծառային։ Կարո՞ղ է արժանավայելությամբ փոխ առնել նրա աղքատությունը, դժբախտությունը, ձախորդությունը, նվաստացումը։ Թնկուզև ներքնազգեստի՝ խնամքով ու բծախնդրությամբ կարված այս կարկատանը։ Ունի՞ այդքան ուժ, թե՞ չունի։ Ուսերը կդիմանա՞ն, թե՞ կծռվեն։ Եվ այդ ամենը՝ իր խղճուկ երջանկության և ապահովության դիմաց։

Գնելը սրթսրթում էր լուսնի լույսի տակ։ Ցուրտը վերացրեց նրա փուչ եռանդը։ Եվ, այդպես մերկ, նա շատ դժբախտ զգաց իրեն։ Նա սիրում էր Փառանձեմին։ Վախենում էր արքայից։ Կարոտում էր իր անցյալը։ Ատում էր իր ազատությունը։

Նա արագ հանեց վտավակը, չնայած դա չէր մտնում ծրագրի մեջ։ Տաճատը ևս մեքենաբար հետևեց նրան ու գլխից քաշեց ստորնակը։ Հիմա երկուսն էլ լրիվ մերկ էին։ Դե եկեք ու ջոկեք, աշխարհի գիտուններ, իմաստասերներ,

փիլիսոփաներ, եկեք ու չոկեք, թե ով է մեզնից տեր և ով է ծառա։ Մեր կյանքի ամենաազնիվ պահն է սա։ Մենք հիմա ենք միայն հավատացյալ։ Հիմա միայն կարող ենք աղոթել։ Եվ մեր աղոթքը միայն հիմա կհասնի աստծուն։

Նրանք փոխանակեցին ներքնազգեստները, թեև հագուստը կարծես պետք է բավական լիներ, որ դերերը միանգամից փոխվեին։ Մինչդեռ նոր դերի մեջ մտնելու համար կարևորը ոչ այնքան հագուստն էր, որքան այն, ինչ անմիջականորեն մարմնին էր կպչում։

Տաճատի ստորնակը հագնելուց հետո, անծանոթ հոտից ու շփումից, անծանոթ կենսագրությունից ու ճակատագրից խտուտ եկավ նրա մարմինը և թվաց, թե նոր մկրտություն էր դա։ Ու նա հասկացավ, որ ազատությունն անխուսափելի էր։

Նա նորից քմծիծաղ տվեց, որովհետև քիչ առաջվա իր մտորումները բնավ Տաճատի օգտին չէին, այլ մի տեսակ մեղմացնում էին իրեն սպասող ապագան, մխիթարում, ցավազերծում, թմրեցնում...

— Տաճատ, քեզ իսկապես սպանելու են, իմացիր։

— Գիտեմ, իշխան։

— Գլխատելու են։

— Գիտեմ, իշխան։

— Իսկ ինչո՞ւ չես փախչում։

— Ես քո ծառան եմ, իշխան։

Այդ խոսքերն այնքան անկիրք հնչեցին, որ անհնար էր չհավատալ։ Եվ ինչո՞ւ չհավատալ։ Չէ՞ որ դրանք չարագուշակ կերպով կրկնում էին այն, ինչ ինքն էր սիրում պնդել։ Գնելն ու նրա ծառան ինչ-որ տեղ հավասար էին։ Երկուսն էլ հնազանդությունը դարձրել էին իրավունք։ Երկուսն էլ նվաճել էին հնազանդության իրավունքը։ Եվ պնդում էին այդ իրավունքի վրա։

Նա ծիծաղում էր այսօրվա իր տանջալի տատանումները հիշելով, երբ ամեն ինչ թվում էր անքակտելի կծիկ, տիեզերական անլուծելի մի հարց։ Մինչդեռ կար պարզագույն ելքը, որ հաճախ մտքովդ էլ չի անցնում, բայց որին կարող ես հասնել միայն մեծագույն տառապանքով. չգնալ, չխաբվել,

չնահատակվել... փախչել... Բայց սա չի փախչի, չի գտնի պարզագույն ելքը. չի իմանա, թե որքան հեշտ է ամենահասարակ լուծման հանգելը։ Որովհետև Գնելը ստորաբար դժվարացրել էր դրան հասնելու ճանապարհը։ Նրան զրկել էր ստոգապանքից։ Հենց սկզբից էր հուշել։

— Կկռվես, հերոսաբար կկռվես, չթողնես, որ քեզ միանգամից շանսատակ անեն։ Զարատավորես իմ անունը։

— Մի մտահոգվիր, իշխան։

— Վատ բան է մեռնելը։ Դա էլ գիտե՞ս։

Ամեն ինչ ինքը պետք է ասի։ Ամե՛ն ինչ։ Եվ հենց սկզբից։ Միայն թե չթողնի, որ այդ մտքերը Տաճատի գլխում ծնվեն։ Չթողնի, որ նա ինքնուրույն հասնի դրանց։

— Կիմանամ, իշխան։ Հորս մահն եմ տեսել։ Մորս էլ։ Թույլ տուր գնամ։

— Հիմա դո՛ւ ես իշխանը։ Մոռացիր, որ ծառա ես։ Այլևս երբեք չհիշես։

— Գիտեմ, իշխան։

— Դեմքիդ գույն չկա։ Դու պետք է ազատվես քո վախից։

— Չեմ կարող, իշխան։

— Կարո՛ղ ես։ Ես ինքս կազատեմ։

— Թույլ տուր գնամ, իշխան։

— Մի՛ ասա իշխան։

— Չեմ ասի, իշխան։

— Ապտակիր ինձ,— հանկարծ հրամայեց Գնելը։

— Չեմ կարող, իշխան,— այլայլվեց Տաճատը։

— Հրամայում եմ, ապտակիր։

— Չեմ կարող... Մի ստիպիր... Չեմ կարող, իշխան...

— Ուրիշ ճար չունենք, Տաճատ։ Ապտակի՛ր։

— Ի սեր աստծո, թող գնամ...— ծնկի չոքեց Տաճատը։— Եթե քեզ խայտառակ չեմ անի... Ամոթով չեմ թողնի...

— Ես քեզ հավատում եմ։ Լրիվ վստահում եմ։ Բայց դու չեղ դիմանա, Տաճատ։ Վերջին պահին ետ կփախչես։— Նա ձեռքը տարավ նրա օձիքին և բռնի ուժով վեր բարձրացրեց։— Վախը կդավաճանի քեզ։

— Մի արա, իշխան... Մի ստիպիր...— Աչքերում ար-

ցունք երևաց և գլորվեց այտից։— Չե՛մ կարող... չե՛մ կարող... չե՛մ կարող...

— Ապո՛ւշ։ Ապտակիր ասում եմ։

Տաճատը, հարկադրված, դանդաղ բարձրացրեց ձեռքը, որն այդպես էլ մնաց օդից կախված։

— Ապտակի՛ր,— կատաղած գոռաց Գնելը։

Գնելի դեմքին մի չառաչուն ապտակ իջավ։ Ավելի զորեղ, քան Տաճատի ուժը կպատեր։ Ուրեմն, ուժ չէր դա, այլ դարձյալ վախ։ Վախից ծնված ուժ, որ գերազանցեց տիրոջ հնարավորությունները։

Գնելը ձեռքը տարավ ցավից այրվող երեսին և ժպտաց։ Ժպտաց նաև Տաճատը։ Երկար ու ապշահար մի ժպիտով։

Նրանք կանգնել էին դեմ-դիմաց և նայում էին իրար մի տեսակ մտերմաբար, համակրանքով և խոր կարեկցությամբ... Տաճատը՝ իշխանական զգեստով, Գնելը՝ ծառայի...

Նրանք համակրում և կարեկցում էին իրար, որովհետև երկուսին էլ թվում էր, թե խաբել են միմյանց։ Գնելն իր փոխարեն Տաճատին էր ուղարկում մահվան։ Ինչպե՞ս չհամարի, որ խաբել է նրան։ Իսկ Տաճատը Գնելին էր հանձնում իր դառն ու մռայլ անցյալը. իր քաղցած օրերը, իր կրած անհաշիվ նվաստացումները, իր անուրախ հուշերը, իր փուչ երազները, իր ամբողջ չարքաշ կյանքը։ Էլ ինչպե՞ս մտքով չանցնի, որ խաբել ու հիմարացրել է տիրոջը...

Գնելը, առանց օրևէ խոսքի, շրջվեց և ուղղվեց դեպի Տաճատի ձին։ Սկսեց քանդել կապը։ Ինչո՞ւ էր Տաճատն իր փոխարեն գնում մահվան. նորից հարց տվեց իրեն Գնելը, թեև խնդիրը կարծես սպառված էր արդեն։ Որովհետև տիրոջ կյանքը ավելի թանկ է, քան ծառայինը։ Պարզ, հասկանալի բացատրություն։ Մեկը տեր է, մյուսը՝ ծառա։ Ցերեկվա ու գիշերվա պես անժխտելի բաժանում։ Շոգի ու ցրտի հակադրության պես երկաթյա տրամաբանություն։ Բայց եթե նա ապտակեց տիրոջը, արդյոք չի՞ նշանակում, որ դրանով իսկ անցավ ինչ-որ սրբազան սահման և հայտնագործեց, որ թեկուզ տեսականորեն, թեկուզ վերացականորեն հնարավոր է տիրոջը ապտակել։ Այդ միտքը անցավ նրա գլխով, ի՞նչպես անցավ։ Նրա միջից որոշակի մի վախ հա-

նելով, ստիպելով նրան իր ծագումը մոռանալ և գոնե մի քանի ակնթարթ իշխան զգալ իրեն, Գնելը արդյոք չվերացրե՞ց ընդհանրապես վախի զգացումը տերերի հանդեպ։ Նա փաստորեն հակառակ արդյունքի հասավ։ Տաճատը, խախտված տեսնելով տիրոջ և ծառայի իր հաստատուն պատկերացումները, կարող է պարզապես ետ դառնալ կես ճանապարհից և դեռ մի լավ էլ խնդալ տիրոջ քթին։

Գնելը շրջվեց և տեսավ, որ Տաճատը, օգտվելով կարճատև պահի առիթից, աչքից վրիպած մի քար գաղտագողի վերցրել էր գետնից, որպեսզի տանի և դնի իր հավաքած քարակույտի վրա։

Նա գործնական քայլերով մոտեցավ Տաճատին և մի ուժգին ապտակ հասցրեց նրա երեսին։

— Որպեսզի այլևս երբեք չհամարձակվես ձեռք բարձրացնել տիրոջդ վրա,— լուրջ և հանգիստ բացատրեց նա։

Աշտանակեց ձին ու արագ հեռացավ, դաշտի մեջտեղում, լուսնի հետ, մենակ թողնելով անակնկալից ապշած Տաճատին, որը մինչև հիմա գոնե գիտեր, թե ինչ պիտի աներ ձեռքի քարը։ Իսկ հիմա արդեն այդ էլ չգիտեր։

Գլուխ իններորդ

Այս ի՞նչ է պատահել միջահասակ, թխադեմ և արծվաքիթ հայերի երկրում։ Այս ի՞նչ իրարանցում է։ Ո՞ւր են մրջյունների պես վազվզում հայերը, ի՞նչ են անում այսպես միասին։ Կռվի ժամանակ հաճախ են նրանց միավորված տեսել վտանգից առաջ, բայց խաղաղ օրերին՝ երբեք։ Ամեն մի հայ ունեցել է իր փոքրիկ թագավորությունը, իր գետնափոր տունն ու բազմանդամ ընտանիքը, իր կովն ու ոչխարը։ Եվ ամեն մի հայ համաձայն չի եղել մյուսի կարծիքին, այն էլ՝ նախօրոք, նախքան այդ կարծիքն իմանալը։ Ամեն մի հայ համարել է, որ մյուսը սխալ է ապրում ու դատում։ Այդպես է մտածել ոչ միայն ամեն մի առանձին հայ,

այլև գյուղը գյուղի մասին, գավառը գավառի մասին, ամբողջ երկիրը հարևան երկրների մասին։ Բայց արի ու տես, որ հարևաններն էլ նույն ձևով են ապրել ու մտածել, միայն թե հայերը, ի տարբերություն նրանց, շատ են խոսել իրենց թերություններից, դժգոհել, ծաղրել իրենք իրենց և նրանց անունն է դուրս եկել միայն... Բայց և այնպես ինչո՞ւ միավորվեին, հանուն ինչի՞, քանի որ թշվառությունն ու դժբախտությունը կարող են սոսկ բաժանել մարդկանց։ Ուրեմն, ինչ-որ բան փոխվել էր։ Բայց ի՞նչ էր փոխվել։ Երևի երջանկության հոտ էին առել հայերը։ Սակայն ով է լսել, որ երջանկությունը համատարած լինի և բաժին հասցնի բոլորին։

Նոր քաղաք էր կառուցվում Հայաստանում։

Ոչ մի քաղաք հայերը դեռևս չեն կառուցել այսպիսի թափով ու եռանդով, միշտ իմացել են գլուխ պահելու կերպը, երկար դատողություններ են արել, ծուլորեն վիճաբանել, հանդարտ քննարկել, թե ինչը կարագացնի աշխատանքը, ինչը կմեծացնի շենքի ամրությունը, միայն թե քիչ գործ անեն և ժամանակ ձգեն, ոչ մի զրկանք չեն տարել այսքան անտրտունջ, երբեք հայն այսքան հավատ ու երազ չի ունեցել, երբեք այսքան չի սիրել իր ազգակցին, երբեք այսքան չի օրհնել իր արքային։ Որովհետև մինչև հիմա կառուցել է ուրիշի համար, իսկ այժմ իր սեփական քաղաքն է հիմնում։ Արքայի անունը կրող, բայց իրեն պատկանող։

Հազարավոր ձեռքեր, բնավորություններ, խառնվածքներ, հազարավոր կենսագրություններ ու ճակատագրեր, երկրի զանազան ծայրերից եկել, միավորվել էին, որպեսզի մի ընդհանուր ճակատագիր գտնեն։ Տասնյակ սովորություններ ու բարքեր, միևնույն հնչյունի տարբեր արտասանություններ, միևնույն առարկայի տարբեր անվանումներ, տարբեր բնանկարների սովոր աչքեր, տարբեր տարազներ ու տարբեր երգեր խառնվել էին միմյանց, որպեսզի աստիճանաբար կազմավորեն ապրելու միասնական մի ձև, ստեղծեն մի նոր բարքաս, ընտելանան նոր բնանկարի, հագնեն նույն տարազը և նույն երգերը երգեն։

Կառուցվում էր Արշակավան քաղաքը։

Քաղաքի շուրջը ցանկապատ էր քաշված, որ խորհրդա-

նշում էր Արշակավանի սահմանները։ Երբեք ազատությունն ու երջանկությունը հայաստանցու համար չեն եղել այսքան շոշափելի ու որոշակի, համենայն դեպս՝ այսքան տեսանելի։ Տարօրինակ էր, նույնիսկ մարդու մարմնով մի տեսակ դող էր անցնում, մի տեսակ սարսուռ, երբ ընդամենը մի քայլի վրա պարզորոշ սահմանազատվում էին չարն ու բարին։ Ասես անդրկողմյան աշխարհի դռներն էին իրար ետևից բացվում և պարզ ու մատչելի լեզվով բացատրում կյանքի առեղծվածը, աշխարհի գաղտնիքները վերածում մանկական նկարների, երկրաչափական ձևերի, մոմատախտակի վրա գրված հասարակ ու միավանկ բառերի, և ահա ևս մի դուռ, ևս մի պահ, ու մարդիկ կհասկանան, թե ինչո՞ւ են ապրում և ինչո՞ւ են տառապում։ Նրանք գալիս էին խմբերով և Արշակավան մտնելուց առաջ, ինչպես հին և անպետք լաթ, ինչպես շորերին նստած փոշի, սահմանից այն կողմ էին թողնում իրենց դժբախտ անցյալը, իրենց կրած զրկանքները, անթիվ ու անհամար նվաստացումները, քաղցած գիշերները։ Ու դրանք ևս, ցանկապատի առկայությամբ, թվում էին նույնքան տեսանելի, կարծես սահմանագծի ետևում իրար վրա կուտակված լիքը դժբախտություն կար, որից ծանր ու ահաճ հոտ էր գալիս, միզահոտ հիշեցնող...

Մի մարդ, որ մեծագույն դժվարություններ ու փորձանքներ հաղթահարելով, հասել էր Արշակավան և ուրախությունից չէր հավատացել աչքերին, կանգնել էր մի ոտքը ցանկապատից այս կողմ, մյուսը՝ այն։ Կանգնել էր երկար, ինքն իր մեջ ամփոփված, ինքն իր հետ առանձնացած, առանց բանի տեղ դնելու անծանոթ շրջապատի միահամուռ ծիծաղն ու ծաղրական բացականչությունները։ Հետո, հեռացել էր ցանկապատից և ինքն էլ լիաթոք ծիծաղել մյուսների հետ միասին։

Ցանկապատը ցածրիկ էր, տեղ-տեղ փայտից սարքված, տեղ-տեղ՝ քարից, տեղ-տեղ՝ հողաթմբից, տեղ-տեղ էլ հատուկ փոսեր էին փորված։ Մի քանի ասպարեզը մեկ մի զինվոր էր կանգնած, որ հսկում էր քաղաքի սահմանները։

Ամեն օր հարյուրավոր փախստականներ էին գալիս։ Գալիս էին տանջված ու չարչարված, տասնյակ վտանգներից

ճողոպրած, կյանքները մի-մի բարակ թելից կախված։ Ոմանք, ցանկապատը անցնելուն պես, հոգնածությունից փուլ էին գալիս գետնին. կծկվում ու քուն մտնում, քնի մեջ զարդարելով ու գունավորելով դեռևս չըմբոշխնած իրենց բերկրանքը։

Իսկ շատերն իրենց հետ բերում էին հարազատների դիակները։ Այդ նրանք էին, ովքեր ճանապարհին հանդիպել էին զինվորների ու կռվի բռնվել նրանց հետ։ Եթե հաղթում էին, զոհված եղբոր, կնոջ կամ զավակի դիակները կարողանում էին բերել իրենց հետ, երկարացնելով փախուստի օրերը և ավելացնելով վտանգների թիվը։ Զարմանալի արժանապատվությամբ ու արիությամբ էին բերում դիակները, լուրջ դեմքերով, առանց մի կաթիլ արցունքի, մի կարևոր, շատ կարևոր բան անելու խոր գիտակցությամբ։ Եվ տեղ հասցնելուց հետո թաղում էին այնպիսի լռությամբ, այնպիսի զսպվածությամբ, որ մի տեսակ սոսկում էր առաջանում շրջապատի մեջ։

Իսկ եթե կռիվը անհավասար էր լինում, ստիպված լքում էին իրենց վիրավոր կամ մեռած մերձավորներին ու փախչում, աչքերը ետևում թողած։

Արշակավանը դեռ չէր կառուցվել, բայց արդեն գերեզմանոց ուներ։

Փախուստի դիմած մարդկանցից շատերը ճանապարհին կորցրած էին լինում իրար և, Արշակավան գալուն պես, փնտրում միմյանց։ Բայց որտեղի՞ց կգտնես քո համասերմին այս հսկա խառնարանում, հոգնությունից ու քաղցից միանման դարձած ամբոխի մեջ։ Օր ու գիշեր, քուն ու դադար կորցրած, ման էին գալիս, հարցուփորձ անում սրանց-նրան, շարունակում դեգերել ու ոտքի տակ ընկնել։ Սկզբում կարեկցում էին նրանց, սրտանց օգնել ցանկանում, բայց այնքան էր շատանում փնտրողների թիվը, որ ի վերջո դժբախտությունը սովորական դարձավ և նույնիսկ ձանձրալի։ Մի քանիսը միայն, ովքեր երջանիկ աստղի տակ էին ծնվել, ամիսներ անց պատահաբար հանդիպում էին իրենց կորած արյունակիցներին և ուրախության արցունքներից ու ջերմ ողջագուրումներից հետո, արդեն որպես իսկական

արշակավանցի, հպարտությամբ մտածում, թե ուրեմն որքան մեծ է իրենց քաղաքը։

Փախստականների թիվն այնքան էր շատանում, որ կարծես ամբողջ երկիրն էր ուզում տեղավորվել այս մի կտոր հողի վրա, Հայաստանը վերածել քաղաքի, կամ որ ավելի ճիշտ է՝ անընդհատ ընդարձակել քաղաքի սահմանները և քաղաքը վերածել երկրի։ Եվ, իսկապես, հետզհետե լայնանում էին Արշակավանի սահմանները, քաղաքն օղակող ցանկապատը ամիսը մեկ քանդում էին և տեղափոխում ավելի հեռու։

Արքունիքն ամեն օր Արշակավան էր ուղարկում տասնյակ սայլեր, որոնք բեռնված էին գերաններով, կավով, ավազով, քարով և առատ ուտելիքով։ Ոչինչ չէր խնայվում արքայի քաղաքի համար։ Եվ փախչելու սիրտ չարած շինականներն ու ռամիկները մի տեսակ սիրով էին տալիս իրենց հարկերը, հաստատ համոզված, որ դրանց որոշ մասը բաժին կհասնի այն խիզախներին, ովքեր իրականացրել են ուրիշների երազները։

Երկրի բոլոր անկյուններում Արշակավանի անունն էր ալիքի պես տարածվում, մտնում գետնափոր տները, ծվարում շինականների՝ քթների տակ մռմռացող երգերի, լուռ հայացքների ու անսպասելի հոգոցների մեջ։

Ճանապարհները վխտում էին զինվորներով, որոնք կասկածանքով էին նայում բոլոր նրանց վրա, ովքեր երկու ոտք ունեն և քայլել գիտեն։ Երկրի կապերը խզվել էին, ոչ ոք հյուր չէր գնում հարևան գավառում ապրող իր ազգականին, ոչ ոք ձեթ չէր տանում ցորենով փոխանակելու, ձեթի ավելցուկը մնում էր և հաց չէր դառնում, հարս չէին բերում կողքի գյուղերից, չէին արածեցնում տխուր աչքերով անասուններին, ամայացել էին ճամփաները, ոտնահետքերը ջնջվել, անտառի գազաններն անվախ դառել, գոմեշներն ու ձիերը, եզներն ու ջորիները անգործության մատնվել ու լխկել։

Կասկած էր ընկել երկրում։ Կասկածում էին բոլորին։ Կասկածում էին բոլորին։ Օդը լցվել էր փոխադարձ անվստահությամբ, կարծրացել ու անշարժացել։ Տերերն ամեն օր հանցավորների էին փնտրում ոչ միայն ճանապարհներին,

ոչ միայն հանցանք գործելու, փախչելու պահին, այլև տներում, որտեղ մարդիկ առանձնանում են իրենք իրենց հետ, փողոցում հենց նոր հանդիպած երկու շինականի կարճատև բարևի կամ որևէ անորոշ տեղից լսված երգի մեջ, որ հին օրերի սովորության ուժով հնչում էր մի պահ, ապա, ինքն իր ձայնից վախեցած, լռում։

Ավելի կարևոր էր դառնում գտնել ոչ թե այն մարդկանց, ովքեր արդեն փախուստի ճամփա են բռնել, որովհետև դա անհամեմատ հեշտ էր, այլ նրանց, ում մտքով անցնո՛ւմ էր փախչելու գաղափարը, ով լուռ մտածո՛ւմ էր այդ մասին, անկախ այն բանից, կիրագործի՞ դա, թե՞ ոչ։

Եվ ծաղկում, փթթում, առատ բերք էր տալիս մատնությունը։ Մատնում էին յուրայինները, հարևանները, ընկերները, ազգականները։ Մի կտոր հացի կամ սեփական ապահովության համար, վախից կամ հին հաշիվները մաքրելու ծարավից։ Եվ մատնվածների տները, որպես կանոն, նվիրվում էին մատնիչներին։

Եվ ծլարձակում, բողբոջում, պտուղ էր տալիս զրպարտությունը։

Ջնդանները լցված էին հանցավոր մտքերով վարակված շինականներով ու ծառաներով։ Պատժվում էին ասված ու չասված խոսքերի համար, անգամ խեթ հայացքների ու մռայլ տրամադրության համար։ Եվ ուրախ ժպիտներով էին լցվում հայոց շենքերն ու ավանները, կատակներով ու տոնական զգեստներով։ Ամեն մեկը ճգնում էր մյուսից առաջ ընկնել և ապացուցել իր երջանկությունը։ Հետո, գերհոգնած ու գերլարված, ժամ առաջ շտապում էին տուն, դուռն մոտ թողնում իրենց երջանկությունը, շան կողքին, որպեսզի հանկարծ մեկնումեկը չգողանա, չտանի իր հետ, և մռայլվո՛ւմ, մռայլվո՛ւմ, լռո՛ւմ, լռո՛ւմ ու հանգստանում։

Իսկ զնդաններում ավելանում էր նրանց թիվը։ Ջնդան էին գցում փախստականների ազգականներին, բարեկամներին, հարևաններին։ Լինում էին դեպքեր, երբ մարդիկ, որոնք նույնքան ծանր և անուրախ կյանք ունեին, որքան և փախչելու պատրաստ իրենց ընկերը կամ ազգականը և նույնքան էլ փախչելու պահանջ ու ցանկություն, բայց որովհետև վա-

խենում էին, սիրտ չէին անում և ներքին կռիվներից ու ինքնատանջումներից օրեցօր հալումաշ լինում, նախանձից ու չղայնությունից մատնում էին նրանց և նոր միայն ազատ շունչ քաշում ու շարունակում հանգիստ ապրել։

Բայց որքան զնդաններն էին մարդկանցով ավելանում, տասնապատիկ շատանում էին Արշակավանի բնակիչները։

Եվ աշխարհում չկար մի ուժ, որ կասեցներ քաղաքի կառուցումը։

— Տուն արի, Խանդութ... Ես եմ, քո ամուսինը... Պատն երեսին ես գցել մեզ... Կովը չի թողնում մոտ գամ, քացի է տալիս... Վայ թե քեզ է ուզում... Քո ձեռքերն է կարոտել... Ասե՞մ ինչ ես մտածում... Մտածում ես, թե ինչ երեսով պիտի ետ դառնաս... Գլխի ընկա, չէ՞... Թե մի խոսք եմ ասել, թե երեսովդ եմ տվել, շնից ծնված լինեմ... Մեկ-մեկ միտք եմ անում, թե էս Խանդութն ինչ գտավ էդ մարդու մեջ... Չլինի՞ ուզում էիր անունն էլ տայի... Ինչո՞վ էր ինձնից լավ... Կո՞ւյր էի, կա՞ղ էի, թե՞ ոտ ու ձեռս չէր բռնում... Էս քեզ համար չեմ ասում... Ինձ համար եմ ասում... Որ սիրտս մի քիչ հովանա... Վեր կաց, վեր կաց տուն գնանք... Երեխաները քեզ են սպասում... Ասում են, ներիր մեր մորը... Գուցե ներեմ, հը՞, Խանդութ... Գուցե խակապե՞ս ներեմ... Ի՞նչ կասես...

Կոգովիտը, որի տարածքը մեծ մասամբ ճահճապատ էր, սահմանափակված էր բնական արգելագծերով՝ լեռներով։ Գավառը հայտնի էր իր Դարոյնք բերդով, որը գտնվում էր Թավրիզից դեպի Կարին տանող և Այրարատյան աշխարհը Արածանիի հովտի հետ միացնող ճանապարհների խաչմերուկում։ Դարոյնքը արքունական ամրոց-գանձարան էր և կարևոր վաճառատեղի։ Գավառը հայտնի էր նաև Սինակ լեռան ստորոտին ընկած Գայլատու լճով և Կոգովիտ կոչված շամ-

բով։ Բայց քիչ չէ՞ր արդյոք։ Խեղճ կոգովիտցին ինչո՞վ պիտի պարծենա և իր թշվառ կյանքը ինչո՞վ պիտի զարդարի։ Շամբո՞վ։ Ճահիճներո՞վ։ Մի Դարոյնքը չի հերիքի բոլորին, չի հագեցնի աղքատի երազները։ Եվ, վերջապես, աստված նրանց երեսին էլ ժպտաց և փսփսաց հայոց արքայի ականջին. մեղք են կոգովիտցիք, նրանք էլ հայ են, մի քաղաք կառուցիր նրանց հողի վրա, թող մի կողմը Մասիսին նայի, մյուսը՝ Թոնդուրեկին...

Հայը նայում է լեռներին և ապահով զգում իրեն։ Ապահով է զգում քամիներից, նոր մարդկանց հետ շփվելու գլխացավանքից և թշնամիներից։ Ու իր տունն էլ քանդում է նրանով, որ մոռանում է լեռնանցքների մասին։ Մոռանում է, որովհետև ամեն օր չի տեսնում։

Երբ Արշակավանի բնակչության թիվն անցավ երկու բյուրից, որոշեցին քաղաքի շուրջը պարսպել քաշել, իսկ պարիսպը գոտևորել խոր փոսով, որպեսզի թշնամու հարձակման դեպքում ջուր լցնեն մեջը և կրկնակի պատնեշ ունենան։

Բայց թշնամին չէր երևում։ Եթե չէր երևում, ուրեմն, չկար, գոյություն չուներ։ Որ լիներ, գոնե մի անգամ պիտի երևար, չէ՞, գոնե մի անգամ պիտի ձայն տար, չէ՞, թե ես այստեղ եմ, թե ես ցույց կտամ՝ ինչ է նշանակում տերերից փախչել և ձեզ ու ձեզ քաղաք կառուցել։ Սակայն ոչ երևում էր, ոչ ձայն հանում։

Պարսպի և փոսի գործը դանդաղ էր առաջ գնում։ Միայն հիմքերն էին վեմերով շարված...

Իսկ տները սնկերի պես բուսնում էին կողք կողքի, կառուցում էին ով որտեղ ուզեր և ինչպես ուզեր։ Ահավոր քաոս էր տիրում չորս կողմը։ Մեկ դեմ էիր առնում կիսագետնափոր խրճիթների, մեկ էլ՝ միհարկանի տների բոլորը իրար վրա թափված, իրար խառնված, միագույն ու միանման։ Տարօրինակ է, որ հենց այդ քաոսն էր կոտրում, ինչոր տեղ նույնիսկ իմաստավորում քաղաքի միակերպությունը, աշխուժացնում նրա դեմքը, որովհետև եթե միակերպությունը նաև ծրագրված լիներ, տաղտկալի գերեզմանոց կդարձներ քաղաքը։

Արշակավանի տեղանքը տարբեր բարձրություն ուներ։ Այնտեղ, որտեղ բլուր էր գոյանում, երեք կողմերից փորում էին հողը և կառուցում կիսագետնափոր տներ։ Պատերը շարում էին ոչ սրբատաշ քարերով և սվաղում հարդախառն կավով։ Սովորաբար մեկ բաժնից էին կազմված լինում տները, և այդ միակ բաժինը կոչվում էր ոչ ավելի, ոչ պակաս, քան գլխատուն, այսինքն, ինքն իր գլխավորն էր, ինքն իր զարդը, ինքն իր կենտրոնը։ Ինքն էր ու իր գլխատունը։ Տանիքը ծածկված էր հազարաշեն կոչված ծածկով, որի վրա հող էին լցնում և գմբեթի ձև տալիս։ Գմբեթները վերջանում էին երդիկներով, որպեսզի այնտեղից լույս մտնի և թոնրի ծուխը դուրս գա։ Եթե ձմռանը շատ ձյուն իջնի և կուտակվի դռների առաջ, մարդիկ երդիկի միջով փողոց կելնեն, որպեսզի տեսնեն, թե աշխարհում ինչ կա-չկա։

Գլխատանն ընտանիքներն ապրում էին անասունների հետ միասին, ըստ որում՝ ամենատաք ու ամենաապահով մասը հատկացնում էին նրանց, որպեսզի չխռովեն հանկարծ, կաթը չնվազեցնեն, միսը չքաշեն, բուրդը չքոսոտեն, կողի չընկնեն և ձու տան։ Եվ մարդիկ շոգոքորթաբար եղբայր էին կոչում նրանց, չկասկածելով անգամ, որ իրականում նրանց ավելի էին սիրում, քան թե իրար։

Միհարկանի տներում, որ շինված էին հում աղյուսից, մեկ կամ երկու բաժին կար։ Պատերի ծուծը պատրաստում էին մանր քարերի և ցեխի խառնուրդից, երբեմն էլ հող էին լցնում։ Իսկ երկրաշարժից պահպանելու համար քառակող փայտե գոտիներ էին դնում։ Հատակը կավածեփ էր, ինչպես նաև՝ թրծած աղյուսներով կամ քարե սալիկներով պատած։ Տանիքների մի մասը հարթ էր, գերանների վրա՝ եղեգ փռված, մի մասն էլ՝ երկթեք, թրծած կավե կղմինդրներով ծածկված։

Տներն այնքան մոտ էին, որ հաճախ ընդհանուր պատ ունեին։ Իսկ նրանց շարքերի արանքում նեղ միջանցքներ էին գոյանում ու փակուղիներ։ Խուլ փողոցներ էին դրանք, անաչք, անլուսամուտ։ Փայտե դարպասներն էին միայն փողոց ելնում, իսկ լուսամուտները նայում էին դեպի փոքր բակերը։

Ուրիշ էլ ի՞նչ ուրիշ։ Արշակավանցու տունը վերջացավ։ Մնացին միայն խշտյակը, կարճառատ սեղանը, աշքունքպատրհանը, որի մեջ պահում էին կթելու՝ կավե, փայտե և պղնձե ամանները, կաթը «փոելու» տաշտերը, սերուցքը թթվեցնելու ծափերը, շիճուկ եփելու կճոչները...

Ավելի շատ երազներ կային արշակավանցու տանը, մարդկանց ճակատներին գրված անջնջելի գրեր, կրքեռ, կարոտներ, սպասումներ, կասկածներ, վախեր, քան թե իրեր։

Եվ այս քաոսի մեջ, ամենաբարձր բլրի վրա, երևում էր մի անհեթեթ գեղեցկություն. մարմարանման սրբատաշ կրաքարերից կառուցվող սյունազարդ երկհարկանի պալատը։ Անհեթեթ էին նրա պնդությունը, նրբակերտությունը, ամեն մի գծի մշակվածությունը, ամեն մի մասի ավարտվածությունը։ Որովհետև ոչ մի կապ չունեին այս քաղաքի, ինչպես նաև իր բնակչի, տասնվեցերորդ Արշակունու հետ։

✦✦✦

— Թթե վերադառնաս, ես քեզ վերակացու կնշանակեմ... Դու կհրամայես քո նախկին ընկերներին... Նրանք կվախենան քեզնից... Ամբողջ կյանքումդ դու ես վախեցել, չէ՞... Իսկ հիմա միայն ինձանից ես վախենալու... Ուրիշ ոչ ոքից... էլ ի՞նչ ես ուզում... Ձայն հանիր, ի՞նչ ես պապանձվել... Սովոր ես, չէ՞, օր ու գիշեր մեջդ ծռել... Քաղցր է, չէ՞, սոված մնալը... Լավ ապրելո՞ւց ես վախենում... Զզվո՞ւմ ես կուշտ փորից... Տաք սենյակը կուշտ փորի՞ց էլ վատ է... Պիտի անպայման ցրտից փնտանաս, որ գոհ լինես աստծուց... Ուրեմն... Դու ի՞նչ մարդ ես... Ուրեմն, չես ուզում մի մարդուց, տես, է, ընդամենը մի՛ մարդուց վախենալ... Լավ է, որ գոնե կյանքդ պղտորեցի... էլ քուն ու դադար չես ունենա... Հա՛ կհիշես իմ առաջարկը...

✦✦✦

Էլ ինչպե՞ս արշակավանցին մտածի պարիսպ կառուցելու մասին, էլ ինչպե՞ս փոս փորի շուրջը և դեռ ջո՞ւր էլ լցնի

մեջը, եթե արքունիքը ձմեռվա պաշար է ուղարկում նրա համար, այդքան հոգատար է նրա նկատմամբ և անընդհատ ներշնչում է իր հպատակներին, որ ոչ մի դեպքում անտուն, սոված ու ծարավ չի թողնի նրանց։

Ձմեռվա պաշարները հավասար բաշխվում էին բնակիչներին և պահվում տների նկուղներում, որոնք շտեմարանի դեր էին կատարում։ Իսկ գետնափոր տներում՝ հենց գլխատանը, իրենց հոտը միացնելով մարդկանց ու անասունների հոտին։

Ո՞վ է լսել, որ հայ շինականի կյանքում ամեն ինչ տեղը տեղին լինի, չոր նյութերի համար փայտեղեն հատուկ անոթներ ունենա, խոնավների համար՝ կավեղեն, ցորենը պահի հորոնի մեջ, խնձորը, դդմոնը՝ կարասի, հապալասը, չոր թուզը և ձեթը, շուշման կամ կնճիթը՝ ճառայի, դալար թուզը՝ բզուղի, նուռը՝ պուտուկի, շագանակը՝ կավե ամանի և արմտիքը, սերմերն ու դեղահունտերը՝ քանդուկների... Ե՞րբ է եղել, որ նա այդ ամենն ունենար, կամ եթե նույնիսկ ունենար էլ՝ մեջը լիքը լիներ։

Եթե մի քիչ, գոնե մի քիչ պակաս լցվեին նկուղները, գուցե և այլ հունով ընթանար երկրի բախտը...

Զարմանալի բան. չէին համբերում մինչև ձմեռ, թեկուզ և մի փոքր նեղն ընկնելիս, օգտագործում էին պաշարները։ Ոը ասես, թե չգիտեին՝ ինչ բան է վաղվա վախը, սխալ կլիներ, մանավանդ՝ ամբողջ կյանքը վախի մեջ ապրած մարդկանց մասին։ Բայց, ըստ երևույթին, ինչ-որ կապ կար այն բանի հետ, որ արյամբ ու քրտինքով վաստակած հաց չէր դա և, հենց դրա համար էլ, մի տեսակ բթացնում էր մարդու երևակայությունը։

Եվ ինչքան լավ էին ապրում, ինչքան ապահով էին զգում իրենց, այնքան էլ համոզվում էին, որ պարսպի ու փոսի գործը կարելի է հետաձգել։

Եվ, ասենք, ձիթահան էին շինում։ Բովված կտավատը ճմլող հսկայական քարը, երկուսից-չորս մամլող գերանները, այդ գերանները շարժման մեջ դնող պտուտակաձև պողոսակը և գոմեշի լծասարքերը միացնելուց ու գործի

դնելուց հետո անցնում էին հնձան սարքելուն, հետո երկանքի համար հարմար քարեր փնտրում, հետո մտածում գռիհ աղ ձեռք բերելու և ձեռք բերելուց հետո էլ՝ կոների մեջ հատորաձև՞, թե՞ լեսած պահելու մասին, հետո հասարակաց բաղնիս էին սարքում, հետո գինի էին մզում, եթե առատ էր՝ քամում էին զամբյուղով ու չուխայով, իսկ եթե սակավ էր՝ պարզուտի հատակին ավազ լցնելով, կանայք թափչությամբ էին զբաղվում գետի ափին, օշնան խոտով լվանում զգեստները, խփում տոփանով ու փռում արևի տակ, հետո անցնում էին ոստայնանկության, որի առաջին փուլը տարազագործությունն էր կամ սատարությունը՝ թելի պատրաստությունը, ստանում էին կտավ՝ համանուն բույսից, ասուի կամ բրդեղեն, բայց արդեն բեհեզ էին ուզում՝ կտավի ավելի նուրբ տեսակը, կերպաս կամ մետաքս էին ուզում, ուզում էին կերպասի է՛լ ավելի նուրբը՝ անդուսը, է՛լ ավելի բարակը՝ շղարշը կամ տեռը... Դիպակ՝ ոսկեխառն պաստառ... Ուզո՛ւմ էին, ուզո՛ւմ, ուզո՛ւմ... Եթե մի քիչ, գոնե մի քիչ պակաս ուզեին...

Լռությո՛ւն։ Արշակավանցի կինն է անցնում տների արանքում գոյացած խուլ միջանցքով։ Ու թեև ոչ ոք չկա նեղ փողոցում, բայց նա ամաչում է արդեն։ Ամաչում է այն հնարավորությունից, որ դիմացից կարող է անծանոթ տղա՛արդ հայտնվել ու է՛լ ավելի նեղացնել, է՛լ ավելի փոքրացնել միջանցքը։ Ամաչում է իր ծածուկ մտքերին տեղյակ սեփական ստվերից, որը պատերին քսվելով անընդհատ հետևում է իրեն և պոկ չի՞ գալիս։

Նրա մազերը ճակատից երկճղված են և պսակաձև շրջանակում են առողջ ու վարդագույն դեմքը, հագել է ոտքերին հասնող մի պարզ պարեգոտ, քղանցքի երկու կողմերից, մեջքից մինչև ազդրերը, որպես զարդ, իջնում են աղեղնաձև յոթ կանոնավոր ծալքեր։ Պարեգոտի վրայից կրում է երկար ու նեղ թեզանիքով մենթանը։ Բարակ մեջքն ամփոփված է մի նուրբ գոտիով։

Նա երբեք այսքան ուշադիր չի եղել իր հանդեպ, երբեք չի ցանկացել այսքան գեղեցիկ ու հրապուրիչ երևալ։ Որով-

հետն գիտե, որ Արշակավանը լի է նաև ամուսիններից փախած կանանցով, նրանց սիրած տղամարդկանցով, սիրո հեքիաթներով ու անամոթ կրքերով։ Նա բնավ առիթը չի փախցնում հասկացնելու բոլորին, որ ինքը նրանցից չէ, որ ունի օրինավոր ու թիկնեղ ամուսին, որ արդեն վաղուց սովորել է նրա հոտին, իր մերկ մարմնին իջած նրա ձեռքի ծանրությանը։ Չէ, առիթը չի փախցնում այդ ամենը վերապատմելու նաև իրեն, բայց և միշտ մի ներքին հույս ունի, իրենից թաքուն պահած մի սպասում, որ չի զանազանվի մյուսներից, քանի որ նրանք, այդ մյուսները, մեղքի քաղցրությամբ վարակված այդ լրբերը, պետք է որ գեղեցիկ լինեն անպայման...

Եվ ծով չտեսած կնոջ մեջ, որ համեստ ու ամոթխած քայլում է փողոցում, ծովեր են փոթորկվում հիմա, մշուշոտ ու երկյուղալի կարոտներ ծնվում, զարնվում նրա ափերին ու փշրվում, նորից զարնվում ու նորից փշրվում, քանի որ նա վախենում է հեռավոր տենչերից, խորհրդավոր ու անիմանալի կանչերից, գերին է իր ծանր անցյալի, օրերի անուրախ ու անվերջանալի շղթայի և դրանց մեջ է միայն տեսնում իրական ու շոշափելի հաճույքը, սովորականի, ծանոթի, անփոփոխի դառը հաճույքը։

Լսե՞լ է ծովի մասին, բայց չի՞ տեսել ծով։

Եվ ահա, այդ նույն նեղ ու խուլ փողոցում անխուսափելիորեն հայտնվում է մորուքավոր տղամարդը։ Գլխին կնգուղ կա, որ վկայում է նրա արհեստավոր լինելը. հագել է կարճ, մինչև ծնկները հասնող շերտավոր ծալքերով պարեգոտ, անդրավարտիքի փողքերը մխրճված են երկարաճիտ կոշիկների մեջ, մեջքի շուրջը՝ մի նեղ գոտի։

Նրանք հավասարվում են, աննկատ մի կողմ քաշվում, որպեսզի չխանգարեն միմյանց. ստվերները մի պահ քսվում են իրար և անմիջապես բաժանվում։

Կնոջ հայացքը իջել է գետնին, տղամարդը հարևանցի նայում է նրան։

Եվ վերջ։ Ուրիշ ոչինչ։

Բայց փողոցում մի թեթև հով ելավ, որ չկպավ հողին, փոշի չհանեց ու աննկատ հեռացավ։

Գիշերները տների երդիկներից սիրո շշուկներ են բարձրանում, տարածվում քաղաքի վրա, վարակում, բռթում, խտուտ տալիս ամենքին, ստիպում վերմակի տակ անհանգիստ շուռումուռ գալ ու կարծել, թե ծարավից է դա։ Եվ հատարկվում են լայնափոր կժերի ջրերը ու չե՞ն հագեցնում։

Բարակ ու նազուկ հովերը միանում են քաղաքի վրա ու քամի դառնում, բաց անում թաքուն տենչերի պինդ կեղևները, մերկացնում և, ափի մեջ պահած, ի ցույց դնում աշխարհին։

Մեղքն ի՞նչ լայն թևերը փռել է անասելված ու անօրեն քաղաքի վրա, որտեղ ոչ մի եկեղեցի չի կառուցված դեռ և չի էլ կառուցվի, պաշտպանում, իր հովանու տակ առնում նրա գաղտնիքները, թեթև դողեր ու սարսուռներ սփռում շորս կողմը, ապա հանկարծ անասելի շոդ թափում տների տանիքներին։ Եվ մի անտեսանելի, անքակտելի կապ ստեղծում մարդկանց միջև, փառաբանում ազատ սիրո անպատկառ ու աներես փթթումը, կապանքների արձակումը խեղդված զգացմունքներից, ոտնահարված իրավունքների վերադարձը իրենց իսկական տերերին, կնոջ և տղամարդու առաջին հաղթանակը երկրում։

Իսկ պարսպի և փոսի գործը դանդաղ էր առաջ գնում։ Միայն հիմքերն էին վեմերով շարված...

— Ես իմ վերջին ունեցածը տվեցի քեզ... Երեխաներս բերանից կտրեցի, քեզ տվեցի... Մինչև հիմա ականջիս մեջ է քո հուսահատ ձայնը... Թեթև պարտքդ չվերադարձնես, իմացիր, մեկ է վերցնելու եմ... Աշխարհի որ ծայրն էլ փախչես, այդ փողը քեզ չի մնալու... Գիտե՞ս ոնց եմ քո հախից գալու... Կարծում ես, արքան միայն քո՞ մասին է մտածել... Իմ մասին չի՞ մտածել... Ես էլ եմ դառնալու այս քաղաքի բնակիչը... Ճունս էլ քո տան կողքին եմ շինելու...

Տեսնենք այն ժամանա՞կ ինչ պիտի անես... էլ ո՞ւր պիտի փախչես...

Հավը աքաղաղի ձայն հանեց, և տանտիրուհին, որպես վատ նշան, մորթեց նրան ու եփեց։

Ջահել աղջիկները, ժամանցի համար մեծ քարեր էին գետնից պոկում և գուշակում իրենց բախտը։ Եթե քարի տակից սպիտակ մազ դուրս գար, ուրեմն, աղջիկը ծերունու հետ պիտի ամուսնանար, իսկ եթե սև մազ գտներ, ուրեմն՝ երիտասարդի։

Ծանր հիվանդի շուրջը պառավներ էին հավաքվել և հորանջում էին անդադար, որպեսզի չար ոգիները դուրս գան նրա մարմնից։

Կրակի կայծեր էին գցում ջրի մեջ, որպեսզի նախանձ աչքի չհանդիպի տանտերը։

Կապար էին հալեցնում, լցնում ջրալից անոթի մեջ և մանկան կրծքին դնում՝ իբրև պորտաթափի դեղ։

Նույն կապարը դնում էին նաև մեծի կրծքին, որպեսզի նրա ատամնացավն անցնի։

Պատրաստի հմայիլ պահպանակներ ունեին, որոնք կապում էին մանկան բազկին և պարանոցին՝ ցավերից զերծ մնալու համար։ Բայց, չնայած դրան, մանուկները հաճախ էին հիվանդանում, որովհետև ասորերեն և հունարեն չգիտեին, իսկ պահպանակները... միայն այդ լեզուներով էին գրված։

Եթե ոչինչ չէր օգնում, պառավները դիմում էին իրենց վերջին և ամենաազդու միջոցին՝ ձեռնածություն էին անում հիվանդի շուրջը։

Եվ, ի վերջո, նրանց քշում էին ու բժիշկ կանչում։ Բժիշկը, ըստ ընդունված կարգի, չէր մերկացնում հիվանդին, այլ ձեռքը տանում էր վերմակի տակ և շոշափում նրա մարմինը։ Տալիս էր բույսերի արմատներից պատրաստված մի դեղ, որ նախօրոք հետն էր բերած լինում։

Լակոտները կոճ էին խաղում փողոցում՝ այծի կամ ոչ-

խարի ոտքերի նույնանուն ոսկորներից, անիվ քշում կամ պարզապես ծեծում իրար, որովհետև նրանց վանանդեցի հայրիկները չէին սիրում մյուսների աղբակցի հայրիկներին, շիրակցիները՝ խթեցիներին, տարոնցիները՝ երնջակցիներին, հարքեցիք՝ դերջանցիներին, տաշիրցիները՝ բալահովիտցիներին...

Հայրերն անմիջապես իմանում էին, որ երեխաները կռվում են իրար հետ, գալիս, մեջ էին մտնում, և կռիվը շարունակվում էր մեծերի միջև։

Թաղամասերն էլ կազմում էին ըստ գավառների, և տների ամեն մի խումբ թշնամի էր մյուս բոլոր տների հետ։

Քաղաքը դարձել էր մի փոքրիկ Հայաստան, նրա բոլոր աշխարհներով ու գավառներով։

Արշակավանցի չկար։ Դեռ չէր ծնվել։ Երբ լակոտները դադարեն կռվել ըստ գավառների և կռվեն միայն ըստ սեփական համակրանքների ու հակակրանքների, ուրեմն՝ արշակավանցին կա արդեն, զգո՞ւյշ, նա ծնվել է, և նրա հետ կատակ անել չի լինի։

Տներից մեկի առաջ բազմություն էր հավաքվել։ Մուկ էր հայտնաբերվել, այն էլ՝ աղի մեջ։ Տղամարդկանց խումբը պետք է մի դժվարին խնդիր լուծեր. աղի ո՞ր գղձի վրա էր մուկը շունչը փչել, որքա՞ն էր մկնապիղծ աղի զանգվածը ու չորության աստիճանը։ Եթե մկան դին գտնվել էր անոթի մեջ, փայտեղեն անոթը պետք էր քերել, խեցեղենը՝ կոտրել, մետաղյան՝ տաք ջրով խաշել։ Աստված չանի, որ հնձանի մեջ ընկներ։ Մկնապիղծ հնձանը խորտակելի էր, չորը՝ պիտանի, բայց՝ արդեն ուրիշ ծառայության համար։ Իսկ եթե մաքած թոնրի մեջ էր մուկ ընկել, հինգ օր շինականը պիտի ապաշխարեր, օրը հարյուր անգամ ծունր իջնելով։

Մի այլ տան մեջ նույն օրին էր հասել արշակավանցի հղի կինը։ Նա քաշվել էր մի մութ անկյուն, ոչ ոք չէր խոսում նրա հետ, ոչ ոք չէր շփվում հետը, նա ո՛չ ճաշ էր եփում, ո՛չ սեղան գցում, ո՛չ տունը հավաքում, ո՛չ մյուս երեխաներին խնամում, առանձնացել էր մի քանի իր և մյուս իրերին իրավունք չուներ ձեռք տալու, որովհետև հղի կինը նույնքան անսուրբ էր ու պիղծ, որքան և մուկը։ Եվ նա, իր մութ

անկյունը քաշված, կարոտով հետևում էր տան անդուգարձին, կարոտով ականջ դնում տնեցիների խոսք ու զրույցին և լուռ համբերությամբ սպասում ծննդաբերությանը, որպեսզի ազատվի պղծությունից և դարձյալ իր ընտանիքի անդամը դառնա։

Իսկ մի ուրիշ տան առաջ երկու տղամարդ, վերին աստիճանի լուրջ դեմքերով, ծառ էին կտրում, թեև քաղաքում մատների վրա կարելի էր հաշվել ծառերի թիվը։ Բայց հնուց ի վեր օրենք կար, որ եթե ծառի վրայից մարդ է ընկնում և մեռնում, պետք է տեղնուտեղը արմատահան անել այն։ Ըստ երևույթին, ինչ-որ մեկի բախտը չէր բերել և, դեռ արշակավանցի չդարձած, ընկել էր ծառից ու շունչը փչել որպես արցախցի կամ բագրևանցի, բասենցի կամ տոսպեցի...

Քաղաքի հրապարակը, որ գոյացել էր տարերայնորեն, վերածվել էր բազմերանգ շուկայի։ Խայտաբղետ գույների առատությունից հոգնում էր մարդու աչքը և ժխորից ականջը խլանում։ Հրապարակի մեջտեղում քարաշեն մի աղբյուր կար, առվակը՝ զուռ։ Եվ այդ աղբյուրի շուրջը, գետնին փռված կարպետների ու խսիրների վրա տարբեր ապրանքներ էին ծախու հանել։ Ապակե ուլունքներ, օղեր, մանյակներ, ճարմանդներ, փոկե գոտիներ, մատանիներ, հերկալներ, քորոցներ, կեղծ փայլուն ոսկե դրամներ, որոնք շարում էին ճակատներին, վզներին կամ վերնազգեստի թեքերին... Եվ հանկարծ՝ Հիշ, աղաղակ, արցունքներ, գրկախառնություն, ինչ-որ մեկն իր հարազատին է ամբոխի մեջ գտել։ Ու պատմում է բոլորին, որ գտել է։ Եվ բոլորը իրար են պատմում՝, որ գտել է։ Ո՞վ է գտել, ո՞ւմ է գտել, ի՞նչ է գտել։ Ի՞նչ կարևոր է։ Կարևորն այն է, որ գտել է, չի կորցրել... Տնագործ տարատներ, հորթի կաշվից ոտնամաններ, փափուկ մուճակներ, ծայրերը կեռ մույկեր, ոսկրե ու փայտե կոճակներ, թաղիքե գլխարկներ, այծենակաճներ, քաթանե գլխաշորեր ու շրջազգեստներ, կրիայի պատյանից շինած սանրեր... Եվ հանկարծ՝ նորից աղմուկ և իրարանցում, գող են բռնել։ Բռնել են ու անլուծելի հանելուկի դեմ առել։ Արշակավանում անձեռնմխելի են բոլորը, ոչոնց թվում և դողերը։ Բայց դրսի՛ց եկած, դրսի՛ց։ Իսկ եթե Արշավականո՞ւմ է գողա-

թյուն արել, հենց աչքիդ առաջ։ Այդ դեպքո՞ւմ ինչ։ Ոչ ոք չգիտեր։ Ու քանի որ չգիտեին, բաց թողեցին գողին... Հենա-պակե սպասքներ՝ կթղաներ, նվագներ, կիսագնդաձև, առ-փարակ, առանց կանթի թասեր, ծաղկակալ ու բաժակակալ սկուտեղներ, մորթուց շինած պարկաձև շեղբերան փոքր ու թեթև անոթներ՝ հաղաղակներ, կարասներ, մորթաղների ու քրձերի մեջ պահած ապխտած միս, թռչուն, ձուկ, հաց, մրգ, բանջարեղեն...

Քաղաքում մարդասպանության մի քանի դեպքեր եղան, մի քանի գողություն, ու թեև իմացան, թե ովքեր էին գո-ղերն ու մարդասպանները, բայց նորից նույն հարցը ծա-գեց. ի՞նչ անել, պատժե՞լ, արտաքսե՞լ, դատի՞ տալ, նախ-կին տերերի՞ն հանձնել... Բայց չէ՞ որ դրանով Արշակավանը դադարում էր Արշակավան լինելուց։ Քանդվում էր ինչ-որ բան։ Իմաստազրկվում էր մի շատ թանկագին խորհրդա-նիշ։ Փուլ էին գալիս քաղաքի սյուներն ու հենարանները։ Եվ նրանք ծածկեցին հանցանքները, թաքցրին հանցավոր-ներին։ Ու որոշեցին մի քիչ էլ սպասել, մինչև որ սճիրները շատանան։ Իսկ երբ շատացան, վճռեցին էլի սպասել, մինչև որ է՛լ ավելի բազմանան...

Քաղաքը դարձել էր հեթանոս թույն։ Հիսուն տարի առաջ խեղդված հեթանոսությունը կրկին գլուխ էր բարձրացնում, թոթափում տարիների ժանգն ու փոշին, ջահելանում, փո-ղեցկանում, նոր հանդերձներ հագնում և փնտրում իր հին աստվածներին, բոլոր աստվածների հայր Արամազդին, Անահիտ ոսկեմայր դիցուհուն, պատգամախոս Տիրին, ոս-կեծղի Աստղիկին, վիշապաքաղ Վահագնին... Մարդիկ իրենց ճակատագրերը գուշակում էին լուսնի փոփոխությունները դիտելով, գարի կամ քվե գցելով, մաղի վրա բախումներ անելով, ուլունքներ հմայելով, դիր անելով, մարմնախազա-ցությամբ... Քնած հուշերը արթնանում էին, մոռացված առասպելներն ու հեքիաթները կենդանանում, տասնամյակ-ներից եկող ձայները դառնում լսելի, հասկանալի ու սիրելի։

Ու եթե բագիններ չէին հիմնում դեռ, ապա միայն ի տար արքայի, որը, երևի՝ Ներսես հայրապետից գողուշանալով, եկեղեցի էր գնում տակավին։

✦✦✦

— Օհանին կանչեք... Ես իմ եղբոր արյան վրեժն եմ լուծելու... Եվ հարցրեք այդ թշվառականին, որ եթե այդքան քաջ էր, էլ ինչի՞ փախավ... էլ ինչի՞ վրեժից վախեցավ... Թե տղամարդ էր, թող տեղը մնար... Ով Օհանին կանչի, գլխովս եմ երդվում, ահագին փող կստանա ինձանից... Ի՞նչ է, Արշակավանում փողի կարիք ունեցող չկա՞... Ճիշտ է, ես եղբորս հետ գժտված էի, չէի սիրում նրան... Նույնիսկ թաղմանը չգնացի... Ոչ էլ մի կաթիլ արցունք թափվեց աչքերիցս... Բայց որ նրա վրեժը չլուծեմ, ի՞նչ կասեն մարդիկ... Հենց ի՞նքը ինչ կասի, Օհա՜նը... Ի՞նչ կմտածի իմ մասին... Բա չի թքի՞ երեսիս...

✦✦✦

Արքան, շքախմբի ու Դրաստամատի ուղեկցությամբ, այցելեց Արշակավան։ Երբ իր երազանքը իրականացած տեսավ, քարի ու աղյուսի, կավի ու ավազի միջոցով կենդանացած, մարմին առած, երբ այդ ամենի մեջ տեսավ նաև արշակավանցուն, որ շունչ էր տվել այս տներին ու փողոցներին, արհեստանոցներին ու հրապարակներին, որն այստեղ, այս մի բուռ հողի վրա էր հավաքել երկրի բոլոր ցավերն ու կեղտերը, անարդարություններն ու մարդկային զրկանքները, նվաստացումներն ու վերքերը և, ինչո՞ւ չէ, նաև իր լավագույն երազանքները ու այդ ամենի դեմ ծառս ելած, բռունցք շինած, անեծք դարձրած իր նոր տունն ու նոր հավատը, արքան, կյանքում առաջին անգամ, թույլ տվեց, որ ուրախություն ամբողջովին կլանի իրեն, հանձնվեց նրա տարերքին, փոքրացավ, կոտցավ, մի ափ դարձավ նրա անդիմադրելի ուժի առաջ։ Նա հավատաց, վստահեց այդ ուժին, իր այս տարիքում հայտնաբերեց նրա գոյությունը, թողեց, որ նստի, ծաներանա իր ուսերին, ճնշի, ճզմի, թունդ հանի հոգին, անգամ ինչ-որ տեղ իր անեզրությամբ ստոքացնի... Որովհետև այդ անսահման ուրախությունը չէր կարող պատկանել մի հոգու, չէր կարող տեղավորվել մի

մարմնի մեջ, պետք է անպայման խլվեր նրանից, հափշտակվեր, դառնար անանձնական, քո մեջ և քեզանից դուրս։

Նվ թվաց, թե նա կգտնի իր զգացմունքներն արտահայտելու կերպը, կգտնի այն միակ նախադասությունը, որ կմերկացնի ու կթեթևացնի հոգին։

—Շատ արագ են կառուցում, Դրաստամատ,— գժգոհեց արքան,— գժվար թե ամուր լինեն այս տները։

Նվ մի լավ հայհոյեց քաղաքի կառավարչին, թո՛ւնդ հայհոյեց ու սպառնաց փոխել նրան։

Նա մտավ մի քանի տուն, մի տեղ մի պատառ հաց կերավ, մի այլ տեղ մի գավաթ թան խմեց, մի ուրիշ տեղ՝ մի թաս գինի...

Ամենուրեք նրան ընդունում էին գրկաբաց, թեև մի քիչ էլ վախեցած ու ճնշված։

Ու երբ նա դուրս էր գալիս տներից, ազատ շունչ էին քաշում կուչ եկած մարդիկ և սրբում ճակատների քրտինքը։

Բայց ոչ միայն, ո՞չ միայն նրանք, այլ արքան ևս ազատ շունչ էր քաշում և ամեն անգամ փառք տալիս, որ սրանից էլ պրծավ...

Տների խեղճությունը, երդիկների հուսահատ բացվածքը դեպի երկինք, կասկածելի մաքրություն ունեցող թասերն ու գավաթները, անասունների ապակե աչքերը սենյակի խորքերից, գաղջ ու անծանոթ հոտերը...

Նա դուրս էր փախչում, ապա, զվարթ տեսք տալով դեմքին, մտնում հաջորդ տունը, հետո մյուսը, հետո երրորդը... Հարցնում, թե ինչ է տանտիրոջ անունը, որտեղից է եկել, քանի երեխայի տեր է, ինչ կարիքներ ունի և վերջում անպայման մտերմաբար թփթփացնում տղամարդկանց ուսերը...

Հրապարակում հազարավոր մարդիկ էին հավաքվել։ Շունչները կտրած սպասում էին արքային։ Ամեն մարդ պատմում էր, թե ինչպիսին է նա։ Ծնվում էին տասնյակ ու հարյուրավոր արքաներ, կարճահասակ ու բարձրահասակ, թիկնեղ ու նիհար, կապտաչյա ու սևաչյա, գանգուր և հարթ մազերով, ծեր ու երիտասարդ...

Ու երբ երևաց միակ ու իրական արքան, հուսախաբու-

թյան մի ալիք անցավ ամբոխի միջով, մինչև որ համակերպվեին նրա եզակիությանը, մինչև որ իրենց երևակայությունը մի կերպ հաշտեցնեին կոպիտ ու անառարկելի իրականության հետ։

Արքան դիտմամբ մի հասարակ պատմուճան էր հագել, ոչ խույր ուներ, ոչ ծիրանի քղամիդ, ոչ գինդեր, ոչ կարմիր կոշիկներ, ոչ ապիզակ, ոչ քառամանյակ, ոչ էլ ոսկեհուռ կամար...

Բայց նա սխալվել էր։ Ժողովուրդը չներեց, որ արքան նրան զրկեց տեսնելու ամբոխներին ու թագավորներին բաժանող հսկայական անդունդը, չթողեց, որ արքայի կուրացնող փայլով, շլացուցիչ զարդերով իրեն ապահով զգա շինականը, չթողեց, որ իր միջոցով շոյվի, բավարարվի, հագենա նրա ինքնասիրությունը, խանգարեց, որ նրա կյանքում գեթ մի անգամ իրականություն դառնա հեքիաթը։

Բայց, համենայն դեպս, արքան մնում էր արքա։ Հուսախաբությունը շուտ անցավ, նորից համառորեն գործի դրվեց երևակայությունը, զարդարեց, ճոխացրեց, փայլեցրեց արքային, պատեց ոսկիներով ու մարգարիտներով։

Եվ տիրեց մի խոր ու տարօրինակ լռություն։

Արքան ու ամբոխը նայում էին իրար։

Դեմ-դիմաց։ Երես առ երես։

— Կեցցե՛ արքան,— հանկարծ ամբողջ ձայնով գոչեց արքան։

— Կեցցե՛ արքան,— մի մարդու պես կրկնեց ամբոխը։

— Կեցցե՛ արքան,— արդեն որպես հրաման, երկրորդ անգամ գոչեց արքան։

— Կեցցե՛ արքան,— հնազանդ կրկնեց ամբոխը։

— Կեցցե՛, կեցցե՛,— պահանջեց արքան։

— Կեցցե՛, կեցցե՛,— արձագանքեց ամբոխը։

Եվ արքան ծնկի իջավ։ Արքայի՛ առաջ։ Ի՛նքն առաջ։

Մի մարդու պես ծնկի իջավ նաև ամբոխը։

Առաջին դասը, որ արքան տվեց իր հպատակներին։

Ապա ամբոխի միջից դուրս ելավ տանջված ու քրքրված, հավերժորեն վախեցած մի մարդ, ձեռքին՝ նորածին մի երե-

խա։ Արշակավանի նոր քաղաքացին։ Արշակավանի առաջին ծնունդը։

Մարդը ձեռքերը մեկնեց առաջ, ափերի վրա պահելով նորածնին, բացուխուփ արեց բերանը, բայց ձայն դուրս չեկավ։

— Անո՛ւնը, անո՛ւնը, անո՛ւնը,— գոռացին չորս կողմից։

Եվ արքան հասկացավ, որ առաջին քաղաքացուն կնքելու պատիվը ամբոխը իրեն էր պարգևում։ Նա ըստ արժանվույն ընդունեց այդ պատիվը և, առանց երկար-բարակ մտածելու, դիմեց անհամբերությամբ պատասխանի սպասող ամբոխին.

— Արշա՛կ,— ասաց նա,— Արշա՛կ։

✦✦✦

— Տղերք, ո՞նց է էդտեղ... Ես ամեն օր գալիս, հեռվից նայում եմ ձեզ... Բայց ինչպե՞ս գամ, ինչպե՞ս ձեզ միանամ... Տիրոջս գործե՞րն ով անի... Մեկնումեկը պիտի անի, չէ՞... Թող էդ մեկն էլ ես լինեմ... Հո պարտադիր չի՞, որ բոլորը փախչեն... Բա աստված չի՞ հարցնի, թե էս ինչի՞ եք իմ ստեղծած աշխարհը շուռումուռ տվել... Չէ, ես հեռվից կնայեմ, տղերք... Ամեն օր կգամ, կնայեմ... Կարելի է, չէ՞...

Գլուխ տասներորդ

Ծ՛ահապիվան։ Կասկածի՛ քաղաք։

Մինչդեռ արքունական գործերի գլխավոր դանակատեղին, Շահապիվանը, նավասարդի օրերին ողողված էր բարությամբ։

Տոնի նախօրյակին ամենուրեք վերացել էին խռովությունները մարդկանց ու ընտանիքների միջև, որպեսզի հին հաշիվները չանցնեն տարեմուտի սահմանը և կյանքի նորոգումը լիակատար լինի։

Տղամարդիկ գինիով ու մրգերով այցելում էին դրացիներին ու բարեկամներին, իսկ հեսացուները ու նրանց ազգական կանայք՝ հարսնացուներին։ Այցելուները հյուրընկալներին ընծայում էին խնձոր, հյուրընկալները ևս այցելուներին խնձոր էին հրամցնում։ Նշանված տղաները իրենց հարսնացուների հետ խնձոր էին փոխանակում։ Խնձորը պտղաբերության բարեմաղթություն էր ոչ միայն մարդկանց, այլև այգեգործության, դաշտամշակության ու տավարածության համար։

Տների դռները զարդարվում էին խաչերով, կարմիր թելերով ու կարմիր շորերով, որպեսզի տարին հաջող անցնի։

Ներունիները իրենց աշխատանքային գործիքների պատկերներն էին գծագրում դրսի պատերի վրա, հավատալով, որ այդպիսով անխափան կմնան դրանք։

Այգեգործները, կացինները ձեռքներին, կեղծ հարձակումներ էին գործում չպտղաբերող ծառերի և խաղողի թփերի վրա, որպեսզի նոր տարուն նրանք էլ հղիանան և պտուղ տան։

Գիշերը ջրի մեջ ցորեն էին լցնում՝ անձրևաբերության աստծու սիրտը շահելու համար։

Անասունների տակը գարի էին շաղ տալիս, իսկ պոչերին կարմիր թել կապում՝ բերքառատ տարի ունենալու ակնկալությամբ։ Կամ գույնզգույն ծաղիկներ էին քաղում, խաչաձև փնջում և զարդարում կթան կովերի ճակատներն ու եղջյուրները։

Նավասարդի տոներին մասնակցելու համար զանազան գավառներից դեպի Արածանիի հովիտն էր գալիս աշխարհական մեծ բազմություն, որովհետև, ըստ ավանդության, դրախտը գտնվում էր գետի ակունքի վրա։ Գետի շրջակայքում, ժայռերի ու ձագարաձև փոսերի միջից, բխում էին բազմաթիվ սառը և տաք աղբյուրներ, վարշակի ջերմուկներ, որոնք բուժում էին տառապյալ հիվանդներին։ Իսկ մի քանի աղբյուրների ջերմությունն այնքան բարձր էր, որ տեղացիները նույնիսկ միս էին եփում այդ ջրերի մեջ։

Անգմբեթ եկեղեցում, կաթողիկոսի գլխավորությամբ,

պատարագ էր կատարվում, որից հետո սկսում էր տոնախմբությունը։

Փողոցներն ու հրապարակները լցվում էին միմոսներով, բախտագուշակներով ու լարախաղացներով։

Բազմության մեծ մասը հավաքվում էր ձիրնթացիկ ասպարեզում։ Սկզբում մականախաղ էին խաղում՝ ձիերի վրա նստած։ Գետնին դրված էր մի գունդ, որ ձիավորները, մականների կամ երկար գավազանների օգնությամբ, ջանում էին կորզել իրարից և գցել փոսը։ Հատուկ մի պահապան աշխատում էր խանգարել նրանց։ Եթե գնդակն ընկնում էր փոսը, պահապանը փոխվում էր...

Մականախաղից հետո անցնում էին կրկնակ արշավանի։ Մեկնարկ էր տրվում, և ասպարեզից բաժանող լարն ընկնում էր։ Ձիավորները պետք է ասպարեզի մի ծայրից մյուսը վազեին, ապա հակառակ կողմից վերստին դառնային շվակետը...

Պատանիները վազքի մրցմամբ էին զբաղված, ծանրաբարձությամբ, գիրկընդխառն կռվով...

Եվ ամեն մի մրցումից առաջ հնչում էին փողերը ու խլացնում հանդիսականների քաջալերող աղաղակները։

Խաղից առաջ մրցակիցներն իրենց հայացքներն ուղղում էին մարտադիրին՝ նրա կողմից խրախուսվելու համար կամ լռելյայն ասելու, թե մրցում են ի պատիվ նրա։ Վերջում հաղթողը մոտենում էր մարտադիրին կամ հանդիսապետին և պարգև պահանջում։

Շահապիվանը ողողված էր բարությամբ։

Ամբողջ երկիրն էր բարություն շնչում, վստահ, որ Նավասարդի գալստով ձախորդ օրերը անհետ վերացան։ Եվ այդ վստահության մեջ իմաստուն մի մոռացկանություն կար, որովհետև նախորդ Նավասարդը ևս նույն հույսերով էին դիմավորել։

Էլ ո՞ւր է վազում այս երիտասարդ ֆիները՝ արձակ մազերով, ինչի՞ է վազում՝ լորտերը պատառոտած, կուրծքը բաց,

երբ շուրջը աքլոր են կռվեցնում, երբ ուրիշ կանայք հագել են գույնզգույն մետաքս ու կերպաս հագուստներ՝ արծաթ, ոսկի կոճակներով, ճարմանդներով, ճակատներն ու պարանոցները զարդարել են մարգարտյա և սաթյա շարերով, էլ ինչի՞ է դեմքին այսքան տագնապ իջել, երբ իրար են խառնվել ջնարների, բամբիռների, փողերի, թմբուկների ու վների ուրախ ձայները, էլ ինչի՞ է ոտքերի մեջ այսքան խուճապ սողոսկել։

Շահապիվան... Կասկածի՛ քաղաք...

Արքան լսեց, որ Փառանձեմն իր մոտ է գալիս, շփոթմունքից չիմացավ ինչ անել, վազեց, մտավ սենյակը, իրեն գցեց գահույքի վրա, սամուրենին գլխին քաշեց ու... քնած ձևացավ։

Նա մոռացել էր, ի՜հ՜ոկ մոռացել էր, մտքովն իսկ չէր անցնում, որ Գնելի սպանության համար պիտի պատասխան տա, որ Գնելը ուներ կին և մանավանդ աներ, իսկ Սյունյաց Անդովկ իշխանին, երկրի ամենահզոր նախարարին, անհնար էր արհամարհել։

Եվ նա, որ ոչ մի ատելություն չուներ Գնելի հանդեպ ու նրա սպանությունը պարզապես մի հերթական միջոցառում էր համարում երկրի անվտանգության համար, ինչպես, ասենք, մի նոր պարսպի կառուցումը կամ սահմանների ամրացումը բերդերով ու զորքերով, հենց այս պահից սկսեց ատել նրան, որովհետև այդ թշվառականը մեծ գլխացավանք էր պատճառելու իր արքային։

Մինչդեռ նա պարտավո՛ր էր մեռնել, մեռնել սուսուփուս, առանց նեղություն տալու ուրիշներին, առանց զգացնելու իր պակասությունը և առանց արքային գլխի գցելու, թե ինքը նրա եղբոր որդին է։ Ոչ մի դեպքում նա իրավունք չուներ անուն ունենալու, կին, քույր, աներհայր, իր հետ կապված հուշեր, դեպքեր, վայրեր... Այն ամենն, ինչ վերաբերում էր երկրի շահերին, պետք է այդ գերտրամաբանությանը ենթարկվեր։ Իսկ սա իր ետևից կնոջն է բերում, հետո աներոջը կրերի, հետո ինչ իմանաս էլ ում։ Եվ սպանությունը կկեղտոտվի, կսկսի արյան հոտ գալ, փտած, նեխած մարմնի հոտ, կենդանափոխվի նրա իմաստը, կդառ-

նա տոր, ճղճիմ գահակոիվ։ Եվ արքային էլ մարդասպանի անուն կբերի։ Դե արի ու բացատրիր, որ դու ոչ ոքի էլ չես ցանկացել սպանել, որ դու հավ անգամ անընդունակ ես մորթելու, որ այս սպանությունն իր բնույթով նույնն է քեզ համար, ինչ ռազմի դաշտում անանուն ու անդեմ թշնամիներին նետերով ու նիզակներով խոցելը։ Մի՞թե նրանցից որևէ մեկը կենսագրություն ունի, ունի անցյալ, կին, երեխաներ, ուրախ կամ դժբախտ օրեր։ Հենց որ ունենա, ձեռքդ այլևս չի բարձրանա նրա վրա։ Եթե Գնելը լիներ իր եղբոր որդին, Փառանձեմի ամուսինը, Անդովկի փեսան, արքան անշուշտ մարդասպան կդառնար։ Բայց նա ռազմի դաշտ ելած մի թշնամի է, անդեմ և անանուն. նա գալիս է քո գահը խլելու՝ ոչ թե հանուն երկրի, այլ փառասիրության, գալիս է առանց ծրագրերի, առանց հղացումների, գրպանը ծակ, կույր-կույր, չար քամու պես տարերայնորեն, ինքն իր վազքի թափից ոգևորված, թքելով այն մարդու վրա, ով կյանքի գնով, քուն ու դադար կորցրած, ծայրը ծայրին հազիվ կպցնելով, մի կերպ պահում է երկիրը, ձեռքից փախչում է՝ ատամներո՛վ է բռնում, ատամներից պոկվում է՝ լարախաղացի պես գլխո՛վ է պահում. գլխից ընկնում է՝ վերջին պահին աներևսաբար հասցնում է մատներո՛վ չանթել...

Չէ, նա չի կարող ներել ոչ Գնելին, ոչ էլ բոլոր նրանց, ովքեր այս սպանությունը իշեցրին հողին, վերածեցին պալատական ծամծմված մի խարդավանքի։ Մարդկանցերին երիտասարդ սեպուհի մահը։ Սովորական տրամաբանությանը հավասարեցրին։

Ահա թե ինչու, նա հիմա պատասխան չունի, չունի որևէ արդարացում, անօգնական ու անպաշտպան է գետնատարած կենցաղի առաջ։ Մի ելք կա միայն. ցածրանալ, հասնել նրանց մակարդակին, պառկել գահույքի վրա, սամուրդ-նին գլխին քաշել ու... քնած ձևանալ։

Փառանձեմը ներխուժեց սենյակ, մի ճիչ թռավ նրա բերանից և տեղնուտեղը հանգեց, որովհետև մարդ չկար կիսամութ սենյակում։ Եվ այդ ճիչը, իզուր հնչելուց իմաստազրկված, կախվեց օդից ու կեղծ թվաց նույնիսկ նրան։ Եվ

Փառանձեմը, որ մինչև այս պահը լեցուն էր վճռականությամբ, ամուսնուն փրկելու անդրդվելի հավատով, միանգամից թևաթափ եղավ, կպավ պատին, սեղմվեց ինքն իրեն ու, մատները կծոտելով, սկսեց մղիկ-մղիկ հեկեկալ։ Ինչ-որ բան էր մոմոում քթի տակ, երևի ինքը իրեն բացատրում էր իր դժբախտ վիճակը։ Հանկարծ, երբ աչքերն աստիճանաբար վարժվեցին կիսամութին, նկատեց, որ գահույքի վրա մի գունդ էր ընկած։ Նա ահաբեկված լռեց, պահեց շունչը և լայն բացված աչքերով նայեց անճոռնի գնդին։ Մալած ցուցամատով սրբեց արցունքները, քիթը վեր քաշեց և սաստիկ վախեցավ արձագանքից։ Ապա, մի անորոշ կանխազգացումից մղված, զգուշությամբ, ոտքերը հազիվ կպցնելով գետնին, դանդաղ, շատ դանդաղ, տանջալիորեն դանդաղ, սկսեց մոտենալ գահույքին։ Մոտեցավ, մոտեցավ ու կանգ առավ։

Նա էր։ Ոչ մի կասկած։ Նա էր, նա։ Արքա՛ն։

Փառանձեմը լրիվ կորցրեց իրեն։ Նա կարող էր մի կերպ հաշտվել այն բանի հետ, որ, ասենք, ամենաճակատագրական պահին, երբ արքան օդի ու ջրի պես պետք էր իրեն, պետք էր առաջին և վերջին անգամ, միակ անգամն իր կյանքում, հանկարծ չի գտնի նրան, որ արքան, հակառակի պես, հենց այդ միակ ու անկրկնելի պահին կլինի այնպիսի մի տեղում, որ մարդու մտքովն իսկ չի անցնի, որ, ասենք, արքան չի ուզենա լսել իրեն, կանպատվի, կվռնդի, անգամ կբանտարկի, կտանջի, կաքսորի, հրապարակային ծաղրի կենթարկի, բայց որ քնա՞ծ կլինի նա, չէ, այդ մեկը չէր կարող սպասել։ Ամեն ինչ, ամեն ինչ մտքովը կանցներ, բացի այս մեկից։ Եվ քանի որ սա բոլոր հնարավոր դեպքերից վատթարագույնն էր, նա անմիջապես զգաց մահվան անխուսափելիությունը և հասկացավ, որ ինքը դատապարտված էր դժբախտության ու միայնության։

Այդպես նրա միտքն էր գործում։ Գուցեև մտքի թաքուն խորքերը։ Ձեռքերն ուրիշ բան էին անում։ Ձեռքերը կարգի էին բերում նրա զգեստները, հարդարում մազերը, մաքրում երեսի արցունքները։

Եվ զարմանալի բան, ոչ մի ատելություն չկար այս մար-

դու հանդեպ։ Երբ արքան վերացական էր նրա համար, ատելությունից պատեպատ էր խփվում հոգին, ամբողջ էությունը թույնով էր լցված նրա հանդեպ, իր ամեն մի մասնիկն ուզում էր պոկվել ու առաջ նետվել մարմնից, որպեսզի ժամ առաջ տեղ հասնի և բզիկ-բզիկ անի նրան։ Բայց երբ արքան դարձավ որոշակի և իրական մարդ, ատելությունը, իրենից անկախ, փոխվեց մի անմնկնելի ակնածանքի, ակամա երկյուղածության ու առեղծվածային հարգանքի։

Եվ արքան, որ ինքը մարդասպանն էր, մահաբերն ու մահատուն, երջանկությունը օրը ցերեկով նրա ձեռքից խլողն ու կործանողը, այս ամբողջ մղձավանջի անժխտելի հեղինակը, հանկարծ թվաց միակը, որ ոչ մի կապ չուներ այդ ամենի հետ, միակը, որ կարող էր ազնվորեն պաշտպանել նրան և Գնելին փրկել ոճրագործների ճիրաններից։

— Վեր կաց, արքա,— շշուկով խնդրեց Փառանձեմը,— ամուսինս վտանգի մեջ է... Գնելը... Քո եղբոր որդին...— Ապա շշմած, բերանը բաց, երկար նայեց արքայի դեմքին։— Աստված իմ, որքան նման եք իրար...— Եվ հեծկլտոցը խեղդելով, փորձեց համոզել արքային, ինչպես նաև իրեն։— Մի՞թե այդ նմանությունը չարժե, որ վեր կենաս...— Հետո ցցեց մատը, կամաց մոտեցրեց արքային և զգույշ, շատ զգույշ, կպցրեց սամուրենուն ու անմիջապես ետ քաշեց։— Ես ախր չգիտեմ, կարելի՞ է քեզ արթնացնել, թե՞ ոչ... Ունե՞մ այդ իրավունքը, թե՞ չունեմ... Դժվար է շշուկով խոսել, արքա... Ես պետք է գոռամ... Դու իմ փոխարեն ի՞նչ կանեիր... Քեզ եմ հարցնում, ի՞նչ կանեիր, արքա...— Արքան անշարժացել էր, աչքերը պինդ փակել ու հազիվ էր շնչում։ Նրան անընդհատ թվում էր, թե փոշտալ է ուզում, քիթն է քոր գալիս, թարթիչները լեն ենթարկվում կամքին ու թեթևակի դողում են. կծկված ոտքը, շնչած իր գործադրած ճիգերին, ահա ուր որ է կձգվի սամուրենու տակ... Եվ մի սուր, ծակող, տանջող հետաքրքրասիրություն, որը իրեն բավարարելու համար պատրաստ էր ամենաահավոր վտանգն իսկ մոռանալու հրամայում, ստիպում էր նրան դեթ մի ակնթարթ բաց անելու մի աչքը ու տեսնելու այս

տառապող, քնքուշ և անծանոթ կնոջ դեմքը։— Տեր աստված, մի հրաշք արա... Արթնացրու նրան... Ես պետք է նրան ասեմ, որ սիրում եմ Գնելին... Ես պետք է ասեմ, որ իմ ուժը իմ թուլությունն էր... Ես պետք է ասեմ, որ հորեղբայրն ու եղբոր որդին նման են իրար... Եթե նման են, էլ ինչպե՞ս կարող է վտանգ սպառնալ ամուսնուս...— Նա դանդաղ, մարմինը մի փոքր առաջ թեքած, պտտվեց գահույքի շուրջը և հազիվ լսելի ասաց իրեն-իրեն.— Արքան խոր քնի մեջ է... Ես կյանքումս առաջին անգամ արքա տեսա... Քնած տեսա... Արքա, ես եմ, Փառանձեմը... Քո եղբոր որդու կինը... Գնելի կինը...— Եվ հանկարծ.— Էլ ի՞նչ ասեմ, որ հասկանաս ինձ,— գոռաց նա, զգալով, որ այս չարագուշակ լռությունը մահվան սկիզբն է, որ արքայի սենյակում իզուր վատնված այս ամբողջ ժամանակը, իր անհատակ տառապանքին գումարված այս ավելորդ հուզումներն ու այս անկապ նախադասությունները օգնեցին, որ ինչ-որ տեղ անտեր-անտեր մորթվի Գնելը։

Նա շրջվեց, վազեց դեպի դուռը և դուրս նետվեց, մեռաքս զգեստի շրշյուններն իր հետ տանելով։

Եկեղեցում զինվորների համար աստվածային արարողություն էր կատարվում՝ առավոտյան աղոթքը։ Երկրի տարբեր ծայրերից եկած եպիսկոպոսները, կաթողիկոսի գլխավորությամբ, ժողովրդի անունից խոսում էին աստծո հետ, փառաբանում նրան և փոխարենը հայցեր ներկայացնում։ Իսկ մարդիկ, նրանց բերաններից կախված, լուռ և ուշադիր ականջ էին դրել և, քանի որ չէին հասկանում օտար լեզվով արտասանվող բառերը, ամեն մեկը ճգնում էր կռահել, թե արդյոք իր աղերսը ևս հայտնեցի՞ն երկնավորին, արդյոք նա իմացա՞վ, որ Շաղիտայի՝ անկողնուն գամված որդուն պետք է ոտքի հանի, Սմբատանուշին զավակ պարգևի, մարգագետնում կորած Վարազդատի կովը փրկի գայլերի ճանկերից ու տիրոջը վերադարձնի...

Եվ սպասումի այս հանդիսավոր պահին, երբ հավատը

իր հերթական հաղթանակն էր տոնում, հույսերով ու անպատասխան հարցերով շաղախված այս մռայլ պատերի արանքում, խորհրդավոր կիսամութի մեջ, հանկարծ հնչեց բոլորին ծանոթ տառապանքի ձայնը.

— Շտապի՛ր, հասի՛ր, ամուսնուս առանց մեղքի, առանց հանցանքի սպանում են...

Բռունցքի պես ծանր մի լռություն իջավ մարդկանց վրա և մի բութ ցավ պատճառեց ամենքին։ Երկնքի հետ կապը խզվեց, աղոթքները կես ճամփից թափվեցին, ընկան հարյուրավոր ոտքերի տակ, տրորվեցին ու ճխլվեցին։

Իշխանուհու հանկարծակի ներխուժումը, նրա հուսահատ ճիչը և խորանի առաջ ծնկաչոք նետվելը ցնցեց բոլորին։ Նրանք սովոր էին միմյանց այդ վիճակում տեսնել, ինչեր ասես չի եկել ամեն մեկի գլխին, էլ ինչ փորձանքներ, ինչ դժբախտություններ, էլ ինչ ձախորդություններ, բայց անհնա՞ր էր անգամ պատկերացնել, որ տիրոջ ձեռքը կարող է թեկուզ փուչ մտնել։

Եվ, իրենց ցավերը մոռացած, իրար հրելով ու կոխկրտելով, նրանք դուրս թռան եկեղեցուց ու սկսեցին վազել դեպի արքայի աթոռանիստը։

Ճամփի կեսին հանդիպեցին մի ուրիշ հոծ բազմության, որը, գուժից սասանված, արքայի աթոռանիստից վազում էր դեպի եկեղեցի։

Ներսեսը մի պահ կորցրեց իրեն ու չիմացավ ինչ անել։

Երկնի բարձունքներից, պարեգոտի փեշից բռնած, նրան կոպտորեն քաշել էին ցած և հողին իջեցրել, բայց նա դեռ չէր հասցրել ոտքերը ամուր դնել գետնին ու, ձրեխայի պես կարծես ցատկոտելով, երկրի վրա տեղ էր փնտրում իր համար։

Առաջնորդը, անօգնական ու անպաշտպան, նայում էր ամբոխին, ասես աղերսելով, որ հիմա էլ ամբոխն իրեն առաջնորդի։ Նա անշարժ մեխվել էր տեղում, հույսը դրած նրա հավաքական ուժի վրա։ Ու երբ վինվորները և շինականները դուրս վազեցին եկեղեցուց, Ներսեսը նոր գլխի ընկավ, որ պետք է արքայի մոտ գնա։

Դատարկված եկեղեցում հոգևորականների հետ մենամե-

նակ մնալուց հետո, նա, փեշերը հավաքած, շտապեց դեպի դուռը և շփոթմունքից ասաց. «Տեղ չգնաք, ես հիմա կգամ»...

Նա շնչակտուր վազում էր դեպի արքայի աթոռանիստը։ Ամբոխին խառնված, մոռացած իր գիրքն ու կոչումը։ Վազեց, վազեց և հանկարծ կռահեց ու տհաճությամբ խոստովանեց իրեն, որ Գնելից ավելի արքայի համար էր անհանգստացած։ Թշնամին դանակ էր խրում արքայի մեջքը։ Սա զգուշացում էր նրան, կեղտոտ ու ստոր ազդանշան։ Եվ տես, թե ումից են սկսել, տնեցուց, արյունակցից, որպեսզի դաղվի, խորովվի, խանձվի արքայի սիրտը։ Այս պիղծ ու եղկելի դավադրության մեջ Մերուժանի ու անհավատ պարսկասերների մատն է խառը։ Չէ, հունասերները չեն կարող մասնակից եղած լինել, որովհետև նրանք մի անգամ դիմել էին Ներսեսին՝ որպես հույների դավանակցի, և առաջարկել, որ գահընկեց արվի արքան ու գահին նստի Արշակունի Գնելը։ Ներսեսը կտրականապես մերժել էր նրանց առաջարկը և հորդորել, որ նրանք ևս հրաժարվեն այդ գաղափարից։ Թող սա դաս լիներ բոլորին և սովորեցներ, որ իր և արքայի որոշ տարակարծությունները դեռևս ոչ ոքի հիմք չեն տալիս հուսալու, թե հայոց կաթողիկոսին կարելի է դրոշակ դարձնել արքայի դեմ և օգտագործել իրենց շահերի համար։ Եվ, վերջապես, Գնելը նաև ի՞ր ազգականն է, մորեղբոր թոռը։ Է՞, Ներսես, Ներսես, մոռացել ես ազգականներիդ, դպրոցներով ու աղքատանոցներով տարված՝ ինքդ քեզ ես մոռացել։ Կարո՞ղ է այնքան մտածես մարդկանց մասին, որ լրիվ կտրվես նրանցից ու սկսես չսիրել...

Ներսեսն ու Արշակը կամ միասին կփրկեն Գնելին ու միասին կուրախանան, կամ միասին կողբան նրա մահը։ Խե՞ղճ Գնել, ուրեմն քո ճակատի՞ն էր գրված արքային ու կաթողիկոսին հաշտեցնելը՝ ուրախության սեղանի շուրջը կամ դագաղի...

Եվ նրա զարմանքը մեծ եղավ, քիչ է ասել մեծ, երբ տեսավ, որ արքան, սամուրենին գլխին քաշած, քնել է գահույքի վրա։

Քնա՞ծ։ Ինչպե՞ս թե քնած։ Հապա Գնե՞լը։ Հապա իր

շնչակտուր վա՞ղքը։ Իր մտորումնե՞րը ճանապարհին։ Իր անկեղծ ու եղբայրական ցավակցո՞ւմը արքային։ Նրա հետ հաշտվելու գոհունակությո՞ւնը։ Ուրեմն, այդ ամենը այսպիսի անհեթեթությա՞մբ պիտի վարձատրվեր։

Իսկ ա՞յն, որ ոտքը սայթաքեց, ու քիչ է մնում ընկներ։ Այդ մանրուքը, չգիտես ինչու, հանկարծ ավելի կարևոր ու վիրավորական թվաց, քան մյուս փաստարկները։

— Վեր կաց, արքա... Փորձանք է... Վեր կաց...

Արքան չշարժվեց։ Այնքան հանգստություն էր բուրում այդ խորը և անուշ քնից, որ Ներսեսի մեջ անակնկալ մի հույս ծագեց։ Գուցե ոչ մի փորձանք էլ չկա՞։ Գուցե Գնել անունով մա՞րդ էլ չկար։ Ոչ եղբոր որդի, ոչ էլ մորեղբոր թոռ։ Կար միայն ամեն ինչ ժխտող քունը, ամեն ինչ փափուկ և մեղմ լույսով բարուրող երազները։

Ներսեսը մի պահ հանձնվեց այդ վարակիչ թմբիրին, կամացուկ նստեց բազմականին, խորշավոր օձիքը թուլացրեց, մի փոքր ձգեց ոտքերը և ձեռքերը մեկնեց արմնկակալների վրա։

Մկանները թուլացան, գլուխն անկամ թեքվեց ուսին, շորս կողմը լռություն տիրեց, և մի հոգնած ու անմիտ ժպիտ խաղաց նրա դեմքին։

Առվակի շարաճճի գլգլոցով լցվեց սենյակը...

Նա ավելի խորը տեղավորվեց բազմականի մեջ, դատարկված աչքերը հառեց ոչինչ չասող և ոչինչ ցույց չտվող մի կետի։

Նա մի շար և տանջող հաճույք զգաց այն մտքից, որ հիմա ամենուրեք փնտրում են իրեն, հույսները դրած իր ամենազոր ու ամենակարող ուժի վրա։

Թող փնտրեն, թող որոնեն, իսկ նա չկա և չի լինի։ Թող շալակեն իրենց ցավերը և աշխարհով մեկ Վեհափառ կանչեն՝ այդ բեռը նրա ուսերին գցելու համար։ Իսկ նա բեռ չի վերցնում և չի վերցնի։ Թող ինչքան կեղտ և ստորություն կա՝ ի մի հավաքեն և դատարկեն նրա առաջ։ Իսկ նա չի տեսնում և չի տեսնի, չի լսում և չի լսի։

...Հենց այդպես՝ մարդը կար, իսկ հիմա՝ չկա։

...Հասկացեք, հոգնած է ձեր Վեհափառը։ Ձեր հոգսերից ու

ցավերից զզված։ Ձեր կեղտերից և աղտոտություններից ձանձրացած։ Իր դպրոցներից և աղքատանոցներից կշտացած։ Իր սուրբ վարքից հագեցած։

Թող փնտրեն, թող որոնեն, թող հոգիները դուրս գա...

— Արքա, ես եմ, Վեհափառը... Վեր կաց... Դավաճանություն է քո դեմ... Եղբորդ որդուն սպանում են...

Ոչ ոք չիմացավ նրա թաքստոցի տեղը, բայց ինքը գտավ։ Ի՞նքը հայտնաբերեց Վեհափառին։

Արքան դարձյալ անշարժ էր։

Ներսեսը, ճարահատյալ, բռնեց նրա ուսերից և թափ տվեց։

Կենդանության ոչ մի նշան։

Ներսեսի աչքերում մի չարագուշակ հարց ծնվեց և տեղնուտեղը քարացավ դեմքին։ Լեզուն մի պահ կապ ընկավ, և նա սոսկումով կուլ տվեց թուքը։

— Արքա, եթե վեր չկենաս... էլ ի՞նչ է մնում ինձ մտածելու... Դու իմ փոխարեն ի՞նչ կմտածեիր...— Ուժգին ցնցեց նրան, բայց ոչ արթնացնելու համար։ —Դու ամեն ինչի ընդունակ ես... Ես գիտեմ... Բայց այս մեկը...— Եվ հանկարծ, արքային գրկած, սկսեց շոյել նրա գլուխը, ինչպես իր մինուճար որդուն, Սահակին, մի տեսակ արագ, դողացող մատներով, հազիվ կպչելով նրա մազերին։— Խնայիր քեզ, արքա... Ոչ թե նրան, այլ քեզ խնայիր... Մի թափիր հարազատիդ արյունը... Արդար մարդուն անմեղ տեղը մի սպանիր...— Հայտնի չէ, նա բա՞ց թողեց արքային, թե՞ ուժերը սպառվեցին ծանրությունից։ Արքայի մարմինը անաղմուկ ընկավ գահույքին։— «Ով ձեզ լսում է, ինձ է լսում, ով ձեզ ընդունում է, ինձ է ընդունում, իսկ ով ձեզ անարգում է, ինձ է անարգում»... Լսիր Քրիստոսին, որ հիմա քեզ հետ իմ բերանով է խոսում...

Նա վեր կացավ, անհարկի ու անտեղի բծախնդրությամբ մաքրեց ծնկները, հետո մատով թոցրեց փոշու մի հատիկ, շտկեց մարմինը, նայեց սամուրենիով ծածկված արքային, երկար լռեց ու հանկարծ սկսեց չարախնդորեն ծիծաղել։

— Ասում էի, չէ՞, որ ես իմ վրեժը կլուծեմ... Ես երկու անգամ նվաստացա քո առաջ...— Ծրբ ինձ բռնի, ուժով կաթո-

դիկոս էիր ձեռնադրում... Եվ երբ դրամով ու հողերով գնեցիր ինձ... Ճարպկորեն գնեցիր... Հիմա դու ես նվաստանում ինձ մոտ...

Փա՜ռք աստծո, որ ստիպված չեղավ այս միմոսի հետ հաշտվելու, այս ապաշնորհ դերասանի, այս ցածրորակ ծաղրածուի, այս...

Եվ առավել ևս՝ փառք, որ ձեռքերն ազատ են հիմա։ Իհա՛րկե Գնելը պետք է դառնար թագավոր, իհա՛րկե։

Մինչդեռ ասված է վկա, որ մաքուր սրտով ոտք դրեց այս սենյակը...

Որտեղից որտեղ հայտնվեց Հայր Մարդպետը, ամենանողկալի հայը՝ Վեհափառի համար։ Միակ մարդը, որի առաջ Ներսեսը գարշանքից և ատելությունից խեղճանում էր ու անպաշտպան դառնում։ Նա լուռ և անաղմուկ ներս սողաց և իրենով լցրեց ամբողջ սենյակը։ Գլուխ տվեց Վեհափառին, հարևանցի նայեց քնած արքային, անօգնական տարածեց ձեռքերը, ուսերը թոթվեց, ապա արքային դիմեց շշուկով, որը ծաղր թվաց Ներսեսին, ծառայի ծաղր տիրոջ հանդեպ։

— Դահճապետ Երազմակը հենց նոր հայտնեց, որ հրամանդ ի կատար է ածված։ Գնելին տարել է մինչև որսատեղի պատը և Լիսին բլրի մոտ գլխատել։

Արքան գիտեր, ինչպես չիմանար, որ սա ամենաանպատեհ ժամանակն է քնից վեր կենալու, ամենավտանգավոր պահը, երբ նա բացահայտորեն կմատնի իրեն, այն էլ՝ շշուկով ասված խոսքերից հետո, բայց չդիմացավ։ Հակառակի պես՝ հենց այդ ակնթարթին չդիմացավ։ Թքա՜ծ, ինչ լինում է լինի, վերջիվերջո մարդ է, չէ՞, ստորությունն էլ իր սահմանն ունի, չէ՞, անամոթությունն էլ իր չափն ունի, չէ՞։ Նա դեն նետեց սամուրենին, նստեց գահույքին, շփեց աչքերը և զարմացած նայեց Հայր Մարդպետին։

— Ի՞նչ Գնել... Ի՞նչ որսատեղի պատ... Ի՞նչ Լիսին բլուր... Երազմա՞կն ով է...— Նոր նկատեց Ներսեսին, տարակուսանքով նայեց նրան ու չհավատաց աչքերին։ —Վեհափա՞ռ... Ինչո՞ւ ես առավոտյան աղոթքդ ընդհատել... Դու հիմա պետք է արարողություն կատարեիր բանակի հա-

մար...— Ու զայրույթով հարցրեց.— Վերջապես ինձ կբացատրե՞ք ինչ է եղել, թե ոչ...

— Դու չուզեցիր աստվածային խոսքի խրատը լսել և սկսեցիր մարդկանց ուտել,— քմծիծաղելով, սառը և հանգիստ ասաց Ներսեսը։— Ուստի ինչ որ գազանների մասին է ասված, թող քեզ վրա կատարվի։ «Աստված նրանց ատամները բերաններում կփշրի, և առյուծների ժանիքները տերը կխորտակի»։ Եվ որովհետև Կայենի գործը կատարեցիր, Կայենի անեծքին գաս, ողջ-ողջ թագավորությունիցդ զրկվես և չարչարանքներ կրես քո կուրացած Տիրան հորից ավելի և դառն մահվամբ մեծ նեղության մեջ կյանքդ վերջացնես։— Նա, ժպտադեմ, ձեռքը թեթևակի խփեց արքայի ուսին ու խաղաղ ձայնով ավելացրեց.— Իմ քմծիծաղը ոչ ոք չի հիշի... Բայց խոսքերս կհիշեն... Քեզ կանիծեն, իսկ ինձ՝ կսրբացնեն... Լսո՞ւմ ես գրչի խզզոցը... Այ, հիմա մի պատմիչ արդեն գրեց իր մատյանի մեջ...

Շրջվեց և, դանդաղ ու անխռով, դուրս եկավ սենյակից։

Դուրս եկավ մեծ արժանապատվությամբ ու հաղթանակած։

Արքան սառած մնաց տեղում։ Դեմքին՝ հիմար և անիմաստ մի արտահայտություն։ Կարծես հյուլեները քամել էին ու դեն գցել նրան։ Ձեռքը տարավ երեսին, ճմռեց, տրորեց, ապա վեր կացավ ու կանգնեց ամբողջ հասակով մեկ։

— Թող ամբողջ երկիրը պաս բռնի իմ եղբոր որդու համար։ Հրամայիր, որ բանակում եղող բոլոր մարդիկ, մեծ թե փոքր, առանց բացառության, գնան կոծ անեն ու ողբան Արշակունի մեծ սեպուհ Գնելի գերեզմանին։

Ասաց հանդիսավոր, լցված, աչքերը խոնավ, հավատալով իր արտասանած ամեն մի բառին, ամեն մի հնչյունին։ Բայց առանձին-առանձին հավատալով, ոչ իրար կողքի, ոչ միասին։

Ապա մտավ ապարահեղը, մնաց ինքն իր հետ ու փսխեց...

✦✦✦

Հող էր, հող դարձավ։

Ինչքան էլ գեղեցիկ էր... Անաստված գեղեցիկ...

Այդպիսի փառավոր հասակ, այդպիսի թիկնեղ մարմին ու կրակոտ աչքեր այս երկիրը դեռ չէր ծնել երբևիցե։

Եվ ինչպիսի՜ աղավնակերպ հոգի ուներ։

Շատ շատերը չէին տեսել նրան, բայց եթե մեռնողը իշխան էր, այն էլ՝ երիտասարդ, իսկ մահը՝ ողբերգական, ուրեմն բոլոր առավելությունները նրա կողմն էին, ուրեմն մարդկային կատարյալ տիպար էր նա, ուրեմն նա էր իր մեջ խտացնում գեղեցիկի ու լավագույնի ամեն պատկերացումները։

Թող ես տգեղ լինեմ, ոչինչ, բայց ինչ-որ մեկը՝ գեղեցիկ, թող ես աղքատ լինեմ, հոգ չէ, բայց ինչ-որ մեկը՝ հարուստ, թող ես դժբախտ լինեմ, փույթ չէ, բայց ինչ-որ մեկը՝ երջանիկ։

Գոնե, գոնե ինչ-որ մեկը...

Եվ նախանձից անտեղյակ, աղնիվ ու չարքաշ շինականին հանկարծ թվաց, թե հենց այդ ինչ-որ մեկն էր այսօր զոհվել, ու աշխարհը միանգամից դատարկվեց նրա աչքում։

Նա դարձավ ավելի տգեղ, ավելի աղքատ ու ավելի դժբախտ։

Ոչ միայն Շահապիվանը, ոչ միայն Ծաղկոտն դավառը, այլև ամբողջ Այրարատյան աշխարհը ծածկվեց սևով։

Տների երդիկների վրա սև շորեր գցեցին, որովհետև իավարն էր բաժին ընկել ամենքին, եղների եղջյուրները պատեցին սև լաթերով, ձիերի վրա սև նարոտներ փռեցին, մարդիկ ոտքից գլուխ սև հագան։

Տարտարոսի մութ աշխարհի տիրակալ աստվածները իրենց հերթական հաղթանակն էին տոնում։ Նրանք, որպես կանոն, խլում էին լավագույնների կյանքը, ամենաազնիվներինը, ամենախիզախներինը։ Թեև չար էին իրենք, բայց չէին սիրում վատ մարդկանց, դժկամությամբ էին նրանց տեղափոխում իրենց մոտ, թողնում էին, որ ստոր մարդիկ երկար ապրեն, ու երբ նրանք դառնում էին անատամ դա-

ռամյալներ, նոր միայն, ստիպված, նրանց էլ էին տանում զզվանքով...

Գլխատված Գնելի դին, դիպակներով պարուրված, դրել էին գորգապատ պատվանդանի վրա։

Պատվանդանի գլխին, թագաձև գդակով, ուսերին գցած թուխ թիկնոցով, ծնկի էր եկել արքան, լաց էր լինում և հրամայում, որ բոլորը արտասվեն Արշակունի մեծ սեպուհ Գնելի հիշատակին։

Նախարարները, շինականներն ու զինվորները, ըստ պապենական սովորության, նստել էին գետնին, գերեզմանի շուրջը ու խմբովի ծափ էին տալիս՝ իրենց ցավն արտահայտելու համար։

Խեղճ տղան հոգեվարք էլ չունեցավ, որպեսզի, ընտիր գգեստը և սուրը մարմնի վրա դնելով, գոնե մի բարիք գործեին, գոնե արագացնեին հոգու անջատումը։

Նրանք նույն սիրով ու երախտագիտությամբ նրա ներեզմանը կզարդարեն, փոսի մեջ կդնեն ոսկեհյուս պատմուճանը, փիլոնաձև կնգմենին, ականակուռ գոտին և սուրը, երիտասարդ իշխանների բազուկներից անբաժան մեհանդը...

Իսկ թաղման վերջին պահին, երբ դին կիջեցնեն փոսը և կսկսեն հողով ծածկել, քահանաներից ծածուկ՝ ուտելիք էլ կդնեն Գնելի կողքին։

Գետնին նստած հուղարկավորներն սկսեցին ավելի ուժգին ծափ զարնել, որովհետև սևազգեստ եղերամայրերը հայտնվեցին։ Նրանք խմբով մոտեցան գորգապատ պատվանդանին, մի պահ լուռ կանգնեցին ծափերի տարափի տակ, ըստ երևույթին՝ ներշնչվելու համար։ Ապա նրանցից մեկը, ամենապառավը, դարձավ ողբի մայր, իսկ մյուսները՝ ձայնարկուներ։ Ողբի մայրը մեռելի գովեստն էր անում, գովերգում նրա գեղեցկությունը, փառաբանում սլացիկ հասակը, ներբողում քաջագործությունները։ Ձայնարկուները կրկնում էին նրա խոսքերը և ցավի աղաղակներ բարձրացնում։ Ողբի մայրը սգում էր այն մանուկներին, այն ուստերին ու դուստրերին, որոնք կարող էին դեռ ծնվել և ան-

պայման պետք է ծնվեին, բայց այլևս լույս աշխարհ չեն գա։ Ու մեկ առ մեկ տալիս էր նրանց անունները։ Զայնարկուները կրկնում էին չծնվելիք երեխաների անունները և նորից լաց ու կոծ անում։ Ողբի մայրը կսկիծով թվարկում էր այն խիզախությունները, որ դեռ պիտի իրագործեր հանգուցյալը, բայց անդարձ իր հետ տարավ և ուրախացրեց թշնամուն։ Զայնարկուները մի անգամ ևս հիշեցնում էին չիրականացվելիք սխրանքները, վայում, ափսոսում...

— Վատ եք ողբում, պառավ վհուկներ,— հանկարծ զայրույթով լցված, գոռաց արքան ու հասակով մեկ ոտքի ելավ ամբոխի առաջ։— Մի՞թե այսպես են սգում պատանու մահը։ Ո՞ւր են կորել ձեր արհեստի հնարքները։ Այնպես լացեք, որ ամբողջ երկիրը վշտից ցնցվի։— Ապա շշնջաց Հայր Մարդպետի ականջին.— Գնա իմացիր ինչ են խոսում իմ մասին։

Արքայի զայրույթը, որ ընկալվել էր իբրև տառապանքի ու մորմոքի պոռթկում, ոգևորեց ամենքին և ազատություն տվեց խեղդված հիշողություններին։

Քահանաները սարսափով ականատես եղան, թե ինչպես մի ակնթարթում հեթանոս մեղքերը ծաղկեցին ու սփռվեցին գերեզմանոցով մեկ։

Կանայք, ամոթները կորցրած, գետնին էին ընկնում, թավալ տալիս, մազերն արձակում, փետում, օձիքները պատառոտում, կրծքները ծեծում, տղամարդիկ մորուքներն էին կտրում իբրև զոհաբերություն, ճակատներին խփում, գլխներին մոխիր թափում, հանվում և մերկ մարմնի վրա քրձեր հագնում...

Կապանքներից բաց թողնված ամբոխի ողբը ուղեկցվում էր դամբանական երգերով, փողերի, փանդիռների ու վների սրտաճմլիկ նվագով, կատաղի ծափերով ու խմբական երկսեռ պարերով։

Փառանձեմը, զգեստները պատառոտած, վարսերն արձակած, կուրծքը բաց, կոծում էր սգատեղում, բարձր ճչում, աղիողորմ ողբով ու արտասուքով բոլորին լացացնում։

— Ես եմ մեղավոր, ես,— աղեկտուր գոռում էր նա։—

Ինչո՞ւ ինձ ում ավելիր, սատված... Ինչո՞ւ չթողեցիր, որ օգնեմ նրան...

Ու քանի որ ոչ ոք չէր հասկանում այդ խոսքերի իմաստը, էլ ավելի սատակիչ էին հուզվում բոլորը, և արցունքը հեղեղ էր դառնում։

Ամբոխը վաղուց ի վեր մոռացել էր, որ իր երգ ու նվագով, իր պարերով ու մեծագին պաղատանքներով դիմում էր Սպանդարամետ անդունդի խավար թագավորությանը՝ մեռածի հոգին այնտեղից վերադարձնելու համար։

Պարում էր, երգում, մերկանում, ծափ զարնում, առանց խոսքի պաղատում, բայց մոռացել էր, թե ինչի համար...

Չէր հիշում Սպանդարամետ աստվածուհու բագինի մոտ զոհվող այծի շուրջը կատարված երգերն ու պարերը, որոնց իր պապերն ու տատերն էին մասնակցում...

Չէր հիշում արալիզների պատվին արվող անձնատրության հնագույն խորհուրդը...

Եվ քանի որ ոչինչ որոշակի չէր հիշում, ավելի՛ շատ բանի էր հավատում։ Մասնատված հավատները իրար էր ժողովում և մի ամբողջություն հյուսում։ Ընդհանրական և համապարփակ մի հավատ։

Մի խումբ կանայք, փոքրիկ սրվակներ բռնած, մատենում էին հուղարկավորներին և նրանց աչքերից արցունքներ հավաքում։ Տարբեր մարդկանց արցունքները խառնվում էին իրար, փակվում սրվակների մեջ և դրվում գերեզման։

Սրվակներից մեկը հատուկ նախատեսված էր միայն արքայի համար։ Առանձին պիտի դնեին Գնելի կողքին։

Ուսերը վշտից մերկացրած և մազերը երեսին թափած մի ջահել կին մասունքի պես հավաքում էր արքայի արցունքները, և որքան լցվում էր սրվակը, այնքան ավելի հրճվագին էր բացականչում կինը և պարծանքով ողողում մարդկանց սրտերը։

Հոգևորականները, համբերությունները հատած, վճռեցին հարձակման անցնել։

Խաչերով, խաչվառներով, սատ խունկ ծխող բուրվառ-

ներով, սևերի մեջ կորած հանդերձներով, առաջ եկան ու շրջապատեցին գերեզմանի փոսը։

Ամբոխը ակնածանքով լռեց ու նրանց գալուստը ևս ընդունելի համարեց։ Եվ հիմա դարձավ նույնքան մոլեռանդ քրիստոնյա, որքան հեթանոս էր քիչ առաջ։

Զարմանալի ու վայրենական թեթևությամբ և հեշտությամբ կատարվեց այդ անցումը, առանց որևէ դիմադրության, առանց ներքին հակասությունների ու ցավագին վեճերի։

Հատկապես տպավորիչ էին եկեղեցական նշանակները՝ դրոշները, որոնք կարմիր էին կամ գունագեղ ասեղնագործված, ծածկված ազնիվ քարերով կամ որբապատկերներով։ Բները վերջանում էին խաչերով, որոնց տակ կախված էին դրաշակները։

Երկու հսկա ու մազմզոտ կանայք, Փառանձեմի թևերից բռնած, բռնի քարշ տվեցին նրան ու հեռացրին գերեզմանոցից։ Փառանձեմը կատաղի ընդդիմանում էր, հայհոյում ու կծոտում նրանց։ Երբ բավական հեռացան, ու այլևս տեսնող չկար, կանանցից մեկը մի ուժգին ապտակ իջեցրեց նրա դեմքին։ Մատների հետքերը մնացին երեսին, ու քթից արյուն եկավ։ Փառանձեմը վախից սկսվեց, գերեզմանատան պարսպին քսվելով ցած սահեց, կուչ եկավ ցեխերի մեջ ու, ձայնը կուլ տալով, սկսեց հեծկլտալ։

Աղոթքները վերջացան, և պատանքված դին իջեցրին գերեզման։ Տղամարդիկ հող թափեցին ու ծածկեցին փոսը։ Արքան ևս միացավ նրանց, հազվագյուտ պատիվ տալով իր համարյուն հպատակին։

Գոյացավ մի մեծ հողաթումբ, և հողաթմբի վրա գլխաքար դրեցին՝ ապրած օրերի ու տարիների անհայտ պատմությունը։

Եվ այս անգամ էլ քահանաների՝ հիշողությունը դավաճանեց։ Նրանք թույլ տվեցին քարը դնել, միշտ են թույլ տվել ու դեռ կտան, բայց չիմանալով՝ ինչի համար։ Մոռացան, չհիշեցին, որ քարը, հնուց ի վեր, մեռած մարդու հոգու նոր օթևանն է...

Գլուխ տասնմեկերորդ

Փառանձեմը որոշեց մինչև քառասունքը մնալ Շահապիվանում, ապա վերադառնալ ոչ թե Աղիովիտ, այլ Սյունիք, հորենական տուն և վերջնականապես այնտեղ հաստատվել։

Ամեն օր, ուղիղ նույն ժամին, անձրև լիներ, թե կատաղի արև, առանց բոպե անգամ խախտելու նա գնում էր գերեզմանատուն, այցելում ամուսնու շիրիմին։ Այդ զարմանալի ճշտապահության մեջ վշտի աստիճանական հաղթահարում կար, գիտակցված ու մի տեսակ կազմակերպված հրաժարում, հրաժեշտ ցավերին ու մղձավանջներին։

Ժամերով նստում էր շիրիմի մոտ, լուռ, արձանի պես անշարժ ու միտք էր անում։

Միտք էր անում, թե ինչպես պիտի դասավորի իր կյանքը։ Թե ինչպես պիտի հաշտվի ու մտերմանա մենակության հետ։ Թե ինչպես կամաց-կամաց պիտի սիրի այն ու զգա նրա հիվանդագին քաղցրությունը։

Երբեմն էլ, գույները դիտմամբ խտացնելով, պատկերացնում էր իր մոայլ ապագան, իրեն սպասող անդեմ օրերը, որոնք, ցորենի հատիկների պես, նման են լինելու իրար։

Ցորենի հատիկները գցում ես իրար վրա և ոչ մի կերպ չես կարող ասել, թե հատկապես որերորդից հետո գույացավ կույտը։ Այդպես էլ օրերն են գումարվելու միմյանց և անհնար է գառնալու իմանալ, թե այդ երբ հասցրիր ապրել, այդ երբ անցավ կյանքդ և ինչ հասկացար աշխարհ գալով ու հեռանալով։

Պատկերացնում էր այդ ամենը ու ինքն իրեն խղճում։ Եվ իրեն խղճալով՝ հաճույք էր ստանում, անգութ և դաժան մի հաճույք։ Ասես վերքդ ցավում է, բայց չես կարող ձեռք չտալ, որքան էլ պայքարես այդ ցանկության դեմ, միևնույն է, չես կարող, ինչ-որ մի բան ձգո՛ւմ է, ստիպո՛ւմ, հրամայո՛ւմ, դիպչում ես, զգում ցավը, նոր միայն բավարարվում ու հանգստանում։

Փառանձեմն իր դժբախտությամբ կարծես վրեժ էր լուծում ինչ-որ մեկից, նա հաստատ համոզված էր, որ իր ապերջանիկ կյանքի մասին իմանալով, խղճի խայթ են զգալու մարդիկ, խանգարվելու է նրանց քունն ու դադարը...

Բայց նա չհամաձայնվեց, թույլ չտվեց, որ երկար խարի կամ մխիթարի իրեն, նախընտրեց տղամարդու պես դեմառ դեմ կանգնել ինքն իր հետ և սառը դատողությամբ ելք որոնել։

Չէ՞, նա ատամներով կպոկի երջանկության իր բաժինը, եղունգներով կկորզի իրենից խլված բախտավոր օրերը, ոչ մի բանի առաջ կանգ չի առնի հայհոյված ու պղծված անցյալի իրավունքները վերականգնելու և ապագայի մեջ վերընձյուղելու համար։

Եվ մի անգամ, ուշ գիշերին, երբ մենակությունն ավելի էր լկտիանում, սողոսկում փետրալի ու ոսկեթել մահիճը խորանաձև ծածկող սրսկապանի արանքով և մտնում անկողին, Փառանձեմը գրկեց բարձը, կծկվեց, անհավատալիորեն փոքրացավ, դարձավ մի բուռ և հանկարծ, սեղմված զսպանակի պես, միանգամից ձգվեց, բացվեց ու վեր թռավ մահճից։ Խավարի մեջ տենդագին հապճեպությամբ փնտրեց ճրագները, գտավ, վառեց երկուսը, դրեց հայելու կողքերին ու հանեց գիշերազգեստը։

Մերկացավ և նայեց հայելու մեջ։

Նայեց գնահատող աչքերով, կողմնակի մարդու պես, առուծախ անողի սառը և անհույզ հաճույքով։

Եվ առանց հիացմունքի։

Հայելու մեջ հրաշքով ծնված ճերմակ, ձիգ ու գեղեցիկ մարմինը, որ նա ասես պատրաստ էր գնելու և սեփականացնելու, վստահություն ներշնչեց, ինչ-որ պինդ, կարծր հավատ լցրեց երակները և կոպիտ մի ուժ պարչեց նրան։

Եվ այդ գիշերը տո՞ն դարձավ Տիրիթի համար։

Տիրիթը, ստվերի նման, աննկատ հետևում էր Փառանձեմին, նրա հետ միասին առավոտ կանուխ գերեզմանոց գնում, ամբողջ օրն այնտեղ մնում, ապա վերադառնում այն փողոցը, ուր այրի կնոջը մի առանձնատուն էր հատկացված և, շան պես, սոված ու ծարավ, հսկում նրան։

Նա կանգնած թիկնել էր ծառին ու նիրհել, երբ հանկարծ ինչ-որ կայծակ փայլատակեց նրա ուղեղում, և նա խուճապով բաց արեց աչքերը։ Պատուհանում լույս էր վառվել։ Նա գողեգող մոտեցավ, ձգվեց ոտքերի մատների վրա, ձուլվեց պատին ու ներս նայեց։

Տեսավ այն, ինչ երևակայության մեջ նկարել էր օր ու գիշեր։

Բայց սա ուրիշ էր։ Սա ափ նետված ձկան խելահեղ թպրտոց էր, ծառս եղած նժույգի կատաղի խրխինջ, արյան կարմիր հրդեհ, պոզերն իրար դեմ տված խրոխտավիզ ու քրտնած ցուլերի մենամարտ...

Եվ կույս պատանին վախեցավ կնոջ մարմնի այս աստիճան իրական լինելուց։ Մի պահ ատեց Փառանձեմին, ուզեց փախչել, ջնջել նրան իր հիշողությունից, բայց ձեռքին ճար չկար, ձուլվել էր պատին, և պատը թույլ չէ՞ր տալիս պոկվելու։

Նա նեղացած ու խռոված նայում էր մերկ կնոջը և մտովի հայհոյում նրա անծանոթ ու խորհրդավոր գեղեցկությունը, ուսերից դեպի մեջքը ձգվող փոսի վանող գաղտնիքները։

Տիրիթը վստահ էր, որ Փառանձեմը խաբել էր իրեն, կին չտեսած պատանուն բարձրիկ սարեր էր խոստացել, բայց անհատակ անդունդնե՞ր ցույց տվել։

Միակ փրկությունն այն էր, որ կնոջ մարմինը հեռու էր և վտանգ չէր սպառնում նրան։ Մինչև մերկությունը այս պատը կար, այս լուսամուտը, ներսում վառվող ճրագների գունատ լույսը և դրսի բազմաձալ խավարը։ Նա ապավինեց այդ խոչընդոտներին և ապահով զգաց իրեն։

Ու հենց որ ապահով զգաց, ներից երևակայությունը եռաց ու բորբոքվեց, այս անգամ էլ խոչընդոտները մտովի հաղթահարեց և դեմ-հանդիման կանգնեց կուրացուցիչ, բայց արդեն վնասազերծված մերկության հետ։

Այլ պատի սառնությունն ու կոշտությունները վկա, վկա այս ճրագների արդար լույսը, որ Տիրիթը սիրում էր Փառանձեմին։ Սիրում էր ավելի, քան... քան ի՞նչը... ի՞նչը... Նա ճղնեց բացատրություն ու ապացույց գտնել... քան թե իրեն։

Եվ խղճում էր նրան, խղճո՜ւմ, որ նա զրկվեց իր սիրած ամուսնուց, որ մեծ և անսահման վիշտ ունի հիմա, չսպիտացած վերքեր...

Եվ, անեղծ ու անարատ անմեղությամբ, մտքովն իսկ չէր անցնում, որ ինքը կարող էր անմիջական կապ ունենալ նրա դժբախտության հետ։

Նա սիրում էր Փառանձեմի վիշտը, իրենն էր համարում նրա վերքերը, պատրաստ էր կիսելու նրա ցավերը։ Եվ Գնելին էր սիրում, Գնելի՜ն, իր հորեղբոր որդուն։

Սիրում էր ուրախությունից, որ նա այլևս չկա, սիրում էր նրա համար, որ այս պաշտելի կնոջ անբաժան մասնիկն էր նա, սիրում էր որպես իր արյունակցի, որպես իր եղբոր։

Նա այնպիսի շիրմաքար կդնի նրա գերեզմանին, այնպիսի վարպետներ կհրավիրի քարը հնազանդեցնելու, որ նրա շիրիմը ուխտատեղի կդառնա հայերի համար։

Եվ նա այդ կանի ոչ թե ցուցադրաբար, ոչ թե իր մեղքը քավելու և կամ Փառանձեմին սիրաշահելու համար, այլ սիրելով այն ամենը, ինչ կապված է նրա հետ... Նրա զգեստները, նրա կսկիծները, նրա ոտնահետքերը, նրա մտքերը, մազերի հոտը... Եվ նրա ամուսնուն...

Նա արժանի կլինի Փառանձեմի սիրուն, մաքուր ձեռքերով կվառի իրենց տան ճրագը, կդառնա այնքան ազնիվ, որքան Փառանձեմը պահանջի, այնքան խիզախ, որքան նա հրամայի, և եթե նրա կամքը թելադրի մեռնել հանուն որևէ մեծ ու սուրբ գործի, նա մի պահ անգամ չի տատանվի։

Եվ ինքն իր հետ ու իր մասին «դուս»-ով միայն կխոսի, որովհետև «հաս»-ը այլևս չի լինի, կվերանա ու կանէանա, կմնա միայն Փառանձեմը, դու և դու...

Փառանձեմն սկսեց դանդաղ հագնվել։ Նախ հագավ պախճավանդը՝ երկու կապով երիզներ, որոնք ուղղակի մաշկի վրայից ներքուստ պատում էին լանջերը։ Ապա մտավ իր լավագույն պատմուճանի մեջ, ո՜չ սև, այլ երկնագո՛ւյն, փաթաթվեց սպիտակ ու երկայն ստոլայով ու ծածկվեց իր ամենաթանկագին զարդերով։

Սնգուլրով թեթևակի կարմրացրեց երեսը, ծարիրով սևացրեց հոնքերը, սպիտակ ներկեց ու ողորկեց ճակատը։

Հետո, ապակե հայացքով, իր փառահեղ հանդերձների մեջ, զուգված-զարդարված, սակայն՝ բորիկ, դանդաղաքայլ մոտեցավ մահճին, դեն քաշեց սրսկապանը և, առանց մարմինը ծռելու, ծալեց ոտքերը ու դիք-դիք նստեց անկողնու ծայրին։

Նստեց իր հսկա ստվերի հովանու տակ ու մտածեց, որ այս մեծ կորստին փոխհատուցում էր պետք։ Ոչ թե նախկին ունեցածին հավասար, այլ անհամեմատ գերազանցող։ Սեր չէր ուզում, գիտեր, որ Գնելի հետ անկողին մտնելիս ծնվող սուրբ և անխարդախ ամոթը այլևս չի կրկնվի, ամեն ինչ կլինի, գուցե և ավելի մեծ կիրք, գուցեև ավելի առատ քրտինք, բայց այդ ամոթը, չէ, չի լինի։ Իսկ եթե սերը մեռավ, ուրեմն կոպիտ և խիստ նյութեղեն ինչ-որ բան պետք է փոխարիներ նրան, շատ մեծ բան, իսկ թե ինչ՝ միտք էր անում, միտք, ու դեռ չէր գտնում։

Նա այս խոհերի համար չէր քաշվում Գնելից, դեռ ավելին՝ այդ մասին մտածում էր հատկապես գերեզմանատանը, նրա շիրիմի մոտ։ Դա ոչ թե դավաճանություն էր նրա թարմ հիշատակին, այլ գերվստահություն մտերիմ ու հարազատ մարդու հանդեպ։ Էլ ո՞ւմ հետ կարող էր կիսել իր մտքերը, ումի՞ց կարող էր խորհուրդ հարցնել, ո՞վ էր իր անկեղծ ընկերն ու բարեկամը, որ ընդունակ էր մինչև վերջ հասկանալու իրեն։ Ընդհակառակը, եթե աշխարհում իր համար դեռ կար որևէ իրական ուժ, որևէ ամուր հենարան, Գնելի գերեզմանն էր դա։

Այդպես անշարժ, մտորումների մեջ թաղված և փընտրտումներից խեղդված, նա մահճի ծայրին նստեց մինչև լույս, ներքուստ ընդդիմանալով, որ այս գիշերն ուզում են խլել իրենից։

Հսկա ստվերը ջնջվեց պատի վրայից, բայց նա, չնայած արեգակի լույսին, չհանգցրեց ճրագները, որովհետև նրանց մեջ էր շոշափելի ապաստան գտել անպատասխան հարցերով լեցուն այս գիշերը, գուցե միակը նրա կյանքում, որ ամբողջովին իրենն էր միայն։ Իրե՛նցը, ներո՞ղ եղիր, աստված, հաղա՞ր անգամ մեզա, իրե՛նցը, իրն ու Գնելինը։

Նա վեր կացավ մահճից ու շքեղ հանդերձանքով սպառա-

զինված, բայց՝ տնային մաշիկներով, որ հագել էր մեքենաբար, դուրս եկավ շենքից և ուղղվեց գեպի գերեզմանատուն։

Առանց իմանալու, որ այդ գիշերը պատկանում էր ոչ միայն իրեն ու Գնելին, այլև մի երրորդ մարդու։

Եվ որ Տիրիթը մինչև լուսաբաց արդեն վաղուց մտովի տիրել էր նրան։

Փառանձեմը պատրաստվում էր գերեզմանոցից տուն վերադառնալ, երբ զարմանքով նկատեց Տիրիթին, և Տիրիթն զգաց, որ այլևս իմաստ չունի թաքնվելը։

Նա մոտեցավ Փառանձեմին, լուռ գլուխ տվեց, և նրանք սկսեցին քայլել կողք-կողքի։

Ամբողջ ճանապարհին ոչ նայեցին իրար, ոչ էլ մի խոսք փոխանակեցին։

Տիրիթը դողում էր այդ մոտիկությունից, շունչը կտրվում էր նրա հոտերից, փափուկ և կատվի պես զգույշ քայլերից, ամեն քայլափոխից հետո՝ քղանցքների թեթևակի հպումից ու բաժանումից, երկար վզի չերևացող, բայց գուշակվող ելակներից և հատկապես գեղանաքարշ սպիտակ ստոլայից, որ կանչում էր, հրավիրում, իր ետևից տանում ամեն մի կենդանի արարածի։

Տիրիթը լարվեց, պրկվեց և հուզմունքից քրտնեց։ Ադամախնձորն սկսեց ստեպ-ստեպ ելնել ու իջնել։ Նա ճգնում էր քայլելիս հնարավորին չափ քիչ շարժումներ անել, վախենալով, որ հանկարծ կմատնի մարմնի մեջ սեղմված ու զսպված փոթորիկը։

Կյանքը կտար, հաստա՜տ կտար, միայն թե իմանար՝ ինչի՞ մասին է խորհում կողքից քայլող կինը, ի՞նչ մտքեր են պաշարել նրան և ի՞նչ է թաքնված այս ապակե սառը հայացքի տակ։

Երբ տուն հասան, Տիրիթը բաց արեց դարպասը ու Փառանձեմի ետևից մտավ ծառաշատ բակը։

Փառանձեմն ուղղվեց դեպի շրավազանը, մի պահ կանգ-

նել մեջքով, գլխատի մի ծալք անհանգիստ շարժվեց ուսի վրա, և նա շրջվեց ու հարցական նայեց Տիրիթին։

— Ես գիտեմ, քո վիշտը սահման չունի,— ասաց Տիրիթը, և նրա գունատ դեմքը էլ ավելի տգեղացավ։— Բայց իմ վիշտն էլ է մեծ։ Գնելը քո ամուսինն էր, իսկ իմ՝ զարմիկը։ Եղբա՛յրը։ Միայն մենք կարող ենք մխիթարել իրար։

— Ջնչին մարդ էր քո զարմիկը։ Փոքրոգի։— Հայացքը մի անորոշ կետի վրա սառած, հանգիստ ու կիսաձայն պատասխանեց Փառանձեմը։— Երակների մեջ չուր էր հոսում, ոչ թե արյուն։

— Մեղք ես գործում ասածդ առաջ,— երկարեց, դուրս ցցվեց Տիրիթի աղամախնձորը և կարծես ուր որ է պիտի պոկվեր կոկորդից ու գետին ընկներ։— Կրկնակի է քո խոսքերի հանցանքը։ Դու հանգուցյալի ես զրպարտում։

— Հանգուցյալն ինձ է պատկանում։ Ես եմ նրա միակ տերը,— չորությամբ նրա խոսքը կտրեց Փառանձեմը ու երկու պզուկ նշմարեց պատանու դեմքին։— Եվ քեզ բաժին չեմ տա։ Իմ վշտից էլ քեզ բաժին չի հասնի։

— Ես չեմ վիրավորվում, Փառանձեմ,— տխուր ժպտաց Տիրիթը ու տարածեց երկար թևերը։— Եթե դա թեթևացնում է քո սիրտը, ինչ ուզում ես ասա։ Ես պատրաստ եմ անտրտունջ լսել քեզ։

— Շնորհակալ եմ, բայց արդեն ուշ է, Տիրիթ։ Ես պետք է շուտ իմանայի, թե որքան բարի մարդիկ են ինձ շրջապատում։

Հեգնանքն ու քմծիծաղը այրեցին պատանու երեսը ու կատրմիրով ներկեցին։ Նա ձեռքը տարավ դեմքին, կարծես մաքրելու համար։ Սակայն ոչ թե նեղացավ, այլ առավել խորությամբ զգաց նրա վերքերի ցավը։ Եվ է՛լ ավելի մեծ վստահությամբ լցվեց, որ ինքը պետք էր այս կնոջը։

— Ես ուզում եմ օգնել քեզ։ Թեև իմ օգնությունը կարող է տարտղնակ, նույնիսկ վայրենի թվալ քեզ։ Մանավանդ այս պահին։

Փառանձեմն այդ խոսքի վրա հանկարծ միանգամից կակղեց, հեգնանքը չքացավ շրթներից, հալվեց ապակն սառնությունը, աչքերում անկեղծ ու անպաշտպան մի խեղ-

ճություն երևաց, ու նա, իր անզորությունը լրիվ խոստովանելով, հուզմունքով բռնեց Տիրիթի ձեռքը։

— Հենց այս պահին է ինձ օգնություն պետք...

— Ես ուզում եմ ամուսնանալ քեզ հետ։

Փառանձեմը, ցնցված, ետ քաշեց ձեռքը ու անմիջապես թաքնվեց ինքն իր մեջ, խորացավ պատյանում ու անհետացավ։

Դեմքին ոչ մի մկան չշարժվեց։

Առանց Տիրիթին նայելու, առանց որևէ վերաբերմունք ցույց տալու, դանդաղ հեռացավ, գնաց ծառուղու խորքը, հասավ մինչև ցանկապատը ու շարունակեց մտասույզ քայլել պարտեզի ծայրերով։

Սկզբում նա չխորշեց Տիրիթի անակնկալ առաջարկից, ընդհակառակը, գործնական կերպով սկսեց ծանր ու թեթև անել։ Ի՞նչ էր շահում և ի՞նչ էր կորցնում։ Մտածեց, մտածեց ու ի վերջո պարզեց, որ ոչինչ էլ չէր շահում։ Չէ, Տիրիթը փոխհատուցում չէր։ Ոչինչ էլ չէր։ Պարզապես ոչնչություն։ Ու հենց դա՛ վիրավորեց նրան, և ոչ թե բարոյական նկատառումները։

— Դու չահել ես դեռ։ Գեղեցիկ։ Ասում են, նույնիսկ շատ գեղեցիկ։ Ինձ համար դժվար է դա նկատել, որովհետև դու իմ զարմիկի կինն ես։— Տիրիթը հետևում էր Փառանձեմին ու անընդհատ խոսում, կարծես վախենալով, որ եթե լռի, ձեռքից բաց կթողնի նրան։— Բայց մեր ամուսնությամբ երկուսս էլ հարգած կլինենք նրա հիշատակը։ Օտար մարդն իրավունք չունի անկողինը կիսել քեզ հետ։ Խոստովանեմ, որ ես առայժմ սեր չեմ զգում քո հանդեպ։ Բայց այս գիտակցված ամուսնության մեջ ավելի մեծ խորհուրդ կա, քան թե սիրո։ Ես վստահ եմ, որ մենք տարիների ընթացքում կսիրենք իրար։ Եթե նույնիսկ չսիրենք, կկապվենք միմյանց, կընտելանանք, կվարժվենք։ Եվ մեր ընտանիքը, եթե ոչ կրքով, ապա իր հավասարակշռությամբ ու իր ամրությամբ վրեժ կլուծի Գնելի թշնամիներից։

Փառանձեմը կանգ առավ, և էլի զգեստի ծալքը անհանգիստ խաղաց ուսի վրա։ Նա շրջվեց և ուղիղ նայեց Տիրիթի աչքերին։

— Ուրեմն... զոհաբերո՞ւմ ես քեզ... հանուն Գնելի՞...

— Բայց չէ՞ որ այդ զոհաբերությունը ես քեզնից էլ եմ պահանջում,— իրեն չկորցրեց Տիրիթը։— Առանց սիրելու ամուսնանալ ինձ հետ։

— Դու սիրահարված ես ինձ, Տիրիթ,— ատելությամբ նրա երեսին շպրտեց Փառանձեմը։— Դու գժվում ես ինձ համար։ Աչքերդ մերկացնում են ինձ։ Կիրք է թափվում քո հագուստներից, քո զենքերից, քո ձեռքերից...

— Ամոթ է, Փառանձեմ,— սփրթնեց Տիրիթը, զգալով իր այսքան անպատեհ կործանումը։— Ետ վերցրու դիվային խոսքերդ։

— Սաղավարտի՛ց, մատանո՛ւց, մաշիկների՛ց...

— Ուշքի եկ, Փառանձեմ... Ի սեր աստծո... Մի մոռացիր նրան...

— Ականջների՛ց, գոտո՛ւց, մազերի՛ց...

— Խե՜ղճ Գնել... Իմ խե՜ղճ զարմիկ...

Տիրիթը դուրս փախավ և ամբողջ հոգով զարմացավ ու զայրացավ աշխարհի անարդարության վրա։ Չէ՞ որ ինքը պետք էր Փառանձեմին, պե՛տք էր, պե՛տք։ Հետո՞ ինչ, որ Փառանձեմն այդ չի հասկանում, չի ընդունում, բայց ինքը հո հասկանո՞ւմ է, ինքը հո գիտե՞ հաստատ։

Նրա պատճառով ոճիր գործեց, նրա սիրուց կորցրեց իր հարազատ զարմիկին, ի սեր նրա այնպես արեց, որ նա այրիանա...

Ուրեմն, որքան էր սիրում, որ նույնիսկ պատրաստ էր աչքի առաջ դժբախտացնել իր պաշտելի կնոջը, պատրաստ էր դիմելու այդպիսի մեծ զոհաբերության։

Մի՞թե Տիրիթի համար հեշտ էր իր աստվածուհուն այս ծանր կացության մեջ տեսնել, սգավորի շորերով, վերքոտ սրտով, դեմքին այսքան տառապանք և մրմուռ։

Որտեղի՞ց անցներ Փառանձեմի մտքով, թե ինքն ինչքան ապերախտ եղավ Տիրիթի հանդեպ։

Տիրիթն անհանգիստ կանգ առավ կես ճանապարհին։ Մի միտք խոցեց, ճմլեց ու ճզմեց նրան։ Ի՞նչ պիտի անի Փառանձեմն առանց իրեն։ Եթե հանկարծ չկարողանա՞

կյանքը կարգավորել... Եթե հանկարծ ուժը չպատի՞ երջանիկ լինել...

Խե՜ղճ Փառանձեմ...

Գլուխ տասներկուերորդ

Տիրիթը մի քանի անգամ գնաց Հայր Մարդպետի իջևանած տունը և միշտ նույն պատասխանն ստացավ նրա թիկնապահներից. ներքինապետը չի կարող ընդունել։

Գոնե խաբեին և խաբելով հարգած լինեին։ Ասեին տանը չէ, զբաղված է, հյուրեր ունի, հիվանդ է...

Չէ, չի կարող ընդունել։

Ըստ երևույթին, վատ էին պատանու գործերը։ Հայր Մարդպետը մի պահ անգամ չի կասկածել, որ Փառանձեմը կմերժի նրան։ Ո՞ր մի խելքը գլխին կինը կհամաձայներ այսպիսի անդուր և վանող ամուսին ունենալ, այն էլ՝ առանց շոշափելի հարստության։ Տիտղոսը լավ էր հնչում, արքայազուն իշխա՜ն, բայց մեջը փուչ էր։

Գնելը՝ ուր, Տիրիթը՝ ուր...

Գնելը բնավ արժանի չէր մեռնելու։ Որովհետև վերին աստիճանի ազնիվ էր։ Հայր Մարդպետն այս աշխարհում ամեն ինչ թույլատրելի էր համարում, բայց միայն ի՛ր համար, իսկ ուրիշների հարցում խիստ բծախնդիր էր ու պահանջկոտ։ Նա ամենից ավելի բարձր էր գնահատում մարդկային ազնվությունը, որը, ի դեպ, երբեք չի խանգարել անձամբ իրեն, երբեք խոչընդոտ չի կանգնեցրել իր ճանապարհին։ Եվ ընդհանրապես ո՞վ է մինչև հիմա վնաս տեսել ազնվությունից։ Ազնվությունն այնքան թույլ է ու անպաշտպան, որ նրա շարքերում չզինվորագրվելու դեպքում անգամ, անհնար է չհամակրել այն։

Գնել իշխանը դուրս եկավ խաղից։ Հունասերների համար էլ ուրիշ Արշակունի չմնաց, որով կարելի էր ~~փոխարինել~~

արքային։ Ուրեմն, պարսկասերների թեկնածուն ազատ ճանապարհ էր ստանում։

Տիրի՞թը։ Ծոծրակը կտեսնի, բայց հայոց թագը չի տեսնի։ Քանի Հայր Մարդպետն ապրում է, քանի գոյություն ունի, զարմիկի կնոջ վրա աչք տնկողն ու նրա դեմ ոճիր գործողը չի նստի հայոց գահին։

Եվ ինչո՞ւ Տիրիթը, ոչ թե ինքը։

Եթե Տիրիթը շատ է ուզում իմանալ, ապա թող ականջին օղ անի, որ այս ոճրագործությամբ Հայր Մարդպետ կոչված ծեր աղվեսը ոչ միայն հունասերների թեկնածուին վերացրեց, ըստ որում՝ միակ ու արժանավոր, այլև նրա ճանապարհը փակեց։

Մի քարով՝ երկու թռչուն։

Ուրեմն, ի՞նչ թեկնածությունն էր առաջարկում։

Հայր Մարդպետը, որի ուշքը հաճույքից գնում էր ինքն նրան ծեր աղվես կոչելով, մեծ բավականությամբ ձգեց, դամծմեց ու որոճաց պատասխանը։ Եվ խորամանկ ժպտաց, խաղ անելով իր հետ։

Երկար տարիներ մենակության մեջ ապրելով, նա ստեղծել էր իր երկրորդ ես-ը, որը նրա համար գոյություն ուներ որպես գերիրականություն։ Նա զրուցում էր նրա հետ, կատակում, երբեմն խաբում, ձեռք առնում, հիմար վիճակների մեջ գցում, կերակրում, լողացնում, հագցնում և, տարիքով իրեն ավելի մեծ համարելով, հովանավորում նրան։

Այդ էր պակաս, որ նա իր թեկնածությունն առաջարկեր։ Այդ աստիճանի ճղճիմացներ ահավոր ու անլուր ոճրագործությունը։ Դառնար մի սովորական դավադիր, մի թշվառ աթոռամոլ։

Եթե ակնիվ ու խիզախ մի պատանու արյունն է թափվել ու եթե այդ արյունը իրոք անխուսափելի էր, ուրեմն հարկավոր էր, որպես արդարացում, հնարավորին չափ խոշորացնել, անառարկելի դարձնել ոճրի իմաստը։

Եվ նա կանի այդ։

Եթե Տիրիթ և Հայր Մարդպետ հարցը լիներ միայն, նա

առանց փարիսեցիությանն է ասեր, որ իսկ՛ երկրի Հայր Մարդպետը պիտի թագավոր դառնա։

Բայց կար Մերուժան Արծրունին։ Էլ ինչպե՞ս կարող էր նրա խիղճը թույլ տալ չխոստովանելու, որ նա էր միակ հարմար թագավորը։ Էլ ինչպե՞ս կարող էր իսկական հայասեր ու հայրենասեր լինել և չընդունել, որ բոլոր առավելությունները անխտիր նրա կողմն էին։ Որքան էլ ուզենար, Հայր Մարդպետը ի վիճակի չէր թեկուզ մի կետ գտնելու, որտեղ ինքը գերազանցում էր նրան։

Մերուժանը իրենից երիտասարդ էր։ Իրենից սիրուն։ Համեմատելն անգամ ծիծաղելի էր։ Իսկ երկրին նաև սիրուն թագավոր էր պետք։ Էլ չեմ ասում՝ ջահել։ Իրենից համարձակ։ Իրենից խիզախ։ Էլ ո՞ր մեկը թվարկեր։ Եվ իրենից խելոք։ Խելո՞ք էր սատանան, ի՞նչ կարող ես անել։ Աչքերին նայեիր, անմիջապես գլխի կընկնեիր, որ այս մարդը մեծ գործերի է ընդունակ և ափսոս է նրան շարքային նախարար պահել, թեկուզև՝ գահնամակի ամենապատվավոր տեղերից մեկում։

Այնպես որ, այս ոճրագործությունը, ի վերջո, երկրի բախտի համար կատարվեց։ Արշակավանի ախտով վարակված թագավորի փոխարեն մի առողջ արքա ունենալու նպատակով։ Եվ այդ նողկալի ու ցավալի եղեռնի ամբողջ պատասխանատվությունը նա միայն իր ուսերին է վերցնում, չփորձելով անգամ՝ Տիրիթին մեղսակից դարձնել։

Իսկ մյուսնե՞րը։ Կո՞ւր էին մյուսները, որ Մերուժանի պես արծվին թողած, ուզում էին քոսոտ Տիրիթին առաջ քաշել։ Բանն էլ հենց այն է, որ կուր չէին, պարզապես նախանձ ճիճուներ էին, որոնք թքել են երկրի վրա էլ, ազգի վրա էլ։

Բայց, համենայն դեպս, ինչո՞ւ էր Տիրիթը համառորեն փորձում տեսնել իրեն։ Երևի, Փառանձեմից մերժում ստանալով, Հայր Մարդպետի օգնությանն էր ուզում դիմել։ Ուզում էր, որ Հայր Մարդպետը արքային համոզի ու նրա միջոցով ճնշում գործադրի Փառանձեմի վրա և ստիպի համաձայնություն տալ։

Թեև նա ընդամենը կարող էր կռահել, բայց և այնպես

արհամարհանքով մտածեց. դու ինչ ես, որ ես քո մտքերը դժվարանամ դուշակել...

Հայր Մարդպետը, ուշ գիշերին, առանց թիկնապահների, ցահը ձեռքին դուրս եկավ տնից, անցավ Շահապիվանի նեղ և մութ փողոցներով, որտեղ զինվորներ էին միայն թրև գալիս, և մտավ երկհարկանի այն շենքը, ուր Նավասարդի օրերին իշխանել էին մի քանի երկրորդական իշխաններ։

Առանց բախելու, առանց տարրական պատշաճությունը պահպանելու, նա մեկ առ մեկ բաց արեց դռները, տեսավ հարբեցողությամբ զբաղված իշխանիկների, վարձակների հետ սեր անող ծուռ ոտներով արուների, խոմփացնող ֆերուկների, իրենց մեղքերը երազներում տեսնող և անկողիններում անհանգիստ շուռումուռ եկող ստահակների, վախից ու քծնանքից ծնկաչոք աղոթող անհավատների, մինչև որ դռներից մեկի ետևում գտավ նրան, ում փնտրում էր։

Ուղղվեց դեպի մահճակալը, մոտեցրեց գլուխը և ցահի լույսի տակ տեսավ անմեղ դեմքով ու համաչափ շնչառությամբ քնած պատանի Տիրիթին։

Բութեց նրան, ու Տիրիթը սարսափահար վեր ցատկեց, կծկվեց մահճակալի հեռավոր ծայրին։

— Ինչո՞ւ ես ուզում ամուսնանալ Փառանձեմի հետ։ Երջանկությունը բթացնում է մարդուն։ —Հայր Մարդպետը ժամանակ չտվեց նրան ուշքի գալու։— Դարձնում է ծույլ և անդգա։ Ճարպակալում է հոգին։ Երջանիկ մարդը չի կարող պիտանի լինել հայրենիքին։ Դրա համար պետք է մի քիչ, մի քիչ դժբախտ լինել։

— Դու ինձ ծախում ես արքային,— Տիրիթն առաջին անգամ բարձրաձայն ասաց այն, ինչ սոսկումով մտածում էր այս օրերին։— Դու ինձ նույնիսկ ընդունել մերժեցիր... Տեսնել չուզեցիր...

— Մի՞թե չգիտես, երիտասարդ, ես այնքան հարուստ եմ, որ նոր հարստությունն ինձ այլևս ոչ մի ուրախություն չի պատճառի,— նախատինքով ասաց Հայր Մարդպետը և ձեռքի ցահով լուսավորեց պատանու ոսկրոտ դեմքը։— Ինչո՞վ էիր ուզում ինձ շլացնել։ Եթե նույնիսկ հող էլ ունե-

նայիր, ինչո՞վ պիտի ընդարձակեիք դաստակերտիս սահմանները։ Ի՞նչ ես կարծում, ժամանակ ունե՞մ այս տարիքիս նման բաների ձգտելու։

— Էլ ի՞նչն էր քեզ դրդում ինձ օգնելու,— ապշած հարցրեց Տիրիթը ու է՛լ ավելի սեղմվեց պատին։

— Գաղափարը, սիրելիս, գաղափարը։

— Իսկ հիմա՞ ինչն է քեզ մղում ինձ կործանելու,— անձայն լաց էր լինում Տիրիթը։

— Դարձյալ գաղափարը։

Տիրիթը, մի երկար ու կեղտոտ վտավակ հագին, որը մեծ էր նրա մարմնին, թռավ անկողնուց, մի պահ իր նեզ ուսերով, գունատ ու տգեղ դեմքով կանգնեց նրա առաջ, ապա ծնկի իջավ, բայց հակառակի պես՝ սխալ տեղում, ներքինապետից երկու քայլ հեռու։

Սողալով անցավ այդ երկու քայլը ու գրկեց Մարդպետի ոտքերը։

— Մի կործանիր ինձ... Ես դեռ շատ ջահել եմ... Ես էլ եմ ուզում քո տարիքին հասնել... Փրկիր ինձ... Գուցե դրա մեջ էլ գաղափար լինի... Կգտնես, իշխան, քեզ համար հե՞շտ է գաղափար գտնել...

Հայր Մարդպետը, ջահը ձեռքին բարձր բռնած, ոտքով մի կողմ հրեց նրան, սակայն հրեց ոչ ընդգծված կոպտությամբ, իրենց այս վերջին հանդիպման համար հույժ կարևոր համարելով աղնվական վարվելակերպի պահպանումը։ Դրա մեջ էլ վրեժխնդրություն տեսավ, դրանով էլ ուզեց ստորացնել այս թշվառ պատանուն։ Թող այս տպավորությամբ շունչը փչի։

Նա Տիրիթին թողեց մթության մեջ, գետնի վրա փռված հեկեկալիս, ու դուրս եկավ փողոց։

Հանգցրեց ջահը։

Վաղուց այսքան խորությամբ չէր զգացել մաքուր օդի, աստղազարդ երկնքի, տերևների մեղմ սոսափյունի և գոյության գրգռիչ հաճույքը։

Երբ Տիրիթը սատկի, հանկարծ վերջին պահին չանցնի մտքով, թե պատահականության զոհ դարձավ։ Թող իմանա, որ Հայր Մարդպետի ձեռքով է հեռանում այս աշխարհից։

Հանկարծ չմտածի, թե Հայր Մարդպետին կարելի էր ծախու առնել։ Թող իմանա, որ այս աշխարհում գաղափարն է ամենինչից բարձրը։

Ես լուծեցի քո վրեժը, Գնել։

Ես չթողեցի, որ քո մահը մնա որպես մի հերթական դատավարության հետևանք՝ խղճահարության արժանի։

Ես իմաստավորեցի այն։

Բարձրացրի երկրի բախտը լուծելու աստիճանին։

Եվ հիմա Տիրիթն արդեն հաստատ կիմանա, թե ինչի համար է սատկում։ Հենց այդքանով էլ բավարարված էր Հայր Մարդպետը։ Հենց դրանով էլ վերջացած էր համարում այս ամբողջ տխուր պատմությունը։

Ոչ թե Հայր Մարդպետը, այլ ծեր աղվեսը, հեգնանքով ճշտեց նա, խոսքն ուղղելով իր երկրորդ ես-ին։

— Ուրեմն, այդ նախանձ լակոտը... Այդ շնաբարո, այդ անմորուս պատանին... Ուրեմն, ինձ ու քեզ հիմարացնի՞... Իմ ձեռքերը հարազատիս արյունո՞վ թաթախի... Հայր Մարդպետ, կհնարես աշխարհի ամենածանր պատիժները... Լսո՞ւմ ես, կհնարես... Չդիմես ծանոթ պատիժների... Եվ դանդաղ, շատ դանդաղ կսատկեցնես նրան... Տանջանքները կպատմես ինձ... Եվ չես թաղի... Մարմինը գազաններին բաժին կտաս...— Աշխարհը մթնեց արքայի աչքերին, ու թոքերից ողբի ոռնոց դուրս թռավ.— Խե՜ղճ Գնել... Հայր ու որդի իմ զոհը դարձան... Իմ կարճատեսության... Իմ դյուրահավատության... Իմ կասկածամտության...

— Ժամանակն է մեղավոր, արքա, ժամանակը,— զգուշորեն հառաչեց Հայր Մարդպետը։— Նա վաղուց է, ինչ չի միացնում, չի միավորում մարդկանց։ Անջատում է միայն։

Արքան, ցավին չդիմանալով, վիրավոր գազանի նման պատից պատ էր քայլում և վանդակի մեջ զգում իրեն։ Սենյակն էր վանդակ, աթոռանիստն էր վանդակ, ամբողջ Շահապիվանը, ամբողջ երկիրը, ամբողջ աշխարհը, որը

թեև չունի սկիզբ ու վախճան, բայց ի՞նչ օգուտ, եթե քո մեջ են կանգնած վանդակի ճաղերը, եթե քո մեջ է բուն դրել չորս պատը։

Հայր Մարդպետը, գույնը գցած, մի անկյուն էր մտել և, կյանքում առաջին անգամ, սարսափ էր զգում արքայի վշտից ու զայրույթից։

Ինչպե՞ս արքան հավատաց ապացույցների հեղեղին, ինչպե՞ս չկարողացավ ապաստան գտնել փաստերի տարափից, Գնելին փրկել իրենից, իր մեծ և անսահման իշխանությունից, իր հզոր ու անդիմադրելի ուժից, որը միշտ ոչ թե հպարտություն ու բավականություն, այլ միայն նողկանք է պատճառել իրեն։ Եվ եթե մարդկային դեմքը լրիվ չկորցնելու համար եղել է գեթ մի փրկություն, գոնե մի օազիս անապատում, թեկուզ մի սառը աղբյուր տապից այրվող ճանապարհին, ա՜ղնիվ խոսք, դա Պարսկաստանի ու Բյուզանդիայի գոյությունն էր և նրանց արանքներում ճզմվող իր մարմինն ու հոգին։ Մեղա քեզ, աստված, մեղա քեզ, հայ ժողովուրդ, որ քո դժբախտությունն է իմ վահանը, իմ վերջին հույսն ու ապավենը։ Եթե այդ էլ չլիներ, պատկերացրու, թե ինչ լկտի ու հղփացած արքա կունենայիր դու։ Եվ ոչ իմ մեղքով, հավատա՛, ոչ իմ։ Մեղա, հազար մեղա, որ քո հաշվին եմ փրկում իմ կաշին։

Փաստերի տարափը... Ապացույցների հեղեղը... Ի՞նչ արժեն այդ բոլորը մարդկային սովորական մի նախադասության դիմաց։ Ես չեմ հավատում, թող հազար փաստ աչքս խոթեն, միևնույն է, էլի չեմ հավատում։ Եվ դու տես, թե այդ նախադասությունից հետո ինչպես կժանգոտեին, ինչպես կփտեին, ինչպես կգունաթափվեին անգամ ամենաանվիճելի, ամենաակնառու փաստերը, ինչպես կսկսեին կռվել իրար դեմ, վարկաբեկել միմյանց, մեղքը գցել մեկը մյուսի վրա, ծիտել ու հակասել իրար...

Մի մարդկային ու սովորական խոսք, ուրիշ ոչինչ։

Դու գիտեիր Գնելին, գիտեիր, չէ՞, հինգ մատներիդ պես էիր ճանաչում, վստահ էիր, որ մաքուր և անարատ պատանի է նա, անմեղ կաթի հոտ է գալիս վրայից, ասկեզօծ հարդի բուրմունք, վայրի ու ազնիվ ծաղկի բույր...

Շարիր իրար ետևից, հիմա կարող ես այդ անել, հիմա հեշտ է պերճախոս լինել, քիչ էլ մնա՝ գուսան էլ կդառնաս և, փանդիռը ձեռքիդ, նրա գովքը կանես։

Իսկ երբ պետք էր մարդկային այդ խո՞սքը ասել, ավելի հակիրճ, ավելի զուսպ և ավելի դյուրին...

Եվ այստեղ էր, որ նա կրկին զգաց արքայության՝ անգթորեն ճզմող ու կռացնող ծանրությունը։ Ու սեփական ուսերի նեղությունը։ Սա այն միակ պաշտոնն է, որն իր հսկայական մեծությամբ ոչ ոքի վրա չի նստում՝ տիրոջ չափսերի ձևով, ամենքը լողում են նրա մեջ, մեկ թևը փնտրում, մեկ՝ փեշը, մեկ՝ ուսը, մեկ՝ ոտքը... Փորձում ես վերաձևել քո մարմնին համապատասխան, և նա անմիջապես նոր մարդ է փնտրում ու փախչում քեզնից... Փորձում ես ասել, որ չես հավատում, թե Գնելը դավաճան է, և նա անմիջապես պատժում է քեզ և ուրիշի համար հագուստ դառնում... Ուրեմն, ի սեր նրա, պիտի խլացնես քո ձայնը, պիտի խեղդես թոքերիդ խորքում և ականջ դնես փաստերին, միայն փաստերին և նորից ու նորից՝ միայն փաստերին...

Այդ միակ մարդկային խոսքը։

Ե՞րբ է վերջին անգամ ասել։ Եվ ասե՞լ է արդյոք։ Ե՞րբ են շրթներն արտասանել, թեկուզ կակազելով, թեկուզ կմկմալով։

Այդ ե՞րբ է վերջին անգամ քաղց զգացել։

Ե՞րբ է ծարավել, ու ջուր չի եղել։

Ե՞րբ է թեկուզ իր անունը լսել որևէ մեկի բերանից։

Եվ ա՜յ քեզ անհեթեթություն... Եվ շնորհիվ այդ մոռացկոտության, շնորհիվ ինքնահրաժարումի, շնորհիվ ինքն իրեն դավաճանելու, նա կա, ապրում է դեռ, այսինքն երկիրը կա, երկիրն է դեռ մի կերպ ապրում։

Եվ արի ու տես, որ այս ամենով հանդերձ, դեռ նախանձում էլ են արքային, մի բան գովելու համար՝ անպայման արքայական անունն են կպցնում, այս անմիտ ու սնամեջ կյանքում տառապողներին վերջնական երջանկությամբ են խաբում և անունը էլի՜ արքայություն դնում։ Արյուն են թափում գահին տիրելու համար, բանակներ հանում միմյանց դեմ, ամբողջ երկիրն իրար խառնում, թագի հանդեպ ունե-

ցած անասնական ծարավը թաքցնելու համար ազնիվ ծրագրեր ու նպատակներ են գրում իրենց դրոշների վրա, սկզբունքային հարցերի մեջ մեղադրում թագը գործնականում կրողին, հայրենիքի անունից պախարակում, այպանում նրան...

Եվ փա՜ռք աստծո, որ նախանձում են։ Եթե այդ էլ չլիներ, եթե քո չունեցածը ուրիշի աչքերի ու մտքերի մեջ չտեսնեիր, կարելի էր հուսահատությունից գժվել, շնչահեղձ լինել։

Գնելը, իր միսը, իր արյունը, իր սերմի տարբերակը, իր համանուն պտուղը...

«Աստված իմ, որքան նման եք իրար»։

Փառանձեմի ձայնն էր, որ հիմա պարզորոշ արձագանքեց նրա ականջներում։

Իսկ ինքն ու Տիրի՞թը։ Նույն բանը չե՞ն, ինչ ինքն ու Գնելը։ Նա էլ է իր մեջ նույն սերմը կրում, նա էլ է նույն ծառի պտուղը։

Տես, տես ու ողբա, թե ինչ ժամանակներ են, տես և օղիկ-օղիկ գալարվիր գետնին, շորերդ պատառոտիր, անապատ գնա ու ճգնավոր դարձիր, մոռացիր, ուրացիր ինքդ քեզ, քանի որ որդին հոր վրա սուր է բարձրացնում, եղբայրը եղբոր փորոտիքն է ուզում թափել, ընկերը ընկերոջ աչքն է երազում հանել, բարեկամը բարեկամի արյունն է տենչում խմել։

Չէ, թող չպատմեն, այդ էր պակաս, որ պատմեին, ինքը տնձամբ պիտի տեսնի Տիրիթի մահը։ Աչքերի մեջ պիտի ընդմիշտ պահի նրա տանջանքները։ Ականջների մեջ պիտի ամուր խցանի նրա աղաղակները։ Արտաշատո՜ւմ, փողերի հանդիսավոր հնչյունների տակ։ Տոնախմբության պիտի վերածի եղբոր անարժան որդու սուրբ պատիժը։ Առատ գինին պիտի հեղեղի մայրաքաղաքի փողոցներն ու հրապարակները։ Եվ պիտի համազգային մրցույթ հայտարարի, թե ով կդտնի ավելի հնարամիտ, ավելի դաժան ու ավելի երկարատև պատժաձև։ Մեծ ու թանկարժեք պարգևներ պիտի սահմանվեն։ Ու մտրակի տասը հարված բոլոր նրանց, ում սրբ-

տերը փափուկ են և չեն դիմանա մահապարտի չարչարանքներին։

Չթողնի՞ հեռանա, չթքի՞ ամեն ինչի վրա, գլուխն առնի ու փախչի, ապրի ուրիշի տնունով, Բյուզանդիայի խուլ անկյուններից մեկում... Որա անի անտառում, գետափին ժամերով անշարժ նստի և ձուկ որսա, ու որսած ամեն մի ձկան համար ուրախանա նույնքան, որքան իրեն փոխարինող թագավորը՝ ռազմի դաշտում տարած իր յուրաքանչյուր հաղթանակի համար։ Մեկ-մեկ էլ հեռվից հեռու լսի Հայաստանի անցքերի մասին, տխրի կամ հրճվի։ Ավելի շատ տխրի, իհարկե։ Կամ էլ թե չէ՝ ապահով հեռավորությունից խելոք բաներ ասի, մատնացույց անի, թե ինչ սխալներ են այնտեղ թույլ տվել և թե ինչպես կարելի էր գրանց առաջն առնել։ Եվ, անշուշտ, ներքուստ փքվի այն գիտակցությունից, որ եթե ինքը լիներ, դեպքերը այլ ընթացք կստանային։ Եվ մտովի նախատի, թե չկարողացաք, չկարողացա՞ք ձեր արքային պահել։ Ու ինքն իր նախատինքից մխիթարվի։

Բայց այդպես կարող էր ապրել տղամարդկությունը կորցնելուց հետո միայն։ Չգիտեա ինչու, տղամարդու կարողությունը և նահանջի գաղափարը մի պահ հանկարծ սերտորեն առնչվեցին իրար։

Նա չգիտեր, տարապափից չէր էլ ուզում պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե լքեր Արշակավանը, դավաճաներ հավատարիմ արշակավանցիներին, ուրանար արքայական խոստումները, չթողներ, որ երկիրն իր արգանդի մեջ վերջնականորեն ձևավորի քաղաքը և մի գեղեցիկ օր լույս աշխարհ հանի, չգիտեր, չէր պատկերացնում, թե ինչ կլինի, բայց մի բան կարող էր հաստատ ասել, որ եթե այդպիսի մեղք գործեր, հենց առաջին իսկ կնոջ հետ անկողին մտնելիս կզգար իր ոչնչությունը...

Նա Գնելի հսկայական արձանը կկանգնեցնի Արտաշատ մայր քաղաքում, նրա անունով նոր քաղաք կկառուցի, ամեն տարի նրա մահվան օրը սուգ կհայտարարի ամբողջ երկրով մեկ...

Չէ, չի անի։

Արձանը, քաղաքն ու համազգային սուգը մշտական նա-

խառնիք կգտնեան իր համար, ամեն բոպե փոշու պես ալը կմանեն ու տեղի-անտեղի ցավ կպատճառեն իրեն...

Իսկ ես, եղբոր որդի, որքան էլ սիրեմ քեզ, որքան էլ ողբամ քո մահը, որքան էլ մեղավոր լինեմ քո առաջ, ներիր, ների՛ր, որ նոզկալի բան եմ ասելու, բայց չեմ կարող երկար ժամանակ վատնել քեզ վրա։ Դու պիտի թույլ տաս, որ ես մոռանամ քեզ։ Ինչքան շատ, այնքան լավ։ Բյուզանդիան, Պարսկաստանն ու իմ հարազատ նախարարները ամենօրյա ուշադրություն են պահանջում ինձանից, ասում են՝ զբաղվիր մեզանով, ժամանակդ ամբողջովին մեզ նվիրիր, թե չէ կխռովենք քեզնից, և դու շատ կդղջաս։ Կդղջաս, բայց արդեն ուշ կլինի։

Թացի այդ, որքան մեծ լինի քո հիշատակը հավերժացնող կոթողը, նույնքան էլ իմ մեղքը կմեծանա, դեռ հեռվից, շատ հեռվից իմ արդարացումը կերևա։ Կասկածներ կծնվեն, բամբասանք կծագի։

Չէ, իմ ժողովուրդը չսիրեց ինձ։ Չսիրե՞ց, չսիրե՞ց։ Եվ ո՞վ է ընդհանրապես սիրում արքաներին։ Ուզում է լավ լինեն, թե վատ, միևնույն է, սեր չի հասնում նրանց։ Մարդիկ իրենց ամեն մի դժբախտությունը վերագրում են արքային։ Մատը փուշ մտավ, մեղքը գցում են արքայի վրա։ Կյանքը ինչպես հարկն է չդասավորվեց, մեղավոր են հանում արքային։ Զախորդություն պատահեց, հայհոյում են արքային։ Իսկ եթե հանկարծ բախտը ժպտաց երեսներին, արքային մոռանում են և աստծուն փառաբանում։

Խե՜ղճ Գնել։ Որքան անճարակ է հորեղբայրդ իր ողբը արտահայտելիս։ Որքան սթափ է նայում իր ցավերին։ Արտասվելիս լսում է իր ձայնը։ Հոգոց հանելիս գիտակցում է, որ ներսում կուտակված կսկիծն էր դա, որ օդի հետ խառնված, դուրս թռավ կոկորդից։ Անհուն սգի մեջ անգամ կարողանում է կանգուններով չափել վշտի խորությունն ու մեծությունը։ Նա ընդունակ է անկեղծ ապրումներ ունենալու և, միաժամանակ, մանրամասն պատմելու իր ապրումների մասին, վերլուծելու, մեկնաբանելու...

Մի տխրիր, Գնել, մխիթարվիր, եղբոր որդի, որ ուրախության ժամանակ էլ նույնն է արքան։ Սիծաղելիս լսում է

իր ձայնը։ Պարելիս զգում է իր շարժումները։ Երշանիկ պահերին կարող է ավազի վրա հավաստի նկարել ու պատկերացնել իր երշանկությունը։ Հաճախ հարբում է իսկականից, տղամարդո՛ւ պես հարբում, բայց և գիտակցում է իր ամեն մի քայլը, իր ամեն մի խոսքը։

— Դու էլ ես մեղավոր, Հայր Մարդպետ,— մռնչաց նա, որովհետև ծերունին անզգուշաբար մի թեթև և աննկատ շարժում էր արել ու հիշեցրել իր գոյությունը։— Ինչո՞ւ ես լվանում ձեռքերդ։ Չէ՞ որ մենք միասին գործեցինք այս վճիռը։

— Միասին,— անմիջապես համաձայնեց Հայր Մարդպետը։

— Ինչո՞ւ ես ինձ մենակ թողնում։ Ասա, որ դու էլ ես մեղավոր։

— Արդեն ասացի, արքա,— տարակուսեց ծերունին։

— Ուրեմն, դո՞ւ էլ ես ինձ լքում,— դեռևս առանց նրան նայելու, կարծես տարածությանը դիմելով, վիրավորանքից խոցվեց արքան։— Մի՞թե այդքան դժվար է կիսել մեղքս։

— Քո մեղքը անսպատիժ կմնա, արքա։— Ծերունին զգաց, որ միակ պաշտպանությունը հիմա համարձակությունն էր։— Իսկ իմ մեղքը հղի է վտանգով։ Ինձ միայն պատիժ կվիճակվի։— Լռեց մի պահ, ապա, գլուխը համեստորեն կախած, ժպտաց։— Եվ հենց ինքդ կպատժես։

— Խե՞ղճ Գնել։

Չգիտես ինչու, դա եղավ արքայի միակ պատասխանը։

— Խե՞ղճ Գնել։

Գլուխ տասներեքերորդ

Արքան, Գնելի մահվան քառասունքն անցնելուց անմիջապես հետո, որպես քաղաքավարության ցույց, Փառանձեմին հրավիրեց իր մոտ՝ հրաժեշտի ընթրիք տալու նրա պատվին։ Բայց դիվանագիտությունը չէր միակ պատ-

Հառը։ Ականջներում դեռ հնչում էր տառապանքից ոչ թե կոտրված կամ աղավաղված, այլ է՛լ ավելի քնքշացած, կանացի է՛լ ավելի մեծ հմայքով լցված նրա ձայնը։ Թեև հակառակը պիտի լիներ։ Ջարդվեր պիտի, փշրվեր պիտի։ Վկա՝ հազարավոր կանայք, հասարակ, ընտանի ու սիրելի։ Այդ հանելուկի մեջ ինչ-որ ձգող ու վախեցնող բան կար։ Քընքշությունն ու հմայքը երևի պաշտպանական միջոց էին, փշեր էին, ճանկեր էին այդ կնոջ համար։ Ուրեմն, արժեր, նույնիսկ պարտադիր էր ծանոթանալ այդպիսի հազվագյուտ հայուհու հետ։

Թաղման օրը նա հեռվից էր տեսել Փառանձեմին։ Արձակ մազերը ծածկել էին դեմքը, բաց կուրծքը ոչ թե մատնել, այլ էլ ավելի խորն էր թաքցրել նրա գաղտնիքները։ Նրա ողբը ոչ թե սովորական լաց ու կոծ էր, այլ հաշվեհարդար աստծո հետ, հավասարների վեճ։

Արքային հանգիստ չէր տալիս այն տանջող, շնչահեղձ անող հետաքրքրասիրությունը, երբ նա, սամուրենու տակ, աչքերը փակ լսում էր կնոջ արտասվոր ձայնը, լսում նրա մարմնի խորքերից ծնվող պինդ ու կարծր բառերը, լսում, լսում և ինքն իրեն ուտում, որ չի կարող տեսնել նրան։ Այդ չբավարարված հետաքրքրասիրությունը խեղդում էր արքային, վերածվում սևեռուն գաղափարի, անկատարելության զգացում ծնում նրա մեջ։ Փառանձեմին տեսնելը դառնում էր արժանապատվության հարց։ Տղամարդու արժանապատվության։

Նա ուզում էր, ինչ գնով էլ լինի, դուր գալ Փառանձեմին, իմաստուն այրի տպավորություն թողնել նրա վրա, բարի, մարդասեր, համակրելի ու խիզախ արքայի, մի ցանկություն, որ կյանքում երբեք չի ունեցել։

Ուզում էր նախ և առաջ իրե՛ն դուր գալ, իրե՛ն ներշնչել, որ զուրկ չէ այդ բոլոր բարեմասնություններից։ Որովհետև մտքից չէր հեռանում սամուրենու տակ կրած իր կամավոր նվաստացումը, որը, ապարահեղում փսխելուց հետո թեթևացավ թեև, բայց խպառ չանցավ։

Նշանակված ժամին Փառանձեմը չեկավ։ Անցավ կես ժամ, մի ժամ, երկու ժամ, բայց էլի չեկավ։

Ահա ուր որ է նա պիտի ջղայնանար, գազազեր, վիրավորվեր, որ սովորական մի իշխանուհի անտեսում է իր հրավերը և, փոխանակ մեծ պատիվ համարելու դա, մինչև կյանքի վերջը այդ հուշը հպարտությամբ պահելու և ամենաթանկ զարդի պես գուրգուրելու, հանդգնում է չենթարկվել իր հրամանին։ Հետո՞ ինչ, որ հրավեր է։ Մի՞թե նա չգիտե, որ արքայի հրավերն էլ հրաման է։ Եթե արքան սիրում է մեկին, դա էլ հրաման է։ Եթե գովում է, դա էլ է հրաման։ Եթե հայհոյում է, ինչո՞վ է պակաս հրամանից։

Բայց արի ու տես, որ փոխանակ ջղայնանալու, Փառանձեմի հանդգնությունը դուր եկավ նրան։ Եթե տառապանքի մեջ անգամ նա չի ուզում սովորական ու ընտանի կին մնալ, եթե իր հմայքը դարձնում է պաշտպանության միջոց, որպեսզի անտեսանելի ու անհասանելի լինի թշնամիների համար, որպեսզի, անտառի գազանների նման մորթու գույնը փոխելով, հարմարվի շրջապատին, եթե այդ բոլոր անտրամաբանությունները նա ընդունում է և գնահատում, ինչո՞ւ չպիտի ընդունի և գնահատի նաև նրա ա՛յս քայլը։

Ու նա է՛լ ավելի շատ ուզեց հանդիպել Փառանձեմին...

Տառաները հայտնեցին, որ նա Սյունիք մեկնելու պատրաստություն է տեսել, իսկ հիմա գնացել է գերեզմանատուն, վերջին հրաժեշտը տալու ամուսնուն։

Արքան անմիջապես, առանց երկար-բարակ մտածելու, դուրս եկավ սենյակից, անցավ գորգապատ միջանցքով, որի երկու պատերի տակ փայտե նստարաններ էին շարված, իջավ մարմարե աստիճաններով ու մի պահ, ոտնաձայն լսելով, թաքնվեց սյան ետևում։ Երկու սպասավորներ, հանդարտ զրուցելով, անցան կողքից ու անհետացան հեռվում։ Արքան ելավ թաքստոցից ու ետին դռնից, ոչ հիմնական մուտքից, դուրս եկավ բակ, որպեսզի թիկնապահները չնկատեն ու չկպչեն պոչից։ Նա, իհարկե, կարող էր քշել թիկնապահներին, բայց, միևնույն է, ծոծրակի ետևում անընդհատ զգալու էր նրանց անտեսանելի գոյությունը։ Եվ հատկապես այսօր, Փառանձեմի հետ հանդիպելիս, որին ոչ թե ինքն էր հրավիրել, ինչպես կարծում էր, այլ որի հանդգնությունն էր նրան ձգել, տարել իր ետևից։

Գերեզմանատունը նա ընկավ անկենդան քարերի մոայլ ու հանդիսավոր աշխարհը։ Քարերը միանգամից վրա պրծան ու պաշարեցին նրան։ Ստվերները կարծես երկարեցին, ձգվեցին, մագլցեցին զգեստների վրա ու սկսեցին քաշել փեշերից։ Նա ակամա կանգ առավ ու նայեց շուրջը։ Տեսավ նոր փորված մի փոս, որի պատից հողի մի գոմռդ անձայն պոկվեց ու ընկավ հատակը։ Ջորս կողմը թանձր լռություն էր, որը ծղրիդների ձայնից էլ ավելի էր խտանում։ Ու քանի որ նա առաջին անգամն էր պալատից դուրս այսպես մենակ մնացել, մի տեսակ սոսկում զգաց ու երեխայի պես բոլորովին անօգնական և անպաշտպան դարձավ։ Հատկապես օձերից էր վախենում։ Նա անջատվել էր իր ոհմակից, և արքայասպանության համար չկար ավելի հարմար առիթ և ավելի հարմար տեղ։ Մի կանաչ մողես, գլուխը թեքած, արձանացել էր շիրմաքարերից մեկի վրա։ Եվ անուններ, փորագիր անուններ, անվերջ, անհատնում անուններ, որոնցից ամեն մեկը մի անավարտ պատմություն էր։ Իսկ նա կարծում էր, թե իր պատմությունը ավարտ կունենա։ Կկառուցվի Արշակավանը։ Երկիրը կկանգնի ամուր ոտքերի վրա։ Հայաստանը կդառնա հարուստ և հզոր։ Կբարձրանա նրա միջազգային հեղինակությունը։ Կունենա իր գիրն ու գրականությունը։ Երևի այս փոսի տերն էլ համոզված է եղել, որ խոսքը կիսատ չի մնա բերանում։

Նա շարունակեց քայլել, ոտքերը զգուշորեն առաջ նետելով, կարծես վստահ լինելու համար, թե ծուղակ չկա ու չի կարող լինել։

Հետո որսի շան պես ցցեց քիթը ու կենդանության հոտ առավ։ Մի տեսակ լիքը և առատ կենդանության։ Եվ որովհետև մի երկրորդ մարդ էր հայտնվել, ու քանի որ արքա զգալու համար անպայման երկրորդի ներկայությունն էր պետք, նա նորից ինքնավստահ դարձավ, քայլերը ամրացան, ոտնաձայները որոշակի հնչեցին, և նա ծոծրակի վրա զգաց թիկնապահների գոյությունը։

Փառանձեմը շոքել էր գերեզմանի գլխին ու մատներով հողն էր փորում։ Մի փոքրիկ փոս փորեց, ապա հանեց մաղերին ամրացված փղոսկրե սանրը, դրեց փոսի մեջ և

սկսեց ծածկել հողով։ Ուզում էր ինչ-որ հիշատակ թողնել իրենից, մի կապ ստեղծել իր և օտար ու անծանոթ այս վայրի միջև, պարտավորվել այս մի բուռ հողի հանդեպ։ Գուցե մի օր վերադառնա, նորից փորի հողը, գտնի իր սանրը և միայն ինքը հասկանա, թե ինչ մխիթարություն է դա, հոգու ինչպիսի հանգստություն և ոգիների որքան շոշափելի ու առարկայական կապ։ Նա անպայման կվերցնի սանրը, կշարունակի օգտագործել, փոխարենը իրենից մի այլ բան թողնելով փոսի մեջ։ Եվ այսպես անընդհատ, մինչև խոր ծերություն, մինչև...

Նկատեց արքային։ Ո՛ւսը զգաց։ Ծոծրա՛կը հուշեց։ Մեջքի վրա ծանրություն իջավ։

Թեքեց գլուխը, տեսավ նրան ու չզարմացավ։ Ոչ էլ շփոթվեց, որ ինչ-որ մեկը հաղորդակից էր դարձել իր գաղտնիքին։ Ձեռքերով տոփեց հողը, հավասարեցրեց, մի վերջին անգամ ափով հարթեց մակերեսը, ապա նոր միայն հանգիստ վեր կացավ ու կանգնեց նրա առաջ։

Լուռ նայեցին իրար։

Աչք-աչքի։

Հայացք-հայացքի։

Երկուսի դեմքին էլ՝ հազիվ նշմարելի մի հեգնանք։

Փառանձեմի անսպասելի գեղեցկությունը ցավեցրել ու այրել էր արքայի երեսը։ Եվ միակ հարմար պատասխանը եղել էր այս անճարակ հեգնանքը, խեղճանալու այս ակամա խոստովանությունը։

— Ես լսել էի քո գեղեցկության համբավը, բայց այն, ինչ տեսա, գերազանցեց իմ երևակայությունը։ Թող այս ծանր վշտի պահին իմ անտեղի հաճոյախոսությունը ավելի անկեղծ ու համոզիչ հնչի քո ականջին։

— Շնորհակալ եմ, արքա,— գլուխը խոնարհեց Փառանձեմը։

— Ես հրամայեցի, որ ամբողջ երկիրը պաս բռնի քո ամուսնու համար։

— Երախտապարտ եմ, արքա։— Լռեց մի պահ և նորից նայեց ուղիղ արքայի աչքերին։— Իսկ դո՞ւ։ Պաս կբռնե՞ս։

— Քեզ անմիտ և ուշացա՞ծ է թվում իմ հրամանը։

— Ո՞վ սպանեց Գնելին, արքա։

— Նա կկրի իր ահավոր պատիժը։ Դու մի անհանգիստանա։ Ես չեմ ուզում, որ քո փխրուն սիրտը պղտորվի ճշմարտությունից։

— Ոչինչ, ասա, ես կդիմանամ։ Իմ սիրտը ավելի ծանոթ է ինձ, քան արքային։

— Եթե իմանայի, որ դա կթեթևացնի քո վիճակը...

— Քո իմանալը կամ չիմանալը ի՞նչ արժեք ունեն, արքա, եթե ես ինքս գիտեմ։

— Քո հանդուգն լեզուն ինձ դուր է գալիս։ Եթե չես ուզում, որ արքան տարվի քեզանով, խորհուրդ եմ տալիս հեզ ու խոնարհ լինել։

— Գուցե արքան արդե՞ն սիրահարված է ինձ։

— Իսկ եթե նա քեզ առաջարկի իր կի՞նը դառնալ։ Դա քեզ շա՞տ լկտի կթվա այս վշտի պահին։

Այնքան հանպատրաստից էր այդ նախադասությունը, այնքան անսպասելի հենց իր համար, որ նա չհասցրեց զգուշացնել իրեն, ժամանակ չգտավ ինքն իր հետ խորհրդակցելու։ Ստացվեց այնպես, որ անզգույշ մի խոսքի, մինչև վերջ չմտածված, չկշռադատված մի քանի խոսքերի պատճառով արքայի հետագա բախտը կախված էր լինելու Փառանձեմի պատասխանից, մի «այո»-ից ու մի «ոչ»-ից։

— Այն, ինչ պարտադիր է հասարակ մահկանացուների համար, միայն արքան իրավունք ունի խախտելու։

Արքան որսաց, որ Փառանձեմի պատասխանի մեջ և՛ կանացի խաղ կար, և՛ տառապանք։ Զարմանալի կերպով նա կարողանում էր համատեղել հակասական զգացմունքները։ Հաշտեցնել միմյանց ժխտող տրամադրությունները, սանձել ու ստիպել, որ դրանք ձեռք ձեռքի հանդես գան որպես մի միասնություն, որպես մի ամբողջություն։ Իսկ դա ավելին էր, քան սովորական համաձայնությունը կամ մերժումը։

— Ուրեմն, թույլ տուր խախտելու սգի կանոնները և խնդրելու քո ձեռքը։

— Քո կամքը, անկախ իմ ցանկությունից, օրենք է ինձ համար,— հարգալիր խոնարհվեց Փառանձեմը։— Եվ իմ այս համոզմունքով ես ու դու պարտական ենք... ամուսնաս։

— Եթե այդպես է, նա չի խանգարի մեր ամուսնությանը։ Ուրեմն, նա մահից հետո էլ մնում է իմ հավատարիմ հպատակը։

Արքան կարող էր ետ կանգնել իր խոսքից, կատակի վերածել իր առաջարկը, գերի չմնալ անզգույշ արտասանված նախադասությանը, չմտածված, չկշռադատված խոսքին։ Եվ եթե չարեց այդ ամենը, ապա արդյո՞ք այնքան էլ անզգույշ էր նրա խոսքը, արդյո՞ք չէր մտածված ու կշռադատված, թեկուզ՝ հենց արտասանելու կարճատև պահին։ Որովհետև մարդու ներքին ժամանակը, նրա բնազդների, վախերի, կասկածների, տատանումների, գրեթե ամեն քայլափոխին ընտրություն կատարելու պահերը և նրանից դուրս գտնվող իրական ժամանակը տարբեր չափումներ ունեն ու բնավ չեն համապատասխանում իրար։ Մեկը միայն քոնն է, մյուսը՝ բոլորինը։ Քոնը ձգվում, երկարում է հավիտենության աստիճան, իսկ մյուսը, համայնականը, երևութական է ու խաբուսիկ։

— Միայն մի պայմանով, արքա,— չոր ու գործնական տոնով, առանց ամոթի նշույլի, նրան դիմեց Փառանձեմը։— Եթե ես առաջինը լինեմ քո կանանոցում։

— Այսինքն՝ թագուհի՞։

— Եթե ինձ կոչեն տիկնանց տիկին։

— Համաձայն եմ։ Թագուհի և տիկնանց տիկին։

Գուցե հենց սամուրենու տա՞կ էր ծնվել արքայի որոշումը, երբ աչքերը փակ էին, իսկ ականջները՝ բաց։ Եվ կնոջ ձայնը հոսում, հոսում, լցվում էր նրա մարմնի բոլոր անկյունները և դուրս գալու, դատարկվելու տեղ չէր գտնում։ Ու քառասուն օր նա ապրում էր այդ ձայնով, սիրահարված նրա նրբերանգներին, ամեն մի հնչյունին, բայց առանց իմանալու, թե ում է պատկանում։ Հենց դա էլ կանխորոշեց ամեն ինչ։ Եթե արքան առաջին օրը ոչ միայն լսեր, այլև տեսներ նրան, թեկուզ կուրանար նրա գեղեցկությունից, հիանար ու սքանչանար նրանով, դժվար թե այսօր անխուսափելի դառնար նրա ձեռքը խնդրելը։

— Ես քեզ հրավիրում եմ ընթրիքի,— ասաց արքան,

ձևացնելով, թե այդպիսի հրավեր չէր եղել նախօրոք ու չէր մերժվել Փառանձեմի կողմից։

— Շնորհակալ եմ, արքա։ Շոյված եմ քո հրավերի համար։

— Դու քո սանրը մոռացար,— այնպես, ի միջի այլոց, ակնարկեց արքան։

— Բայց սա իմ միակ սանրը չէ,— նազանքով ժպտաց Փառանձեմը։ —Ես ուրիշն էլ ունեմ։

Նրանք անցան շիրմաքարերի արանքներով, տասնյակ Ներունների ու կիսատ մնացած պատմությունների կողքով, ու երբ դուրս եկան գերեզմանատան պարիսպներից, արքան ապշած տեսավ, որ թիկնապահները սպասում էին իրեն։

Սպասում էր նաև երկտեղանի մի կառք...

Նրանք նստեցին կառքը ու լուռ ճամփա ընկան։

Փառանձեմը հասկացավ, որ ինքը հասել էր իր նպատակին։ Նրա մտքի ծայրովն իսկ չէր անցել, թե կարող էր ամուսնանալ արքայի հետ ու թագուհի դառնալ։ Բայց իսկական փոխհատուցումը սա էր։ Իր մեծ սիրո, իր սպասված երջանկության, իր բախտավոր ու ծախսված անցյալի։ Ասում էր, չէ՞, որ այդ ամենը պետք է փոխարինվեր կոպիտ ու խիստ նյութեղեն ինչ-որ բանով։ Եվ գու ճակատագրի իմաստուն խաղը տես։ Տես, թե ում հաշվին է նա ստանում փոխհատուցումը։ Վճարում է նա, ով խլել է քեզնից։ Տալիս է նա, ով վերցրել է քո ձեռքից։ Մի խենթ ծիծաղ եկավ, սեղմեց Փառանձեմի կոկորդը, և նա հազիվ զսպեց, որ դուրս չպրծնի բերանից։ Աչքի տակով երախտագիտությամբ նայեց իր թշնամուն, թաքուն զննեց նրա լուրջ և մռայլ դեմքը ու խորապես համակրեց նրան։ Դարձյալ հաշտեցրեց, դարձյալ համատեղեց հակասական զգացմունքները։ Առանց ճիգի, առանց կասկածների, առանց ինքն իր հետ կռիվ մղելու։ Խաղաղ ու հանգիստ։

Դահլիճում մի երկար սեղան կար ու երկու սպասք։

Սեղանի մի գլխին նստեց արքան, իսկ մյուսին՝ Փառանձեմը։

— Բայց ես գիտեմ, որ դու ես սպանել Գնելին։

Արքան շանթահարված վեր թռավ տեղից, սփրթնեց ու

ատելությամբ նայեց երկար սեղանի հակառակ կողմում նստած կնոջը, որը, կենտրոնացած դեմքով, խորտիկներ էր ընտրում ու լցնում իր պնակը։

— Ուրեմն... Ուրեմն, դու ծաղրո՞ւմ ես ինձ։

— Ես չեմ հանդգնի ծաղրել իմ արքային,— անվրդով պատասխանեց Փառանձեմը։

— Այդ դեպքում... ինչո՞ւ ես համաձայն ամուսնանալ ինձ հետ։

— Ես խոստացել եմ Գնելին։ Եվ չեմ դրժի իմ խոստումը։

— Ի՞նչ ես խոստացել,— ապշահար հարցրեց արքան։— Ի՞նչ կարող էիր դու նրան խոստանալ։

— Ամուսնանալ այն մարդու հետ, ով կսպանի նրան։

— Բայց... դա ինչ հրեշավոր խոստում է... Նույնիսկ ինձ ստիպեցիր սոսկալ...

— Դա միայն ինձ է վերաբերում, արքա։ Քեզ իմ համաձայնությունն էր պետք, ես տալիս եմ։

— Բայց դու ինձ ատում ես,— ձայնը խեղդելով, սեղանի մի ծայրից մյուսը գոռաց արքան։— Եվ ամբողջ կյանքումդ պիտի ատես։

— Եվս մի պայման. մի փորձիր գուշակել իմ մտքերը։ Իմ մտքերը թող միայն ինձ պատկանեն։ Մնացած ամեն ինչը՝ քեզ։— Նա ելավ տեղից, դանդաղ մոտեցավ արքային ու հանգիստ կանգնեց նրա առջև։— Մի՞թե արքային սեր է պետք։ Մի՞թե որևէ մեկը կարող է սկզբից մինչև վերջ հետաքրքրել նրան։ Իսկ քո ո՞ւժը, քո հզորությո՞ւնը, քո հոգսերն ու զբաղվածությո՞ւնը։ Դրանք չպետք է թույլ տան, որ նկատես մի ուրիշի։ Ես քեզ համար երեխաներ կծնեմ։

— Ինձ հստակ պատասխան է պետք,— արքան դեմքը մոտեցրեց նրա դեմքին, կարծես մոտիկից տեսնելու ու լրիվ հասկանալու մտադրությամբ։— Դու չպետք է առեղծված մնաս ինձ համար։

— Չեմ ուզում մենակ լինել, արքա,— անկիրք պատասխանեց Փառանձեմը։— Ինձ նեցուկ է հարկավոր։ Կոպիտ և ուժեղ հենարան։ Ու անմիջապես։ Հենց հիմա։ Հենց այս պահից։

— Դու Գնելին չես սիրել,— նրա ականջին շշնջաց ար-

քան։— Դա ինձ մխիթարում է։ Որպես տղամարդու, ոչ որպես արքայի։

— Սո՛ւտ է,— հանկարծ պոռթկաց Փառանձեմը ու ետ քաշվեց նրանից։ Աչքերը լցվեցին արցունքով և ատելությամբ։ Ատելություն թե՛ Գնելի, թե՛ արքայի հանդեպ։— Ես սիրել եմ նրան։ Ես իմ սերը անմնացորդ ծախսեցի նրա վրա։ Բայց նա քեզ ավելի սիրեց, քան ինձ... Քո միջ ավելի շատ բան տեսավ, քան իմ։ Դրա համար նա պետք է պատժվի։

— Եվ ես պարզապես միջո՞ց եմ դառնում վրեժինդրության։

Փառանձեմը հուշիկ քայլերով մոտեցավ արքային, մի պահ բաց ու պարզ հայացքով կանգնեց նրա դիմաց, կարծես քիչ առաջվա կինն այլևս չկար ու չէր եղել երբեք, ապա քնքշորեն քանդեց նրա գոտին, գցեց գետնին, հանեց սուրը, նույնպես գետնին գցեց...

— Բայց նա չկա, արքա,— մեղմ ժպտաց Փառանձեմը։— Դու մի վախեցիր նրանից։

— Պատրաստվիր ամուսնության,— անակնկալներից հոգնած ու ձանձրացած, ասաց արքան։ —Ես որոշեցի ամուսնանալ քեզ հետ։

Կռացավ, գետնից վերցրեց սուրն ու գոտին, դրեց թևի տակ և արագ դուրս եկավ դահլիճից։

Արքայի քաջերը հետամուտ եղան փախստական Տիրիթին և, ինչպես պատմիչն է վկայում, հասան մինչև Բասեն գավառը և անտառում սպանեցին նրան։ Երբ թունավոր նետը մխրճվեց մեջքին ու ցած տապալեց ձիուց, Տիրիթը հասցրեց մի վերջին խոսք փոխանակել ինքն իր հետ։ Եվ դա ափսոսանք եղավ։ Ոչ իր մահվան, ոչ դավաճանության, ոչ եղբայրասպանության համար, ո՛չ, հազա՞ր անգամ ոչ։ Ափսոսանք, որ Փառանձեմն առանց իրեն կկորչի այս աշխարհում։ Եվ թե ինչպես, ինչպե՞ս նա այդքան բան չհասկացավ։

Կոկորդից մի խոռոց դուրս եկավ, մի համառ ու ցավոտ հնչյուն։

Ամենավերջին հնչյունը կյանքում։

Ուզեց ասել՝ խե՜ղճ Փառանձեմ։

Բայց մահը թույլ չտվեց։

Գլուխ տասնչորսերորդ

Ներսեսը, Շահապիվանի դեպքերից հուսահատված ու զզված, թաղումից անմիջապես հետո հեռացավ բանակատեղից ու փորձեց հոգու ապաստան գտնել իր համար։ Դրպրոցները չմխիթարեցին նրան։ Աղքատանոցները չմեղմացրին վիշտը։ Հիվանդանոցները չվերացրին տագնապը։ Իշևանատները չսփոփեցին վիրավոր սիրտը։ Ընդհակառակը, շփոթության մատնեցին նրան։ Էլ ինչի՞ էին պետք մարդասիրության այս ճիգերը, այս սուտ վկայությունները, եթե արմատի մեջ է չարությունը։ Իսկ դու ցողունն ես ուզում բուժել, ճյուղերը, տերևները...

Եվ հուսահատությունը կխեղդեր նրան, բարեգործությունը մահացու ծաղր կդառնար տիրոջ հասցեին, եթե նա չհիշեր իր եղբոր տղային, իր սիրելի, իր հարազատ, իր միանուագար Վրիկին, որին ավելի շատ իրավունք ուներ իր ծնունդը համարելու, քան Սահակին։ Սահակի մարմինն էր միայն նա ծնել։ Ծնել էր մի գիշերում, հանգուցյալ կնոջ հետ մեղք գործելով և դեռ այդ մեղքից էլ անամոթ հաճույք վայելելով։ Իսկ Վրիկի հոգին էր նա ստեղծել, հոգին։ Եվ ոչ մի գիշերում։ Եվ ոչ թե հաճույքի, այլ տանջանքի ու տառապանքի գնով։

Այդ ստեղծագործությունը նա չի փոխի տասնյակ բարեգործական հաստատությունների հետ, որովհետև վերացական է դրանց արդյունքը, ինքը չի տեսնում, ինքը չի վայելում, ինքը չգիտե, թե ում է լավություն անում, ում է պարտավորում, ում է ստիպում երջանիկ լինել։

Ու երբ նա տեսավ, որ իր կարգադրությունը ի կատար է ածված, որ Վրիկը ամուսնացել է և կնոջ հետ տան շեմին

նստած, գլուխը պատին հենած, աչքերը փակ, տաքանում է արևի տակ, հոգին խայտաց հրճվանքից, մի մեծ և անսպառ ներոզամտություն զգաց բոլոր անօրենների ու անարժանների հանդեպ, սաստիկ թողություն խնդրեց նրանց մեղքերի համար, և աչքերը լցվեցին արցունքով։

Կինը տգեղ էր։ Աստված է վկա, որ արդար ու իրավացի էր կնոջ տգեղությունը։ Որովհետև գեղեցկությունը բախտավորության հեշտ ճանապարհն էր, անարգել, անխոչընդոտ։

Ուրեմն, իր այդ կարգադրությունը ևս չէին մոռացել։

Իսկ Վրիկին չէր կարելի ամեն ինչ պատրաստի տալ, ծամել, բերանը դնել։ Խորապես սխալ կլիներ նրան ինքնուրույնությունից զրկելը։ Նա պետք է սեփական ուժերով ստեղծագործեր իրենց սերը, արյուն քրտինքով, տառապանքով, կասկածելով, դիմադրելով, քայլ առ քայլ նվաճելով։ Եվ նա հիմա, քանդակագործի նման քարին հաղթած ու ձև տված, հողագործի պես վաստակած, իր երջանկությունն էր ի ցույց դրել աշխարհին։

Ներսեսը մոտեցավ աչքերը փակ մարդուն և շշնջաց նրա ականջին։

— Երջանի՞կ ես, Վրիկ...

Վրիկը չբացեց աչքերը, չզարմացավ նրա անակնկալ հայտնությունից, կարծես նույնիսկ սպասում էր։ Մի քիչ էլ տարակուսանքի մեջ էր, թե ինչու այդ հարցը վաղուց չի տրվել իրեն։ Անգիր սերտածի պես գլխով արեց և ուրախացավ, սրտանց ուրախացավ, որ պատասխանելու առիթ ունի նորից։

Ներսեսը հանգստացած շունչ քաշեց և ուսերից թոթափեց իր ծանր ապրումներն ու հոգսերը։ Երևի ոչ միայն Վրիկը, այլ ինքը ևս պարտավոր էր երջանիկ լինել։ Գուցե ինքն էլ ստիպված էր երջանիկ ապրելու։

Նա լուռ նստեց նրանց կողքին, փայտե նեղլիկ նստարանի վրա, մեջքը հենեց պատին ու սկսեց տաքանալ արևի տակ։

— Ներիր, արքա,— ուշ գիշերին շնչասպառ ներս վազեց Գրաստամատը, ծնկի նետվեց, աչքերում՝ անասնական

մի վախ, կարծես սուրը դեմ էին արել կոկորդիս և ուր որ է պրտի ողջ-ողջ մորթեին։— Գիտեմ, որ հենց այս պահից կարող ես ատել ինձ... Ասված է վկա, որ ես անմեղ եմ... Անմեղ եմ, արքա... Բայց պարտ եմ հայտնել այն, ինչ լսել եմ...

— Ասա, ի՞նչ է եղել,— սառը հարցրեց արքան, որն ուրիշի աչքերում երկյուղ տեսնելով, բնազդաբար չարանում էր և ակամա դաժան դառնում։— Իսկ իմ սիրուց դու նույնքան վախեցիր, որքան և ատելությունից։

Նա արդեն վերադարձել էր Արտաշատ և պալատի իր ննջասենյակում, հռոմեական ոճի կարճլիկ բազմոցին նստած, եռաստեղ շարժական չահը կողքին, ոտքերն էր լվանում նգույրի մեջ։

— Գնելը կենդանի է, արքա...

Չգիտես ինչու, նա ոտքերն անմիջապես հանեց չրից, դրեց չոր գետնին, գորգի վրա և, սրունքները չոռած ու պատմուճանը ծնկների վրա հավաքած, անշարժ մնաց մի պահ։

Առաջին բանը, որ զգաց, դժբախտությունն էր, վերացական ու տիեզերական մի դժբախտություն, որի առաջ սենեկապետի հաղորդած գուժը չնչին մի կաթիլ էր ահռելի ծովում։

Ո՞վ կարող էր ասել, թե ինչու է ծնվել և ինչու է ապրում... Եվ արա՞ծն ինչ է, ո՞ւմ համար, ինչի՞ համար... Ե՞րբ է մի կարգին օր տեսել... Ո՞վ է նրան սիրել... Ո՞վ է նրա կարիքն զգացել... Ո՞վ է մարդավարի նրա անունը տվել...

— Ինչպես թե կենդանի... Կենդանի՞... Խելքդ գլխի՞դ է, սենեկապետ... Ես քեզ հրամայում եմ իսկույն հերքես այդ նողկալի սուտը... Տեղնուտեղը հերքես... Կենդանի՞...

— Ես անմեղ եմ, արքա...

Արքան մի կողմ հրեց նգույրը ու վեր կացավ։ Հիշեց, դժվարությամբ ու մեծ ճիգով հիշեց, որ վտանգի պահին բոլոր Արշակունիները, իր բոլոր անծանոթ պապերը, կանգնած են եղել։

— Ո՞վ է հաղորդել լուրը։

— Գնելի դայակը։ Նա վարձատրություն է պահանջում քեզնից։

— Տո՛ւր,— չգիտես ինչու, նա գոռաց սենեկապետի երեսին։— Շատ տուր, որ խղճի խայթ չզգա դավաճանության համար։

Արքան խուճապով սկսեց սրբել ոտքերը։ Թաց ոտքերը ևս մի տեսակ անապահով վիճակ էին ստեղծում։

Նա կանգնել էր մի ոտքի վրա և, հազիվ հավասարակշռությունը պահելով, մյուսն էր սրբում։

Հագավ փափուկ, կարմիր մուճակները։

Սուրը կապեց մեջքին, ուսերին գցեց ծիրանի քղամիդը, գետնից վերցրեց ջահը և, կազմ ու պատրաստ, դուրս եկավ ննջասենյակից։

Դրաստամատը վեր կացավ հատակից և, շունչը պահած, հետևեց տիրոջը։

Պալատի մութ ու դատարկ միջանցքներով ուրվականի պես քայլում էր արքան, ձեռքի ջահը դեպի գետին շուռ տված։ Քայլում էր և, ինչպես միշտ, դժվար պահերին, ծերունու պես ինչ-որ բան փնթփնթում քթի տակ։ Գանգատվում էր, որ սկսել է շուտ հոգնել։ Ախորժակը վատացել է։ Գիշերները լավ չի քնում։ Եվ որ էլի հոդացավ ունի։ Երևի նորից է անձրև գալու։

Հանկարծ շրջվեց, գլխից վեր բարձրացրեց ջահը ու շշուկով հարցրեց Դրաստամատին.

— Իսկ... այդ գլխատված մարդը... դագաղի մեջ... Ո՞վ էր...

— Չգիտեմ, արքա։ Երևի Գնելի ծառաներից մեկը։

— Մերկացրու դիակը...— Ձեռքը դողաց, ձայնը կերկերաց, և նա կարծես նոր կռահեց գուժի ամբողջ իմաստը։— Կանչիր Փառանձեմին... Թող գնի, թող շոշափի մերկ մարմինը... Միայն մերկությունը կմատնի նրան...

— Մի՞թե հարկ կա, որ մի նոր մարդ էլ իմանա, արքա։

— Ճիշտ է, սենեկապետ... Կարիք չկա Փառանձեմին

կանչելու...— Ու պաղատանքով դիմեց նրան.— Սանձիր ինձ, մի թող, որ հիմարություն գործեմ...

Շարունակեց քայլել, մինչև որ ջահի լույսը մթության միջից անջատեց գահասրահի առջև արածայր տեգերով կանգնած երկու զինվորի։ Արքան ներս մտավ, բարձրացավ պատվանդանի աստիճաններով, նստեց գահի վրա, ջահը դրեց կողքին ու ձեռքերը մեկնեց բոցին։

Միշտ, երբ արքան գժվար կացության մեջ էր ընկնում, գալիս, նստում էր գահին ու նոր միայն որոշում ընդունում։ Եվ փորձված բան էր, որ այդ որոշումները մեծ մասամբ անսխալ էին լինում։ Գահասրահը ոչ թե վստահություն էր ներշնչում սեփական ուժերի հանդեպ, ոչ թե համարձակություն ու վճռականություն էր տալիս, այլ պարզապես աշխատանքի սենյակ էր։ Իսկ Գնելի այս անակնկալ հայտնությունը աշխատանք էր պահանջում, ծանր ու հոգեմաշ աշխատանք։

— Ես խորհուրդ եմ տալիս ոչնչացնել գուժկանին,— զգուշորեն նրա մտքերն ընդհատեց Դրաստամատը խավարի միջից։— Որպեսզի միայն ես ու դու իմանանք։

— Չէ, չէ, թող էլ մարդ չմեռնի,— իրարանցման մեջ ընկավ արքան ու սաստիկ շփոթվեց այդ առաջարկից։

— Ես քեզ երբեք ոչինչ չեմ խնդրել, արքա... Առաջին անգամ եմ մի բան խնդրում... Թույլ տուր ոչնչացնել գուժկանին...

— Ո՛չ,— գոռաց արքան։— Այլևս ոչ մի սպանություն։

Սո՛ւտ է, աշխարհում չկա մի բան, հանուն որի կարելի է մարդ սպանել։ Չկա մի գաղափար, որի անունից թույլատրելի է զոհել մարդու կյանքը։ Չկա մի մեծ նպատակ, որի համար արժե մուրդուց խլել ապրելու իրավունքը։ Եվ որքան մեծ են գաղափարն ու նպատակը, այնքան էլ պետք է բացառվի սպանության հնարավորությունը։ Իսկ եթե սպանությունն անխուսափելի անհրաժեշտություն է, ուրեմն, գաղափարներն ու նպատակները փտած են ներսից, ուրեմն, ինչ-որ բան էն գլխից կարգին չէ, և քանի շուտ է՝ ձեռք քաշիր միավորված հայրենիքի երազանքից։

— Միևնույն է, Գնելը իրավունք չունի կենդանի մնա-

լու... Չունի, Դրաստամատ, չունի... Մի՞թե նա այդքան բան չի հասկանում... Ինձ զեկուցեցին, որ նա գլխատված է... Մենք թաղեցինք նրան... Մենք ողբացինք նրա մահը... էլ ինչի՞ վրա է հույսը դրել... Ի՞նչ է դուրս գալիս... Մեր մեղքը է՞լ ավելի է ծանրանում... Նա մեզ ստիպում է նորի՞ց ոճիր գործել... Չէ, չէ, թող էլ մարդ չմեռնի...

Նա վեր կացավ, ջահը պոկեց գետնից, փչեց, հանդրեց բոցը ու արագ դուրս եկավ գահասրահից։

Դրաստամատը ևս միջանցք ելավ, բայց արքային չտեսավ։ Անհետացել էր մթության մեջ։ Երկար փնտրեց նրան, մտավ ընդարձակ հարկաբաժնի բոլոր սրահները, ամենուրեք շշուկով ձայն տվեց, սակայն արքան չկար ու չկար։

Դրաստամատը կորցրեց իրեն, որովհետև, ինչ գնով էլ լինի, պետք է այս դիշեր տեսներ արքային ու մինչև լուսաբաց, մինչև առաջին աքլորականչը հաշտվեր նրա հետ, թույլ չտար, որ նրա վերաբերմունքը մազաչափ իսկ փոխվի։ Իսկ որ փոխվել էր, որ արքան մահացու սրտնեղել էր իրենից, դրանում ոչ մի կասկած։ Որովհետև նրա համար գուժկանը համահեղինակ էր եղելությանը։ Ուզում ես ամենակարևոր, ամենացնցող լուրը հաղորդիր նրան, ասա, որ այս գինին մի խմիր, ասա, որ թունավորված է, այսինքն՝ փրկիր նրա կյանքը, միևնույն է, անկախ իրենից, նա ոխ կկապի քո հանդեպ։ Եթե մինչև առավոտ չկարողանա փոքձանքը կանխել, ոտքով-գլխով կորած է։ Ուշ կլինի լուսաբացից հետո։ Ով-ով, բայց Դրաստամատը լավ գիտեր այդ։ Թքած Գնելի վրա։ Եթե կուզես իմանալ, թքած նաև արքայի վրա։ Այո, այո, արքայի վրա։ Որովհետև իր համար առանձին արքա չկա։ Չկա արքա առանց սենեկապետի։ Ինչպես և սենեկապետը գոյություն չունի առանց արքայի։ Նա իրենով էր իմաստավորում, իրենով էր շնչավորում, իրենով էր հոգի ու մարմին տալիս արքային։ Եթե արքան գժվար պահերին չի հարցնելու իր կարծիքը, եթե արքան կարիք չի զգալու իր խորհուրդներին, եթե ինքը անկեղծաբար չի պատասխանելու նրան ու ճշմարտությունը արժանապատվությամբ չի տալու նրա երեսին, եթե զրկվելու է իր արհեստ-

տից, իր մասնագիտությունից, որը իր, աշխարհում ոչ մի հարազատ չունեցողի համար, փոխարինում էր թե՛ ծնողներին, թե՛ կնոջը, թե՛ զավակներին, էլ ի՞նչ իմաստ ուներ ապրելը։

Նա գլխի ընկավ, որ ամեն տեղ որոնել էր արքային, բացի ննջասենյակից։ Բայց, պալատում ընդունված կարգի համաձայն, ոչ ոքի իրավունք չէր տրված առանց կանչի նրա ննջասենյակը մտնելու։ Դրաստամատը ուրիշ ելք չուներ, պիտի խախտեր կարգը, թեև դա խստիվ դեմ էր իր սկզբունքներին։

Երկար կանգնեց ննջասենյակի առաջ, սիրտ չանելով մտնել։ Ոչ թե արքայի դժգոհությունից կամ բարկությունից էր վախենում, ո՞չ, այլ պարզապես մինչև ուղնուծուծը օրինապահությամբ վարակված լինելով, չէր կարողանում դարավոր սովորությունը խախտել, մանավանդ, որ այդ անհրաժեշտությունը ծագել էր հանուն իրեն, ոչ թե արքայի։

Նաև արքայի։ Արքայի՛, արքայի՛։

Դողդոջ ձեռքերով, սրբապղծություն կատարելու պես, նա կամաց բաց արեց ննջասենյակի երկփեղկ դուռը, զգուշորեն մի կողմ տարավ սրահակը, տեսավ արքային ու հանգստացավ։

Արքան շորերով պառկել էր քառոտանի փայտե լայն մահճին, դեմքը պատին շրջած, աշխարհից նեղացած ու խռոված։

— Եթե չես ուզում ինձ ատել, արքա, եթե իրոք չես ուզում...— Նա ցածրաձայն էր խոսում, բառերը դժվարությամբ դասավորելով կողք կողքի, աչքը չհեռացնելով արքայի անշարժ ու անկենդան մեջքից։— Հրամայիր վերջ տալ նրա կյանքին... Միայն այդ ձևով կմեղմանա քո ատելությունն իմ հանդեպ... Իմ ու քո միջև երրորդ մարդ է պետք... Ես քեզ լավ եմ ճանաչում...

— Իսկապե՞ս ճանաչում ես, սենեկապետ,— առանց շրջվելու, հարցրեց արքան։— Ես քեզ հավատում եմ։ Սպանիր գուժկանին։ Բայց վարձատրություն տուր՝ հետո։ Մտքով չանցնի, թե արքան երախտամոռ եղավ։— Ապա անսպա-

սելիորեն սկսեց ցածր ձայնով քրքջալ, մի տեսակ անբնական ու չար։ Եվ, նույնքան էլ անսպասելի, դանակի պես կտրվեց ձայնը։— Վերջապես դու էլ հասար իմ օրին... Իմ ազնիվ, իմ բարի Դրաստամատը, որ մրջյուն անգամ չի կարող սպանել։

Դրաստամատն զգաց, որ փրկված է։ Ուրիշի կյանքի գնով, բայց փրկված է։ Թող աստված վկայի, որ արդար էր այդ սպանությունը։ Եթե դայակը ընդունակ է իր սանին դավաճանելու ու փոխարենը վարձատրություն պահանջելու, վաղը նա կարող է նաև հայրենիքը ծախել։ Ուրեմն, նա մեռնում է ոչ թե Դրաստամատի, այլ իր գործած մեղքի համար։

Սենեկապետը անմիջապես մտավ իր նախկին դերի մեջ, մոռացած քիչ առաջվա մտատանջությունները։ Կարծես մի զգեստը հանեց և մյուսը հագավ։ Նա նորից լիարժեք մարդ զգաց իրեն, օգտակար ու անփոխարինելի։ Անցավ առօրյա պարտականություններին, մեծագույն հաճույք ստանալով իր գործի կարևորության գիտակցումից։

— Իսկ Գնե՞լը,— գործնական հարցրեց նա։— Ինչպե՞ս վարվենք նրա հետ։ Մանավանդ այժմ, երբ գիտես, որ նա զրպարտված է։

— Նա հիմա իր անմեղությամբ է իմ դեմ պայքարում,— տեղից վիրավորված ցատկեց արքան ու կատաղությամբ գոռաց սենեկապետի երեսին։— Նրա անմեղությունն ինձ համար նույնքան նողկալի է, որքան և դավաճանությունը։

— Բայց և այնպես անմեղ է, արքա,— դաժան ուղղամտությամբ, բանի տեղ չդնելով նրա հուզմունքը, պնդեց Դրաստամատը։— Եվ այդ փաստի դեմ դու չես կարող առարկել։

— Եթե Գնելը ողջ մնա, նա կդառնա հերոս, իսկ ես՝ մարդասպան։ Ո՞վ է հայրենիքին ավելի անհրաժեշտ։ Ե՞ս, թե՞ նա։ Ո՞ւմ անունն է ավելի թանկ։ Ի՞մը, թե՞ նրանը։ Մահից հետո նրա անմեղությունը չէր ցնցի ոչ ոքի։ Բայց եթե կենդանի է և անմեղ, ես հավիտյանս չեմ փրկվի անեծքից։ Նա դրոշակ կդառնա իմ թշնամիների համար, զինանշան, պարիսպ քանդող մեքենա... Բարա՜ն... Զրնգուն չեփոր...

— Գնելին անհնար է սպանել, արքա,— առնորեն նրան ընդհատեց Դրաստամատը։— Դու անզոր ես նրա առաջ։

— Ե՞ս։ Անզո՞ր։ Ինչպե՞ս է լեզուդ հանդգնում հայհոյանք շպրտելու իմ երեսին։

— Որովհետև Գնելը ապաստանեց քո իսկ քաղաքում։ Երշակավանո՛ւմ։ Եթե դու նրան սպանես, քո քաղաքն այլևս չի կառուցվի։ Քեզ ոչ ոք չի հավատա։

Արքան սկվեց։ Կարծես փուլ եկավ։ Կծկվեց, դարձավ մի բուռ։ Հեռացավ ննջասենյակի հեռավոր անկյունը ու նորից սկսեց փնթփնթալ քթի տակ։ Առողջությունից էր դժգոհում։ Տարիքից էր գանգատվում։ Էլ չի կաթողանում առավոտները ծանրաբարձությամբ զբաղվել։ Սիրտը չի դիմանում։ Շունչը չի հերիքում։ Որքան շուտ անցավ ջահելությունը։ Եվ առհասարակ ամեն ինչ։ Բան չհասկացավ կյանքից։

— Ցուլը մորթեցի՞ր...— հանկարծ հիշեց ու մոայլ հարցրեց արքան։— Նրա գործարանների գիրքը ի՞նչ գուշակեց իմ ճակատագրի մասին։

— Կործանում, արքա,— առանց տատանվելու, անկիրք պատասխանեց Դրաստամատը։— Արշակունյաց տոհմի անկում։

Արքան, հաշտված, գլխով արեց։

— Իսկ հավերի շարժումնե՞րը։ Նրա՞նք ինչ գուշակեցին։

— Երջանկություն և հզորություն, արքա։

— Ուրեմն, հեթանոս աստվածներն էլ են խաբում։

Երևի եկել էր ժամանակը Արմավիրի Սոսյաց պուրակը կամ Բագավանի Սննդոց անտառը գնալու։ Գնալու և ականջ դնելու տերևների սվսվոցին, որոնք անսխալ կորոշեն ամեն մեկի ճակատագիրը։ Գնալու և օրեր շարունակ համառորեն նստելու ծառերի տակ, մինչև որ հասկանա նրանց լեզուն...

— Ի՞նչ է ուզում իմ անարժան եղբորորդին ինձանից։ Ասա ձիս բերեն։ Ես ուզում եմ տեսնել նրան։ Իմանալ, թե նրա կենդանությունը ի՞նչ կարժենա ինձ վրա։ Բայց մինչ այդ... եկեղեցի մտնենք, սենեկապետ։ Թողություն խնդրենք մեր մեղքերին։— Հետո, նկատելով Դրաստամատի տա-

բակուսանքով լի դեմքը, մի չար հաճույք զգաց, որ նորից նեղն է գցել, նորից շփոթության է մատնել իր հսկա, հավատարիմ ու սիրելի սենեկապետին։— Էլի՞ կասես, որ ես հակասեցի ինձ... Որ ես պատեպատ եմ խփում ինձ...

— Ինչո՞ւ ես քեզ պատեպատ խփում, արքա,— մեղմ ու կարեկից ձայնով նրան կշտամբեց Դրաստամատը։

— Եփրեմը սպասո՞ւմ է ինձ... Ասա տեղ չգնա... Ես անպայման պիտի ճատրակ խաղամ նրա հետ... Աշխարհն էլ կործանվի, պիտի խաղամ...

Եփրեմը, մանկության ընկերը, միակ հույսն ու ապավենը, հանգստությունը, իր բագինը, իր խորանը...

Թող սպասի ինչ-որ տեղ։ Թող երկար սպասի։ Թող անիրական մնա։ Թող երևակայության մեջ հայտնվի այն փոքրիկ տղան, որի հետ վեցհատվածյան ոսկորներով հույզ է խաղացել, խաղացել է կոճ ու գունդք, անիվ է քշել, հաղթողը կոչվել է թագավոր, իսկ պարտվողին վիրավորական որևէ անուն են տվել։

Իսկական հաղթողը դու էիր, Եփրեմ։ Հիմա էլ ես դու։ Մի հավատա այն լուրերին, թե ես եմ քո թագավորը։ Թամբասանք է, շարախոսություն, զրպարտություն։

Որովհետև, եթե հավատաս, փուլ կգա հեքիաթը, կաղծվի գեղեցկությունը, կցնդի իմ հավատը։ Կբացվի իմ կյանքի միակ գաղտնիքը, իմ միակ թաքստոցը։

Չէ, գործերը լավ չէին, ուրեմն, լավ չէին գործերը, եթե նորից այսպիսի բուռն պահանջ զգաց մանկության ընկերոջը տեսնելու, եթե սիրտը կակղեց, փափկեց խմորի պես, փխրուն ու լալկան դարձավ, եթե աչքերը ոչ թե տղամարդու, այլ կնկա արցունքներով են լցվում։

— Այդ լակոտը գտավ իմ վերքը,— ասենդի մեջ մոնչաց նա։— Ինչո՞ւ ապատանեց իմ քաղաքում։ Ինչո՞ւ իմ ուժը վերածեց իմ թուլության։ Իմ զենքը իմ դեմ շուռ տվեց։ Ոչ, հիմա չեմ այցելի նրան...— Նա մի ակնթարթում երկնեց իր որոշումը, անգթորեն քամեց ուղեղը, մինչև վերջ մզեց ապրած տարիների կենսափորձը, մտովի օգնության կանչեց իր մոայլ ու քշախոս պապերին, ու աչքերը հեռադիտակ սկսեցին փայլել կիսախավարի մեջ։— Վազը ևեթ կամուս-

նանամ Փառանձեմի հետ, հետո կգնամ... Ես պիտի առավելություն ունենամ Գնելի հանդեպ... Պիտի պատմեմ մեր հարսանիքը... Մեր առաջին գիշերը... Մանրամասն պիտի պատմեմ... Մարմինը նկարագրեմ... Փառաբանեմ նրա գեղեցկությունը... Իսկ նա իրոք գեղեցիկ է, սենեկապետ... Առեղծվածայի՜ն գեղեցիկ...

Գլուխ տասնհինգերորդ

Վասակը հաճախ մտքում խոսում էր հայերի հետ, վիճում, հայհոյում, խրատում, համոզում, աղաչում...

Ում հայտնի չէ, որ սպարապետն ամբողջ կյանքում կռիվ էր մղել մարտի դաշտերում, որպեսզի հայը իր գոյությունը պահպանի։

Ուրիշները կռվում են հող նվաճելու կամ նվաճված հողը ետ խլելու համար, իրենց երկրին հասցված որևէ վիրավորանքի համար, դաշնակցին օգնելու համար...

Իսկ եթե հայը ձեռքը զենք վերցրեց, ուրեմն, էլ կարիք չկա դեսուդեն ընկնելու, գուշակություններ անելու, ուղեղը չարչարելու, պարզ չի՞, որ ազգապահպանման գործ է։

Ա՜յ քեզ Հայաստան։

Թշնամին նետն ուղղում է ոչ թե նրա ձեռքին, ոչ թե ոտքին, ոչ թե փափուկ կողին, այլ միանգամից սրտին, որովհետև անզրահ ու անվահան սիրտը դեռ հեռվից լավ երևում է ամենքին և թիրախի պես ցցված է հարևանների առաջ։ Դե ասի՛ ու մի խփիր։

Ինչպե՞ս ես կարողանում անընդհատ անդունդի եզրին սպրել, մտովի հարց էր տալիս Վասակը, անդունդի եզրին նաև քեֆ անել, նավասարդ տոնել, որդիներիդ ծնունդը նշել, իրար միս կրծել, վար ու ցանքով զբաղվել, մեծ-մեծ խոսել ու աչքդ խորխորանին՝ երկինք երազել։

Աներես ու պնդերես Հայաստան։

Եվ որքան էլ անհեթեթ լինի, ոչ թե կռվի, այլ հենց այս

խաղաղ օրերին; Վասակի աչքի առաջ հայերի թիվն սկսել էր զգալիորեն նվազել։

Մոտալուտ վտանգի, պարսկա-բյուզանդական պատերազմի հոտն առած, երկրի կեսը պարսկավարի էր հագնվում, կեսը՝ բյուզանդավարի։ Կեսը Բյուզանդիայի կողմնակիցն էր, կեսը՝ Պարսկաստանի։

Արանքում մնացել էին մեղք ու կրակ շինականները, հատուկենտ նախարարների ղեկավարությամբ։

Պարսկասերները սրաքիթ մույկեր էին հագնում, գլխներին խույրի նման գդակ դնում, մազերը, հատկապես ծայրերը՝ գանգրացնում...

Բյուզանդասերները գլխի մազերը կտրում էին բոլորշի և ածիլում ծոծրակները։ Դնում էին սրածայր, սաղավարտանման գլխարկներ և, իբրև ողջույնի նշան, բարձրացնում աջ ձեռքը։

Իշխանական տներում խոսում էին հունարեն կամ պարսկերեն։

Շատ էր հեշտացել բարեկամին ու թշնամուն ջոկելը։

Քաղաքներում կամ մեծ ճանապարհների վրա հաճախ ընդհարումներ էին լինում՝ ըստ տարազի։

Աստուսնությունները կատարվում էին ըստ հագուստների։

Մարդիկ իրար հյուր էին գնում՝ ըստ սանրվածքի։

Սիրում և ատում էին միմյանց՝ ըստ մույկերի։

Դեռ պատերազմը չսկսված, երկիրն արդեն գրավվել, բաժանվել էր երկու մասի, լցվել պարսիկներով ու բյուզանդացիներով, որոնք հայի տեսք ունեին, հայի քիթ, հայի աչքեր ու թեև օտար լեզվով էին խոսում, բայց երբ հերթը գալիս էր հայհոյելուն, օտար բառերը չէին հերիքում, սիրտը չէին հովացնում, և ինքնաբերաբար անցնում էին հայերենին... Հայավարի հայհոյում ու հայավարի հանգստանում...

Վասակը խոսափում էր արքային հանդիպել, հատկապես այն չարաբաստիկ ճաշկերույթից հետո, երբ նա Արշակավանում ապաստանի իրավունք հռչակեց, և նախարարները իրենց կապերը խզեցին արքունիքի հետ։

Իսկ արքան չէր էլ նկատում նրա բացակայությունը, ոչ էլ հետաքրքրվում, թե ուր է կորել սպարապետը։ Որովհետև

մի բան հաստատ գիտեր. Վասակը պատկանում էր այն մարդկանց թվին, որոնց ինչքան ուզում ես նեղացրու, ինչքան ուզում ես հետները անարդար վարվիր, միևնույն է, մինչև վերջ հավատարիմ են մնում։ Դրա համար էլ արքան նրա հետ երբեք փափկանկատ չի եղել, երբեք հատուկ ուշադրության չի արժանացրել նրան, ասել է այն, ինչ եկել է լեզվին, երբեմն նույնիսկ կոպտել է ու վիրավորել։ Թեև, հենց իր աչքի առաջ, թշնամիների հետ վարվել է խիստ զգույշ և հարգալիր։ Վասակը լուռ հանդուրժել է այդ ամենը ու երբեք չի ընդվզել։ Կընդվզի հետո, երբ գործերը կարգի ընկնեն, ինքն էլ ժամանակ ունենա, արքան էլ...

Վասակի մտքովն իսկ չէր անցնում, որ ինքը երկրի գլխավոր նոյակի անդամներից մեկն էր, արքայից ու կաթողիկոսից հետո։ Երևի այդ էր պատճառը, որ խաղաղ օրերին, չնայած իր մեծ ժողովրդականությանը, նա որևէ զգալի դեր չէր կատարում արքունիքում ու գրեթե ոչնչով չէր ազդում երկրի քաղաքական կյանքի վրա։ Նա իր օրերի մեծ մասն անց էր կացնում Շահապիվանում, գլխավոր բանակատեղիում, աշխարհից ու մարդկանցից մեկուսացած։

Բանակի կյանքը ուզիղ ու պարզ գծեր էին, մի քանի հասկանալի նախադասություն, մեծ մասամբ՝ հրամաններ։ Ի վերուստ արդեն սահմանված էր, թե ովքեր պիտի հրամայեն և ովքեր պիտի կատարեն։ Մարդկանց փոխհարաբերությունները որոշվում էին ոչ թե ըստ բնավորության, այլ ըստ զինվորական աստիճանի։ Բառը մի նշանակություն ուներ միայն։ Ասում էիր՝ ջուրը սառն է, առավելագույնը նշանակում էր, թե գետ մի մտիր լողալու։ Եվ ոչ թե՝ Ներսես Կամսարականը երեկ առավոտյան արքայի մոտ ամբաստանել է Գարշույլ Խոռխոռունուն, որովհետև Գարշույլ Խոռխոռունին տասը տարի առաջ նախկին արքայի՝ Տիրանի մոտ, բամբասել ու վատաբանել է Ներսես Կամսարականին։

Հենց որ սպարապետը արքունիք էր մտնում, նրան թվում էր, թե լորա կողմը երգչներ են, հյուսկեն պարկերից կարված ցանցեր, որ կապում են ծառերի բներին կամ առանձին ձողերի վրա՝ որոի գազանների փախստյան ճանապարհը փակելու համար։ Իսկ խուճապ առաջացնող փողերի ու շեփորի

հաշոցների փոխարեն մարդկային ձայներ են, բառեր, փափսոցներ, թագաւոր սոպեռ Սմբատ Բագրատունու տապակ կատակը՝ «Հը՞, տեր Մամիկոնյան, ե՞րբ ես իմ կյանքը պաշտպանելու» (թքա՜ծ քո կյանքի վրա, անհամ սոպեռ, և ասածս ծա՜ղրը տես, թե ում է քեզ դաշնակից տվել), ժպիտով տուն քանդող բամբասանքներ, բացահայտ կեղծիք, որի արժեքը բոլորը գիտեն, բայց միայն անճարակ սպարապետն է, որ տեղնուտեղը սուտ է հռչակում, մեծավորի հիմար մի խոսք, որին ամենքը առերես հավանություն են տալիս, իսկ բուն ու անտաշ սպարապետը կրքոտ հակաճառում է ու ժխտում, քծնանք ու շողոքորթություն, որ բոլորն ընդունում են հազուր պատշաճի, իսկ վայրենի սպարապետը խեղճանում է և, ի պատասխան, պատմուճանի ներքին գրպանից մի թանկարժեք հուշանվեր է հանում և մեկնում խոսակցին... Քանի-քանի փայտե արձանիկներ է նա սարքել աղատ ժամանակ ու լցրել գրպանը... Եվ քանի-քանի տներում օտար-օտար դրված են դրանք սեղանների վրա... որպեսզի իրենց տերը շրջափակումից ազատվի ու ժամ առաջ Շահապիվան վերադառնա...

Բայց երբ նա իմացավ, որ Արծրունիների Աղբակ գավառի Հաղամակերտ ոստանում մի խումբ նախարարներ են հավաքված, որոնց թվում և իր եղբայրները, և որ նրանք Տիզբոն են գնում Շահի հետ դաշինք կնքելու և իրենց ծառայությունն առաջարկելու, նա չդիմացավ, սուսուփուս վեր կացավ ու, առանց ժամանակ կորցնելու, առանց որևէ մեկին զգուշացնելու, հեծավ իր սպիտակ նժույգը ու մեն-մենակ ուղևորվեց դեպի թշնամու որջը։

«Իմ սրտում, ամենից առաջ, ճշմարտության զգացմունքն է,— պատմիչի վկայությամբ, Շապուհը գրել է Կոստանդիանոսին։— Այդ ունենալով՝ ես երբեք չեմ արել այնպիսի բան, որ հետո զղջամ։ Ուստի ես պիտի ես վերադարձնեմ Հայաստանը և Միջագետքը, որ անիրավաբար խլել են իմ պապերից։ Եթե դու ցանկանում ես լսել իմ բանական խորհուրդը,

հրաժարվիր փոքրիկ նահանգից, որը մշտական պայքարի և նենգ վեճի առարկա է հանդիսանում, որպեսզի հանգիստ կարողանաս կառավարել մնացած քո թագավորությունը։ Գիտցիր, որ բժիշկները ևս որոշ դեպքում այրում, կտրում, մարմնից հեռացնում են առանձին մասերը, որպեսզի կարելի լինի օգտվել առողջ անդամներից»։

Ամբողջ ճանապարհին նա մտովի խոսում էր հայերի հետ և համոզում նրանց, որ միակ ելքը միմյանց դաշնակցելն է ու արքային հպատակվելը, խրատում էր, որ բյուզանդացիները մտքից հանեն այն փաստարկը, թե բյուզանդացիների հետ այսօր մենք նույն հավատի ենք, իսկ պարսկաստաններին՝ թե երեկ պարսիկների հետ ենք նույն հավատի եղել, աղաչում-պաղատում, որ եղբայրասպան պատերազմ չհրահրեն հանկարծ, հանկարծ չստիպեն իրեն՝ հայերին կոտորելու, որովհետև եթե ինքը հայերի դեմ կանգնի, թեկուզ փոքրաթիվ մի խմբի, անպայման կպարտվի, իսկ եթե իր սակավաթիվ զորքերով կանգնի թշնամու բազմաբյուր բանակների ու փղերի առաջ՝ անպայման կհաղթի... Դուք սպարապետի կարճ հասակին մի նայեք... Մի նայեք նրա կարճ ոտքերին ու կարճ ձեռքերին... Քի՞չ եմ ձեզ համար հաղթանակներ տարել։ Քի՞չ եմ մի բուռ մարդկանցով թշնամուն փախուստի մատնել։ Կայսրը և շահը զարմանքից ապշել են ու ապաշնորհությանն համար պատժել իրենց զորավարներին։ Իզո՛ւր են պատժել։ Նրանք բոլորովին էլ ապաշնորհ չեն եղել։ Ոչ էլ ես եմ մի արտակարգ հրամանատար։ Այստեղ մի ուրիշ գաղտնիք կա, որ նա այսօր մտովի հաղորդեց հայերին։ Մեծ ազգերի ուժը նրանց առողջ տրամաբանության մեջ է, փոքր ազգերինը՝ անտրամաբանության։ Մեծ ազգերը հույսները դնում են իրականության վրա, փոքր ազգերը՝ հրաշքի։ Ուժերն այստեղ հավասարակշռվում են, մեծերը կորցնում են իրենց առավելությունը, փոքրերը՝ ազատվում իրենց պակասություններից։ Իսկ հենց որ փոքրերն ուզում են մեծերին նմանվել, ահավոր ու ճա-

կատագրական չարդ են ուտում։ Սա է գաղտնիքը, ուրիշ բան չկա։

Վասպուրական աշխարհի սահմանագծում Վասակը տեսավ մի խումբ ձիավորների, որոնք փակել էին ճանապարհը։ Նա դանդաղեցրեց ձիու վազքը, և ձեռքը տարավ սրին։ Չլինի՞ սա էր վերջը։ Չլինի՞ թե վերջին անգամ էր մտովի խոսել հայերի հետ։ Եթե իրոք վերջին անգամն էր, նա դեռ շատ բան ուներ ասելու, համենայն դեպս, գլխավորը դեռ չէր հասցրել։ Բայց կհասցնի։ Կհասցնի՛, կհասցնի՛։ Դեռ ժամանակ կա։ Դեռ սրամարտ է լինելու, մի քանի հոգու տապալելու է ձիերից, մի քանիսին խոր վերքեր է պարգևելու, հո չի՞ թողնելու, որ տեղնուտեղը հավի պես մորթեն իրենց։ Չէ՞ որ կա նաև վերջին շունչը փչելու իրավունքը։ Եթե շատ նեղն ընկավ, հենց այդ վերջին շնչի հետ կհասցնի մտովի ամեն ինչ ասել...

— Սամվե՞լ,— ապշեց սպարապետը։

Եղբոր որդին էր։ Աքլորի պես թառել էր ձիու մեջքին և հպարտ-հպարտ նայում էր սպարապետին։ Այսինքն՝ բռնվեցի՞ր, էլ ո՞ւր էիր գաղտնի-գաղտնի ճամփա ընկել առանց մեզ։

— Նրանք քեզ կձերբակալեն, հորեղբայր, և Պարսկաստան կտանեն։ Մենք թույլ չենք տա, որ նրանց մոտ գնաս։ Ես դա քեզ ասում եմ ոչ թե իմ, այլ հայրենիքի անունից։

Ջղայնությունից արյունը խփեց Վասակի գլխին, ու նա կոկորդով մեկ գոռաց ինքնագոհ պատանուն.

— Ճամփա տուր, թե չէ շանսատակ կանեմ։

Սամվելը զարմացավ, որ հորեղբայրը չգնահատեց իր վճռականությունը, չնկատեց, որ դիմացը արդեն լուրջ և հասուն մարդ էր կանգնած։ Նա հուսախաբ եղավ, որովհետև սպարապետը ևս, ծերակույտի բոլոր անդամների պես, փակում էր ջահելների ճանապարհը և մինչև հիսուն տարեկան ներշնչում նրանց, որ դեռ խակ են ու անփորձ, ինչ է թե՝ հանկարծ իրենց փառքից մի փոքր բաժին էլ նրանց չհասնի։

— Դու միայն քեզ չես պատկանում, հորեղբայր, այլև ինձ, նրան, բոլորին։ Դու դեռ պետք ես հայրենիքին։

Սպարապետի մարմինը քոր եկավ, որովհետև Սամվելն այդ խոսքերն ասում էր ոչ այնքան նրան, որքան իր ընկերներին ու ափսոսում էր, որ քիչ են ոսկեդիրները, շատ քիչ են։

— Անմիջապես վերադարձեք,— Վասակը քթի տակից մռայլ հրամայեց ձիավորներին։— Եվ իմ անունից ասեք, որ մեկական ամիս բանտարկեն բոլորիդ՝ բանակից ինքնագլուխ հեռանալու համար։

Ձիավորները սուսուփուս ենթարկվեցին սպարապետի հրամանին ու արագ հեռացան հակառակ ուղղությամբ։

— Ես ամաչում եմ նրանց փոխարեն,— ասաց Սամվելը համառ անմեղությամբ։— Ամաչում եմ, որ քեզ մենակ թողեցին։

Եվ ցավն էլ այն է, որ իսկապես էր ամաչում։ Լացը գալիս էր ջղայնությունից ու վիրավորանքից, որովհետև կյանքում առաջին անգամ ինքնուրույնության հնարավորություն էր ստացել, հաղիվ էր նախաձեռնության առիթ ընկել ձեռքը, իսկ ընկերները ամենափոքր իսկ դժվարության պահին լքեցին ու դավաճանեցին նրան։

— Գոնե ծուղակ լարեինք, հորեղբայր, գոնե մի չեզոք տեղ հրավիրեիր նրանց,— սպարապետից պոկ չեկավ Սամվելը ու հաղիվ իրեն զսպեց, որ ծնկաչոք չաղաչի նրան։— Ես իմ ընկերների հետ հանկարծակի կհարձակվեի ու կձերբակալեի բոլորին։

— Բոլորի՞ն,— խոժոռվեց Վասակը։ Եվ որովհետև Սամվելը ընդունակ չէր ակնարկը հասկանալու, ստիպված եղավ ավարտել միտքը.— Չէ՞ որ հայրդ էլ է նրանց մեջ։

— Հետո՞ ինչ, —իրեն բոլորովին չկորցրեց Սամվելը։— Ով մեզ հետ չէ, հայրենիքի դեմ է։

Վասակն զգաց, որ նա խորապես վստահ էր իր ճշմարտությանը և որ այդ խոսքերի մեջ արդեն ոչ մի կեցվածք չկար։ Եվ նա առավել ևս անհրաժեշտ համարեց հարց տալ իրեն, թե ինչո՞ւ էր այս շան լակոտը հայրենիքի հետ։ Նրա համար մի՞կ չէ՞ր՝ արքայի բանակում լինել, թե պարսից

շահի։ Ի՞նչ տարբերություն, եթե կարևորը փառքի ու դիրքի հասնելն է։ Բայց նա նախօրոք անսխալ հաշվել էր ամեն ինչ։ Շահը նրա կարիքը չուներ, պարսից պալատում ևս նա նույն վիճակին էր արժանանալու, էլի Մերուժանը և մյուսները ավելի մեծ պատիվներ պիտի վայելեին։ Իսկ հիվանդ ու հյուծված Հայաստանում, որն օրեցօր կորցնում է իր մարդկանց, ավելի մեծ հեռանկար կար գործի գլուխ անցնելու։ Պարզապես հայրենիքի ու իր շահերը համընկնում էին իրար։

Վասակը ձին շրջեց ու լուռ քշեց իր ճամփով։

Սա այն դեպքը չէր, որ փայտե արձանիկ նվիրեր նրան...

— Ես քեզ մենակ չեմ թողնի, սպարապետ,— լսվեց Սամվելի ջահել ու զրնգուն ձայնը։

— Բայց չէ՞ որ քեզ էլ կձերբակալեն, եթե ինձ հետ լինես,— առանց ձին կանգնեցնելու և առանց շրջվելու, ցվարթ գոռաց Վասակը, ափսոսալով, որ եղբոր որդին չափազանց լուրջ տղա է ու հեգնանք չի հասկանում։

— Ինձ չեն ձերբակալի,— բարձր ու ինքնավստահ պատասխանեց Սամվելը հեռվից։— Հայրս չի թողնի։

Սպարապետը խեղճացավ նրա անամոթ պատասխանից։ Խեղճացավ ու վախեցավ։ Իրենից անկախ, նույնիսկ մի տեսակ հարգանքով լցվեց նրա հանդեպ։ Որովհետև ամեն ինչի կատարյալը արժանի է հարգանքի։ Կարող ես սիրել կամ ատել, բայց չհարգել անհնար է։

Մինչև Հադամակերտ նա այլևս ոչ մի բառ չփոխանակեց եղբոր որդու հետ։

Սամվելը, պատշաճ հեռավորություն պահպանելով, կրնկակոխ հետևում էր հորեղբորը։

Իսկ երբ օր ու գիշեր ձին քշելով, առանց դադարի, առանց իրեն խնայելու, սպարապետը հաղթահարեց դժվարին ճանապարհը, հասավ Աղբակի փոքր ու անշուք ոստանը և վերջին անգամ լսեց համառորեն իրեն հետևող ձիու սմբակների դոփյունը, խիղճը չտարավ ու մտքում գովեց եղբոր որդու տոկունությունը։ Եվ, դարձյալ մտովի, փայտե մի արձանիկ նվիրեց նրան։

✦✦✦

«Դու պահանջում ես ինչպես Միջագետքը, այնպես և Հայաստանը որպես քո սեփականություն,— ըստ պատմիչի վկայության, այսպես էր պատասխանել Կոստանդիանոս կայսրը Շապուհ արքային,— և խորհուրդ ես տալիս ինձ՝ կտրել կենդանի մարմնի որոշ մասերը, որպեսզի դրանով ավելի լավ բարեկամություն անենք հետագայում։ Այդ խորհուրդը լավ է անմիջապես մեկ կողմ դնել, քան հավանություն տալ որևէ ձևով։ Ուստի՝ հասկացիր ճշմարտությունը, առանց խորամանկ ծածկոցի, նրա թափանցիկ պարզության մեջ, ճշմարտություն, որ չի կարելի վախեցնել ոչ մի դատարկ սպառնալիքով»։

✦✦✦

Դու մի ասա՝ Հաղամակերտում իշխանական խրախճանք էր։ Երկհարկանի քարաշեն դղյակի առջև հսկայական բազմություն էր հավաքվել։ Ռոնի հանել էին տներից, քշել հրապարակ։ Հողագործներին կտրել էին աշխատանքից, բերել, լցրել դղյակի առաջ։ Գավառի տարբեր շեներից ու ավաններից, տանուտերերի գլխավորությամբ, եկել էին բազմաթիվ պատվիրակություններ, որպեսզի հավաքն ավելի պատկառելի ու մարդաշատ լինի։

Նախարարները, զուգված-զարդարված, նստել էին քառակուսի բազմականների վրա, թիկնել նկարազարդ ու գույնզգույն բարձերին և հրճվանքից փայլում էին քաղցրավննիքի սպասող մանուկների պես։

Դղյակի քարե նեղ պատշգամբների վրա կանգնել էին գավառի ու քաղաքի մեծամեծների կանայք, որոնք պակաս ոգևորված չէին իրենց փետրակալած ամուսիններից։

Միայն տանտերը չկար, Մերուժան Արծրունին։

Հրապարակի մեջտեղում, փայտե ցածրիկ թախտի վրա, երեսնիվայր պառկած էր կապկպված մի շինական, որին մինչև մեջքը մերկացրել էին և թողել պատառոտված ու գույնը գցած մի անդրավարտիքով։

Արշակավանցի էր։

Առաջին և միակ արշակավանցին, որ ընկել էր տերերի ձեռքը։

Հեր գավառի Նվարսակ գյուղից էր։ Գողեգող եկել էր մահամերձ մորը վերջին անգամ տեսնելու։ Եկել էր ու բռնըվել։ Մտրակի հարվածներին կարող էր մի կերպ դիմանալ, ինչ կա որ, տերեր են, կծծեն էլ, զնդան էլ կգցեն, հապա ի՞նչ պիտի անեն, աչքդ էլ չե՞ն հանի, իսկ եթե մեղք էլ ունես, է՛լ ավելի լավ, ուրեմն, ցավն ուժեղ չի լինի, բայց որ մայրն էր արդեն մահացած եղել, այ դա էր, որ ծաղրի էր վերածում ծեծը։ Եվ նա այսօր չէր դիմանում ցավին։

Նախարարներին անհնար էր համոզել, որ այս շինականը մի հոգի էր ընդամենը և որ ուրեմն նրա մեղքն էլ էր մեկ, հանցանքն էլ, մարմինն էլ։ Նա չգիտեր, որ ինքը հիմա փոխարինում էր հազարավոր տիրափախ շինականների, ուներ տարբեր անուններ, տարբեր դեմքեր և տարբեր ծննդավայրեր։ Եթե շատ էր ուզում իմանալ, ամենից քիչ կապ ուներ հենց իր անձի, Հեր գավառի Նվարսակ գյուղի, մեռած մոր և իր անմիջական տիրոջ հետ։

Ամբոխը, շունչը կտրած, առանց ծպտուն հանելու, նայում էր փայտե զոհասեղանին նետված քավության նոխազին և մտովի աղոթում նրա համար։

Իսկ նախարարների ոգևորությունը հետզհետե հասնում էր գագաթնակետին, մտրակի հարվածներն ու շինականի ոռնոցները գրգռում և արյունով էին լցնում նրանց աչքերը, ձեռքերը դողում էին անհամբերությունից, ոտքերը անհանգիստ շարժումներ էին անում տեղում, իսկ բերաններից թռչում էին հայհոյանքներ, զոհունակության ու վրեժի բացականչություններ...

Արյան հոտ էին առել։

Ամբոխը հասկացավ, որ արշակավանցին պետք է մեռներ։

Ուրիշ ելք ու հնար չկար։

Միայն նրա մահը կարող էր հանգցնել բռնկված հրդեհը ու հանգցնել տերերի ծարավը։

Ներսես Կամսարականը այլևս չդիմացավ, պոկվեց տե-

ղից, վազեց դեպի զոհասեղանը, զինվորի ձեռքից խլեց մտրակը ու ինքն սկսեց հարվածել։

— Ազատություն ես սիրում, հա՞,— կատաղած գոռում էր նա, և որտեղի՞ց իմանար, որ ուժը ձայնին տված, ավելի թույլ էր հարվածում, քան զինվորը։— Տիրոջդ էլ չե՞ս ուզում ծառայել... Առանց հավասարության չե՞ս կարող ապրել... Ա՛ռ քեզ հավասարություն, ա՛ռ քեզ ազատություն...

Նախարարների համար Կամսարականի ձայնը հնչեց որպես մարտի կանչող շեփոր, բոլորը վեր թռան տեղներից ու գազազած ցուլերի պես հարձակվեցին արշակավանցու վրա։ Սկսեցին անխնա ծեծել նրան, ձեռքերով ու ոտքերով, ուր որ պատահի, գլխին, մեջքին, նույնիսկ մազերից էին քաշում, թեև գիտեին, որ մտրակի թեկուզև մի հարվածը կարող էր ավելի արդյունավետ լինել, քան այս անկազմակերպ հարձակումը։ Պարզապես չէին համբերում, նմանվելով այն ձիավորին, որ շտապելուց քիչ է մնում իջնի ձիու վրայից ու ոտքով գնա։

— Այդ նրանք են հնարել ազատությունն ու հավասարությունը, ծուլերն ու անբանները,— մատը արշակավանցու կողմը ցցած, ամբոխին էր դիմում հուզմունքից կարմրած Վարդան Մամիկոնյանը։ —Որ հավասարապես գործ չանեն... Գլուխ պահեն... Որ հավասար պատասխան տան ամեն ինչի համար... Որ ոչ ոք պատասխան չտա և ոչ մի բանի համար...

Իսկ նրա մյուս եղբայրը՝ Վահանը, պպզել էր թախտի գլխին, շինականի քթի տակ և, այս աղմուկի ու իրարանցման մեջ, չարությամբ փսփսում էր նրա ականջին, իր փրսփրսոցից վրեժխնդրության գերագույն հաճույք զգալով։

— Ի՞նչ եք կառուցել Արշակավանում... Մի աչքս կոխիր... Ո՞ւր է պարիսպը... Ո՞ւր է փոսը... Եթե տիրոջ բռունցքը լիներ ձեր գլխին, արդեն վաղուց ավարտած կլինեիք քաղաքի կառուցումը... Բա այդպե՞ս են ծառայում արքային...

— Թողեք ե՛ս անեմ... Ե՛ս ծեծեմ...— ձեռքերը տարածած, սրան-նրան էր աղաչում, պաղատում զառամյալ Կենան Ամատունին։— Ես լավ եմ ծեծում...

Դղյակի աստիճանների վրա մի գեղեցիկ, բարձրահասակ ու կապտաչյա տղամարդ երևաց, մի պահ զզվանքով դիտեց

տեսարանը, ապա արագ ներքև իջավ ու շտապեց գազան կտրած նախարարների մոտ։

— Ի՞նչ եք անում, ամոթ է, իշխաններ։ Ծեծը թուլության նշան է։ Դուք շինականի հավատն եք փշրում տիրոջ ուժի հանդեպ։

Մերուժան Արծրունու տիրական ձայնը լսելուն պես, նախարարները սթափվեցին, դժկամությամբ դադարեցրին ծեծը ու, ծանր-ծանր փնչալով, մի կողմ քաշվեցին։

Մերուժանը մոտեցավ արշակավանցուն, ծնկի իջավ ու սկսեց քանդել նրա կապերը։ Հետո, զգուշորեն թևերից բռնելով, օգնեց, որ նստի։ Հանեց թիկնոցը և ծածկեց նրա մերկ ուսերը։ Ինքն էլ նստեց կողքին ու խղճահարությամբ նայեց կիսակենդան շինականին։ Մտրակող զինվորին նշան արեց, որ նստի թախտի հակառակ կողմից, որպեսզի շինականը հենվելու տեղ ունենա։

— Ուրեմն, դո՞ւ ես բռնված արշակավանցին,— մեղմ հարցրեց նա, աչքերը գետին խոնարհած։— Եկել էիր մո՞ռդ տեսնելու։ Մահացել էր, իմացա։— Ապա նախատինքով օրոռեց գլուխը։— Թող սա քեզ խրատ ծառայի, որ չի կարելի այսքան անզգույշ լինել։ Իսկ հիմա... գնա, որդիս, վերադարձիր Արշակավան։

Բոլորի զարմացած հայացքներն ուղղվեցին Մերուժան Արծրունուն։ Ամբոխի մեջ մի շշուկ ընկավ, մեղվի նման տզզաց շարքերի արանքներում, հասավ մինչև վերջին մարդը և վերածվեց ուրախության ձայների։

— Տեր Արծրունի...— չորս կողմից նախարարները ապշահար դիմեցին նրան։

Շինականը գլուխը դժվարությամբ շրջեց Մերուժան Արծրունու կողմը, մարած աչքերով նայեց նրան և մի կերպ ժպտաց շրթունքների ծայրերով։ Բայց որովհետև շատ ուժասպառ էր, չկարողացավ շրթունքներն ուղղել և մինչև վերջ էլ այդպես ժպտադեմ մնաց։

— Մարդն ազատ է ապրելու այնտեղ, որտեղ կամենում է,— վեր կացավ Մերուժան Արծրունին և դիտմամբ բարձր չխոսեց, որպեսզի բոլորն էլ ուզենան ավելի լավ լսել իրեն։— Բայց հիշիր, որ ազատությունը նախ և առաջ պետք է ինքդ

քո մեջ փնտրես։ Թե չէ էլի մի առիթ կգտնես ու նորից կգաս։ Այս անգամ էլ՝ ընկերներիդ տեսնելու։ Մեկ այստեղ կապրես, մեկ այնտեղ։ Եվ այնպես էլ չես իմանա, թե որտեղ է ավելի լավ։— Ապա դարձավ մտրակող զինվորին.— Քանի՞ հարված ես տվել։

— Տասնհինգ, տեր իմ։

— Վերցրու տասնհինգ ոսկի, շինական։ Եվ ներիր մեր դաժանությունը։ Որովհետև, տեսնո՞ւմ ես, քո տերերն էլ դեռ ներքուստ ազատ չեն։

— Քսան հարված...— մեծ Հիգով կմկմաց ժպիտը երեսին կպած շինականը։

— Առ, ես հինգ ոսկի,— ծիծաղեց Մերուժանը ու հրամայեց զինվորներին.— Տարեք։ Թող վերքերը բուժեն և ուղարկեն Արշակավան։ Իմացեք, որ գլխով եք պատասխան տալու նրա կյանքի համար։

Շինականին պառկեցրին, ու երկու զինվոր թախտի հետ միասին նրան դղյակ տարան։

Ամբոխն աստիճանաբար սկսեց ցրվել, և քանի որ ավարտը երշանիկ էր, արդեն ձեռք էին առնում արշակավանցուն, որին մեծ պատիվ էր վիճակվել այսքան մարդ հավաքելու գավառի բոլոր ծայրերից։

— Այս ի՞նչ արեցիր, Արծրունյաց տեր,— տարակուսանքով հարցրին շորս կողմից, բոլորն էլ՝ մի տեսակ սմքած, թուլացած ու անտրամադիր։

— Հսկողությունը կվերացնեք շինականների վրայից,— ի պատասխան ասաց Մերուժան Արծրունին՝ առարկություն չընդունող տոնով։— Բոլորին ազատություն կտաք Արշակավան գնալու։ Եթե որևէ մեկը փախել է Արշակավան ու չի հասցրել ընտանիքը տանելու, ինքներդ ուղարկեք։ Փող տվեք, մթերք տվեք և ուղարկեք։ Թող հարազատները չապրեն սահմանի տարբեր կողմերում։ Իսկ եթե հանկարծ մեկնումեկը ինչ-ինչ պատճառով փախչի Արշակավանից, ետ վերադարձրեք։ Զոռո՛վ։ Քաղաքի շուրջը զինվորներ կդնեք։ Ոչ թե դեպի Արշակավան մուտքը փակելու, այլ Արշակավանից հեռանալ ուզողներին խանգարելու համար։ Եթե հեռացող էլ լինի, ոչինչ, թող զինվորները մնան։ Եվ հեռվում...

Հեռվում մի իշևան կառուցեք միայն... Մենավոր մի իշևան... Թող այնտեղից երգի ձայն լսվի միշտ... Եվ թող այդ իշևանը վարոտների բույն դառնա...— Նա համբերությամբ լռեց մի պահ, որպեսզի իր խոսքը տեղ հասնի և ծանրամիտ ծերուկները մարսեն։— Ես որդը սերմանեցի, իշխաններ, ո՛րդը։ Աշխարհի ամենաուժեղ, ամենահզոր, ամենահսկա կենդանին։— Ապա, ի զարմանս բոլորի, անսպասելիորեն հայտարարեց.— Սպարապետն է ժամանել։ Ուզում է հանդիպել մեզ հետ։ Գնանք, իշխաններ, վայել չէ նրան այսքան սպասեցնել։

Վասակն ամբողջ ճանապարհին հազար ու մի նախադասություն էր ձևակերպել մտքում՝ խոսակցությունն սկսելու համար, մշակել էր պալատական կյանքից ծանոթ բազմաթիվ տարբերակներ և բոլորովին չէր սպասում իրենից, որ մի կողմ կդնի այդ ամենը ու միանգամից կասի.

— Ի՞նչ պիտի լինի սրա վերջը, իշխաններ։

Ասաց ու ինքն էլ մի տեսակ վախեցավ, որ այսքան կարճ ու կտրուկ դրեց հարցը։ Դա կարող էր փչացնել իր առաքելությունը, քանի որ ոչ ոք չի սիրում անմիջապես գործի եղջյուրներից բռնել, շրջանցել էր պետք, կենացներ խմել, գովաբանել բոլորին, մի քիչ հարբել, հին-հին հուշեր մեջտեղ հանել, վստահություն ներշնչել, մի խոսքով, մթնոլորտ ստեղծել, մթնոլորտ։

— Մենք էլ ենք մտածում, սպարապետ,— ասաց Մերուժանը, և Վասակը հանգիստ շունչ քաշեց, զգալով, որ ջահել և սիրուն Արծրունին գնահատեց իր քայլը։— Իզուր ես կարծում, որ մենք ընդամենը դավաճաններ ենք։ Հավատացնում եմ, որ երկրի բախտի համար մենք նույնքան ենք մտահոգված, որքան դու և արքան։

— Մտածում եք, բայց շահի մոտ եք գնում բանակցելու։

— Իսկ ինչո՞ւ դա չես համարում ելքերից մեկը։ Ես, օրինակ, չեմ ընդունում, բայց հարգում եմ Արշակավանն ստեղծելու գաղափարը։ Ինձ թվում է, որ այդ հարգանքը պետք է երկկողմանի լինի։

— Մենք ժամանակ չունենք նման ձևով իրար հարգելու, իշխան։ Այդպես կարող են վարվել միայն Բյուզանդիայում ու Տիզբոնում։ Մենք հոգեվարքի մեջ ենք, մեզ մի ճշմարտություն է պետք, ոչ թե մի քանիսը։

— Կա այդպիսի ճշմարտություն, կա՛, սպարապետ,— եռանդագին ասաց Մերուժան Արծրունին, նստեց Վասակի բազմաթանի արմնկակալին ու մտերմաբար գրկեց նրա ուսը։— Դաշնակցել երկու հզոր հարևաններից մեկնումեկի հետ։ Փոքր ազգ չե՞ս, էլ ի՞նչ ես թպրտում, էլ ի՞նչ իրավունք ունես հույսդ սեփական բազուկներիդ վրա դնելու։ Դու պետք է ընտրություն կատարես։

— Եվ դու կատարե՞լ ես քո ընտրությունը։ Իսկ ինչո՞ւ ոչ հոգուտ Բյուզանդիայի։

— Ուզում ես ասել, որ Աղբակը Պարսկաստանին սահմանամերձ է, դրա՞ համար եմ պարսիկներին ընտրել,— մռայլվեց ու վեր կացավ Մերուժանը։— Եթե մեր խոսակցությունն այսքան բաց ու շիտակ չլիներ, ես, անշուշտ, վիրավորական կհամարեի քո ակնարկը։ Իսկ քո եղբայրնե՞րը, որ հեռավոր Տայքից են ու Տարոնից։ Նրա՞նք ում են սահմանամերձ։

— Իսկ ինչո՞ւ ոչ հոգուտ Բյուզանդիայի,— սառնասրտորեն կրկնեց Վասակը։

— Որովհետև քրիստոնեությունը մեզ պատահաբար կապեց բյուզանդացիների հետ։ Իսկ պարսիկների հետ ունեցած մեր ընդհանրությունները շատ ավելի խորն են։

Կենան Ամատունին, ոտքերը դժվարությամբ քարշ տալով, մոտեցավ Մերուժանին և ինչ-որ բան փսփսաց նրա ականջին։ Մերուժանը հարցական նայեց նրան, իրենից անկախ թթվեցրեց դեմքը ու, չքողարկված կոպտությամբ, գլխով նշան արեց, որ տեղը նստի։

— Գուցե ես այս կյանքից ու աշխարհից քիչ բան եմ հասկանում,— հատ-հատ, սեփական խոսքի կշիռն ու արժեքը գնահատող մարդու արժանապատվությամբ սկսեց խոսել Վարդան Մամիկոնյանը։— Գուցեև առհասարակ բան չեմ հասկանում,— շարունակեց նա, վիրավորված, որ կարող են այդպիսի բան վերագրել իրեն։— Բայց մի բան հաստատ գիտեմ. հարազատ եղբայրները չեն կարող թշնամի լինել։

Ինչքան ուզում ես ատիր ինձ, ինչքան ուզում ես ինձ թշնամի համարիր,— սպառնալից ավելացրեց նա,— մեկ է, ես քեզ սիրելու եմ։

Ու հաղթական նայեց բոլորին։

Վարձա Ապահունին, հուզված, գլխով արեց։

— Եթե եղբայրները նույնիսկ տարբեր ասուածնե՞ր են պաշտում... Եթե գծի երկու տարբեր կողմերո՞ւմ են...

— Այո, նույնիսկ այդ դեպքում,— ջղայնացավ Վարդանը։— Ես քեզ սիրում եմ։

— Իսկ հայր ու որդի՞,— բորբոքված հարցրեց Սամվելը։— Հայր ու որդի՛։ Կարո՞ղ են թշնամի լինել։

— Ասուված մի արասցե,— մեքենաբար խաչակնքեց Վահանը։— Ինչեր ես խոսում, որդիս։

— Ինչո՞ւ հիմա ես քո կողքին չկանգնեի... Ինչո՞ւ չհպարտանայի քեզանով... Ինչո՞ւ ամաչեի քո որդին լինելուս համար...

— Սամվե՛լ,— սաստեց սպարապետը։— Լեզուդ քեզ քաշիր։

— Ես գործ չունեմ,— ուսերն անօգնական թոթվեց Վահանը։— Ինչպես եղբայրներս որոշեն, այնպես էլ կանեմ։ Երկուսն էլ ինձանից մեծ են...

Վարձա Ապահունին գլխով արեց։

Նա պատահաբար էր այստեղ ընկել։ Կարող էր նույն պատահականությամբ բյուզանդասերների հետ լինել։ Կարող էր նաև արքայի հետ լինել։ Պարզապես այնքան էր փառասիրությունը մեծ, որ միշտ էլ տեղի-անտեղի վիրավորվում էր, թե անտեսում են իրեն, կարծիքը չեն հարցնում, խորհուրդ չեն անում հետը։ Եվ, վախենալով, որ այս խառը օրերին ինքը դարձյալ անմասնակից կմնա կարևոր իրադարձություններին, ասպարեզ էր դուրս եկել, ով առաջինը հանդիպել էր, նրան էլ կողմնակից էր դարձել։ Մերուժանը մի անգամ մի դատարկ բանի առթիվ նրա խորհուրդն էր հարցրել, և դա բավական էր, որ այդ օրվանից նրա աչքի լույսը դառնար։

— Մենք այստեղ չենք հավաքվել հարազատների փոխհարաբերությունները քննելու,— կոպտորեն նրանց ընդհա-

տեց Կամսարականը։— Դա ձեր ընտանեկան գործն է. և ուրիշներին քիչ է հետաքրքրում։

Նա մինչև հիմա դաստակների վրա զգում էր թագավորի Հեռքի ծանրությունը, մինչև հիմա չէր մոռանում իր կրած ամոթալի պարտությունը։ Ավելի լավ է տղամարդը հիմար լինի, աղքատ լինի, բայց ուժով չզիջի որևէ մեկին։ Ոչ մի խայտառակություն այնքան չի երևում, որքան բազուկի պարտությունը։ Նա անընդհատ առիթ էր փնտրում ձեռնամարտի մրցման մեջ մտնելու, թեև զգում էր, հասկանում էր, որ դրանով ավելի էր մատնում իրեն, ավելի էր խոստովանում, որ չի մոռացել վիրավորանքը, բայց իմանալով հանդերձ, չէր դիմանում գայթակղությանը, մի տեսակ ինքնակամ գնում էր սեփական ամոթն ի ցույց դնելու ամենքին։ «Ուժներս չչափե՞նք, իշխան։ Պարտվելո՞ւց ես վախենում։ Ինչ կա որ, ուժ է, խելք հո չի՞, որ ամաչես»։ Քա՜հ-քա՜հ-քա՜հ։

— Կենացդ, սպարապետ,— ասաց Մերուժան Արծրունին, սեղանի վրայից վերցրեց գինով լցված իր թասը ու գլխից վեր բարձրացրեց։— Ես չգիտեմ, մենք նույն դիրքերում կլինենք, թե տարբեր, հավանաբար՝ տարբեր, բայց միշտ իմացիր, որ մենք կռվում ենք այս երկրի համար։ Անհեթեթ է հնչում, չէ՞, որ իրար աչք ենք փորում միևնույն բանը սիրելու, միևնույն բանը պաշտպանելու համար։

Վարձա Ապահունին ջանասիրաբար գլխով արեց։

— Եվ դու ինձ կսպանե՞ս, ասելով, թե երկրի համար արեցիր։

— Այո, սպարապետ։ Ինչպես և դու՝ ինձ։

— Դու պարզապես արդարացնում ես քո դավաճանությունը։ Փորձում ես լուրջ տեսք տալ։ Ինքդ քո աչքից չընկնել,— զայրացավ սպարապետը, կորցրեց ինքնատիրապետումը, որովհետև նրան թվաց, թե օրը ցերեկով խաբում են իրեն, ապուշի տեղ են դնում։

— Դու զինվոր ես, և քեզ համար հայրենասիրությունը մարտի դաշտում մեռնելն է, այսինքն՝ շոշափելի փաստ, առարկայական ապացույց,— հանգիստ նրան առարկեց Մերուժանը, աշխատելով բանի տեղ չդնել իրեն հասցված

վիրավորանքը։— Իսկ ինձ համար ամեն մահ պետք է իմաստ ունենա։ Ես դեմ եմ անմիտ զոհերի։ Ես դեմ եմ քո մղած բոլոր մարտերին։

— Եվ նույնիսկ իմ հաղթանակների՞ն,— խայթեց Վասակը։

— Այո, քո հաղթանակներին էլ։ Եթե կուզես իմանալ՝ հենց հաղթանակներին։ Եթե թշնամին սկզբից ևեթ քիթդ տրորեր, հավատացնում եմ, որ դա միայն ազգի օգտին կլիներ։

— Չեմ հասկանում, իշխան։ Ազնիվ խոսք, չեմ հասկանում։ Եթե մտադիր ես ինձ անպատվել, ուրիշ հարց։ Միանգամից ասա, որ էլ ուղեղս չարեմ։

— Քավ լիցի, սպարապետ։ Մտքովս անգամ չի անցնում։ Եթե այդպիսի տպավորություն ունես, ես պատրաստ եմ ներողություն խնդրելու։

— Բայց դու ասա՛, ասա՛, ինչո՞ւ ես դեմ իմ հաղթանակներին։ Եվ մի՞թե մարտի դաշտում մեռնելը միշտ էլ անիմաստ է եղել։

— Մեծ հաշվով՝ այո։ Դու միայն ա՛յդ օրն ես հաղթել։ Միայն ա՛յդ մարտը։ Ընդամենը մի օր կշտացել ես ու քեզ թվացել է, թե այլևս երբեք քաղց չես զգալու։ Բայց չէ՞ որ ամեն մի զորավար կյանքում մի մարտ է տալիս միայն, ամենավճռականը, ամենաճակատագրականը։ Մի մարտ, սպարապետ, ոչ ավելի,— մատը ցցեց Մերուժանը։— Ինքդ էլ գիտես, որ մնացածը սուտ է։ Եվ գիտես նաև, որ հենց այդ մարտն ես տանուլ տալու։

Վարձա Ապահունին, հիացած, գլխով արեց։

— Սպասիր, իշխան,— ձեռքով նրան արգելեց Վասակը, որովհետև ջղերի վրա էր ազդում արդեն։— Ուրեմն, հենց սկզբից ընդունենք մեր պարտությունը և ձեռքներս ծալած դիտենք, թե ինչպես է կործանվում երկիրը։

— Այո, սպարապետ, մեր պարտությունը հենց սկզբից ընդունենք, դա ավելի առողջ և օգտակար հատկություն է։ Որովհետև արդեն ստիպված կլինենք ավելի իրական ու շոշափելի ճամփաներ փնտրելու։

— Եվ գնալու պարսից շահի ո՞տքը։

— Կամ կայսրի։ Սա արդեն ուրիշ հարց է։ Խնդրեմ, միասին քննարկենք և գուցե ընդհանուր լեզու գտնենք։ Հավատացնում եմ, որ արքան ում վրա ձեռքը դրեց, մենք պատրաստ ենք այդ կողմը թեքվելու։ Ավելին էլ ի՞նչ ասեմ։ Միայն թե դնի՛, դնի՛,— հանկարծ գոռաց նա ջղայնացած,— և ոչ թե իր ուժերին ապավինի։ Կամ Արշակավանի խուժանին...

Վահանը վեր կացավ, խեղճ-խեղճ նայեց որդուն, որ կողքին նստած անընդհատ բզում էր նրան, արմունկով խփում թևին։

— Ես գնամ, իշխաններ... Գնամ հանգստանամ... Ինչպես եղբայրներս որոշեն, այնպես էլ կանեմ... Երկուսն էլ ինձնից մեծ են...

Եվ լուռ, գլուխը կախ, դուրս եկավ փոքր դահլիճից։

— Մենք միայն մեզ ենք ապավինում, իշխան, մեր միասնությանը, մեր համախմբությանը,— հուսահատ ու կոտրված սրտով ասաց Վասակը, այլևս չհավատալով իր առաքելության հաջող ավարտին։— Խնդրում եմ, իշխան, այ, ես, իմ այս սպիտակ մազերով, իմ կարմիր դրոշով, իմ զինանշաններով, իմ զինվորական բարձրագույն կոչումով... էլ ի՞նչ ասեմ... Խնդրում եմ, մի՛ գնա շահի մոտ... Հաշտվիր արքայի հետ...

— Եթե այդքան խնդրում է, գուցե չգնա՞նք,— ասաց Վարձա Ապահունին, և Վասակը նորից ձեռքով լռեցրեց նրան։

— Ես չեմ կարող տեսնել, թե ինչպես է երկիրը պարսիկների և բյուզանդացիների ոտքի տակն ընկնում և ողջ-ողջ ճզմվում,— պատասխանեց Մերուժանը, մի պահ ընկճվելով սպարապետի անկեղծ աղերսանքից։— Ես ուզում եմ պատերազմի ժամանակ կռվող կողմերից մեկը լինել և ոչ թե զոհ։

— Մի մոռացիր, որ հետո էլ քո դաշնակիցը քեզ կուտի։

— Ի՜՛՛՛

ապարդապետ, ճիշտ է, սողալով, խորամանկությամբ, մաշկի գույնը փոխելով, բայց ապրելո՛ւ Իսկ դո՞ւ ինչ կոչ ես անում։

— Կամ կյանք, կամ մահ,— հուզված ասաց Վասակը։

— Ոչ, միայն կյանք, միայն ու միայն կյանք։

— Ինչ գնով ուզում է լինի՞։

— Այո, ինչ գնով էլ ուզում է թող լինի։

— Ստորացմա՞ն, նվաստացմա՞ն...

— Այո, ստորացման, նվաստացման։

Կենան Ամատունին ինչ-որ նշաններ էր անում Մերուժանին և անհամբերությունից ուտում իրեն, որ երիտասարդ իշխանը չի նկատում։ Ստիպված վեր կացավ, որպեսզի նորից մոտենա ու փսփսա ականջին, բայց Մերուժանը կես ճամփից զայրացած գոռաց նրան.

— Լավ, հասկացանք...

— Ստում ես, իշխան։ Քո ամեն մի խոսքն էր ստում։ Ամեն մի բառը, ամեն մի հնչյունը։ Դու թագավոր ես ուզում դառնալ, ուրիշ ոչինչ։

Ասաց Վասակն ու հպարտացավ իրենով։ Փքվեց հերոսի պես։ Բարձրացավ իր աչքին։ Ուղղեց ուսերը, ավելի հարմար տեղավորվեց բազմականին ու մինչև վերջ խմեց իր թասի գինին։ Այ այսպես կշշպռեմ քեզ, սիրուն Մերուժան։ Հիմա գո՞հ ես։

— Այո, ուզում եմ,— ժպտաց Մերուժանը։— Մի՞թե երբևիցե ասել եմ, որ չեմ ուզում։

— Ինչպե՞ս,— շշմեց Վասակը նրա անամոթությունից և փուլ եկավ ինքն իր աչքին։— Եվ դու հանդգնում ես բացեիբաց ասե՞լ։

— Իսկ ինչո՞ւ ոչ, սպարապետ։ Եթե ես ինձ պատրաստ եմ զգում երկիրը ղեկավարելու, եթե ես հիմար չեմ, հիվանդ չեմ, ուժս ու փորովս տեղն են, ինչո՞ւ պիտի թաքցնեմ։ Բավական չէ՞ կույսի ամոթխածությունը խաղալ և իրերը չկոչել իրենց անուններով։ Ինչո՞ւ ինչ-որ մեկը կարող է թագավոր դառնալ միայն նրա համար, որ թագաժառանգ է։ Իսկ եթե ապո՞ւշ է, եթե տհա՞ս է, ոչինչ, չէ՞, փոխարենն ամեն ինչ օրինական է, կարգ ու պատշաճով։ Ինչո՞ւ պիտի քո որդին

սպարապետ դառնա։ Միայն նրա համար, որ քո որդի՞ն է։ Ի՞նչ է, ճակատի՞ն է գրված, որ զորքերի գլուխ պետք է միշտ Մամիկոնյան կանգնի։ Իսկ եթե իմ որդին ավելի՞ ընդունակ է, քան քոնը։ Ի՞նչ անենք, լռե՞նք, որովհետև խոսելն ամո՞թ է։ Ոչ, սպարապետ, ամեն մարդ պիտի իր գինն իմանա և չամաչի իրեն մատուցելու։

— Բայց ասա, խնդրեմ, ո՞ր մի հայը իրեն պատրաստ չի զգում թագավոր դառնալու,— մեղմ հարցրեց Վասակը։— Կարծում ես, Ապահունյաց նախարա՞րը իրեն պատրաստ չի համարում։

Վարձա Ապահունին երախտագիտությամբ նայեց Վասակին, գլխով արեց ու համեստորեն իջեցրեց հայացքը։

— Մի նենգափոխիր խոսքս, սպարապետ։ Դու ինձ լավ ես հասկանում։ Ես պատրաստ եմ թագավոր դառնալու։ Եվ կարող եմ բաց ճակատով ասել։ Ամեն տեղ ասել։ Շահի մոտ էլ։ Կայսրի էլ։ Հենց քո արքայի էլ։ Թքած, թե ով ինչ կմտածի իմ մասին։

— Համենայն դեպս, ուրիշ տեղ մի ասա,— խորհուրդ տվեց Կամսարականը, ուժ առած Մերուժանի խոսքերից և այդ ամենը վերագրելով իրեն։— Մեզ ասում ես, բավական է։

— Եվ հետո ո՞վ հնարեց, թե ես հեշտ գործի եմ գնում։ Չէ՞ որ դա ինքնազոհություն է։ Մանավանդ այս երկրում։ Եթե ուզում ես երկիր կառավարել, պիտի կաշվիցդ դուրս գաս, օր-օրի հալումաշ լինես, մոռանաս քեզ։ Ի՞նչ է, սրա՞ համար պիտի ամաչեմ։

— Համենայն դեպս, գործ չունես,— կրկնեց Կամսարականը։

— Ես քո բոլոր խոսքերին համաձայն եմ,— հանկարծ, ի զարմանս ամենքի, հայտարարեց Վասակը։— Ընդունում եմ կետ առ կետ։ Ստորագրում եմ ամեն բառի տակ։ Լիովին հանձնվում եմ քեզ։ Ուզո՞ւմ ես, կարող եմ ասել նաև, որ պարտված եմ։

Մերուժանը հարցական նայեց Վասակին, որի ոտքերը չէին հասնում գետնին և, բազմականից կախ ընկած, օրորվում էին։

— Մի նեղանա, իշխան, բայց դու չարաշահում ես քո խելքը։ Քո բանականությունը ինչ-որ մի տեղ խանգարում է քեզ։ Եթե մի քիչ, գոնե մի քիչ զգացմունք լիներ քո խոսքերի մեջ, մենք հիանալի բարեկամներ կդառնայինք։ Ես ինձ վատ եմ զգում քո ճիշտ մտքերից։ Որովհետև դու ամեն քայլափոխին խաբում ես ինձ։ Ուղղակ ես գցում։ Համակրանք ես շահում։ Եվ շահում ես անարդարացիորեն։ Այ, ես նայում եմ քեզ, գիտեմ, որ խաբում ես, բայց իմանալով հանդերձ, խաբվում եմ, ուզո՛ւմ եմ խաբվել։ Սակայն բավական է մի ճշմարիտ և ազնիվ զգացմունք, անարատ ու թեկուզ միամիտ մի հույզ, որ ջրի քո բոլոր մտքերը։ Անխտիր ջրի։

— Իսկ ես քո զգացմունքներից եմ վախենում, սպարապետ։ Եթե միայն քոնը լինեին, աստված քեզ հետ, ապրիր ինչպես կամենում ես։ Բայց դա քո բոլոր նախորդների արատն է և քո բոլոր հետնորդների ախտն է լինելու։ Քո հաղթանակնե՞րն էիր աչքս խոթում։ Իսկ դու գիտե՞ս ինչ է դրանց անունը։ Բարոյական հաղթանակ, ընդամենը բարոյական, գոնե հասկանո՞ւմ ես այդ բառի խեղճությունը։ Սա չի՞ քո մղած բոլոր մարտերի արժեքը։ Սա չի՞ զգացմունքի հաշվին ծնվող ինքնախաբեությունը։ Խաբում ես, գոնե քեղ խաբիր, ուրիշների՞ն ինչի ես խաբում։ Ինչո՞ւ ես բարոյական հաղթանակներով կերակրում ժողովրդիդ։ Բա մեղք չե՞ն, որ թևեր ես տալիս նրանց, որպեսզի հետո թռչել ուզենան և վերջին, ամենավերջին պահին, երբ լինել-չլինելու հարցն է որոշվում, հանկարծ պարզվի, որ հավի թևեր են դրանք։ Եվ հավի պես էլ մորթվեն։ Կենացդ, սպարապետ։ Բարի ճանապարհ քեզ։

— Եղբայր, մենք չենք կարող թշնամի լինել,— անառարկելի տոնով ասաց Վարդանը։— Միացիր մեզ, միասին գնանք Պարսկաստան։

— Հանգիստ թող մարդուն,— բարկացավ Մերուժանը և ձեռքը մեկնեց Վասակին։

Վասակը, մի փոքր տատանվելով, բռնեց նրա ձեռքը ու սեղմեց։

Հետո, առանց մնաս բարով ասելու մյուսներին, դուրս եկավ վրանը ու անշուք դահլիճից, մտովի գնահատելով, որ

Մերուժանը, չնայած իր խոշոր հարստությանը, ապրում էր զինվորականին կամ հոգևորականին վայել համեստությամբ։

Միջանցքում տեսավ Վահանին ու Սամվելին։ Վահանը կծկվել, մի բուռ էր դարձել։ Որդին ինչ-որ բան էր պահանջում և քաշում նրա թևից։ Երևի ուզում էր տանել դահլիճ և ստիպել, որ իր ուզածն ասի։ Հայրը խեղճացած դիմադրում էր, խնդրում, աղերսում, որ ձեռք քաշի իրենից։ Նա սայթաքեց ու ընկավ։ Սյունից բռնելով, ոտքի ելավ մեծ դժվարությամբ, որովհետև Սամվելը շարունակում էր քարշ տալ նրան։ Ինչ-որ նողկալի ու քստմնելի բան կար թե՛ հոր դավաճանության, թե՛ որդու հայրենասիրության մեջ, և Վասակը աննկատ դուրս եկավ դղյակից։

— Ինչո՞ւ չձերբակալեցիր,— հենց որ մենակ մնացին, պոռթկաց Կենան Ամատունին։— Հազար անգամ ասացի։ Ինչո՞ւ։

— Ճիշտ է, չափն անցկացրեց սպարապետը,— համաձայնեց Վարձա Ապահունին։— Չի կարելի, չէ՞։

— Հիմա էլ ուշ չէ,— հատ-հատ և ծանրակշիռ ասաց Վարդանը։

Մերուժանը ապշած նայեց Վարդանին, ուզեց թքել երեսին, անպատվել, ապտակել նրան, բայց սեղմեց ատամները և քթի տակ մի քանի բառ մոմոաց.

— Մարդ եք, չէ՞։

Իսկ Վասակը, նժույգը հեծած, քշում էր դեպի հյուսիս և ուրախ էր իր բացարձակ մենակությամբ, որովհետև մինչև մայրաքաղաք ահագին երկար ճանապարհ կար, և նա մի քանի օր ազատ ժամանակ ուներ մտովի խոսելու հայերի հետ ու սիրտը դատարկելու։

Գլուխ տասնվեցերորդ

—Մի սպանիր։

Դեմ-դիմաց, փայտե կարճ ցանկապատի տարբեր կողմերում, կանգնած էին նրանք, Գնելը՝ մազերը քամուն տված, բաց ճակատով, պարզ հայացքով, մեջքին՝ ահռելի, ուղղի

պես ծնկի շոքած մի քաղաք, ու արքան՝ աչքերում վախ և խուճապ, ետևում՝ անծայրածիր ու ամայի մի տափաստան։

— Երբ գտնեն քո դիակը, աղբի հետ քեզ էլ կտանեն։ Դու սնունդ կտաս բույսերին։ Դարնանը ես կնայեմ մատղաշ խոտերին, ծաղկած թփերին և կփնտրեմ, թե նրանցից որ մեկն է սնվել քո հյութերով։

— Դու ինձ չես կարող սպանել, արքա։

— Ինչո՞ւ։ Որովհետև անմե՞ղ ես։ Անմեղությունն է հիմա քո մեղքը։ Դու չթողեցիր, որ խղճի խայթ զգամ։ Իսկ ես... լաց եմ եղել քեզ համար։ Անկեղծ և իսկական արցունքներով։

— Մեղավոր եմ, արքա։ Ինչո՞վ հատուցեմ իզուր թափած արցունքներդ։ Բայց, իմացիր, եթե մարդ սպանես քո քաղաքում, ոչ ոք այլևս չի հավատա քո խոսքին։ Կկործանվի Արշակավանը։ Դեռ չկառուցված կկործանվի։

— Այն, ինչ կատարվեց, չպետք է ժխտվի։ Երևի կարող ես այդքան բան հասկանալ։ Բայց հույս չդնես ինձ վրա։ Դու ինքդ պիտի ուղղես սխալը։— Արքան գոտու տակից հանեց դաշույնը ու գցեց նրա ոտքերի առջև։ —Ինքդ պիտի քանդես կծիկը։

Գնելը ժպտաց քթի տակ, և դա չվրիպեց արքայի ուշադրությունից։ Նույնիսկ մի փոքր զինաթափ արեց նրան։ Ի՞նչ հիմք ուներ այս մարդը ժպտալու գիշերվա ու ադամալույսի սահմանագծին, երբ այս պահից ոչ հանգող աստղերն են նրան պատկանում, ոչ ցուրտը, ոչ այս խորին լռությունը, ոչ գաղտնիքներով լեցուն այս անլվա քաղաքը, ոչ էլ նույնիսկ հենց իր ծանր ու թշվառ կյանքը՝ նրա խուլ անկյուններից մեկում։ Ոչ մի բան, բացարձակապես ոչինչ, ոչ լավ, ոչ վատ, այլևս նրանը չեն։ Էլ ինչո՞ւ էր ժպտում։

— Որովհետև ամենահզոր մարդն իր երկրում ստիպված է ծպտվել։ Ուրեմն, նա ամաչում է։ Կամ վախենում։

Ու նա ծիծաղեց։ Մի քիչ արհեստական, մի քիչ զոռով, առանց թոքերի, միայն ձայնով, միայն կոկորդով, բայց և այնպես ծիծաղեց։ Ու այդ ծիծաղի մեջ մահվան սարսուռ կար, ապրելու թրթիռ, մազից կախված մի նողկալի ան-

որոշություն, որն ուր որ է պիտի լուսավորվեր և փարատեր կասկածները։ Հօգուտ այս աշխարհի, կամ՝ այն...

— Ինչո՞ւ ես ծիծաղում,— էլ ավելի շփոթվեց արքան ու զրգռված կրկնեց.— Ինչո՞ւ ես ծիծաղում։

— Որովհետև դու անզոր ես իմ առաջ։ Ուզում ես ու չես կարող սպանել։ Կրակն ես ընկել քո ստեղծած քաղաքի ձեռքը։

Գնել տղա, գուցե դու ճիշտ ես, գուցե ես իրոք անզոր եմ քեզ սպանելու, մի բան, որ ինքս էլ չեմ ուզում, բայց դու իշխան ես ծնվել, ես՝ արքա, և առաջին անգամ կյանքում ես օրհնում եմ այս անհավասարությունը։ Որովհետև դա ոչ միայն դիրքի, ոչ միայն հարստության, ոչ միայն ուժի, այլև միջոցների տարբերություն է, իմ նենգությունն էլ է քոնից շատ, իմ ստորությունն էլ, իմ անազնվությունն էլ...

— Կարող ես ինձ շնորհավորել, Գնել։ Ես ամուսնացա։ Հիմա մեր երկիրը թագուհի ունի։

— Սրտանց շնորհավորում եմ։ Ուրեմն, դու վերջապես ընդունակ եղար սիրելու։

— Իսկ ինչո՞ւ չես հարցնում՝ ո՞ւմ հետ։

— Ո՞ւմ հետ, արքա։ Ո՞վ է այն երջանիկ կինը, որ պատիվ ունի թագաժառանգ ծնելու։

— Փառանձեմը, Գնել։ Սյունյաց Անդովկ իշխանի դուստրը։

— Փառանձե՞մ... Իմ կի՞նը...

— Նա մարմարի պես ողորկ փոր ունի... Ցից կրծքեր... Սպիտակ ու երկար պարանոց...— հրճվանքից գոռաց արքան մթության մեջ, տափաստանից դեպի քաղաքը, ցանկապատի անապահով կողմից դեպի ապաստանը, որպեսզի հարվածը դիպուկ լինի, տեղնուտեղը խոցի, միանգամից կոտրի ողնաշարը։

Հողը երերաց, աշխարհը մթնեց, մեջքի ետևում տները գանդաղ ու անձայն փուլ եկան, կիսավարտ պարիսպը խարխլվեց ու քանդվեց, բայց ոչ վերևից, այլ հիմքից դեպի վեր, մետաղյա ինչ-որ լար, ստամոքսի թե աղիքների մեջ, հազիվ լսելի մի ծլնգոցով պոկվեց, և անասնական մռնչոցով նա ընկավ գետնին, ծնկների վրա։ Գլուխը թուլացած

կախվեց կրծքին, անհավատալիորեն ձգվեց, պոկվելու աստիճան վզից երկարեց և, կոտրվելու չափ, ճկվեց բարակ ճյուղի պես։

— Տեսնում ես, մենք իրար ատելու հիմք չունենք։ Ստիպված ենք միմյանց սիրել։ Ես ու դու նույն կնոջն ենք սիրահարված։

— Ուրախ եմ, որ դու նրան տվիր այն, ինչ ես չէի կարող,— ոչ թե Գնելը, ոչ թե նախկին իշխանը, ոչ թե կործանված արշակավանցին, այլ միայն նրա շրթներն անսպասելիորեն արտասանեցին այդ մի քանի բառը։

— Ուրա՞խ,— կատաղեց արքան և զայրույթից ակամա մի քանի քայլ արեց դեպի ցանկապատը։— Դու ձևացնում ես, որ իմ լուրը չցնցեց քեզ։

— Ջանցնես սահմանը, արքա,— հանկարծ տարօրինակ վճռականությամբ ասաց Գնելը և սպառնալից ոտքի ելավ։

Արքան շվարած կանգ առավ ու չհամարձակվեց նոր քայլ անելու։ Փայտե կարճ ցանկապատը կանգնել էր ոչ միայն երկու մարդու միջև, այլև ամեն մեկի մեջ առանձին-առանձին։

— Թող աստված օրհնի ձեր միությունը,— խոնավ աչքերով ու կերկերուն ձայնով մաղթեց Գնելը։

— Բայց մտքում անիծում ես ինձ,— հաճույքից չարախնդաց արքան, վստահ, որ իր հաղորդած լուրից հետո Գնելը պատահաբար է դեռ կենդանի։— Ասա՛, որ անիծում ես։

— Ուրեմն... Նա կատարեց իր խոստումը...— ինքն իրեն շշնջաց Գնելը և, չգիտես ինչու, տխուր ժպտաց ու տարակուսանքով շարժեց գլուխը։

— Խոստովանիր, որ դու նրան էլ ատեցիր,— պոկ չէր գալիս արքան,— որ քեզ համար մի պայծառ հիշողություն անգամ այլևս չմնաց։ Որ կատարյալ է քո պարտությունը։

— Ոչ, արքա,— մեծ ճիգով, ինքն իր բռի մեջ հավաքելով իրեն, ցավը խլացնելու համար՝ երկարած եղունգներն ամուր խրելով ափերի մեջ, նա անգթաբար սանձեց ներսում լեռնացած ու ալեկոծված կրքերը։— Եթե թեկուզ մի պահ հուզվեմ, եթե թեկուզ մի պահ տառապեմ, ես կորած եմ,

արքա։ Էլ չեմ կարողանա ծպտված ու թաքուն ապրել։ Ես պետք է լույս աշխարհ ելնեմ։ Եվ այն ժամանակ դու ինձ հաստատ կսպանես։ Ես ինքս քեզ կտամ այդ իրավունքը։ Վերջրու դաշույնը։— Նա հրեց ոտքով ու մի կողմ շպրտեց։— Ետ տար։

— Մի շտապիր, եղբոր որդի։ Գուցե հենց ինքդ խնդրես հետո։

— Ես ազատ եմ, արքա։ Ինչո՞ւ պիտի խնդրեմ։ Աշխարհի ամենաազատ մարդն եմ։ Շնորհակալ եմ, որ դու իմ վերջին կապն էլ կտրեցիր աշխարհի հետ։ Ես միայն այդ կապից էի վախենում։

— Քեզ չի հաջողվի ինձ ստիպել, որ ես ինքս սպանեմ քեզ,— իր անզորությունից գազազած, լրբավարի բղավեց արքան։— Դու ինձ չես կարող մեղքի տակ գցել։ Ես ամեն ինչ քեզ վրա եմ թողնում։ Միայն քեզ վրա։

— Ես գոյություն չունեմ, արքա,— հանդիստ ու համբերատար նրան բացատրեց Գնելը։

— Ոչ, դու ինքդ պիտի քանդես հանգույցը։ Ինքդ պիտի լուծես քո հաշիվները։

— Իմ ազատությունը իմ ամենամեծ պատիժն է, արքա։

— Բայց Փառանձեմը քեզ է սիրում։ Քեզ, և ոչ թե ինձ,— վրեժից հարբած, նրա երեսին նետեց արքան։— Նրա ձեռքերն ինձ են շոյում, բայց քեզ են փնտրում։ Նրա նվաղած ձայնը խավարի մեջ իմ անունն է տալիս, բայց ես քո անունն եմ լսում։ Սրա՞ն ինչ կասես։

— Մի զրպարտիր կնոջդ, արքա։ Անբիծ է նրա հավատարմությունը։

— Նա մտքի մեջ է ինձ դավաճանում։ Մտովի՛։ Քե՛զ հետ։ Դա ավելի ստոր դավաճանություն է։ Սրա՞ն ինչ կասես։

— Չես խաբի ինձ, արքա։ Ինձ համար այլևս վերադարձ չկա։ Իզուր ես ծուղակ լարում։

— Կա՛ վերադարձ,— տենդագին գոռաց արքան։— Հուշե՛ր կան։ Կարո՛ղ, սե՛ր, վրեժխնդրությո՛ւն։

— Ես քեզ խոսք եմ տալիս, որ անհայտ կմնամ մինչև կյանքիս վերջը,— խաղաղ ու գործնական տոնով, պատմու-

թյուն պատմելու պես, Գնելն սկսեց շարադրել իր ծրագիրը։— Ոչ ոք չի իմանա իմ գաղտնիքը։ Ես կապրեմ ուրիշի անունով։ Կկառուցեմ քո քաղաքը։ Իմ բազուկներով։ Իմ դեմքը կխառնվի ամբոխին, կձուլվի նրան։ Եվ մենք ամուր պարիսպ կքաշենք քո քաղաքի շուրջը։ Քարակերտ պալատդ կկանգնեցնենք։ Դու կնայես ու կհիանաս մեր ձեռքերի ճարտարությամբ։ Իսկ պալատի կողքին տաճար կշինենք։ Այնքան մեծ ու գեղեցիկ, որ աղոթքդ այդտեղից ավելի շուտ հասնի աստծուն։

— Ուրեմն, այդքան վախենո՞ւմ ես մեռնելուց,— հեգնանքով հարցրեց արքան։— Եվ պատրաստ ես սողա՞լ ոտքերիս տակ։

— Մի ամբաստանիր ինձ, արքա։ Մի աղտոտիր իշխան Գնելի հիշատակը։ Մի հանդգնիր նրան վախկոտ կոչել։

— Հապա ինչո՞ւ ես այդպիսի սիրով կառուցում թշնամուդ քաղաքը։

— Որովհետև ես հիմա անսահման ժամանակ և հնարավորություն ունեմ իմ փայփայած երազանքով զբաղվելու։

— Ո՞րն է երազանքդ, եղբոր որդի,— քմծիծաղ տվեց արքան, զայրանալով ու զարմանալով, որ Արշակավանի խուժանին պատկանող այս կործանված մարդը դեռ երազանք էլ ունի։

— Դո՛ւ։

— Ե՞ս,— շշմեց արքան ու քահ-քահ ծիծաղեց։

— Դու պետք է ուժեղ լինես, արքա, շատ ուժեղ,— մոլեռանդ հավատով սկսեց համոզել նրան Գնելը, ճակատին մի երակ ցցվեց, կարմրեց դեմքը, ու ձայնի մեջ մի կարծր ու ազնիվ մետաղ մտավ։ Եվ նա արքայի ոտքերի առաջ գորգի պես փռեց իր ամբողջ երազանքը, իր կյանքի իմաստը, իր գոյության գերխնդիրը, որոնք տարիներ ի վեր խեղդվել ու խլացել էին առօրյա հոգսերից, մարդկային կապերից, սիրուց, երջանկությունից, վայելքներից և որոնք նա փայփայել էր ու գուրգուրել ուշ գիշերներին, մեջքի վրա անշարժ պառկած, աչքերն առաստաղին, քնած Փառանձեմից և Արշակունի սեպուհ Գնելից ծածուկ։— Պարտավո՛ր ես ուժեղ լինել։ Ուրիշ ելք չունես։ Մեզ միավորված հայրենիք է

պետք։ Եվ այդ գերագույն նպատակի համար չպիտի խնայես ոչինչ։ Ոչ ուժ, ոչ եռանդ։ Պիտի ոտնատակ անես ամեն բան։ Եթե ճանապարհիդ խոչընդոտ հանդիպի, ձեռքդ չպիտի դողա, դեմքիդ չպիտի կասկած տեսնես։ Եթե քեզ չենթարկվեն, եթե չհնազանդվեն, քարը քարին չպիտի թողնես, պիտի բնաջնջես բոլորին։ Առանց խտրություն դնելու ծերի ու մանկան միջև։ Քո առաջ ճամփան պիտի հարթ լինի միշտ։ Քո սահմանները պիտի անառիկ լինեն։ Քո մասին երգեր պիտի հյուսեն։ Պիտի գովերգեն։ Պիտի փառաբանեն։ Եվ արդյունքի առաջ պիտի մոռանան քո անխուսափելի ոճիրները։ Քեզ հայոց ամենամեծ թագավորը պիտի հռչակեն։

— Բայց դու ինձ ատում ես, Գնել,— ապշեց, խեղճացավ ու իրեն բոլորովին կորցրեց արքան։— Հո չե՞ս կարող ժխտել, որ ատում ես։

— Քե՞զ,— արհամարհանքով ֆշշաց Գնելը, ճակատի երակն անմիջապես անհետացավ, դեմքը կրկին գունատվեց, ձայնի մետաղը փոխվեց ավազի, ու աչքերը թույնով լցվեցին։— Ամբողջ սրտով, արքա։ Ոչ ոքի այնքան չեմ ատել, որքան քեզ։ Դու ինձ ջահել կործանեցիր։ Զրպարտեցիր ինձ, քշեցիր պապիս մոտից, կասկածեցիր ամենակեղտոտ հանցանքների մեջ։ Հրամայեցիր գլխատել ինձ, երբ հորս արյունը դեռ չէր չորացել ձեռքերիդ։ Ջնչի՛ն մարդուկ։ Հիմա ամբողջ երկիրդ ինձ դավաճան է համարում, անունս անեծք է բոլորի շրթներին։ Դու ամուսնացար իմ սիրած կնոջ հետ։ Շլացրիր նրան թագով ու հարստությամբ։ Տիրացար իմ ամենամեծ գանձին։ Ինձ դարձրիր ոչնչություն։ Թշվա՛ռ ներքինի։ Ատե՞լ։ Քի՛չ է ասել ատելություն։

«Իսկ փորը...— Այդ միտքը մտրակի պես դաղեց, քերծեց, ճանկռոտեց նրա հոգին։— Իրոք մարմարի պես ողորկ էր... Դու չստեցիր, արքա... Ցից կրծքերը... Սպիտակ, երկար պարանոցը... Աստված է վկա, որ իրավացի էիր դու...— Մի ակնթարթ, միայն մի ակնթարթ նա իրեն թույլ տվեց վերանալու այս կոպիտ ու ցուրտ հողից, որի վրա սառում էին կիսաբորիկ ոտքերը ու ինքն իրեն, ինքն իր համար, առանց արցունքի լաց եղավ...— Ոտքերը մոռացար, արքա... Ծպի-

տը... Ջայնը... Ատլասե սրունքները... Սաթե տաք բումբերը... Մոռացա՛ր, մոռացա՛ր...»։

— Հապա էլ ինչի՞ էր այդպիսի վարակիչ հավատ հնչում քո խոսքերում,— էլ ավելի թևաթափ եղավ արքան ու մի տեսակ երկյուղ զգաց ծառայի հնացած ու մաշված ջորերով այս անծանոթ մարդուց։

— Իմ խոսքերը քեզ չեն վերաբերում,— խորապես վիրավորվեց Գնելը։— Մի խառնիր անարժան անձդ։ Ես արքայի՛ մասին եմ մտածում։ Իսկ արքան դու չես միայն։ Ես եմ։ Մեծ թե փոքր նախարարները։ Ամենահետին շինականն անգամ։ Մեր ապագան։ Մեր գոյությունը։ Ի՞նչ անենք, որ այդ ամենը մարմնավորված է քո պես չնչին ու անպետք մարդու մեջ։

— Իսկ դո՞ւ ինչ ես,— կանացի ճղճղոցը գցեց արքան ու ջղայնությունից ոտքով հարվածեց փայտե ցանկապատին։— Փափկասուն օրիորդ... Հոռոմների ձեռքին մեծացած... Աղջկա մաշկով, անմազ, սիրուն... Գուցեև արվամոլ ես, հը՞... Ինչ կա որ, մեղկ և փափուկ կյանքի ես սովոր... Նախարարների պատանի որդիներին թևդ տակ հավաքած, անբարո գործեր էիր տեսնում... Պղծում էիր մի ամբողջ սերունդ... Եթե կինդ իրոք սիրում էր քեզ, ինչո՞ւ մի օրվա մեջ մոռացավ վիշտը... Դու երջանիկ գիշերներ չես պարգևել նրան... Իսկ այդպիսի կնոջ համար պետք է ամեն գիշեր զոհասեղան դառնաս... Ամեն անգամ նորից նվաճես նրան... Անընդհատ վաստակես այդ իրավունքը... Միշտ սկզբի կետից, մի՛շտ... Հապա եթե դո՞ւ հանկարծ դառնայիր թագավոր... Դու ավելի նենգ ու դաժան կլինեիր... Փառք աստծո, որ ինձ է վիճակվել թագավորելու այս երկրում և ոչ թե քեզ... Ու շնորհակալություն. հազա՞ր քեզ շնորհակալություն, որ քո պատճառով ես բարձրացա իմ աչքին...

— Եթե այդպես է, գնա։ Մենք էլ խոսելու բան չունենք։ Գնա, ինչո՞ւ ես կանգնել։

— Որովհետև դու հետաքրքրեցիր ինձ,— ճղճղոցը կրտրեց ու մտախոհ ասաց արքան։— Դու գիտե՛ս, թե ինչ ես ուզում։ Դու հավատո՛ւմ ես ինչ-որ բանի։ Եվ քո հավատը միայն ես կհասկանամ։ Ուրիշ ոչ ոք։ Բայց ինչո՞ւ դու։ Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ միայն դու։

— Մենք միասին կշենացնենք մեր երկիրը,— ոգևորությամբ ու եռանդից խեղդվելով, ասաց Գնելն արքային։— Կհզորացնենք։ Կդարձնենք միավորված ու անկախ։ Եվ մենք այդ ամենին կհասնենք, երբ կառուցվի Արշակավանը։ Քո քաղաքը։

— Ի՞նչ բան է Արշակավանը, Գնել,— համակ ուշադրություն դարձավ արքան։— Ի՞նչ բան է, ի՞նչ։

— Ուժ, անկախություն, միասնություն։ Եթե վաղը պատերազմ սկսի, դու կախված չես լինի նախարարներից, օգնություն չես մուրա նրանցից։ Դու քո սեփական ուժը կունենաս։

— Բայց ինչո՞ւ միայն դու, ինչո՞ւ, ինչո՞ւ։

— Դու ինձանից մի վախենա։ Ես չկամ։ Գոյություն չունեմ։ Չեմ երևա։

— Եվ փառքի կարիք երբե՞ք չես զգա։

— Ինձ քո փառքն է պետք։ Միայն քո փառքը։

— Շնորհակալ եմ, Գնել։

— Միայն ափսոս, որ այդ մեծ նպատակներին ձգտում է մի ողորմելի ոչնչություն։ Այդ հակասությունը կարող է ծիծաղելի դարձնել մեր սուրբ և արդար գործը։

— Լեզուդ քաշիր, Գնել,— կատաղեց ու սպառնաց արքան։— Ինձ համբերությունից մի հանիր։ Քո բախտն իմ բարեհաճությունից է կախված։

—Մի վախեցրու, արքա։ Ես գիտեմ, որ ընդունակ ես ամեն ինչի։ Բայց ինչ վատություն էլ որ անես, մեկ է, ես օգնելու եմ քեզ։ Իմ օգնությունից դու չես պրծնի։

— Իսկ եթե չուզենա՞մ քո օգնությունը։ Ի՞նչ է, հո չե՞ս կարող բռնի պարտադրել ինձ։ Մի սպառնա քո համոզմունքներով։

— Դու վանդակի մեջ ես, արքա։ Փակուղու առաջ։ Դու քեզ պատեպատ ես խփում։ Ես չեմ կարող քեզ այդ վիճակում տեսնել,— ջանասիրությամբ ու համբերությամբ Գնելը բացատրեց արքային։— Միևնույն է, ես աշակցելու եմ քեզ։ Ոչ թե քեզ, այլ քո գահին, քո պաշտոնին։ Ուզես թե չուզես, օգնելու եմ, թիկունք եմ կանգնելու։ Դու դառնալու ես հզոր ու երջանիկ։ Բոլորը նախանձելու են քեզ։ Մատով են

ցույց տալու։ Ի՞նչ նշանակություն՝ դու այդ վճռել ես, թե ոչ։ Ունե՞ս մտադրություն, թե չունես։ Քո կարծիքն ինձ բնավ չի հետաքրքրում։

— Դու չար ես, Գնել, և պնդաճակատ։ Դժվար թե մեր միջև որևէ կապ ստեղծվի։

— Դու գիտես, արքա։ Չեմ ստիպում։ Երբ որ ուզենաս, երբ որ իմ կարիքն զգաս, կարող ես գալ։

— Չեմ գա, Գնել։ Դու այլևս չես տեսնի ինձ։ Ես խորհրդատուներ շատ ունեմ։

— Կգաս, արքա։ Դու հիմա էլ գիտես, որ գալու ես։ Քո խորհրդատուներն ազատ չեն։ Իսկ ես ազատ եմ։ Քեզնից էլ ավելի։ Նույնիսկ ինձնից...— Հետո աչքերի մեջ դարձյալ ծնվեց նույն պինդ ու մոլեռանդ հավատը, հարթ և կոշտ մազերը թափվեցին գունատ երեսին ու ծածկեցին դեմքի կեսը։— Հիշիր, երկիրը պիտի կառուցել, ստո՛վ, սխալո՛վ, ճշմարիտո՛վ, ամե՛ն ինչով, բայց պիտի կառուցել։

— Դու ինձ համոզում ես դաժանություն գործել։ Ստիպում ես խտրություն չդնել միջոցների մեջ։ Վերջնական նպատակի անունից ես խոսում։ Դու՝ գագաթին կանգնած, իսկ ես՝ ներքևում, ստորոտին։ Բայց չէ՞ որ այդ ճանապարհը ես եմ անցնելու, ես, ե՛ս եմ ձգտելու դեպի գագաթը...

— Չանցնես սահմանը, արքա... Հեռու կանգնիր...

— Իսկ ես դեմ եմ դաժանության գնով մի քայլ անգամ անելու,— հնազանդորեն ետ քաշվեց արքան։— Դաժանության վրա կառուցված երջանկությունը խարխուլ կլինի։ Փուլ կգա, չեն դիմանա հիմքերը։

— Որովհետև վախկոտ ես ու անվճռական։ Ոչ թե ազնիվ ես, ո՞չ, այլ պարզապես մանր դաժանությունների ես սովոր։ Նախ քո վախը հաղթահարիր։ Ներքին խոչընդոտներդ վերացրու։— Գնելն ուղղեց մազերը, նստեց մի քարի, որը, ինչպես և մյուս հարյուրավոր ոչ սրբատաշ քարերը, դեռ պիտի դրվեր պարսպի վրա, ու ծիծաղեց։— Ես նոր հոգսեր ավելացրի քո ուսերին։ Քո աչքերի մեջ երկընտրանք ծնեցի։ Պե՞տք եմ քեզ, թե՞ ոչ։ Սպանե՞ս ինձ, թե՞ չսպանես։ Լուծիր, արքա։ Հենց հիմա լուծիր։ Գոնե հիմա տղամարդ եղիր։ Եթե թեկուզ մի պահ մտքովդ անցնի, որ պետք չեմ, սպանիր։ Ես

հանգիստ կմեռնեմ։ Արդեն վստահ քո ուժին ու անցնելիք ճանապարհին։ Որովհետև զոնե իմ հաշվին կսովորես վճռական լինել։

— Ես անզեն եմ...

— Վախկո՛տ... Թշվառակա՛ն... Ոչնչությո՛ւն... Ահա քեզ զենք...— Նա ընդոստ վեր կացավ ու ոտքով հրեց դաշույնը։— Խոստովանիր ճշմարտությունը... Քե՛զ խոստովանիր... Ասա, որ չես ուզում ինձ սպանել...

— Կենդանի մնա, Գնել... Խնդրում եմ... ողջ եղիր...

— Ուզո՞ւմ ես ինքդ քեզ փորձել, արքա։

— Ուզում եմ,— խոստովանեց արքան։— Շատ եմ ուզում։

— Ասում են, որ քո հայրը, այսինքն՝ պապս, այս ու այն կողմ ընկած, ողբում է իմ մահը և անծիրում քեզ։ Նկատի ունեցիր, որ նա մեր նախկին արքան է։ Եվ չմոռանաս նաև, որ կույր է։ Շահն է նրան կուրացրել։ Իսկ դու գիտե՞ս, որ այս դժբախտությունները հիմա ինչ հզոր զենք են նրա ձեռքին։ Նրա խոսքը շատ ազդեցիկ է։ Նա կարող է մեծ վնասներ պատճառել քեզ։ Վախեցիր հատկապես նրանցից, ովքեր վնաս են պատճառում առանց զենքի ու զորքի։

— Ի՞նչ անեմ, Գնել,— մռայլվեց արքան, հիշելով իր ամենափափուկ ու ամենախոցելի տեղը, այն պատառը, որ դեմ էր առել կոկորդին ու կուլ չէր գնում։— Գիտեմ, բայց ի՞նչ կարող եմ անել։

— Ինքդ որոշիր,— սառը պատասխանեց Գնելը, և դեմքի ոչ մի մկանը չշարժվեց։

— Բայց... Դու սիրում ես քո պապին...— ինչ-որ մտքից սարսափած, կմկմաց արքան, կծկվեց ու դող ընկավ մարմինը։

— Կնոջս ու պապիս, —ջերմությամբ արձագանքեց Գնելը։— Նրանց եմ սիրել միայն... Աշխարհում ամեն ինչից ավելի...

— Իսկ ի՞նձ ինչու ես զրկում սիրո իրավունքից... Նա իմ հայրն է...

— Բայց նա վտանգ է սպառնում քեզ... Նույնն է, թե՝ երկրին։ Շատ լուրջ վտանգ։

— Գուցե համոզե՞մ նրան,— խուճապի մեջ ընկավ արքան։— Աղաչե՞մ... Ոտքե՞րն ընկնեմ...

— Չնչի՛ն մարդ... Փալա՛ս...

— Հապա ի՞նչ անեմ,— անօգնական հարցրեց արքան, վերջնականապես զգալով, որ դրության լրիվ տերը Գնելն է հիմա։

— Չգիտեմ։ Բայց դու պետք է տեղյակ լինես, որ նա ուզում էր ինձ թագավոր տեսնել քո փոխարեն։ Որպեսզի, իմ տարիքից ու անփորձությունից օգտվելով, երկրի փաստական տերը դառնար։

— Բայց նա մեր սիրելին է, Գնել... Նա քո պատճառով է ինձ անիծում... Արդարության համար... Ճշմարտության... Քե՛զ համար...— Նա ուղղեց կծկված մարմինը, արագ մոտեցավ ցանկապատին, ճարպիկ մի ցատկով անցավ սահմանը, կատաղորեն բռնեց Գնելի կոկորդից ու հեալով գոռաց նրա երեսին.— Եթե մի բառ էլ ասես... եթե մի հնչյուն էլ արձակես... շանսատակ կանեմ քեզ...

Գնելը բռնեց նրա դաստակներից, ամբողջ ուժով սեղմեց, պոկեց իր կոկորդից ու հանգիստ մի կողմ տարավ։

— Մի բան էլ չմոռանամ,— անվրդով ասաց նա շփոթված արքային, որ չգիտեր ուր դնել ձեռքերը։— Ոչ ոք չպետք է իմանա, որ ես դավաճան չէի։ Չասես, որ խարդավանքի զոհ եմ եղել։

— Իսկ անո՞ւնդ,— արդեն լրիվ իրեն կորցրեց արքան, որովհետև անընդհատ իր անձը մտովի դնում էր նրա տեղը ու ոչինչ չէր հասկանում։

— Իմ անունը թող քիչ մտահոգի քեզ։ Դու միայն քո օգտի մասին մտածիր։ Դա նաև իմ օգուտն է։— Լռեց մի պահ, դեմքին մեղմություն ու բարություն իջավ, մի ստվեր, մի պատառիկ անցյալ ու կորած կյանքի թուլություններից, ու նա խոսեց փոքր-ինչ ամաչելով ու կարմրելով։— Թագաժառանգ կծնես, լսո՞ւմ ես, անպայման թագաժառանգ։ Գահի վրա պետք է քո որդին նստի։ Փառանձեմն ինձ համար մի աղջիկ ծնեց միայն։ Իսկ քեզ համար տղա կբերի։ Թույլ տուր ես կնքեմ անունը։ Միշտ երազել եմ տղա ունենալ և

անունը դնել Պապ։ Թող հիմա քո որդին այդպես կոչվի։ Պապ Թագավոր։

— Պա՜պ Թագավոր,— նրա հուզմունքից վարակվեց արքան։— Վատ չի հնչում։

— Լավ նայիր քեզ։ Արթուն եղիր միշտ։ Հսկիր, պահպանիր կյանքդ։ Զգուշացիր մահափորձերից։ Ոչ ոքի մի հավատա։ Ոչ ոքի մի վստահիր։ Չթողնես, որ քեզ էշնահատակ անեն։

— Արդեն լուսանում է, Գնել, ես գնամ։ Մնաս բարով։

— Գնաս բարով, արքա։

Կանգնել էին դեմ առ դեմ ու նայում էին իրար, Գնելը՝ մազերը քամուն տված, բաց ճակատով, պարզ հայացքով, մեջքին՝ ահռելի, ուղտի պես դանդաղ ոտքի ելնող մի քաղաք, ու արքան՝ աչքերում դեռ չհանգած վախ և խուճապ, ետևում՝ անծայրածիր ու ամայի մի տափաստան։

— Թշվառակա՜ն,— հանկարծ պայթեց Գնելը ու գոռաց փողոցային լակոտի պես։— Ճիճո՜ւ... Արնախում տզրո՜ւկ...

— Դու մարդ չես...— Նույն ձևով նրան պատասխանեց արքան։— Քարից ես շինված... Քեզ մայր չի ծնել... Արվամոլի պես դաժան ես դու...

— Վախկոտ սողուն... Փոքրոգի... Ողորմելի փալաս...

— Դո՜ւ ես... Դո՜ւ ես... Անխիղճ և անաստված... Անգութ և անմազ... Սպիտակ մաշկով... Դո՜ւ ես...

Անծայրածիր տափաստանում Գնելը իր փշրված անցյալն էր տեսել, տեսել էր ծանոթ ու հարազատ դեմքեր, շոգ արևի տակ հաստ մուշտակ հագած կնոջը, հասունացած աղջկան, որը տարիքով ավելի մեծ էր մորից, բաց աչքերով պապին, որ նայում էր շուրջը և, չգիտես ինչու, իրար ետևից առարկաների անուններ տալիս, Արշակ հորեղբորը, որն ամենքից ավելի բարի դեմք ուներ ու ազնիվ ժպիտ, և լայն, փայտե քառոտանի մահիճը քիչ հեռվում, վրան՝ բրդեղեն անկողինը, սպիտակ պաստառակալը, սնարն ու վերմակը։

Մինչև այդ, մի հեռավոր, հազիվ լսելի աղմուկ էր ծնվել քաղաքի ընդերքում, դեռևս անվստահ, դեռևս ամոթխած, բայց որը հետզհետե թափ էր առնում, ուժգնանում, դուրս թռչում երդիկներից, լցվում ծուռումուռ փողոցները, քսվում կավա-

շեն պատերին, մի պահ շփոթվում, կորցնում ուղղությունը, ապա ուշքի գալիս և առաջ սուրում։

Դեռ ոչ մի մարդ չէր երևում, բայց քաղաքն արդեն արթուն էր, հաստա՛տ արթուն էր, ապրում էր անտեսանելի ու ընդհատակյա կյանքով։

Արքան և Գնելը լռեցին, իրենց հայացքներն ակամա ուղղեցին քաղաքի կողմը, բնազդորեն որսալով օդի մեջ սավառնող ինչ-որ անհասկանալի գրգիռ։

Բայց աղմուկը, որքան էլ տարօրինակ թվար, որոշակի դարձավ ոչ թե քաղաքի, այլ տափաստանի կողմից։

Մի ձիավոր էր գալիս հեռվից, փոշու հսկայական ամպեր գոյացնելով ետևում։ Ձին այնքան արագ էր թռչում, որ ոտքերը կարծես չէին դիպչում գետնին։

Արևը դեռ դուրս չէր եկել, բայց լույս էր արդեն։ Ահա ուր որ է երկինքը կշառագունի, նոր հոգսերի և ուրախությունների, նոր երջանկությունների ու դժբախտությունների, նոր մահերի ու ծնունդների, նոր կասկածների ու վախերի ևս մի օր պարգևելով Արշակավանի բնակիչներին։

Ձիավորը, շտապելուց առաջ ընկնելով ինքն իրենից, ինքն իր արագությունից, հետզհետե մոտեցավ նրանց, ու արքան ճանաչեց սենեկապետ Դրաստամատին։

Դրաստամատը ձգեց դանդանավանդը, քրտնած ձին խրխնջաց, բարձրացավ ետին ոտքերի վրա ու կանգ առավ։ Դրաստամատը թռավ թամբից և, հուզմունքից աղավաղված ձայնով, հաղորդեց ամբողջ ճանապարհին ուսերին շալակած ու իր հետ բերած գուժը։

— Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև պատերազմ սկսվեց, արքա...

Արքայի առաջին քայլը եղավ հանել գլխին փաթաթված ծածկոցը, որը պետք է անճանաչելի դարձներ նրան...

Այսպես նա ավելի ամուր ու վստահ զգաց իրեն, և բնազդը հուշեց, որ նախ և առաջ այդ զգացողությունն էր նրան անհրաժեշտ։

Գնելը, որպես հավատարմության նշան, անմիջապես ծնկի չոքեց և գլուխը հարգալիր խոնարհեց նրա առաջ։

Միակ մխիթարանքն այն էր, որ այդ լուրը տեղ հասավ ոչ թե պալատում, որտեղ մարդկանց կեսը պարտկերեն էին գաղտնի խոսում իրար հետ, կեսը՝ հունարեն, այլ Արշակավանում, իր քաղաքում, երկրի վերջին ապաստանում։

Զարմանալի մի հանգստություն իջավ արքայի վրա, մի տարօրինակ ինքնատիրապետում, կարծես հոգեկան խոովքը խաղաղեցնելու համար հենց այդ գուժն էր նա սպասում, վերջակետը, անորոշության նահանջը։

Քաղաքում արդեն մարդիկ էին հայտնվել։ Գլուխ գլխի տված, քիթ քթի, ինչ-որ բան էին հուզված խոսում ու քննարկում։

Պատերազմ էր։

Նկատելով քաղաքի ծայրամասում հայտնված ձիավորին, բոլորն ակամա, կարծես խոսքները մեկ արած, վազեցին դեպի ցանկապատը ու զարմանքից կանգ առան։

Արքան էր, մի քիչ տարօրինակ հագնված, ոչ ընտանի գույներով, բայց, ոչինչ, էլի արքան էր, իհա՛րկե արքան էր, իրենց հարցերի միակ պատասխանը, իրենց միակ ապահովությունը։

Բազմությունն անմիջապես շատացավ ու փռվեց արքայի հայացքի առաջ։

Սա նրանց երկրորդ հանդիպումն էր, և հիմա, դարձյալ խոր լռության մեջ, ամբոխն ու արքան նայում էին իրար։

— Կեցցե՛ արքան,— հիշեցնելով նախկին դասը, գոռաց արքան։

— Կեցցե՛ արքան,— մի մարդու պես արձագանքեց ամբոխը, մեծ գոհունակություն պատճառելով արքային, որ նրա տված դասը զուր չի անցել ու չի մոռացվել։

Չէ, ընդունակ է արշակավանցին, քրձերի մեջ է, արևից խանձված, քարերի կոշտուկները ձեռքերին կարծես փոխանցված, ոտաբոբիկ, բայց՝ ընդունակ։

— Կեցցե՛ արքան,— նորից միաբերան գոռացին բոլորը, կարծես է՛լ ավելի լավ սերտելու համար արքայի դասը, է՛լ ավելի լավ յուրացնելու՝ արքաներին հարգելու, հայրենիքը սիրելու, միասին ապրելու ու երկրի համար մինչև վերջին

շունչը կռվելու պատգամները։ Եվ կրկնելու այնքան, մինչև որ անգիր անեն ու այլևս կարիք չլինի հիշեցման։

Արքան հազարավոր կեցցեների միջից կարողացավ ջոկել Գնելի ոգևորված, պատանեկան զիլ ձայնը, և ապա կուրծքը պայթելու չափ լցվեց ուրախությամբ ու հրճվանքով, տեսնելով, թե ինչպես ամբոխը, ջանասեր ու առաջադիմող աշակերտի պես, ծնկի է չոքում իր առաջնորդի առջև։

«Ուրեմն, գործերն այնքան էլ վատ չեն,— մտածեց արքան,— քիթդ շատ մի կախիր»։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գլուխ տասնյոթերորդ

Կյանքը կտար, միայն թե կծիկի ծայրը գտներ, իմանար, թե այդ ինչպե՞ս է պատահում, որ ամեն օր տասնյակ սայլեր են ճամփա ընկնում դեպի Արշակավան՝ բեռնված շինանյութերով և սենդամթերքով, բայց մեծ մասը տեղ չեն հասնում, այդ ինչպե՞ս է լինում, որ անձամբ ինքը արքան, երկրի առաջին դեմքը, ծիրանակիրն ու ծիրանավորը, ամենահզոր հայը, ուշի ուշով հետևում է Արշակավանի կառուցմանը, բայց էլի գործը տեղից չի շարժվում, ում հարցնես՝ մեղավոր չէ, արդարանում են ճարպկորեն, իրենց անմեղությունն ապացուցող փաստարկներ բերում, և բոլորը՝ համոզի՞չ, անհերքելի՞։ Ո՞ւմ օձիքից բռնես, ումի՞ց պահանջես, ո՞ւմ պատժես։

Բյուզանդիայից էլ պատգամավորությո՞ւն է եկել։ Ի՞նչ են ուզում իրենից։ Չի՞ լինի՝ մինչև գետին խոնարհվի ու ռամկավարի ասի՝ շատ շնորհակալ եմ ձեզանից, հայրենա-

կիցներ, լիուլի կուշտ եմ ամեն ինչից, եկեք, մի քիչ էլ դուք թագավորեք, ուզում եք բյուզանդացի պատգամավորներին ընդունեք, ուզում եք՝ ճենաց, միայն թե հանգիստ թողեք ինձ...

— Չկա խոսքը մտքներիցդ հանեք,— գոռաց նա գահասրահում հավաքված նախարարներին։— Եթե պետք լինի, պալատը կքանդեք, ուսներիդ շալակած կտանեք Արշակավան։— Նա վաղուց էր նկատել, որ իր ամեն մի կոպիտ խոսքից հետո նրբակիրթ նախարարները, հատկապես նրանք, ովքեր հունական դաստիարակություն ունեին, շփոթության մեջ էին ընկնում։ Դա անասելի ուրախություն էր պատճառում նրան, և նա է՛լ ավելի անսքող էր ցուցադրում այն ամենը, ինչ, ըստ նրանց, վայել չէր արքային։— Սրանց տեսեք, ճանապարհները դժվար են, լեռնայի՛ն։ Ի՞նձ ինչու եք բողոքում։ Հայկ Նահապետից դժգոհեք, որ բերեց, երկիրը գցեց այս քարերի մեջ։ Պալատի աստիճանների համար մարմար ճարել են, իսկ պարսպի հաստությունը՝ ա՛յ... Ոտքով խփես, փքանդվի... Գիտե՛մ, գիտե՛մ... Թող սպասեն...— Է՛լ ավելի ջղայնացավ նա, թեև ոչ ոք չէր հիշեցրել բյուզանդացի պատգամավորների մասին։— Մթե՞րքն ինչու է ուշանում Արշակավան։ Պալատական ճաշկերույթներին քիչ լափեք։ Թող սպասեն, գիտեմ... Սենեկապետ, ներս հրավիրիր...

Դրաստամատը, որ կանգնած էր պատվանդանի մոտ, պատրաստվեց դուրս ելնելու, երբ արքան կտրուկ թեքվեց արմնկակալի վրա, բռնեց նրա թևից, մոտ քաշեց ու ականջին ինչ-որ բան փսփսաց։

Տիրեց քար լռություն։ Բոլորի հայացքները գամվեցին նրանց, և այդ փսփսոցը ընդհանուր դժգոհություն ու զայրույթ առաջացրեց։ Արքայի ուզածն էլ հենց այդ էր։ Առանձնապես բան էլ չուներ ասելու։ Դիտմամբ էր արել, որ մի քիչ նվաստացներ իր փետրակալած մեծամեծներին։

«Արքայություն հետո կանենք, Դրաստամատ, հետո... երբ երկիրը ոտքի կանգնի...— շշնջաց նա։— Դու տես, թե ինչ քաղաքակիրթ ու նրբասուն արքա կունենաս այն ժամա-

նակ... Ես քեզ խոստանում եմ... Իսկ հիմա գործ ենք անում, սենեկապետ, միայն գործ...»

— Շա՞տ է երևում հուզմունքս,— հարցրեց նա, առանց որոշակի հասցեի։

— Ամեն ինչ կարգին է, արքա,— հանգստացրեց Հայր Մարդպետը։

Իսկապե՛ս հուզված էր։ Աշակերտի պես տրոփում էր սիրտը։ Եվ ո՞ւր իմանար, որ այտերի ու ականջների կարմրությունը մատնում էր նրան, դավաճանում օրը ցերեկով։ Փաստորեն կյանքում առաջին անգամն էր երես առ երես հանդիպում իր թշնամիների հետ։ Եվ հոգու խորքում վախենում էր, վախենում էր ու չէ՞ր խոստովանում իրեն։ Այն զգեստները, որ հագել էր ամիսներ շարունակ, հիմա թվում էին կամ լայն, կամ նեղ, համենայն դեպս՝ նա վստահորեն չէր կրում դրանք։ Միայն թե լավ տպավորություն թողներ, հաջող հանձներ այս քննությունը։ Ափսոս, զարդերը քիչ են վրան, շա՞տ ափսոս...

Պատգամավորները հինգ հոգի էին։ Ղեկավարը մի քայլ առաջ անցավ մյուսներից և հարգալիր խոնարհվեց արքայի առջև։ Խոնարհվեր պիտի, հապա ի՞նչ պիտի աներ, բայց դա մի տեսակ ուժ տվեց արքային, գլխի գցեց, որ ինքն է տանտերը, իր գահով, իր սահմաններով, իր զորքերով։ Եվ հիմա էլ մի ուրիշ ծայրահեղության մեջ ընկավ, երեխայի պես հրճվելով այն մտքից, որ եթե շատ ուզենա, կարող է հենց այնպես, թեկուզ և առանց պատճառի, գլխատել այս հինգին էլ։

— Կայսրը իր ողջույններն է հղում հայոց արքային և հույս է հայտնում, որ կարող է վստահ լինել նրա դաշնակցությանը։

Եվ ասո՞ղն ով էր։ Բեղ մորուքը հազիվ բուսած մի պատանի, որի հետ պարտավոր էր հաշվի նստել հայոց թագավորը։ Ոչինչ, այդ էլ կանի, ատամները սեղմած, այդ նվաստացումն էլ կտանի, միայն թե թողնեն հանգիստ ապրել, մենք՝ մեզ համար, դուք՝ ձեզ համար։ Ուզո՞ւմ ես՝ ե՛ս վեր կենամ ու խոնարհվեմ քո առաջ, քո, որ կարող էիր իմ

որդին լինել, պայմանով, որ վերադարձից հետո իմ մասին նպաստավոր կարծիք հայտնես քո հզոր կայսրին, և նա բարի աչքով նայի իմ երկրին...

— Իմ անունից հավաստիացրեք կայսրին, որ ես մնում եմ նրա կրտսեր եղբայրը և հավատարիմ դաշնակիցը։

Գուցե քի՞չ ասաց։ Գուցե անամոթաբար շողոքորթի՞, առանց թաքցնելու քծնի՞, բացահայտ ցուցադրի՞ իր ոչնչությունը կայսրի առաջ։ Բայց շատ է ջահել այս պատանին, շատ է դողում իր նորաթուխ բեղի և մորուքի վրա, որոնք դեռ արտասովոր են նրա համար։ Եվ արքան չէր կարողանում սրա մոտ մոռանալ իր տարիքը, ո՛չ թե գահը, ո՛չ թե թագը, այլ տարի՞քը։ Էլ ինչպե՞ս գլուխ ծռի, էլ ինչպե՞ս վիզ թեքի։

— Կայսրը որոշեց մի հաճելի անակնկալ մատուցել քեզ, արքա։ Նա քեզ կնության ուղարկեց իր մեռած եղբոր Կոստասի նշանած Օլիմպիային, Պրետորյանների պրեֆեկտ Արլաբիոսի դստերը։

— Կնությա՞ն,— ցնցվեց, սփրթնեց արքան, փորձեց կրկնել հարցը, բայց լեզուն կապ ընկավ։ Էլ ի՞նչ կարիք կար կամավոր կերպով սեփական ոչնչությունը ցուցադրելու, եթե թշնամին ինքը հիշեցրեց այդ մասին։ Խոսիր, արքա, խոսիր, լռելու ժամանակը չէ, հանկարծ չկարծեն, թե դու երջանիկ չես այս թանկարժեք ընծայի համար։— Ես շատ շոյված եմ... Դա մեծ պատիվ է ինձ համար... Երախտապարտ եմ կայսրին... Ես չեմ հանդգնի մերժել իմ մեծ եղբոր առաջարկը...

Ո՞վ է այս երիտասարդը, որ այսպես տարակուսանքով է նայում իր արքային ու զարմանում, թե ինչո՞ւ նա չի վոնդում այս անկոչ հյուրերին, ինչո՞ւ արհամարհանքով չի խոսում նրանց հետ, ինչո՞ւ է հանդուրժում այսքան վիրավորանք ու լկտիություն։ Ա՜, Սամվելն է, Մամիկոնյան Վահանի զավակը։ Ես միայն քեզ համար եմ ցավում, որդիս։ Ցավում եմ, որ քո կուռքը ոչ թե քարից էր շինված, այլ ավազից, որ նա պատվանդանից ընկավ ու, դեռ գետնին չհասած, փշուր-փշուր եղավ։ Ես քո առաջ եմ միայն ամաչում, ուրիշ ոչ ոքի։ Որովհետև քո հավատը խորտակեցի։ Ինչքան էլ քեզ բացատրեմ, ինչքան էլ համոզեմ, որ սա դիվանագիտություն է, փոքրերի ու մեծերի համար սահման-

ված աշխարհի օրենքն է, միևնույն է, դու չես հասկանա։ Եվ կեցցե՛ս, որ չես հասկանա։ Եթե դու էլ հասկանայիր ու ներեիր, ուրեմն, ոչ մի պայծառ կետ այլևս չէր մնա ինձ համար։

Պատգամավորներից մեկը բաց արեց գահասրահի երկբացիկ դուռը, և ներս մտավ բարեկազմ մարմնով տգեղ մի կին։ Նա շփոթմունքից կարմրեց և խոր գլուխ տվեց, աշխատելով ոչ ոքի չնայել։ Արքան, չգիտես ինչու, վստահ էր, որ նրա տգեղությունը գոհունակություն պատճառեց նախարարներին և որ նրանք հիմա մտովի շարախնդում են իր վրա։

— Կայսրին հետաքրքրում է, թե հայոց արքան ի՞նչ նպատակով է կառուցում Արշակավան քաղաքը,— շարունակեց պատգամավորության ղեկավարը։— Նա ինձանից ստույգ և որոշակի պատասխան է սպասում։

— Հաղորդեցեք իմ մեծ եղբորը, որ Արշակավանի կառուցումը քաղաքական որևէ նպատակ չի հետապնդում և ոչընչով չի դիպչում կայսրության շահերին,— մի փոքր անակնկալի եկած, պատասխանեց արքան։— Կայսրին քաջ հայտնի է, որ ամեն հայ թագավոր իր անունով մի նոր քաղաք է կառուցել, որպեսզի հիշատակ թողնի սերունդներին։— Ապա հայացքն ընկավ Օլիմպիայի վրա և, խոսակցության նյութը շեղելու համար, անմիջապես ավելացրեց.— Ես ինձ պարտ եմ համարում մինչև մահ սիրել և հարգել իմ կնոջը։ Նրա հմայքն ու գեղեցկությունը նոր շուք կտան իմ պալատին։

— Կայսրը պատվիրեց, որ բանակդ կազմ ու պատրաստ լինի և սպասի նրա հրահանգներին,— ասաց շահել ղեկավարը և, առանց պատասխանի սպասելու, գլուխ տվեց որպես հրաժեշտի նշան։

Այնպես կթակեի քեզ, շան լակոտ, այնպես կհասցնեի մերկ հետույքիդ և շատ էլ ցավ չէի պատճառի, որպեսզի չկարծես, թե շատ լուրջ եմ վերաբերվում քեզ։

— Միշտ պատրաստ եմ ծառայելու իմ մեծ եղբորը,— հարգալիր պատասխանեց արքան։

Նա զգաց, որ հունասեր նախարարները, որոնք գահա-

սրահում մեծամասնություն էին կազմում, այնպիսի բավարարվածությամբ դուրս եկան բյուզանդացի պատգամավորների ետևից, որ կարծես ոչ թե այդ նորաթուխ պատանին, այլ առնվազն իրենք էին կայսրի անունից խոսել հայոց արքայի հետ։

— Հյուրերին լավագույն հարկաբաժնում կտեղավորես, սենեկապետ,— հրամայեց նա Դրաստամատին, անփորձ երիտասարդի պես երկյուղելով կնոջ հետ մենակ մնալու անխուսափելի հեռանկարից։

— Ներիր ,արքա... Բայց հավատա, որ ես ոչ մի մեղք չունեմ,— ասաց Օլիմպիան։

— Ներե՞լ,— զարմացավ արքան,— ինչի՞ համար։

— Դու ստեցիր իմ պատճառով, ասացիր, որ ես գեղեցիկ եմ ու հմայիչ։

— Եթե դու իմ կինն ես, ուրեմն, գեղեցիկ ես ու հմայիչ։ Իմ կի՞նը, բայց ինչո՞ւ։ Ամբողջ երկիրը ման գաս, չես գտնի թեկուզ երկրորդական, երրորդական մի իշխանի, որ ամուսնացած չլինի սեփական ցանկությամբ և ընտրությամբ։ Իսկ այդ նույն երկրի գլխին կանգնած մարդը, Հայաստանի թագավորը, ստիպված է ամուսնանալ նրա հետ, ում ուրիշներն են պարտադրում։ Ու նա չի կարող մերժել, չի կարող նույնիսկ ծպտուն հանել, որովհետև մեծը հրամայում է, և փոքրը պարտավոր է ենթարկվել։

Ուրեմն, այդ նույն երկրորդական-երրորդական իշխանը ավելի բախտավոր է, ավելի անկախ է, քան թե նրա տերը։ Եվ ո՞ւմ համար է զոհողությունների այս անվերջանալի շղթան։ Հենց այդ իշխանի՞, իր հպատակներից ամենն մեկի՞։ Բայց ինչո՞ւ առանց խտրության։ Չէ՞ որ նրանց մեջ կան արժանիներ ու անարժաններ, բարեկամներ ու թշնամիներ։ Եվ առհասարակ ովքե՞ր են նրանք։ Մարդ չտեսնի՞ բոլորի դեմքերը, չիմանա՞ նրանց անունները, թեկուզ մի անգամ լսած չլինի՞ նրանց ձայնը։ Որպեսզի գոնե հաճույք ստանա ինքնազոհաբերությունից, որպեսզի մարտիրոսության տան-

ջանքերի մեջ ինչ-որ թաքուն քաղցրություն լինի։ Եվ, ուրիշի համար զոհվելով, բարձրանա ինքն իր աչքին, էլ ավելի հարգի իրեն ու մտովի մեծարի իր անձը։ Դեթ հողեղեն, կապիտ հատուցում լինի՝ եսասիրության բավարարություն։ Իսկ հիմա չի բացառված, որ այդ ծանոթ ու անծանոթ մարդիկ, այդ բազմերանգ ու բազմադեմ խաժամուժը նաև ծիծաղում է իր վրա, նաև ձեռք է առնում, տեսնելով իր ստորացումը, և գոհունակություն ստանում, որ թագավորին խեղճացրին։ Որովհետև եթե թագավորիդ խեղճացրին, դա քո ինքնահաստատումն է, գահնամակում քո զբաղեցրած ցանկացած տեղի միակ մխիթարությունը։ Որպեսզի դու քեզ լավ զգաս, քեզնից մի աստիճան բարձր կանգնածը պետք է մի որոշ պահի ծանր կացության մեջ ընկնի, և դու ոչ թե չարախնդաս, այլ մեծահոգաբար խղճա՞ս նրան։

Նա պատկերացրեց երիտասարդ իշխանի, Սամվել Մամիկոնյանի տարակուսանքով լի հայացքը և հասկացավ, որ ինքը միայն նրա առաջ էր հաշվետու։ Իշխանը երևի մտածում էր, որ եթե արքայի տեղը լիներ, իսկ ո՞վ իրեն արքայի տեղը չի դրել երբևիցե, կբռներ այս կնոջ թևից և դուրս կշպրտեր։ Ու նա պահանջում է հիմա, որ նույնն էլ արքան անի։ Իսկապես, եթե դու ընդունակ ես այդպիսի բան անելու, իսկ ես վստահ եմ, որ անպայման ընդունակ ես, ե՞ս ինչով եմ պակաս քեզանից։ Բայց դու այս կնոջ մեջ կին ես տեսնում միայն, իսկ ես՝ լայնածավալ ու հզոր մի երկիր, դու այս կնոջ բարեկազմ մարմինն ու տգեղ դեմքն ես նշմարում միայն, իսկ ես՝ նրա մեռած նշանածի, Կոստասի եղբորը, Բյուզանդիայի կայսրին, որի հետ թեև չեմ հանդիպել երբեք, բայց եթե կուզես իմանալ՝ նա հիմա ինձ համար նույնպես բարեկազմ մարմին ունի ու տգեղ դեմք, դու այս կնոջ մեջքի ետևում պատ ես միայն նկատում, իսկ ես՝ սահմանագլխին շարված օտար բերդերի ամուր շղթան, հունական ընտիր հեծելազոր ու հետևակ, հազարավոր քանդվող պատեր և հազարավոր հայեր փլատակների տակ։ Ի՞նչ գիտես, թե դու էլ չես լինի նրանց կողքին։ Արժե՞ այս գնով հետևել քո խորհրդին։ Ափսոս, որ դու ինձ չես ճանաչել

մինչև թագավոր դառնալս, սա է իմ միակ արդարացումը քո առաջ, իմ միակ մխիթարությունը...

— Ես բեռ չեմ լինի քեզ վրա, արքա,— հայացքը խոնարհած, միապաղաղ, անհույզ ձայնով շարունակեց Օլիմպիան։— Կայսրը երևի շուտով նորից իմ կարիքն զգա։ Հենց որ թշնամանա քեզ հետ, ես կվերադառնամ... Եվ նա ինձ ուրիշ տեղ կուղարկի կնության։

— Ուրեմն...— Արքան ձեռքը կարեկցանքով տարավ նրա մազերին, թեթևակի հպեց մի պահ, բայց չշոյեց։— Ուրեմն, սա առաջին անգամը չէ՞։

— Իմ հայրը շատ հարուստ է ու ազդեցիկ,— հպարտ պատասխանեց Օլիմպիան և գլուխը նույնիսկ մի փոքր վեր ցցեց։— Միայն այդպիսի մարդկանց աղջիկներին են կնության ուղարկում, արքա։

Այսինքն, չկարծես, թե ինձ փողոցից են գտել ու բերել։ Ինձանով կարելի է հպարտանալ, ինձ կարելի է հաղվագյուտ ադամանդի պես ցուցադրել, պալատի հարստության զարդը համարել։

Արքան ժպտաց քթի տակ, որովհետև Օլիմպիայի ձայնի մեջ տիրական շեշտ էր մտել։ Հորենական հարստությունը նրա միակ արդարացումն էր այս օտար ու անծանոթ երկրում, նրա միակ անցագիրը, անկոչ հյուր չկոչվելու միակ հույսը։

Եվ նա ամեն ինչ կդիջի, ամե՞ն ինչ, բացի այս մեկից։ Ու արքան երևի հաճախ կլսի Օլիմպիայի ակնարկը իր ծագման մասին, բայց չի ջղայնանա, որովհետև այդ հիշեցումը կարվի ոչ թե հանուն սեփական փառասիրության, այլ արքային հանգստացնելու ու սփոփելու համար։

— Ես այնպես կանեմ, որ դու իմ պալատում զգաս ինչպես քո տանը,— զգացվեց և ուզեց վարձահատույց լինել արքան։

— Շնորհակալ եմ, արքա,— նորից հնչեց նրա անհույզ ու միապաղաղ ձայնը։— Ես կարող եմ նաև քեզ մխիթարել։ Դու մի վախենա, որ կայսրը մեր ամուսնությամբ հնարավորություն կունենա թուլացնելու քո երկիրը։

Արքան հարցական նայեց Օլիմպիային։ Ինչպե՞ս չվա-

խենար։ Բանն էլ հենց այն է, որ վախենում էր, շա՛տ, շա՛տ էր վախենում։ Եվ կայսրն էլ նրան ուղարկել էր հենց վախեցնելու համար։

Օլիմպիան անճարակ շարժումով մի փոքր թեքվեց, կարծես ուզում էր նրա ականջին հասնել, ու հեռվից շշնջաց.

— Ես ամուլ եմ, արքա... Չբեր...

— Բայց ինչո՞ւ ես ուզում, որ ամեն ինչ իմ օգտին լուծվի,— տարակուսանքով հարցրեց արքան և, ինչ մեղքը թաքցներ, նույնիսկ մտածեց, թե չլինի՞ այս կինը պարզապես դիմակ էր հագել և սկզբից ևեթ ծուղակ էր լարում իր դեմ։

— Ես քո կինն եմ, արքա։ Պարտավոր եմ։

Պատասխանն սպառիչ էր։ Որովհետև դա չծնվեց հենց հիմա, այլ երևի կազմավորվել էր այս դժբախտ կնոջ ամուսնությունների շղթայի մեջ։ Դա հայացք էր, ս՝սանկյուն, կյանքի համոզմունք։ Ավելի ճիշտ՝ ինքնապաշտպանություն։

Արքան անմիջապես որսաց դա ու չսխալվեց։ Իրավունք չուներ սխալվելու։ Նա գործի դրեց իր բնազդները, բնազդների այն ամենախորին շերտերը, որ նա պահում էր այսպիսի վճռական պահերի համար և որոնց հազվադեպ էր դիմում, որպեսզի չսովորեն ու չխաբեն իրար։

— Ուրեմն, հենց որ ամուսնանում ես, դադարո՞ւմ ես կայսրի շահերին ծառայել... Պաշտպանում ես քո նոր ամուսնո՞ւ շահերը...— Արքան բարի ժպտաց և թեթևակի խոնարհեց մարմինը։— Ես պարտված եմ քո տրամաբանության առաջ...

— Թույլ տուր գնամ։ Ես քաղցած եմ։ Եվ քնել եմ ուզում։

Ոչ մի կամակորություն չկար նրա տոնի մեջ, ոչ էլ սարքած, կանացի կեղծ անմիջականություն։ Կար վախեցնելու չափ պարզամտություն։

Արքան չկարողացավ ժպիտը թաքցնել ու ծափ տվեց։

— Քաղցած է,— ասաց նա Դրաստամատին, զարմանալով, թե ինչպես ոչ ինքն է գլխի ընկել այդ, ոչ էլ սենեկապետը։— Եվ քնել է ուզում։

—Ես մինչև վերադարձս կսիրեմ ու հավատարիմ կլինեմ քեզ։

Օլիմպիան խոր գլուխ տվեց և, Դրաստամատի առաջնորդությամբ, դուրս եկավ գահասրահից։

Բայց ինչո՞ւ այդ խոսքերը սենեկապետի ներկայությամբ արտասանվեցին։ Սիրո և հավատարմության մասին տղամարդն ու կինը առանձին են խոսում սովորաբար։ Ուրեմն, լտանգ չկար արքայի համար։ Աստված մի արասցե, որ այս դժբախտ կինը, որի համար կյանքի միակ պայծառ կետը հորենական հարստությունն էր ու իր դիրքը, ուզենա իր սիրո ու հավատարմության մասին առանձին խոսել արքայի հետ։ Այ, այդ ժամանակ արքան կորած է։ Եվ նա պետք է ամեն ինչ անի, որ Օլիմպիան չսիրի իրեն, գիտակցության վրա հիմնված նրա խոհուն ու հավասարակշիռ վերաբերմունքը հանկարծ չփոխվի զգացմունքի։ Արքան պատկերացրեց, թե ինչպիսին կարող էր լինել այս կնոջ արթնացումը խոր քնից հետո, որքան ուժ և թափ կարող էր ունենալ նրա սերը։ Նա կդառնար գարնանային հորդառատ գետ, որ բերնեբերան կլցվեր իր հունի մեջ, դուրս կգար ափերից և կսրբեր, կտաներ ամեն ինչ։

Պետք է զգուշանալ նրանից, եզրակացրեց արքան։ Այո, այս համեստ, գլուխը կախ, միապաղաղ ձայնով խոսող, հլու-հնազանդ կնոջից։

— Ինձ հետ արդեն հաշվի են նստում, սենեկապետ,— երեխայի պես հրճվեց ու հպարտացավ արքան։— Իսկ դու, ով գիտե, ինչ էիր մտածում իմ մասին։ Մտածում էիր, չէ՞։ Տեսնո՞ւմ ես, ուրեմն ես էլ մի բան արժեմ։

Պատահել էր այն, որ Արտաշատի Տափերական կամրջի վրա պարսիկ ձիավորներ էին երևացել։ Նրանք հայտնել էին կամուրջը պահպանող հայ զինվորներին, որ պատգամավոր են եկել շահի կողմից։ Լուրը հաղորդվել էր պալատ, և միջնաբերդի Տրդատա դուռը բացվել էր պարսիկների առաջ։

— Ասա, ասա, թե ինչեր ես իմ մասին մտածել։ Որքան էլ վատ բան ասես, միևնույն է, դա ինձ միայն գոհունակություն կպատճառի։

— Դու այսօր ուրախ ես, արքա,— սառը դատողությամբ Դրաստամատը արքային բացատրեց նրա հոգեվիճակը։— Մի շաբաթվա մեջ երկու պատգամավորություն է քեզ այցելել։

Գնելը ճիշտ էր։ Պետք էր ապավինել երկրի ներքին ուժերին։ Էլ ի՞նչ իմաստ ուներ հարևաններից որևէ մեկի կողմն անցնել, եթե պետք է ուժեղին ընտրես։ Իսկ ո՞վ էր ավելի ուժեղ, Պարսկաստա՞նը, թե՞ Բյուզանդիան։ Երկուսն էլ հավասար էին, հետևաբար, ընտրության մեջ որևէ տրամաբանություն չէր կարող լինել, մանավանդ՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը ուզում էին կուլ տալ քեզ։

— Եթե Արշակավանը չկառուցեինք, ո՞վ էր ինձ բանի տեղ դնելու,— վրեժխնդիր ասաց արքան, կարծես բոլոր ընդդիմախոսներն այս պահին Դրաստամատի դեմքով էին նրան ներկայացել։— Տեսնո՞ւմ ես, վտանգի հոտն ինչպես են առել։

— Բացի քո նախարարներից, արքա,— անմիջապես իրականությունը հիշեցրեց սենեկապետը, առանց հաշվի առնելու՝ դա դուր կգա՞ր արքային, թե ոչ։ Նրանցից ամեն մեկն իր գործն էր անում, և սենեկապետը բնավ մտադրություն չուներ սեփական պարտականություններից շեղվելու։

— Իսկապես որ,— զարմացավ արքան,— այդ ինչպե՞ս է պատահում, Դրաստամատ, որ թշնամին տեսնում է վտանգը, իսկ յուրայինը օդուտը չի տեսնում։ Ի՞նչ է, այս երկիրը միայն ի՞նձ է պատկանում։

— Որովհետև Արշակավանը դու կառուցում ես նախ և առաջ յուրայիններիդ դեմ։ Մոռանում ես, արքա։— Եվ հազիվ թաքցրած նախատինքով ավելացրեց.— Այնպես չանես, որ դու մոռանաս, իսկ նրանք հիշեն։ Ով առաջինը մոռացավ ատելությունը, նա էլ կպարտվի։

— Ես այսօր իրոք ուրախ եմ, սենեկապետ,— մռայլվեց արքան և լռեց մի պահ։— Ես քեզ հրամայում եմ, որ ուրախ օրերիս մենակ թողնես ինձ։

Արքան արագ դուրս եկավ գահասրահից, դուռը սրտնեղած խփեց իր ետևից ու վիրավորված գնաց ննջասենյակ։

Պարսիկներին ընդունելու էր իր լավագույն զգեստներով ու զարդերով, որոնք հավվադեպ էր հագնում, քանի որ դրանք

վայել էին միայն անհոգ ու անգործ թագավորներին։ Մի՞թե կարելի էր տոնական հանդերձներով պատ շարել, հող փորել, գերան կտրել։ Բայց այսօր նա շլացնելու էր շահի ուղեցամավորներին։ Թող տեսնեն, թե որքան հարուստ է նա ապրում, որքան ուժ և ինքնավստահություն կա նրա ծիրանի քղամիդի, բեհեզյա խույրի, մարգարտյա երկտակ վարսակալի, ականակուռ քառամանյակի ու լանջափառ ապիզակի մեջ։ Թող գնան պատմեն իրենց տիրոջը, և նա կհասկանա, որ դրանց ետևում բանակ է կանգնած, Վասակ սպարապետ, մի ամբողջ Արշակավան։ Ճիշտ է, ինքը նրան հավասար ուժ չունի, բայց փոխարենը ինչ-որ բան պիտի ունենա, չէ՞։ Մի՞թե աստված կարող է շահին ամեն ինչ տալ, իսկ հայոց թագավորին՝ ոչինչ։ Պակաս ուժեղը ավելի խորամանկ է լինում, ավելի ճարպիկ, ավելի նենգ։ Ինչ լավ է, որ Դրաստամատը չկա, թե չէ կասեր՝ շատ ես քեզ մեծարում, արքա։ Իսկ ո՞ւր է, ի միջի այլոց, Վասակը։ Նա մի տեսակ տենդագին կարոտ զգաց սպարապետի հանդեպ և ցանկացավ գոնե մի պահ սեղմել կրծքին։ Ու թվաց, թե նորից լսեց Դրաստամատի չղայնացնող ձայնը. ուզում ես սպարապետով լրացնե՞լ զարդերդ, արքա։ Իսկ ո՞ւր է Եփրեմը, մանկության ընկերը։ Չէ՞ որ նրան չես հանդգնի զարդ համարել։ Իմ հավատը, իմ սրբությունը, իմ մաքրությունը։ Եվ նորից Դրաստամատն ասաց. Եփրեմը քո հավասարակշռությունն է, արքա, նա պետք է գոյություն ունենա, որպեսզի դու ավելի ազատ լինես ստորություն անելու, անաղնիվ միջոցների դիմելու, չարիք գործելու։ Բայց մի՞թե ես այդ ամենը ինձ համար եմ կատարում։ Մի՞թե այդպիսին եմ ծնվել ես։ Ուրեմն, բոլորդ կարգին մարդիկ եք, և միայն ե՞ս եմ ձեզ անարժան։ Հը, ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց, ի՞նչ հասկացար, Դրաստամատ։

— Մազդեզանց քաջ Շապուհ արքայից արքան ողջույն է հղում Մեծ Հայքի թագավոր Արշակին։

— Հաղորդեցեք արքայից արքային, որ ես մնում եմ նրա կրտսեր եղբայրը և հավատարիմ դաշնակիցը։

Գոնե լավ է, որ սա, ի տարբերություն բյուզանդացի պատգամավորի, տարիքոտ մարդ էր, և արքան կարող էր

դրության տերը լինել։ Չէ, ուրիշ է Արևելքը։ Մի ասա, ուրիշ է, ուրիշ։ Այնտեղ նույնիսկ թշնամուն հարգել գիտեն։ Որքան էլ շահը ատեր հայոց արքային, միևնույն է, չէր կարող անբեղ և անմորուս պատգամավորի ուղարկել նրա մոտ։ Թույլ չէր տա իրեն։ Որովհետև դա անուղղակիորեն կդիպչեր հենց իր հեղինակությանը։ Տիրոջ ու թագավորի գաղափարին։

— Արքայից արքան ուրախ է մեր ականջներով լսել իր դաշնակցի հավաստիացումը, և նա, մեծ եղբոր իրավունքով, քեզնից պահանջում է հաստատ մնալ ուխտիդ ու քո գնդով օգնության գնալ նրան։

Սխալվեց արքան, մի տեղ սխալ թույլ տվեց։ Շուտ ընդունեց նրանց։ Մինչդեռ պիտի երկար սպասեցներ, մինչև երեկո, գուցե և մինչև հաջորդ առավոտ։ Այս շտապողականությամբ նա նորից ակամա խոստովանեց, որ հիմա ինչ էլ ասեր Դրաստամատը, իրավացի կլիներ։ Բայց թե ինչ կասեր՝ նա խնամքով թաքցրեց իրենից։

— Արքայից արքան ճիշտ է մտածում։ Եթե այս պատերազմում մենք ձեր կողմն անցնենք, հաղթանակը նրանը կլինի։

— Արքայից արքան մեր բերանով գոհունակություն է հայտնում, որ դու գիտակցում ես ուխտիդ կարևորությունը։

Տես, է, ինչպե՞ս կուլ տվեց վիրավորանքը։ Հոնքն անգամ չշարժվեց։ Զևացրեց, թե ոչ ոք չէր դիպել մեծ տերության արժանապատվությանը։ Իսկ հոռոմները, մանավանդ այդ շան լակոտը, որի քամակը նա հիմա էլ մեծ հաճույքով մի լավ կթակեր, վաղուց խոցված կլիներին արքայի հանդուգն խոսքերից և ցուցադրաբար կհեռանային։ Եվ ի՞նչ։ Այդպիսով նրանք ակամա կընդունեին, որ չի բացառվում իրենց երկրին վիրավորանք հասցնելու հնարավորությունը։ Իսկ պարսիկներն ապացուցեցին, որ դա իրենց մտքովն անգամ չի անցնում։

— Արքայից արքան ոչ միայն դեմ չէ, այլև ուրախ է, լսելով, որ դու նոր քաղաք ես կառուցում քո երկրում,— շարունակեց տարիքոտ պատգամավորը, իր ամեն շարժուձևի մեջ ընդգծելով արքայի հետ խոսելու գիտակցությունը։—

Բայց նա ուզում է հենց քեզնից իմանալ, թե ի՞նչ քաղաք է դա։ Եթե դու Արշակավանը իրոք հռչակել ես ազատության քաղաք, ապա արքայից արքան դա չի համարում միայն քո երկրի ներքին գործը։ Քո քաղաքը կարող է վատ օրինակ ծառայել հարևան երկրների ժողովուրդների համար։ Իսկ եթե դու դա արել ես հզորանալու նպատակով...— Նա մի ակնթարթ լռեց, հարգալիր ժպտաց, կարծես ներողություն խնդրելով կարճատև լռության համար, հետո անմիջապես ուղղեց սխալը (իսկ արքան զգաց, որ այդ լռությունը և ուղղումը ևս նախօրոք ծրագրված էին) ու շարունակեց.— Եթե արել ես հունասեր խմբակցության դեմ ուժ ստեղծելու նպատակով, ապա արքայից արքան առավել ևս զարմանք է հայտնում, թե ինչու չես ապավինում ի՛ր օգնությանը։

Նորից Արշակավանը։ Նորից ու նորից։ Ա՛յ թե որն է ձեր խսկական փոքացավը։ Հայոց արքայի դաշնակցությունից ավելի ձեզ հետաքրքրում է խորհրդավոր ու գաղտնիքներով լեցուն իմ քաղաքը։ Բան չունեմ ասելու, ճիշտ տեղ եք դրել ձեր մատը։ Եվ ձեր անհանգստությունը է՛լ ավելի վստահություն է ներշնչում ինձ, է՛լ ավելի մեծ հավատ, որ աստված է վկա, հենց խրենք, կայսրն ու շահն են վկա՝ արդար էր իմ որոշումը։ Եթե իմ թշնամիներն այդ չհուշեն, էլ ո՞վ պիտի հուշի։

— Հազորդեցեք արքայից արքային, որ աշխարհում չի եղել ու չի լինի մի թագավոր, որ երբևիցե դաշնակցի իր ժողովրդի հետ,— ասաց արքան խրատական տոնով, որպեսզի դրանով շեշտի իր անկեղծությունը։— Ես որոշ արտոնություններ եմ տվել շինականներին, որպեսզի արագ կառուցվի քաղաքը։ Ժամանակավոր արտոնություններ։

— Արքայից արքան իմաստուն է համարում քո խոսքերը, ինչպես նաև՝ քո որոշումը։ Նա հիմա լեռվին հանդիստ է քեզ համար։

—Շնորհակալ եմ արքայից արքային, որ նա այսքան հոգատար է իր կրտսեր եղբոր հանդեպ։

Արքան անհանգստացավ, որ գուցե բավարար չափով չէ՞ր կարողանում կեղծել և մատնո՞ւմ էր իր շողոքորթու-

թյունը։ Բայց անմիջապես գլխի ընկավ, որ պարսիկ պատգամավորին հետաքրքրում էին միայն բառերը և ոչ թե դրանց անկեղծությունը։ Միևնույն է, նա ոչ մի բանի էլ չէր հավատում։ Հապա ինչո՞ւ էր եկել։ Ի՞նչն էր նպատակը։ Եվ նա իսկույն ստացավ իր հարցերի պատասխանը։

— Արքայից արքան, ձեր ուխտը ավելի ամրացնելու համար, որոշեց քեզ կնության ուղարկել իր քրոջը՝ Որմիզդուխտին։ Կարծում եմ, որ դա իմ երկրի ամենամեծ նվերը կլինի Մեծ Հայքի թագավորին։

Արքան ցնցվեց։

Կնությա՞ն։

Նորի՞ց։

Նա տեսավ, թե ինչպես ինքը վեր կացավ, փրփուրը բերանին հարձակվեց պարսիկ պատգամավորի վրա և սկսեց խեղդել նրան։ Խեղդել ու հայհոյել։ Չգիտես ինչու՝ ոչ այնքան պարսից շահին կամ Բյուզանդիայի կայսրին, որքան՝ Հայաստանն ու հայոց արքային։ Տեսավ նաև, թե ինչպես արքան դուրս վազեց գահասրահից, փախավ մի ապահով տեղ ու թաքնվեց սեփական պալատում։ Չգնա՞մ Արշակավան, տագնապահար մտածեց նա, այնտեղ ես էլ անձեռնմխելի կլինեմ...

Մինչ այդ, պարսից պատգամավորի նշանով, շահի քույրն արդեն ներս էր մտել, իսկ արքան լսում էր իր ձայնը.

— Շատ շոյված եմ... Դա մեծ պատիվ է ինձ համար... Ես ինձ պարտ եմ համարում մինչև մահ սիրել ու հարգել իմ կնոջը... Նրա հմայքն ու գեղեցկությունը նոր շուք կտան իմ պալատին...

Նրան թվաց, թե պարսից պատգամավորի դեմքին հեգնանք երևաց։ Բայց դա մի տեսակ ծուլ ու դժկամ հեգնանք էր, ոչ թե ինքնաբուխ, այլ հարկադրական։ Ըստ երևույթին, դա ևս նրա պարտականության մեջ էր մտնում ու նախօրոք ծրագրված էր։ Իսկ եթե խառնե՞լ էր, ինչ կա որ, մարդ է, կարող էր նաև խառնած լինել։ Գուցե հեգնանքը նախատեսված էր բոլորովին ա՞յլ իրավիճակի կապակցությամբ։ Գուցե արդեն գլխի՞ է ընկնում իր սխալը և զղջո՞ւմ։ Ի՜հարկե,

իհա՞րկե, թե չէ ինչո՞ւ մի ուրիշ արքայի հատկացված ընծան պիտի հեգնանքով մատուցեր։

Պատգամավորը խոր գլուխ տվեց։ Մյուսները ևս հետևեցին նրան և, ձեռքները սրտերին դրած, ետ-ետ գնալով, մոտեցան դռանը։

— Ժամանակավոր արտոնություններ,— չգիտես ինչու, խուճապի մեջ ընկավ արքան ու հարկ համարեց անպայման կրկնել.— Զմոռանաք հաղորդել արքայից արքային... Ժամանակավո՛ր, ժամանակավո՛ր...

Արքան ուշադիր նայեց Որմիզդուխտին։ Ափսոս, որ այս մեկը գեղեցիկ կին էր և առավել ափսոս, որ գիտակցում էր այդ։ Սրա հետ ավելի դժվար է լինելու, խորհում էր արքան, սա չի նվաստանա, կաշխատի հակառակն անել։

Նա գիտի, որ տղամարդն ու կինը ստեղծված են իրար նվաստացնելու համար, դա նրանց բնազդների մեջ է նստած, ամեն մի գիշեր ճակատամարտ է երկու կողմերի միջև, հաղթանակի լուռ տենչանք է թաքնված գգվանքների ու երջանիկ հառաչանքների մեջ։ Միայն մի դեպքում է ելքը հավասար լինում. երբ սիրում են միմյանց։ Պիտի այնպես անել, որ այս մեկը, ի տարբերություն մյուսի, սիրի ինձ, մտածեց արքան։

— Իմ եղբայրն առանց իմ համաձայնության ինձ չէր ուղարկի, արքա,— նրա մտքերը կտրուկ ընդհատեց Որմիզդուխտը։

Արքան մինչև հիմա դիտավորյալ չէր խոսել։ Որոշել էր երկար ժամանակ լուռ մնալ, նրան չհրավիրել նստելու և ոտքից գլուխ մանրամասն չափչփել, ինչպես մի առարկայի, հիշեցնելու համար, որ նա իր սեփականությունն էր։ Սրա հետ չէր կարելի մարտը հետաձգել, հենց առաջին պահից պետք էր կռվի մեջ մտնել։ Եվ նա բնավ չէր սպասում, որ պարսկուհին, այդ հրաշալի էգը, այսպիսի արժանապատվությամբ կընդունի մարտը և պատշաճ հակահարված կտա։

— Ուզում ես ասել, որ կամավո՞ր ես եկել,— քմծիծաղ տվեց արքան, դանդաղ պտտվելով նրա շուրջը, հետո կանգ առավ, հայացքը դիտմամբ նրա փարթամ կրծքերից չկտրելով։

— Ինձ ոչ ոք ոչինչ չէր կարող ստիպել, արքա,— անվրդով շարունակեց Որմիզդուխտը։

Արքան ըստ արժանվույն գնահատեց, որ նա քնքուշ և խոնարհ ձայնով էր արտասանում այդ հանդուգն խոսքերը։

— Դա զգուշացո՞ւմ է։

— Եթե ես արքային չհավանեի, անպայման կվերադառնայի տուն,— համբերատարությամբ բացատրեց Որմիզդուխտը։

Այսինքն, ինձ հավանո՞ւմ է։ Ես դո՞ւր եմ գալիս նրան։ Եվ ինչ հանգիստ էլ նայում է ինձ։ Իսկ ի՞նչ է արել, որ հանցանքի վրա բռնես։ Ընդամենը այն, որ համակրել է արքային։ Պարզվում է, որ մնացած խոսքերն էլ արտասանվել են այս մի հատիկ նախադասության համար։ Եվ որքա՜ն անամոթություն այս ամենի մեջ։ Կանացի հմայող ու կանչող անամոթություն։

— Ինչքան ես հասկացա, դու մտադիր ես հենց սկզբից ամրապնդել քո դիրքերը այս օտար երկրում,— արքան զգալիորեն բարձրացրեց ձայնը, կարծես հուշելու համար, որ խոսակցության բնույթը փոխվելու էր այս պահից։ Նա որոշեց բացել խաղը, հասկանալով, որ այս կնոջը կարելի էր հաղթել՝ նրա ամեն մի բառը ոչ թե մեկուսի, այլ բարձրաձայն մեկնաբանելով։ Հոգնեցնել նրան, անընդհատ ջրի երես դուրս բերել։ Իսկ նա երևի սովոր էր ջրի խորքերում միայն լավ զգալ իրեն։

— Իզուր վախեցար, արքա,— ներողամտորեն ժպտաց Որմիզդուխտը։— Եթե հավանեմ ամուսնուս, ես գիտեմ նաև ենթարկվել նրան։ Այնպես ենթարկվել, որ նրա ստվերը դառնամ։ Միշտ անբաժան, բայց և միշտ աննկատ։ Մի՞թե դա ամեն տղամարդու ձեռնտու չէ, արքա։

Դու ինձ իսկապե՞ս հավանեցիր, հանկարծ ուզեց հարց տալ արքան և հագիվ զսպեց իրեն։ Որքան հեշտ էր քաղցր խոսքով գնել մարդուն։ Գիտես, հասկանում ես, որ քեզ

ուզում են գնել, բայց չես կարողանում դիմադրել։ Իմանալով հանդերձ, հավատում ես, որովհետև, ըստ երևույթին, չափազանց շատ ես սիրում քեզ։

— Իսկ դու գիտե՞ս, որ այս պալատում և՛ս մի կին կա,— անսպասելի հարցրեց արքան։— Եվ այն էլ գիտե՞ս ով։ Քո եղբոր թշնամու ազգականուհին։

— Եվ մի հայուհի,— ավելացրեց Որմիզդուխտը։— Փառանձեմ թագուհին։

— Թագուհուն մի կողմ թողնենք,— անհամբեր շարունակեց արքան, ճգնելով շուտ ծնկի բերել, շուտ խեղճացնել պարսկուհուն։— Իսկ բյուզանդուհի՞ն։ Դու բյուզանդուհո՛ւ մասին խոսիր, բյուզանդուհո՛ւ

— Ես դա իմացա քո պալատում, արքա։ Քո յուրայիններից։ Եվ հենց գալուս պես։ Մի՞թե դա քեզ չի անհանգստացնում։

Արքան խայթված լռեց։ Ակնարկը շատ էր թափանցիկ։ Դա գրեթե մատնություն էր, ստոր և նողկալի մատնություն։ Հենց իր քթի տակ, հենց իր մարդկանց կողմից։ Եվ նա ոչինչ չէր գտնում պատասխանելու։ Այս խաղը քեզ, մտքում ասաց արքան։

— Իսկ ինչո՞ւ եղբորդ պատվիրակները չբռնաքեցին դրա դեմ,— հետաքրքրվեց արքան, որովհետև տարբական տրամաբանությունը թելադրում էր, որ բյուզանդուհու ներկայությունը նրանք համարեին ուխտադրժություն հայոց արքունիքի կողմից։

— Բայց ես արդեն ասացի, արքա։ Բյուզանդուհու մասին և՛ս իմացա, ոչ թե նրանք։

— Այսի՞նքն,— անհամբերությունից գրեթե գոռաց արքան։

— Ես նրանց չասացի, արքա։ Նրանք ոչինչ չիմացան։

— Ինչո՞ւ,— զարմացավ արքան։— Դու պարտավոր էիր ասել։ Հենց եղբորդ շահի, հենց քո շահի համար։

— Դա արդեն մեր ընտանեկան գործն է, արքա,— կատակի տվեց Որմիզդուխտը։— Եվ միայն մեր չորսին է վերաբերում։ Ինձ, քեզ, բյուզանդուհուն ու թագուհուն։

— Ցես համոզում,— կատակը չըմբռնեց ու ջղայնացավ արքան, որովհետև արդեն չէր կարողանում որսալ նրա սրոգայթները։— Ինձ պետք է հիմնավոր պատասխան տաս։

— Տվել եմ, արքա,— անկեղծորեն տարակուսեց Որմիզդուխտը և նորից բացատրեց.— Եթե հավանեմ ամուսնուս, ես գիտեմ նաև ենթարկվել նրան։

Այս խաղն էլ քեզ, մտածեց արքան։ Ամբողջ սրտով։ Ստում ես թեև, բայց ստում ես երկաթյա տրամաբանությամբ։ Որքան նուրբ վարպետություն էր պետք, որպեսզի ինձ ծնկի չոքեցնես այդ նույն նախադասության առաջ։ Եվ, այսպես խորհելով հանդերձ, նա նորից հարց տվեց իրենց.— գուցե իսկապե՞ս հավանում է ինձ... Ի՞նչ կա որ... Եվ ինչո՞ւ չպիտի հավանի...

— Ես մի բան չեմ հասկանում,— գործնական տոնով շարունակեց արքան,— սովորաբար քո եղբայրը, նաև նրա նախորդները, ապահովության համար պատանդ էին վերցնում մեզնից։ Ի՞նչ ես կարծում, պատանդ չե՞ս դու հիմա։ Եվ դա քեզ տարօրինակ չի՞ թվում։

— Ոչ, արքա, ես պատանդ չեմ։ Ես քո կինն եմ։

— Թող այդ հիմարությունները,— ներքուստ հրճվեց արքան, որովհետև, առաջին անգամ լինելով, Որմիզդուխտի խորամանկությունը մերկ էր ու խեղճ։— Չէ՞ որ դու կարող ես ինձ համար զենք ծառայել քո եղբոր դեմ։ Եվ եթե ես ստիպված լինեմ... շատ ստիպված լինեմ... կարող եմ զոհել քեզ, չէ՞։ Ինչպես քո եղբայրն է վարվել իմ արյունակիցների հետ։

— Ներիր, որ պիտի հուսախաբ անեմ քեզ, արքա։

— Ապա, ապա...

— Որպեսզի ես պատանդ համարվեմ, իմ եղբայրը պետք է ինձ շատ սիրի։ Այսինքն, իմ կյանքը պետք է թանկ լինի նրա համար, իսկ մահը՝ ողբերգություն։ Այդպես չէ՞ միթե։

— Այդպես է,— համաձայնեց արքան։

— Իսկ ի՞նչ ես կարծում, եթե նա քրոջը իսկապես սիրեր, իր շահերի համար նրան օտար երկիր կուղարկե՞ր կնության։ Դու, օրինակ, կուղարկեի՞ր։

— Ոչ, չէի ուղարկի,— խոստովանեց արքան, զգալով, որ նորից տանուլ էր տալիս։

— Իմ եղբայրը ինձ չի սիրում,— ուրախ ասաց Որմիզդուխտը և հաղթական ավելացրեց.— Դու պետք է քաջ իմանաս, որ նա ոչ մի սրբություն չունի աշխարհում։ Տեսնո՞ւմ ես, արքա, որ ես հարմար չեմ պատանդ կոչվելու։

Այսինքն, մնում ես իմ կի՞նը, մտքում հարցրեց արքան։ Եվ թվաց, թե Որմիզդուխտը նորից նրան կշոքեցնի նույն նախադասության առաջ, եթե հավանեմ ամուսնուս, ես գիտեմ նաև ենթարկվել նրան...

— Լավ,— մի վերջին փորձ էլ արեց արքան,— ենթադրենք, թե եղբայրդ իսկապես չի մտահոգված քո կյանքի համար։ Իսկ դո՞ւ։ Դո՛ւ, դո՛ւ։ Ես կարող եմ քեզ սպանել՝ նրան թեկուզ վիրավորանք պատճառելու նպատակով։ Չէ՞ որ, քո մահվան համար չտխրելով հանդերձ, կվիրավորվի նրա ինքնասիրությունը։ Դա մեծ ապտակ կլինի նրա երեսին։ Ամբողջ աշխարհի առաջ։ Սրա՞ն ինչ կասես։

Արքան զգաց, որ մի տարօրինակ վիճակ էր ստեղծվել։ Նա ոչ թե սպառնում էր Որմիզդուխտին, այլ, ակամա հաշվի նստելով նրա խելքի ու խորաթափանցության հետ, փորձում էր միասին ինչ-որ բան վերլուծել և մինչև վերջ հասկանալ։ Ու ստացվեց այնպես, որ խոսքը կարծես իրենց չէր վերաբերում և որ նրանք երկուսով մի ուրիշ ընդհանուր մտահոգություն ունեին։

— Դու չես կարող ինձ սպանել, արքա։

— Նստիր, նստիր,— առաջարկեց արքան։

— Եվ չես կարող ոչ թե նրա համար, որ դու ավելի բարի ես, քան նա, այլ որովհետև նա շատ հզոր է, իսկ դու՝ թույլ։

— Նստիր, նստիր, ինչո՞ւ ես կանգնել։

— Դու ամենանեղ, ամենահուսահատական պահիդ անգամ չես հանդգնի այդպիսի քայլի դիմելու։— Որմիզդուխտը նստեց բազմականին, և արքան, չգիտես ինչու, հանգստացավ։— Որովհետև սա անբնական վիճակ է քեզ համար, արքա։ Նույնն է թե՝ աղքատին միանգամից շատ փող տաս։ Մեկ է, նա չի կարող ծախսել։

Ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է։ Այս խաղն էլ քեզ։ Ազգ կա, որ ծնված է պատանդ տալու, ազգ էլ կա, որ կոչված է պատանդ վերցնելու։ Իսկ եթե հանկարծ դերերը հրաշքով փոխվե՞ն։ Միևնույն է, ոչինչ չես կարող անել։ Նույնն է թե՝ ձեռքդ անցնի ռազմական մի նոր և հզոր գործիք, որ չես իմանում ինչպես գործածել։ Ապա փորձիր, փորձիր դիպչել Որմիզդուխտին։ Հետո՞ ինչ, որ եղբայրը չի սիրում նրան, և նրա մահը մազաչափ իսկ չի ազդի վրան։ Իսկ վիրավորա՞նքը, ինքնասիրության ոտնահարո՞ւմը։ Չլինի՞ կարծում ես, թե դրանք պակաս ուժ ունեն սիրուց։ Դու տես, թե ինչպես քարուքանդ կանի երկիրդ, ինչպես ոտնատակ կտա։ Այնպես կավերի, որ դարերով ուշքի չես գա։ Հենց քո օգտի համար, քանի շուտ է հրաժարվիր այն մտքից, որ պատանդ ունես, թե չէ այդ խայծը կխաբի, կեղծ հետքերով կտանի քեզ։ Լավ է, որ ծուղակը չընկար և սխալ տեղում չփնտրեցիր քո ուժը։ Շնորհիվ Որմիզդուխտի։ Գուցե, իսկապես, եթե նա հավանում է ամուսնուն... ի՞նչ կա որ... ի՞նչդ է պակաս... Բարդ օրենքներից բացի կան նաև պարզագույն օրենքներ... Կնոջ և տղամարդու... Ու նա, բռնանալով իր վրա, լրացրեց կիսատ մնացած նախադասությունը. կարողանում է ենթարկվել նրան...

Որմիզդուխտը ոտքի ելավ, գլուխ տվեց և դանդաղ քայլերով ուղղվեց դեպի դուռը։

— Բայց ես քեզ թույլ չտվի հեռանալ,— զարմանքից ձեռքը առաջ պարզեց արքան։

Որմիզդուխտը շրջվեց դռան մոտ և ժպտադեմ պատասխանեց.

— Ամուսինների համար վտանգավոր է առաջին անգամ ավելի երկար խոսելը, արքա։

Նորից հարգալիր խոնարհվեց ու դուրս եկավ։

Արքան ապշած նայում էր փակ դռանը, ու առաջ պարզված ձեռքն այդպես էլ մնում էր օդում։

Նա մյուս ափով խփեց, իջեցրեց ձեռքը ու սկսեց մեն-մենակ ծիծաղել։

Այսպես, ուրեմն, աքցանը նեղանում է։ Պարսից թագավորը և Բյուզանդիայի կայսրը բռնել են նրա կոկորդից։ Մի կողմը՝ կրակ, մյուս կողմը՝ ջուր։ Եվ դեռ նա համարձակվում է մտածել, թե երկու պատանդ ունի, երբ հենց ինքն է պատանդ և այն էլ՝ սեփական երկրում։ Որքա՞ն կարող է խորամանկել, ժամանակ շահել ու պահմտոցի խաղալ երկու կողմերի հետ։ Վերջիվերջո մի օր պիտի պահանջեն, չէ՞, թե ո՞ւր է գունդդ, ո՞ւր է ուխտդ։ Եվ ում էլ որ միանա, մյուսը պիտի քարուքանդ անի երկիրը։ Հետո՝ բաժանելու են խնձորի պես։ Մագաղաթների վրա մետաղյա ստիլով գրված ու կնքված դաշնագրերով։

Դուռը բացվեց, և վազելով գահասրահ մտավ տասնամյա Պապը։ Նա մի պահ շփոթվեց, տեսնելով հորը, երևի չէր սպասում։ Բայց շփոթմունքը կարճ տևեց։ Սիրաշահող ժպիտով նայեց արքային, ապա գնաց նստեց գահի վրա և ոտքերն սկսեց շարժել ու թխկթխկացնել հիմքի միահար պատին։

Արշակը լսել էր, որ նա իր բացակայության ժամանակ հաճախ էր գողունի ներս մտնում և խաղում գահասրահում։ Ոչ ավել, ոչ պակաս՝ գահասրահում։ Պալատը նեղ էր գալիս շան լակոտին, նոր տարածություն էր ուզում նվաճել։ Եվ ի՞նչ էր խաղում մեն-մենակ, թողած տարեկից ընկերներին։ Չլինի՞ հենց այնպես գալիս, նստում էր գահին ու թխկթխկացնում ոտքերը։ Իսկ եթե նաև հաճո՞ւյք էր ստանում դրանից, եթե մտովի հրամայո՞ւմ էր ընկերներին, պատժո՞ւմ նրանց, մեկին պաշտո՞ն տալիս, մյուսին՝ հեռացնո՞ւմ...

Լավ չեն գործերդ, Արշակ, անչար քմծիծաղ տվեց արքան, տղադ շատ շուտ է աչք տնկել գահիդ, սա որ այսպես խաղով է սկսել, վա՞ղն ինչ պիտի անի, երբ մեծանա։ Պիտի աչքերիդ նայի և, առանց հոնքն անգամ թարթելու, պիտի ասի. արդյոք շատ չե՞ս ծերացել, հայրիկ, ես կարծում եմ, որ ժամանակն է գահդ ինձ տաս, մեկ-մեկ քեզ էլ կթողնեմ նստես, թագս էլ կտամ, որ երբեմն գլխիդ դնես։

Արքան գիտեր, որ դրսում, խաղի ժամանակ, նա երբեք

Բազավոր չի եղել, ոչ էլ ուրիշներին է թույլատրել։ Ավելի՞ վատ։ Նշանակում է, դա այլևս չէր տեղավորվում խաղի շրջանակների մեջ, այլ երազանք էր, ճիշտ է, դեռևս անորոշ, դեռևս չձևավորված, բայց և այնպես՝ երազանք։ Իսկ երազանքը գաղտնիք է, խորը, միայն քեզ պատկանող, հրապարակման ոչ ենթակա, որ կարող ես միայն քեզ խոստովանել, այն էլ՝ երբեմն։ Եվ խոստովանության համար նա ավելի հարմար տեղ չի գտել, քան գահասրահը։

Արքան ոչ միայն չշփոթվեց, ոչ միայն չխանդեց, այլև լավ զգաց իրեն, ներքուստ մի տեսակ ուռեց ու փքվեց։ Որքան ճիգ ու ջանք պիտի թափեր, որքան եռանդ պիտի ծախսեր, որպեսզի կամաց-կամաց նրա մեջ սեր արթնացներ գեպի իշխանությունը, երևի ոչ թե սեր, այլ ավելին՝ պահանջ, պատվաստեր ժառանգական իրավունքները պոկելու հատկությունը, սովորեցներ դրան հասնելու ճանապարհները։ Իսկ սա ինքն իրեն կիմանա։ Ոտքերն այնքան կթխկթխկացնի, որ մի օր այդ ձայների մեջ ինչ-որ իմաստ կորսա ու կսկսի բացատրել իրեն։

Բայց, ուրախանալով ու հրճվելով հանդերձ, արքան ձեռքերը խաչաձևեց կրծքին և խեթ-խեթ նայեց որդուն։ Իսկ Պապը նորից ժպտաց նույն սիրաշահող ժպիտով, որով ուզում էր խաբել հորը։ Հաստատ ուզում էր խաբել, իր մի թիզ որդին, հազիվ մինչև հոր գոտկատեղը հասնող այս սիրունիկ, անպատկառ լակոտը։ Հայրը էլ ավելի մռայլվեց ու նախատինքով լի աչքերը գամեց որդուն։ Ժպիտն աստիճանաբար չքացավ որդու երեսից, ոտքերի շարժումները հետզհետե դանդաղեցին, ապա բոլորովին կանգ առան։ Պապը մի պահ արձանի պես մնաց տեղում, ապա վեր կացավ, նեղացած նստեց պատվանդանի աստիճանին ու կախեց գլուխը։

Արքան մոտեցավ նրան, լուռ նստեց կողքին։

Իսկ եթե կայսրն ու արքայից արքան իմանա՞ն, որ նա երկու կանանց էլ սուսուփուս ընդունել է։ Ոչ ոք էլ լուրը չտանի, նախարարները կան ու կան։ Կա նաև ավելի վատագույն տարբերակը. իմանան ու ձայն չհանեն, ձևացնեն, թե տեղյակ չեն։ Եվ գիտե՞ս ինչու։ Որպեսզի հայոց արքան

տապակվի երկուսի ձեռքին, խարդավանքներ սկսեն պալատի ներսում, կանանց միջոցով դանդաղ քայքայեն երկիրը։ Ըստ որում, թող կանայք ոչինչ էլ չձեռնարկեն, թող մատը մատին անգամ չխփեն, թող նույնիսկ հավատարիմ լինեն իրենց նոր ամուսնուն, միևնույն է, հենց թեկուզ նրանց ներկայությունը լիուլի բավական է, որ արքունիքը փտի ներսից։ Տես ինչ են արել, բանակների փոխարեն ընդամենը մեկական կին են ուղարկել։ Էլ չեմ ասում, որ ոտքի տեղ են արել պալատում։

Եվ դեռ արքային թվում էր, թե աստված մեծին ուժ է տալիս, իսկ փոքրին, դրա փոխարեն, խորամանկություն, նենգություն, ճարպկություն։ Ինչպես անտառի փոքր ու անպաշտպան գազաններին, որոնք կարող են գոնե մաշկափոխվել ըստ եղանակի, ձուլվել շրջապատին ու անտեսանելի մնալ։ Դու մի ասա, ո՞չ, աստված ամեն ինչն էլ մեկին է տալիս, միայն մեկին, իսկ մյուսին թողնում բախտի քմահաճույքին։

— Պապ...

— Լսում եմ, արքա։

— Պալատը պաշարված է, Պապ... Ես իմ տանն ասես ձերբակալված լինեմ...

Պապը ափը տարավ բերանին ու փոթկաց։ Շատ զվարճալի թվացին հոր խոսքերը։ Կարծես նա առաջարկում էր խաղի պայմաններ, որոնք, ինչպես միշտ, երևակայության արդյունք էին։

Արշակավա՛նը, Արշակավա՛նը, հանկարծ փայլատակեց նրա ուղեղում, միայն ու միայն Արշակավանը։ Չնեղանաս, որդիս, ոչ էլ թող աստված մեղք համարի, Արշակավանն է իմ առաջին ծնունդը, իմ անդրանիկը, իմ ցուպը, իմ վաղվա օրը։ Իմ կողոսկրից եմ ես ծնել այդ քաղաքը։ Նրան եմ ես սիրում ամենքից ավելի, նրան ավելի եմ հավատում, քան քեզ, Պապ, քան իմ բանակին, սպարապետին, իմ փողփոքուն դրոշներին, դրանց վրա քանդակված հպարտ ու գլուխը ցից արծիվներին, քան ինձ, քան իմ համառությանը, իմ նվիրվածությանը այս երկրին, իմ ուժին ու խելքին։ Էլ ի՞նչ ասեմ ավելի, որ քթներդ չկախեք։

Այդ մոայլ, խստադեմ, ոգեղ տղամարդիկ, որոնց բազուկներում առատ-առատ ատելություն է հոսում, որոնց աչքերի մեջ դառնահամ հուշեր կան միայն, որոնք ամուսնության առաջին իսկ գիշերից չեն իմացել, թե ինչ բան է քնքշությունը կնոջ հանդեպ, որոնց մտքովն իսկ չի անցել շոյելու իրենց որդու կամ դստեր գլուխը, որոնք իրենց կուշտ օրերը մատների վրա կարող են հաշվել, աշխարհին շարությամբ և կասկածամտությամբ նայող այդ անժպիտ տղամարդիկն են երկրի միակ հենարանն այսօր, մի բան, որ իրենք չգիտեն ու չպետք է իմանան։ Թող հանգիստ ապրեն ու բազմանան իրենց համար, ծառ տնկեն ու ջրեն, նավասարդ տոնեն ու քեֆ անեն, օր ու գիշեր աշխատեն և լուծ քաշեն, բամբասեն, սիրեն ու ատեն, իսկ հենց որ իմանան, թե իրենք են երկրի ու արքայի հույսը, չեն հավատա ու կվախենան։ Իսկ եթե չիմանան, բնագրը վերջին պահին կհուշի նրանց, թե ինչ է նշանակում նորից տեր ունենալ դլխներին, հարկ տալ նրան, մտրակի հարվածներ ուտել նրանից, նրա թույլտվությամբ ամուսնանալ, նրա համաձայնությամբ մի տեղից մի քանի օրով մի ուրիշ տեղ գնալ...

Նա վեր կացավ պատվանգանից և սկսեց ետ ու առաջ քայլել զահասրահում։

Վեր կացավ նաև Պապը և նույնպես սկսեց ետ ու առաջ քայլել հոր նման։

Արշակավանից են սկսում այս երկրի սահմանները և Արշակավանում են վերջանում։ Այստեղ է լինելու վճռական մարտը, որից հետո նոր միայն կխոսենք՝ Հայաստանը մնալո՞ւ է աշխարհի երեսին, թե՞ ոչ։ Թշնամին արդեն գիտի այդ և շան պես վախենում է իր քաղաքից, որ չունի ոչ Բյուզանդիոնի, ոչ էլ Տիզբոնի շքեղությունը, անգամ Արտաշատի հետ չի կարող մրցել։ Բայց նա մեղկ ու գունատ չէ նրանց նման, կարիք չունի դիմափոշիով ծածկելու իր կնճիռները, ջահել և պինդ քաղաք է, մի կտոր հացով ու մի բաժակ ջրով գոհացող, առողջ թոքերով, քչախոս ու կոշտ բնակիչներով։ Հենը սա է, որ նրան խորհրդավոր է դարձնում թշնամու աչքին, անհասկանալի ու վանող։

Արքան ձեռքը դրեց մեջքին և նկատեց, որ Պապը ևս

ձեռքերը մեջքին տարավ։ Նոր գլխի ընկավ, որ որդին ձրգտում էր ամեն ինչով ընդօրինակել իրեն։

Կանգ առավ, հարցական նայեց որդուն, չիմանալով՝ ծիծաղե՞լ, թե՞ հպարտանալ։

Տասը տարեկան է տղան, նետի պես ձիգ հասակով, սև և խոշոր աչքերով, գանգուր և սեփ-սև մազերով, իսկ ի՜սկ հոր նման։ Դա ուշացած և ամոթալի հայտնագործություն էր, թեև միաժամանակ ուրախացնող ու թևավորող։ Ի՜նքը պետք է դաստիարակած լիներ նրան, ի՜նքը, գլուխը կորցրած, իրեն պատեպատ խփող, վանդակի մեջ մռնչացող թագավորը, իր ձեռքերի տակ, իր աչքերի առաջ, և ոչ թե հանձներ դայակներին։ Նա կսովորեցներ որդուն՝ ինչպես հետապնդել որսին, ինչպես թռչել նրա մեջքին, ժանիքները խրել վզի մեջ և սեղմե՛լ-սեղմե՛լ, մինչև որ ոտքերը թուլանան ու գետնին տապալվեն։ Եվ ինչպես մի չար հաճույք ստանալ սեփական դաժանությունից, որպեսզի հանկարծ չզգա արյան հոտը ու չսարսռա վախից։ Ու ինչպես պատառոտել որսը և ուտել սովորել։ Որովհետև, սո՛ւտ է, աշխարհում չկան առաքինություն և ստորություն, քաջություն ու վախկոտություն, թույլատրելին ու անթույլատրելին, լավն ու վատը, սևն ու սպիտակը, չէ, չկան, աշխարհն իր հիմքում երկու պարզ ու թափանցիկ մասերի է բաժանված. ուտողների և ուտվողների։ Հայրդ ամենադժբախտն է, որդիս, ավելի դժբախտ, քան քո տեսած շինականներից որևէ մեկը, որի ճակատին արդեն վաղուց է գրված, թե ուտվողների խմբին է պատկանում։ Եվ գիտե՞ս ինչու։ Որովհետև հայրդ և՛ ուտող է, և՛ ուտվող է միաժամանակ։ Պատկերացնո՞ւմ ես ավելի ստոր և ողբերգական վիճակ։ Իսկ դու պիտի ուտող լինես, սո՛ւր ատամներով, երկա՛ր մագիլներով։ Բայց դու դրան հասնելու ես ի՛մ հաշվին, ի՛մ տառապանքների ու տանջանքների գնով։ Նա, չգիտես ինչու ամոթխածորեն, ձեռքը տարավ որդու դեմքին, և որդին, հանկարծ, ժպտալով հարվածեց հոր ձեռքին... Հայրը կատակով մի թեթև ապտակ հասցրեց որդու երեսին, իսկ որդին դարձյալ խփեց հոր ձեռքին, այս անգամ ավելի ուժեղ...

Արքան գրկեց Պապին, բարձր պահեց օդում, երկար նա-

յեց նրա աչքերին, հետո նստեցրեց գահին, բռնեց նրա ծնոտը, արձանագործի պես խնամքով ուղղեց դեմքը, բարձրացրեց գլուխը, ձեռքերը դրեց արմնկակալների ծայրերին, որոնց վրա մի-մի առյուծ էր քանդակված, ապա ուսերից հանեց ծիրանի քղամիդը ու գցեց նրա վրա։

Լսո՞ւմ ես հեռավոր թմբուկների զարկը, Պապ։

Սա իշխանության ձայնն է։ Տեսնո՞ւմ ես, ինչ քաղցր է հնչում։ Թող այդ քաղցրությունը չխաբի քեզ, թե չէ տանուլ կտաս ամեն ինչ։

Սա դավադրության ձայնն է։ Սրանից զգույշ կաց։ Սա կարող է մյուս բոլոր ձայները խլացնել։

Սա քծնանքն է։ Ուշադիր լսիր։ Այս ձայնը կարող է նաև շատ անկեղծ հնչել։ Վախեցիր սրանից։

Սա հոգսի ու գործի ձայնն է։ Մարդիկ բեռը գցելու են իրենց ուսերից և դնելու են միայն մի հոգու վրա։ Քե՛զ վրա։ Դու պիտի աշխատես, տառապես, պիտի տաս ու փոխարենը ոչինչ չստանաս։ Բայց դու վստահիր այս ձայնին։

Սա մենակությունն է, Պապ։ Ամենատխուր և սրտամաշ ձայնը։ Որքան էլ փորձես ականջներդ փակել, միևնույն է, սրանից չես խուսափի։

Սա դաժանության ձայնն է։ Մի խորշիր դրանից։ Այս աղմուկի մեջ մեղեդի կա, որդիս։ Դու այդ մեղեդին փնտրիր։

Այս ձայներն անցողիկ են։ Հաղթանակ... Պարտություն... Սեր... Ատելություն... Վրեժխնդրություն... Կարոտ... Մի աշխատիր միտքդ պահել, հետո ինքդ էլ, առանց իմ օգնության, հեշտությամբ կորսես ու կշոկես այս ձայները։

Հը՞, ո՞րը հավանեցիր, որդիս։ Այս ձայներից ո՞ր մեկը ամենից ավելի հիշեցիր։

Առաջի՞նը, արքա, ասում էին որդու խորամանկ և ծիծաղկուն աչքերը։

Իշխանությա՞ն ձայնը։ Նայած, թե ինչպես լսեցիր։ Համենայն դեպս, ես հիմա հանգիստ եմ քեզ համար։ Հանգիստ եմ, որ չնայած իմ զգուշացումներին, չնայած իմ հորդորներին, դու մատդ համառորեն դրեցիր դրա վրա։ Հանգիստ եմ, որդիս, հանգիստ։

Ողջո՞ւյն քեզ, Պապ թագավոր։

Մի՞թե հայն իր ամբողջ կյանքում սա չի երազել։ Չի երազել, որ այս գահը թափուր չմնա։ Լավ թե վատ, հաջող թե անհաջող, սիրելի կամ ատելի մի թագավոր ունենա իր գլխին։ Սա է երազել, ազնի՞վ խոսք, ուրիշ ոչինչ։ Որովհետև այս երազից հետո է միայն, որ նա կարողացել է անձնական երազներ ունենալ։

Նա ողջույնն, անշուշտ, բարձրաձայն չասաց, բայց, փոխարենը, դանդաղ ետ-ետ գնաց ու հարգալիր խոնարհվեց մինչև գետին։

Գահասրահի ոսկեզօծ ու երկբացիկ դռները հանկարծ լայն բացվեցին և, արգելապատը խորտակած ջրի նման, ներս հոսեց նախարարների մի մեծ խումբ, Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ։

Պապը վախեցած կուչ եկավ գահի վրա, հոր ծիրանի քղամիդը քաշեց գլխին ու թաքնվեց դրա տակ։

Խոսքը մեկ էին արել նախարարները, բյուզանդասեր ու պարսկասեր խառնվել էին իրար, տարազի մանրուքներն էին միայն մատնում նրանց պատկանելությունը, մեկ էլ՝ մազերի սանրվածքը։ Սա արդեն վտանգավոր էր, որովհետև արքայի մտքովն իսկ չէր անցնում, որ երկու խմբակցությունները կարող էին թեկուզ կես ժամով լեզու գտնել ու միավորվել իր դեմ։ Հայր Մարդպետին նայիր, Հայր Մարդպետի՞ն, մի տես, թե ինչպես է հագնվել. անթեզան, լայն ու բազմախորշ պատմուճանը՝ զուտ հայկական, պատմուճանի վրա գցած սպիտակ թունիկը՝ զուտ բյուզանդական, գանգրացրած մազերը՝ զուտ պարսկական։ Դե արի ու մի գժվիր։

— Պարսկասերները թող կանգնեն գահի աջ կողմում,— չարախնդորեն հրամայեց արքան,— իսկ բյուզանդասերները՝ ձախ։

— Եռ ուղարկիր Որմիզդուխտին,— զայրույթով լցված, պահանջեց Ներսես կաթողիկոսը։

— Վոնդիր Օլիմպիային,— բարեհամբույր ձայնով, կաթողիկոսին լրացրեց Մերուժան Արծրունին, և արքան այնպես էլ չհասկացավ, խնդրա՞նք էր գա, թե՞ հարկադրանք։

— Դրաստամա՜տ,— կոկորդով մեկ գոռաց արքան, թեև պարզորոշ տեսնում էր, որ նա կանգնած էր դռան մոտ՝ բոլորից մի գլուխ բարձր։— Կանչիր իմ մանկության ընկերոջը, Եփրեմ ազատին։ Ես ուզում եմ ճատրակ խաղալ նրա հետ։

Բայց սրտի խորքում ուրախացավ, որ սրանք լեզու չեն գտնի իրար հետ։ Հենց առաջին խոսքերից սխալ սկսեցին։ Իսկ ինչո՞ւ միայն Որմիզդուխտին ետ ուղարկել։ Ինչո՞ւ միայն Օլիմպիային վռնդել։ Նշանակում է, մեկնումեկը պիտի այնուամենայնիվ մնա՞ր։

Նա մոտեցավ գահին, տեսավ ծիրանի քղամիդի տակ կուչ եկած ու վախից սսկված որդուն, հենց այդպես, քղամիդով փաթաթված, գրկեց նրան, դրեց թևի տակ ու դուրս տարավ։ Թող նրա մտքովն իսկ չանցնի, թե արքայի հպատակները երբևիցե կհանդգնեն պահանջներ ներկայացնել իրենց տիրոջը, կփորձեն պատին դեմ տալ կամ հավասարակշռությունից հանել նրա հորը։

Չգիտես ինչու, ննջասենյակ տարավ նրան, հանեց քղամիդի միջից, ինչպես բարուրներից, ծնկի իջավ դեմը, բռնեց թևերից ու խանդաղատանքով նայեց աչքերին։

Երկյուղ կար Պապի աչքերում։ Կար այն պահի դրոշմը, երբ ոսկեգույն, երկփեղկ դռներն անսպասելի բացվեցին, և ալիք առ ալիք ներս խուժեց նախարարների կատաղի ոհմակը։ Ուրեմն, նա արդեն գիտեր վտանգի հոտն առնել, կարողանում էր ջոկել թմբուկների ձայնը։ Ոչ ոք չէր սովորեցրել նրան, ոչ ոք չէր պատմել թմբուկների մասին, բայց ինչ փույթ, երևի կան բաներ, որ արյունից արյուն են փոխանցվում։ Այդ բոլորը՝ լավ, բայց և այնպես ինչո՞ւ նա վախեցավ, եթե հայրը ներկա էր։ Երբ ես քո կողքին եմ, դու իրավունք չունես որևէ բանից վախենալու։ Լսո՞ւմ ես, իրավունք չունես։

— Մենք վաղը քեզ հետ որսի կգնանք,— ասաց նա մեղմորեն։— Իսկ մինչ այդ կմտնենք ախոռ, և դու ո՞ր ձին հավանես, ես կնվիրեմ քեզ։

Վեր կացավ, մեղավոր տեսքով խառնեց որդու սև մազերը ու դանդաղ քայլերով դուրս եկավ ննջասենյակից։

Քծնել էր որդուն։ Որպեսզի նա հավատար հոր հղորու-

թյանը, հոր ամենակարող ուժին, որպեսզի կասկած չսողոսկեր նրա փոքրիկ ուղեղի մեջ։

— Իսկ թուր էլ կնվիրե՞ս,— հանկարծ լսվեց Պապի ձայնը։

Նա կանգնել էր ննջասենյակի դռան առջև, ոսկրոտ ու նետի պես ձիգ։ Արքան շրջվեց և զարմացած նայեց նրան։ Որդին ինչ-որ բան հասկացել էր, բնազդով կռահել էր։ Եվ հոր քծնանքից ուզում էր առավելագույն չափով շահել։ Եթե սովորական տղա լինեիր, ես քեզ կթակեի, մի վայրկյան անգամ չկասկածես, որ կթակեի, բայց քանի որ թագաժառանգ ես, քո խոսքերն արդեն ոչ միայն մեղք չեն համարվում, այլ ընդհակառակը, արժանի են ամենայն գովեստի։ Որդին առևտուր էր անում հոր հետ։ Որպեսզի մոռանար հոր կատաղի ու անօգնական ձայնը։ Երկփեղկ դռներից ներխուժած անպատկառ ոհմակի պատկերը։ Որպեսզի հայրը նրա համար մնար ուժի ու հզորության խորհրդանիշ։ Չէ, ուտո՞ղ էր, ուտողների՞ց էր։ Ախորժակն այնքան մեծ, որ դեմ չէր լինի հոր մսից էլ մի պատառ պոկելու։ Արքան, ուրախանալով հանդերձ, նաև խղճաց որդուն, որովհետև բացասական գծերը գովելի ու խրախուսելի են դառնում թագաժառանգի համար։ Ուրեմն, որքա՜ն լիարժեք չէ մարդկային այն տեսակը, որին թագաժառանգներն ու թագավորներն են պատկանում։

— Կնվիրեմ,— ժպտաց նա։— Անպայման կնվիրեմ։

— Իսկակա՞ն թուր,— տեղը պնդացրեց որդին։

— Իսկական։

Եվ ապա արագ ուղղվեց դեպի գահասրահը, գոհ, որ ուշացել էր և սպասեցրել երկրի մեծամեծներին։ Ոտքով հրեց դուռը, թափով ներս մտավ և հրճվանքով ականատես եղավ, թե ինչպես բյուզանդասեր, պարսկասեր, զանազանասեր նախարարները արդեն իրար կոկորդ էին պատռում, նորից հարություն էին առել հին նվագները, մենք պարսիկների հետ ավելի մոտ ենք, մեր թագավորներն անգամ պարսկական ծագում ունեն, մենք քրիստոնյա ենք և ավելի ենք կապված Բյուզանդիայի հետ։ Ու ոչ ոք չէր ասում, թե մենք ինքնե՞րս ով ենք և ուր ենք գնում։ Եվ քանի որ այսօր հակասական

զգացմունքների օր էր արքայի համար, նա չուզեց շեղվել դրանից, և հրճվանքը փոխվեց խորին տխրության։ Ավելի լավ չէ՞ր, եթե կարողանային գոնե մի օրով դաշնակցել արքայի դեմ։ Թե որ միահամուռ ուժերով խեղճացնեին արքային՝ ամոթ իրեն, եթե չուրախանար, եթե չհպարտանար նրանց միասնությամբ...

— Պարսկասերները՝ աջ կողմում,— զվարթ ձեռք առավ նա,— բյուզանդասերները՝ ձախ։

— Ինչո՞ւ ես մեզ ծաղրում, արքա,— վիրավորվեց Սմբատ Թագրատունին, և արքան շատ զարմացավ, թե ինչպես եղավ, որ ծանրամիտ ասպետը, փոխանակ իր ասածը լուրջ ընդունելու և գահի ձախ կողմում կանգնելու, զգացել էր հեգնանքը։

— Ինչո՞ւ եմ ծաղրում, քավ լիցի,— դեմքին անմեղ արտահայտություն տվեց արքան։— Ես պարզապես ուզում եմ կողմերի հետ առանձին խոսել։

— Ձես խաբի, արքա,— առաջ եկավ կաթողիկոսը և նույն աղնիվ զայրույթով ավելացրեց.— Ես քեզ լավ եմ ճանաչում, դու երկու կողմերին էլ կհավատացնես, թե նրանց ես համակիր։

— Ներսե՞ս,— նախատինքով նրան նայեց արքան և ափսոսանքով տարուբերեց գլուխը։

Արքան արդեն բոլորովին չէր ճանաչում իր մորաքրոջ որդուն։ Մի կերպ կարող էր հանդուրժել, որ նա օրեցօր իր հակառակորդների կողմն անցնի, բայց որ կորցրած լինի հեգնանքը որսալու ընդունակությունը, այդ մեկն արդեն աններելի էր։ Երևի այնքան էր բարեգործություններով զբաղվել, այնքան էր երկրի լուսավորության համար ծախսել իրեն, որ որպես մարդ հետզհետե անհետաքրքիր էր դառնում։

— Ներսե՞ս,— կրկնեց նա՝ նախկին սիրով ու ջերմությամբ։

— Ես շենացրի քո երկիրը, լուսավորեցի քո մարդկանց, հիմա չկա մի ավան, որ դպրոց չունենա, չունենա հիվանդանոց կամ իշևան,— շարունակեց Ներսեսն այնպիսի ակնկալությամբ, որ իր ամեն մի խոսքը կարծես մի ապտակ պիտի լիներ արքայի երեսին, արթնացներ նրա խղճմտանքը, ուշքի

բերեր նրան։— Եվ դու ինչո՞վ ես ինձ պատասխանում։ Արշակավանո՞վ։ Անաստվածների քաղաքո՞վ։ Նախարարների հետ գժտությա՞մբ։

— Սկզբում ինձ էլ էր թվում, թե երկրի համար ես օր ու գիշեր տքնում, և ես, վկա է աստված, հպարտանում էի քեզանով,— հանգիստ պատասխանեց արքան։— Բայց հետո հասկացա, որ, ժողովրդի ետևում թաքնված, քեզ ես ծառայում միայն, սոսկ եկեղեցուն։ Դու աշխատեցիր բարի անուն ձեռք բերել, որպեսզի իրավունք նվաճես... իմ գործերին խառնվելու։

— Դու զրպարտում ես ինձ,— մինչև հոգու խորքը վրդովվեց Ներսեսը ու գավազանը գետնին խփեց։ Եվ գավազանի խփոցը հենակ թվաց նրա վրդովմունքի համար։ Նշանակոմ է, ոչ թե զրպարտությունից էր նա վիրավորվել, այլ ճշմարիտ խոսքերից։

Նախարարները, նույնիսկ պարսկասերներից ոմանք, դժգոհության ձայներ հանեցին, այսինքն, տեսեք, թե ինչ օրի ենք հասել, արքան բացահայտ կերպով անարգում է կաթողիկոսին, այսպիսի սուրբ ու նվիրված մի մարդու։

— Է՜, Ներսես, Ներսես,— տխուր ժպտաց արքան.— քեզնից այդպես էլ հոգևորական դուրս չեկավ։ Քո նպատակները մնացին զուտ աշխարհական նպատակներ։ Հիմա ասա, ի՞նչ ես ուզում ինձանից։ Ի՞նչ է մտքինդ։

— Վերացրու Արշակավանը։ Հաշտվիր նախարարների հետ։ Հաշտեցրու նախարարներին։ Մենք պետք է մի ընդհանուր ծրագիր մշակենք։

— Դու սովորական մի նախարար ես, Ներսես, ոչ ավելի, ոչ պակաս,— դառը քմծիծաղ տվեց արքան։— Իսկ եթե չես, ինչո՞ւ, դու էլ քո հերթին, հարկեր ես վերցնում ժողովրդից։ Եվ եթե իրոք ռամիկի բարեկեցության մասին ես հոգում, եթե անկեղծ ես քարոզում, որ չինականին չճնշեն, ինչո՞ւ ես Արշակավանին դեմ։ Ինչո՞ւ, օգտվելով Մեծի Դատավարության գործակալի պաշտոնից, անձամբ ինքդ ես դատում Արշակավան փախչողներին։ Ո՞ւր է այստեղ տրամաբանությունը։ Եթե իսկական հոգևորական ես, ի՞նչ գործ ունես

քաղաքական հաշիվների հետ։ Քե՞զ ինչ, թե արքան ում է դաշնակից և ում թշնամի։

— Եթե Արշակավանը վերացնես, մենք պատրաստ ենք զիջումների գնալ,— ասաց Կամսարականը, չգիտես ինչու, ձեռքերը մեջքին թաքցնելով։

—Հայոց թագավորները միշտ էլ ընտրություն են արել, արքա,— միջամտեց Մերուժան Արծրունին խաղաղ ու արժանապատվությամբ լի ձայնով։— Դու պետք է որևէ մեկի կողմը բռնես։— Եվ կարեկցանքով ավելացրեց.— Իզուր ես ճակատագրիդ դեմ կռվում։

Անկեղծ էր կարեկցանքը, ոչ մի կասկած, որ անկեղծ էր։ Եվ դա է՛լ ավելի կատաղեցրեց արքային։ Ընդհանրապես Մերուժանի ամեն մի խոսքը նա սրտին մոտ էր ընդունում և զայրանում։ Որովհետև չէր կարողանում թաքցնել, որ այս անարժան մարդը իր թուլությունն էր։ Ձեռքին ճար չկար, սիրում էր նրան, իր ամենավտանգավոր թշնամուն, առյուծի պես փառահեղ այս երիտասարդին, որին աստված պետք է իր դաշնակիցը արած լիներ։

— Չորս կողմից խորհուրդ են տալիս,— համբերությունից վերջնականապես դուրս եկավ արքան։— Խորհուրդ տվողների ազգ ենք դարձել։ Ամեն մեկն իր պարտքն է համարում խելք սովորեցնել ուրիշին։— Նայեց շուրջը, տեսավ կերած-խմած նախարարներին և է՛լ ավելի գազազեց։— Որ կողմդ շուռ գաս, խորհրդատուի ես դեմ առնում։ Մեծ թե փոքր, ամեն ինչ գիտեն այս երկրում։ Ոչ մի մութ կետ։ Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս, ինչպե՞ս... Այ սա՛ չգիտեն։ Ոչ ոք չգիտի, ոչ էլ ուզում է իմանալ։— Եվ հանկարծ գոռաց ամբողջ կոկորդով.— Պարսկասերները՝ աջ, բյուզանդասերները՝ ձախ։ Ձեք լսո՞ւմ ձեր արքայի հրամանը։ Ինչո՞ւ եք ամաչում աջ ու ձախ կանգնելու։ Իսկ գործելո՞ւ։ Գործել կարելի է, չէ՞։ Ում կալվածքը պարսկական սահմանի մոտ է, Պարսկաստանի կողմն է ուզում անցնել, ումը որ բյուզանդական սահմանին է կից, Բյուզանդիայի հետ է ուզում դաշնակցել։ Իսկ ե՞ս, ես, որ երկրի կենտրոնում եմ, երկրի սրտում, ե՛ս ինչ անեմ։— Ապա իջեցրեց ձայնը, սակայն չկարողացավ հևոցը զսպել։— Ընդհանուր ծրագիր մշակելու քո առաջարկը ըն-

դունելի է մի պայմանով, Վեհափառ։ Եթե հույսներս միայն մեզ վրա դնենք։ Եվ հասկանանք, որ Արշակավանը միայն իմ օգտին չի կառուցվում, այլ բոլորիդ օգտին։

— Ես քո կողքին եմ, արքա,— հանկարծ ոգևորված ասաց իշխան Վաչակը, նա, ով թագավորի հրամանով, ճաշկերույթի ժամանակ նստել էր նրա բազմականին։

— Իշխան Վաչակ, ի սեր աստծո, ոտքի տակ մի ընկնիր, մի կանգնիր կողքիս,— նորից բորբոքվեց արքան,— միացիր որևէ կողմի։ Իսկ դո՞ւ ինչու ես չեզոք, Հայր Մարդպետ։

— Ես շատ ծեր եմ արքա։

— Մե՞ր է։

— Այս օրհասական պահին դու պարտավոր ես ընտրություն կատարել,— համառորեն պնդեց կաթողիկոսը։

— Վեհափա՞ռ,— ձեռքերը հեգնանքով տարածեց արքան։— Ինչո՞ւ ես հանդուրժում բազմակնությունը։ Չէ՞ որ դու բոլորին արգելեցիր։ Ինձ ինչո՞ւ ես թույլ տալիս։ Չէ՞ որ դա հեթանոսություն է։ Ի՞նչ է, թագավորի համար մի՞ կրոն կա, իսկ մյուսների համար՝ ա՞յլ։

Մերուժան Արծրունին մոտեցավ արքային, ձեռքը բարեկամաբար դրեց նրա ուսին, ազնիվ ու բաց հայացքով նայեց նրա աչքերին ու ասաց.

— Ես վախենում եմ, արքա։

— Ինչի՞ց ես վախենում, Մերուժան Արծրունի,— քմծիծաղ տվեց արքան։

— Վախենում եմ դավաճանել հայրենիքիս։

— Բայց դա քեզ չի խանգարում ինձանից գաղտնի պարսից թագավորի մոտ գնալ,— մռնչաց արքան ու կոպտորեն ետ տարավ ուսը։

— Չկարծես, թե դավաճանությունը այդքան հեշտ բան է,— չնայած արքայի կոպտությանը, մեղմ ասաց Մերուժանը և, իր խոսքն ավարտած համարելով, մի կողմ քաշվեց։

— Ի՞մն է Արշակավանը,— չարությամբ գոռաց արքան։— Ոչ ոքի չեմ տա։ Ես ձեր ճորտերով ու ծառաներով կկռվեմ ձեր դեմ։

— Ճիշտ էր Արծրունյաց իշխանը,— ասաց կաթողիկո-

սր։— Եթե նրանք դավաճան կոչվեն, իմացիր, որ դու ես մեղավոր։

— Գուցե դո՞ւ էլ ես ճիշտ, որ օրը ցերեկով նամակները ես ուղարկում Կեսարիա ու բողոքում, թե ինչո՞ւ հայոց կաթողիկոսները այսուհետև պիտի Հայաստանում ձեռնադրվեն, առանց Բյուզանդիայի գիտության։— Արքայի շունչը կտրվեց ատելությունից։ Նա կաթողիկոսի նամակների մասին վաղուց գիտեր, բայց բարձրաձայն ասելուց հետո փաստը կարծես է՛լ ավելի իրական դարձավ։— Գուցե քո այդ դավաճանության համա՞ր էլ ես եմ մեղավոր։

— Ինչպե՛ս ես հանդգնում, արքա,— մինչև ականջների ծայրը կարմրեց կաթողիկոսը։— Ինչպե՛ս է լեզուդ պտտվում։

— Պատասխանի՛ր, պատասխանի՛ր, նախարար Ներսես,— կոպտորեն պահանջեց արքան։— Թող բոլորը լսեն։

— Դա զուտ կրոնական հարց է, և ոչ ոքի չի վերաբերում, բացի ինձանից։

— Լսո՞ւմ եք։— Թեև ո՞վ պիտի լսեր, ո՞ւմ էր ձեռնտու։— Բյուզանդիայից կախման մեջ լինելը, ուրեմն, զուտ կրոնական հարց է և ոչ թե դավաճանություն։

— Մի ստիպիր նզովել քեզ,— խնդրեց կաթողիկոսը, և արքան զգաց, որ նա անկեղծորեն խուսափում էր դրանից, կարծես շնորհ էր անում։ Եվ դա սաստիկ բարկացրեց նրան։

— Դուք ձեր ճորտերից ու ծառաներից ավելի եք վախենում, քան բյուզանդացուց ու պարսիկից,— նորից կատաղած պոռթկաց արքան։— Թող ես ճորտերի արքան լինեմ, թող նախարար չունենա իմ երկիրը։

Եվ ձեռքերի արհամարհական շարժումով վոնդեց բոլորին։ Նախարարների խումբը, ալիք առ ալիք, զայրացած ու վիրավորված, դուրս եկավ գահասրահից։

— Հիշիր, որ ես չէի ուզում դավաճան լինել,— արքան լսեց Մերուժանի ձայնը։

Եվ ի՞նչ։ Ոչ ոք չի մնալու այստեղ, այս չորս պատերի մեջ, բացի իրենից։ Արդեն գնում են։ Ահա վերջին նախարարներն էլ դուրս կելնեն։ Նույնիսկ Դրաստամատն է անհետացել։ Հայր Մարդպետն էլ չի երևում։ Չեզո՞ք է։ Ե՞ր է։

Ո՞ւր եք գնում։ Ինչո՞ւ եք ինձ մենակ թողնում։ Ես ձեր

արյունից եմ։ Ձեր մսից։ Արշակավանի խուժանը օտար է ինձ։ Ես վախենում եմ նրանից։ Նրանք ձեռքերով են ճաշ ուտում։ Ջմոռանա՞ք, չմոռանա՞ք, որ դո՛ւք ինձ ստիպեցիք նրանց հետ դաշնակցել։ Ջմոռանա՞ս, Ներսես։ Վա՛յ ձեզ։

Գնե՞լ։

Ձերբակալիր նրանց։ Գնելի ձայնն էր։ Մի թող, որ պալատից հեռանան։

Չեմ կարող։ Մի ստիպիր ինձ։ Ճիշտ բաներ մի ասա։

Ձերբակալիր քանի ուշ չէ։ Հետո շատ կզղջաս։

Գիտեմ։ Բայց չեմ կարող։ Նրանք... շատ են։

Հիմա ամեն պահը թանկ է քեզ համար։ Եթե այս առիթը կորցնես, իմացիր, որ պարտված ես։

Նրանք պետք են ինձ։ Թեկուզև թշնամի։ Բայց պետք են։ Ինչպես իմ գոտին։ Իմ մաշկը։ Իմ ներքնակը։

Վճռական եղիր։ Աղաչո՞ւմ եմ քեզ։ Այ տես, ծնկաչոք աղերսում եմ։ Ոտքերդ եմ համբուրում։ Դու կամ հիմա՛ ես շահելու, կամ հիմա՛ ես պարտվելու։

Գոնե թույլ տուր մի քանիսին միայն... Բոլորին չեմ կարող...

Լսո՞ւմ ես սմբակների ձայնը։ Շո՛ւտ արա։ Հրամայիր, որ բռնեն նրանց։ Ձնդան գցիր։ Կոտորիր ամենքին։ Թե չէ հետո նույն բանը նրա՛նք կանեն քեզ։ Չգիտե՞ս, որ դա է աշխարհի օրենքը։

Ջքվիր աչքիցս։ Պղտորեցիր կյանքս։ Իմ անձը խլեցիր ինձանից։ Ես կուրանամ իմ երդումը։ Շանսատակ կանեմ քեզ։

Դու պարտվեցիր, արքա։ Սմբակների ձայնն այլևս չի լսվում։

Պարսկասերները՝ ա՞չ։

Բյուզանդասերները՝ ձա՞խ։

Հը՞, ի՞նչ եղավ, ի՞նչ արեցի, ի՞նչ հասկացար, Դրաստամատ։

✦✦✦

— Դու ինձ սիրո՞ւմ ես, սենեկապետ... Ինձ, ոչ թե արքային...

Դրաստամատն արքային երբեք այսպիսի վիճակում չէր

տեսել։ Նա սենեկապետին մտցրել էր գահասրահի մի անկյունը, բռնել նրա օձիքից և անհամբեր պատասխան էր սպասում, կարծես նրա մի հատիկ խոսքից կախված էին իր ճակատագիրն ու երկրի բախտը։ Երկարավուն գեմքն այլայլված էր, փոքր աչքերի մեջ ահագին տագնապ կար, անզուսպ իրարանցում, և դուրս ցցված ճակատը ծածկված էր սառը քրտինքով։ Նրա մտքով երբեք չէր անցել, որ այդպիսի հարց կարող էր գոյություն ունենալ ոչ միայն իր, այլև առհասարակ որևէ մեկի համար։ Սիրո պահանջը հանկարծ ծնվեց, լցվեց ամբողջ էության մեջ ու սկսեց խեղդել նրան։ Եվ հիմա ոչ թե կոկորդը սեղմված Դրաստամատն էր դժվար շնչում, այլ հենց ինքը, արքան։ Գուցե նաև դրական պատասխան էր ակնկալում, սպասում էր, որ փարատեն իր կասկածները, անամոթաբար հույսը դրած արքա լինելու առավելությունների վրա։ Եվ քանի որ Դրաստամատը մի գլուխ բարձր էր, արքայի հայացքն ուղղված էր դեպի վեր, ասես ինչ-որ բան էր աղերսում նրանից։

Արքան թեև մարդկային անկեղծ խղճահարության էր արժանի, բայց Դրաստամատը չխղճաց նրան։ Չկարողացավ հիշել թեկուզ մի դեպք, երբ դա իր պարտականության մեջ մտած լիներ։ Նթե ասվեր, որ ինքը պարտավոր էր նաև խղճալ արքային։ Ջանասիրաբար այդ էլ կաներ։ Բայց չէր ասվելիս։ Եվ հիմա, այս տարիքին, երբ ջահելությունն արդեն վաղուց էր անցել, նա դժվարանում էր իր պարտականությունների վրա և՛ մի բան կամավոր ավելացնել։ Միայն զարմանում էր, թե ինչո՞ւ այդպիսի հասարակ հարցի մեջ այդքան կիրք էր դնում արքան, մանավանդ, որ իր պատասխանը լինելու էր շատ սովորական։

— Քո ինչի՞ն է պետք իմ սերը, արքա,— հանգիստ ասաց Դրաստամատը։— Անկեղծությունն ու նվիրվածությունը իմ մասնագիտությունն են, իմ արհեստը։ Դու հավասարների մեջ սեր փնտրիր։

— Ասում ես, հավասարների՞ մեջ,— զայրացավ արքան ու է՛լ ավելի ամուր սեղմեց նրա խորշավոր օձիքը։— Բայց ո՞ւմ։ Ո՞ւմ։

— Ոչ ոքի, արքա,— սառը պատասխանեց Դրաստա-

մատը։— Եթե Ջավասարներից ոմանք կապված են քեզ հետ, ապա պատճառը ոչ թե երկրի, այլ զուտ իրենց անձնական նեղ շահերն են։ Սիրո համար շահերի ընդհանրություն է պետք, արքա։ Մեծ շահերի։ Աստծո կամ հայրենիքի մակարդակով։

Ինչպես էլ կարողանում էր հանգիստ խոսել, երբ երկրի առաջին դեմքը նրան կոպտորեն խցկել էր սրահի մի անկյունը և ամուր բռնել նրա կոկորդից։ Եվ ինչպես էլ համարձակվում էր շասել այն, ինչ արքան էր ակնկալում։ Ի՞նչ է, չէ՞ր հասկանում այս հսկայամարմին բթամիտը, որ իր հարցին պիտի դրական պատասխաններ, աչքերին անկեղծության շինծու արտահայտություն տար և դրանով խնդիրն սպառեր։

— Ուրեմն, դուրս է գալիս, որ ոչ ոք չի՞ սիրում ինձ։

— Ոչ ոք,— հաստատեց Դրաստամատը։

Արքան բաց թողեց նրան ու հեռացավ։ Նստեց գահին, թուլացրեց օձիքը, քանդեց գոտին, հանեց մաշիկները ու պատվանդանի վրա մեկնեց բոբիկ ոտքերը։ Հետո աչքերը սառեցին մի անորոշ կետի, ու նա երկար ժամանակ վերացավ ինչ-որ տեղ։

Դրաստամատը ելավ անկյունից, անշտապ ուղղեց զգեստը ու կանգնեց պատվանդանի կողքին։ Նա գիտեր, որ դեռ չպետք է դուրս գար գահասրահից։ Եվ ընդհանրապես գիտեր, թե երբ պիտի առանց կանչի ներս մտնել և առանց հրահանգի հեռանալ։

— Իսկ Վասա՞կը,— հանկարծ, դիրքը չփոխելով, խուլատած ձայնով հարցրեց արքան։— Նա՞ էլ չի սիրում։

— Ոչ, արքա։

— Ինչպե՞ս։ Վասա՞կը։ Իմ հավատարիմ սպարապե՞տը։ Ուշքի եկ, Դրաստամատ։

— Նա արքային է սիրում, ոչ թե քեզ։

Արքան շփոթված նայեց շուրջը, կարծես ինչ-որ բան էր փնտրում գահասրահի հեռավոր անկյուններում։ Հետո կոացավ, վերցրեց մաշիկները և խնամքով դասավորեց կողք կողքի։

— Իսկ Գնե՞լը։

— Արքային է սիրում, ոչ քեզ։

— Իսկ Պա՞պը։

— Պապը իր ապագան է սիրում, արքա։

— Հիմարությո՛ւն,— փեշերը բռնած, տեղից ցատկեց արքան։— Ես կարող էի նաև արքա չլինել։ Ի՞նչ է, իմ որդին չէ՞ր սիրելու ինձ։

— Եթե չլիներիր, անշո՛ւշտ կսիրեր։ Այս դեպքում էլ քո արքա լինելն է նրան խանգարում։

— Իսկ Փառանձե՞մը։

— Չի սիրում,— կարճ պատասխանեց Դրաստամատը։— Ոչ քեզ, ոչ արքային։

— Ի՞նչ է ստացվում, Դրաստամատ,— անսպասելի մեղմությամբ, կարծես ինչ-որ մեծ բանի հետ հաշտված, հարցրեց արքան,— որ ես մենա՞կ եմ։

— Բոլոր նրանք, ովքեր ուժ և իշխանություն ունեն, մենակ են, արքա։

— Եվ ոչ ոք չի՞ սիրում ինձ։

— Արքաներին ոչ ոք չի սիրում, տեր իմ։

— Անկախ նրանից, լա՞վ մարդիկ են, թե՞ վատ։

— Աստվածներին էլ չեն սիրում, արքա։ Պաշտում են, բայց չեն սիրում։ Որովհետև աստվածներն ու արքաները գաղափար են, ոչ թե միս ու արյուն։

— Եթե ես վաղը թալանեմ երկիրը, ծանր հարկերով նեղեմ շինականին, զնդանները լցնեմ մարդկանցով, տեսնենք ինչպե՞ս միս ու արյուն չեմ դառնա,— չարությամբ վրա տվեց արքան։— Իսկ եթե հարկերը քչացնեմ, արգելեմ, որ վատ վարվեն նրանց հետ, ի՞նչ է, էլի՞ միս ու արյուն չեմ դառնա։

— Երբ տաք արև է երկնքում, երբ գարնան շունչն է տարածվել չորս կողմը, երբ սերմը պայթում է հողում, լավ է, չէ՞։ Բայց դրա համար ո՞ւմ են սիրում։ Իսկ եթե ջրհեղե՞ղ է, երկրաշա՞րժ, երաշտ։ Ո՞ւմ են ատում դրա համար։ Որովհետև երկուսի հեղինակն էլ այնքան հեռու է և անհասանելի, որ դուրս է մնում սիրուց ու ատելությունից։

— Բայց ես ուզում եմ, որ իմ մեջ նախ և առաջ մարդուն տեսնեն,— չհաշտվեց, չհամաձայնեց, ընդվզեց արքան։—

Արքային և մարդուն միաժամանակ։ Ի՞նչ կա այստեղ անբնական։

— Բնական պահանջները ուժի և իշխանության դեպքում թուլություն են դառնում,— համառորեն դիմադրեց Դրաստամատը ու թույլ չտվեց, որ արքան խաբի ինքն իրեն։— Երրորդ ճանապարհ չկա, տեր իմ։ Կամ մարդ, կամ արքա։

— Ստո՛ւմ ես,— փեշերը հավաքած, մոմռաց արքան։— Հապա Արշակավա՞նը։ Իմ քաղա՞քը։— Բաց թողեց փեշը, կանգնեց ուղիղ, գլուխը բարձր, կարծես պատրաստվելով հանդիսավոր երդում տալու։— Այն վերացական սերն ու երկյուղածությունը, որ ամբոխը տածում է գահի հանդեպ ընդհանրապես, ես դարձրի որոշակի սեր։ Որոշակի՛ անձի հանդեպ։ Ի՛մ հանդեպ։— Ու տենդագին ուրախությամբ գոռաց.— Ես քեզ արգելում եմ ինձ պատասխանել։ Ես ոչ թե ինձ հավասարների, այլ ամբոխի հետ կհաղթահարեմ իմ մենակությունը։ Ամբոխի հետ կկառուցեմ այս երկիրը, ոչ թե հավասարների։ Վերջացնենք այս կանացի խոսակցությունը։ Ինձ բոլորովին չի հետաքրքրում, թե ով է ինձ սիրում, ով չի սիրում։ Գնա, սենեկապետ, դու պարտվեցիր։ Դու ինձ այլևս ասելու բան չունես։

Դրաստամատը դուրս ելավ գահասրահից, բայց ոչ թե նրա համար, որ արքան էր ասել, այլ որովհետև զգացել էր, որ ժամանակն է գնալու։ Եթե ժամանակը չլիներ, նա, անկասկած, դեռ կմնար, ու արքան չէր առարկի։

Իսկ արքան, որ արդեն մենակ էր գահասրահում, շատ կուզենար՝ հիմա լիներ մեկը, որին կարողանար հարց տալ. հը՞, ի՞նչ եղավ, ի՞նչ կատարվեց, ի՞նչ հասկացար...

✧✧✧

— Հայր Մարդպետ, մի քանի օր հետո կգնաս Ներսեսի մոտ... Աշտիշատ... Կասես, որ արքան հիացած է նրա բարեգործություններով... Որ նա վերջապես լուսավորեց մեր երկիրը... Մարդասիրություն սերմանեց ամենուրեք... Իշխանավորներին սովորեցրեց լինել մեղմ ու անհիշաչար... Գութ ունենալ ծառաների հանդեպ... Մանր հարկերով չնեղել նրանց... Որովհետև նրանք էլ տեր ունեն երկնքում... Իսկ

ստորադրյալներին՝ հարգանքով վերաբերվել տերերին...— Լռեց ու լկտի հայացքով նայեց ներքինապետին։ Եթե ճըշմարիտ է, որ ամեն մարդու մեջ մի քանի հոգի են ապրում միաժամանակ, իրարամերժ գծերով, ամենաառաքինուց մինչև ամենաստորը, ապա ներքինապետի մոտ կարելի էր առանց քաշվելու վերջինը լինել, քանի որ հենց ինքն էր թելադրում այդ։— Հետո՞, Հայր Մարդպետ, ի՞նչ եմ անում... Ի՞նչ... Զգո՛ւյշ, եթե մտքինս կռահես, ես քեզ վտանգավոր մարդ կհամարեմ գահի համար...

— Վեհափառի հեղինակությունը ստվեր է գցում քո իշխանության վրա, արքա,— հաճույք ստանալով իր ամեն մի բառից, պատասխանեց Հայր Մարդպետը։

— Բախտդ չբերեց, կռահեցիր, Հայր Մարդպետ։ Չէ, ես մի օր հաստատ քո գլուխը կզոհեմ։

Հայր Մարդպետը մանր-մանր ծիծաղեց և այնքան էր իրենով տարված, որ չնկատեց արքայի աչքերում ծվարած չար փայլը։

Լա՜վ, Ներսես, լա՜վ։ Մորաքրոջ երախտամո՞ռ որդի։ Ուրեմն, ես քեզ ոչնչից մարդ դարձնեմ, իմ կողքին տեղ տամ, որպեսզի դու իմ ոտքի տակի հո՞ղը փորես։ Եթե միայն իմ դեմ ուղղված լիներ քո նետը, հոգ չէ, մի կերպ կդիմանայի, մի կերպ կուլ կտայի։ Բայց քո գոյությունը վտանգավոր է նրանով, որ դու էլ, ինձ նման, անձնական շահ չունես։ Երանի չէ՞ր, որ միայն քո մասին մտածեիր։ Ես քեզ կներեի ու կսիրեի առաջվա պես։ Դու գործում ես ընդհանրապես հայոց արքաների դեմ, ոչ միայն իմ, այլև՝ գալիք։ Եթե կուզես իմանալ՝ հենց տասնամյա Պապի դեմ։ Եվ ի՞նչ թաքուն ու խորամանկ ձևով, որքա՜ն նրբորեն, ինչպիսի՜ տանջալի անշտապությամբ ու համբերատարությամբ։ Այդ ամենի առաջ նույնիսկ իմ Արշակավանի սատանայական գաղափարն է խամրում և դառնում մանկական թոթովանք։ Ափսոս չե՞ն իմ նախարարները, որոնք միամիտ գաճաճներ են քո կողքին։ Լուսավորչական ու մարդասիրական գործունեությունդ փուչ ու դատարկ բան է։ Մեծ և ամուր վահան է, որի ետևում աշխարհական Ներսեսն է թաքնված։ Դու ոչ էլ ուրախանում ես դրանով, ոչ էլ սիրում ես քո ժողովրդին։

Դու քո դպրոցներով, հիվանդանոցներով ու իշխաններով օրըստօրե բարձրացնում ես հեղինակությունդ, որպեսզի եկեղեցին իրավունք ստանա թագավորի գործերին խառնվելու։ Քեզ արդեն կոչում են Մեծն Ներսես, երանի՜ ինձ։ Մինչդեռ Արշակավան փախչողներին դատում ես այնպիսի խրստությամբ, այնպիսի դաժանությամբ, որին նույնիսկ Մերուժանն է անընդունակ։ Էլի՞ ապացույց։ Չգիտե՞ս, որ պատերազմ է, մահու և կենաց կռիվ։ Իսկ եթե գիտես, ինչո՞ւ ես բարեգործություններդ նույն թափով շարունակում։ Հիմա ի՞նչ ժամանակն է բարեգործության, ո՞ւմ են պետք դպրոցներդ ու իշխաններդ, երբ այսօր չէ՝ վաղը, թշնամիները ոտնատակ են անելու երկիրդ։ Ի՞նչ է, ե՞ս պիտի բացատրեմ քեզ, նախկին զինվորիդ, որ հիմա մեզ զորք է պետք, դրամ է պետք, հենց քո հարստությունն է պետք։ Իսկ դու, երկու ոտքդ մի կոշիկի մեջ դրած, համառորեն նոր դպրոցներ ես բացում, նոր իշխաններ կառուցում, բորոտների մասին ավելի ես հոգում, քան երկրի ու ժողովրդի։ Էլի՞ կասես, որ ամեն չանք չես թափում Եկեղեցին արքայի իշխանությանը հակադրելու և մեծ իրավունքներ կորզելու համար։

Գժվելս է գալիս, գժվե՞լս, երբ մտածում եմ, թե ո՞ւմ հաշվին ես այդ անում։ Ի՜մ, ի՜մ։ Իմ հողերի, իմ դրամների։ Ինքս իմ ձեռքով մի հսկա սար կանգնեցրի իմ դիմաց, փակեցի ճանապարհս, կտրեցի հորիզոնս։

— Ինչ պատրվակ ուզում ես գտիր, Հայր Մարդպետ, ինչ միջոցի ուզում ես դիմիր,— քթի տակ, հազիվ լսելի ձայնով ասաց արքան,— բայց Վեհափառին ստիպիր այնպիսի մի սխալ գործել, որ ես հարկադրված լինեմ, լսո՞ւմ ես՝ հարկադրված լինեմ, նրան պատժելու համար ետ վերցնել եկեղեցուն նվիրած իմ հողերը։ Սրանից հետո ես բարեգործությունները կկատարվեն այդ նույն հողերի հասույթներով, բայց արդեն ի՜մ անունից։

— Դա փառասիրություն չէ, արքա,— նրան հանգստացրեց Հայր Մարդպետը։— Ժողովուրդը պետք է արքային երախտապարտ լինի, ոչ Վեհափառին։ Ժողովուրդը պետք է արքային կեցցե գոչի և ոչ եկեղեցուն։ Դա երկրին է պետք, երկրին։

— Չէ՞, Հայր Մարդպետ,— չարագուշակ ժպտաց արքան, — ես չեմ թողնի, որ այսպիսի գլուխը ուսերիդ մնա։

— Հանգիստ եղիր, արքա,— նորից մանր-մանր ծիծաղեց Հայր Մարդպետը,— երբ վերադառնամ, ամեն ինչ կարդին կլինի։

Խոնարհվեց ու դուրս եկավ գահասրահից։

Եթե վերադառնաս։ Չեզո՞ք է։ Մե՞ր է։ Եվ ո՞վ ասաց, որ Գնելի սպանության մասին դիտմամբ չհայտնեց կաթողիկոսի ներկայությամբ, որպեսզի գաղտնիքը բացվեր, և բոլորն իմանային, որ արքան է մարդասպանը։

Եթե վերադառնաս։

Եթե Ներսեսն իմ իմացած մարդն է, դժվար թե վերադառնաս, Հայր Մարդպետ։

Համարիր, որ կաթողիկոսն իր սխալն արդեն գործել է։ Քո կյանքի հաշվին։

Ներսե՞սը, իր մորաքրոջ որդին, իր հարազատը, միս ու արյունը, քաջ զինվորը, փառավոր սուսերամարտիկը, կանանց հոգեառը և հիմա՝ նույնքան հրաշալի կաթողիկոսը։ Հետո՞ ինչ, որ արքայի դեմ են ուղղված նրա քայլերը։ Հետո՞ ինչ, որ եկեղեցու իշխանությունն ու հեղինակությունն է ուզում առաջ քշել։ Հապա էլ ինչպե՞ս։ Մի՞թե նույն կերպ ինքը չէր վարվի։

Գլուխ տասնիններորդ

Արքայի պահանջով Օլիմպիան ներկայացավ նրան։ Բայց հուսախաբվեց, երբ տեսավ, որ փոխանակ ննջասենյակ տանելու, գահասրահ են առաջնորդում իրեն։

Արդեն բավական ժամանակ է, ինչ նա ապրում էր այս օտար երկրում, պալատի իրեն հատկացված օթևանում, և դեռ չէր հանդիպել արքային։ Արքան ոչ կանչել, ոչ էլ այցելել էր նրան։

Օլիմպիան դուրս չէր գալիս իր օթևանից, որովհետև նույ-

Իսկ պատերի ետևից զգում էր իրեն ուղղված խեթ հայացքները։ Հատկապես վախենում էր արքայի երկու կանանցից և սեփական տգեղությունից։

Նա չէր կարող դժգոհել ոչ իրեն հատկացված հարկաբաժնի շքեղությունից, ոչ էլ ծառաների ու նաժիշտների ուշադիր և հոգատար վերաբերմունքից, բայց հոգին ծառս էր լինում պատուհանից երևացող միօրինակ տեսարանի դեմ։ Ամբողջ օրը բանտարկյալի պես կանգնում էր պատուհանի մոտ, ու տեսարանը... չէ՞ր փոխվում։

Մի անգամ, երբ հուսահատությունը կառչեց կոկորդից ու սկսեց անգթորեն սեղմել, նա հացի խմորից գնդիկներ սարքեց ու մեկ առ մեկ գցեց ներքևում անցուդարձ անող սպասավորների ու զինվորների վրա։ Ինքը չէր համարձակվում ցած նայել և ստուգել, թե գնդիկներից ո՞ր մեկը հասավ նպատակին և ո՞ւմ վրա ընկավ արդյոք, բայց հուսահատությունը մի փոքր նահանջեց, թուլացրեց կոկորդի կապանքները, որովհետև ինչ-որ մեկի հայացքը երևի անպայման ուղղվել էր վեր, դեպի իր պատուհանը։

Իսկ արքան չէր գալիս։

Օլիմպիան չգիտեր, չէր էլ ուզում իմանալ, գեղեցի՞կ էր նա, թե տգեղ, ազնի՞վ մարդ էր, թե ստոր, գիտեր միայն, որ միակ հարազատ կենդանի շունչն էր այս պալատում, իր միակ սփոփանքը, և ինքը ուրիշ ճար չուներ, սիրում էր նրան ու տանջվում։ Որովհետև եթե չլինեին սերն ու տանջանքը, չէր լինի նաև մխիթարություն, և նա իրեն ցած կնետեր այս պատուհանից։ Կնետվեր, որպեսզի գոնե ինչ-որ բան փոխվեր այս միօրինակ ու տաղտկալի տեսարանի մեջ։ Թեկուզ և առանց իր ներկայության։

Իսկ արքան չէր գալիս։

Օլիմպիան փորձ արեց նաժիշտների հետ մտերմանալու և սիրտը բացելու նրանց առաջ։ Բայց հասկացավ, որ աշխարհն էլ քանդվի, միևնույն է, այդ քայլին երբեք չի դիմի։ Հորենական հարստությունն ու դիրքը ոչ մի կերպ թույլ չեն տա։ Իսկ նա ի՞նչ ուներ կյանքում բացի դրանցից։ Երկրից երկիր գերության գնալիս այդ իրողությունն էր միայն, որ ինչ-որ չափով սիրտ էր տալիս նրան, հատուցում իր տգե-

գությունը, օգնում բարձր պահելու արժանապատվությունը և հպարտորեն ցուցադրելու այն։ Ու նա երբեք առիթը չէր կորցնում տեղի ու անտեղի, պատեհ թե անպատեհ, հիշեցնելու, թե ով էր իր հայրը։

Իսկ արքան չէր գալիս։ Չէր գալիս, չէ։

Օլիմպիան մահճի վրա ուշ գիշերներին շարում էր իր հետ բերած զարդերն ու գոհարեղենները, որոնց նմանը չես գտնի նույնիսկ Բյուզանդիայում, էլ ուր մնաց՝ այս փոքրիկ ու անշուք երկրում։ Շարում էր իր չքնաղ զգեստներն ու կոշիկները, որոնց մասին արքայի կանայք չէին էլ կարող երազել։ Ամեն օր հագնում էր դրանք, բայց միայն ինքն ու հայելին էին կուրանում այդ շքեղությունից։

Չէ, չէր գալիս։

Մյուսները եկել են։ Կայսրի ահից։ Եկել ու փառավորապես իմաստազրկել են հոբենական հարստությունն ու դիրքը։ Արժեքազրկել են նրա զարդերն ու զգեստները։ Փոխարենը տվել են շունչ ու ջերմություն։ Ու, կայսրի աչքը մտնելու համար, խաբել են, թե սիրում են նրան։ Եվ նա, իմանալով հանդերձ, խաբվել է։ Ուրիշ ելք չի ունեցել։ Գոնե սա էլ գայ, հացի գնդիկների պես դուրս նետեր հոր անունն էլ, դիրքն էլ, այս գոհարներն էլ, որոնք ծանր են նստում իր ուսերին, շատ են ճզմում, և արդեն չի կարողանում հպարտորեն կրել դրանք։

Եվ ահա եկան հայտնեցին, որ կանչում է։

Սիրտը թեթևակի խառնվեց ուրախությունից, ու գլխապտույտ զգաց։ Եվ անմիջապես մտածեց, որ թեև դեմքը ագեղ է, բայց մարմինը շատ է գեղեցիկ։ Դա էլ քիչ բարեմասնություն չէ։ Քիչ չի, չէ՞։ Եվ շտապելուց գնաց այնպես, ինչպես որ կար, ամենահասարակ զգեստով, գրեթե առանց զարդերի։ Բայց ո՞ւր։ Ոչ թե ննջասենյակ, այլ գահասրահ։

— Ինձ թվաց, թե դու այն օրը ինչ-որ բան էիր ուզում ասել,— մոտեցավ նրան ու միանգամից սկսեց արքան, բայց խոսեց զարմանալի մեղմ ու մտերիմ ձայնով։

Օլիմպիան, թուքը կուլ տալով, բացասաբար շարժեց գլուխը։

— Ուրեմն, թվաց, թվաց,— հանգստացրեց արքան։

Մտամոլոր քայլեց պատվանդանի երկարությամբ։ Օլիմպիան շունչը պահած հետևում էր նրան, կարծես նրա մի աննկատ շարժումը կարող էր երջանկացնել կամ դժբախտացնել իրեն։ Նա գլխի ընկավ, որ իրենց առաջին հանդիպումը շատ կարևատև էր, և արքայի դիմագծերը գրեթե մոռացել էր արդեն։ Մի քիչ այլ կերպ էր պատկերացրել իր երևակայության մեջ։ Եվ ստացվել էր, որ ուրիշ մարդու էր սիրահարված եղել, ուրիշ մարդու համար էր տանջվել իր պատուհանի մոտ։

Հիմա նա տենդագին կերպով փորձում էր իր պատկերացրածը հաշտեցնել այս իրական մարդու հետ։ Եվ անելանելիությունը, որի հետ ոչ մի շարիք ու աղետ չեն կարող համեմատվել, արեց իր գործը։ Հաշտությունը կատարյալ եղավ։

Արքան հանկարծ կտրուկ շրջվեց և իսկույն հարց տվեց.

— Կայսրը քեզ ի՞նչ պատվիրեց մինչև այստեղ գալդ...

Օլիմպիան, անակնկալի եկած, նորից բացասաբար շարժեց գլուխը։

— Կա՛յսրը, կա՛յսրը,— մեղմ կրկնեց արքան։— Նա կարգադրեց պահանջել, որ... Կա՛յսրը, կա՛յսրը...

Օլիմպիան կարծես փշերի վրա կանգնած լիներ։ Լուռ ու մունջ նայում էր արքային։ Ուզում էր շփոթված հայացքը փախցնել նրանից, բայց ասես կախարդված լիներ։

— Նա կարգադրեց պահանջել... Ի՞նչ պահանջել...— համբերությամբ շարունակեց արքան։— Կա՛յսրը... Քո մեռած նշանածի եղբայրը...

Արքան, ուսուցչի նման ատամն ատամին տված, սպասում էր իր հասարակ և դյուրին հարցի պատասխանին։ Կամ էլ թվում էր, թե Օլիմպիան մանուկի պես իր առաջին քայլն էր անելու հիմա, և ինչ-որ մեկը, թևերը տարածած, սիրտ էր տալիս, անուշ խոսքերով համոզում նրան։

— Նա ի՞նչ ասաց քեզ... Ասաց, որ... Ի՞նչ կարգադրեց... Ի՞նչ պահանջեց... Կարգադրեց պահանջել, որ...

— Նա կարգադրեց պահանջել, որ ես դառնամ թագուհի...

Օլիմպիան վերջապես ենթարկվեց կախարդանքին, և բառերն ակամա դուրս թռան բերանից։

Արքան գլխով արեց, ասես քաջալերելու համար և, իր գործն ավարտած համարելով, գնաց նստեց գահին։

— Ներիր, որ այսքան գլխացավանք եմ պատճառում քեզ,— արցունքն աչքերին, ծնկների վրա նետվեց Օլիմպիան։ — Ես դա քեզ երբեք չէի ասի, եթե չստիպեիր։

— Հիմա ի՞նչ պիտի անենք,— ինքն իրեն հարցրեց արքան։

— Ես նամակով կգրեմ կայսրին, շատ կխնդրեմ, որ նա հրաժարվի իր որոշումից։

— Դու ուզում ես ինձ հավատացնել, որ չե՞ս ցանկանում թագուհի դառնալ։ Ի՞նչ է, դու այս աշխարհից չե՞ս։

— Վախենում եմ, արքա։— Օլիմպիայի աչքերը լցվեցին ահավոր սոսկումով ու տագնապով։— Քո կանայք կթունավորեն ինձ։

— Չեն համարձակվի,— չգիտես ինչու, ժպտաց արքան։

— Թեև գիտեմ, որ իմ մահն անխուսափելի է, բայց այստեղ չեմ ուզում մեռնել, արքա,— պաղատանքով նրա ոտքերը գրկեց Օլիմպիան։

— Ի՞նչ տարբերություն, թե ուր են մեռնում,— քմծիծաղ տվեց արքան և փորձ չարեց Օլիմպիային գետնից բարձրացնելու։

— Ես ուզում եմ մեռնել այնտեղ, որտեղ ժամանակավոր բնակիչ չեմ լինի այլևս։

— Ես քեզ եմ նշանակում թագուհի։

— Մի արա, արքա...— հեծկլտաց Օլիմպիան և ավելի ամուր գրկեց արքայի ոտքերը։— Մի կործանիր ինձ...

— Դու ես իմ երկրի թագուհին։ Եթե իրո՞ք չես ուզում, ուրեմն, դարձիր։

— Դու հիմա կայսրին չես նսեմացնում, արքա... Ի՞նձ ես նսեմացնում... Ի սեր աստծո, իմ մեջ մի տեսնիր կայսրին... Ես եմ, արքա... Օլիմպիան... Քո կինը...— Եվ որպեսզի աղաչանքի իր խոսքերը առավել համոզիչ հնչեն նրա ականջին, նույնիսկ նախընտրեց ոչնչացնել իրեն ու ավելացնել.— Քո տգե՛ղ կինը...

Արքան կարեկցեց նրան։ Օլիմպիան երևի միակ մարդն էր պալատում, որն արժանի էր իսկական հարգանքի։ Բայց ար-

քայի վիշան/ու հոգսերը լիուլի բավական էին իրեն, մինչև կոկորդը հագեցած էր դրանց լեղի համով։ Օլիմպիայի ողբերգությունը ավելորդ բեռ էր նրա համար, նույնիսկ ջղայնացնում, չարացնում էր նրան, մի տեսակ անբացատրելի վստահություն ներշնչում իր ուժի ու առավելության հանդեպ։ Եվ կարեկցանքին հետզհետե փոխարինում էր դաժանությունը, այս թույլ և անօգնական արարածին տրորելու, ճզմելու հիվանդագին հաճույքը։ Այդ զգացողությունը արյան նման անուշահամ էր ու զզվելի։

— Ոչ, դո՛ւ պիտի դառնաս թագուհի,— վերջնականապես վճռեց նա ու կնոջ ձեռքերը կոպտորեն պոկեց իր ոտքերից։— Դո՛ւ պիտի նստես գահի կողքին... Կայսրը գոհ կմնա... Ես ու դու չենք կարող չենթարկվել նրա հրահանգին...

Նրանք չնկատեցին, թե ինչպես անաղմուկ գահասրահ մտավ Որմիզդուխտը, կանգնեց դռան մոտ, ականջ դրեց նրանց ու հեգնանքով ծռմռեց շրթունքները։

— Կայսրը մի բան գիտե, որ այդպես է հրամայել,— աչքերն արյունով լցված, շարունակում էր արքան և, նրան տանջելով, կարծես վրեժ էր լուծում աշխարհի վիճակից, ավելի ճիշտ՝ հենց ա՛յս պահի վիճակից։— Նա ամեն ինչ գիտե... Իսկ ես ու դու ոչինչ չգիտենք...— Գուցե և թույլ մարդ էր կայսրը, բայց ուժ ուներ ձեռքին։ Իսկ ինքը, որ ներքուստ հզոր էր զգում իրեն, ձեռքին ոչինչ չուներ։ Դու աշխարհի բանը տես ու մի կատաղիր։ Ու վրեժ մի լուծիր։— Չէ՞, դու պիտի լինես թագուհի... Մենք պետք է դուր գանք կայսրին... Պետք է նրա սիրտը շահենք... Սա է գրված իմ ու քո ճակատներին... Եվ մենք չենք կարող այդ ջնջել... Չենք հանդգնի...

— Ինչո՞ւ ես ինձ կործանում, արքա,— նրա ոտքերն ընկած, հեկեկում էր Օլիմպիան։— Ինչո՞ւ ինձ չես տեսնում...— Եվ նա արդեն կարոտում էր իր պատուհանը, պատուհանից երևացող տաղտկալի ու միօրինակ տեսարանը, իր տանջալի սպասումները։— Ի սեր Քրիստոսի, խնայիր ինձ... Ես քո կինն եմ, չէ՞...

— Արքան ճիշտ է վարվում, որ քեզ է ընտրում թագուհի,— հանկարծ լսվեց Որմիզդուխտի հանդարտ ու պաղարյուն

ձայնը։— Առայժմ Բյուզանդիան է հաղթում պատերազմում։

Արքան և Օլիմպիան քար կտրեցին։ Երկուսն էլ մի ակնթարթ անշարժացան անբնական կեցվածքով։ Հետո, ծնկների վրա ետ-ետ գնալով, Օլիմպիան փութով վեր կացավ ու շփոթմունքից գլխով բարևեց Որմիզդուխտին, նույնիսկ մի պահ ժպտաց։ Նա առաջին անգամն էր տեսնում պարսկուհուն, որը ճառագում էր գեղեցկությունից։ Չէ, Օլիմպիան նախանձել չգիտեր։ Նա կարողացավ գնահատել իր ախոյանի գեղեցկությունը ու հիանալ։ Եվ, ի տարբերություն ուրիշների, նա ոչ թե Որմիզդուխտին, այլ իրեն սկսեց ատել։

Արքան գազազած մոմռաց քթի տակ և, առանց ժամանակ կորցնելու, վեր թռավ գահից ու, լայն քայլեր գցելով, արագ մոտեցավ Որմիզդուխտին։ Երկար կանգնեց նրա մոտ, ոտքից գլուխ տնտղեց, ձեռքը տարավ վզին, սեղմեց մի փոքր, չգիտես՝ սիրելո՞ւ, թե՞ ցավեցնելու համար, հետո դանդաղ սահեցրեց ցած, դեպի կրծքերը, ապա կտրուկ ետ քաշեց։

— Այս գիշեր ես քեզ մոտ կգամ—ասաց նա հատ-հատ և աչքերը փակ, որպեսզի կարողանար զսպել կատաղությունը և պարսկուհու նման հանգիստ խոսել։— Եթե անկողնում ետ դու նույնքան ճարտար ես, որքան հիմա, ես քեզ նոր թույլ կտամ երբեմն հանդուգն լինել ինձ հետ։

— Շահը կարգադրեց, որ ե՛ս դառնամ թագուհի։

Արքան գլխով արեց։ Իհա՛րկե, պիտի կարգադրեր։ Շա՛հը, աշխարհի տիրակալը։ Կա՛յսրը, փոքրերի ահն ու սարսափը։ Բայց ես ի՞նչ գործ ունեմ նրանց միջև, ի՞նչ եմ անում նրանց ոտքերի արանքում, ո՞վ եմ ես, ի՞նչ եմ թպրտում ինքս ինձ, ո՞ւմ է պետք այս ամբողջ անհեթեթությունը։ Բոլորը կարող են կարգադրել իրեն։ Գոնե լավ է, որ կարգադրում են, խորհուրդ չեն տալիս յուրայիններին պես։ Եվ արքան նորից գլխով արեց։

— Բայց ես դա թողնում եմ քո հայեցողությանը, արքա, — կանացի ամբողջ հմայքը, ափի մեջ դրած, արքային մատուցեց Որմիզդուխտը։— Եղբորս կարգադրությունը ոչ մի արժեք չունի ամուսնուս կամքի առաջ։

Արքան զարմացավ ու նորից հիացավ, թե ինչպիսի անա-

մոթությամբ էր նա գեղգեղում իր շողոքորթ խոսքերը, այնքան բացահայտ, այնքան անսքող էր խորամանկում, որ թևաթափ էր անում, խեղճացնում էր լսողին։

— Գուցե կայսրը հրամայել է, որ առաջին գիշերը ես քեզ մո՞տ գամ,— չգիտես ինչու, արքան կատաղությունը թափեց լուռ ու մունջ մի անկյուն մտած Օլիմպիայի վրա։— Գուցե հրամայել է նաև, որ քեզ ամենագեղեցի՞կը համարեմ իմ կանանցից։ Ապա լավ հիշիր։ Իսկ եթե չգա՞մ ընդհանրապես։ Եթե չգա՛մ, չգա՛մ։— Ու նկատելով, թե ինչպիսի ներողամիտ ժպիտով էր Որմիզդուխտը նայում Օլիմպիային, արքան հանկարծ ցանկություն զգաց պաշտպանելու թույլին, որովհետև նրա նկատմամբ կարող էր միայն ինքը դաժան լինել, բայց ոչ ուրիշը։— Իսկ եթե քեզ մո՞տ էլ չգամ։ Եթե դու սա՞ն ես թվում ինձ։ Եթե սիրես քեզ չի՞ կպել։ Ի՞նչ է, կայսրը և ջահը գուցե գահընկե՞ց անեն ինձ։

Եվ պե՞տք էր, պե՞տք էր, որ հենց այս պահին գահասրահ մտներ հայոց թագուհին, այն էլ՝ թագը գլխին, այն էլ՝ հանդիսավոր օրերին պատեհ զգեստներով, վիզը, ուսերը և բազուկները բաց պատմուճանով, որը թեթևակի ճարմանդված էր թիակների վրա և վայելուչ խորշերով իջնում էր մինչև գետին։ Իսկ կոնակի՞ն ինչու էր գցել նրբահյուս կերպասե կրկնոցը։ Ո՞ւմ էին պետք ականջներից կախված գորշապահանգները, մարգարտաշար քայտն ու կամարը։ Եվ գույնե՛րը, գույնե՛րը։ Ընտանի համարվող երկու գույները։ Պատմուճանը՝ ծիրանի, մեկնոցը՝ երկնագույն։ Չէ, հաստատ վտանգի հոտ էր գալիս։ Արքան, երեք կանանցով շրջապատված, նստեց գահին, գլուխը դրեց թիկնակին և, իր վիճակին մի տեսակ հաշտված, մի տեսակ համակերպված, անշարժացավ, աչքերը սառեցին մի անորոշ կետի, ու նա, հոգնած մարդու պես, վերացավ աշխարհից։

Իսկ Փառանձեմը ոչ թե մտավ, այլ խուժեց գահասրահ։ Մինչդեռ զգեստները ուրիշ տեսակի քայլվածք ու պահվածք էին պահանջում, դանդա՛ղ, ձի՛գ, արժանապատի՛վ, հանդիսավո՛ր։ Այս հակասությունը է՛լ ավելի ազդեցիկ դարձրեց նրա մուտքը, և կանայք, նույնիսկ Որմիզդուխտը, վախից սկվեցին։

— Հրամայիր, թող սրանք դուրս գան այստեղից,— ասաց նա իր թավ ու տիրական ձայնով։— Նրանք հայոց թագուհուն երբեք ստորացած չեն տեսնի։ Քեզ տեսան, գոնե ինձ չտեսնեն։

Ապա, առանց շտապելու, թագը հանեց գլխից ու շպրտեց երկու կանանց առաջ։

— Վերցրեք, տարեք։ Բայց իրարից խլելիս, զգույշ, զարդերը չթափվեն։

Օլիմպիան, խեղդվելով ամոթից ու արցունքներից, դուրս վազեց գահասրահից, դեպի իր փրկությունը, դեպի իր պատուհանը, դեպի տաղտկալի ու միօրինակ տեսարանը, դեպի իր մենությունը։

— Եթե հայոց թագուհին այսքան գեղեցիկ չլիներ, իմ մեջ, անշուշտ, ոխ կմնար նրա հանդեպ,— ժպտադեմ ասաց Որմիզդուխտը, նազելիորեն կռացավ, գետնից վերցրեց թագը ու տարավ, դրեց արքայի ոտքերի առջև։

— Իսկ ես ուզո՞ւմ եմ, որ ոխ մնա քո մեջ,— գլուխը դիք պահած, պատասխանեց Փառանձեմը։— Այդ տգեղ կինը չի կարող ինձ նախանձել։ Բայց դու կարող ես։ Մի մոռացիր, օտարուհի, որ դու էլ ես գեղեցիկ։

Այսինքն՝ փորձանք է գեղեցկությունը։ Ով ավելի է գեղեցիկ, նրա գլուխն է առաջինը թռչելու, որովհետև նա է համարվելու ախոյաններից ամենավտանգավորը։

— Բայց դու ինձանից գեղեցիկ ես, Փառանձեմ,— սիրալիր և թունոտ ասաց Որմիզդուխտը, գլուխ տվեց նախ արքային, հետո՝ հայոց թագուհուն, ու ընդգծված դանդաղությամբ դուրս եկավ գահասրահից։

Իսկ արքան շարունակեց անշարժ նստած մնալ գահին, գլուխը՝ թիկնակին հենած, աչքերը՝ մի անորոշ կետի հառած, շրջապատից ու աշխարհից վերացած։

Երբ օտար կանայք հեռացան, Փառանձեմը թուլացած նստեց գահի պատվանդանին, մեջքով դեպի արքան, նրա ոտքերի տակ։ Թեև հանդիպումը խիստ կարճատև էր, բայց

լարումը շատ էր մեծ, և ուժերը գրեթե սպառվեցին։ Քիչ ուժ մնաց, չափազանց քիչ, և դա էլ պահում էր արքայի հետ վերջին կռիվը տալու համար։

Ի՞նչ էիր և ի՞նչ դարձար, Փառանձեմ։ Այս հարցը նա հաճախ էր ուղղում իրեն ու չէր կարողանում պատասխան գտնել։ Չէր ասում, թե սյունյաց Անդովկ իշխանի անհոգ և ուրախ դուստրն էր, որը հիմա տապակվում է ցավերի մեջ։ Չէր ասում նաև, որ սովորական մի արքայազուն իշխանի կինն էր, իսկ հիմա՝ հայոց թագուհի։ Նա հավասարապես չէր սիրում իր անցյալը, երբ աշխարհը վերջանում էր հոր ամրոցով, իսկ հորիզոնը՝ ամրոցի սուր-սուր ցցված աշտարակներով, և ներկան, երբ չես հասկանում՝ որտեղից է աշխարհն սկսվում և որտեղ է վերջանում։ Երևի այդ սահմանները պիտի պարզ ու որոշակի լինեն, որպեսզի գտնես ինքդ քեզ։ Եվ նա իր հարցի միակ հարմար պատասխանը համարում էր այն, որ էլ չի մնացել ցողունի պես բարալիկ առաջվա աղջիկը, տարիները խոր հետք են թողել, և նա գիրացել է բավականին... Միայն այսքան։

Չէ, չի սիրել արքային։ Բայց ոչ էլ ատել է։ Պարզապես նրա կարիքն է զգացել։ Ո՞վ է կրակը սիրում կամ ատում։ Կրակը պետք է սառած մարմինը տաքացնելու համար։ Ո՞վ է ատում կամ սիրում ջուրը։ Ջուրը պետք է խեղդող ծարավը հագեցնելու համար։ Նույնն էլ՝ այս մարդը, առանց նրա անհնար է ապրել։ Թող աստված նրան երկար կյանք պարգևի։ Ինչպես նաև՝ երաշտ տարի չտա մեզ, ցուրտ ձմեռ չբերի, երկնի փորձանքներից հեռու պահի ամենքիս...

Արքան լիուլի հատուցում էր իր պատճառած վնասները։ Շռայլորեն, առատաձեռնորեն։ Արդեն չէր ասում՝ կորուստները։ Հոգեկան կարգի բոլոր երևույթները առարկայացնում էր Փառանձեմը։ Չափում էր մարգարիտով, ոսկով, արծաթով, փառքով և իշխանությամբ։ Որովհետև ժամանակին նրա տառապանքը հավասար մեծ էր եղել։ Սովորական մահկանացուն, այն էլ՝ փխրուն ու երջանկության վարժված մի կին, չէր կարող դրան դիմանալ։ Կա՛մ պիտի գժվեր, կա՛մ անձնասպան լիներ։ Բայց ապրելու բնազդը նրան այլ ուղի էր հուշել։ Մի բան թողնել իրենից ու փախչել։ Ինչպես անտառի

գազաններն են վտանգի դեպքում մաշկից դուրս գալիս, պոչը թողնում կամ էլ մարմնի մի այլ մասը, միայն թե՝ փախչեն, միայն թե՝ ապրեն։ Նա թողեց իր սերը, իր անաղարտ անցյալը և իր մաքրության փոխարեն պահանջեց անասելի մեծ հատուցում, կոպիտ և առարկայական։ Դարձավ Հայաստանի առաջին կինը, հայոց աշխարհի տիկնանց տիկինը։

Արքան դանդաղ վեր կացավ տեղից, հոգնած ծերուկի պես ոտքերը դժվարությամբ ծալելով նստեց պատվանդանի աստիճանին, Փառանձեմի կողքին։ Տնքալով, մի փոքր առաջ թեքեց իրանը, կռացավ, գետնից վերցրեց թագը ու դրեց Փառանձեմի գիրկը։

— Դու պետք է օգնես ինձ,— կարծես հեռուներից, շատ հեռուներից լսվեց նրա խռպոտ ձայնը։— Ես հիմա միայն քո կարիքն եմ զգում։ Հավատա ինձ։

— Հավատում եմ։

Երկուսն էլ անշարժ նստած էին։ Չէին նայում իրար։ Հայացքները գամված էին դռանը, որն ուր որ է կարծես պիտի բացվեր, կիսամութի մեջ պիտի երևար ինչ-որ մեկը և պարզ ու հասկանալի հայերենով, բառերը հատ-հատ արտասանելով, պատասխան տար նրանց տանջող հարցերին։ Բայց ո՞րն էր հարցերի հարցը։ Եվ արդյոք նրանք գտե՞լ էին այն։ Որովհետև եթե գտնեին, դա արդեն ինքնին պատասխանի կեսն էր։

— Ես խճճվել եմ,— ամբողջ սիրտն ու հոգին կնոջ առաջ դատարկեց արքան։— Ահավոր խճճվել եմ։

— Հասկանում եմ, արքա։

— Շնորհակալ եմ քեզ,— ձեռքը կրծքին տարած, գլուխը հուզված կախեց արքան։— Երախտապարտ եմ։ Մինչև գետին խոնարհվում եմ քո առաջ։

Եվ նա իսկապե՞ս Փառանձեմի կարիքն էր զգում ամեն բանից ավելի։ Բոլորից շատ նրան էր հավատում։ Հատկապես հիմա, այս պահին։ Որովհետև նրան էր վնաս պատճառել։ Ու մի կարծր համառությամբ, մի տեսակ փշոտ կամակորությամբ պահանջում էր, որ հենց նա լիներ իր նեցուկը, հենց նա հասկանար իրեն։ Կարող էր Վասակին դիմել,

Դրաստամատին, անգամ Գնելին, փառք աստծո, հավատարիմ մարդիկ դեռ լրիվ չեն վերացել աշխարհի երեսից, բայց, չէ, Փառանձեմին էր ուզում, դժվար պահին՝ դժվարությամբ ձեռք բերվող օգնությունն էր նրան անհրաժեշտ։ Եվ չգիտես ինչու՝ ոչ տղամարդու, այլ կնոջ։ Քնքուշ, ի բնե մի փոքր անօգնական, ի ծնե փոքր-ինչ անպաշտպան կնոջ։ Իր միանուագար որդու մոր։ Դրա մեջ մեծ մխիթարություն կար, աստվածային մի հանգստություն, խաղաղ ու անծայրածիր դաշտերի իրիկնային անդորր։

— Մի՞թե այսքան տարին բավական չէր կողակցիդ ճանաչելու համար, —սառնությամբ ասաց Փառանձեմը, թունոտ քմծիծաղ խաղացնելով երեսին։— Եթե մի հոգու անգամ չհասկացար, էլ ինչպե՞ս պիտի մի ամբողջ երկիր հասկանաս։

— Փառանձե՛մ,— ապշեց և հուսախաբ եղավ արքան, թեքվեց դեպի կնոջ գիրկը, ծռեց գլուխը ու հարցական նայեց նրա աչքերին։— Ուրեմն, ծաղրո՞ւմ էիր ինձ։

— Եթե իմ որդին թագաժառանգ չլինի, ես էլ եմ աշակցելու, որ ճզմեն քեզ։

— Հասկացիր, Փառանձեմ, մեղքը ոչ իմ մեջ է, ոչ քո, ոչ էլ այդ կանանց... Մեզանից դուրս է...— Արքան բառերը ձգե՛ց, ձգե՛ց, որպեսզի իր խոսքերի ճշմարտությունը երկար հնչեր օդի մեջ, չխամրեր հանկարծ, չկորցներ համոզչությունը։— Ես հո չե՞մ կարող այդ երկու կանանց դուրս շպրտել... Ինձանից ու քեզանից մեծ հաշիվներ են այստեղ խառնված... Ամեն ինչ կանցնի, երկիրը կխաղաղվի, դու նորից կդառնաս թագուհի...— Եվ ինչքան որ ուժ ուներ, բռունցքը խփեց կրծքին։— Ես ա՛յդ եմ ուզում, ա՛յդ... Մի՞թե պարզ չի, որ ինձ հայ թագուհի է պետք... Դո՛ւ ես ինձ պետք...

— Դու ճիշտ ես, արքա։ Ես քեզ լրիվ հավատում եմ ու հասկանում։ Ինձանից ու քեզանից մեծ ուժեր են մեր դիմաց կանգնած։— Փառանձեմը խոսում էր դասը սերտած ջանասեր աշակերտի պես, սահուն ու թեթև։— Ես մտնում եմ քո դրության մեջ։ Քո փոխարեն ես էլ նույն կերպ կվարվեի։

Բայց ես հիմա՞ պետք է մնամ թագուհի։ Ինձ հիմա՞ էլ պետք է կոչեն տիկնանց տիկին։

Այսինքն, եթե քեզ հասկանալով եմ պահանջում, եթե վիճակդ գիտակցելով եմ պարտադրում, ուրեմն, որքան հաստատ եմ իմ խոսքի վրա։ Ու էլ մի փորձիր, մի ճգնիր, կաշվիցդ դուրս մի եկ ճշմարտությունն ինձ բացատրելու համար։ Ես գիտեմ այդ ճշմարտությունը, ինքս էլ կարող եմ լրացնել քո մտքերը, բայց, մեկ է, ես եմ մնալու քո երկրի թագուհին։ Այո, այսպիսի բուռ համառությամբ, այսպիսի կույր պնդաճակատությամբ։ Ե՛ս, և ուրիշ ոչ ոք։

— Ինձ մի ամիս ժամանակ տուր,— խնդրեց արքան։— Մինչև խելքս գլուխս գա։ Եթե մի ամսից խոստումս չկատարեմ, ես քեզ իրավունք եմ տալիս՝ ինչ ուզում ես արա։

— Իզուր ես խոստումներ շռայլում, արքա, —արհամարհանքով նրան պատասխանեց Փառանձեմը։— Եթե հիմա կծիկը չքանդես, մի ամսից հետո ավելի կխճճվես։

Նա գիտեր, որ ամուսինը բաց պայքարի մեջ էր մտել։ Անուժությունից։ Թե՛ ներքին, թե՛ արտաքին թշնամիների դեմ։ Խիստ անհավասար էին երկու կողմերը։ Այնքան անհավասար, որ դիվանագիտությունն ու խորամանկությունը անզոր էին նրան մաղաշափ իսկ օգնելու։ Մնում էր անթաքուն կռիվը։ Անիմաստ, խենթ, հուսահատական կռիվը։ Ամեն ինչ բաց, ուղղակի, ճակատային ու կոպիտ ձևով։ Աչքերն անթարթ՝ մահվան գնալով։ Անդունդը տեսնելով ու բանի տեղ չդնելով։ Դա էր ամենաճիշտ որոշումը, փրկության միակ ուղին։ Եվ հանկարծ ամուսինը նահանջում է այդ ուղուց, հանդուրժում է երկու օտար կանանց, խորամանկել է ուզում, դիվանագիտություն է խաղում, ջայլամի պես գլուխը խրթում է ավազի մեջ։

Փառանձեմն զգաց, որ պետք չէր այդ ամենը նրան բացատրել, նա հիմա ի վիճակի չէր որևէ բան հասկանալու, հարկավոր էր պարզապես նրան ճնշել ու ստիպել։

Եվ նա, իրեն հատուկ զարմանալի կարողությամբ, դարձյալ հաշտեցրեց, դարձյալ համատեղեց հակասական դրդապատճառները, զգացմունքներն ու մտքերը՝

սեփական իշխանությունը, որն իր երբեմնի երջանկության միակ նյութեղեն հատուցումն էր.

հայրենիքի սերը ու երկրի թշվառ վիճակը.

և, վերջապես, մայրական եսասիրությունը, որդուն պաշտպանելու, նրա ժառանգական իրավունքները պոկելու բնազդը։

Նա ներդաշնակություն մտցրեց այս երեքի մեջ, այնպես արեց, որ մեկը բխեր մյուսից, երկրի բախտը, իր իշխանությունը, որդու ապագան շաղկապեց իրար, ու ամեն ինչ տեղն ընկավ։ Առանց ճիգի, առանց կասկածների, առանց ինքն իր հետ կռիվ մղելու, խաղաղ ու հանգիստ ճանապարհով։

—Մի ամիս, միայն մի ամիս,— շարունակում էր խընդրել արքան, հուսահատված, որ իր հաշիվները ի դերև ելան։ Իսկ նա գիտեր, որ ինչքան Փառանձեմի դաշնակցությունն էր օգտակար ու շահավետ, նույնքան էլ վնասաբեր էր նրա թշնամությունը։ Երբեմն մի հոգին կարող է ավելի մեծ աղետ բերել, քան թշնամու մի ամբողջ բանակ։ Մանավանդ, եթե այդ մի հոգին... թույլ արարած է։ Եթե կին է։— Մի՞թե չես կարող զոհել մի ամիսը։ Չէ՞ որ եթե զոհես, ավելին կստանաս։ Շատ ավելին, քան ունես հիմա։

— Օրինակ ի՞նչ,— հետաքրքրություն ցուցաբերեց Փառանձեմը։

— Ես քեզ համար առանձին պալատ կկառուցեմ, որտեղ որ կամենաս,— նրա հարցից ոգևորվեց և ուժ առավ արքան։— Ես կկատարեմ քո ամեն մի ցանկությունը։ Ամեն մի քմահաճույքը։ Միայն թե դիմացիր մի ամիս։ Մի՛ ամիս։

— Ուրեմն, մեր մարմիններից հոսած քրտինքը սառն է եղել, ուրեմն, մեր հոգնությունն անկողնում չի եղել եռանավետ ու ազնիվ,— մահացու վիրավորված, մինչև հոգու խորքը խոցված, օձի պես սուլեց ու ֆշշաց Փառանձեմը։— Առևտուր մի արա։ Մի պղծիր մեր գիշերները։ Մի հայհոյիր մեր ազնիվ տնքոցները։

— Փառանձեմ...

— Այլապես դու կճանաչեիր ինձ ու կհասկանայիր, որ չես կարող հույս դնել իմ անձնազոհության վրա։ Զգուշաց-

նում եմ, եթե այսօր ևեթ թագը չվերադառնա ինձ, համարիր, որ Արշակունյաց տոհմի կործանումը հենց այս պահից սկսվեց։

Նա վեր կացավ և հպարտ-հպարտ, գլուխը ցից, ամուսնուն հաղթած ու ստորացրած, ուղղվեց դեպի գահասրահի դուռը։

Արքան ամոթից գետինն էր մտնում։ Նա մինչև մազերի ծայրը կարմրել էր ու քրտնել։ Իրեն լրիվ ոչնչացած էր զգում։ Կարծես նրան հանդգնել էին մի սուրբ և նվիրական գաղտնիք խոստովանել, երդվել էին չխնդալ վրան, իսկ խոստովանությունը կորզելուց հետո ծիծաղել էին երեսին ու ձեռք առել։ Ինչպե՞ս հավատաց, որ կարելի էր կաշառել այս կնոջը, պալատ կառուցելու, նրա բոլոր ցանկություններն ու քմահաճույքները կատարելու խոստումով գնել նրան։ Եվ հիմա նա իրեն լրիվ մերկ էր զգում ամբոխի առաջ, ոտքից գլուխ խայտառակված ու անպատվված։

— Գուցե մտքովդ անցնում է սպանե՞լ ինձ,— հանկարծ դռան մոտ շրջվեց ու արհամարհանքով հարցրեց Փառանձեմը։— Իզո՞ւր։

Ի՞նչ իզուր։ Այսինքն՝ չե՞ս կարող։ Թե՞ ինձ սպանելով, ինչ-որ բան ես կորցնում։ Բայց ի՞նչ։ Թե՞ պարզապես կողջաս, խիղճդ կտանջի։ Ի՞նչ իզուր։ Ի՛նչ, ի՛նչ, ի՛նչ։ Նա տենդագին կերպով առնում-տալիս էր մտովի, բարդ հաշիվներ անում, քննում, վերլուծում։

Ի վերջո, միայն մի բան կռահեց։ Այս կնոջը չէր կարելի թույլ տալ, որ հենց այսպես հեռանար։ Այլապես, Արշակունյաց տոհմի կործանումը իսկապես որ հիմա կսկսվի։ Նա միանգամայն հավատում էր նրա սպառնալիքին և ավելի շատ էր վախենում նրանից, քան իր բոլոր ներքին թշնամիներից՝ միասին վերցրած։

Եվ միայն հիմա, այս անպատեհ ակնթարթին, երբ այսքան շփոթված էր ու իրեն կորցրած, այսքան ստորացած ու նվաստացած, այսքան խճճված ու խեղճացած, նա զգաց, որ սիրում է Փառանձեմին։ Որովհետև հասկացավ, որ չի կարող նրան սպանել։ Ձեռքը չի բարձրանա, կքարանա ոգում։ Մի գիշերվա մեջ կծերանա։ Երկրի բախտը կթվա չնչին, ան-

կարևոր մի մանրուք։ Ինքն էլ կկործանվի և բալարին կկործանի իր հետ։ Չի կարող, չէ, չի կարող արքունիքի մեջ գտնահելի «դեղամիջոցը» օգտագործել, մեջտեղից վերացնել խոչընդոտը։ Երկինքն է վկա, երկիրն է վկա, իր սիրտն ու արևն են վկա, որ սիրում է նրան։ Բայց Փառանձեմը չգիտի, փաստ տիրոջ, չգիտի, որ արքան սիրում է իրեն։ Թե չէ արդեն ոչ մի բանի առաջ կանգ չի առնի, սանձերը լրիվ բաց կթողնի, և թուրը կսկսի աջ ու ձախ կտրել։ Գուցե դրա՞ համար ասաց «իզուր»։ Ոչ, ոչ, նա ոչինչ չգիտի։ Չէ՞ որ ինքն էլ չգիտեր։ Հիմա միայն իմացավ։ Միայն հիմա այդ մասին խոսեց ինքն իր հետ։ Այդ լուրը, գուժի պես, բոթի նման, հաղորդեց իրեն։ Ուրախանա՞, թե՞ տխրի։ Աստված իմ, ի՞նչ անի այդ հայտնության առաջ։ Եթե սպանել չի կարող, ուրեմն, ուրիշ միջոցի պիտի գիմի, ուրիշ զենք պիտի հնարի։ Միայն թե՝ շո՛ւտ, շո՛ւտ, քանի դեռ չի դուրս եկել դռնից։

— Ես չեմ վախենում քեզնից, Փառանձեմ,— հանգիստ ասաց արքան։

— Ստո՛ւմ ես,— նրա խոսքերից թուլության հոտ առավ Փառանձեմը։— Այն էլ ինչպե՞ս ես վախենում։

— Դու ինձ ոչ մի վտանգ էլ չես կարող սպառնալ,— անվրդով շարունակեց արքան։

— Ստո՛ւմ ես։ Դու միայն իմ վրեժից ես վախենում։

— Իմ մտքով երբեք չի անցել քեզ սպանել։

Եվ, ինչպես միշտ, փոթորկից առաջ, նա կռացավ, քանդեց խրացավոր մաշիկների ժապավենները և նորից կապեց։

— Էլի ես ստում։ Ես քեզ համար նույնքան վտանգավոր եմ, որքան շահն ու կայսրը։

— Ես քեզ կհաղթեմ, Փառանձեմ,— անշարժ ու հոգնած ծիծաղեց արքան։

— Չես կարող։ Մեկ է, իմ որդին է նստելու քո գահին։ Ուրիշ ոչ ոք։

Եթե չլիներ վիճակի լրջությունը, արքան նույնիսկ հաճույք կստանար այս ընդհարումից։ Կարոտ էր զգում մարդ ու կնոջ տնական վեճերի, որոնք նրան թվում էին ընտանեկան երջանկության ու հանգստակեցության խորհրդանիշ։

Բայց ո՞ւր է տունը։ Այս հսկա պալա՞տը։ Սա ոչ թե տուն է, այլ իշխան, որտեղ նա ժամանակավոր բնակիչ է։ Ո՞ր մի հայ թագավորն է մինչև իր բնական մահը ապրել այս պալատում։ Խոսրով Կոտակի պես բախտավորներին մատների վրա կարելի է հաշվել։ Ի՞նչ տուն, եթե մինչև հիմա ինքը չգիտի պալատի բոլոր ծակուծուկերը։ Պարզվում է, որ թագավորը չունի դրա իրավունքը։ Վայել չէ նրան ամեն տեղ քիթը խոթելու։ Իսկ կի՞նը, ո՞ւր է կինը։ Ի՞նչ կին, եթե նրա ձեռքից մի ման ճաշ էլ չի կերել, եթե նա մի հասարակ եղաձու էլ եփել չգիտի, եթե կյանքում թեկուզ մի անգամ շորերն էլ չի լվացել։

— Դու դեռ զզջալու ես քո արարքի համար։ Դու դեռ շատ ես հիշելու քո մայրամուտի օրը։

— Գնելը ողջ է, Փառանձեմ։

— Ի՞նչ Գնել։

— Գնելը։ Քո նախկին ամուսինը, որին ավելի ես սիրում, քան ինձ։

— Ի՞նչ Գնել։

— Նա, ումից դու վրեժ լուծեցիր, ամուսնանալով նրա դահճի հետ։

Փառանձեմը քարացավ։ Իսկ այն ամենն, ինչ տարիներ շարունակ եղել են իսկապես քարացած, ինչպես այս գահասրահը, ինչպես այս բարձր գահը, պատվանդանը, հովազի մորթիները, պատերից կախված եղջերուի և վարազի գլուխները, սրերը, դաշույնները, աղտեներն ու տեգերը, հնգաստեղ ու եռաստեղ ձիթավառ ջահերը, ինչպես այս գահույքները, ծածկոցներն ու փռվածքները, կերպաս ու մետաքս վարագույրները, բոլո՛ր, բոլո՛ր, սկսեցին խելահեղ պտույտ գործել, ըստ որում՝ ոչ նույն ուղղությամբ, ոչ միասնաբար, դրանցից ամեն մեկն իր ինքնուրույն շրջանն էր գծում, հակասելով ու բախվելով մյուսին։

— Ի՞նչ Գնել,— նվաղած ձայնով կրկնեց նա ու փակեց աչքերը։ Բայց շարժումը չդադարեց։ Նույն թափով շարունակվեց մտապատկերի մեջ։

Փառանձեմը երկու ձեռքով հենվեց դռանը ու անաղմուկ ցած սահեց։

— Ե՞րբ ես ուզում նրան հանդիպել,— ընդգծված գործնականությամբ նրան դիմեց արքան։

— Սո՛ւտ է,— հանկարծ, չարությամբ ու մաղձով լցված, դոռաց Փառանձեմը, ինքն իր համար հաստատ որոշելով, որ դա չի կարող իրականություն լինել, որ դա չպետք է ճշմարտություն լինի։— Դու հնարում ես... Դու վախենում ես ինձանից...

— Ե՞րբ ես ուզում հանդիպել։ Գուցե վա՞ղը։

— Դու փորձում ես բթացնել իմ վրեժը...

— Ո՞ւր ես ուզում հանդիպել։

— Դու ճգնում ես ժամանակ շահել...

— Որտե՞ղ է քեզ հարմար։

— Նա չկա... Երդվո՛ւմ եմ, չկա... Դու էլ գիտես, որ չկա...

— Վաղը, վաղը կհանդիպես նրան։

— Ես ատում եմ քեզ... Քո ծնունդը... Քո մորը...

— Վա՛ղը, վա՛ղը, վա՛ղը...

Արքան նոր միայն պոռթկաց ու անձնատուր եղավ դաժանությանը։ Առանձնապես չցանկանալով այդ։ Մի տեսակ իրենից անկախ։ Կարծես հոսանքը քշեց ու տարավ նրան։ Այլևս ուժ չուներ դիմադրելու։ Նույնիսկ գլխավոր նպատակը, Փառանձեմին խեղճացնելն ու չոքեցնելը, երկրորդական էր դարձել։ Առաջնայինը դաժանությանը հագուրդ տալն էր, ինքնաբավ անողոքությունը, որը ձնագնդի պես գլորվում էր սարից ու անընդհատ մեծանում։ Եվ որքան էլ տարօրինակ լինի, նա գլխի ընկավ դրա պատճառը։ Հասկացավ, որ խղճում էր Փառանձեմին։ Եվ նրան խղճալուց էր չարանում, կարեկցելուց էր սիրտը քարանում։

— Վա՛ղը,— ծանր ու դժվար շնչելով, կրկնեց նա։

Փառանձեմը ձեռքերը պոկեց դռնից, վեր թռավ և հուսահատ մոլեգնությամբ, արդեն հավատալով արքայի խոսքին, հենց սկզբից հավատացած, հարձակվեց ամուսնու վրա, եղունգները մխրճեց նրա պատմուճանի մեջ, ավելի շատ ինքը ցավ կրելով, քան պատճառելով։

— Ես քեզ հանգիստ կթողնեմ... Ինչով ուզում ես երդվեմ... Բայց ասա՛, որ ատում ես... Աղաչում եմ քեզ...

Ասա՛... Չե՞ս տեսնում, որ ես պարտված եմ... Ասա՛, ասա՛...

— Վաղը կհանդիպես նրան։ Գնելը քեզ ճիշտ խորհուրդ կտա։ Նա քեզ կասի ինչ անել։

Արքան իր պատմուճանից գժվարությամբ պոկեց նրա ձեռքերը ու մի կողմ հրեց նրան։ Փառանձեմը, լաթի պես, ամբողջ մարմնով փռվեց գետնին և, շրթունքներն ամուր խածոտելով ու արյունելով, սկսեց խեղդված հեկեկալ արքայի ոտքերի տակ։

Նա հիմա ատում էր Գնելին։ Ավելի, քան արքային։ Եվ մտովի աղերսում էր աստծուն, որ Գնելը մեռնի։ Կենդանի՞։ Գնելը կենդանի՞։ Ի՞նչ Գնել։ Գնե՞լն ով է։ Հեռավոր երազ, մղձավանջային տեսիլք, քաղցր խաբկանք։ Չէ, նա պետք է մեռնի։ Արքան ինքը կսպանի նրան։ Թող աստված ուժ տա այս նողկալի մարդու բազուկներին։ Եվ նա զգաց, որ արքային չհամակրելով հանդերձ, ավելի նրան է գողմնակից, քան իր երբեմնի սիրեցյալին։ Ու սիրտը բոլորովին չմղկտաց դրա համար։

— Պարսիկները Ամիդի մոտ վճռական հաղթանակ են տարել, արքա,— շատ հեռվից, կարծես մշուշների միջից, լսվեց սենեկապետ Դրաստամատի ձայնը։— Գլխավոր ջարդել են բյուզանդացիներին։

— Սխալվեցի,— մռնչաց արքան և, ձեռքը բռունցք կազմած, ուժգին խփեց մյուս ձեռքի ափին։— Սխալվեցի, Դրաստամատ։

— Կայսրը եկել, արտասվել է կործանված քաղաքի ավերակների վրա,— ուշադրության չարժանացնելով արքայի ապրումները, Դրաստամատը շարունակեց իր պարտականությունը կատարել ու իմացած տեղեկությունները մինչև վերջ բարեխղճորեն հաղորդեց նրան։

— Պետք էր Որմիզդուխտին թագուհի դարձնեի,— հայացքը Փառանձեմին սևեռած, խորապես զղջաց արքան։ Թող այս հիմար կինը հասկանար, որ հարցերը շատ ավելի բարդ են, քան կարծում էր նա։— Բայց ոչ մի խոսք պարսիկների հաղթության մասին։

Փառանձեմը լռել էր ու ականջ դրել տղամարդկանց խո-

նակցությանը։ Նա գլխի ընկավ, որ իր պարտությունը կատարյալ էր։ Ոչ թե նրա համար, որ ինքը թույլ էր, իսկ արքան՝ ուժեղ, այլ որովհետև մի մեծ ու բնական աղետի գոյությունն էր կռահել։

Նա մաս առ մաս հավաքեց իր մարմինը, մի կերպ վեր կացավ ու, մեկնոցը գետնին քարշ տալով, առանց որևէ մեկին նայելու, դանդաղ ու երերուն քայլերով դուրս եկավ գահատրահից և փակեց դուռը։ Մեկնոցը մնաց դռան արանքում։ Քաշեց, քաշեց, բայց չկարողացավ հանել։ Սիրտ չարեց դուռը կրկին բացելու։ Թողեց մեկնոցը ու հեռացավ։

Դրաստամատը հիմար կացության մեջ ընկավ։ Նա իր հանձնառությունը լիուլի կատարեց, հաղորդեց բոլոր տեղեկությունները, բանի տեղ չդնելով, որ տակնուվրա արեց արքայի սիրտը։ Այդ անտարբերության մեջ ոչ մի դիտավորություն չկար, պարզապես փոխադարձ զգայական ապրումները գուրս էին նրա պարտականության շրջանակներից։ Եթե պահանջեին, այդ էլ կաներ, գուցե և ոչ պակաս հաջողությամբ, բայց պահանջող չէր եղել։

Հիմա նա արձանի պես կանգնել էր տեղում ու չէր հեռանում։ Սովորաբար արքան նրան դուրս չէր հրավիրում, Դրաստամատը ինքն էր որոշում, թե որ պահին պիտի գնա։ Նա նույնիսկ գիտեր, թե երբ պիտի ներս մտնի, մի բան, որ շատ ավելի գժվար էր։ Ահա թե ինչու, արքային չզարմացրեց, որ նա շարունակում էր կանգնած մնալ գահի կողքին։

Բայց նա չէր խոսում, բոպեները տանջալիորեն ձգվում էին, և ոչ մի հնչյուն գուրս չէր գալիս նրա բերանից։ Արքան, ի վերջո, կտրվեց իր խորը մտքերից ու հարցական նայեց սենեկապետին։

— Մի խնդրանք ունեմ, արքա,— բառերն ունելիով մեկ առ մեկ դժվարությամբ պոկվեցին նրանից ու անճարակ շարվեցին կողք կողքի։

— Ասա, սենեկապետ։ Դու գիտես, որ ես չեմ մերժի քեզ։

— Ապատ արձակիր ինձ...

— Ազատ ես։ Բարի գիշեր։

Դրաստամատը չշարժվեց։ Սա արդեն ավելի քան տարօրինակ էր։ Արքան զարմանքով դարձյալ նայեց նրա ոչինչ չարտահայտող դեմքին և ինչ-որ բան կռահեց։ Ու ակամա մտածեց՝ ո՞վ էր Դրաստամատը, ի՞նչ էր անում իր ազատ ժամերին, ունե՞ր արդյոք սիրուհի, բարեկամներ, ազգականներ։ Եվ մի՞թե նրա դեմքը երբեք չէր փոխվում, հայացքը ոչինչ չէր ցույց տալիս։ Իսկ երբ պառկո՞ւմ էր հարճերի հետ։ Իսկ երբ ուրախանո՞ւմ էր կամ տխրո՞ւմ։ Երբ մի թաս գինի՞ էր խմում։ Երբ որևէ տե՞ղն էր ցավում։ Արքան շատ կուզենար գոնե մի անգամ տեսնել նրա հայացքի փոփոխությունը, որպեսզի ավելի լավ ու ավելի մոտիկից ճանաչեր նրան։ Որովհետև սիրում էր սենեկապետին, անսահմանորեն հավատում էր նրան և չէր պատկերացնում իր կյանքը առանց նրա ներկայության։

— Ընդմի՞շտ,— անհանգստացած հարցրեց արքան։— Ինչո՞ւ։ Մի՞թե էլ չես ուզում ինձ ծառայել։

— Ես այլևս պետք չեմ քեզ, արքա։

— Ինչպե՞ս թե պետք չես,— ջղայնացավ արքան։— Ո՞վ այդ մասին ավելի լավ գիտե, ե՞ս, թե դու։

— Ես,— համարձակ պատասխանեց Դրաստամատը։

— Բայց ինչո՛ւ, ինչո՛ւ։

— Որովհետև Գնելը փոխարինեց ինձ, արքա։

— Գնե՞լը։ Բայց նա ի՞նչ կապ ունի քեզ հետ։

Դրաստամատը որոշեց անցնել իր առօրյա պարտականություններին, մինչև վերջ արքային հայտնել այն ամենն, ինչին տեղյակ էր ինքը։ Միայն մի բան էր անսովոր։ Այսօր նա պատմելու էր իր մասին։ Նա երբեք իր անձը առաջ չէր մղել արքայի ներկայությամբ, ընդհակառակը, ամեն կերպ աշխատել էր թաքցնել այն։ Երբեք իրեն վերաբերող հարցով չէր դիմել արքային, թեև վստահ էր եղել, որ նա դրական լուծում կտար իր բոլոր խնդրանքներին։ Իսկ այսօր ստիպված էր։ Ուրիշ ելք չուներ։ Անսովոր էր նաև այն, որ նա հիմա պատմելու էր ոչ թե իր հետ կապված որոշակի մի խնդրի կամ դիպվածի, այլ իր հոգեվիճակի մասին։ Եվ նա սկսեց պատմել, ավելի ճիշտ՝ տեղեկություն տալ իր ապ-

ռումներից, նույն անկիրք ու անհույզ տոնով, ամենանվիրական զգացումներն ու խոհերը վերածելով ընթացիկ լուրի։

— Ես սովոր էի մեծ ու անփոխարինելի զգալ ինձ։ Համեստ, գլուխս կախ, քայլում էի պալատում, բայց ներքուստ հպարտ էի և մտովի ծիծաղում էի բոլորի վրա, նույնիսկ նախարարների, որովհետև ոչ ոք չգիտեր, որ արքան միայն ինձ է վստահում։ Իմ ոչնչությունը արժեք ուներ քո կողքին։

— Բայց դա ի՞նչ արժեք է, Դրաստամատ, եթե ուրիշները չգիտեն։

— Բայց ե՛ս գիտեի։ Եվ դո՛ւ, արքա։ Մի՞թե երկու հոգին բավական չեն։

— Եվ դու հեռանո՞ւմ ես ինձանից։

— Այո, արքա։ Ես համոզված եմ, որ Գնելը քեզ ավելի է պետք։

Արքան կռահեց, որ Դրաստամատը անձնական կյանք չուներ։ Նա ոտքով-գլխով, իր ամբողջ էությամբ նվիրված էր արքային։ Եվ լավն այն էր, որ այդ նվիրումը ոչ մի կապ չուներ որոշակի անձի հետ, այլ ընդհանրապես՝ արքայի։ Եթե իր փոխարեն մեկ ուրիշը լիներ, Դրաստամատը նույն կերպ կծառայեր։ Ուրեմն, դա ոչ թե մարդկային կապ էր, այլ գործ, որ նա հասցրել էր մասնագիտության աստիճանի։

— Ես ավելի հզոր էի, քան քո նախարարներից որևէ մեկը,— պարտաճանաչորեն նա մինչև վերջ բացեց սիրտը, որպեսզի տերը հանկարծ ինչ-որ բանի անհազորդ չմնար— Գահնամակում ես առաջին տեղն էի զբաղեցնում միշտ։ Հետո՞ ինչ, որ դա այդպես չէր։ Բայց իմ զգացողությունը ես չեմ փոխի ամենաիրական փաստի հետ։

— Հետո՞, Դրաստամատ, հետո՞։

— Ես նույնիսկ ուրախ էի, որ դա այդպես չէր։ Որովհետև բուն իրականությունը միայն ես գիտեի։ Ուրիշ ոչ ոք։ Եվ այս ամենի համար ես քեզ եմ պարտական, արքա։

— Եթե դա քո երազանքն էր, ես իմ դաստակերտներից մեկը քեզ կնվիրեմ ու իշխան կկարգեմ քեզ։

— Ոչ, արքա, երազանք չէր։ Ավելի մեծ բան էր։ Ես խորապես շնորհակալ եմ առաջարկիդ համար, բայց չեմ

ուզում իշխան դառնալ։ Խնդրում եմ, ազատ արձակիր ինձ։

— Բայց դա ի՞նչ կապ ունի Գնելի հետ։ Դու քո տեղն ես զբաղեցնում, նա՝ իրը։ Ինչո՞վ նա կարող է քեզ խանգարել։

— Նա քո հավատն է, արքա։ Քո երկրորդ եսը։ Եվ ավելի կատարյալ, քան դու։

— Բայց ես նրան չեմ սիրում, Դրաստամատ։ Նույնիսկ վախենում եմ նրանից։ Կարո՞ղ ես ասել՝ հապա ի՞նչն է ինձ կապում նրա հետ։

— Որպես մարդ նա գոյություն չունի, արքա։ Դու քո ներկայությունն ես սիրում նրա մեջ։ Քո մտքերն ու երազները։ Քո լավագույն կեսը։ Թուլություններից ազատված քո երկրորդ անձը։

Արքան գիտեր, որ Դրաստամատն այն մարդկանցից չէր, որոնց կարելի էր համոզել, խնդրել կամ ստիպել։ Նա այլևս անելիք չուներ այս պալատում, որովհետև այն, ինչին ձգտում էր, մեկ ուրիշն ավելի գերազանց էր կատարում։ Եվ դա խանդ չէր, նա պարզապես իմաստազրկված էր համարում իր գործը։

— Գնա, սենեկապետ,— տխրությամբ և հուզմունքով ասաց արքան։— Ես քեզ ազատ եմ արձակում։

— Շնորհակալ եմ, արքա։ Ես գիտեի, որ դու կհասկանաս ինձ։

— Բայց ես սովոր էի քեզ... Առանց քեզ ես շատ մենակ կլինեմ...

Դրաստամատը բարձրացավ պատվանդանի աստիճաններով, շոքեց գահի առջև և համբուրեց արքայի ձեռքը։ Արքան գրկեց նրան, սեղմեց կրծքին, ու թվաց, թե սենեկապետի աչքերը խոնավ էին։ Այսքան տարվա մեջ միայն մի անգամ, այն էլ՝ բաժանման վերջին պահին, նա փոխված տեսավ իր հավատարիմ սենեկապետի, իր սիրելի Դրաստամատի դեմքը։

Դրաստամատը թույլ չտվեց, որ արքան երկար զբաղվի իրենով։ Անմիջապես վեր կացավ, գլուխ տվեց ու դուրս եկավ գահասրահից։

Արքան ճամփու դրեց նրան։

Ընդունարանի դռանք կանգնած, նայում էր, թե ինչպես

է վիթխարահասակ Դրաստամատը հեռանում ստվերներով լի լիսամութ ու երկար միջանցքում։ Ձիգ ու շիտակ մարմնով, նրա նորից սառը ու անկենդան հայացքով, մեծ ու անշտապ քայլերով։

Ահա ուր որ է նա կհասնի ասանդուղքներին, կթեքվի ու կանհետանա տեսողությունից։

— Սենեկապետ,— հանկարծ կանչեց արքան։

Դրաստամատը կանգ առավ, շրջվեց միջանցքի հեռավոր ծայրում ու նայեց իր տիրոջը։

— Հը՞, ի՞նչ եղավ, ի՞նչ կատարվեց, ի՞նչ հասկացար, Դրաստամատ։

— Դու մենակ մնացիր, արքա,— իր վերջին լուրը հաղորդեց սենեկապետը՝ նախկին անհույզ ու անկիրք տոնով։ Եվ որպեսզի ոչ մի բաց ու անկատար տեղ չմնա, նա ճշտեց ու լրացրեց տեղեկությունը.— Քո ծառան էլ քեզ լքեց։

Գլուխ քսաներորդ

Թորոսն ով է։ Ի՞նչ մարդ է Թորոսը, որ նրա հարցը ընդհանուր հետաքրքրության առարկա դառնա։ Մինչև մենամենակ ու դեմ առ դեմ չհանդիպես, չես նկատի նրան։ Եթե կողքին թեկուզ մի հոգի էլ լինի, նա կկորչի, կձուլվի տներին ու ծառերին։ Անհետանո՞ւմ է գիշերները։ Լավ է անում, ո՞ւմ ինչ գործն է։ Ինչքան էլ ճլորած-մլորած լինի, էլի տղամարդ է, իր տղամարդկային հաշիվներն ունի։ Եվ ի՞նչ լուրջ-լուրջ դեմքերով էլ շրջապատել են նրան Արշակավանի սահմանի մոտ և ի՞նչ շարությամբ էլ հարցաքննում են իրենց ընկերոջը, ինչպիսի՞ կրքով ու խանդով։ Եթե այդ եռանդի թեկուզ մի փոքր մասը քաղաքի կառուցմանը նվիրեին, մտածեց ականատեսներից մեկը՝ Գնելը, Արշակավանը վաղուց ոտքի կանգնած կլիներ։

Գնելը, որ Արշակավանի բնակիչների մեջ աչքի էր ընկել իր հսկայական ավյունով ու անմնացորդ նվիրումով, նշա-

նակվել էր քաղաքի կառավարիչ Վարազ Գնունու տասը օգնականներից մեկը։ Վարազ Գնունին շատ էր սիրում իր պաշտոնը ու հպարտանում էր դրանով։ Ամբողջ կյանքում ոչ այնքան հարստության էր ձգտել, որքան՝ պաշտոնի։ Եթե սպասավոր էլ ծնվեր, միևնույն է, սպասավորների՝ ղեկավարն էր լինելու, այլ կերպ չէր պատկերացնում իր անձը։ Բայց նույնքան սիրում էր նաև, երբ իր պարտականությունները ուրիշներն էին վերցնում։ Ու նա մեծ պարտրաստակամությամբ դրանք տալիս էր իր օգնականին։ Եվ օգնականն էլ ագահաբար վերցնում էր, այլևս չվերադարձնելու հաստատ մտադրությամբ։

Գնելը դարձավ Արշակավանի շունչն ու ոգին։ Օր ու գադար չուներ։ Արթնանում էր բոլորից վաղ և բոլորից ուշ քուն մտնում։ Որտեղ նոր բան էր կառուցվում, նա այնտեղ էր։ Որտեղ վեճ էր ծագում, նա ներկա էր՝ ընդհարումը հարթելու և արդարությունը վերականգնելու համար։ Եթե որևէ տեղ ինչ-որ բան կարգին չէր, անմիջապես հայտնվում էր նա։ Զարմանալի հոտառություն ուներ, թե ինքը երբ և որտեղ էր պետք։ Նա էր բաժանում արքունիքից ստացված մթերքը, հետևում Արշակավանի կարգուկանոնին, հոգում քաղաքի հսկողության մասին։ Նա էր ղեկավարում շինարարական աշխատանքները, ոչ միայն ղեկավարում էր, այլև ինքն էլ քափ-քրտինք մտած մասնակցում։ Թերևս դա էր պատճառը, որ ինչ-որ չափով մեղմանում էր նրա հանդեպ համատարած դարձած հակակրանքը։ Նա նստում էր իր սպիտակ ձիու վրա, կոշտ և ուղիղ մազերը գունատ դեմքին ընկած, ձեռքին մի մտրակ, որ հարկ եղած դեպքում անխնա օգտագործում էր, պատժում ծույլերին ու անբաններին, նույնիսկ նրանց, ովքեր ոչ թե հասարակական շինությունների, այլ իրենց սեփական տների վրա էին դանդաղ աշխատում։ Կարող էր կեսգիշերին ներխուժել որևէ հոլիկ, ուտքով հրել, վեր կացնել խոր քուն մտած ռամիկներին ու, մտրակի սպառնալիքի տակ, ստիպել, որ ծերից մինչև մանուկ գնան և շարունակեն աշխատանքը իրենց տան վրա։ Հետո, ստեպ-ստեպ, ձի նստած, գալիս ստուգում էր, երբեմն ինքն էլ էր օգնում, լծվում ամենածանր գործերին և

միայն առավոտվա կողմը թույլ տալիս կարճատև ընդմիջում անելու։

— Ո՞ւր ես կորում գիշերները,— շարունակում էին վրա տալ Թորոսին։— Հապա եթե քեզ մի բա՞ն պատահի։ Ո՞վ պիտի պատասխան տա։ Ո՞ւմ օձիքից պիտի բռնեն։

— Մե՛ր, մե՛ր,— անձնազոհության առատությունից խեղդվելով, հենց իրենք էլ պատասխանում էին իրենց հարցին։

Գնելը զարմացավ, թե ինչպիսի շարությամբ էին նրանք ցուցաբերում իրենց հոգատարությունը։ Եթե ձեռքներին ճար լիներ, սիրուց բզիկ-բզիկ կանեին նրան։

Երբ շրջապատի հարձակումները հետզհետե ավելի սրվեցին, Թորոսը հանկարծ պպզեց, անշարժ մնաց մի պահ, ապա երկու-երեք քար վերցրեց գետնից ու սկսեց քարկտիկ խաղալ։

Ընկերները միանգամից պապանձվեցին ու տարակուսանքով նայեցին նրան։ Հետո է՛լ ավելի կատաղի թափով շարունակեցին վրա տալ։ Ասում էին, որ իրենք պատասխանատու են նրա համար, որ գիշերները հանգիստ չեն քնում նրա պատճառով, որ եթե Թորոսը լիներ իրենց փոխարեն, նույն կերպ կվարվեր, որովհետև նա էլ նույնքան ազնիվ է ու ընկերասեր։

Թորոսը փորձեց մի արանք գտնել ու ծլկել, բայց նրան բռնեցին, նորից դրեցին օդակի մեջտեղում ու շարունակեցին ապացուցել, թե նա որքան բարի և ուշադիր է ընկերների հանդեպ։

— Ո՞ւր ես կորում գիշերները,— իր համար էլ անսպասելի, հարց տվեց Գնելը։— Ինչո՞ւ չես պատասխանում։

Տեսնելով կառավարչի օգնականին, տասից միակը, որից վախենում էին բոլորն անխտիր, մարդկանց օղակը մի փոքր բացվեց, իսկ Թորոսը չկամությամբ ոտքի ելավ։ Նա, ծնոտն առաջ գցած, աչքերը կկոցած, նայեց Գնելին, ակնհայտորեն ստիպելով հարցը կրկնել։

— Ո՞ւր ես չքվում գիշերները,— փոխանակ նրա շինծու ծանրամտության վրա բարկանալու, Գնելը իսկապես կրկնեց հարցը, որովհետև դա արդեն նրան էլ էր հետաքրքրում։

— Քնո՞ւմ եմ,— այլևս չդիմացավ Թորոսը, ծնոտը տեղը նստեց, կկոցված աչքերը լայն բացվեցին և, մարտահրավեր նետելով, ավելացրեց.— Ցանկապատից այն կողմ եմ քնում։

Թորոսին շրջապատած մարդկանց օղակը մի պահ անհանգիստ ալիքվեց, ապա բոլորը, զարմացած ու վախեցած, նայեցին նրան։ Գնելը հասկացավ, որ նրանք նախօրոք ամեն ինչ գիտեին, բայց ուզում էին վստահ լինել, նրա բերանից իմանալ։ Թորոսն էլ էր ուզում բացել իր գաղտնիքը։ Ջնայած իր դժգոհ պահվածքին, երևի խեղդվում էր գաղտնիքի հալումաշ անող ծանրությունից, սպասում էր, որ ստիպեն իրեն, բռնությամբ կորզեն ճշմարտությունը։ Եվ հիմա, մի տեսակ հանգստացած, թեթևացած, գլուխը կախ, կոշկի ծայրով հողն էր քշփորում, հետո նույն ոտքով նորից լցնում փոսիկը ու հավասարեցնում։

Գնելը ևս լարվեց և մտրակի կոթով սկսեց ուժգին քերել ու ցավեցնել սրունքը։

— Վտանգավոր է ցանկապատից այն կողմ,— վերջապես լսվեց շինականներից մեկի անվստահ ձայնը։

— Քեզ կարող են սպանել,— իբր նրա բախտով մտահոգված, ավելացրեց մեկ ուրիշը։

— Ապաստանի իրավունքը վերջանում է սահմանի մոտ...։

— Մենք չենք թողնի, որ հիմարություն անես...

— Ջենք թողնի, որ կործանվես...

— Բանտարկիր նրան, տեր վերակացու... Մեղք է, ջահել է գեռ... Ինքն էլ չի հասկանում արածը...

Թորոսը, ի պատասխան, խստհրդավոր ժպտում էր և նայում վախից ու էլի ինչ-որ բանից այլայլված ընկերներին։ Ապա, բոլորի լարված ու սպասողական հայացքների ուղեկցությամբ, մոտեցավ փայտե կարճլիկ ցանկապատին, մի պահ կանգ առավ, հետո վճռական ցատկեց ու հայտնվեց սահմանից այն կողմ։

Սա դավաճանություն է, առանց դեսուդեն ընկնելու, մտքում խստորեն որոշեց Գնելը։ Դավաճանություն է արքայի ու հայրենիքի հանդեպ։ Բայց էլ ի՞նչ ապաստանի

իրավունք, եթե բոլորի աչքի առաջ շանսատակ անի նրան։ Գնելի մտքովն իսկ չէր անցել, որ կարող է ստեղծվել այնպիսի իրադրություն, երբ որևէ մեկը ցանկություն կունենա հեռանալ Արշակավանից։ Դրա համար էլ չգիտեր ինչպես վարվել։ Նա սկսեց շոյել ձիու բաշը ու հանգստացնել նրան, թեև ձին հուզմունքի ոչ մի նշան չէր ցույց տալիս։

Մարդկանց խումբը, կարծես ինչ-որ մոգական ուժի ենթարկված, ձգվեց-երկարեց դեպի ցանկապատը։ Հետո նրանցից մեկն ինքնաբերաբար շոքեց գետնին, ծնոտը դրեց ցանկապատին ու, ասես հրաշքի հանդիպած, ապշած նայում էր ճլորած Թորոսին, որը հիմա հսկա էր թվում բոլորի աչքին։

Հեռվում, անծայրածիր տափաստանում, մի մենավոր շինություն կար, որտեղից երգի ու նվագի ձայն էր անընդհատ հոսում, դանդաղ տարրալուծվում օդի մեջ և, կանաչ ու զովասուն անտառի պես, գոտևորվում քաղաքի շուրջը, կարծես մի երկրորդ սահման ստեղծելով։

— Ի՞նչ ես անում, Թորոս... Չէ՞ որ մենք այստեղ ազատ ենք...

— Ե՛տ արի... Մենք ախր շատ ազատ ենք, Թորոս...

— Էլ ի՞նչ ես ուզում... ի՞նչդ է այստեղ պակաս... Ե՛տ դարձիր, Թորոս...

Ընկերներն աղաչանքով, խուճապով ու չարությամբ դիմում էին նրան, իսկ Թորոսը հետզհետե հեռանում էր ցանկապատից, քայլում բաց ու արձակ դաշտով, որը հիմա միայն իրեն էր պատկանում։

Հեռանում էր ապաստանից, որը, խնամակալի պես, ամեն րոպե պարտադրում էր իր պաշտպանությունը, անձեռնմխելի հռչակում նրան։ Հեռանում էր իր ապահովությունից, իրեն հատկացված երջանկության բաժնից։ Իսկ եկել էր անցյալը հետը շալակած, ընտելական հարաբերությունների, հին բարքերի, սովորությունների ու նախապաշարումների բեռն ուսին և չէր կարողանում ազատվել դրանից, թոթափել, դեն նետել վրայից։ Գնում էր այնտեղ, որտեղ անցյալը ներկա պիտի դառնար։ Այն հաստատ համո-

զումով, որ լավ է այնտեղ, որտեղ մենք չենք։ Միայն ու միայն՝ այնտեղ։

— Բանտարկի՛ր, տեր վերակացու... Չե՞ս տեսնում, կործանվում է մարդը...

Եվ նա, ով չոքել էր գետնին ու ծնոտը հենել ցանկապատին, անսպասելիորեն կանգնեց հասակով մեկ, լարվածություններից քրտնեց, կարծես հիշելու համար, թե ինչու ոտքի ելավ։ Հայացքից երևում էր, որ մի որոշում էր տանջանքով ծնվում նրա ներսում, բայց տատանվում էր դեռ ու կռվում ինքն իր հետ։ Թվում էր, թե ահա ուր որ է կկռանա, գետնից կվերցնի մի մեծ քարի կտոր ու կշպրտի փախստականի գլխին։ Բայց, դրա փոխարեն, հանկարծ նա էլ ցատկեց ցանկապատից։ Մի ակնթարթ վախից մեխվեց տեղում և շատ զարմացավ, որ կենդանի էր դեռ։ Հետո աստիճանաբար սկսեց ժպտալ։ Հիմար, շատ հիմար մի ժպիտով։ Այդ անկրկնելի պահը կյանքի տոն էր, ապրելու հայտնություն, մկանների խայտանք և ընդհանրապես գոյության ցնծություն։

Նրա հիմարավուն ժպիտը մի տեսակ ազդանշան ծառայեց, որ մյուսները ևս, մոտ մի տասնյակ շինական, անաղմուկ ցատկեն ցանկապատից և հայտնվեն սահմանից այն կողմ։ Բոլորն էլ համոզված էին, որ ցանկապատից թռան՝ փախստականին ավելի լավ տեսնելու համար։

Գնելը, կատաղությունից մինչև ականջները կարմրած, անմիջապես շրջեց ձին ու արագ հեռացավ, որպեսզի զորք բերի խռովարարների դեմ։

Նա կկախի բոլորին, ավելի ճիշտ՝ ամեն մեկի համար առանձին պատիժ կհնարի, մեկը մյուսից ավելի ահավոր ու ծանր, յուրահատուկ ու անկրկնելի։ Նա կպատժի ոչ միայն խռովության մասնակիցներին, այլև վկաներին։ Ոչ միայն վկաներին, այլև նրանց, ովքեր պարզապես տեղյակ են այդ իրադարձությանը, լսել են հարևաններից կամ ծանոթներից։ Դատը նա կկազմակերպի քաղաքի հրապարակում, և քանի որ ինքն էլ ակամա ներկա է գտնվել այդ կեղտոտ խռովությանը, սեփական աչքերով է տեսել այդ եղկելի տեսարանը, որ ժանտախտի պես կարող է վարակել ամենքին, ուրեմն,

պատիժը կսկսի իբենից։ Կհրամայի, որ մտրակի հինգ հարյուր հասցնեն մեջքին։ Հինգ, ոչ ավելի։ Որովհետև այդ նա է կանխել համաճարակի տարածումը ու կազմակերպել համաքաղաքային դատը։

Տիրեց քար լռություն։ Բայց բոլորը երջանիկ ժպտում էին, որովհետև նորից ու նորից, արդեն քանիերորդ անգամ, կերել էին արգելված պտուղը, ու համը դուր էր եկել նրանց։

Եվ հանկարծ կատարվեց անսպասելին։ Պոռթկաց տղամարդկանց անզուսպ և խմբովի ծիծաղը։ Ծիծաղում էին կուշտ-կուշտ, մի տեսակ անհագությամբ, մինչև վերջ դատարկելով թոքերը, ձերբազատված սեփական անձից, անունից, կենսագրությունից, հագուստներից, իրենց ներկայից ու անցյալից, բնազդաբար ըմբոշխնելով անցյալի ու ներկայի արանքում ընկած այս չեզոք պահը։ Ինչ-որ խելառ ու սոսկալի բան կար տղամարդկանց այդ միահամուռ ծիծաղի մեջ, որ կապ չուներ ոչ ուրախության, ոչ էլ տխրության հետ։

Իսկ Թորոսը էլ ավելի էր հեռանում, ըստ որում՝ խելքահան էր անում այն, որ նա չէր վազում, չէր փախչում, այլ քայլում էր դանդաղ ու ծուլորեն, կարծես ընդգծելու համար, թե որքան վստահ էր իր ճշմարտության վրա։ Իսկ երբ մի տեղ կանգ առավ, հանգիստ նայեց շուրջը և ապա շարունակեց քայլել, արդեն լրի՜վ զինաթափ արեց ամենքին։

Եվ ծիծաղը հետզհետե թուլացավ ու բոլորովին հանգեց։ Շարունակում էր ծիծաղել միայն մեկը, հոգնած և ուժասպառ, կարծես շատ էր ուզում լռել, բայց չէր կարողանում։

Թորոսը, առանց ետ շրջվելու, հորիզոնի հետ մեն-մենակ ու երես առ երես, շարունակում էր հեռանալ, մինչև որ տափարակ ու անծայրածիր դաշտում աստիճանաբար փոքրացավ, ձուլվեց վայրի թփերին ու մացառներին և անհետացավ տեսողությունից։

Շինականները արագ ետ դարձան, խուճապահար վազեցին դեպի փայտե գաճաճ ցանկապատը, մի քանիսը շտապելուց նույնիսկ սայթաքեցին ու ընկան, և ապա բոլորը ցատկեցին ներս։ Մի պահ կանգ առան, մի տեսակ ապահով ու հանգստացած։ Կարծես ժամանակից դուրս էին ընկել,

կորցրել գիշերվա ու ցերեկվա, առավոտի ու երեկոյի հոյության զգացողությունը։ Իսկ հիմա, փառք աստծո, Արշակավանում կեսօր էր...

Բայց և այնպես, մի քանիսը նախանձով ու ջերմությամբ նայում էին դեպի անծիր ու խաղաղությունից անիրական թվացող դաշտը...

Ապա ցրվեցին տարբեր կողմեր ու շարունակեցին իրենց կիսատ թողած աշխատանքը. քար էին տաշում, ավազ տեղափոխում, խմբովի գերան տանում ուսներին...

Եկել էին պարիսպ շարելու...

Փայտե գաճաճ ցանկապատի փոխարեն ամուր և բարձր պատ կանգնեցնելու...

Գնելը վերադարձավ զինվորների հետ։ Բայց տեսավ, որ բոլորը իրենց տեղերում են։ Կարծես ոչինչ չէր պատահել։ Պակասել էր միայն մեկը։

— Կեցցե՜ արքան,— ամբողջ կոկորդով գոռաց նա սպիտակ ձիու վրայից։

Ապա, շտկելով գունատ դեմքին ընկած ուղիղ ու կոպիտ մազերը, զինվորներին հրամայեց ձերբակալել ամենքին։ Նա բողոք կներկայացնի Վարազ Գնունուն և կպահանջի կտրել նրանց լեզուները։ Բայց կառավարչին ևս չի պատմի իսկությունը, մի ուրիշ հանցանք կհնարի, որպեսզի նա եղելությունը հանկարծ որևէ մեկի մոտ չփախցնի բերանից։ Իսկ ինքը վեց ամիս շարունակ, օրական հարյուր անգամ, ծնկի կգա սրբապատկերի առաջ ու կերդվի, որ գաղտնիքը գերեզման կտանի իր հետ։

Նա զինվորներին հրամայեց նաև՝ աննկատ գնալ, հետապնդել փախստականին, տեղնուտեղը սպանել և ուշ գիշերին բերել, գցել քաղաքի սահմանագլխին։ Թող կարծեն, թե նախարարների գործն է դա։ Վաղը նա կհավաքի բոլոր արշակավանցիներին և փառավոր թաղում կկազմակերպի։ Ճիշտ այնպես, ինչպես արքան էր ժամանակին վարվել ոմն իշխանի հետ։

— Կեցցե արքան,— լսվեց ինչ-որ մեկի թույլ և ուշացած արձագանքը։

Գլուխ քսանմեկերորդ

Պալատի աղբանոցը։ Մամռապատ պարիսպներով շրջափակված հսկա գերեզմանատունը։ Աշխարհի ամենակուշտ առնետների թագավորությունը։

Եթե մուրացկաններին թույլ տային մուտք գործել աղբանոց, նրանք ոչ միայն մինչև կյանքի վերջը ապահովված կլինեին ուտելիքով, այլև հազար անգամ ավելի վայելուչ զգեստներ կունենային, քան թե հիմա։ Նույնիսկ գետնին քնելու հարկ չէր լինի սովորականի պես, ինչքան ասես փափուկ մահճեներ կային այս ու այն կողմ գցված։ Իսկ եթե նրանց մեջ նաև ճարպիկ ու ձեռներեց մարդիկ գտնվեին, կարող էին ծախել աղբանոցի բարիքները ու հարստանալ։ Թշվառների մի ամբողջ շեն կտեղավորվեր այս ընդարձակ տարածության վրա, կստեղծվեր մի ուրույն ու թաքուն կյանք, որի անդորրը կխանգարվեր միայն այն ժամանակ, երբ վերևից սայլակով աղբ թափեին, որն ամեն օր, մեծ բարձրությունից գահավիժելով, աղմուկով ընկնում էր գետնին ու թնդալով արձագանքում։

Արքան առաջին անգամն էր մտնում իր տան այս խորհրդավոր անկյունը։ Ապշած նայում էր շուրջը, որովհետև ծռմռված ու ջարդոտված հայելու մեջ տեսնում էր պալատական կյանքի շարունակությունը։ Այստեղ թերևս կային իրեր, որ ժամանակին իրեն են պատկանել։ Տիրոջ ու հին իրերի հանդիպումը որքան որ հաճելի անակնկալ էր, նույնքան էլ հոգեմաշ տխրություն էր սփռում շորս կողմը։ Մարդու մեղքերը, որոնք առանց այդ էլ քիչ չէին, է՛լ ավելի էին շատանում այս մեռած իրերի ներկայությամբ։

Սա հաստատ իր մահիճն էր, որի հետ նա թաղել էր գիշերվա իր ամենագաղտնի ու երբեմն էլ ամոթալի մտքերը, իր ծանր ապրումները ու կարճատև, պատահական ուրախությունները, սրա վրա էին հաճախ ծնվել երկրի համար ճակատագրական որոշումները, այստեղ էին թաքնված իր սխալներն ու սայթաքումները և, ինչո՞ւ չէ, նաև որոշ մեծագործությունները։ Իսկ կանա՞յք... Որքան հաղթանակների

վկա է եղել այս մեռած մահիճը, ոչ թե արքայի, այլ սովորական մի տղամարդու բիրտ հաղթանակների, սիրուց ու զգացմունքից զուրկ, այլապես էլ ի՞նչ հաղթանակ։ Իսկ հիմա մահճի կարճլիկ ոտքերը կոտրված են, երևի վերևից ընկնելիս են ջարդվել, սարդերը ոստայններ են հյուսել անկյուններում, փոշին ու կեղտը վերջնական հանգրվան են գտել նրա մակերեսին։

Նույնպիսի հուշ էր նաև այս մարդը, որն իսկ և իսկ ներդաշնակում էր շրջապատին։ Կարծես այս գերեզմանատան մշտական ու միակ բնակիչը լիներ, որը աղբակույտերի ետևից հասակով մեկ հանկարծ կանգնեց նրա առաջ։ Նախկին Գնել իշխանն էր, նախկին արքայազունը, եղբոր նախկին որդին։ Իսկ սա՝ տիրոջ ու հին ծառայի հանդիպումը անդրշիրիմյան աշխարհում։

Դեմ-դիմաց կանգնած, երկար նայում էին իրար։ Գնելն անճանաչելի էր։ Եթե արքան նախօրոք չիմանար, որ հանդիպելու էր նրան, կկարծեր, թե մուրացկանի է դեմ առել։ Միայն աչքերն էին նույնը, սուր և ծակող, մեկ էլ՝ գունատ դեմքին ընկած հարթ և կոպիտ մազերը։

Արքան սկսեց դանդաղորեն առաջ գնալ, ձեռքը սրի պատյանին դրած։ Գնելը, անակնկալի եկած, անպաշտպան ընկրկում էր։ Արժե՞ր, որ արքան այդ բանը հիմա աներ։ Հիմա, երբ Արշակավանը, շնորհիվ իր գերմարդկային ջանքերի, կամաց-կամաց ոտքի էր կանգնում։ Եվ այդ մասին մտածելիս, ինքնագոհության կամ հատուցում ակնկալելու նշույլ իսկ չերևաց Գնելի դեմքին։ Մի հարց էր միայն նրան մտահոգում։ Ինչպե՞ս այդ ամենը բացատրել արքային, ինչպե՞ս հասկացնել նրա սեփական օգուտն ու վնասը։

— Սա իմ քաղաքը չի, Գնել։ Ես այստեղ ոչ մի պարտավորություն չունեմ քո հանդեպ։

— Աղբանոցում չսպանես, արքա։

— Ես զարմանում եմ, որ դեռ կենդանի ես համարում քեզ։

— Դու խաբեցիր ինձ... Դու գիտեիր, որ միայն Փառանձեմի անունով կարող էիր ինձ ծուղակ գցել...

— Ես քեզ ասել եմ, որ դու պիտի հարություն առնես

որպես ծաղկի ցողուն... Հողի միջից ձգվես դեպի երկինք... Դու կաճես ամենադժվարին տեղում, ժայռերի արանքից, անջրդի անապատում... Քո շար համառությունից, քո կույր մոլեռանդությունից ես կգտնեմ ու կճանաչեմ քեզ... Բայց չեմ պոկի... Կշրեմ ու կխնամեմ, որպեսզի լիությունից թառամես ու այլևս երբեք մտքովդ չանցնի հառնել...

Արքան մեծագույն հաճույք էր ստանում իր յուրաքանչյուր բառից, ավելի, քան եթե իր խոսքը հրաշքով իրականություն դառնար հենց տեղնուտեղը, հենց աչքերի առջև։ Թե՛ նա, թե՛ Գնելը, մինչև օրս չէին կարողանում իրարից անջատել մարդուն և այն գաղափարը, որ մարմնավորում էր նա։ Եվ տանջվում, տառապում էին իրենց անզորությունից։ Որովհետև, կենսագրության բերումով, ատում էին իրար, իսկ ճակատագրով սերտորեն կապված էին միմյանց։ Այդ հակասությունը ամենայն սրությամբ նրանց առաջ կանգնեց հատկապես այսօր, երբ գործող անձինք արդեն ոչ թե երկուսն էին, այլ երեքը, արքան, Գնելը ու Փառանձեմը։

— Բայց ես էլ կարող եմ քեզ սպանել, արքա... Ես քեզանից ջահել եմ և դյուրաշարժ... Ավելի ճկուն եմ ու ճարպիկ...

— Դու ինձ չես սպանի։ Չէ՞ որ ես քո երազանքն եմ։ Քո տերը։

— Բայց իմ մեջ կարող է հանկարծ մարդը զարթնել, արքա... Կարող են հուշերը ժայթքել... Կարոտը կարող է խեղդել ինձ... Մի՛ զարթնեցնի մարդուն, արքա... Ի սեր աստծո, մի՛ զարթնեցնի...

Արքան արդեն բավական մոտ էր Գնելին։ Նա պատյանից հանեց սուրը և, անձայն քրքջալով, լրիվ մոտեցավ պատին դեմ առած Գնելին, առաջ պարզեց սուրը և կպցրեց սարսափած իշխանի կոկորդին։ Մի ակնթարթ լուռ պահեց այդպես, ապա, անպատկառորեն ծիծաղելով, իջեցրեց սուրը ու նորից դրեց պատյանը։

— Բայց դու իսկապե՛ս պղտորել ես իմ կյանքը։ Խառնել ես հաշիվները։ Խանգարել ես իմ քունն ու հանգիստը։

— Դու ես մեղավոր, արքա։ Որովհետև մինչև վերջ չհանձնվեցիր ինձ։ Վախեցար ենթարկվել մի մարդու, որ իսկի գոյություն էլ չունի։

— Ես քեզանից հրաշքներ էի սպասում։ Բայց իմ վիճակը է՛լ ավելի է խճճվում։

— Դու չձերբակալեցիր նախարարներին։ Չվռնդեցիր բյուզանդացի և պարսիկ պատգամավորներին։ Եղալիք դարձար կանանց ձեռքին։ Քո անվճռականությունը բոլորին խոստովանեցիր։ Բարձրաձա՛յն։ Հրապարակո՛վ։ Ուզեցիր, որ պարսիկները կարծեն, թե իրենց բարեկամն ես, իսկ բյուզանդացիները համարեն, որ իրենց դաշնակիցն ես։ Գլուխդ ավազի մեջ խոթեցիր, որ չտեսնեն քեզ։ Բայց ոչ ոք այդ խաղը քեզ չի ների։

— Դաժանության վրա երկիր չես կառուցի, Գնել։ Վազ թե ուշ՝ փուլ կգա։

— Իսկ մարդասիրությամբ ոչինչ չես կառուցի, արքա։

— Ի՞նչ է դուրս գալիս, եղբոր որդի։ Ոչ միայն չարիք, այլև բարիք գործելու համա՞ր էլ բռունցք է պետք։

Նա այնպիսի ազնիվ զայրույթով արտասանեց այդ նախադասությունը, որ նրան թվաց, թե դա լիուլի բավական էր իր ճշմարտությունն անխոցելի դարձնելու համար։

— Մի տարբերությամբ, արքա,— չգիտես ինչու, նենգորեն ժպտաց Գնելը։— Բարիք գործելու դեպքում է՛լ ավելի ուժեղ բռունցք է անհրաժեշտ։

— Դու քո շարությունն ես ուզում գեղեցկացնել երկրի անունից,— իր խոսքի ուժին վստահ, կարծես մի ծանր ապտակ հասցնելով նրան, եզրակացրեց արքան։

— Իսկ դու՝ քո թուլությունը։— Գնելը բութ մատի եղունգն էր կրծում և, աչքի տակով արքային նայելով, շարունակում էր ժպտալ։ Եվ, այդպես ժպտալով էլ, հանկարծ ավելացրեց.— Ընդունիր ցավակցություններս, արքա։ Քո հոր և իմ պապի մահվան առթիվ։

— Մի՞թե ես քեզ չէի հաղորդել նրա մահը,— անսպասելի հարվածից շփոթվեց ու իրեն կորցրեց արքան։

— Ես ու դու շատ էինք սիրում քո հորն ու իմ պապին։ Ճիշտ չէ՞, արքա։

— Բայց նա ինքը մեռավ, Գնել...— խուճապի մեջ ընկավ արքան, զգալով, որ ծուղակ են գցում իրեն։— Իր բնական մահով...

— Դու մեծ ջուքով թաղեցիր նրան։ Ինչպես և ինձ։ Եվ ցույց տվիր, որ արժանի որդի ես։

— Ես չկատարեցի քո պահանջը,— գոռաց արքան, թեև հենց գոռալու պահին գլխի ընկավ, որ դրանով մատնում էր իրեն։ Եվ է՛լ ավելի բարձր գոռաց.— Ամեն ինչ ինքն իրեն լուծվեց...

— Ուրեմն, բախտավոր ես, արքա։ Քո ամենամեծ թշնամին այլևս կենդանի չէ։ Փառք աստծո, որ ստիպված չեղար հայրասպան լինելու։

— Նա ամենուրեք վարկաբեկում էր ինձ... Անիծում էր հարազատ որդուն... Ժողովրդին թշնամացնում արքայի հետ...

— Մխիթարվիր, որ քո քաղաքը ամենքից ավելի սգաց հորդ մահը։

— Ինձ մի զրպարտիր, Գնել... Ես կապ չունեմ նրա մահվան հետ... Ես անմեղ եմ աստծո առաջ...

— Հայրասպան,— հանգիստ ու գրեթե կիսաձայն ասաց Գնելը, կարծես մի շատ սովորական բանի անունը տալով։

Արքան լռեց ու տարակուսանքով նայեց Գնելին։ Վերջի-վերջո ո՞վ էր այս մարդը։ Իր խի՞ղճը։ Բայց խիղճ դառնալու համար նա շատ էր դաժան։ Իր իղձերի արձագա՞նքը։ Բայց ինչո՞ւ արձագանքը պիտի արյան թշնամին տա, ո՞ւր է այստեղ աստծո արդարությունը։ Իր միակ հավատարիմ իշխա՞նը։ Բայց նա չկա, գոյություն չունի, որպեսզի հավատարիմ լինի կամ դավաճան։ Ո՞վ է, ո՞վ է այս մարդը, որի հետ նա հիմա էլ պիտի հաշվի նստի ու հանդուրժի նրա ամբաստանությունները։

— Եթե նույնիսկ քո կասկածներն իրավացի են...— անվստահ սկսեց արքան, հետո արյունը տվեց գլխին, ու նա միանգամից նորից պոռթկաց.— Բայց չէ՞ որ դա քո պահանջն էր... Քո՛ թելադրանքը...

— Դու ճիշտ ես վարվել, արքա։ Դժբախտաբար, նա պետք է մեռներ։

— Էլ ինչո՞ւ ես ինձ հայրասպան կոչում,— է՛լ ավելի կատաղեց արքան ու բռնեց նրա օձիքից։— Ինչո՞ւ ես ինձ զրպարտում։

— Նա առաջնորդ կդառնար թշնամիների համար,— կարծես չնկատելով արքայի զայրույթը ու օձիքից կառչած նրա ձեռքերը, անվրդով բացատրեց Գնելը։— Դու՝ երջանիկ, իսկ նա՝ դժբախտ ու կուրացած արքա։ Պատկերացնո՞ւմ ես, որքան ձեռնտու առաջնորդ կլիներ նա։ Ժողովուրդը, մի մարդու պես, նրա ետևից կգնար։

— Եթե սպանել ենք, միասին ենք սպանել,— ֆշշաց արքան ու, ամբողջ ուժով Գնելի օձիքից բռնած, գետնին շպրտեց նրան։— Եվ եթե կուզես իմանալ, նա ի սեր քեզ էր իմ դեմ գործում։ Դու ես նրա մահվան պատճառը, դո՛։

— Դու հիմա էլ ես ճիշտ վարվում,— հանգիստ ոտքի ելավ Գնելը ու թափ տվեց մաշված զգեստի փոշին։— Ինձ և Փառանձեմին հանդիպեցնելը վերին աստիճանի խելացի քայլ էր քո կողմից։ Ստոր, բայց խելացի։ Դու երկուսիս էլ քո բռի մեջ ես հավաքում միանգամից։

— Ի՞նչ ես ուզում ասել,— թերահավատությամբ հարցրեց արքան, մի նոր և նենգ հարվածի սպասելով։

— Տեսնո՞ւմ ես, որ վեհ և ազնիվ նպատակների, միավորված հայրենիք ունենալու համար որքան անխուսափելի է դաժանությունը,— իր միտքը հենց արքայի օրինակով հաստատեց Գնելը։— Միայն թե ոչ պատահական, այլ ծրագրված դաժանություն է պետք, արքա։ Եվ եթե դու այդ չանես, սերունդները կանիծեն քեզ։ Հենց քո որդին կանիծի։

— Հանկարծ այլայլվեց, գունատ դեմքը լարվեց ու երկարեց, աչքերի մեջ տագնապ երևաց, ու նա հրամայաբար բարձրացրեց ձեռքը, արգելելով նրան խոսել։— Փառանձե՛մը, արքա,— վախեցած շշնջաց նա, ու հենց այդ պահին, հակառակի պես, վերևից սայլակով աղբ գցեցին, որն ահավոր աղմուկով թնդաց, ու արձագանքը տարածվեց չորս կողմը։

— Ո՞ւր է...— իրարանցման մեջ ընկավ արքան։— Դու տեսա՞ր նրան։

Գնելը բացասաբար շարժեց գլուխը։

— Բայց այս գարշահոտության մեջ անգամ մի նուրբ և մաքուր հոտ խփեց երեսիս...

Արշակն շտապ հեռացավ ու միայն բաժանման պահին գտավ քիչ առաջվա հարցի պատասխանը։ Ով էլ լիներ այս

մարդը, մի բան, համենայն դեպս, անժխտելի էր, որ առանց նրա Արշակավանը երբեք չէր կառուցվի ու հիմա էլ չի կառուցվի։ Հենց դրա համար էլ ինքը պարտավոր էր ամեն ինչ հանդուրժել, դեռ ավելին, նրա հայհոյանքներին պատասխանել՝ մինչև գետին խոնարհվելով և ի ցույց դնելով իր անսահման երախտագիտությունը։

Արքան չհեռացավ աղբանոցից։ Թաքնվեց քիչ հեռվում, որտեղ հին իրեր էին թափված։ Ու էլի՞ մահիճը, իր մահիճը, որը կարծես կրնկակոխ հետևում էր նրան, ցցվեց տիրոջ դեմ...

Փառանձեմի համար ևս սա բոլորովին անծանոթ մի աշխարհ էր։ Նա քայլում էր մեծ զգուշությամբ, ոտքերի մատների վրա, ամեն պահ վտանգ սպասելով։ Եվ ամենամեծ վտանգը Գնելն էր, որն ահա ուր որ է կհայտնվի մի անսպասելի տեղից, տակնուվրա անելով նրա հոգին։ Փառանձեմը շատ էր ուզում նրան տեսնել, սիրտը տրոփում էր հուզմունքից, մի տեսակ մաքուր և անաղարտ էր զգում իրեն, կարծես վաղուց մոռացված մանկության հուշեր էին զարթնել, կարծես իր օրորոցն էր տեսնելու, իր ծնված սենյակը, այն ժայռը, որի վրա նստած գետի ջրերին է նայել, կարծես իր դայակին էր հանդիպելու, և կիսատ մնացած մի հեքիաթ, որի անհայտ շարունակությունը տանջել էր իրեն հետագա տարիներին ու խանգարել հանգիստ ապրելու, դայակը հասցնելու էր ավարտին. ուտելու էր այն քաղցրավենիքը, որի համը հասուն տարիքում անընդհատ զգացել էր լեզվի վրա, բայց չէր հիշում, թե ինչ է դրա անունը... Ոչ մահվան հուշ կար այդ հանդիպման մեջ, ոչ սպանության, ոչ սգի, ոչ էլ դառը տարիների, այլ՝ մի մաքուր և զրնգուն ձայն, մի դուրեկան համ, մի հաճելի զովություն, մանկական աստվածային մի օրոր...

Բայց կյանքը կտար, ազնի՞վ խոսք, կտար, եթե չկայանար այս հանդիպումը։ Իր ինչի՞ն էր պետք Գնելը, երբ ինքը կեղտոտված է տարիների անիմաստ կուտակումից, երբ այլևս այն չէ, այն չէ այլևս, երբ նա չի հասկանա Գնելին, որը նրա համար մնացել է նույն պայծառ պատանին, իսկ Գնելը բոլորովին չի ճանաչի նրան՝ այս գիրացած,

չարացած, խորամանկ կնոջը... Միայն թե ինչո՞ւ է այսպես զուգվել-զարդարվել։ Ո՞ւմ է ուզում դուր գալ։ Կամ գուցե ցանկանում է դրանով զգացնե՞լ տալ այն հսկայական անջրպետը, որ գոյացել է իրենց միջև։ Գուցե իր շքեղ զգեստներով ուզում է վիրավորե՞լ նրան։ Ինքնապաշտպանությա՞ն համար։ Որպեսզի անձնական կյանքի խեղդված կարոտը չժայթքի հանկարծ, և նա շարունակի ծառայի պես իրեն նվիրաբերել որդուն, այն աստիճան նվիրաբերել, որ շնորհակալության փոխարեն որդին ակամա արհամարհի նրան։ Բայց Փառանձեմի համար դա էր մայրության գերագույն հաճույքը, մինչև վերջ քամել իրեն, առանց հատուցում ստանալու ակնկալության։ Իսկ այդ գերագույն հաճույքն իրականացնելու համար արքան էր պետք իրեն, ոչ թե նրա սերը, նրա վերաբերմունքը, նրա ուշադրությունը, այլ պարզապես գոյությունը։

Բայց նա սիրում էր արքային, այսօր ևեթ այդ մասին կասի ամուսնուն, կյանքում առաջին անգամ լինելով սեր կբացատրի նրան, այսօրվանից ամեն ինչ կփոխվի իրենց կյանքում, նա այս գիշեր նրա հետ անկողին կմտնի կույսի մաքրությամբ, մինչև առավոտ կպատմի, թե ինչպես է ապրել այս տարիներին, ինչ մտքեր է թաքցրել նրանից, կպատմի նույնիսկ անթույլատրելին, կխոստովանի իր բոլոր մեղքերը, ու երբ առավոտյան արեգակը ծագի, նրանք, մեջքի վրա արթուն պառկած, կհասկանան, որ նոր կյանք է սկսում իրենց համար։

Սա՞ է Գնելը։ Այս ռամի՞կը։ Այս չարքաշ մա՞րդը, որի հայտնությունը բոլորովին էլ անսպասելի չեղավ։ Նա անճարակ կեցվածքով կանգնել էր հեռվում, կարծես նախապատրաստելու համար իր կնոջը։ Փառանձեմը հասկացավ, որ եթե նա հանկարծակի հայտնվեր որևէ անկյունից, գուցե և բախտի անիվը գլորվեր իր ձեռքից ու անցներ Գնելին։ Իր կյանքը միանգամից շուռ կգար, բոլոր ծրագրերը կխորտակվեին։ Նրան թվաց, թե այդ մանրուքն էր իր միակ փրկությունը։ Այս կարճ տարածությունը հաղթահարելիս նա ժամանակ կունենա, առանց աչքը Գնելից կտրելու, ամեն ինչի մասին արագ ու վճռական խորհելու, որոշում տալու,

հավաքելու իր ուժերը։ Իսկ Գնելի համար կլինի ճիշտ հակառակը։ Նա կորցրեց տուժած մարդու առավելությունը։ Մինչև Փառանձեմը մոտենա, մինչև այս տանջալի ու անսահման երկար պահերն անցնեն, նրա ուժերը կսպառվեն, ու նա այլևս անզոր կլինի որևէ վտանգ սպառնալու։ Եվ Փառանձեմը, մոռացած հուզմունքն ու ներքին դողը, առևտրականի բծախնդրությամբ հաշվեց երկու կողմերի օգուտներն ու վնասները...

Կանգնեցին դեմ առ դեմ։ Գնելը ոչ մի քայլ չարեց։ Քիչ առաջվա բոլոր մանրակրկիտ հաշիվները հօդս ցնդեցին։ Քարացած նայում էին իրար, կարծես ճգնելով հիշել մեկը մյուսին։ Մի կոտրած բազկաթոռ էր ընկել նրանց արանքում, որը, ինչպես նրանց թվաց, խանգարում էր միմյանց գիրկ նետվելու։

Նայեցին, նայեցին իրար, առանց կշտանալու, առանց հագենալու, առանց սպառելու իրար հրավիրող հուշերը, որոնցից ամեն մեկը ծակում, ցավ էր պատճառում և վերականգնում հին վերքերը։

Հարսանիքի օրը, առաջին գիշերը, Փառանձեմի թույլ հառաչանքը, որ անծանոթ էր երկուսին էլ ու երբեք չկրկնվեց, այն միակը, սուրբը, որսը Ծաղկաց լեռներում, երեների առատությունը, ջրավետ անտառները, հոգնած անկողինները, գալարվող, թպրտացող մարմինները, հեթանոս մեղքը, զանգի ձայն ունեցող գիշերները, մեղք, որ երբեք չդարձավ երկրային, այն երանավետ, ազնիվ հոգնությունը, երբ «ես» և «դու» բաժանվում են իրարից, դառնում անկամ ու անօգնական։ Շահապիվան։ Կասկածի՛ քաղաք։ Եվ, չգիտես ինչու, ոչ կարևոր, աննշան խոսակցության մի պատառիկ. «Ինչո՞վ ես երդվում»։ «Քեզանո՛վ»։

— Փոխվել ես, Գնել... Հասուն աղամարդ ես դարձել...

— Իսկ դու քո թույությունն ես կորցրել... Ուժ է թափվում աչքերիցդ...

— Քանի՛ տարի է անցել...

— Իսկ երբեմն, գոնե երբեմն հիշե՞լ ես ինձ...

— Ջեմ հիշել, Գնել... Որովհետև կամ շատ դժբախտ էի,

կամ շատ երջանիկ... Մինչև հիմա էլ չգիտեմ, թե որ մեկն էր այդ երկուսից... Իսկ դո՞ւ...

— Ես էլ չեմ հիշել, Փառանձեմ... Տուն եմ կառուցել... Փողոցներ եմ սալահատակել... Կավե խողովակներ եմ անցկացրել ջրի համար և դարմանով ծածկել, որպեսզի ձմռանը չսառչեն... Օտար կանանց հետ եմ պառկել, որոնցից հող և քրտինք է բուրել... էլ ինչպե՞ս կարող էի քեզ հիշել...

— Բայց ես ուրախ եմ, որ հանդիպեցի քեզ...

— Ես էլ...

Իսկապես ուրախ էին։ Անկեղծորեն ուրախ։ Եվ հենց այդ ուրախությունն էր, և ոչ թե կոտրված բազկաթոռը, որ պատնեշ էր ստեղծում նրանց միջև։ Որովհետև բոլոր հնարավոր զգացմունքներից ամենաանմեղն էր դա, ամենաանվնասը։ Այդպես կարող էին հանդիպել հին ծանոթները, հանդիպել պատահաբար ու նորից երկար ժամանակով բաժանվել։

Ափսոսում էին միայն։ Իրենց անցած ու անվերադարձ երիտասարդությունը։ Խենթի պես սիրելու երբեմնի ընդունակությունը։ Անցյալ երջանկության հանգած մոխիրները։ Իրենց անաղարտ մաքրությունը, որը գտնելու համար պիտի տակնուվրա անես ամբողջ աղբանոցը։ Եվ առհասարակ՝ իրենք իրենց։ Բայց ափսոսում էին՝ ամեն մեկն իր համար, առանց մյուսին մասնակից դարձնելու, կարծես միասին չէին ապրել այդ տարիները։

— Եթե որևէ բանի կարիք ունես, մի ամաչիր, ասա ինձ։

Փառանձեմի բնազդը արթուն էր միշտ և հավատարիմ շան պես հսկում էր տիրոջը։ Նա զգաց, որ խոսակցության ջերմությունը կարող էր թյուրիմացության մեջ գցել երկուսին էլ, խնամքով թաքցնել իրենց օտարացումը, և իր այդ անկեղծ ու սրտաբուխ առաջարկով Փառանձեմն ամեն ինչ դրեց տեղը, հատկապես՝ իր այն խնդրանքով, թե Գնելի մտքով հանկարծ չանցնի ամաչել։

— Ես ուզում եմ քո որդուն տեսնել։

— Զղույշ եղիր, Գնել, դա սիրո խոստովանություն է։

— Դու ինձ չհասկացար, Փառանձեմ։ Ես ուզում եմ մեր ապագա արքային տեսնել։

— Բայց նա թագաժառանգ չէ այլևս,— թեթևակի ժպի-

ցին նրա շրթունքները, չգիտես՝ վիրավորանքի՞ց, թե՞ ինքնահեգնանքից։— Ոչ էլ ես եմ թագուհի։

— Եթե աչքերդ ինձ չեն խաբում, քո չարությունն ու փառատենչությունը լիովին բավական են կորցրածը գտնելու համար։

— Բայց դու ինձ անպատվում ես, Գնել,— մեղմորեն նախատեց Փառանձեմը, հայացքը մի անորոշ կետի սառած և շրթունքներն այդպես էլ չուղղած։

— Ես ժամանակ չունեմ ձևականության, —անհամբերությունից կոպտորեն պատասխանեց Գնելը։— Ես վախենում էի, որ եթե քեզ տեսնեմ, սերը նորից կզարթնի իմ մեջ։ Բայց, փառք տիրոջ, ոչ իմ մեջ զարթնեց, ոչ էլ քու։ Հենց դրա համար էլ ես կարող եմ քեզ օգնել։

— Դո՞ւ։ Բայց դու չկաս, Գնել։ Դու գոյություն չունես։

Գուցե էրո՞ք սա պատրանք էր, ուշ գիշերվա երազ, գուցե ինքը հիմա անհանգիստ շուռումուռ էր գալիս անկողնում, տնքում խոր քնի մեջ, գուցե ձեռքը ենթագիտակցաբար ամուսնու մարմինն էր փնտրում, որ կառչի նրան ու խաղաղվի։

— Ամեն ինչ քո ձեռքին է, Փառանձեմ,— տենդագին փայլեցին Գնելի աչքերը, հարթ և կոպիտ մազերն ընկան գունատ դեմքին, մի տհաճ ու վանող արտահայտություն տալով նրան։— Դու ինքդ պետք է գտնես կորցրածդ։ Դու պետք է թունավորես այդ երկու կանանց։

— Ե՞ս,— սարսափահար ճչաց Փառանձեմը։

— Աղաչում եմ քեզ,— իրենց միջև գտնվող չարդված բազկաթոռը մի կողմ շպրտեց Գնելը, ընկավ կնոջ ոտքերին, բուռը հավաքեց նրա երկար և սև ստոլայի ծայրը ու սեղմեց ամբողջ ուժով։— Մի վախենա, թունավորիր նրանց։ Եթե թույնը զորեղ լինի, նրանք չեն տանջվի։ Ազերսո՞ւմ եմ քեզ։

Փառանձեմը ստոլան պոկեց նրա ձեռքից ու վախեցած մի կողմ քաշվեց։ Գնելը մնաց ծնկաչոք ու մենակ։ Նրա սուր և ծակող աչքերը մազերի արանքից գամված էին շփոթահար կնոջը։

Փառանձեմն զգաց, որ ինչ-որ տիրական բան կար նրա հայացքի մեջ, քաշող ու իրեն ենթարկող։ Այդպես չէր առաջ.

աչքերը վրակոտ չէին, մեղմ էին ու տխուր։ Ո՞րն էր իսկական Գնելը, այս մե՞կը, թե՞ նա, ով անցյալին էր պատկանում։ Եվ ո՞ր մեկն էր իր սրտին ավելի մոտիկ։ Ու նա երկյուղով մտածեց, որ չէր կարող միանշանակ պատասխան տալ։ Գիտակցությունն անցյալի Գնելին էր աստվածացնում, իսկ հոգու խորքը, որ գաղտնի էր մնում նույնիսկ իրեն, այս մեկին էր նախընտրում։

Փառանձեմը ցրված նայում էր չորս կողմը։ Կարծես նոր նկատեց, թե ուր էր ընկել։ Հայացքը սահեց մամռապատ ու խոնավ պարիսպներով վեր, ուր ինչ-որ տեղ մայր էր մտնում արևը։ Ցտեսնված ցանկություն ունեցավ տեսնելու մայրամուտը, ասես հաջորդ օրը զրկված էր լինելու այդ հնարավորությունից։ Ու կարոտեց ամուսնուն, իր շքեղ հարկաբաժինը, հաճոյակատար նաժիշտներին, իր առջև հարգալիր խոնարհվող պալատականներին։

Նա գլխի ընկավ իր երկյուղի պատճառը։ Գնելի առաջադրանքից չէր, որ այդպես վախեցավ։ Այլ նրանից, որ դա իր գաղտնի երազանքն էր, հոգու հեռավոր խորքերում թաքուն ծնվող որոշումն էր, որ մի գեղեցիկ օր ինքը պիտի լույս աշխարհ հաներ ու իրագործեր։ Ու երբ Գնելը բարձրաձայն կարդաց նրա մտքերը, Փառանձեմը զինաթափ եղավ, ո՛չ թե հենարան տեսավ կողքին, ո՛չ թե նեցուկ զգաց ձեռքի տակ, այլ մի տեսակ կողոպտվեց։ Դրա հեղինակը հիմա ոչ թե ինքն էր, այլ Գնելը։ Ոչ էլ Գնելը։ Արքան էր, արքա՛ն, այդ անծիլալ սատանան, որին ատել է ամբողջ կյանքում։ Նա Փառանձեմին ստիպեց հանդիպել նախկին սիրեցյալի հետ՝ ոչ միայն նրանց խեղճացնելու ու սանձելու համար, այլև այդ ոճիրը սաղմնավորելու։ Ահա ինչու էր պնդում, թե Գնելը քեզ կասի ինչ անել, նա քեզ ճիշտ խորհուրդ կտա։ Եվ հիմա, երբ նախաձեռնությունն անցել էր երկու տղամարդկանց ձեռքը, Փառանձեմը սարսափեց իր մտադրությունից։

— Կարո՞ղ ես,— լսվեց ծնկաչոք Գնելի ձայնը, որի մեջ ավելի պահանջ կար, քան թե հարց։

Արքան, որ շունչը պահած ու պպզած, հետաքրքրասիրությամբ հետևում էր նրանց և ուշադիր ականջ դնում, հան-

կարծ մի ձեռք զգաց ուսին ու վախեցած ցնցվեց։ Կտրուկ շրջեց գլուխը և տեսավ Հայր Մարդպետին։ Հայրը ցուցամատը տարավ շրթունքներին, ապա ծնկի չոքեց իր տիրոջ կողքին ու գաղտագողի նայեց Գնել իշխանին ու Փառանձեմ թագուհուն։

— Դո՞ւ որտեղից գիտեիր,— ապշած հարցրեց արքան։

— Երբ իմ տարիքին հասնես, դու էլ ամեն ինչ կիմանաս, արքա,— շշուկով պատասխանեց և տխուր ժպտաց Հայր Մարդպետը։— Դու չգիտես, թե դա որքա՜ն ծանր բեռ է մարդու համար։

— Կարո՛ղ եմ,— անսպասելի պատասխանեց Փառանձեմը։

Գնելը ոտքի ելավ ու երախտագիտությամբ նայեց կնոջը։ Փառանձեմն զգաց, թե նա ինչպիսի խոր հարգանքով ու պատկառանքով լցվեց իր հանդեպ, և դա է՛լ ավելի հակակրելի դարձրեց նրան։

— Բայց մի պայմանով,— ավելացրեց Փառանձեմը։— Եթե ոչ մի բան անորոշ չմնա ինձ համար։

— Ասա՛, թագուհի, հրամայի՛ր։

— Ես պետք է իմանամ, թե ինչո՞ւ ես դու շահագրգռված։ Չէ՞ որ ես դավաճանել եմ քեզ։ Չէ՞ որ քո ոխերիմ թշնամու կինն եմ ես։

— Հանգիստ թող անցյալը։ Ես կապ չունեմ դրա հետ։

— Բայց դու պարտավո՛ր ես վրեժ լուծել ինձանից,— ձայնը բարձրացրեց Փառանձեմը, կրքոտ պաշտպանելով Գնելի վրեժխնդրության իրավունքը ու պնդելով այդ իրավունքի վրա։— Ասա՛, ինչո՞ւ ես շահագրգռված։

— Դո՛ւ պիտի լինես հայոց թագուհին, ոչ թե օտարը,— մոլեռանդ հավատով մռնչաց Գնելը ու, գլուխը թափ տալով, ետ տարավ դեմքին ընկած մազերը։— Քո որդի՛ն պիտի նստի հայոց գահին։ Եվ եթե դու չհասնես դրան, երդվում եմ բոլոր աստվածներով... Լավ լսիր... Երդվում եմ մեր նախկին սիրով... Ավելի մեծ երդում չկա ինձ համար... Դու կենդանի չես մնա։ Ե՛ս կսպանեմ քեզ։

— Ես ուզում եմ դուրս գալ այստեղից,— գույնը գցած, կմկմաց Փառանձեմը։

— Ոչ մի քայլ չես անի, եթե չխոստանաս։

— Ես այսպիսի մարդու չեմ ճանաչել,— անճարակորեն պաշտպանվեց Փառանձեմը։— Ես ուրիշի հետ էի հանդիպման եկել...

— Ես քեզ մի ամիս ժամկետ եմ տալիս։ Այդ երկու կանայք չպետք է կենդանի մնան։ Կա՛մ նրանք, կա՛մ դու։

— Բայց արքան լրիվ կկործանվի,— դիմադրության մի վերջին փորձ արեց Փառանձեմը։— Նա ցանցի մեջ է ընկել։ Այս ու այն կողմ է շպրտում իրեն։

— Չհամարձակվե՛ս նրա անունը տալ ինձ մոտ,— հանկարծ, այսքան անպատեհ, վայրենի խանդից կարմրեց Գնելը ու ձեռքերը բռունցք կազմեց։

— Բայց ես երկրի մասին եմ խոսում, Գնել, ոչ թե արքայի։

— Դու այդ սպանությամբ միայն կօգնես ամուսնուդ։ Ցանցից կփրկես նրան։ Նա չի կարող սեփական ուժերով ազատվել։

— Բայց ես պետք է վստահ լինեմ,— նահանջի ճանապարհը փակ լինելու երաշխիք ու ապահովություն պահանջեց Փառանձեմը,— որ եթե չթունավորեմ նրանց, դու կսպանես ինձ։

— Դու արքային հարցրու,— արհամարհանքով ասաց Գնելը, ներողամտորեն ժպտալով քթի տակ, որ Փառանձեմը կասկածում էր իր սպառնալիքի լրջությանը։— Նա քեզ ճշմարիտ պատասխան կտա։

— Նա քեզ անպայման կսպանի, Փառանձեմ,— քար կտրած, շշնջաց արքան։

Հայր Մարդպետը վեր կացավ, բռնեց արքայի ուսերից, բարձրացրեց նրան, թևանցուկ արեց ու տարավ մի կողմ։ Արքան մեքենաբար ենթարկվեց ներքինապետին և պատրաստ էր գնալ՝ ուր որ տանեին, թեկուզ աշխարհի ծայրը, միայն թե դուրս գար այստեղից։ Բայց սեփական կամքով չէր կարող, ոտքերը չէին հպատակվում։ Իսկ Հայր Մարդպետը բոլորովին էլ միտք չուներ նրան ազատելու այս տեսարանին ականատես լինելու հնարավորությունից։ Նրան դուր էր գալիս տեսնել արքայի ներքին իրարանցումը ու հավոր խռովքը, նրա վախը՝ իր իսկ հղացած այս հան-

գույցից։ Եվ Հայր Մարդպետը հազար անգամ կգերադասեր ոչ թե խույր կրել գլխին ու արքա դառնալ, այլ իսկական արքայի նվաստացման հանդիսատեսը լինել, զգալ այդ մեծագույն հաճույքը, որի հետ ոչ մի ուրիշ բան չէր կարող համեմատվել։

Նա արքային տեղավորեց մաշված ու շրջված մի նստարանի վրա ու միալար շշնջաց ականջին.

— Դու աղբերի մեջ մի մտիր, արքա... Ճիշտ է, ես էլ երբեք չեմ մտել, բայց ես շատ ծեր եմ... Եվ ինձ համար ամեն ինչ հետաքրքիր է...

Արքան շուռ եկած նստարանից ոչինչ չէր տեսնում ու ոչինչ չէր լսում, բայց նրա ամբողջ էությունը հիմա հնազանդությունն էր։ Անշարժ նստել էր կոշտ տախտակին, ոտքերը չոած, գլուխը ձեռքերի մեջ առած ու խոնավ աչքերը կոշիկներին հառած։

Հայր Մարդպետը վերադարձավ իր նախկին տեղը, նորից չոքեց ծնկների վրա ու, աչքերը մանր կկոցած, շարունակեց հետևել տեսարանին։ Հետո, ինչ-որ շատ կարևոր բան գլխի ընկնելով, շրջվեց արքայի կողմը ու, նրան հանգստացնելով, ասաց.

— Ես քեզ կպատմեմ, արքա... Ամեն ինչ կպատմեմ...

Արքան, Հայր Մարդպետին հինգ մատների պես ճանաչելով հանդերձ, խորապես ազդվեց և հուզվեց նրա հոգատարությունից։ Իր համար այս պահին նա ամենամտերիմ ու ամենահավատարիմ մարդն էր, թեկուզ և այն պատճառով, որ վկա էր իր նվաստացմանը։ Գուցե նրան չուղարկի՞ կաթողիկոսի մոտ։ Ըստ պայմանավորվածության, նա ուշ գիշերին պիտի Հանապարհ ընկնի դեպի Աշտիշատ։ Գուցե խոնարհաբար ներողությո՞ւն խնդրի նրանից, խոստովանի, թե ինչ կիղտոտ խաղի համար էր ինքը նրան ճամփում Ներսեսի մոտ, ասի, որ դա մոտավորապես այն նույն խաղի կրկնօրինակն է, երբ արքան, իր սովորության համաձայն, մի հարվածով երկու թռչուն է սիրում միանգամից սպանել։ Գուցե նա պետք է հրաժարվի՞ իր նախասիրությունից, ամեն մի թռչունին առանձի՞ն սպանի, որովհետև, նման դեպքե-

ռում, երրորդ հարվածը միշտ էլ իրեն էր հասնում, կպչում էր ուղիղ ճակատին...

— Փող ունե՞ս,— անսպասելիորեն հարցրեց Գնելը։

— Ունեմ,— տարակուսանքով պատասխանեց Փառանձեմը։— Ի՞նչ կա որ։

— Փող տուր ինձ։

Փառանձեմը շփոթված հանեց քսակը, դողդոջ մատներով քանդեց կապը ու, միջից մի քանի ոսկի հանելով, մեկնեց Գնելին։

— Քիչ ես տալիս,— դժգոհեց Գնելը։

Փառանձեմը, է՛լ ավելի շփոթված, մի քանի ոսկի ավելացրեց ափի մեջ։

— Ժլատություն մի արա։ Բոլորը տուր։

Փառանձեմն ամբողջ քսակը մեկնեց նրան։ Բայց Գնելը չմոտեցավ վերցնելու։ Փառանձեմի ձեռքը մի պահ, այդպես անիմաստ, մեկնված մնաց դատարկ տարածության մեջ։ Ստիպված, գցեց քսակը, և Գնելը ճարպկությամբ բռնեց օդում։

— Բայց իմացիր, որ պարտքս չեմ վերադարձնի։ Ես կապ չունեմ ձեր սովորությունների հետ։

Լռեցին ու նորից նայեցին իրար, արդեն լրիվ խորթ և օտար հայացքներով։ Ինչ-որ թանկ բան, կարծես դիտավորյալ, ցեխի մեջ գցեցին, աղտոտեցին ու տրորեցին ոտքերով։ Եվ անցյալի խոչընդոտը, հուշերի ծանրությունը միանգամից հաղթահարեցին ու վերացրեցին։ Այսքան հեշտ ու անցավագին։ Հիմա Փառանձեմը կանգնած էր մի անծանոթ տղամարդու առաջ, բոլորովին անմարդաբնակ վայրում և վախենում էր նրանից՝ կնոջ ամենասովորական ու ամենաբնական վախով։

— Ձեռքերը կրծքին տարավ, արքա,— անհանգիստ շշնջաց Հայր Մարդպետը։

Արքան ձգվեց տեղում, բարձր ցցեց գլուխը ու սրեց ականջները։ Սկզբում լավ չհասկացավ, թե ինչ է կատարվում, միայն կռահեց, որ Փառանձեմը վտանգի մեջ է, մեծ վտանգի և որ պետք է ամեն կերպ փրկել նրան, նույնիսկ՝

սեփական կյանքի գնով։ Իսկ թե ինչից՝ դեռ գլխի չէր ընկնում։

— Ձեռքը Փառանձեմի ոտքերն է շոյում, արքա...

Աչքերի լույսը պղտորվեց, հողը երերաց ոտքերի տակ, և չորս կողմը թանձր մշուշ իջավ։ Մի ահավոր ոռնոց դուրս թռավ նրա բերանից և սրովհետև այն հնչեց ցածր ու զսպված ձայնով, փոխանակ թեկուզ փոքր ինչ մեղմելու, ՝ՀՀ ավելի խորացրեց ցավը։ Ոռնաց վիշն ու գլուխը առաջ մղած, ապա միանգամից կուչ եկավ, կարծես սուր էին խրել փորի մեջ։

— Շրթները նրա շրթներն են փնտրում, արքա...

Արքան, աբնակալած աչքերով, սուրը հանեց պատյանից ու թափով առաջ նետվեց։ Դանդաղաշարժ Հայր Մարդպետը, որի ամեն մի քայլը կարծես արժանապատվություն ցուցադրելու մի արարողություն լիներ, զարմանալի արագությամբ փակեց նրա ճանապարհը, երկու թևերով փարվեց, կանգնեցրեց նրան և, որքան էլ տարօրինակ թվա, արքայի ուժը չպատեց ծեր ներքինապետին մի կողմ շպրտելու։

— Արշակավա՛նք, արքա... Արշակավա՛նը...— շշնջում էր Հայր Մարդպետը։— Քո քաղա՛քը...

— Ի՞նչ իմ քաղաքը,— ատելությամբ հարցրեց արքան, ճգնելով դուրս գալ ծերուկի աքցաններից։

Ու քանի որ արքան ևս խոսեց շշուկով, Հայր Մարդպետը հասկացավ, որ իրեն հաջողվել էր կասեցնել նրա հարձակումը։ Արքան այլևս չի գնա նրանց մոտ՝ հաշվեհարդար տեսնելու։ Շշուկը մատնեց նրան։

— Եթե դու Գնելին սպանես, Արշակավանը չի կառուցվի, արքա,— վրա էր տալիս Հայր Մարդպետը։— Նա է քո քաղաքի շունչն ու ոգին։ Նա է քո միակ հույսը։ Արժի՞ կիսատ թողնել քո մեծ ծրագրերը։

Եվ որպեսզի այլևս հաստատ չգնա, Հայր Մարդպետը բաց թողեց նրան։ Ուժի միջոցով պահելը կարող էր ընդդիմություն թելադրել արքային, ստիպել, որ հաղթահարի իրեն արգելակող խոչընդոտը։ Իսկ հիմա, ազատ վիճակում, երբ ոչինչ չէր խանգարում նրան, նա բոլորովին անզոր էր ու անօգնական։

— Դժվար է, գիտեմ, բայց պիտի կուլ տաս, արքա։ Պիտի խեղդես անձնական ցավդ։ Մի՞թե աշխարհում կա մի կին, որի համար արժե երկիրը վտանգել։ Դու քեզ ավելի կհարգես, առավել կբարձրանաս աչքիդ, եթե երկրիդ բախտը գերադասես սեփական պատվից։

Հայր Մարդպետը թևանցուկ արեց հնազանդված արքային ու տարավ, նորից նստեցրեց շրջված հին նստարանին։ Եվ արքայի մտքովն իսկ չանցավ թողնել ու հեռանալ, որպեսզի աչքերն այլևս ոչինչ չտեսնեն ու ականջները ոչինչ չլսեն։ Աղբակույտը ձգում էր նրան, կապում իր հետ, ինչպես մարդասպանին՝ սպանության վայրը։

—Մի՞թե ես քեզ պիտի սովորեցնեմ, թե որքան դժվար է արքա լինելը։ —Ապա հոգատարությամբ ուղղեց նրա ծիրանի քղամիդը և, օգտվելով, որ արքան չէր լսում իրեն, ավելացրեց մխիթարելով.— Ոչինչ, արքա... Եփրեմի հետ ճատրակ կխաղաս... Եվ ամեն ինչ կարգի կընկնի...

Վերադարձավ իր տեղը, ծնկի չոքեց և մանր կկոցած աչքերով շարունակեց հետևել, թե ինչով կվերջանա իր կյանքի այս ամենահետաքրքրաշարժ պատմությունը։

Ճիշտ էր ասում այդ պառաված շունը։ Արշակավանի համար պիտի ամեն ինչ զոհել։ Իր միակ հույսի, իր միակ ապավենի, երկրի միակ փրկության համար։ Եվ հիմա նրան թվում էր, թե այս զոհաբերության շնորհիվ է՛լ ավելի էր մոտենում այն բաղձալի օրը, երբ քաղաքի կառուցումը ավարտված կլինի։ Նա չէր պատկերացնում այլ կերպ, որովհետև գերմարդկային ճիգերի գնով իր մեջ խեղդում էր պատվի զգացումը։ Այսուհետև ինքն էլ շաբաթը մեկ այնտեղ կգնա, անձամբ կհետևի Արշակավանի ներքին կյանքին, իր ետևից քարավաններով մթերք ու շինանյութ կտանի, կփոխի Վարազ Գնունուն, գուցե նույնիսկ պաշտոնապես կառավարիչ նշանակի Գնելին, միայն թե արդարացնի իր այսօրվա ամոթալի նահանջը, մի մեծ, շատ մեծ բան ստանա դրա փոխարեն։

Եվ ո՞վ է տեսել, ո՞վ է լսել։ Փառանձեմն ու Գնելը չգիտեն իր ներկայության մասին։ Կոտած ներքինի՞ն։ Բայց նա հենց այս գիշեր ճամփա է ընկնելու դեպի Աշտիշատ, որ-

տեղից վերադարձ չկա։ Դեպքերը դասավորվում էին իր օգտին։ Ո՞վ մնաց։ Ի՞նքը։ Իրենից չէր վախենում, չէր քաշվում սեփական անձից։ Ուրեմն, ոչինչ չի պատահել, կատարելապես ոչինչ։

Եթե Գնելին սպաներ, Արշակավանն իրոք կտապալվեր։ Սուտ են արքունի բոլոր որոշումներն ու հրամանները, մունետիկների կանչերը շեների ու ավանների հրապարակներում, սայլերով ուղարկվող մթերքն ու շինանյութը, շինականին տրվող արտոնությունները, ամեն ինչ սուտ է, ճշմարիտը այն մարդու գոյությունն է, ով ընդունակ է իր ետևից տանելու ամբոխին, առաջնորդելու հովիվի կարոտ բազմությանը։

Եվ նա, ով Արշակավանի հղացողն էր ու կազմակերպիչը, ով ծնել էր այդ սատանայական ծրագիրը, միայն հիմա, այս մեծ ցավի ու ամոթի առաջ, մինչև վերջ հասկացավ, մինչև խորքը կռահեց, մինչև ուղնուծուծը զլխի ընկավ, թե ինչ երջանիկ էր այն պահը, երբ մտքերի քաոսից, խճճված իրավիճակներից, կծիկ դարձած դժվարություններից, արդար արեգակի պես հանկարծ փայլեց այն միակ ու ճշմարիտ որոշումը, որին մարդ կյանքում մի անգամ է միայն հանդում։ Եվ առավել հաճախ՝ երբեք չի հանդում։ Տիրանը այդպիսի պայծառ պահ չունեցավ։ Խոսրով Կոտակը ընդամենը անտառ տնկեց։

Եթե Գնելին սպաներ, ապա այն նպատակը, որին ծառայելու էր այսօրվա հանդիպումը պալատի աղբանոցում, շուռ կգար հենց իր դեմ։ Փառանձեմը ոչ միայն չէր խեղճանա ու չէր սանձվի, այլ կիրականացներ իր բոլոր սպառնալիքները։

Բայց, տեսնո՞ւմ ես, ճիշտը ես էի, Գնել, ոչ թե դու։ Դաժանությունը, որին ստիպված հաճախ ենք դիմում մենք, թույլերի զենքն է։ Ի՞նչ դուրս եկավ իմ դաժանությունից, այսինքն՝ ձեր այս հանդիպումից։

Չէ՛, ոչինչ չի պատահել, բացարձակապես ոչինչ...

Իսկ Փառանձեմն ու Գնելը շարունակում էին օտար ու խորթ հայացքով լուռ զննել իրար...

— Հիշիր, մի ամիս։ Մի օր էլ չեմ բաշխի քեզ։

— Հեռացիր, Գնել։ Ես կգոռամ, օգնություն կկանչեմ։

— Գուցե գոտի՞դ էլ տաս։ Ես դա կծախեմ ու կուշտ կլինեմ մինչև ամառ։ Եվ ուրիշներին էլ բաժին կտամ։

Փառանձեմը, առանց ծպտուն հանելու, քանդեց ականակուռ գոտին ու տվեց Գնելին։ Չէր ասի, թե լրիվ կամավոր արեց այդ բանը։ Ավելի շուտ՝ վա՛խը թելադրեց։ Կարծես ճանապարհ գնալիս ավազակի էր հանդիպել, որ անգթորեն թալանում, կողոպտում էր իրեն։

— Իսկ եթե ասկե օղերդ էլ տաս ու ագամանդե մանյակներդ, ես և իմ ընկերները ամեավա պաշար էլ կունենանք։

Փառանձեմը սուսուփուս հանեց օղերն ու մանյակները և սրտից արյուն կաթելով, տվեց Գնելին։

— Բայց դու գեղեցիկ ես, Փառանձեմ,— հանկարծ նրա այլևս գրեթե բան չմնաց վերցնելու, ոտքից գլուխ նրան չափելով ու գնահատելով, անպատկառ ժպտաց Գնելը։— Արշակավանում գեղեցիկ կանայք չկան։

— Պատկերացրու, ես էլ եմ քեզ հավանում,— նույնպես նրան բացեիբաց զննելով, առանց քաշվելու պատասխանեց Փառանձեմը, և Գնելը մի հաճելի դող զգաց նրա թավ ձայնի մեջ։— Դու կոպիտ ես և արևից խանձված...

— Քո մետաքս զգեստի ծալքերը խորհրդավոր քսվում են իրար...

— Ես չգիտեի, որ դու լայնաթիկունք ես ու մկանուտ...

— Բայց ես վաղուց չեմ լողացել, Փառանձեմ...

— Ես հոգնել եմ մաքուր մարդկանցից...

Գնելը հրամայաբար պարզեց ձեռքը և սկսեց դանդաղ ետ-ետ գնալ։ Փառանձեմը, նրա ուժից ու կոպտությունից հմայված, ակամա ձգվեց դեպի իրեն սպասող, իրեն կանչող ձեռքը։

Աղբակույտերի վրայով, դրանց արանքներով, նեղ ու կորշող արահետներով, մամռապատ ու բարձր պարիսպներով պաշտպանված, նրանք, ձեռք ձեռքի բռնած, սայթաքելով ու միմյանց օգնելով, գնում էին դեպի այս անծանոթ ու օտար աշխարհի խորքերը, դեպի խավարի մեջ ընկղմված հեռավոր մի անկյուն, դեպի հին ու մեռած իրերը, որոնք մի օրով պիտի վերակենդանանային ու ապրեին նորից։

— Տարավ, արքա...

Արքան գլուխն առավ ափերի մեջ, ուսերը ցնցվեցին, ու նա սկսեց անձայն հեկեկալ։ Նա շաբաթը մեկ Արշակավան կգնա։ Անձամբ կհետևի յուրաքանչյուր կառույցին։ Իր ետևից քարավաններով մթերք ու շինանյութ կտանի։ Կիրոխի Վարազ Գնունուն։ Գուցե նույնիսկ պաշտոնապես կառավարիչ նշանակի Գնելին։

Հեկեկոցն արդեն խեղդում էր նրան։ Նա կծել էր պատմուճանի թևը և ամբողջ ուժով ձգում էր ու պատառոտում, անիծելով բոլոր արքաներին, նրանց նախորդներին ու հետնորդներին, հայհոյելով երկիրը, ժողովրդին, նզովելով Արշակավանն ու նրա բնակիչներին, իր բոլոր բարեկամներին ու թշնամիներին։ Եվ ամենից շատ՝ միավորված հայրենիքի իր երազանքը։

—Մի տխրիր, արքա,— այս անգամ անկեղծ կարեկցանքով նրան գիմեց Հայր Մարդպետը։— Ախր ոչ ոք նրանց չի տեսնում... Ոչ ոք չի իմանա...

Գլուխ քսաներկուերորդ

Պատմիչն ասում է.

«Այն ժամանակ պարսից Շապուհ թագավորը իր մոտ է հրավիրում հայոց Արշակ թագավորին և նրան մեծարում է մեծ պատվով ու փառքով։ Ուրախության ժամանակ նրանք մի տախտի վրա էին բազմում գահերում, միևնույն գույնի և միևնույն նշաններով ու զարդերով միատեսակ զգեստ էին հագնում, ամեն օր միատեսակ թագ էր պատրաստում պարսից թագավորը իր և նրա համար...

... Շապուհ թագավորը երդում էր անել տալիս հայոց Արշակ թագավորին աստվածային ավետարանի վրա, որ նրան չի խաբի, չի դավաճանի, այլ հաստատ կմնա իր ուխտին և նրա հետ դաշինքը անխախտ կպահպանի։

... Իսկ այն սուրբ ավետարանը, որի վրա Արշակ թագավորը երդվեց, կապել տվեց երկաթե լարերով և, իր մատա-

նիով կնքելով, հրամայեց գանձարանում զգուշությամբ պահել»։

Պատմիչն ասում է.

«Կոստանդիանոսը իր մոտ կանչեց հայոց թագավոր Արշակին, ընդունեց ամենամեծ սիրալիրությամբ և ամեն կերպ հորդորեց նրան, որ հավատարիմ բարեկամ մնա... Որովհետև լսել էր, որ պարսից թագավորը բազմիցս փորձեր էր արել, դիմելով խաբեության, սպառնալիքների և նենգության, որպեսզի նրան հարկադրի հրաժարվել Հռոմի հետ դաշնակցությունից և սերտ կերպով կապի իր հետ։

Արշակը կրկին ու կրկին հավաստիացրեց, որ ավելի շուտ վերջ կտա կյանքին, քան կփոխի իր մտադրությունը»։

Պատմիչներից ոչ մեկը, սակայն, գրի չի առել Արշակավանում կատարված մի հավաստի դեպք։ Գրի չի առել, երևի չիմանալով կամ շատ աննշան համարելով։ Մինչդեռ Բակուրի և Աշխենի սիրո ասքը նույնքան պատմական նշանակություն ուներ երկրի բախտի համար, որքան փոքր ու մեծ ճակատամարտերն ու դիվանագիտական հարաբերությունները։

Երբ Աշխենը ծնողների հետ Արշակավան եկավ բնակություն հաստատելու, տարիքային այն սահմանագծին էր, երբ ոչ մեծ էր տակավին, ոչ էլ փոքր։ Երեխաները նրան չէին ընդունում, քանի որ մեծ էր, իսկ մեծերն էլ բանի տեղ չէին դնում, քանի որ երեխա էին համարում դեռ։ Ահա թե ինչու, երբ ծնողները որոշեցին աղջկան մարդու տալ, Աշխենը շատ ուրախացավ և անմիջապես համաձայնություն տվեց։

Առոք փառոք հարսանիք արեցին ու Աշխենին ամուսնացրին Արտավազդի հետ։

Հարսանիքը տևեց յոթ օր ու յոթ գիշեր, քանի որ հայ հեթանոս աստվածները յոթն էին։ Ամեն մի օրը նվիրված էր նրանցից մեկին։

Եթե իրենց նախկին գյուղում լինեին, երաժիշտները կբարձրանային հարսնեստան կտուրը և, հատուկ մի եղանակ նվագելով, կհրավիրեին բոլորին։ Բայց սա քաղաք էր, այն էլ՝ օտար ու հսկայական, երկու կողմերն էլ բարեկամ ու ազգական գրեթե չունեին, իսկ ի՞նչ հարսանիք առանց հյուրերի։ Երաժիշտները, հարսնեստան ներկայացուցչի ուղեկցությամբ, շրջում էին քաղաքի փողոցներում, մոտենում պատահական տների, նվագում ու հարսանիքի հրավիրում...

Աշխենի հարսանիքն անցավ անծանոթ մարդկանց ներկայությամբ, առանց որևէ հարազատի։

Նույնիսկ հարսնացուի ընկերուհիները՝ ծաղկվորները, օտար աղջիկներ էին, որ պիտի լողացնեին նրան, հագցնեին, մազերը հյուսեին, մերթ ուրախ և մերթ տխուր երգեր երգելով, պիտի պաշտպանեին նրա զգեստները, զարդերն ու ագանելիքները ոչ միայն թագվորցիների, այլև մյուս բոլոր պատանիների հափշտակումներից, հատկապես չպիտի թույլ տային, որ նրանց քակից աքլոր որսային։

Հերիք չէր, որ հոր ու մոր փեշի տակ մեծացած անմեղ աղջկա էին հարս տանում, օտար ու անսիրտ կանայք, հմայական գործողություններ կատարելով, մաղում էին պտղաբերությունը խորհրդանշող ալյուրը, խմորի տաշտի վրա մոմեր էին վառում, որպեսզի առանց այդ էլ լույսի նման հարսը... լույսի՞ պես պայծառանար։ Այնքան մաղեցին, որ հետագա մի քանի տարում Աշխենը բնավ չպտղաբերեց... Մաղողները գլխներին և տաշտի երեսին կարմիր քող էին գցում, որ հարսը ամոթխած ու հնազանդ լիներ։ Եվ լռությամբ էին մաղում, որ հարսը չխոսկան դառնար։

Հնազանդ չեմ լինի, պիտի խոսեմ, հա՛ պիտի խոսեմ, ընդդիմացավ աղջկա հոգին, որոշելով, որ ինքը թշնամիներով է շրջապատված և որ դա ոչ թե սովորական ծես է, այլ հատուկ իր դեմ ուղղված մեծերի դավադրություն։ Այն-

քան խոսեմ, որ Արտավազդի ականջը խլանա։ Ինչ էլ ասի, չեմ լսելու, չեմ ենթարկվելու, թող աչքն էլ դուրս գա։ Այսպես, հենց սկզբից նա լարվեց ամուսնու դեմ, որը նրան տարեկից ծաղկատար դեմքով լողլող մի տղա էր։

Արտավազդը ևս առաջին իսկ օրից լարվեց ու ոխ կապեց հարսնացուի դեմ։ Աղջկա կողմի կտրիճները, օգտվելով փեսայի շքախմբի անդամների՝ մակարների, թույլ հսկողությունից, գողունի մտել էին նրանց տունը ու գողացել, ավար առել նրա գլխարկը։ Իսկ դա վերին աստիճանի խայտառակություն էր ամեն մի տղամարդու համար։ Փեսայի ծնողները ոտ ու ձեռք էին ընկել, վախեցած, որ գուցե հակառակորդները, կախարդությամբ, թագվորի առնական կարողությունն էլ էին խափանել։

Հարսանիքի հենց առաջին գիշերը, ամուսնական առագաստի մոտ, Աշխենն ու Արտավազդը ծեծեցին իրար։ Ըստ որում, ընդհարման մեջ ամենավճռական նշանակությունն ունեցան աղջկա երկար եղունգները, նրա ներքին թափը ու վառվռուն խառնվածքը, որոնց առաջ լողլող փեսայի գերազանցող ուժը կորցրեց իր արժեքը։

Իսկ առավոտյան, դրկից կանայք, փեսայի տանը հավաքված, սպասում էին կուսության առհավատչյան, արյունոտ սավանը։ Մինչդեռ հարս ու փեսա, կռիվներից հոգնած ու թուլացած, կծկվել, շորերով պառկել էին գետնին, առագաստի երկու տարբեր կողմերում։

Այսպես սկսվեց ու այսպես էլ շարունակվեց նրանց համատեղ կյանքը։

Արտավազդը հասցրեց լիովին լուծել առաջին օրվա պարտության վրեժը։ Ամեն գիշեր, կարծես ընթրիքի փոխարեն, ծեծում էր կնոջը, ապա անկողին մտնում նրա հետ։

Գիշերը մղձավանջ էր Աշխենի համար։ Երազում էր ամառվա մասին, երբ օրերը երկարում են, ու արևը, իր միակ դաշնակիցը, երկար-երկար մնում է կապույտ երկնակամարում։

Թակուրին չէր կարող չսիրել։ Որովհետև նա էլ արևի պես մի բան դարձավ իր կյանքում։ Ապակե զարդեր էր ծախում շուկայում, ուլունքներ, օղեր, մանյակներ, ճարմանդ-

ներ։ Այնքան շատ գնումներ արեց նրանից, որ հետո չգիտեր որտեղ օգտագործի։ Ցերեկները զուգվում-զարդարվում էր, իսկ իրիկնադեմին, երբ մոտենում էր ամուսնու վերադարձի ժամը, ամեն ինչ հանում էր վրայից ու թաքցնում ապահով մի տեղ։ Չէր ուզում գեղեցիկ երևալ նրա աչքին։ Չէր ուզում երևալ Բակուրից գնած զարդերով։ Թեև, առանց այդ էլ, մռայլ ամուսինը երբեք ուշադրություն չէր դարձնում նրա վրա։

Բակուրն սկսեց հատուկ զարդեր պատրաստել նրա համար։ Բան ու գործ թողած, ի հաշիվ իր ապրուստի, ժամերով ուլունքների կամ օղերի վրա էր աշխատում, մինչև համոզվեր, որ իր ձեռքերը կատարելություն են ստեղծել։

Բակուրը, ի տարբերություն ամուսնու, ժպտում էր միշտ, ժլատ չէր խոսելու մեջ, աչքերում կյանք կար, հայացքի մեջ՝ խորհրդավոր խոստումներ, շարժումները ծանր չէին Արտավազդի պես, այլ թեթև և առույգ, փնթի չէր նրա նման, այլ կոկիկ ու գեղեցիկ հագնված, կարճ, հաղիվ մինչև ծունկները հասնող պարեգոտ, փոկյա գոտի, վարսակալ, ուսերին՝ գառնենու մեկնոց։ Բարձրահասակ չէր ինչպես Արտավազդը, այլ միջահասակ։ Նույնիսկ դա՞ առավելություն էր թվում Աշխենին։

Բակուրը մի անգամ առաջարկեց ձրի տալ ապակե զարդերը, բայց Աշխենը հրաժարվեց։ Երկրորդ անգամ պնդեց Բակուրը, իսկ Աշխենը նորից չհամաձայնեց։ Ի վերջո, օրերից մի օր, մի փոքր զիջեց ու զեղչով արեց գնումները։ Հետո՝ է՛լ ավելի էժան առավ։ Սակայն միշտ մի բան վճարում էր, թեկուզ և շատ քիչ, միայն թե խորհրդանշական մի գումար տված լիներ։

Երկուսն էլ հասկանում էին, որ դա սիրո ու համակրանքի խոստովանություն էր, որը մի կողմը շռայլաբար էր անում, իսկ մյուսը՝ դիմադրում էր դեռ։ Ճիշտ է, հալչում էր դիմադրությունը, բարակում, թուլանում, բայց Աշխենը լրիվ անձնատուր չէր լինում։

Նա վախենում էր, որ տեղի չտա հանկարծ։ Թթե, աստված մի արասցե, իմանային, խայտառակ կանեին հրապարակով մեկ, կառավարչի օգնականներից մեկը, որն ամենա-

նողկալին էր բոլորից, նրան կկանգնեցներ հրապարակի մեջտեղում և, մեծ բազմության առաջ, որպես պատիժ ու որպես անարգանքի նշան, կկտրեր նրա երկար ծամերը։

Իսկ այդ օգնականից բոլորն էին վախենում։ Կարճ, կոպիտ ու հարթ մազերով մարդուն տեսնելուն պես ծակուծուկ էին փախչում ամենքը, աշխատում էին աչքին չերևալ։ Երեխաներին նրա անունով էին վախեցնում։ Աշխենը վստահ էր, որ եթե բռնվեր, հենց նրա ձեռքն էր ընկնելու։ Եթե նույնիսկ բախտը բերեր, և մյուս օգնականներից մեկն զբաղվեր նրա հարցով, միևնույն է, նա կիմանար, կպահանջեր, ամեն ինչ կաներ, միայն թե օրինազանցին իրեն հանձնեին։

Իսկ ամուսնուն թողնելն ու բաժանվելը արգելված էր օրենքով։ Ճակատին գրված էր մինչև կյանքի վերջը տանել իր խաչը, զզվանքով ու տառապանքով հանդուրժել երկար գիշերները և, աչքն առաստաղին, անհամբեր սպասել արևածագին։

Չէ, Արշակավանում, ինչպես և ամենուր, ապահարզանի իրավունք չկար։

Իսկ քանի-քանիսն էին փախել, եկել Արշակավան, որպեսզի հեռանային, բաժանվեին իրենց չսիրած ամուսիններից ու կանանցից, քանի-քանիսն էին ապաստան գտել այս հյուրընկալ քաղաքի կամարների տակ, քանի-քանի սիրահարներ էին միացել՝ իրենց այս նոր հանգրվանում։

Իսկ եթե այստե՞ղ ես ամուսնացել, այստե՛ղ, այստե՛ղ, այս նույն ազատ քաղաքում ու դժբախտացե՞լ, եթե այստե՞ղ ես սիրել մեկ ուրիշի, եթե այսքան մո՞տ է սխալն ուղղելու ու երջանկանալու իրական ու շոշափելի հեռանկարը...

Չէ, Արշակավանում, ինչպես և ամենուր, ապահարզանի իրավունք չկար։

Բայց Աշխենը հաշտվել չգիտեր, զգացմունքները հորդում, թափվում էին ափերից, պայթում, լույս աշխարհ ելնում նույնիսկ սեփական հոգու միջից։ Անճարակ ջանքերով կապանքներ էր դնում ինքն իր վրա, հետո արագությամբ ու ճարպկությամբ հենց ինքն էլ քանդում։ Որոշում էր այլևս շուկա չգնալ, դեն գցել անիմաստորեն առատ իր զարդերը,

օր ու գիշեր տնային գործերի լծվել և ճաշ եփելու ու լվացք անելու տաղտուկի մեջ մոռանալ ամեն ինչ։ Ու վազում էր շուկա։ Ջեղչով զարդեր գնում։ Եվ զգում, որ ուրիշ զարդեր են սրանք, հույժ գեղեցիկ և չափազանց նուրբ, միայն մի՛ հոգու համար պատրաստված։ Եվ դրանք դառնում էին ոսկուց ու ադամանդից էլ թանկ։ Ի՞նչ նշանակություն ունի, ապակի՞ է, թե՞ մարգարիտ, կարևորն այն է, թե դու ինչպե՞ս ես կրում դրանք, քի՞չ մարդիկ կան, որ լողում են ոսկիների մեջ, որոնք ոչ մի ուրախություն չեն պատճառում։

Ու նա ձրի վերցրեց, ձրի՛...

Եվ այդ օրը նրանք մարդ ու կին դարձան քաղաքի հեռավոր ու ամայի արվարձանում, ամուսնական առագաստի փոխարեն՝ խոտի դեզ, ծաղկվորների ու մակարների տեղ՝ միայն իրենք, ալյուր մաղողների դիմաց՝ միայն ու միայն իրենք, երաժիշտների տեղակ՝ ծղրիդների չարաճճի ձայն, հարսանքավորների փոխարեն՝ էլի ու էլի իրենք, միա՛յն իրենք, երկուսո՛վ, մի տղամարդ ու մի կին։

Եվ Աշխենին թվաց, թե առաջին գիշերվա անհայտության հուզմունքը հիմա զգաց միայն, հիմա միայն զգաց այն հաճելի մարմնական ցավը, որ հավիտենական սիրո ու համատեղ կյանքի սրբազան սկիզբն է։ Եվ վստահ էր նա, համոզված էր հաստատ, որ միայն Բակուրն ստացավ իր կուսության առհավատչյան։

Ցերեկներն այդ օրվանից է՛լ ավելի իմաստավորվեցին նրա համար, իսկ գիշերները դարձան առավել ահարկու։ Ամառներն է՛լ ավելի սիրելի թվացին նրան, իսկ ձմեռները՝ առավել ցուրտ ու դաժան։

Նրանք հանդիպում էին նույն խոտի դեզի մոտ, որ աստված կարծես ստեղծել էր հատուկ իրենց համար, հետաքրքրքրասեր հայացքներից ու չար աչքերից հեռու։

Եվ Բակուրն այլևս ապակե զարդեր չէր նվիրում նրան, թեև պատրաստում և վաճառում էր ուրիշներին։ Ուշադրության այդ պակասը, աստված վկա, հաստատումն էր այն բանի, որ նրանք ամուսիններ էին արդեն, ոչ թե սովորական, այլ ամենաբա՛ձր օրենքի առաջ...

Իսկ երբ դեպքից դեպք, տոների առթիվ, նվեր էր ստա-

նում Աշխենը, ուրախությունից երկինք էր թռչում ու կարծես մի մեծ գանձի տեր դառնում։ Մանավանդ, որ դրանք, ինչպես և առաջ, դարձյալ պատրաստված էին լինում հատուկ իր համար։ Բայց տուն չէր տանում, պահում էր դեզի խորքերում, որպեսզի ամուսնու հայացքը չաղտոտի, չապականի դրանք։

Բացօթյա տուն էին կառուցել իրենց համար, առանց պատերի ու առանց երդիկի։ Բայց քաղաքը մեծանում էր և սպառնում հայտնաբերել նրանց բնակատեղին։ Սա առաջին հարվածն էր, որ ստացան նրանք։ Երկրորդ հարվածն այն էր, որ մի առավոտ Աշխենը սրտխառնուք զգաց ու թեթևակի գլխապտույտ։ Կանացի բնազդը հուշեց, որ հղի է։ Ուրախությունից սիրտը թունդ եկավ ու, միաժամանակ, սարսափից լեղապատառ եղավ։ Է՛լ առավել սիրեց Բակուրին ու առավել ատեց մոայլ ամուսնուն։ Որքան տանջեցին, ծաղրեցին իրեն, որ արգանդը անպտուղ է, պառավ կանայք որքան հմայություններ արեցին վրան, որքան դեղեր խմեցրին բռնությամբ։ Քիչ էր մնում, կանացի արժանապատվությունը վերականգնելու համար, ամեն վտանգ մոռացած, գնար ու եղելության մասին բարձր-բարձր հայտարարեր ամենուրեք։ Բայց ո՞ւր պիտի ծնվեր որդին կամ դուստրը, այս տա՞նը, այս ճնշող երդիկի տա՞կ, ինքն ինչպե՞ս պիտի տեսներ Արտավազդի երջանկությունից փայլող աչքերը, ինչպե՞ս պիտի հանդուրժեր, որ, Բակուրի փոխարեն, նա կնքեր իրենց զավակի անունը, և զավակը մեծանար՝ իսկ և իսկ Բակուրի դեմքով, իսկ և իսկ նրա քթից ընկած։ Ու չիմանար այդ մասին։ Բակուրն էլ չտեսներ նրան։

Աշխենը վազում էր քաղաքի փողոցներով, վազում էր որքան ուժ կար ոտքերի մեջ, որքան եռանդ ու թափ կար հոգում, առանց բանի տեղ դնելու իրեն ուղղված՝ նախատինքով լի հայացքները, առանց ուշադրություն դարձնելու, թե մարդիկ ինչ կմտածեն իր մասին։ Նույնիսկ մոռացած հարթ ու կոպիտ մազերով վերակացուի գոյությունը։

Սա էր իր միակ փրկությունը, արգանդում խլրտացող այս փոքրիկ մարդուկը, որը երևի դժգոհ էր մոր խելահեղ վազքից։ Նա էր ստեղծում այն անելանելի, անլուծելի վիճակը,

որն ստիպո՛ւմ է, հարկադրո՛ւմ է ելք գտնել, մի ճար անել։ Կամ այս կողմ, կամ այն կողմ, բայց ո՛չ մեջտեղում, բայց ո՛չ սահմանագծին, բայց ո՛չ արանքում։

Շուկայում նա դյուրությամբ գտավ Բակուրին, հեռվից կանչեց նրան, ապա, ձեռքից բռնած, վազելով քաշեց տարավ դեպի իրենց գեղը։ Բակուրը չէր հասկանում, թե ինչ էր կատարվում, ուրա՞խ էր Աշխենը, թե՞ տխուր, երջանկությո՞ւն էր սա, թե՞ դժբախտություն։ Միայն կրկնում էր անընդհատ՝ ամոթ է, ի՞նչ ես անում, գոնե ձեռքս բաց թող... Չէր բաց թողնում, թքա՛ծ ամենքի վրա, հիմա իրենք շատ են, հիմա երեք հոգի են իրենք...

Երբ Բակուրն իմացավ լուրը, հրճվանքից գրկեց ու գետնից պոկեց կնոջը։ Սկսեց անուն մտածել։ Գուշակել, թե ո՞վ կծնվի, տղա՞, թե՞ աղջիկ։ Վիճել ինքն իր հետ, թե ո՞րն ավելի կնախընտրեր։ Հետո, տեսնելով Աշխենի տխուր հայացքը, իսկույն լռեց ու մռայլվեց։

Կողք-կողքի պառկած էին խոտի դեզի վրա, աչքերը՝ երկնքին, ականջները՝ ծղրիդների միապաղաղ ձայնին։ Ու միտք էին անում։ Միտք էին անում ու ելք որոնում։

Իսկ քաղաքը, որ աճում էր և, գազանի պես թաթերը պարզած, անընդհատ առաջանում, սպառնալիքով ու թշնամանքով նայում էր դժբախտ ամուսիններին, աչքը տնկած նրանց դեզի վրա։

Ախորժակը՝ մեծ, թափը՝ հսկայական։ Ու նրա և աշխարհի դիմաց՝ երեք անօգնական ու անպաշտպան էակ։

Աշխենը հանկարծ վեր կացավ պառկած տեղից, վճռական նստեց դեզի վրա, հավաքեց ծնկները ու, առանց Բակուրին նայելու, հայտնեց իր վերջնական վճիռը.

— Ես տուն չեմ դառնա։ Թող իմ մազերն էլ կտրեն։ Թող խայտառակ անեն հրապարակում։ Բայց տուն չեմ դառնա։

— Ախր գիտես, որ դա անհնար է,— փորի վրա շրջվեց Բակուրը ու գլուխը թաղեց խոտերի մեջ։— Ոչ ոք քեզ չի բաժանի քո ամուսնուց։ Քեզ էլ կպատժեն, ինձ էլ։

— Թող ինչ ուզում է անեն... Ես քեզ մոտ եմ մնալու... Դու ես իմ ամուսինը... Ուզո՞ւմ ես՝ գոռամ... Փողոցներն ընկնեմ ու գոռամ... Թող ամբողջ աշխարհն իմանա...

Ու գոռաց։ Բարձր, ամբողջ կոկորդով։

— Ա-ա՜-ա-ա՜-ա-ա՜...

Բակուրը սարսափահար վեր թռավ, բայց, տեսնելով ինքն իր ձայնից վախեցած Աշխենին, այլևս սիրտ չարեց որևէ բան ասելու։

— Ես չեմ ամաչում իմ սիրուց... Իսկ դու... ամաչում ես...

Աշխենն սկսեց հեկեկալ։ Բակուրը քարացած մեխվել էր տեղում և փորձ էլ չէր անում նրան մխիթարելու կամ հանգստացնելու։ Ոչ էլ ժխտեց նրա մեղադրանքը, ոչ էլ առարկեց։

Հետո ծայր առավ մի ծանր խոսակցություն։ Թե ով է ում ավելի սիրել։ Ոչ թե սիրում, հիմա՜ սիրում, այլ սիրել ժամանակին։ Փոխադարձ նախատինքներ, թե ում համար է ավելի դժվար եղել, Աշխենի՞, որ նույն հարկի տակ ապրել է չսիրած մարդու հետ, թե՞ Բակուրի, որ զրկված է եղել ամեն պահ նրա հետ լինելու, ընտանիք կազմելու բախտավորությունից։ Իսկ եթե չի սիրել ամուսնուն, ինչո՞ւ է տրվել նրան։ Դե պատասխան տուր, տո՛ւր, եթե կարող ես։ Դավաճանել է իրեն։ Սեփական ամուսնու հետ։ Գոնե կարգին մարդ լիներ։ Բակուրը մի անգամ, հետաքրքրությունից մղված, փնտրել, գտել էր նրան ու տեսել։ Թող ծեծ ու ջարդ ուտեր, թող արյունլվիկ լիներ, բայց չպառկեր հետը։ Եվ, այսպես, երկուսն էլ աստիճանաբար կեղտոտվեցին ու կեղտոտեցին իրար։

— Իսկ դու չե՞ս թողնի ինձ...— հանկարծ Բակուրի վրա ընկավ Աշխենը և բռնեց պարեգոտի օձիքից։— Չե՞ս վախենա պատժից... Չե՞ս փախչի...

Հարցերի այս տարափը ոչ մի կապ չուներ խոսակցության ընթացքի հետ, այնքան անսպասելի էր, որ երկուսն էլ լռեցին ու տարակուսանքով նայեցին իրար։

Եվ հասկացան, որ իրենք մեղավոր չէին, մեղքը ոչ Աշխենինն էր, ոչ Բակուրինը, ոչ էլ իրենց զավակինը, այլ դուրս էր իրենցից։ Ինչ-որ տեղ շրջակայքում։ Ոչ հեռվում։ Հենց այս քաղաքո՛ւմ, որի անունն էր Արշակավան։

Եվ նա, վարակված կնոջ հուզմունքից ու խռովքից, ժըպտաց ու տարօրինակ հանգստությամբ պատասխանեց.

— Մենք միշտ միասին կլինենք... Միշտ երկուսով...

— Ստում ես,— ինչ-որ կասկածելի բան տեսնելով նրա հանգստության մեջ, Աշխենը հուսահատ թափ տվեց նրա օձիքը։— Ես չեմ հավատում քեզ... Քեզ համար ինչ կա... Դու ազատ մարդ ես... Ես եմ միայն տառապելու...

Բակուրը գտել էր ելքը, ի տարբերություն Աշխենի, որ ոչ մի ելք չուներ ու չէր էլ կարող ունենալ։ Անշուշտ գտել էր Բակուրը։ Նա կթողնի ու կհեռանա։ Միակ խելացի ու հարմար որոշումը։ Տղամարդու հետ ծնված, տղամարդու հետ հասունացած որոշումը։ Աշխարհիս երեսին որքան կին կա, այնքան էլ՝ տարբեր վճիռ, և որքան տղամարդ՝ ընդամենը մի, մի՛ ճանապարհ միայն։ Այնպես որ, մեղավոր չէր Բակուրը, իր սիրելի, իր մի հատիկ ամուսինը, մեղավորը նրա սեռն էր, նրա տեսակը, նրա պատկանելությունը...

— Ես խոստանում եմ... Դու չես տառապի...— նույն տարօրինակ հանգստությամբ ասաց Բակուրը, և Աշխենի կասկածներն է՛լ ավելի մեծացան։— Ես չեմ թողնի, որ քո մազերը կտրեն...

— Ուրիշ կանայք իրենց ամուսիններից փախան, եկան Արշակավան,— հուսահատությունից իր վիճակն էր վերլուծում Աշխենը և անզուսպ հեկեկում։— Տղամարդիկ իրենց կանանցից փախան... Իսկ ե՞ս ուր փախչեմ...

Բակուրը ոտքի ելավ, բռնեց Աշխենի ձեռքից ու ստիպեց կանգնել։ Ապա, նրա ձեռքից այդպես բռնած, սկսեց քայլել ու նրան տանել իր ետևից։

Աշխենը տարակուսանքով հետևում էր Բակուրին, քիթն անընդհատ վեր քաշում ու թևքով սրբում արցունքները։

— Ո՞ւր ես տանում... Մարդիկ կտեսնեն...

— Տես...— խորհրդավոր ու անհասկանալի ժպտում էր Բակուրը։— Այնտեղ ազատություն է...

— Ի՞նչ ազատություն... Գիտե՞ս ես, ինչ է...

— Ցանկապատից այն կողմ...

Աշխենը վախեցած նայեց Բակուրին ու փորձեց ազատել

ձեռքը։ Նրան թվում էր, թե կառավարչի օդնականը, որ կարծես ընդունակ էր միաժամանակ ամեն տեղ լինելու, նույնիսկ՝ քաղաքի հարյուրավոր տներում միանգամից, թաքուն տեսնում էր իրենց ու ամեն ինչ լսում։ Ահա ուր որ է նա կբուսնի գետնի տակից, իր անբաժանելի մտրակը ձեռքին, ու գաժան հաշվեհարդար կտեսնի փախստականների հետ։

Իսկ Բակուրը, նույն առեղծվածային ժպիտը դեմքին, գրկեց նրան, բարձրացրեց հողից, առավ թևերի վրա, անշտապ քայլերով գնաց դեպի ցանկապատը, և Աշխենը նրա հայացքի մեջ դրսաց անեզր մի հանգստություն ու մի վարակիչ խաղաղություն։

— Քիչ մնաց, Աշխեն... Մի քիչ էլ համբերիր... Մի քիչ էլ... Տես, ինչ մոտ է ցանկապատը... Մենք մեր բոլոր տառապանքներն այստեղ կթողնենք... Մենք աղատ կլինենք... Շատ աղատ... Անսահման ազատ... Ես խոստանում եմ քեզ...

Բակուրն անցավ ցանկապատը և մի պահ, Աշխենին թևերի վրա գրկած, կանգ առավ, մեջքով՝ դեպի Արշակավանը։

— Բաց արա աչքերդ... Մի վախեցիր... Բաց արա, Աշխեն... Այ տես, ազատություն է արդեն... Մենք հիմա կվազենք երկուսով... Կգոռանք, և մեզ ոչ ոք չի լսի... Կթավալվենք խոտերի վրա... Հագուստներով կլողանք գետում... Աղատությունը հագուստներո՞վ լողալն է, Աշխեն... Կքնենք բաց երկնքի տակ... Ինչքան ասես խոտի դեզեր կան այս աշխարհում... Ես քեզ չեմ խաբում... Բաց արա աչքերդ...

Եվ Աշխենն աստիճանաբար բացեց աչքերը ու կարծես նոր լսեց քիչ առաջվա իր բացականչության արձագանքը հեռավոր հորիզոնից. ա-ա՜-ա-ա՜-ա-ա՜...

Գլուխ քսաներեքերորդ

Արքան Արշակավան այցելեց ու գիշերեց կիսավարտ պալատում։ Տկլոր մի շինություն էր դա, մարդկային շնչի չընտելացած, խարդավանքի ու բանսարկության դեռ

անսովոր։ Միայն մի սքահն էին կահավորել արքայի գալստյան առիթով, այն էլ՝ սոսկ մի օրով։

Արքան պառկած էր լայն մահճին, աչքերը առաստաղին հառած, ու քունը չէր տանում։ Բոլոր իրերը, առանց բացառության, խորթ էին թվում նրան, կարծես ուրիշի հարկի տակ էր ապաստան գտել և կամ իջևանում օթևանել։

Մահճի տաքերի մոտ, այծի մորթիով փաթաթված, գեռնին կուչ էր եկել Գնել իշխանն ու խոր քուն մտել, ասես, արքայի գալստյան առիթով, հարյուրավոր օրերի անքնության տեղն էր ուզում մի գիշերում հանել։

Սքահի պատերին վեռվեռում էին հրապարակում վառվող խարույկների թույլ բոցերը։ Դրսում ազմուկ էր։ Ջնայած խավարին ու անձրևին, մարդիկ աշխատում էին դեռ։ Իրար սրտապնդող ձայներից կարելի էր ենթադրել, որ խմբովի ինչ-որ ծանր բան էին տեղափոխում։

Արքան կարոտում էր Արտաշատի պալատը, իր հսկա պատն հանգստակեցությունը, գորգերը, գահույքները և փափուկ, փետրալի բարձերը, համեղ ու ընտիր կերակուրները և զգում էր, որ մի օրից ավելի սիրտը չի դիմանա այս պալատում։

Կռվում էր իր հետ, համառորեն մխիթարում իրեն, որ կվարժվի։ Այստեղ ևս կստեղծի նույն պայմանները։ Եվ իր նոր տունը կդառնա բարության, հավատարմության ու մարդասիրության կենտրոն։ Անկեղծության մթնոլորտ կտիրի նրա բոլոր սրահներում։ Ոչ մի երկիմաստ խոսք չի հնչի նրա կամարների տակ։ Դավադրությունն այստեղ հող չի գտնի ծաղկելու համար։ Ստորությունն ու նենգությունը կդառնան տխուր ու վաղնջական հիշողություն։

Բայց ուշքն ու միտքը Արտաշատի պալատումն էր...

Նա այստե՛ղ կհաղթահարի իր մենակությունը, որն ստվերի պես հետևում էր իրեն ամենուրեք։ Երբ բոլորովին մենակ էր մնում, մնում էր ինքն իր հետ, նահանջում էր մենակությունը ու հանգիստ թողնում իր օձիքը։ Եվ իրեն միայնակ էր զգում միայն մարդկանց մեջ, նրանց հետ զրուցելիս, հարցեր քննարկելիս, ճաշկերույթի նստելիս, կատակելիս և հատկապե՛ս, հատկապե՛ս քեֆ անելիս։

Ու երբ մենության զգացումն այնքան սրվեց, որ գրեթե

որոշակի կերպարանք ստացավ, նա վճռեց հանդիպել իր մանկության ընկերոջ՝ Եփրեմի հետ։ Մի օր, գոնե մի օր իրեն թույլ տալ՝ ժամանակն անցկացնելու ոչ թե իշխանավորի, պատգամավորի, զինվորականի կամ պալատական գործակալի, այլ մի սովորական մարդու հետ։ Եվ նրա միջոցով մոռանալ իր արքա լինելը, մարդկայնանալ նրա շնորհիվ ու, մենակության եղջյուրներից բռնած, դուրս շպրտել դրան պատուհանից։

Սպասեց, սպասեց ամբողջ երեկոն, իսկ Եփրեմը չեկավ ու չեկավ։

Ըստ որում, ուզեց նրան հանդիպել ոչ թե Արտաշատում, հոգսերի ու ցավերի այդ գարշահոտ ճահճում, այլ այստեղ, Արշակավանում, իր կիսավարտ պալատում, կտրված աշխարհից ու մարդկանցից, ամենօրյա կահավորանքից ու դեմքերից, որոնցից ամեն մեկի հետ մի ծանր ու տհաճ հիշողություն էր կապված։

Արտաշատում նրանք անապահով կզգային իրենց, շրջապատի հետ ոչ ներդաշնակ, իսկ այստեղ երկու ընկերների հանդիպումը լուռ դաշինքի մեջ կմտներ առողջ ու բնական կյանքով ապրող քաղաքի հետ։

Իսկ Արշակավանը երևի երջանիկ է այսօր։ Բոլորը, ահել ու ջահել, գիտեն, որ արքան իրենց հյուրն է, որ նա հիմա քնած է իրենցից ոչ հեռու, առանց պարիսպ քաշելու իր ու քաղաքի բնակիչների միջև, ոչ թե միջնաբերդում, այլ ամենաբարձր բլրի վրա կառուցված երկհարկանի պալատում։ Երկուսն էլ, քաղաքն ու ինքը, անվտանգ են իրարով, ուժեղ են միմյանցով, թև ու թիկունք են մեկը մյուսին։ Ես շատ եմ ուզում ձեզ սիրել, արշակավանցիներ, իմ կողոսկրից ծնված քաղաքի բնակիչներ, շատ եմ ուզում ձեզ հասկանալ։ Եվ եթե դեռ չեմ կարողանում, դա ի՛մ մեղքն է, ոչ թե ձերը։ Ներող ու համբերող եղեք։ Դուք շատ եք, իսկ ես՝ մենակ։ Բոլորդ միասին՝ հանճարեղ, իսկ ես՝ սովորական միջակություն։ Ժամանակ տվեք ինձ։ Ձեզ սիրելու և հասկանալու։ Ձեր կոպիտ ձայների մեջ մեղեդի որսալու։ Ձեր անտաշ շարժումների մեջ բարեձևություն հայտնաբերելու։ Ձեր նեղլիկ տներում հոգու լայնություն տեսնելու։ Ձեր լեզուն, ձեր հայերենը

ըմբռնելու։ Միասին սպասենք և հուսանք։ Որովհետև այնքան էլ անընդունակ չէ ձեր արքան։

Նա շրջվեց կողքի, գլուխն իջեցրեց մահճից ու տենդորեն ձայն տվեց գետնին պառկած իշխանին.

— Գնե՛լ, Գնե՛լ... Վեր կաց... Բան ունեմ ասելու... Գնե՛լ...— Նա ուղղեց կողքի ընկած այծի մորթին ու հոգատարությամբ ծածկեց նրան։— Ինչ խորն ես քնած... Որքան առողջ ու համաչափ է շնչառությունդ...

Ապա նորից պառկեց մեջքի վրա ու շարունակեց խոսել քնած եղբոր որդու հետ։

— Երբ ես մեռնեմ, խոստացիր, որ ինձ կթաղես հեթանոսի պես... Լռության աշտարակում... Դու չահել ես, որտեղի՞ց իմանաս մեր պապերի սովորությունը... Դա մի բարձր, կլոր աշտարակ է... Քրից ու բնակավայրերից հեռու... Մեջտեղում՝ մի մեծ փոս... Փոսի շուրջը՝ առանձին տեղեր դիակների համար... Գիշատիչ թռչունները հարյուրներով հարձակվում են դիակների վրա և մի ժամվա մեջ քրքրում... Աշտարակում միայն կմախքներ են մնում... Նրանց գցում են ընդհանուր փոսի մեջ... Եվ ստացվում է մարդկանց կատարյալ հավասարություն...

Լռեց, ականջներում հնչող սեփական ձայնը դանակի պես կտրվեց, ու նա պարզորոշ լսեց լռությունը։ Ո՞վ էր ինքը։ Կիսաքրիստոնյա, կիսահեթանոս։ Կիսաուժեղ, կիսաթույլ։ Կիսաերջանիկ, կիսադժբախտ։ Կիսադաժան, կիսամարդասեր։ Ամեն ինչ կիսատ-պռատ։ Բայց չէ՞ որ առաջ այդպիսին չէր, ամբողջական մարդ էր ժամանակին, արատներն էլ էին լիարժեք, առաքինություններն էլ։ Ի՞նչ պատահեց։ Օրերից մի օր արթնացավ ու պարզվեց, որ գահն էլ էր կիսատ, իշխանությունն էլ, երկիրն էլ, ժամանակն էլ։

Տեսնես ի՞նչ է երազում գետնին պառկած այս թշվառ մարդը, միակը իր իմացած ու ճանաչած բոլոր մարդկանցից, որ անցյալ չունի։ Երևի երազների մեջ անգամ անցյալը չի այցելում նրան։ Երազների մեջ էլ չի կասկածում, հարց չի տալիս, ճամփա չի փնտրում։ Նա իսկական երջանկությունն ու կյանքի իմաստը գտավ իր «մահվան» օրվանից, ազատվեց բոլոր պարտավորություններից, նույնիսկ իր անձից ու

անունից, փոխարենը նվաճելով իր ամբողջականությունը։ Արքան խանդում էր նրան, զայրանում, կողոպտված զգում իրեն, որովհետև նա ամբողջականության հասավ շնորհիվ իր տիրոջ կիսատության։ Օգտվելով նրա դժբախտությունից։ Երկրի ծանր վիճակից։ Ստեղծված անելանելի կացությունից։ Պարսից արքայի կամ կայսրի մոտ, թեկուզ նրանք թուլամորթ էլ լինեին ի ծնե, այսպիսի մարդու գոյությունը խոպառ բացառվում էր։ Տիգրան Մեծի պալատում չէր կարող գնել ծնվել։ Հենց սա՛ էր արքային կատաղեցնում ու փրփրեցնում։ Եվ այս թշվառը հիմա, խոր քուն մտած, արքայի փառքն է երգում իր երազում, նրա հեքիաթն է հյուսում, տեսնում է նրան հզոր ու անկախ, միավորված հայրենիքով երջանիկ, սահմաններն՝ անառիկ, նախարարները՝ միաբան ու հավատարիմ, նրա առասպելը հասցնում է ապագա սերունդներին, և միամիտ հետնորդները հավատում են նրա ստեղծած ու փառաբանած աստվածային կերպարին ու բերնեբերան փոխանցում հեքիաթը։ Մինչդեռ արքայի քունն էլ չի տանում... Գոնե տաներ քունը... Քո՞ւնը տաներ գոնե... Աչքերն առաստաղին հառած, իր կորցրած կեսն է որոնում... Եվ սնունդ տալիս իր ծառայի երազներին...

Դուռը կիսով չափ բացվեց և, ջահը ձեռքին, նեղ բացվածքից ներս մտավ մի մարդ։ Եփրեմ աղատն էր, իր մանկության ընկերը։ Իր հանգստությունը։ Իր բագինը։ Իր խորանը։ Արքան պատանու թեթևությամբ ցատկեց մահճից, ընդառաջ վազեց, առավ գրկի մեջ, ամուր փաթաթվեց նրան ու երկար ժամանակ բաց չթողեց։

Գնելն արթնացավ աղմուկից և, քնկոտ աչքերը չփելով, ծույլ-ծույլ հորանջելով, առանց այցելուին ուշադրություն դարձնելու, դուրս եկավ սրահից։

— Դու չգիտես որքա՞ն էի կարոտել քեզ... Որքա՞ն էի զգում քո կարիքը...— Ընկերոջը կրծքին պինդ սեղմած, առանց դադարի խոսում էր արքան։— Ինձ ասել են, որ դու գրեթե ամեն օր ժամերով սպասել ես իմ ընդունարանում... Բայց ինչ արած, որ քո մանկության ընկերը, այդ թշվառ ու ողորմելի արքան, ժամանակ չէր գտնում քեզ հետ հանդիպելու... Ներիր, որ այսքան սպասեցնել եմ տվել...— Բռնեց

նրա ուսերից, հուզմունքով ու խանդաղատանքով նայեց նրան։— Չես փոխվել... Արևս վկա, չես փոխվել... Նույն Եփրեմն ես... Մի քիչ տխուր աչքերով... Մեծ, բարի ձեռքերով...— Եվ սիրով ու քնքշությամբ ավելացրեց.— Իմ այլանգակ, իմ տգեղ Եփրեմը... Իսկ ե՞ս... Տես ինչքան եմ փոխվել... Հիշո՞ւմ ես, ինչ էի առաջ... է՞, սիրելիս, արքա լինելը ոչ թե հաճույք է, այլ գործ, պարտականություն... Զրկանք ու մենակություն... Բայց սա ի՞նչ անամոթություն է, անընդհատ ես եմ խոսում... Մի բան ասա, ձայն հանիր...

— Հենց նոր հասա, արքա,— հարգանքով ու ակնածանքով ասաց Եփրեմը և, հազիվ նկատելի մի շարժումով, նույնիսկ գլուխ տվեց։— Ստացա հրահանգդ ու եկա Արշակավան։

— Մենք մինչև առավոտ ճատրակ կխաղանք քեզ հետ,— ցնծությամբ շարունակեց արքան, վստահ, որ այդ լուրը նրան էլ պիտի երջանկացներ։— Կլռենք ու կխաղանք... Եվ այդ լռությունը ավելի պերճախոս կլինի, քան ուզածդ խոսքերը...

Ճատրակի գաղտակուր սեղանը ցերեկվանից պատրաստ էր արդեն։ Արքան ձեռքի նշանով նրան հրավիրեց նստելու փափուկ բազկաթոռին, ապա ինքն էլ տեղավորվեց նրա դիմաց։ Հանկարծ, մի բանից անհանգստացած, անմիջապես վեր կացավ, մոտեցավ մահճին, կռացավ ու սկսեց ինչ-որ բան փնտրել տակը։ Հետո ուղղեց մարմինը և, ժպիտը դեմքին, բերեց իր կարմիր մաշիկները։

— Հանիր կոշիկներդ,— հոգատարությամբ ասաց նա։— Հոգնած կլինես։

Եփրեմը դա ընդունեց որպես հրաման, շփոթված հանեց կոշիկները և հագավ արքայի կարմիր մաշիկները։ Այն գույնի մաշիկները, որոնց համար գլուխկոնծի կտային նախարարները։ Եվ եթե բախտը նույնիսկ ժպտար նրանց, միևնույն է, կստանային միայն մեկը, որովհետև երկու կարմիր մաշիկ իրավունք ուներ կրելու միայն արքան։ Նա վերցրեց ընկերոջ ծանր կոշիկները, տարավ, տեղավորեց դռան մոտ։ Ապա բերեց սամուրենին ու գցեց Եփրեմի ուսերին, որպեսզի շմրսի ցուրտ սրահում։

— Ուրեմն, եթե ես գլխի չընկնեի, դու բան չէիր ասե-

լու,— հանդիմանեց արքան։— Համենայն դեպս, ես ինձ այդպես չէի պահի ձեր տանը։

Եվ քանի որ արքայի հանդիմանությունն էլ հրաման էր, Եփրեմը խորապես մեղավոր զգաց իրեն ու մինչև ականջների ծայրը կարմրեց ամոթից։

— Նախքան մեծ լռությունը մի հարց էլ ու վերջ... Կինդ ինչպե՞ս է... Երեխաներդ... Ողջ առո՞ղջ են...

— Փառք տիրոջ, բոլորն էլ լավ են։

— Կարգին տեղավորեցի՞ն քեզ։ Տես, եթե դժգոհություն ունես, չթաքցնես ինձանից։

— Շնորհակալություն, արքա։

— Վաղը ես կայցելեմ քո իշխանը, աչքովս կտեսնեմ։ Եթե չհավանեմ սենյակդ, ձեռքիցս չես աղատվի։ Բայց ոչ մի հատուկ պատրաստություն։ Լսո՞ւմ ես։ Ես ընդամենը մի քանի րոպեով կգամ։ Իսկ հիմա...— հանդիսավոր հայտարարեց նա,— հիմա սկսում է մեծ լռությունը։

Ճատրակի տախտակի վրա կատարեց իր առաջին քայլը, որ նշանակում էր մի դիշերով, գոնե մի գիշերով փախչել իրականությունից, փակել ականջներն ու աչքերը, ոչինչ չտեսնել, ոչինչ չլսել։ Մոռանալ, գոնե մի օրով մոռանալ կայսրի՞ն էլ, պարսից թագավորի՞ն էլ, մարդկայնության դասեր առնել մանկության ընկերոջից, որպեսզի, նոր գիտելիքներով զինված, ավելի հեշտ և ավելի ճիշտ շարունակի պայքարը օտար թշնամու, արյունակից դավադրի ու սեփական մենակության դեմ։

Բայց ինչպե՞ս մոռանա Կոստանդիանոս կայսրին, որ եկել, լաց է եղել Ամիդի ավերակների վրա ու չի հասցրել Արևմուտք վերադառնալ՝ հորեղբորորդու, Հուլիանոսի, դավադրությունը ճնշելու, ու ծանր հիվանդությունից մահացել է Կիլիկիայում։ Ինչպե՞ս մոռանաս Հուլիանոսի Ուրացող մականունը, որ նա ստացել էր քրիստոնեությունից հրաժարվելու ու կրկին հեթանոսություն ընդունելու համար։ Ինչպե՞ս մոռանաս նրա գոռոզությունն ու ամբարտավանությունը, որ նա ցուցաբերեց Տիգրիսն անցնելիս, հրամայելով այրել իր ամբողջ մեծ նավատորմիղը, որպեսզի բանակը նահանջի մասին չմտածեր, իսկ Շապուհը կրակի տվեց բարեբեր հով-

տի դաշտերը ու սովի մատնեց բյուզանդացիներին։ Կլինի՞ մոռանալ ճանճերի ու մոծակների ահռելի խմբերը, որոնք «ցերեկը արևի լույսն էին կտրում, գիշերը՝ աստղերինը»։ Եվ կլինի՞ հաշտվել այն մտքի հետ, որ, թշնամու արձակած նետից մահացած Հուլիանոսի փոխարեն, ահաբեկված բյուզանդական բանակը կայսր ընտրեց իր զորապետներից մեկին՝ վատասիրտ Հովիանոսին։ Ինչո՞ւ և ինչպե՞ս հաշտվել, երբ օտարի ոչ միայն հաջողությունը, այլ սխալն անգամ օդի մեջ պտտվում-պտտվում ու գալիս, քեզ է հարվածում նորից։ Ի՞նչ գործ ունեմ ես ձեր հանճարեղ քայլերի կամ անշնորհք սխալների հետ, ինչո՞ւ մյուս թշնամին մի դեպքում պիտի տուժի գրանցից, մի այլ դեպքում՝ օգտվի, ու երկու դեպքում էլ ե՞ս պիտի լինեմ միակ տուժողը։ Հովիանոսը ամաթալի դաշնագիր կնքեց Պարսկաստանի հետ, Հայաստանը լիովին հանձնելով Շապուհի տնօրինությանը։ Մինչդեռ հայերի բախտը բերել է հենց այն պատճառով, որ երկու հզոր հարևաններն են ցանկացել կուլ տալ իրենց, և ոչ թե մեկը։ Նման պարագայում կարելի էր մի կերպ ճողոպրել երկուսի ատամների արանքից։ Իսկ հիմա դեմ առ դեմ կանգնած ես միայն մեկի հետ, ուժն՝ անգերազանց, ախորժակը՝ մեծ, ատամոքսն՝ ամեն ինչ մարսող...

Մոռանալ... Դառ առնել Եփրեմից... Ուշիմ աշակերտ լինել այս գիշեր...

— Դե, սիրելի Եփրեմ, ի՞նչ կասես,— անսպասելիորեն յոթերորդ երկնքում հայտնվեց արքան։— Դու երբի հույս ունեիր, որ ընկերդ վաղուց ճատրակ չի խաղացել և նապաստակ կդառնա քո առաջ։ Եթե իմանաս, որքա՞ն եմ սպասել այս հաղթանակին։

— Ի՞նչ ասեմ, արքա,— շփոթված ժպտաց Եփրեմը։— Դո՛ւ հաղթեցիր։

— Դու ինձ արքա մի կոչիր։ Վերջիվերջո պիտի լինի՞ գոնե մի մարդ, որի համար ես անուն ունենամ։— Ու նա այնպիսի երանությամբ, այնպիսի գերզգուշությամբ արտասանեց իր անունը, որ կարծես ձեռքերի վրա մի շատ նուրբ և թանկարժեք սափոր էր տանում և վախենում էր

անզգույշ շարժում անել, որ հանկարծ չդցի հատակին ու չփշրի։— Իմ անունը Արշակ է... Արշակ...

— Ինչպե՞ս ես... Արշակ։— Այդ բառը մեծագույն գրգռվարությամբ դուրս եկավ նրա կոկորդից, ուղղակի բռնությամբ դուրս թռավ, ու բերանը վախից դարձյալ ամուր փակվեց։ Եվ մի փոքր դադարից հետո, այս անգամ անկեղծորեն, նա կրկնեց հարցը.— Ինչպե՞ս ես, արքա... Ես հեռվից հեռու ուշադիր հետևում եմ քեզ...

— Ոչ մի խոսք իմ մասին,— կտրականապես նրան ընդհատեց արքան։— Կարևորը դու ես։ Այսօր մենք միայն քեզանով ենք զբաղվում։ Քո ընտանիքով... Կնոջով, երեխաներով... Ինձ համար այս հաղթանակն էլ բավական էր։ Բայց դու էլ վատ չես խաղում։ Պետք է ասել, որ արժանի հակառակորդ էիր։ Հենց դրա համար էլ ես ավելի բարձր եմ գնահատում իմ հաղթանակը։— Հանկարծ կիսատ թողեց ոգևորված շատախոսությունը, մոայլվեց և խեթ-խեթ նայեց Եփրեմին։— Լսիր, գուցե դիտմա՞մբ այնպես արեցիր, որ ես հաղթեմ։ Գուցե մտքումդ ծիծաղո՞ւմ ես ինձ վրա։

— Ինչեր ես խոսում, արքա...— վախեցավ Եփրեմը և գող իջավ ոտքերին։— Մտքովս էլ չի անցել...

— Ի՞նչ երաշխիք, որ այդ հաղթանակը իմն էր և ոչ թե քոնը,— համոզիչ պատասխան էր պահանջում վիրավորված արքան։

— Քոնն էր, արքա, քոնը,— մեղմորեն ու հեզությամբ համոզում էր Եփրեմը։— Դու այս անգամ պարզապես ինձանից լավ խաղացիր։

— Միևնույն է, չես համոզում,— պոկ չէր գալիս արքան։ — Ես քո աչքերից տեսնում եմ, որ այս խաղը նվիրեցիր ինձ։

— Ես հոգնած էի, արքա,— մաշկից դուրս գալով, արդարանում էր Եփրեմը։— Երկար ճանապարհ եմ կտրել և առանց շունչ քաշելու քեզ մոտ եկել... Էլ ինչպե՞ս կարող էի լավ խաղալ...

— Ուզում ես ասել, որ հակառակ դեպքում կհաղթե՞ր,— էլ ավելի խոցվեց արքան։— Լա՜վ, եթե այդպես է, մի անգամ էլ խաղանք։ Դեռ մինչև լույս ազատ ժամանակ ունենք։

Եփրեմը հետզհետե կաշկանդված էր զգում իրեն։ Միշտ,

երբ նրան պալատ են հրավիրել, չկամությամբ է գնացել նվ ամեն անգամ, երբ հանդիպումը հետաձգվել է, ուրախացել է չափազանց, կարծես մի ծանր բեռ է ընկել ուսերից։ Բայց նա սիրել է արքային, թանկ է գնահատել իրենց երկարամյա ընկերությունը, ամբողջ հոգով նրա լավն է ցանկացել, ուշի ուշով հետևել է նրա վերելքներին ու անկումներին, հպարտացել է նրանով։ Թեև ոչ ոքի չի պատմել իրենց ընկերության մասին, աշխատել է ծածուկ պահել բոլորից, նույնիսկ տանն է խուսափել նրա անունը տալուց։ Արքան ո՞ւր, ինքը ո՞ւր։ Մեկը՝ սարի գագաթին, մյուսը՝ ստորոտից էլ գենը։ Ի՞նչ կարիք կար ցուցադրելու իրենց մտերմությունը և օգուտ քաղելու դրանից։ Կրա՞կն ընկավ արքան, որ մանկության օրերից մի ընկեր ունի, որի հետ խաղացել է հաճախ, միասին երազել, լողացել գետակում։ Ուրեմն, պիտի վճարի՞ դրա դիմաց։ Թող ամեն մեկն իր համար ապրի, նեղություն չտա մյուսին։ Որովհետև որքան որ իր աշնությունն էր նեղություն պատճառում արքային, նույնքան էլ՝ արքայի մեծությունը Եփրեմին։

— Երեկ գիշեր երազ տեսա, Եփրեմ,— նորից լսվեց արքայի ձայնը, այս անգամ՝ մի տեսակ օտարոտի ու վիրավորված։— Ես ու դու էինք... Ես խեղդվում էի ծովում... Իսկ դու կանգնած նայում էիր... Ես գոռում էի, օգնություն կանչում... Ձեռքով էի անում քեզ... Բայց դու տեղիցդ չէիր շարժվում... Չէիր ուզում ինձ փրկել... Ինձ նույնիսկ թվաց, թե ժպտում ես... Հետս կռացար, մի փոքրիկ քար վերցրիր ու շպրտեցիր ծովը... Ինչի՞ շպրտեցիր, չհասկացա... Չէ, Եփրեմ, դու ինձ չես սիրում...

— Բայց դա երազ էր, արքա,— այլայլվեց Եփրեմը։

— Միևնույն է, դու ինձ չես սիրում։

— Մենք մանկության ընկերներ ենք, արքա,— ստիպված եղավ հիշեցնել Եփրեմը։— Քո ծանր օրերին ես էլ եմ տխրել... Իսկ ուրախ օրերիդ ես էլ եմ ուրախացել...

— Ուրեմն, սիրո՞ւմ ես ինձ,— կասկածանքով նրան նայեց արքան, հետո նախատինքով տարուբերեց գլուխը։— Բայց և այնպես խուսափեցիր ուղղակի ասել... Խուսափեցի՛ր, խուսափեցի՛ր...

Եվ նա դարձյալ կատարեց առաջին քայլը, որ նշանակում էր գոնե մի գիշերով փախչել իրականությունից, փակել, ականջներն ու աչքերը, ոչինչ չտեսնել, ոչինչ չլսել։

Բայց ինչպե՞ս մոռանաս Արտաշեսի ու Տիգրան Մեծի ձեռքերով նվաճված նահանգների կորուստը, Շապուհի դրդմամբ ու հրահրմամբ ծագած ապստամբությունները ծայրագավառներում, հայոց իշխանության տակից դուրս եկած Աղձնիքը, Գուգարքը, Գարդմանաձորը, Արցախը, Փայտակարանը, Կորդուքը, բյուզանդացիների թաթն ընկած Ծոփաց աշխարհը։ Ինչպե՞ս մոռանաս ստրկական ծառայության քշված հայերին, որոնց մեջ կային ուժասպառ եղած և ապրելու ցանկությունը կորցրած զառամյալ տղամարդիկ ու պառավ կանայք։ Կարո՞ղ ես մոռանալ, թե ինչպես էր թշնամին կտրում նրանց սրնքամսերն ու ոտակոճերը և թողնում ճանապարհին։ Կարո՞ղ ես մոռանալ, թե ինչպես են կրակի և ավերածության մատնում երկիրը, կանանց ու երեխաներին ցցերի վրա հանում, կամերի տակ ձգելով՝ կալսում, չահել տղամարդկանց տրորում փղերի ոտքերի տակ, քանդում ամրոցներն ու ավերում ամուր բերդերը։ Եթե կարող ես, մոռացիր, թե ինչպես գրավեցին Դարանաղի գավառի Անի ամրոցը, որտեղ ժամանակին գտնվել է հայ հեթանոսական գլխավոր աստծու՝ Արամազդի մեհյանը, իսկ հիմա՝ արքունական գանձերի մի զգալի մասը և Արշակունի թագավորների գերեզմանոցը։ Թե ինչպես գերի տարան գանձերն ու թագավորների ոսկորները։ Իսկ կարելի՞ է մոռանալ բազմոցից մինչև գետին չհասնող ոտքերով վասակ սպարապետին, որը խենթ և անմիտ քաջությամբ մարտնչում էր հսկայի դեմ և պաշտպանում հայոց միջնաշխարհը։ Ինչպե՞ս չհիշես քաջ հայորդիներին, որոնք բոլորի նման գիտեն գլուխ պահել, քթներից այն կողմ ոչինչ չտեսնել, բամբասել, խարդավանք նյութել միմյանց հանդեպ, իսկ վտանգի պահին, երբ դանակը հասնում է ոսկորին, վերածնվել, սրբանալ ու առյուծ դառնալ։

Երանի չէ՞ր, եթե աչքդ փակելով, իսկապե՛ս ոչինչ չտեսնեիր, եթե ականջդ խցանելով, իսկապե՛ս ոչինչ չլսեիր, եթե

տեղդ փոխելով, սովորական քո միջավայրից հեռանալով, իսկապե՛ս իրականությունից փախչեիր։

— Ես վաղուց ճատրակ չեմ խաղացել,— կատաղությունը հազիվ զսպելով, ասաց արքան։— Իսկ դու երևի ամեն օր էիր խաղում։ Պատրաստվում էիր այս հանդիպմանը։ Խոստովանիր, որ մենք անհավասար պայմաններում ենք խաղում։

— Մի հուզվիր, արքա,— արդեն բոլորովին շվարեց Եփրեմը։— Խաղը ուրիշ կերպ չի լինում։ Մեկ ես կտանեմ, մեկ դու։

— Համենայն դեպս, շնորհավորում եմ,— նեղացած ասաց արքան։— Դու հաղթեցիր։ Ես պարտվեցի։ Էլ ի՞նչ ասեմ, ավելի բա՞րձր հայտարարեմ։

Խաղացին երրորդ անգամ։ Արքան այնքան կենտրոնացած էր ու լարված, որ կարծես ճակատագրական հարց էր վճռվում այս խաղով։ Ամեն քայլի վրա երկար մտածում էր, նյարդայնանում, բռունցքով անընդհատ ճակատը քորում ու էլի, ինչպես ամբողջ կյանքում, ելք որոնում։ Ճատրակի տախտակի վրա տեսնում էր ռազմի դաշտ, այրուձի ու հետևակ, գրոշակակիրների ու վահանավորների, աղեղնաձիգների ու վաղրավորների, զինվորները գասավորված էին ըստ թևերի՝ աջ, ձախ և միջին, բանակն ուներ առաջապահ, վերջապահ և կողմնապահ զորամասեր։ Եվ արքան իր տարերքի մեջ էր ընկնում, զեկավարում մարտը, փողհարները պղնձե փող էին փչում, դրոշակակիրները պարզում էին նիզակներին ամրացված նշանակները, անցնում էին մերկերը՝ անզրահ զինվորները, սպարակիրք ու նիզակավորք, մկնդավորք ու սակրավորք, զորավարներ, հազարապետներ, բյուրապետներ, հարյուրապետներ։ Թրերը բոցկլտում էին արևի լույսի տակ, կուրացնում զինվորների աչքերը, դաշտը դղրդում էր հազարավոր ոտքերի ու սմբակների տակ, ձիերի խրխինջը խառնվում էր մարդկանց ոգևորված գոչյուններին ու վիրավորների տնքոցներին։ Ու երբ բանակը մի պահ նահանջում էր, կազմվում էր վահանափակ, չորս կողմից կանգնում էին վահաններով զինված շարքերը, որոնք, բերդի պարիսպների նման, պաշտպանում էին իրենց մեջ առած բանակը։ Ու արքան, իր ուժերին վստահ. հաջորդ քայլն էր

անում։ Իսկ երբ Եփրեմի պատասխան քայլը ճիշտ և համոզիչ էր թվում, արքան փրփրում էր զղայնությունից, ճգնում մի հարվածով տապալել նրան, ջարդուփշուր անել և զարմանում էր, որ իր ազնվությունը, համառությունն ու մեծ ցանկությունը գեռևս քիչ էին հաղթանակի հասնելու համար։ Նորից էր կռվի մտնում, ճակատ ճակատի խփվում թշնամու հետ, թրերը խաչաձևվում էին իրար ու կայծեր հանում։

Իսկ Եփրեմի քունը տանում էր, արդեն լրիվ ուժասպառ էր եղել երկար ճանապարհից և այս մի քանի ժամվա հոգեկան ու մտավոր լարվածությունից։ Հազիվ էր գիմանում, աչքերն ինքնաբերաբար փակվում էին, և նա մեծ ճիգով մի կերպ տիրապետում էր իրեն։ Նա ճատրակի տախտակի վրա իր տունն էր տեսնում, իրեն ճամփու դնող կնոջը, երկու տղաներին ու երկու աղջիկներին, որոնք կանգնել էին բարգու տակ ու հպարտանում էին իրենց տան այնպիսի, իրենց հորը վիճակված բախտով։ Տեսնում էր իրենց այգին, որ շատ գործ կար անելու, խնձորենիները հիվանդացել էին ու տիրոջ կարիքն էին զգում, քարե ցանկապատը տեղ-տեղ քանդվել էր, շարել էր պետք, փոքր տղան լավ չէր ուտում, հոր ներկայությունից էր միայն քաշվում, մրգի ավելցուկը հարկավոր էր ծախել, փոխարենը ցորեն գնել, ձեթ, հագուստեղեն...

Բայց որքան էլ ուժասպառ լիներ, Եփրեմը սկզբից ևեթ որոշել էր ազնվաբար խաղալ, ո՛չ գիտմամբ տարվել, ո՛չ էլ գիտամամբ տանել, թեև հասկանում էր, որ իր պարտությունը խիստ ցանկալի էր արքային։ Թող ինչքան ուզում է ցանկալի լինի, Եփրեմը կեղծիքի գիմազներից չէ, իր հարազատ զավակի համար էլ մի ծուռ քայլ չի անի։ Պատրաստ է կյանքը զոհել հանուն արքայի։ Սակայն ամեն մարդ մի սահման ունի, որից այն կողմ մուտքն արգելվում է բոլորի համար անխտիր։ Տվյալ դեպքում այդ սահմանը նրա արժանապատվությունն էր, որի դեմ ոտնձգություն անել չէր թույլատրվում։ Եվ որովհետև արքան շատ էր ուզում հաղթել, հաղթել թեկուզ և կեղծիքի վրա աչք փակելով, Եփրեմը

վճռել էր ամեն գնով նորից պարտության մատնել նրան։ Որպես պատիժ։ Որպես սահմանը խախտած ընկերոջ։

— Եփրե՞մ,— հանկարծ, կարծես հայտնություն արած, հարցրեց արքան։— Բայց դու հոգնած ես... Կարող եմ երդվել, որ նույնիսկ շատ ես հոգնած... Ու ես չեմ նկատել... Պատկերացնո՞ւմ ես... Ներիր, որ անուշադիր եմ եղել... Ի սեր աստծո, ներիր...— Աչքերը լցվեցին սիրով ու քնքշությամբ, հետո, ինչ-որ բան գլխի ընկնելով, իրատանցման մեջ ընկավ։— Ես նույնիսկ մոռացել եմ հարցնել, բան կերե՞լ ես, թե ոչ... Մի՞թե ես քեզ այսպես պետք է ընդունեի... Այսքան սպասելուց հետո...

— Շնորհակալ եմ, արքա... Կուշտ եմ, ոչինչ չեմ ուզում։

— Չէ, չէ, ես գիտեմ, դու քեզ աղատ չես զգում այստեղ։— Նա խառնեց ճատրակի խաղատախտակի վրա գոյացած ռազմի դաշտը։ Վեր կացավ ու ձեռքը դրեց ընկերոջ ուսին։— Ես եմ մեղավոր, ես... Չկարողացա այնպես անել, որ քո տունը համարես իմ պալատը...

— Բայց ես իսկապես կուշտ եմ, արքա,— ազնվաբար ասաց նա։

— Կուշտ ես, կուշտ,— մեղմորեն հանդիմանեց արքան։— Այսքան երկար նստել ենք, դեռ մի անկեղծ բան չես ասել ինձ։

Արագ մոտեցավ դռանը, բաց արեց և գոռաց դեպի միջանցքի մթությունը.

— Ընթրիք երկուսիս համար։

Հետո վերադարձավ, մտահոգ կանգնեց Եփրեմի գլխավերևում, չիմանալով, թե էլ ի՞նչ կարելի էր անել, էլ ինչո՞վ կարող էր վերաբերմունք ցույց տալ ընկերոջ նկատմամբ։

— Ապա վեր կաց, Եփրեմ... Վեր կաց, վեր... Արի լվացվիր... Երեսդ ջուր արա, որ մի քիչ թարմանաս...

— Պետք չի, արքա... Շնորհակալ եմ...— արքայի ուշադրությունից կաշկանդված, խնդրում էր Եփրեմը։— Դու ինձ համար մի մտահոգվիր...

— Վեր կաց, ասում եմ,— նեղացավ արքան ու քիթը կախեց։

Ինչ արած, Եփրեմը ենթարկվեց ու ոտքի ելավ։ Արքան սափորից ջուր էր թափում ընկերոջ ձեռքերին։ Եփրեմը նստարի մեջ չվաց երեսը, ապա արքան սրբիչ բերեց ու մեկնեց նրան։

Ներս մտավ սպասավորը, ձեռքին մի մեծ սկուտեղ։ Արքան ընդառաջ գնաց, վերցրեց սկուտեղը և նշան արեց, որ հեռանա։ Ինքն իր ձեռքով պատրաստեց սեղանը, դասավորեց ամանները, բաժանեց սառը խորտիկները, բաժակների մեջ գինի լցրեց ու մոտ կանչեց ընկերոջը։

— Նստիր, Եփրեմ։ Նստիր, մի քաշվիր։ Թեև իմ խոհարարը մեծ համբավ ունի, բայց հաստատ գիտեմ, որ քո կինը ավելի համեղ ճաշեր է պատրաստում։ Մի օր կհրավիրես, կգամ։

Արքան ոչ մի բան չկերավ։ Արմունկը սեղանին դրած և ծնոտը ափին հենած, կենտրոնացած ու մի տեսակ կարոտով հետևում էր, թե Եփրեմն ինչպես էր ուտում։ Կարծես ինքը զառամյալ ու տնատամ մի ծերուկ լիներ, որ հաճույք էր ստանում, տեսնելով, թե ինչպես են ջահելները ախորժակով և սուր ատամներով ոչնչացնում սեղանի բարիքները։ Բայց ջուտով հուսախաբ եղավ, որովհետև, մի երկու պատառ ուտելուց հետո, Եփրեմը մի կողմ տարավ պնակը։

— Կեր, Եփրեմ, կեր։ Թթե չհավանեցիր, ես կվտարեմ իմ խոհարարին։ Ինձ համար այնքան է հիմա, որ ես լավն ու վատը չեմ ջոկում արդեն։ Այդ թշվառականը երևի օգտվում է դրանից։

— Համեղ էր, արքա։ Բայց ես կուշտ եմ։

— Էլի՞ սկսեցիր։ Դու ինձ զրկում ես քեզ հյուրասիրելու հաճույքից։ Մի՞թե քեզ համար այդքան դժվար է ինձ հաճույք պատճառելը։

Եփրեմը, ստիպված, շարունակեց ուտել, թեև ամեն մի պատառը մեծ դժվարությամբ էր կուլ գնում։ Բայց արքան հրամայում էր, ի՞նչ կարող ես անել։ Կարո՞ղ ես չենթարկվել։ Մտքովը նույնիսկ անցավ մի առիթ գտնել ու փախչել, ազատվել պալատի մարմարներից ու ընդարձակ սրահների առատությունից, ընկերոջ ճնշող դիրքից ու կոչումից, որով-

հետև, քնքշորեն շոյելիս անգամ, նրա ձեռքը սարսափելի ծանր էր ու ահավոր ցավ էր պատճառում։

— Ի՞նչ են խոսում իմ քաղաքի մասին, Եփրեմ,— հարցրեց արքան, նոր գլխի ընկնելով, որ ամենաճշմարիտ պատասխանը միայն Եփրեմը կարող էր տալ։— Շինականներն ի՞նչ են ասում։

— Առաջ քո մասին ասում էին. ինչ լավ է նստում նժույգի վրա,— անկեղծորեն խոստովանեց Եփրեմը։— Նրանց համար նույնն էին խոսրով, Տիրան ու Արշակ թագավորները։

— Իսկ հիմա՛, հիմա՛,— արքան, անհամբեր ու պահանջկոտ, հրամայեց շուտափույթ պատասխան տալ։

— Իսկ հիմա սիրում են։ Անունովդ են երդվում։ Դե, ես էլ մեկ-մեկ հպարտանում եմ, որ մանուկ հասակում երբեմն ծեծում էի քեզ,— ժպտաց Եփրեմը, զարմանալով, թե ինչպես համարձակվեց այդպիսի զեղում թույլ տալ։— Երբեմն, արքա, երբեմն... Եվ ինքս ինձ, միայն ինքս ինձ...

— Իսկ դու անձամբ ճի՞շտ ես համարում, որ ես վճռեցի երկրի սրտում այսպիսի քաղաք կառուցել,— շունչը կտրած, շարունակեց հարցապնդել արքան, կարծես իր ամբողջ կյանքը միայն Եփրեմը կարող էր հենց մի ակնթարթում իմաստավորել կամ իմաստազրկել։

— Մա՛ քո միակ մեծագործությունն էր, արքա։

— Իսկ դու թշնամիներ ունե՞ս, Եփրեմ,— հանկարծ հետաքրքրությամբ հարցրեց արքան։— Նախանձորդներ կամ վատ հարևաններ։ Մի խոսքով, մարդիկ, որոնց դու չես համակրում։

— Փառը տիրոջ, հաշտ ու խաղաղ ապրում ենք, արքա։

— Լավ մտածիր։ Մենք կարող էինք նրանց մի լավ դաս տալ։— Եվ ծիծաղեց, մտերմաբար ընկերոջ ուսին խփելով։— Մինչև տուն հասնելդ դու արդեն ազատված կլինեիր նրանցից։

— Իմ շրջապատում այդպիսի մարդ չկա, արքա,— վախից սիրթնեց Եփրեմը։

— Ես, իհարկե, կարող էի քեզ հողեր նվիրել, իշխանական տիտղոս տալ, պալատական բարձր պաշտոն։ Բայց ես քեզ այսպես եմ ճանաչում ու սիրում, Եփրեմ։ Այսպես ես

ավելի եմ կապված քեզ հետ։ Գու կարո՞ղ ես, հանուն մեր ընկերության, հրաժարվել հարստությունից։ Ո՞րն է քեզ համար ավելի թանկ։ Հարստությունը, թե՞ մեր ընկերությունը։— Արքան նորից անհանգստացավ ու կորցրեց իրեն։— Դու ինձ չես լսում... Աչքերդ դարձյալ փակվում են... Իմ խե՜ղճ Եփրեմ... Տանջվեցիր այս գիշեր...

— Ոչ, արքա, ոչ,— սթափվեց Եփրեմը։— Ես ուշադիր լսում էի քեզ։

— Վեր կաց,— շփոթահար ասաց արքան։— Վեր կաց, քնիր։ Ես այս ժամին չեմ թողնի իշևանատուն գնաս։ Հենց ինձ մոտ էլ կմնաս։

— Քունս չի տանում, արքա... Մենք դեռ ճատրակ պիտի խաղանք...

Իսկ մտքում ուրիշ բան էր ասում։ Հեռվից ընկերություն անել Արշակի հետ, ապահով տարածությունից։ Որպեսզի այդ հեռավորության վրա նորից սիրելի ու հարազատ դառնար մանկության ընկերը։

Արքան բռնեց Եփրեմի թևերից, բարձրացրեց նրան, տարավ դեպի իր մահիճը, ուսերի վրայից վերցրեց սամուրենին և հանեց նրա պարեգոտը։

— Իսկ դո՞ւ, արքա։ Դո՞ւ որտեղ ես քնելու։

— Դու իմ մասին մի մտածիր։ Ես սովոր եմ լուսացնելու։ Գիշերները ես մենակ եմ մնում ինքս ինձ հետ ու ավելի լավ եմ սկսում ճանաչել ինձ։

Կռացավ, հանեց Եփրեմի մաշիկները, ընկերոջը պառկեցրեց մահճի վրա և ծածկեց վերմակով։

Եփրեմը շուտ քուն մտավ։

Իսկ արքան, սնարին կանգնած, ուշադիր նայում էր նրա խաղաղ դեմքին ու հասկանում, որ կատարյալ էր իր ձախողումը։ Եվ լիակատար ու անժխտելի էր մենակության հաղթանակը։ Վաղվանից այլևս չի մտածի նրա դեմ պայքարելու մասին։ Կհանձնվի նրա իշխանությանը, ու գուցե լավն էլ դա է, այդ հաշտությունը, ինքնախարկանքից հրաժարումը։ Եթե կուզեր իմանալ, մարդկայնության միակ գաղտը հենց սա էր, որ նա ջանասիրությամբ սերտեց այսօր։ Ու անգիր արեց։

— Ներիր, Նփրեմ...— զգուշությամբ նա կռացավ ընկերոջ սնարին։— Ես ամեն ինչ արեցի, որ դու քեզ լավ զգաս... Իսկ սա երևի կյանքիդ ամենածանր օրն էր... Ներիր իմ հոգատարությունը... Իմ ուշադիր վերաբերմունքը... Մեր ընկերությունը... Ներիր, եթե կարող ես...— Ապա էլ ավելի կռացավ ու շշնջաց քնած մարդու ականջին.— Մենք այլևս երբեք չենք հանդիպի... Սա միակ լավությունն է, որ ես կարող եմ խոստանալ քեզ...

Հոգածությամբ ուղղեց վերմակը, հետո գնաց, պառկեց գետնին, Գնելի տեղը, ծածկվեց այծի մորթիով ու որոշեց՝ մինչև լուսաբաց, մինչև ընկերոջ զարթնելը, հեռանալ պալատից, վերադառնալ Արտաշատ։

Սուսուփուս ներս մտավ Գնելը և, տեսնելով, որ իր տեղն զբաղված է, նստեց դռան մոտ, հենվեց պատին և փակեց աչքերը։

Գլուխ քսանչորսերորդ

Արքան հետզհետե ավելի էր կապվում Վասակ սպարապետի հետ։ Հատկապես այն օրվանից, երբ Շապուհի կանչով միասին գնացին Ֆիզբոն։

Շապուհն այնպիսի ընդգծված սիրալիրություն էր ցուցաբերում հայոց արքայի հանդեպ, որ նա, փոխանակ գոհ մնալու, քնկճվում էր, նույնիսկ նվաստացած զգում իրեն։ Շապուհը ոչ մի բանից չէր քաշվում։ Այնպես էր շողոքորթում, այնքան համեստ էր իրեն պահում, այնքան հեզ ու խոնարհ, որ արքան նոր միայն հասկացավ, թե ինչ վտանգավոր մարդու հետ գործ ուներ։ Այն տպավորությունն էր ստեղծվում, որ կարծես Շապուհն էր կախված Արշակից, և ոչ թե հակառակը։ Կոստանդիանոսը Կեսարիայում, իր յուրաքանչյուր խոսքով ու շարժումով, ամեն պահ հիշեցնում էր այն տարբերությունը, որ գոյություն ուներ մեծ կայսրության ինքնակալի ու փոքր երկրի արքայի միջև։ Այդ հիշեցումը ևս

տհաճ էր, բայց և այնպես՝ ավելի նախընտրելի, քան թե այս անազնիվ խաղը։

Շապուհը նրան նվիրեց իր սաղավարտը, որին ամրացված էր մի փառավոր գարդմանակ։ Գարդմանակի վրա մի արծիվ կար՝ թևերը թեթևակի բացած և գլուխը պսակի ճակատից դուրս կարկառած։

Շապուհն արքային նստեցնում էր ամենապատվավոր տեղում, անընդհատ մարդ էր ուղարկում նրա որպիսությունն իմանալու, զգուշացնում նրան դավաճան նախարարներից, հատկապես՝ Վարդան և Վահան Մամիկոնյաններից և Մերուժան Արծրունուց, չնայած նրանք հավատարմորեն ծառայում էին պարսից արքունիքին, նույնիսկ չէր խորշում բանն այնպես ներկայացնելու, որ լսողը կկարծեր, թե առանց հայերի գաշնակցության պարսիկները չեն կարողանա բյուզանդացիներին հաղթել։

Եվ այսպես, նուրբ ու խելացի ձևով, Շապուհը ստորացնում էր Արշակին և փորձում ահ ներշնչել նրան։

Մի անգամ արքան ու սպարապետը, հենց Շապուհի հորդորանքով, գնացին թագավորական ախոռում շրջելու։ Ախոռապետը տեսավ նրանց և ոչ մի ուշադրություն չդարձրեց, անգամ քթին չդրեց վեր կենալ, դեռ մի լավ էլ ծաղրեց ու անարգեց։ «Հայոց այծերի թագավոր, եկ այս խոտի խրձի վրա նստիր»։ Արքան ցնցվեց, գույն տվեց, գույն առավ։ Անմիջապես կռահեց, որ Շապուհի հորդորներն ու այս միջադեպը սերտ կապ ունեին, այլապես, ախոռապետը քանի՞ գլխանի էր, որ իր տիրոջ հյուրին այսքան լկտի կերպով անպատվեր։ Արքան չափազանց խեղճացավ, որովհետև կյանքում երբեք այդպիսի վերաբերմունքի չէր հանդիպել։ Նա շվարեց, լեզուն կապ ընկավ ու չիմացավ, չէր պատկերացնում, թե նման դեպքերում առհասարակ ի՞նչ են անում։ Բնազդներից միայն մեկը ձայն տվեց նրան, այն, որ միշտ արթուն էր ու միշտ իր հետ էր. դավադրություն էր սա...

Միայն ափսոս, չա՜տ ափսոս, որ ախոռում պիտի մեռներ...

Վասակ սպարապետը, չհանդուրժելով արքային հասցված ծանր վիրավորանքը, առանց երկար-բարակ խորհելու, քաշեց սուրը, տեղնուտեղը գլխատեց սխոռապետին։

Վերջ, մտածում էր արքան, հիմա իմ գլուխն էլ կուտեն, սպարապետինն էլ, և Պասլը այլևս կյանքում չի տեսնի հայոց գահը, «պարթև» Արշակունիների փոխարեն սասանյան Շապուհը թագը կտա «հայ» Արծրունիներին։

Մինչդեռ Շապուհը, որ անձամբ էր կազմակերպել այդ միջադեպը, լսելով կատարվածի մասին, գործեց մի նոր ու յուրօրինակ նենգություն. խորին շնորհակալություն հայտնեց Վասակ զորավարին, գովեց նրա քաջասրտությունն ու տիրասիրությունը և շատ պարգևներ ու պատիվներ տվեց նրան. ոսկի, արծաթ, կերպաս ու մարգարիտ...

Երկրորդ դեպքը, որից հետո արքայի ու սպարապետի զուտ պաշտոնական փոխհարաբերությունները փոխվեցին հոգեկան կապի ու մտերմության, հայ Արշակունի թագավորների ոսկորների խլումն էր պարսիկների ձեռքից։

Դարանաղի գավառի Անի բերդում միայն Սանատրուկ թագավորի դամբարանն էր անձեռնմխելի մնացել, որովհետև հսկայակառույց ու ամուր մի շինություն էր դա։ «Նրա համար ենք մենք հայոց արքաների ոսկորները տանում,— ասում էին հեթանոս պարսիկները,— որ այս աշխարհի թագավորների փառքը, բախտն ու քաջությունը նրանց ոսկորների հետ մեր աշխարհը փոխադրվեն»։

Արքան ու Վասակը զորահանդես կազմակերպեցին Ատաշատում։ Մեծ ու եղակի զորահանդես էր դա, որովհետև այս ճակատամարտը մղվելու էր երկրի պատիվը փրկելու համար։

Արքան նստած էր սպիտակ նժույգի վրա, ձրծքին՝ արծաթազօծ զրահ ու վագրի մորթի։ Նրա առջևից անցան վաթսուն հաղար միաբան ու միասիրտ հայ մարտիկներ։ Այրուձի ու հետևակ։ Գունդ առ գունդ։ Վաշտ առ վաշտ։ Ամեն մեկն իր դրոշով ու զինանշանով։ Վահանավորներ՝ համակ երկաթից շինած, թեթևակի ուռած, երիզավոր ասպարներով, նիզակավորներ ու մկնդավորներ՝ փոքր նիզակներով, որ բռնաքարի պես ձեռքով են նետում, աղեղնավորներ՝ կա-

պարճի մեջ լցված նետերով, պարսավորներ՝ մորթե երկար կրկնածալ պարսատիկով և մերկեր՝ անզրահ զինվորներ։ Անցնում էին խոտորկտուրներ հագած՝ առիշեղ կտրված ստորոտով, գունագույն ժապավեններով երիզված պարեգոտներ, որ հասնում էին մինչև ծնկները, առջևը՝ կարճ, ետևը՝ երկար, որպեսզի հեշտանար քայլելն ու հեծելությունը։ Անցնում էին հեծյալներ՝ գեղարդը աջ ձեռքներին, ձախով՝ ձիու սանձը բռնած, մեջքներին՝ խաչաձև կռվանով երկաթյուր պողպատե սուր կամ թուր, գոտու մեջ՝ տապարներ խրած, գլխներին՝ երկաթե կնգղաձև սաղավարտներ, որոնցով զանազանվում էին զինվորական աստիճանները։ Եվ ամբոխը, հատկապես երեխաները, մեծ հաճույք էին ստանում նրանց տարբերակելով, որովհետև, ամեն մեկի վրա առանձին ուշադրություն դարձնելով, կարծես ավելանում էր բանակի թիվը։ Հասարակ զինվորների սաղավարտների վերին ծայրն ուղիղ էր կամ դեպի ետ ծռված, զորապետներինը՝ առաջ շրջված ու ստվար, իսկ իշխաններինը՝ խորանաձև կամ գմբեթարդ, վրան՝ սեպհական տարբերանշաններ։ Զինվորների՝ կարաններով ագուցված զրահները երկաթից էին, զորագլուխներինը՝ պղնձից։ Մերկերը հագել էին լայն, երկար ու թանձր տառատոկներ, որ դիմացկուն էին խոնավության հանդեպ։

Այնքան մետաղ էր հայտնվել քաղաքում, որ զենքերը կարծես երկնքից խլել էին արևի լույսը և կուտակել իրենց մեջ։

Մարդկային հեղեղը անընդհատ հոսում էր ամբոխի ու արքայի առջևով և ձգվում դեպի Տափերական կամուրջը։ Գնում էին իրենց թագավորների անարգված ոսկորներին տեր դառնալու, գերությունից ու պանդխտությունից ազատելու։ Ոչ մի ծպտուն չէր լսվում, ոչ մի ոգևորիչ բացականչություն, ոչ մի խրախուսական խոսք, միայն՝ ոտնաձայներ, որ ասես գետնի խորքերից էին բարձրանում և ալիք առ ալիք լցվում քաղաքի բոլոր անկյունները։ Մարդկային այդ սահմռկեցուցիչ լռությունը կարծես հանդիսավոր երդում լիներ, որ ամեն մեկը տալիս էր կնոջը, հորն ու մորը, զավակին, արքային ու աստծուն։ Ու երբ զինվորներց հեռացան և արքայի ու ամբոխի առաջ մնաց մերկ սալահատակը, ոչ ոք

չշարժվեց տեղից, դեռևս ուշադիր ականջ էին դնում հեռավոր ոտնաձայներին։ Հետո արքան դանդաղ քշեց ձին, գնաց հակառակ ուղղությամբ, դեպի միջնաբերդը։ Արքան էլ, ձին էլ՝ գլխիկոր։ Քաղաքում լսվում էր միայն սմբակների միապաղաղ ձայնը։

Արքան անցավ լուռ ամբոխի միջով, կռահելով, որ մենության զգացումը պատել է ոչ միայն իրեն, այլև այս հազարավոր մարդկանց և որ ամբոխի մենակությունը շատ ավելի ծանր է, քան թե անհատինը։

Մի քանի օր անց ավետիս եկավ, ու ամբողջ երկիրն իմացավ, որ Վասակ սպարապետը գլխովին ջարդել էր պարսկական բանակը, ազատել բյուրավոր գերիների, խլել արքունի գանձերը ու անպատվությունից փրկել հայ թագավորների հիշատակը։

Թագավորների ոսկորները թաղեցին Այրարատ գավառի Աղձք գյուղի մոտ, Արագած լեռան նեղ և դժվարամուտ խորշերից մեկում։

Ամբողջ մայրաքաղաքը թափվել էր փողոցները և պատրաստվում էր ցնծությամբ դիմավորելու հաղթանակած զինվորներին։ Սալահատակը ծածկված էր գորգերով, կարպետներով ու ծաղիկներով։ Տների առջև բացված էին սեղաններ, որոնք պայթում էին աստուծությունից։

Սա այն հազվադեպ օրերից մեկն էր, երբ իմն ու քոնը չկար, կար ամեն ինչից վեր կանգնած մարդկային մի համերաշխություն, մտքերի ու հույզերի զարմանալի մի ընդհանրություն։

Այդ օրը քաղաքում չկատարվեց ոչ մի անկարգություն, չեղավ ոչ մի գողություն, չհնչեց ոչ մի վիրավորական խոսք, ոչ ոք ոչ մեկից չնեղացավ, ոչ ոք չհիշեց հին ընդհարումները, և թշնամի հարևանները գրկաբաց հանդիպեցին իրար, հազարավոր ոտքեր ոչ մի խոտ անգամ չտրորեցին, ոչ մի ծաղիկ չճխլեցին։

Այդ օրը ոչ մեկը սեփական անուն չուներ, չուներ առան-

ձին ծննդավայր, լուներ մյուսներից ջոկվող կենսագրություն, մյուսներից տարբերվող բնավորություն։ Այդ օրը բոլորը հայ էին։

Զորքը վերադարձավ նույն Տափերական կամրջով։ Զորահանդեսի նախկին փայլը չկար, ինչպես նաև՝ շարքերի կանոնավոր դասավորվածությունն ու կարգապահությունը։ Հոգնած, ուժասպառ զինվորներ էին, պատառոտված ու փոշոտ զգեստներով, երկար ճանապարհ կտրած ու կռվից ձանձրացած։ Փոխադարձ անհաղորդություն կար ամբոխի ու զորքի միջև։ Ամբոխը չէր նկատում, որ ոգևորությունն իսպառ բացակայում էր զորքի մոտ, իսկ զորքն էլ, իր հերթին, չէր զգում ամբոխի հրճվագին ցնծությունը։ Ամեն մեկն իր համար գոյություն ուներ։

Մեծ եղավ, սակայն, բոլորի տարակուսանքը, երբ տեսան, որ չկար տոնի հիմնական հերոսը, որին ամբոխը պիտի մեծարեր ամենքից ավելի։ Չկար սպարապետը։

— Կեցցե՜ սպարապետը,— գոչում էր ամբոխը, տենչալով այն պահը, երբ հսկա ձիու վրա կերևա փոքրամարմին զորավարը, որի կարճ ոտքերն ու կարճ ձեռքերը նույն այդ ամբոխը չէր փոխի աշխարհի ոչ մի գեղեցկության հետ։

Հազարավոր անանուն հերոսներ էին անցնում բազմության առջևով, հազարավոր կտրիճներ, որոնք հոժարակամ գնացել էին երկրի պատիվը փրկելու, գնացել էին տուն ու տեղ անտեր թողած և վերադառնում էին կորցրած իրենց ընկերներին ու հարազատներին, որոնք անգերեզման ընկած են մարտի դաշտում, անցնում էին նոսրացած շարքերով, և նրանց զենքերն այլևս ընդունակ չէին խլելու արևի լույսը։

Իսկ ամբոխը անուն էր ուզում, ուզում էր ընդամենը մի՞ մարդու, որին կարելի էր սիրել կամ ամբողջ մեղքը նրա վրա բարդել։ Որովհետև չէր կարողանում իր սերն ու ատելությունը տարրալուծել հազարների մեջ, ընդունակ չէր հազարների մեծարելու կամ մեղադրելու։ Նրան որոշակի մի դեմք էր պետք, տվյալ դեպքում՝ կարճ ոտքերով ու կարճ ձեռքերով մարդը, որը չկար ու չկար։

Հազար ու մի վարկած տարածվեց մայրաքաղաքում,

ուրախ և տխուր լուրեր, որոնցից ոչ մեկը, սակայն չէր համապատասխանում իրականությանը։

Իսկ իրականությունն այն էր, որ սպարապետը աննկատ էր եկել մայրաքաղաք ու մտել միջնաբերդ։ Եվ հիմա այլայլված կանգնած էր արքայի առջև։

Նա երբեք այսքան հոգված չէր եղել։ Հաղթանակի ոչ մի ուրախություն չկար դեմքին, միայն՝ տագնապ և իրարանցում։ Քաղաքում կազմակերպված տարերային ցույցը բոլորովին չէր խոսում սրտին։ Զայրույթից մոռացել էր հոգնությունը և կուշտ քնելու երազանքը։ Անընդհատ հայհոյում էր, լուտանքներ թափում և պառավական անեծքներ տեղում ինչ-որ վերացական հասցեով։ Նույնիսկ պատշաճ կարգը չպահպանեց, գլուխ չտվեց արքային, ոչ էլ արձագանքեց նրա անկեղծ գրկախառնությանը։

Արքան առաջին անգամն էր այսպիսի վիճակում տեսնում իր սպարապետին, հատկապես՝ պալատում, որտեղ նա ամենքից հեզ ու խոնարհ մարդն էր դառնում, նույնիսկ՝ մի տեսակ անօգնական ու անպաշտպան։

Արքան հասկացավ, որ, ուրեմն, դրսի աղմուկն ու ցնծությունը դատարկ բաներ են, որ ճակատամարտը դեռ չի վերջացած սպարապետի համար։

Ի վերջո, նրա հայհոյանքներից ու անեծքներից նա մի կերպ իրար կցմցեց բառերը, դժվարությամբ ջաղկապեց ու գլխի ընկավ, թե ինչ ծանր գուժ էր բերել սպարապետը։

Նրա եղբայրները՝ Վարդան ու Վահան Մամիկոնյանները, ինչպես նաև սիրուն Մերուժան Արծրունին, ուրացել էին իրենց հավատը, հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել մոգդեզանց կրոնը։ Քանդել, ավերել էին եկեղեցիներն իրենց աշխարհներում և ատրուշաններ կառուցել, երկրպագելով արեգակին ու կրակին։

Արքան սփրթնեց, կատաղեց ու կորցրեց իրեն։ Նա էլ միացավ սպարապետին, և հիմա երկուսով սկսեցին հայհոյել ու անիծել։ Ինչ-որ ծիծաղելի ու սարսափազդու բան կար երկրի այս երկու ամենահզոր մարդկանց ցասման մեջ։ Կարծես մրցում էին, թե ում հայհոյանքն ավելի սուր և գիպուկ կլինի և ում անեծքը՝ ավելի հավոր։

Արքան սպառնում էր, որ կջարդի, գետնին կհավասարեցնի նրանց աշխարհները, բնաջինջ կանի Մամիկոնյան ու Արծրունյաց տոհմերը, ամենափոքր մանուկին անգամ չի խնայի։ Եվ, կատաղության մոլուցքի մեջ, հրամայում էր, որ այդ բանը սպարապետն ինքն անի, հենց հիմա՛, հենց ա՛յս ակնթարթին։ Էլ ինչի՞ է հապաղում, ինչո՞ւ չի շտապում, ինչի՞ է սպասում։ Թող ոչ միայն սպանի, այլև գլուխները կտրի, դնի ցցերի վրա ու ման ածի ամենուրեք, մտնի բոլոր շեներն ու ավանները, իսկ հետո ուղարկի Տիզբոն, որպես նվեր արքայից արքա Շապուհին։ Չէ, Մերուժանին սպանել պետք չէ։ Թող իր մոտ բերեն նրան։ Կենդանի՛։ Արքան իր իսկ ձեռքերով պիտի լուծի վրեժը։ Ինքը պիտի թափի նրա արյունը։ Այդ հաճույքը նա ոչ ոքի չի զիջի։ Թող չնեղանա սպարապետը, բայց այս մեկը իրենն է, բոլորը նրանն են, բոլորը, բացի այս մեկից։ Սկզբում զրույց կանի նրա հետ, թույլ կտա, որ նա արդարանա, կհիանա նրա խելացի ու ճարպիկ փաստարկներով, նրա արքայական կեցվածքով, նրա գեղեցիկ ու առնական արտաքինով, մեծ սեղան կբացի նրա պատվին, կնստեն միայն իրենք, երկուսով, կուշտ ու կուռ կուտեն, կխմեն, և արքան հանկարծակի կանի այդ բանը։ Կձգի հաճույքը։ Մի անգամ ևս կհամոզվի, որ ինքը սիրում է նրան, սիրում է յուրովի, մի տեսակ խանդոտ սիրով, բարձր գնահատում նրա խելքը, ափսոսում, որ հավատարիմ նախարարները մեծ մասամբ բութ են և միայն իր թշնամին է խելացի, և այդ ինքնախոստովանությունը է՛լ ավելի կսրի վրեժի քաղցրությունը։ Կսպանի ամենաանպատեհ, ամենաանսպասելի պահին, ամենասիրալիր խոսակցության ժամանակ, երբ, ասենք, խոսում են եղանակից կամ գինու մասին կարծիք հայտնում։ Ու առաջին անգամ կյանքում չի սոսկա թափված արյունից, չի մաքրի կեղտոտված ձեռքերը։

— Բայց դա իմ տոհմն է,— հանկարծ, իրենց իսկ ստեղծած աղմուկի մեջ, տարօրինակ կերպով շշնջաց Վասակը։— Մամիկոնյանն՛ը, արքա։

Արքան սոսկվեց։ Թափը կոտրվեց։ Գլխին կարծես սառը ջուր թափեցին։ Ամեն ինչ մտքովն անցնում էր, բացի այս մի հանդամանքից։ Էլի խաբեցին իրեն, էլի հիմարացրին և

սպարապետի տոհմակիցը լինելով, է՛լ ավելի ծանրացրին իրենց մեղքը։ Նրանց ազգակցական կապը հերթական խորամանկություն էր թվում արքային, Վարդանի ու Վահանի նենգ և ստոր խորամանկությունը։ Վասակին առաջ գցած, ուզում են պաշտպանվել նրա թիկունքում։ Իսկ սպարապետի թիկունքն էլ, փառք աստծո, մի հսկայական սար է, որի ետևում արքան էլ է իրեն անվտանգ զգում։

Եթե այդպես է, ուրեմն, առավել ևս նրանք պետք է սատկեն։ Արքային խեղճացնելո՛ւ համար։ Սպարապետին զինաթափ անելո՛ւ համար։ Եվ արքան իր գազազության մեջ չզգաց, թե ինչպես առաջնային մեղքը դարձավ նրանց ազգակցությունը և հետո միայն՝ հավատուրացությունը։

— Թույլ տուր միայն երկուսին, արքա,— հանկարծ ծնկաչոք խնդրեց Վասակը։— Մնացածներին ձեռք չտաս։

Հաղթանակով վերադարձած սպարապետի աչքերում արքան երկու կաթիլ արցունք նշմարեց։ Արցունք՝ իրենց տոհմի Մեծ Տիկնոջ և իր մոր համար, իր եղբայրների զավակների, նրանց կանանց ու երեխաների համար, հենց Արծրունյաց տոհմի համար, որին Տիրան թագավորի օրոք մի անգամ էլ են բնաջինջ արել, և միայն մեկն է փրկվել ամբողջ տոհմից, Մերուժանի հայրը՝ Շավասպը։ Եվ ո՞վ է փրկել։ Բախտի ծա՞ղրը տես։ Որովհետև էլի Մամիկոնյաններից մեկն է եղել վերջին արու զավակի, հետևաբար և ամբողջ գերդաստանի փրկարարը։ Եվ բախտի իսկական ծաղրը դու հիմա տես, հիմա՛, երբ տարիներ անց Վասակ Մամիկոնյանն իր ձեռքով պիտի բնաջինջ անի նույն այդ տոհմը։

— Մնացածներին ձեռք չտաս,— նոր գլխի ընկնելով ամբողջ արհավիրքը, կտրուկ տոքի ելավ սպարապետը և, առանց քաշվելու, սպառնալիքով ավելացրեց.— Իսկ ով ձեռք կտա, ինձ հետ գործ կունենա։

— Ես չեմ կարող մերժել հաղթանակ տարած սպարապետի խնդրանքը,— սա միակ հարմար պատասխանն էր, որ նրան թույլ էր տալիս բանի տեղ չդնել Վասակի սպառնալիքը։

— Եվ Արծրունիներին էլ չդիպչես,— համարձակորեն պահանջեց Վասակը։— Միայն Մերուժանին, ուրիշ ոչ ոքի։

— Բաշխում եմ, —կատակի տվեց արքան, որպեսզի ստիպված չլիներ վերաբերմունք ցույց տալ սպարապետի անպատշաճ տոնին։

— Ընդամենը երեք հոգու,— համառորեն ճշտեց Վասակը։

— Երե՛ք, երե՛ք,— ժպտաց արքան և սկսեց թվարկել.— Մերուժանին...

— Անունները չտաս, արքա,— ընդհատեց նրան Վասակը։

— Ներիր, սպարապետ,— մոայլվեց արքան, մոտեցավ նրան, լուռ կանգնեց նրա դիմաց, ու երկու հասուն տղամարդիկ հանկարծ ամուր գրկեցին, փաթաթվեցին իրար, զգալով, թե ինչպես մի ակնթարթում կարող էին թշնամանալ ու հավիտյանս կորցնել իրար, թե ինչպես երկուսն էլ, հակառակ իրենց կամքի, ստիպված են դավաճանել իրենց սկզբունքներին ու դաժանություն գործել, թե ինչպես ժամանակը քո անձը խլում է քեզանից և խաղալիք դարձնում իր ձեռքին, թե ինչպես տարած հաղթանակդ հենց մի վայրկյանում պարտությամբ է փոխարինվում և, վերջապես, թե ինչպես հայի համար անիրական ու անցավոր են ամեն ինչ. հաղթանակ և պարտություն, երջանկություն ու դժբախտություն, հարստություն և աղքատություն, փառք ու իշխանություն...

Վասակը, արքան էլ լարում էր հիշողությունը, միևնույն է, չէր մտաբերում, որ Մամիկոնյան գերդաստանից արևէ դավաճան ծնված չլինի։ Ընդհակառակը, երկրի բախտը միշտ էլ նրանց անվան հետ է կապված եղել։ Այդ նրանք են իրենց գործերով փառաբանել հայ զենքի ուժը, հայ ոգու աննկունությունը, այդ նրանք են օրինականացրել ապրելու, գոյատևելու պնդերեսությունը։ Իսկ հիմա՝ միանգամից երկու դավաճան՝ ամբողջ տոհմի մի տանուտեր և բանակի մի զորապետ։ Ըստ որում, ոչ թե սովորական դավաճաններ, որոնք, այնուամենայնիվ, հայ են մնում, թեկուզ վատ հայեր, բայց և այնպես՝ հայ, այլ հավատն ու ազգությունն ուրացողներ։ Թե կարող ես, մի գազազիր, մի կատաղիր։ Չէր կարողանում և գազազում էր, կատաղում։ Պատկերացնում էր, թե լուրն ինչպես է տարածվում երկրով մեկ, մտնում ամեն շեն ու ավան, ամեն խրճիթ ու քարանձավ, ինչպիսի անեծքներ են տեղում իր գերդաստանի գլխին։ Թե կարող ես, խեղճ Մամ-

գոն նախահորդ մի անիծիր։ Չէր կարողանում և անիծում էր։ Պատկերացնում էր նաև, թե ինչպիսի հեշտությամբ են մոռացվում թե՛ իր բոլոր հաղթանակներն ընդհանրապես, թե՛ նույնիսկ այս մեկը, ամենավերջինը, որի առթիվ դեռ ցնծում է անտեղյակ մայրաքաղաքը, իր անունը՝ դրոշակ և իր տոհմը՝ աղոթքի ու օրհնանքի արժանի նյութ դարձրած։ Թե կարող ես, մի խելագարվիր։ Չէր կարողանում և խելագարվում էր։ Նաև պատկերացնում էր, թե ինչպես են մոռացվում Մամիկոնյանների բոլոր բարի գործերը, ինչպես են ուրանում Վաչե զորապետին ու նրա փայլուն հաղթությունը Ծուլի Գլուխ լեռան մոտ՝ մասքութների թագավոր Սանեսանի դեմ, գետնին հավասարեցնում իր նախորդների մեծագործությունները։ Թե կարող ես, մարդ արգանդը մի նզովիր։ Չէր կարողանում և նզովում էր։

— Եթե ուզում ես՝ ոչ մեկին,— սրտանց նրան կարեկցեց արքան ու փորձեց թեթևացնել նրա վիշտը։— Շատ բան կուլ ենք տվել, այս մեկն էլ կուլ կտանք։

— Ո՛չ, երեքի՛ն,— չգիտես ինչու, բորբոքվեց պարապետը։— Միա՛յն երեքին։— Եվ այս անգամ ինքը արտասանեց նրանց անունները.— Վարդանին, Վահանին ու Մերուժանին։

Ու դուրս փախավ։

Արքան մոտեցավ բաց պատուհանին, երկար նայեց ուրախությունից խենթացած քաղաքին ու մտածեց, որ ժամանակն ու աստված բնավ իր հետ չեն։ Երես են դարձրել հայերից։ Ու եթե հայերը դեռևս ունեն փրկության թեկուզ և հեռավոր մի հույս, ապա դա այն է, որ նրանք դեռ չգիտեն այդ մասին։ Եվ որ նրանց փոխարեն, այդ մասին գիտե միայն արքան։ Վայ այն օրվան, հազա՞ր վայ, երբ կիմանան։

✦✦✦

Տայքի գավառում, իր ամուր բերդի տակ, որ կոչվում էր Էրախանի, տանուտեր Վարդանը վրան էր զարկել և, մինչև գոտկատեղը մերկացած, գլուխն էր լվանում։

Վաղուց է, ինչ այսքան ուրախ և առույգ չէր եղել։ Որով-

Հետն պարզվել էր, որ հավատափոխությունն այնքան էլ սարսափելի բան չէր, որքան կարծում էր։ Եվ հասկացել էր նաև, որ այս աշխարհում ամեն քայլ թույլատրելի է, ամենաառաքինի արարքից մինչև ամենաստորը, ըստ որում՝ ոչ թե թաքուն, այլ բացահայտ ձևով, միայն թե՝ բացատրություն ունենաս։ Քրիստոսին նա չէր տեսել, որպեսզի իմանար, թե ում է հավատացել և ումից է հրաժարվել, իսկ արբակին ամեն օր տեսնում է սեփական աչքերով։ Սա՝ մեկ։ Ո՞րն է լավ, քրիստոնյա մնալ ու վերանա՞լ աշխարհի երեսից, թե՞ զրադաշտ լինել ու մարդավարի ապրել բոլորի նման։ Հետաքրքիր է։ Ի՞նքը ինչ կասեր, ի՞նքը, Քրիստոսը։ Եթե արդարամիտ է, կասեր, որ խանգարում է մեզ։ Գալն օգնում է ուրիշներին, օրինակ, բյուզանդացիներին, բայց հայերին խանգարում է։ Իսկ եթե պահանջեր, որ թեկուզ մահվան գնով էլ պետք է ժխայն իրեն պաշտեն, էլ ի՞նչ աստծո որդի։ Սա՝ երկու։ Ինչո՞ւ հայը պիտի հրեային պաշտի, այդ ո՞ր օրենքով։ Էլ ի՞նչ աստծո որդի, եթե ազգություն ունի։ Իսկ կրակը ազգություն չունի։ Իսկ արեգակը ազգություն չունի։ Սա էլ՝ երեք։ Բայց որքա՞ն անքուն գիշերներ էր անցկացրել տանուտեր Վարդանը, որքա՞ն էր տանջվել վերմակի տակ, որքա՞ն էր աղոթել ու Քրիստոսին օգնության կանչել, քանի որ առայժմ նա էր իր պաշտամունքը, որքա՞ն էր լարել, շարշարել և հոգնեցրել ուղեղը, մինչև որ երեսի զոռով գտել էր առարկություն չվերցնող իր բացատրությունը, այն էլ ոչ թե մեկը, այլ միանգամից երեքը։

Նա սմբակների ձայն լսեց ու ձիերի խրխինջ։ Առանց մեջքն ուղղելու, մի կողմ տարավ աչքերին ընկած մազափունջը ու տեսավ, որ բլրի գագաթից մի խումբ ձիավորներ էին իջնում։ Նրանց մեջ էին Վասակը, Մուշեղը և Սամվելը։ Վարդանը շարունակեց լվալ գլուխը ու մտածեց, որ եղբայրը երևի գալիս է քարոզ կարդալու նպատակով, բայց նրա մտքովն իսկ չի անցնում, որ ինքն արդեն գտել է իր երեք բացատրությունը։ Ինչքան էլ իրեն հայհոյի ու վատաբանի, միևնույն է, ինքը սիրում է միշնեկ եղբորը։ Թող իմանա, որ ինչքան շատ այպանի ու վիրավորի, այնքան ավելի է սիրելու

նրան։ Ի հեճուկս նրա։ Հենց նրան հակառակ։ Տեսնենք ի՞նչ պիտի հակադրի իր սիրուն։

Վասակը, Սամվելը և Մուշեղը մի փոքր ետ ընկան, իսկ զինվորները, որ զգեստների տակ զենք էին պահել, արագացրին նժույգների վազքը, վրա հասան ու, սրերը մերկացրած, հարձակվեցին Վարդանի վրա։ Վարդանը բան չհասկացավ, չհասցրեց բացատրություն գտնել, միայն սարսափով զգաց, որ գլուխն այլևս երբեք չի կարողանա բարձրացնել։ Ճչաց ու բերանքսիվայր ընկավ կեղտաջրի մեջ։

Բերդում, բազմոցին նստած հղի կինը լսեց ամուսնու ճիչը ու դուրս վազեց։ Հենց վազելիս էլ սկսվեց նրա երկունքը, ու նա մի արու զավակ ծնեց, որին հետագայում, ի հիշատակ հոր, Վարդան կկոչեն։

Մինչ այդ, ձիավորներն արդեն ետ էին վերադառնում։ Զինվորներն ուրախ-ուրախ զրուցում էին և ինչ-որ զվարճալի բան պատմում միմյանց։ Գեղեցկուհի Զարմանուհու ու նրա կոտոշավոր ամուսնու մասին։

— Հայրենիքը երբեք չի մոռանա քո արարքը, հորեղբայր։

Սամվելն էր։ Եթե այդ երկու խոսքը չասեր, սիրտը կպայթեր նեղությունից։ Եթե իր հիացմունքը չարտահայտեր, կխեղդվեր կոկորդում կուտակված բառերից, բայց ասաց ու անմիջապես հեռացավ։ Գրեթե փախավ։ Որովհետև գիտեր, թե իրեն ինչ օրի կգցեր հորեղբայրը։ Զարմանալի բան։ Հայրենիքի համար ինչ ասես չէր անում սպարապետը, բայց տանել չէր կարողանում այդ բառը։ Իսկ Սամվելին, ընդհակառակը, խելքահան էին անում այդ ութ քաղցր հնչյունները։

Մուշեղը հազիվ էր լացը զսպում և զղջում էր, որ լսեց զարմիկին ու նրա հետ միասին գաղտագողի հետևեց սպարապետի ջոկատին։ Շան հոտառություն ուներ այդ Սամվելը։ Գիտեր, թե որտեղ ինչ է կատարվում։ Ամեն տեղ խոթում էր քիթը և Մուշեղին էլ հետը քարշ տալիս։ Մուշեղը երազում էր մի թաքուն անկյուն քաշվել և ազատություն տալ արցունքներին, սակայն Սամվելն անընդհատ բոթում էր կողքից

և բիի տակ մոթմոթում, որ հայրենիքի զինվորը իրավունք չունի կնավարի լաց լինելու։

Սամվելը տարակուսանքի մեջ էր, թե ինչու իրենց այլևս չեն քշում ջոկատից։ Կռահեց, որ, ըստ երևույթին, սպարապետը հրաժարվել էր մյուս եղբոր մոտ գնալու մտքից։ Ծրևի թափված արյունը սառեցրել էր նրա վճռականությունը։ «Ծերուկի բախտը բերեց»— մտածեց նա հոր մասին։ Հոր հաշիվներն ինքն անձամբ կմաքրի։ Առանց Վարդանի նա շատ կխեղճանա ու չի համարձակվի բացահայտ գործողությունների դիմելու։ Սամվելը կքանդի նրա կառուցած բոլոր ատրուշանները, կքշի պիղծ մոգերին և հոբ կստիպի ծնկաչոք ներողություն խնդրել արքայից։

Իսկ Վասակը մի ահավոր դատարկություն էր զգում։ Նա ամեն կերպ ճգնում էր ինչ-որ բանով լցնել այդ դատարկությունը, հաղթահարել այն սպանիչ անտարբերությունը, որ հետզհետե կուլ էր տալիս նրան և համահարթում ամեն ինչ։ Հիմա նա կարող էր հեշտությամբ պարսիկների կողմն անցնել։ Կարող էր, հենց այնպես, բյուզանդացիներին միանալ։ Կարող էր նաև արքային հավատարիմ մնալ։ Ոչ մի տարբերություն այդ երեք վիճակների մեջ։ Կարող էր պերճախոս դառնալ և Սամվելի նման գեղեցիկ ճառել հայրենիքի մասին։ Նույնիսկ այդպիսի ցանկություն հանկարծ ծագեց նրա մեջ։ Եվ անգամ մտքովն անցավ Վահանին այցելել, իր կրտսեր եղբորը, ու մի քանի օր հանգստանալ նրա մոտ։

Վերջապես, ինքնաբերաբար գտնվեց ելքը։ Ամենահեշտ և ամենապարզ ձևով։ Առանց նախապես ծրագրելու, առանց որևէ ճիգի։ Նա պատմուճանի ներքին գրպանից պարզապես հանեց իր սարքած փայտե փոքր արձանիկները և մեկ առ մեկ գցեց ձորը։ Ու այդ օրվանից այլևս ոչ ոքի հուշանվեր չտվեց։

Պատմիչն ասում է, որ Վասակ սպարապետը կռվեց Վին պարսիկի, Անդիկան զորավարի, Հազարավուխտ նախարարի, Դմավոնդ Վսեմականի, Մոգաց Հանդերձապետի, Գումանդ Շապուհի, Դեհկան Նահապետի, Սուրեն Պահլավի, Զիկ Պատվիրակապետի, Արշակունի Հրեշողոմի և դեռ շատ

ուրիշների դեմ, ջարդեց, կոտորեց բոլորին և սինլքորներին դուրս շպրտեց երկրի սահմաններից։

Բայց ոչ մի խոսք արձանիկների մասին։ Իբր թե այդպիսի բան չէր էլ եղել։

Գլուխ քսանհինգերորդ

— Վատ ես ապրում, Վեհափառ։— Հայր Մարդպետը ափսոսանքով տարուբերեց գլուխը և անկեղծ խղճահարությամբ նայեց Ներսեսին։— Իմ ժառաներն անգամ ավելի լավ սենյակներ ունեն, քան դու։

Նրա ուշադիր, քննախույզ հայացքը, առանց հետաքրքրասիրությունը մազաչափ իսկ թաքցնելու, զննում էր Վեհափառի ու նրա շուրջը կանգնած հոգևորականների անպաճույճ զգեստները և եպիսկոպոսական կացարանի համեստ կահավորանքը։

Նա չէր պատկերացնում, ոչ մի կերպ գլուխը չէր մտնում, թե ինչպես կարելի է Գոկայական հարստության տեր լինել, ունենալ ընդարձակ կալվածներ Այրարատում, Դարանաղիում, Եկեղյաց աշխարհում, Ցարոնում, Բզնունիքում ու Սոփքում և այսքան խեղճ ապրել։ Այդ մի բանը նա չէր կարողանում ներել կաթողիկոսին, և նրան թվում էր, թե այս անջուր վեհարանը անձնական վիրավորանք էր իր, ինչպես նաև ամեն մի քիչ թե շատ կարգին մարդու հասցեին։

Նա ավելի քան վստահ էր, որ ընդունարանի երկրորդ դռանը կախված վարագույրից այն կողմ, օտար աչքերից հեռու, փառահեղ շքասենյակներ կային, որոնք նախատեսված էին միայն մտերիմ ու հավատարիմ մարդկանց համար։ Տա աստված, որ այդպես լիներ։ Այդ դեպքում Հայր Մարդպետը նույնիսկ կհարգեր նրան, որովհետև փարիսեցիությունն ավելի նախընտրելի էր, քան թե այս խեղճությունը։

— Այդ ո՞ր քամին քեզ բերեց, Հայր Մարդպետ,— Ներսեսը չկարողացավ թաքցնել արհամարհանքը ու, խախտե-

լով պատշաճ վարվելակարգը, նրան նույնիսկ չհրավիրեց նստելու— Ինչո՞ւ հանկարծ հիշեցիր ինձ։

— Պատերազմի տարիները ծանր են նստում, Վեհափառ,— ժպտադեմ պատասխանեց Հայր Մարդպետը, և նրա կապույտ, շատ կապույտ ու բարի աչքերը ամոթխածորեն խոնարհվեցին։— Ես էլ եմ ուզում, բոլորի նման, կողմնորոշվել։ Իսկ կողմնորոշվելիս անհնար է մեղքերի մեջ չթաղվել։ Եթե իմանայիր, որքա՜ն մեղքեր ունեմ, Վեհափառ... Իմ ներկայությունն անգամ սրբապղծում է քո տաճարը։

— Բայց դու չպատասխանեցիր իմ հարցին։ Ինչո՞վ արժանացա քո տեսությանը։

— Կարո՜տը, Վեհափառ, սուրբ վայրերի կարո՜տը... Ես փորձեցի ինձ համոզել, որ եթե չփվեմ այս պատերի հետ, մեղքերիս մի մասը կթոթափեմ։ Բայց ես շատ ծեր եմ, և նույնիսկ ի՜նձ համար դժվար է իմ անձը խաբել։

— Եթե այդպես է, իմ ծառաները մինչև դարբասը կուղեկցեն քեզ։

Հայր Մարդպետը գոհ էր խոսակցության ընթացքից։ Նրան անչափ ձեռնտու էր ամենայն հայոց կաթողիկոսի անհարգալիր ու վիրավորական վերաբերմունքը։ Ներսեսը բոլորովին չէր կասկածում, որ իր վարքագծով փաստորեն օգնում էր Հայր Մարդպետին և նրան մոտեցնում նպատակին։ Որքան ավելի գրգռեն ու համբերությունից հանեն իրեն՝ ծեր աղվեսին, այնքան շուտ նա միջոցներ կգտնի իր ծրագիրն իրականացնելու և այնքան ավելի կքաղցրանա վրեժխնդրության հաճույքը։ Այլապես, ազնվության մասին ունենալով իր ուրույն պատկերացումները, նրա համար բավական դժվար կլիներ անմեղ տեղը զոհել մարդուն։

— Բայց ինչո՞ւ ես այսքան խեղճ ապրում, Վեհափառ,— ի պատասխան Ներսեսի վերջին խոսքի, որ փաստորեն նշանակում էր քաղաքավարությամբ դուրս հրավիրել նրան, հանկարծ նորից նույն հարցին վերադարձավ Հայր Մարդպետը։— Այդ միտքը հանգիստ չի տալիս ինձ։ Ես վաղը իմ չինականներին կբերեմ և կքանդեմ այս պատը...

— Ես գոհ եմ իմ վիճակից,— նրան ընդհատեց Վեհափառը,— և ավելին չեմ խնդրում աստծուց։

— Ես դիտմամբ չզգուշացրի իմ այցի մասին, որպեսզի կարողանամ նախօրոք մտնել տաճարի ու վեհարանի բոլոր ծակուծուկերը։ Տեսնո՞ւմ ես, իզուր չանցավ իմ հետաքրքրասիրությունը։

— Քո մտահոգությունն անտեղի է, իշխան։ Մենք սովոր ենք այսպես ապրելու։

— Բայց սա անտանելի՜ նեղվածք է, Վեհափառ,— պոկ չէր գալիս Հայր Մարդպետը, և նրա անհանգստությունը բոլորովին էլ շինծու չէր։ Նա պատկանում էր այն մարդկանց թվին, որոնք իրենց տանը կարող են բծախնդիր չլինել, բայց չափազանց սիրում են ուրիշի տան գործերին խառնվել, փոփոխություն մտցնել, քանդել, վերակառուցել, ըստ որում՝ մաքուր սրտով։— Մենք այս երկու սենյակները կմիացնենք, և դու մեծ ընդունարան կունենաս, —իր տարերքի մեջ ընկավ Հայր Մարդպետը և, հիմնական նպատակը մի պահ մոռացած, տարվեց իր վառ ու հարուստ երևակայությամբ։— Ես կկարգադրեմ, որ մի գեղեցիկ ջահ կախեն առաստաղից... Պատերի ջահերն էլ կավելացնենք... Թե չէ սա ի՞նչ լուսավորություն է... Գորգերով կծածկենք գետինը... Մի՞թե կարելի է այսպիսի սառը հատակի վրա քայլել...

—Սա աստծո տունն է, իշխան, և ոչ թե պալատ։

— Բայց դու հարուստ ես, Վեհափառ։ Ինձանից էլ հարուստ։ Արդյոք չե՞ս կեղծում ինքդ քո առաջ։ Եվ ակամա չե՞ս խաբում մեզ։ Ապա սթափ մտածիր։

— Իմ հարստությունն ինձ չի պատկանում, իշխան։

— Գիտեմ, գիտեմ... Արքան հիացած է քո բարեգործություններով։ Դու վերջապես լուսավորեցիր մեր երկիրը։ Այդ ե՞րբ էինք այսքան գպրոց, այսքան հիվանդանոց, այսքան աղքատանոց տեսել այս խավար երկրում։ Փոխարենը, դու քոնն, անշուշտ, ստացար, Վեհափառ։ Ժողովուրդը քեզ կոչում է Մեծն Ներսես։ Բայց արդյո՞ք քո հեղինակությունը ամբողջ չի գցում արքայի իշխանության վրա։— Եվ նրա գեմքը զարմանք արտահայտեց, թե ինչպե՞ս մինչև հիմա ոչ ոք չի կռահել այդ հանգամանքը։— Ես քեզ խորհուրդ կտայի, որ հենց ինքդ էլ այդ միտքը հուշեիր արքային։ Քանի ինքը

գլխի չի ընկել։ Եթե դու նրան կանխես համարիր, որ ուրեմն վտանգից պրծար։

— Գուցե դու ի՞նքդ հուշես,— քմծիծաղ տվեց Ներսեսը։

— Չէ, չէ, ինձ վրա հույս չդնես, Վեհափառ,— ձեռքերի շարժումով կտրականապես մերժեց Հայր Մարդպետը։— Որքան էլ խնդրես, ես չեմ կարող ձեր արանքն ընկնել։ Ոչ էլ մտադիր եմ՝ քեզ կամ նրան լավություն անելու համար նոր մեղքեր բարդել ինձ վրա։

— Գուցե դու արդեն վերջացրի՞ր քո ասելիքը և ուզում ես հրաժե՞շտ տալ ինձ։

— Չեմ թաքցնում, որ ես ուզում եմ քո վստահությունը շահել, Վեհափառ։ Մտածեցի, մտածեցի ու մի ելք գտա միայն։ Խոստովանել մեղքերս։ Ես հասել եմ մի տարիքի, երբ կարիք չունեմ մեղքերիս համար ամաչելու։ Գուցե, ընդհակառակը, մեղքերով հպարտանա՞լն է իմաստությունն։

— Ես հաճույքով կլսեմ, իշխան։ Միայն թե նախկին մեղքերդ մի՛ պատմիր։ Նրանք քաջ ծանոթ են ինձ։

— Վերջին մեղքերս, Վեհափառ, վերջի՞ն։ Եթե համբերությամբ լսես, կսոսկաս նողկանքից և կխղճաս ինձ։

Ներսեսը Հայր Մարդպետին համարում էր արքունիքի ամենաարգահատելի մարդը։ Հենց սկզբից խորապես հակակրել ու ամբողջ կյանքում երազել էր մի լավ ծեծել նրան։ Ոչ թե սրով կամ թրով կռվել նրա հետ, ա՜չ, այլ մերկ ձեռքերով, որովհետև ատելությանը հագուրդ տալու միակ հարմար ձևը դա էր։ Զենքով բախվելը այն անմիջական, նախնական հաճույքը չէր պատճառի։ Բայց Ներսեսը ընդամենը սենեկապետ էր եղել ու ցածրաստիճան զինվորական, իսկ Հայր Մարդպետը՝ արքունի ներքինապետ, արքայի մշտական խորհրդատուն, կանանոցի կառավարիչը, թագավորական կալվածների, գանձերի ու բերդերի պահապանը և հսկիչը։ Իսկ այժմ, երբ վերջապես իր դիրքով շատ ավելի բարձր է նրանից, գրեթե՝ արքային հավասար, դարձյալ ձեռքերը կապված են, քանի որ հիմա էլ կոչո՛ւմը թույլ չի տալիս։

— Խոսիր, իշխան։ Ես ուշադիր լսում եմ քեզ։

— Արքան դժգոհ է, որ դու բացահայտ ցույց ես տալիս

քո բյուզանդասիրությունը։ Ոչ միայն խոսքով, այլև գործով։ Համաձայնիր, որ հայ եկեղեցին հունականին ենթարկելու քո փորձերը, մեղմ ասած, հակադրվում են արքայի քաղաքականությանը։ Դու կհաշտվե՞ր դրան, Վեհափառ։— Հայր Մարդպետը գերագույն բավականություն էր ստանում բացեիբաց մեղադրելով երկրի երկրորդ հզոր անձին, ըստ որում՝ ապահով դիրքերից, ուրիշի, հենց առաջինի անունից։ Արամազդն ու Քրիստոսը թող միասին վկայեն, որ դա հոգեկան ավելի մեծ բավարարություն էր պատճառում, քան առաջին կամ երկրորդ անձ լինելը։— Արքան չի կարող չանհանգստանալ, որ օգտվելով Մեծի Դատավարության գործակալի քո պաշտոնից, դու փաստորեն միջամուխ ես լինում նախարարական տների փոխադարձ հարաբերություններին, այսինքն, իրավական գործունեության մենաշնորհն ես ստանձնել Հայաստանում։ Նույնիսկ Արշակավան փախչող շինականներին ես հանդգնում դատել, բացեիբաց հակադրվելով արքային։ Դու կհանդուրժե՞ր, Վեհափառ։— Ափսոս, որ Ներսեսի դեմքը ոչինչ չէր արտահայտում, ոչ տագնապ, ոչ լարում, երևի չէր ուզում, որ ծեր աղվեսը նկատեր նրա հոգու խռովքը։ Բայց արդյո՞ք չէր կարելի թեկուզ հենց դրանից էլ գոհունակություն ստանալ։ Ինչպես էլ իրեն պահեր Ներսեսը, միևնույն է, Հայր Մարդպետը չէր զրկվի սիրտը հովացնելու հաճույքից։— Արքան չի կարող չտեսնել, որ եկեղեցին աշխարհիկ իշխանության է ձգտում, ցանկանում է մրցակցել արքունիքի հետ։ Երկիրը լցվել է կանացահանդերձ տղամարդկանցով, որոնց իսկական տեղը պետք է բանակը լիներ, և ոչ թե վանքը։ Մինչդեռ նրանցից ամեն մեկը յոթ բաժին հող ունի և դեռ տասանորդ ու պտղի է գանձում շինականից։ Իսկ արքայի՞ն ինչ է մնում, բանակի՞ն ինչ է մնում... Մի խոսքով, եկեղեցին չի սատարում պետական կենտրոնացման քաղաքականությանը, ընդհակառակը, խանգարում է։ Դու կուլ կտայի՞ր, Վեհափառ։

— Բայց ես այդ բոլոր կալվածներն ու իրավունքները ստացե՛լ եմ, ո՛չ թե խլել,— աչքերը փակեց ու թիկնակին հենվեց Ներսեսը, որպեսզի հնարավորին չափ հանգիստ պատասխանի ներքինուն։

— Ստացել ես, Վեհափառ, իհա՛րկե ստացել ես։ Ո՞վ է ասում, որ խլել ես։ Սակայն որքան որ խլելն էր հանցանք, հավատա, որ մի գեղեցիկ օր նույնքան էլ սառնալն է մեղք գտնում։ Մի՞թե դու չես մտածել այդ մասին։

— Խոստովանանքդ շարունակիր, Հայր Մարդպետ, խոստովանանքդ։ Տեսնեմ, կարո՞ղ եմ մեղքերիդ թողություն տալ։

— Ես ուզում եմ թշնամացնել քեզ ու արքային։ Մի՞թե իմ այսքան անկեղծ խոստովանությունը բավական չէ, որ դու լիակատար վստահություն ունենաս իմ նկատմամբ։ Ըստ որում՝ ձեր թշնամությունից ես անձամբ ոչ մի շահ չունեմ, Վեհափառ։ Հավատա՝ ոչ մի շահ։

— Վերացական ոչինչ չի լինում, Հայր Մարդպետ։ Դա մտքինդ ասա, մտքի՛նդ։

— Մոռացել ես խոսքերս, Վեհափառ։ Եվ շա՛տ իզուր։ Դա այն պահն էր, երբ դու ոչ աշխարհիկ հանդերձներ ունեիր հագիդ, ոչ էլ եկեղեցական։ Այդ պահը մոռացման արժանի չէ, Ներսես։

— Եվ դու ի՞նչ առացիր ինձ։

— Մարդ պետք է ամեն ինչի արանքում ապրի։ Հավատարմության և դավաճանության։ Ստորության ու առաքինության։ Բարու և չարի։ Հենց այդտեղ էլ նա կգտնի վերացականության ուժը։ Անկախության իմաստությունը։ Այլապես կպատժվի իր ամեն մի քայլի համար, թե՛ լավ, թե՛ վատ։ Ես վաղուց եմ այդ արանքներում ապրում, Վեհափառ։

— Իսկ ինչպե՞ս ես թշնամացնելու ինձ ու արքային։ Եթե դու այդ չասես, խոստովանությունդ թերի կլինի, Հայր Մարդպետ, ու ես ոչնչով չեմ կարողանա քեզ օգնել։

— Իմ այս այցելությունից հետո, երբ մեկ առ մեկ տեսա քո բոլոր կալվածները, ես արքային առաջարկելու եմ, որ ետ վերցնի եկեղեցուն նվիրած հողերը։ Սրանից հետո քո բարեգործությունները թող կատարվեն այդ նույն հողերի հասույթներով, բայց արդեն նրա՛ անունից։ Քեզ համար ի՞նչ տարբերություն, Վեհափառ, թե ում անունից են բարի գործերն իրականացվում։ Դու հոգու խշխանավոր ես, իսկ

նա՝ մարմնի։ Ուրեմն, թող այդ երկրային շահերը նրան հետաքրքրեն, և ոչ թե քեզ։

— Ի սեր աստծո, էլ մի խոստովանիր, իշխան,— հանկարծ մի տեսակ անպաշտպան դարձավ Ներսեսը ու, վտանգի հոտն առնելով, այլևս չկարողացավ կեղծել ու այլայլվեց։— Ես դեռ չսովորեցի ուրիշի մեղքերն իմաստությամբ լսել։

— Իսկ դու ի՞նչ ես կարծում,— իր անամոթությունից հաճույք զգալով, հարցրեց Հայր Մարդպետը,— արքային արդյոք քուր կգա՞ իմ առաջարկը։ Ինձ, օրինակ, թվում է, թե պետք է քուր գա։ Չէ՞ որ կենտրոնացած իշխանություն ստեղծելու համար, առավել, քան երբևէ, մեծ հեղինակություն նվաճելու անհրաժեշտությունն է ծագում։ Ավելին՝ անխուսափելիությունը։

— Այս երկրում պիտի մարդասիրություն տիրե,— հոգնած ու ծեր մարդու պես, աչքերը կիսախուփ, ցածրաձայն ասաց Ներսեսը։— Եղբայրություն... Սեր ու հարգանք մարդու հանդեպ... Գիտություն ու լուսավորություն... Եվ քո միջոցով, իշխան... Իզուր ես ժպտում... Քո՛ միջոցով, քո՛... Շուտով ինքդ էլ կհամոզվես դրանում...

— Ես պատրաստ եմ, Վեհափառ։ Բայց դու քո բարի գործերով մաքառահրավեր ես նետում ժողովրդին, դիպչում ես նրա արժանապատվությանը, հիշեցնում նրա անզորությունն ու ոչնչությունը։

— Քո խոսքերը զուրկ են տրամաբանությունից, իշխան։

— Այդ նույն մարդիկ մի օր կսպանեն քեզ։ Հենց այնպես, առանց որևէ առիթի ու պատճառի։ Ու երբ նրանց հարցնեն, թե ինչու սպանեցին, գիտե՞ս ինչ կպատասխանեն... Որովհետև նա մեզ շատ լավություններ արեց, իսկ մենք, դրա փոխարեն, ոչ մի լավ բան չէինք կարող անել... Սա արդեն գե՞րտրամաբանություն է, Վեհափառ։

Ներսեսը թեքվեց ու ինչ-որ բան փսփսաց իր կողքին կանգնած տեղապահի ականջին։ Տեղապահը գլխով արեց ու դուրս եկավ սրահից։

Հայր Մարգպետը ճանաչեց նադին։ Նա Կարին գավառի Մարագ գյուղից էր, եպիսկոպոսապետի ձեռնասունը։ Աչքի էր ընկնում պճնասիրությամբ ու ձիասիրությամբ, որի պատ-

ճառով արժանանում էր շրջապատի պարսավանքին ու ծաղրին։ Դրա համար էլ հրաժարվել էր շքեղ զգեստներից, մաքեղեն էր հագնում և էշով ման գալիս։

Երևի գնաց, որպեսզի սեղան պատրաստելու հրահանգ տա։ Ուրեմն, ծնկի եկավ Ներսեսը։ Ուզում է պատիվ տալ, սիրաշահել։ Ո՞ւր կորան նրա արհամարհական կեցվածքը, կծու խոսքերը, սրահից դուրս վռնդելու թափանցիկ ակնարկները։ Գլխի ընկավ, որ ծեր աղվեսի սպառնալիքները կատակ չեն, որ արքան կկառչի նրա ծրագրից ու անպայման կիրականացնի։ Հիմա Վեհափառը կառաջարկի բարձրանալ Աշտիշատի սուրբ տեղերը, որպեսզի աղոթի ու իր պաշտոնական ողջույնը տա նրան, ինչպես անում է ամեն մի հարգարժան հյուրի գալստյան առթիվ։ Հետո նրանք միասին կճեմեն ապարանքի ու սրբերի վկայարանների արանքում գտնվող հրապարակում, մինչև որ սեղանը պատրաստ լինի։

Բայց Հայր Մարդպետը, հաջողությունից արբած, որոշեց կանգ չառնել կես ճանապարհին։ Նա ոչ միայն կմերժի կաթողիկոսի բարեկամական ցույցերը, այլև հենց հիմա վճռական ու վերջին հարվածը կտա։

— Հիշո՞ւմ ես ինչ էի խոստացել։ Այն նույն օրը, երբ դու էլ էիր մի պահ արանքում ապրում։ Աշխարհիկ ու հոգևոր կյանքի երջանիկ արանքում։— Նա պատմուճանի ներքին գրպանից մի տուփ հանեց ու խնամքով պահեց երկու ափերի մեջ։— Եթե դու տխրես, և հուսահատությունը խեղդի քեզ, եթե սիրտդ չափից ավելի ճզմվի, և խցիդ առաստաղը չափից ավելի բարձր թվա կամ չափից ավելի ցածր, դու կբացես իմ ամենաթանկարժեք տուփը, կնայես քո երբեմնի շքեղ վարսերին և հուշերը, հուշե՛րը, Վեհափառ, քեզ կտանեն իրենց հետ։ Հեռո՜ւ, հեռո՜ւ։

Նա դանդաղորեն ու հանդիսավորությամբ բաց արեց տուփը, որտեղ Ներսեսի մազերն էին պահված։

Ներսեսը ցնցված նայում էր իր մազերին։ Նա հիմա ամեն ինչ կտար, թե՛ կյանք, թե՛ հարստություն, միայն թի մի պահ, գոնե մի՞ պահ, շոշափեր դրանք։ Աչքերը խոնավացան, և այդ տուփի մեջ նա մի ակնթարթում պարզ ու որոշակի տեսավ իր մեռած անցյալը, մոռացված ու սիրելի դեմ-

քեր, զգաց գլխահան անող հոտեր ու համեր, լսեց հարա-զատ ձայներ և սիրտը մղկտացնող հատուկենտ նախադա-սություններ, նույնիսկ բառեր...

Հայր Մարդպետը լիովին հասավ իր նպատակին և ար-դեն կարող էր թողնել ու հեռանալ։ Այսքանն էլ լիուլի բա-վական էր, արդյունքը այլևս բոլորովին չէր հետաքրքրում նրան, թող ինչ ուզում է անի արքան։ Նա հիմա այստեղից դուրս կգա որպես երկրի միապետ ու եպիսկոպոսապետ և աշխարհում միայն ինքը կիմանա, որ այս պահին իր մեջ են մարմնավորված այդ երկու իշխանությունները միասին։ Այդ զգացողությունը նա ոչ մի գնով չի փոխի իրականության հետ։

Սրահի դուռը բացվեց, ներս մտավ տեղապահ Խաղը, իր ետևից բերելով սպիտակահեր ու պատկառելի մի այրի, որը գնաց, մեն-մենակ նստեց հեռավոր անկյունում, պատի տակ։ Հայր Մարդպետը աչքերին չհավատաց, երբ տեսավ, որ դա Շավասպ Արծրունին էր, Մերուժանի հայրը։ Մարմնի խոր-քերից մի դող բարձրացավ, տարածվեց ու հասավ կոկոր-դին։

Այո՛, Շավասպն էր, որդու հետ կապերը խզած ծերունի իշխանը, միակ մնացորդը Արծրունյաց ցեղից, որին Արտա-վազդ Մամիկոնյանը ազատել էր կոտորածից ու տարել Տայք, այնտեղ մեծացրել ու իր տոհմից մի կին տվել նրան, իր քրոջը՝ Համազասպուհուն.. և նրանց ամուսնությունից նո-րից սերվեցին Արծրունիները։

Այդ ե՞րբ էր։ Քանի՞-քանի՞ տարի առաջ։ Տիրան թագա-վորի օրոք։ Եվ ո՞վ էր նրան դրդել բնաջինջ անելու Արծրուն-յաց տոհմը։ Եթե հիշողությունը չի դավաճանում, ինքն էր, արքունիքի անփոխարինելի ներքինապետը։

Նա միշտ խուսափել էր Շավասպին հանդիպելուց, ու դա հաջողվել էր նրան։ Եվ պե՞տք էր այս զուգադիպությունը, որ նա Վեհափառին այցելեր Շավասպի հետ միաժամանակ։ Առաջին անգամ կյանքում բախտը երես թեքեց նրանից։

Բայց ինչո՞ւ էր ուշանում ճոխ ու արժանավոր ճաշը, ինչո՞ւ չէին հրավիրում պատվավոր հյուրին, արքայի պատ-

վիրակին, ինչի՞ համար էր այս մեռելային լռությունը և ինչո՞ւ էր պատի տակ նստել ծերունազարդ մարդը, բոլորից քաշված ու մեն-մենակ։ Արդեն մթնում է, հետո ուշ կլինի Աշտիշատի սուրբ վայրերը բարձրանալ, աղոթել և պաշտոնական ողջույն տալ պալատի ներքինապետին։ Եվ ինչո՞ւ Վեհափառն ասաց, թե հենց իր, ներքինապետի օգնությամբ պիտի այս երկրում մարդասիրություն տիրե, եղբայրություն, գիտություն ու լուսավորություն։ Ո՞րն է լինելու իր օգնությունը։ Գուցե արքունիք չհասնե՞լը։ Արքային չտեսնե՞լը։ Գուցե իր մա՞հը։ Բայց չէ՞ որ Աշտիշատ հայերեն նշանակում է հաշտության քաղաք...

— Ժամն է, որ գնամ, Վեհափառ,— դողդողաց նրա ձայնը և, տեսնելով, որ ներսեսը արձանի պես անշարժ է ու քարի նման լուռ, վախի անծանոթ զգացումը ոտքից գլուխ կլանեց նրան։

Մի բան էր միայն խանգարում. ձեռքի տուփը։ Չգիտեր ինչ անել, գրպա՞նը խոթել, թե՞ Ներսեսին տալ։ Ստեղծվել էր մի անհեթեթ վիճակ, որ նա անընդունակ էր լուծելու։

Շրջվեց և, դանդաղ քայլերով, տուփը ձեռքին, ուղղվեց դեպի դուռը։ Հայացքն ակամա ընկավ Շավասպին, ու էլ ավելի սոսկաց, որ նա բոլորովին չէր նայում իրեն։

Եվ, ի զարմանս ամենքի, նա մոտեցավ ծերունի իշխանին ու տուփը մեկնեց նրան։ Շավասպը վեր կացավ, լուռ վերցրեց ու դրեց աթոռին։

Հայր Մարդպետն ինքնաբերաբար մատնեց, որ ինքն ամեն ինչ հասկացել է ու համակերպվել իր վախճանին, մի բան, որ երբեք չէր ցանկանա ցույց տալ այս կանացահանդերձ մարդկանց առաջ։

Դրա համար էլ, դռան մոտ կտրուկ շրջվեց, նայեց Վեհափառին, ու իր իրավացիությանը վստահ, վստահ՝ իր ապրած կյանքին, չկղզալով իր սկզբունքների ու հավատամքի համար, ասաց նրան.

— Պատը չմոռանաս քանդել, Վեհափառ... Պա՞տը...

Դուրս եկավ ու չփակեց սրահի դուռը։

Դիտեր, որ Շավասպը հետևելու էր իրեն։

Պատմիչն ասում է.

«Սրանից հետո Հայր Մարդպետը սուրբ տեղերից հեռացավ և իջավ Եփրատ գետի ափը, խիտ անտառներով ծածկված հովիտը, մամուխք ծառերի թավուտները, երկու գետերի խառնուրդի մոտ, որտեղ հնուց ի վեր մի քաղաք է շինված եղել Սանատրուկ թագավորից Մծուրք կոչված տեղում։

Երբ նա այստեղ հասավ, տիրոջ բարկության դատաստանը շարժվեց անօրեն Հայրի, նրա գործերի և նրա խոսածների վրա։ Նա մատնվեց մի մարդու ձեռքը, որ կոչվում է Շավասպ և Արծրունյաց ցեղի մնացորդն էր։ Երբ նա կառք նստած գնում էր ճանապարհով, Շավասպը նրա մոտ եկավ, սկսեց իր գլխից հնաբել և ասաց. «Մի արջ տեսա ձյունի նման սպիտակ»։ Նա այնքան հրապուրեց Մարդպետին, որ նա կառքից իջավ, ձի հեծավ, սկսեցին անտառում արջին հետևել։ Երբ թավուտների մեջ ընկան, Շավասպը փոքր-ինչ ետ մնաց և Հայր ներքինուն ետևից մեջքին խփեց նետով, այնպես որ նետը նրա մարմնով անցավ։ Նա գետին գլորվեց ու սպանվեց։ Այսպես՝ աստծո մարդու ասածները կատարվեցին («Նա պատվիրեց ուրիշների ունեցածին աչք չդնել ու չցանկանալ, իսկ ով ագահաբար աչք է գնում... նա չի հասնի այն նպատակին, ինչ որ սպառնաց, այլ նրա գործած բազմաթիվ մեղքերը նրա մտադրությունը կխափանեն»), որովհետև աստծո մարդու ոչ մի խոսքը գետին չէր ընկնում»։

Արշակն ու Ներսեսը, երկու քրոջ որդիներ, մի-մի ջահ ձեռքներին, դեմ, հանդիման կանգնեցին միջնաբերդի սյունազարդ ճեմելիքում։

Օդի մեջ ձմռան հոտ կար արդեն, հատկապես՝ գիշերները։ Ծառերը մերկացել էին և տխրություն սփռել չորս կողմը։ Ոտքերի տակ մեռած տերևներ էին խշխշում, և քա-

մին նրանց պոկում էր դետնից ու քշում դեպի օտար ու անծանոթ վայրեր։

Երկու ջահ գիշերվա խավարի մեջ ընդառաջ էին գնում միմյանց, կարծես մեկը մյուսով տաքանալ էին ուզում։ Ահտ կանգ առան, առաջ ձգվեցին, ու նրանց ետևում կանգնած աշխարհականն ու հոգևորականը տեսան իրար։

Ներացել էին արքան ու կաթողիկոսը, կքել հոգսերի բեռան տակ, խամրել էր նրանց աչքերի փայլը, արյունն այլևս չէր խենթանում նրանց երակներում, երկուսի անձնական կյանքն էլ լի էր արդեն ոչ թե իրական դեպքերով ու իրական զգացողություններով, այլ միայն հուշերով։

Տաք-տաք հագած-կապած էին նրանք, արքան բուրդ էր փաթաթել մեջքին, որովհետև բազում թշնամիներին ավելացել էր ևս մեկը, մեջքի ցավը։ Երկու առյուծ, որոնք դեռ մի քանի տարի առաջ կարող էին բորիկ քայլել սառույցի վրա, որոնք ցուրտը կարող էին որպես շապիկ հագնել մերկ մարմիններին։

Արքան գիտեր, որ սա հրաժեշտի հանդիպում էր։ Հրաժեշտ սիրելի ու մոտ մարդուն։ Հարկադրական և անխուսափելի։ Նա չէր ուզենա, որ այդ բանը կատարվեր շորս պատերի մեջ, իր սեփական տանը, որը կարծես ավելի կծանրացներ իր մեղքը, ավելի կսրեր բաժանման կսկիծը։ Նրանցից յուրաքանչյուրն այսուհետև մեռած էր մյուսի համար, մնում էր միայն հիշատակը։ Մարդը կար ու այլևս չկա։ Եվ այս տեսակ մահը շատ ավելի մեծ կորուստ էր, կրկնակի կորուստ, քան թե իրականը։ Որովհետև իրականի հետ կարող ես ժամանակի ընթացքում մի կերպ հաշտվել, իսկ սրա հետ՝ անհնարի՞ն է։ Եվ նա որոշեց հրաժեշտի հանդիպումը բացօթյա տեղում նշանակել, որովհետև մեծ ու անսահման տարածության մեջ մի տեսակ հնշտանում է բաժանումը, փոքրանում են մարդկային բոլոր կրքերը, փոշիանում ու քամու բաժին դառնում։

Չէր դատապարտում զարմիկին, ընդհակառակը, հիացած էր նրանով։ Միավորման գաղափարը, որ ինքը չկարողացավ իրագործել, որպես աշխարհական, Ներսեսն ի կատար ածեց որպես հոգևոր առաջնորդ։ Պետության մեջ ստեղծեց

պետություն։ Եվ ի պատիվ նրա՝ առանց արյան, առանց դաժանության։ Խաղաղ ու հարթ ճանապարհներով։ Դեռ ավելին՝ մարդասիրության սերմեր շաղ տալով չորս բոլորը։ Իսկ արքան գալարվում է հոգեվարքի մեջ, թպրտում ափ նետված ձկան նման, իրեն պատեպատ խփում վանդակի մեջ, բայց դեպի երկրի կենտրոն ձգվող սանձերը օրեցօր բարակում են ու փախչում նրա ձեռքերից։ Ճարը հատած, դիմում է ծայրահեղ միջոցների ու իր անցած ճամփան ծածկում արյամբ ու ոճիրներով։ Կույր չէ աստված, նա տեսնում է, որ եթե արքան հրեշտակ չէ, ապա ոճրագործ էլ չէ, այլ սովորական մի հողածին, որ նրա դաժան քայլերից և ոչ մեկը անձնական հիմք չունի, այլ ծնվել է իրենից վեր ու իրենից դուրս գտնվող անհրաժեշտությունից։ Եթե քեզ ուզում են ուտել, հիմարություն է խոտակեր ձևանալը, դու ինքդ պիտի ուրիշի ուտես, և դա քո ճակատին գրված պարտքն է, որպեսզի քեզ հետ միասին երկիրն էլ փուլ չգա։

Եվ արդյո՞ք զարմիկի ճամփան հարթ ու խաղաղ չէ հենց այն պատճառով, որ արքայինն է դարուփոսերով ու արյամբ լի։

Ջահերը կանգնած էին դեմ դիմաց, և նրանց արձակած երկու փունջ լույսերը փորձում էին մի կերպ տեղավորվել, տեղ բռնել խավարի մեջ։

— Ո՞րն է իմ մեղքը, արքա։ Իմ անքուն գիշերնե՞րը։ Իմ անանձնական կյա՞նքը։ Այն, որ հիմա մի երեխա, տառերն իրար միացնելով, իր քրոջ կամ եղբոր անո՞ւնն է հայտնագործում։ Ծերանոցներում հանգիստ մեռնող զառամյալնե՞րը։ Ուրկանոցներում աշխարհից պատսպարված բոլոտնե՞րը։ Աղքատանոցներում մի պատառ հաց ուտող թըշվառնե՞րը։ Թե՞ օթևաններում հանգստացող ճամփորդները։ Ասա, ո՞րն է իմ մեղքը։

— Ես ինձ էլ չեմ խնայում, Վեհափառ։ Քե՞զ ինչու պիտի խնայեմ։ Ասա, ի՞նչ է եղել։

— Ես... Ես սպանել տվի Մարդպետին։

Արքան հանգիստ շունչ քաշեց։ Նա, որ արդեն սովոր էր ձախորդությունների, չէր զարմանա, եթե իր ծրագիրը տապալված լիներ։ Ընդհակառակը, տարօրինակ էր, որ ամեն

ինչ կատարվել էր ըստ նախատեսվածի։ Թող աստված թողություն տա ներքինու մեղքերին։ Եվ հողը թող այնքան էլ ծանր չլինի նրա շիրիմին։

— Բայց անմեղ էր թափածս արյունը...— խաբված մարդու դառնությամբ շարունակեց կաթողիկոսը։— Ես ուշ հասկացա... Մարդպետի միտքը չէր գործի... Դա քո միտքն էր, արքա... Դո՛ւ սարքեցիր այդ բոլորը... Որ ձեռքերս թաթախվեն արյունով... Որ արատավորվի անունս... Որ բացի քեզնից ուրիշ ոչ մի անուն, ոչ մի հեղինակություն չմնա... Ինչի՞ համար... Ո՞ւմ էր պետք, արքա...

— Երկրին։

— Իսկ ե՞ս։ Ես՞ ինչի մասին եմ մտածել օր ու գիշեր։ Մի՞թե ոչ երկրի։

— Ներսե՞ս... Մեր թշնամանքի մեջ ես է՛լ ավելի սիրեցի քեզ...— Արքան գլուխը դրեց զարմիկի լայն ուսին, գեմքը թաղեց նրա զգեստի ծալքերի մեջ։— Ես ու դու նույն արյունից ենք... Նույն խմորից...

Եվ ինչո՞ւ դատապարտի զարմիկին, եթե ինքն էլ նույն բանը կաներ նրա փոխարեն, ոտքով-գլխով, ամբողջ հոգով կնվիրվեր սեփական շահերին և կաշխատեր փաստական իշխանությունն իր ձեռքը վերցնել։ Չէ, նա մեղք չի գործի աստծո առաջ, չի ասի, թե Ներսեսն այդպես էր վարվում անձնական շարժառիթներից մղված։ Արքայի ու կաթողիկոսի ելակետերը նույնն էին՝ այս թշվառ ու ծվատված երկրի անկախությունն ու երջանկությունը, ճամփաներն էին պարզապես տարբեր։

Եթե միանային... Եթե՞ միանային...

— Երկու հոգին շատ է, Վեհափառ։ Շատ է երկու առաջնորդը։— Արքան ուղղվեց, հեռացավ պատշգամ տարածության վրա ու խոսեց անսպասելի չորությամբ, ինչպես հակառակորդը հակառակորդի հետ։— Դա ծանր կնստի երկրի վրա։ Չի դիմանա երկիրը։

— Մնաս բարով, արքա։ Մեր ճամփաները երևի այլևս երբեք չեն հատվի։ Ես չեմ կարող արյունոտ ձեռքերով հավիվ լինել։ Երջանիկ եղիր։

Բայց ինչո՞ւ էր տխրում արքան, եթե հենց այդ էր իր

փափագը։ Նա Ներսեսի փոխարեն կաթողիկոս կնշանակի թույլ և անկամ մի հոգևորականի, որը կդառնա իր հլու կամակատարը։ Արմատախիլ կանի գահի համար այն վտանգավոր միտումները, որոնց հիմքերը, առաջին անգամ Հայաստանում, իր հարազատ զարմիկը դրեց։ Գուցե տրխրում էր, որ նա իր զարմի՞կն է։ Դժվար թե։ Թեև, անշուշտ, այդ հանգամանքն էլ իր որոշակի գերն ուներ։ Ավելի շուտ և ավելի շատ տխրում էր, որ բաժանվում էր տաղանդավոր մարդուց, անկախ նրանից, թշնամի՞ էր նա, թե՞ բարեկամ, Մերուժան Արծրունի՞ն էր, թե՞ Ներսես կաթողիկոսը։ Զինվորներ շատ կան ամենուրեք, նույնիսկ քաջարի ու խիզախ, իսկ տաղանդներին մատների վրա կարելի է հաշվել։ Եվ դեռ հայտնի էլ չէ, թե երկիրն ո՞ւմ կարիքն ավելի ուներ։

— Համենայն դեպս, ես գնահատում եմ քո խորամանկությունը,— հանկարծ ժպտաց Ներսեսը, կրկնելով այն խոսքերը, ինչ նրան ասել էր տարիներ առաջ, Կեսարիայից վերադառնալուց հետո։— Շա՜տ նենգ խորամանկությունը։

— Ես էլ եմ գտնում, որ արյունոտ ձեռքերով անհնար է հովիվ լինել,— նույն չորությամբ ասաց արքան, պաշտոնապես ընդունելով նրա հրաժարականը։

— Իսկ թագավո՞ր,— քմծիծաղ տվեց Ներսեսը։

— Դժբախտաբար՝ այո,— կարճ պատասխանեց արքան։

Ներսեսը շրջվեց և, ջահը ձեռքին բարձր բռնած, սկսեց դանդաղ հեռանալ մեռած տերևների արահետով։

Գուցե ե՞տ կանչել նրան։ Գուցե չթողնե՞լ, որ կորուստների թիվը այսպես օրեցօր շատանա։ Գուցե ի՞նքն էր մեղավոր այս կորուստների համար և ոչ թե ժամանակը։ Որովհետև որքա՜ն անարդարություններ են գործվել ժամանակի անունից, որքա՜ն մարդիկ են ժամանակը վահան դարձրել ու թաքնվել նրա ետևում։

Նա հասկացավ, որ այս պահին միայն իր մասին էր մտածում։ Թե չէ գիտեր, վստահ էր, որ իր այս քայլն էլ էր ճիշտ։ Երևի հենց այն պահից, երբ վճռեց, որ հայոց կաթողիկոսները այլևս չպետք է Կեսարիա գնան օծվելու։ Ուրախանալ էր պետք, հրճվանքից երեխայի պես պարել ու ցատկոտել էր պետք, քանի որ բոլոր հաշիվները ճիշտ

դուրս եկան, քանի որ մի հարվածով երկու թռչուն սպանեց, մի ներքինապետի ու մի կաթողիկոսի։ Բայց, այդ բոլորը մոռացած, միայն իր մասին էր մտածում։ Վախենում էր մենակությունից։ Ամեն մի կորուստը ընդարձակում էր մենության սահմանները, խորացնում մենության անդունդը։

Եվ նրան թվաց, թե այդ ընդարձակ սահմաններից ու խոր անդունդից հնչեց իր օտար ու տհաճ ձայնը.

— Ներսե՜ս...

Հեռվում լույսի փոքր կետը կանգ առավ ու հարցական կախվեց խավարի մեջ։

Եվ այդ նույն օտար ու տհաճ ձայնը անիմաստ մի հարց ուղղեց խավարին.

— Ինչո՞ւ...

Իսկապես՝ ինչո՞ւ։

Թեկուզ հենց այդպես՝ ինչո՞ւ։

— Հայ եկեղեցին պիտի ուժեղ լինի... Շատ ուժեղ...— Բազմածալ մթության միջից լսվեց պատասխանը, որը կարծես հնչեց ոչ թե կենդանի մարդու բերանից, այլ՝ անիրական ու աներևույթ։— Դա ևս երկրին է պետք... Եթե մի դժբախտ օր հայոց թագավորությունը կործանվի, գոնե ինչոր բան կմնա այս երկրում... Սեր և հեղինակություն վայելող եկեղեցին...

— Շուտ ես թաղում հայոց թագավորությունը, Վեհափառ,— տխուր ու միայնակ առյուծի պես մռնչաց արքան։ — Շուտ եք բոլորդ հաշտվել այդ մտքի հետ։ Շո՜ւտ եք ձեռք քաշել ամեն ինչից։ Եվ հենց դրա համար եմ ես քեզ կարգալույծ անում, Ներսես։

Հեռվում երևացող լույսի կետը շարժվեց, հեռացավ, աստիճանաբար փոքրացավ, ապա կուլ գնաց խավարին։

Արքան հանգիստ շունչ քաշեց։ Ամեն ինչ տեղն ընկավ։ Բոլոր հարցերը պարզ ու տեսանելի դարձան։ Նա արդեն լրիվ հասկացավ ու պաշտպանեց իր ճշմարտությունը։ Հայոց թագավորության գերեզմանափորներից խլեց բահերը։ Հեռու քշեց եղերամայրերին։ Վտարեց գլխավոր ձայնարկուին։ Եվ միակ հավատացյալը մնաց արքան։ Ոչ միայն կյանքում, այլև հավատքի մեջ էլ մենակ։

Նա հրաշալի զինվոր էր ու սենեկապետ։ Այնպիսի վստահությամբ ու հավատով էր նետվում կռվի, որ թշնամու նետը սիրտ չէր անում խոցելու նրան։ Ռազմի դաշտը խաղ ու պար էր նրա համար, տարերք ու մոլուցք։ Նրա կատաղի հայացքը տեսնելով, նրա կրակուրոց աչքերին հանդիպելով, պարսիկն ու բյուզանդացին նախապես հասկանում էին, որ իրենց բախտը չբերեց այս անգամ, որ ուրիշ ոչ մի ճար չունեն բացի մեռնելուց։

Ճակատամարտից հետո նա երբեք չի իմացել, թե ինչ բան է հոգնությունը։ Վերադարձել է ոգևորությունից գինովցած ու թեթևացած։ Իրեն հանձնել է կանանց ու խմիչքներին։ Ոչ թե վերցրել, այլ ինքն է տրվել նրանց՝ ամբողջ էությամբ, առանց մնացորդի։

Որտեղ ոտք է դրել, հետը բերել է կյանք ու ավյուն։ Առողջությունը դուրս է հորդել մարմնից, ասես բաժին տալով, մխիթարելով ծերերին ու թույլերին։ Վեճի մեջ, ինչ հարցի շուրջ էլ լիներ, ոչ ոք չի դիմացել նրա երկաթյա տրամաբանությանը ու անհերքելի փաստարկներին։ Նրան միայն սիրել են ու ատել։ Շատ են սիրել ու շատ են ատել։ Միջինը չի եղել։ Խոսքը խոսք էր, այոն՝ այո, ոչը՝ ոչ։ Երբեք գլուխ չի ծռել, չի քծնել, չի շողոքորթել, չի ձգտել պաշտոնի, փոքրի հետ փոքր է եղել, մեծի հետ՝ մեծ, բոլորի հետ, թե՛ իրենից բարձր աստիճանավորի, թե՛ հասարակ զինվորի ու շինականի, վարվել է ինչպես հավասարը հավասարի։

Ժամանակ չի ունեցել և ժամանակ է գտել ամեն ինչի համար։ Անգիր է իմացել հույն ու ասորի իմաստասիրներին։ Սովորել է լեզուներ, ուսուցանել է Եդեսարիայում, արքայի մոտ սենեկապետ է ծառայել, սպարապետի բանակում՝ զինվոր։

Սուսերամարտի փորձերի ժամանակ խուսափել են նրա հետ մրցելուց։ Որովհետև զվարճությունը դարձրել է գործ, նենգափոխել է խաղի իմաստը ու վերածել մահու և կենաց հարցի։ Հաղթելու սուր տենչը եղել է մի անասելի ծարավ,

որը եթե չհագենար, տեղնուտեղը կխեղդեր նրան։ Եվ այսպես լուրջ է վերաբերվել ամեն ինչի, սկսած հույժ կարևոր հարցերից մինչև ամենաերկրորդականը։ Եվ հաղթել է ամեն ինչում, մեծ-մեծ պատառներ պոկելով կյանքից ու շռայլորեն, տասնապատկած ու հարյուրապատկած, վերադարձնելով շրջապատին։

Հրաշալի զինվոր էր ու սենեկապետ...

Աստված է վկա, որ հոգևոր առաջնորդի գործն էլ լավ է կատարել։ Իզուր չէր, որ նրան կոչեցին Մեծն Ներսես։ Բոլոր կոչումները նշանակովի են կամ ժառանգական՝ սպարապետ ու հազարապետ, մաղխազ ու ներքինապետ, թագադիր սպասպետ ու ամենայն հայոց կաթողիկոս, բայց Մեծ տիտղոսը ոչ ոք չի կարող տալ, անգամ արքան չի կարող, բացի՝ ժողովրդից, բացի՝ նրա հավաքական կամքից։ Գերմարդկային ճիգով ու մի հարվածով նա ջնջել, մոռացել է անցյալը։ Վեհանձնորեն հրաժարվել է այն ամենից, ինչ սիրել է ու պաշտամունք դարձրել։ Վարել է բոլորովին հակառակ կյանք։ Եվ այս անգամ ոչ թե աստված այլ թող մարդի՞կ վկայեն, որ եղել է սուրբ ու անբիծ։ Ամբողջ էությամբ նվիրաբերվել է իր նոր գործին։ Ամեն քայլափոխին հետքեր է թողել, մարդասիրության ու բարեգործության հավատի ապացույցներ։ Օր ու գիշեր չի ունեցել հանգիստ և դադար։ Ու մի բանի է ձգտել միայն՝ ստիպել մարդկանց, որ սովորեն երջանիկ լինել։ Հարկադրել, որ վարժվեն բախտավոր ապրելու։ Մարդիկ չգիտեն, որ պարտավոր են երջանկության հասնել։ Բայց նրանց փոխարեն այդ բանը լավ գիտեր Ներսեսը, ու մի հոգին էլ լիովին բավական էր, որ նա իր իմացությունը փոխանցեր հազարներին։ Եվ նա ոչ թե վերացական ու ձրի քարոզներով, այլ իր բարի գործերով է հիշեցրել նրանց պարտքը։ Ու եթե աստված երկար կյանք տար նրան և ազատեր արքայի կրնկակոխ հետապնդումներից, նա կհասներ նպատակին և, իր գործունեության պտուղներով, ի տես աշխարհի կապացուցեր, որ մարդը ծնված է երջանիկ ապրելու համար։

Արքան չհասկացավ ու չէր էլ կարող նրան հասկանալ։ Նա զրպարտեց, թե Վեհափառը իշխանության է ձգտում։

Մինչդեռ Ներսեսը կանխատեսում էր, որ վաղ թե ուշ, այսօր չէ՝ վաղը, հայոց թագավորությունը, որքան էլ ողբերգական լիներ, կուլ էր գնալու օտարներին։ Իսկ ի՞նչ էր մնալու թագավորության փլատակների վրա։ Մի բան պիտի մնա՞ր, թե ոչ։ Կենտրոնացած ու հզոր հայ եկեղեցի՛ն։ Ամենուրեք ցրված իր վանքերով ու աստծո ծառաներով։ Իր ընդարձակ կալվածներով ու անհատնում հարստությամբ։ Իր բարի անունով ու հեղինակությամբ։

Դու միայն այսօրվա մասին էիր մտածում, արքա, իսկ վեհափառը՝ ապագայի։ Եվ, դժբախտաբար, մոտ, շատ մոտ ապագայի։

Ջէ, աստված է վկա, որ հոգևոր առաջնորդի գործն էլ լավ է կատարել...

Իսկ հիմա՞։ Ո՞վ է այս մարդը, որ դաշտերն ընկած, մի կարճ պարեգոտ հագին, ուսերին մի մեկնոց գցած, շտապում է դեպի իր անհայտ հանգրվանը։

Ո՞վ եմ ես։ Ոչ հողի մարդ եմ, ոչ երկնքի։

Ո՞ւր ես։ Որտե՞ղ գնտրեմ ինձ։

Նա սովոր էր բարեկամություն անելու պողպատի հետ և անկենդան մետաղին շունչ ու մարմին տալու։ Նա ընդունակ էր խոսելու նրա հետ, սիրաշահելու, համոզելու և, հավատարիմ ծառայելու դեպքում, խոնարհաբար համբուրելու նրա սառը երեսը, դավաճանելու դեպքում՝ խոովելու, սպանելու, որ նրան կփոխարինի մի ուրիշ, ավելի նոր ու շահել սուսերով։

Հետո նրան ասացին հովիվ լինել։ Ստիպեցին մոռանալ այն, ինչ գերազանց էր անում տարիներ ի վեր։ Մի կերպ հաշտվեց ու անցավ իր նոր գործին։ Հետո ոտքովգլխով խորացավ, մխրճվեց այդ գործի մեջ և այստեղ ևս անփոխարինելի դարձավ։

Ու երբ արդեն պինդ կանգնել էր երկու ոտքերի վրա, վզակոթից բռնեցին ու գուրս վռնդեցին։ Հազիվ մի աշխատանքի սովորած, հազիվ նրա գաղտնիքներին հասու եղած, ուրիշ տեղ են քշում նրան։ Ոչ միայն նրան, այլև շատերին։

Ու օրեցօր ավելանում է օդից կախված մարդկանց թիվը, որոնք ո՛չ այս են, ո՛չ այն։

Ո՞վ եմ ես։ Ո՞ւր եմ ես։ Որտե՞ղ փնտրեմ ինձ։

Ոչ հողի մարդ եմ, ոչ երկնքի։

Ոչ զինվոր կարող եմ լինել, ոչ հոգևորական։

Թող ների ինձ սուրս, որը հիմա որբացած կախվել է մի անծանոթ մարդու մեջքից։ Եվ արդյո՞ք հավատարմորեն ծառայում է նրան։ Արդյո՞ք չի դավաճանել իր նոր տիրոջը, նրա հետ միասին չի ընկել մարտի դաշտում, ժանգոտվել ու ինքնասպան եղել Ներսեսի կարոտից։

Թող ների ինձ խաչս, բայց վաղը ես աղոթքս էլ եմ մոռանալու, նրա խոսքերն էլ են ժանգոտվելու ու հին ներկի պես թափվելու են իմ հիշողությունից։

Ո՞վ եմ ես։ Ո՞ւր եմ ես։ Որտե՞ղ փնտրեմ ինձ։

Նա ժամանակին երդվել էր աստծուն, որ եթե աշխարհն էլ կործանվեր, երկինքն էլ փուլ գար, ու թեկուզ մի հոգի մնար երկրի երեսին, միևնույն է, գտնելու էր նրան, կրնկակոխ հետևելու էր ամենուրեք, բռնելու էր օձիքից և համոզելով, պարտադրելով, ծնկաչոք պաղատելով, սպառնալով, ուժ գործադրելով սովորեցնելու էր նրան երջանիկ լինել, ընտելացնելու, վարժեցնելու էր այդ անխուսափելիությանը։

Ու եթե ինքը ոչինչ էլ արած չլիներ, գոնե մի հոգու մասին կարող էր հանգիստ խղճով ասել, որ նա, շնորհիվ իրեն, հասել էր երջանկության։ Նա իր գյուտն էր, իր գանձը, իր հայտնագործությունը։

Իր ստեղծագործությունն էր Վրիկը։ Այդ ինքն էր նրան ստեղծել ու քանդակել կավից։ Եվ իրավունք ուներ պնդելու, որ նա նույնքան իր ծնունդն էր, որքան և իր որդին, Սահակը։

Եվ նա շտապում էր Վրիկի մոտ, մխիթարվելու, իր երազանքները գոնե մի մարդու մեջ մարմնացած տեսնելու։ Գնում էր՝ ինչպես սրբավայր։ Աղոթելու ու մաքրագործվելու։

Մեղք էր Վրիկը։ Եվ Ներսեսը գիտակցում էր այդ։ Մեղք էր, քանի որ այսուհետև կատարելու էր հազարավոր մարդկանց դեր։ Իր ամբողջ եռանդը, հավատն ու չիրականացած

ծրագրերը Ներսեսը թափելու էր եղբոր որդու վրա, շարունակելու էր հղկել, կատարելագործել նրա արձանը, կարգի բերել պատվանդանը, չորս կողմը մշակել և խոտ ու ծաղիկ ցանել։ Ու Վրիկը փրկություն չուներ իր ձեռքից, հիմա նա աշխարհում միակ նյութն էր, որ դեռ կարող էր ենթարկվել հորեղբոր հղացումներին։

Բայց Ներսեսը նաև չէր խղճում Վրիկին։ Գնում էր նրան մինչև վերջ քամելու, մինչև վերջին կաթիլը մղելու։ Թող նախկին Ներսեսը խղճար, դա Վեհափառի գործն էր ու պարտականությունը և ոչ թե դաշտերն ընկած այս հոգնած ու շնչասպառ մարդու։

Վրիկը պիտի երջանիկ լիներ հազարավորների փոխարեն, բոլոր բախտավորներին պիտի իր մեջ մարմնացներ, և Ներսեսը, նրան դրոշակ դարձրած, պիտի վրեժ լուծեր իր անկատար իղձերի, իր կիսատ մնացած ծրագրերի, շատերի կողմից չհասկացված լինելու, ապերախտության ու այս անփառունակ վախճանի համար։

Ահա երևաց Վրիկի կավաշեն ու կիսագետնափոր տունը։ Գալիս եմ, Վրիկ։ Տես, թե մենք դեռ ինչե՞ր կանենք միասին, ի՞նչ հրաշքներ կգործենք։

Տան կտուրին չորացած ու ծերացած մի մարդ կար, որը չգիտեր, թե ինչպես ավելի հարմար կանգնի ու ձեռքերը որտեղ տեղավորի։ Եվ, ամենակարևորը, կարծես մոռացել էր, թե ինչու է կտուր բարձրացել։

Բակում մոտ մի տասնյակ տղաներ էին վազվզում ու ահավոր աղմուկ գցում չորս կողմը։ Կոխկրտում ու փչացնում էին մարգերը։ Տան իրերի մեծ մասը դուրս էին հանել ու խաղալիք դարձրել, դեսուդեն գցել ու կոտրտել։

Նրանց տգեղ մայրը, հոգնությունից ու հոգսերից կռացած, հուսահատ անօգնականությամբ նայում էր իր ծնած անսանձ ավազակներին և հայհոյում ամուսնուն, որը կտուր էր բարձրացել, փախչելով կնոջ հետապնդումներից ու զավակների՝ ամեն արգելք քանդող կենսասիրությունից։

Նա տգեղ կին ուներ, որովհետև չէր կարելի ամեն ինչ պատրաստի տալ նրան, ծամել, բերանը դնել։ Նա պետք է

ինքնուրույն ուժերով ստեղծագործեր իրենց սերը, արյուն քրտինքով, կասկածելով, դիմադրելով, քայլ առ քայլ նվաճելով։ Թե չէ ի՞նչ մի դժվար բան էր գեղեցիկ կնոջ սիրելը։

Նրա տունը քարքարոտ վայրում էր կառուցված։ Որքան ժայռեր էր պոկել գետնից, որքան ուժ ու եռանդ ծախսել, որքան քրտինք թափել, որպեսզի կարողանար գնահատել սեփական տանիք ունենալու քաղցրությունը։ Թե չէ ի՞նչ մի դժվար բան էր հարթ տեղում տուն կառուցելը։

Նույնքան քարքարոտ էր նաև հողամասը։ Մարդ ու կին, ամիսներ ու տարիներ շարունակ, բակը մաքրել էին քարերից, մորթաղն ու քուրձը ուսներին, փափուկ հող էին բերել հեռուներից, որպեսզի վարուցանք անեն ու քաղցից չկոտորվեն։ Թե չէ ի՞նչ մի դժվար բան էր աբգավանդ հողից բերք ստանալը։

Վրիկը տեսավ հոբելբորը, ժպտաց ու գլխով արեց։ Չգիտես՝ ուզեց բարևե՞լ, թե՞ անգիր արածի պես նախօրոք պատասխանել անխուսափելի հարցին. «Երջանի՞կ ես, Վրիկ»։

Ներսեսին թվաց, թե Վրիկը ուրախությունից էր ժպտում։ Մինչդեռ նա միակ մարդն էր, որ վաղուց ի վեր մոռացված ու խեղդված հուշեր էր զարթնեցնում Վրիկի մեջ, մեռած ու թաղված դեպքեր էր վերակենդանացնում, դեմքեր, վայրեր, քաղցր մեղքեր ու հեքիաթային արկածներ... Դրանք մի պահ առկայծում էին Վրիկի ուղեղում, հետո անմիջապես հանգում ու է՛լ ավելի շատ մեռնում։

«Վերջապես ես տանն եմ,— մտածեց Ներսեսը,— իմ հարազատների, իմ սիրելիների հետ»։

Եվ որքան որ Վրիկն էր պարտավոր երջանիկ լինելու, նույնքան էլ Ներսեսն էր հարկադրված բախտավոր կյանք սկսելու։

Ու նա տան շեմին ատք գրեց այդ պայծառ ու վճռական գիտակցությամբ։

Բայց և այնպես... Ո՞վ եմ ես։ Ո՛չ հոգի մարդ եմ, ո՛չ երկնքի։ Ո՞ւր եմ ես։ Որտե՞ղ փնտրեմ ինձ։

Գլուխ քսանվեցերորդ

Արշակավանցի Անակն ու Բաբիկը հարևաններ էին։ Անակը գիտեր Բաբիկի փորացավը և խուսափում էր նրան հանդիպել։ Աննկատ դուրս էր գալիս տնից ու արագ անհետանում։

Բաբիկը սիրտ չէր անում Անակենց տուն գնալ և աշխատում էր փողոցում բռնեցնել նրան, բայց հարևանն իսկույն չրի պես գոլորշիանում էր, ու հետքն անգամ չէր երևում։

Անակը դիտմամբ էր այդպես վարվում։ Կանխամտածված ու հատուկ ծրագրով։ Ուզում էր համոզել Բաբիկին, որ իրենց հանդիպումը շատ ավելի անհրաժեշտ էր ու կարևոր, քան թվում էր նրան։ Որ դա գրեթե կյանքի ու մահվան հարց էր։ Ուզում էր նրան հուսահատության հասցնել, և նոր միայն առիթ ստեղծել տեսակցության։

Անակի հոտառությունը անսխալ գործեց, նա ճիշտ ժամանակին հասկացավ, որ էլ չէր կարելի ձգձգել հանդիպումը, այլապես, հույսը լրիվ կտրած, Բաբիկը, մեկ էլ տեսար, կարող էր ձեռք քաշել այդ մտքից։

Նա դուրս եկավ փողոց, տնտնաց մի քիչ, ձևացրեց, թե այգու դուռը դժվար է փակվում, զոռով շարչարվեց մի քիչ, հայհոյեց քթի տակ ու լրջորեն հավատաց իր հայհոյանքին։ Շրջվեց ու տեսավ Բաբիկին։ Բարև տվին, բարև առան, կանգնեցին դեմ-դիմաց ու լռեցին։

— Այսօր անձրև է գալու,— չկամորեն ծոր տվեց Անակը։

Բաբիկը նայեց պայծառ երկնքին, երկար նայեց, խորը մտածեց ու պատասխանեց.

— Գալու է։

Անակի աչքն ընկավ գետնին ցրված ոտնահետքերի վրա, հայացքն անշարժացավ ու սառեց։

— Շուն է անցել,— անտարբեր ասաց նա, թեև պարզ երևում էր, որ ոչխարի ոտնահետքեր են։

— Ոչխար չի, չուն է,— հետքերը երկար-բարակ ուսումնասիրելուց հետո համաձայնեց Բաբիկը։

Անակը գոհ մնաց հարևանի պատասխաններից և հասկացավ, որ հեշտությամբ լեզու կգտնի նրա հետ։

Անակը Սյունիքի Վայոց Ձոր գավառից էր։ Դա լեռնային ու ջրառատ մի աշխարհ էր, որ ուներ բերրի հողեր, սառնորակ աղբյուրներ ու մետաղի հանքեր, կապարի, արծաթի և պղնձի մի քանի «բովեր» կամ ելքեր։

Ամբողջ կյանքն անց էր կացրել Եղեգիկ գյուղում, որը գտնվում էր Արփայի վտակներից մեկի աջ կողմում, բարձրադիր լեռնալանջի վրա։ Այստեղ էին ծնվել ու ապրել իր նախնիները դեռևս անհիշելի ժամանակներից, և դեռ թոռներն ու ծոռներն էլ կապրեին, եթե անլուսին մի գիշեր Անակը չհավաքեր ընտանիքը ու գողեգող ճամփա չընկներ դեպի հեռավոր ու խորհրդավոր Արշակավան։

Բաբիկը Եկեղյաց գավառի Թիլ գյուղից էր, որտեղ իր պապերի օրոք գտնվել էր մայրության աստվածուհու՝ Նանեի տաճարը։ Քրիստոսի սպասավորները այն ավերել էին Երիզայի Անահիտի տաճարի հետ միաժամանակ ու նրա տեղում եկեղեցի կառուցել։ Բաբիկը շատ զարմացավ, տեսնելով, որ Արշակավանում եկեղեցի չկար և որ հեթանոսական ոգին էր իշխում այնտեղ։ Ու նա, որ իր ամբողջ կյանքում երազել էր հոգևորական դառնալ ու աստծուն նվիրաբերվել, իրենից անկախ ականջ դրեց արյան հեռավոր կանչերին և հասկացավ, որ իր իսկական կոչումը սկզբից ևեթ եղել էր անարգված Նանեի պաշտամունքին ծառայելը։

Անակը հարկ էր տալիս իր անմիջական տիրոջը, ինչպես նաև Սյունյաց նախարարին, եկեղեցուն ու արքունիքին։ Ծայրը ծայրին հասցնելու համար աշխատում էր վաղ լուսաբացից մինչև ուշ գիշեր։ Ոչ միայն ինքը, այլև ընտանիքը։ Ու էլի սոված էին մնում։ Անհամբեր սպասում էին տոներին, որ գոնե մի գիշեր կուշտ մտնեն անկողին։ Ստիպված,

Անակը գնաց, հանքերը մտավ, որպեսզի լրացուցիչ վաստակ ստանար։ Էլի բան դուրս չեկավ։ Տարին մի քանի անգամ, հարկը ժամանակին չտալու համար, տերը մտրակահար էր անում նրան։

Բաբիկի տերը, ընդհակառակը, բարի և զգայուն մարդ էր։ Շատ էր սիրում Բաբիկին, որդու տեղ էր նրան դնում և իր հետ սեղան նստեցնում, գնահատում ինքնուսուցմամբ զբաղվելու նրա համառ ջանքերը, խրախուսում հոգևորական դառնալու փափագը։ Խոստանում էր, որ յոթ տարի ծառայելուց հետո կարձակի նրան և կմիջնորդի, որ շինականների դասից Բաբիկին տեղափոխեն ազատների դասը, որովհետև շինականն իրավունք չուներ հոգևորական լինելու։

Այն, որ Անակին ծեծում էին, գլուխը քարը, աշխարհն այսպես է ստեղծվել, այսպես էլ կգնա, բայց որ մտրակն ինքն իր ձեռքով պիտի սարքեր ու հանձներ տիրոջը, այդ արդեն մի ահավոր պատիժ էր, որ մարդիկ ոչ տեսել էին, ոչ լսել։ Մտրակը մի անգամ էր միայն օգտագործվում ու դեն գցվում։ Հաջորդ տույժի համար նորն էր պետք։ Տերը կարող էր նաև չհավանել նորը և հրամայել կրկին սարքելու։ Ամեն մերժումից հետո սեղմ ժամկետ էր նշանակում, ավելացնում հարվածների թիվը և նշումներ անում հատուկ մատյանում, որպեսզի չմոռանա։ Անակը, աչքը վախեցած, սովորաբար պատրաստում էր մի քանի մտրակ, այն հույսով, որ դրանցից գոնե մեկնումեկը դուր կգա տիրոջը։ Բայց քանի որ ժամկետը շատ էր սեղմ, հարկադրված, ամբողջ ընտանիքն էր գործի լծվում ու, արցունքն աչքներին, իրենց հոր, իրենց տան սյունի, իրենց տան գլխի համար մտրակ էին սարքում։ Փոկից կամ խոշոր կենդանու աղիքներից։

Ցոթը դարձավ երկու յոթ տարի, իսկ Բաբիկի բարի ու զգայուն տերը միտք էլ չուներ իր սիրելի որդեգրին ազատ արձակելու։ Այնքան էր կապված հետը, որ չէր կարող նրանից բաժանվել։ Նույնիսկ հարկերի չափն ավելացրեց, որպեսզի, պարտքերի մեջ խրված, Բաբիկի երեսը չբռներ հիշեցնելու տիրոջ խոստումը։ Ու տիրոջ խիզճն արդեն հան-

գիստ էր, որովհետև, շինականի վիճակը վատթարացնելու գնով, ապացուցել էր իր սերն ու հարազատությունը։

Աշխարհի սահմանները Անակի համար հյուսիսից Գեղարքունիքն էին ու Սոթքը, արևելքից՝ Ծղուկքը և Արցախի Ծար գավառը, հարավից՝ Ճահուկն ու Այրարատի Շարուր նահանգը, իսկ արևմուտքից՝ Գեղամա լեռների ջրբաժան գիծը։

Նույնն էր նաև Բաբիկի համար։ Սահմանների անուններն էին միայն տարբեր։

Նրանցից ոչ մեկը չէր պատկերացնում, որ այդ սահմաններից այն կողմ էլի լեռներ կան, գետեր, բնակավայրեր, երաշտ, ատամնացավ, անասունների համաճարակ...

Բայց Անակն այնքան մտրակ սարքեց ու այնքան ծեծ կերավ, իսկ Բաբիկն այնքան երկար խաբված մնաց տիրոջից, որ երկուսն էլ ոչ միայն պատկերացրին, այլև արդեն հավատացին, որ Վայոց Ձորից ու Եկեղյաց գավառից այն կողմ էլի աշխարհ կար։ Ընտանիքներն առած, փախան, հասան աշխարհի մյուս ծայրը, Արշակավան, և հիմա էլ պարզվեց, որ Արշակավանում է ամեն ինչ վերջանում, որ նրանից դենը այլևս ոչինչ գոյություն չունի։

Իսկ ամենաանհեթեթն այն էր, որ գալուց մի քանի օր անց, մի չնչին զանցանքի համար, Անակն այստեղ էլ մտրակի հարված կերավ մեջքին։ Կառավարչի օգնականն էր՝ հարթ ու կոպիտ մազերով, որոնք հաճախ ընկնում էին երեսին ու ծածկում դեմքի կեսը։

Իսկ Բաբիկը այդ նույն օգնականից խստիվ մերժում ստացավ, երբ նրան դիմեց հոգևորական դառնալու խնդրանքով։ Աշխատող ձեռքեր էին պետք քաղաքին։ Կաշխատի յոթ տարի, որից հետո նոր միայն կարող է մտածել աստծուն ծառայելու մասին։

— Շուն է,— ծուլորեն կրկնեց Անակը ու հորանջեց։

— Ոչխար չի, շուն է,— ոտնահետքերը է՛լ ավելի ուշադիր զննելով, համաձայնեց Բաբիկը։

✦✦✦

— Պարտք ես ուզում, չէ՞... Տեսա՞ր ոնց իմացա... Ես միայն իմ մեռնելու օրը չգիտեմ...— Անակը ինքնագոհ նայեց Բաբիկին, կարծես նոր կռահելով իրենց հանդիպման շարժառիթը։ Բաբիկը շփոթվեց նրա անսպասելի հարցից ու լեզուն կապ ընկավ։ Անակին էլ հենց այդ էր պետք։ Է՛լ ավելի դժվարացնել նրա գործը, նոր արդելապատեր դնել նրա առաջ, չթողնել, որ շփոթմունքը հաղթահարի։

Հետո հայացքը պատահաբար ընկավ իրենց տան առաջ թափված քարերին, որոնք, չգիտես ինչու, շատ ջղայնացրին նրան։ Նա Բաբիկին թողեց ու լայն-լայն քայլերով, թևերը թափ տալով, մոտեցավ պատին, կռացավ, սկսեց հավաքել քարերը ու գասավորել իրար վրա։

Բաբիկին իբր մոռացել էր։ Բաբիկն էլ հիմար-հիմար կանգնել էր, մեկ մի, մեկ մյուս ոտքին հենվելով։ Տատանվում էր՝ օգնի՞ Անակին, թե ոչ։ Բայց, չգիտես ինչու, նրան թվում էր, թե իր ամեն մի քայլը կարող էր նեղացնել հարեվանին։ Ամաչում էր իր օգնությունը նրա վզին փաթաթել։ Հանկարծ սխալ չհասկանա՞, չկարծի՞, թե անհրեսություն էր անում։ Բայց, մյուս կողմից էլ, ի՞նչ կա որ, իր հետ կռիվ էր տալիս Բաբիկը, հարևանը հարևանին պարտավոր է օգնել։ Սակայն ոտքերը ծանրացել, մեխվել էին տեղում, ուղեղը չէր կարողանում մարմնին որևէ բան թելադրել։

Ո՛չ թե ընտանիքի ծանր ու անելանելի գրությունը, ո՛չ թե իր գատարկ ձեռքերին ուղղված երեխաների սպասողական ու հարցական հայացքները, այլ երկարատև ու ապարդյուն հետապնդումները Անակին, և հատկապես այսօրվա այս անհեթեթ վիճակը նրան է՛լ ավելի համոզեցին, որ հարեվանից պարտք վերցնելը հրամայական անհրաժեշտություն էր։ Այդ անհրաժեշտության գինը հանկարծ տասնապատիկ բարձրացավ, իսկապես դարձավ կյանքի ու մահվան հարց։ Նա հասկացավ, որ նահանջի ոչ մի ճանապարհ այլևս չէր մնացել։

Ու Բաբիկը, չգիտես ինչու, հանկարծ մի անասելի սով զգաց ստամոքսում։ Թեև քիչ ու միչ կերել էր հենց քիչ

առաջ։ Երբ քաղցած էր լինում, նրան թվում էր, թե երեխաներն էլ են քաղցած։ Երբ մրսում էր, թվում էր, թե երեխաներն էլ են մրսում։ Երբ հոգնած էր, ուրեմն երեխաներն էլ են հոգնած։ Սովի զգացողությունից մի ներքին իրարանցում ու տագնապ մտավ նրա մեջ։ Եվ մեղավորն Անակն էր, որն սպառնալիքի պես ցցվել էր աչքերի առաջ ու պղտորում էր նրա սիրտը։

Անակը վերջացրեց գործը, շտկեց մարմինը, բծախնդիր տանտիրոջ գոհունակությամբ նայեց իր հավաքած քարակույտին ափերն իրար զարնելով մաքրեց փոշին, ապա պատահաբար նկատեց Բաբիկին, խոժոռեց հայացքը, փորձեց հիշել, թե իրենց խոսակցությունը որտեղ կանգ առավ և, անսպասելիորեն, ձայնը գցած, սկսեց միանգամից վրա տալ.

— Ես մեղավո՞ր եմ, որ մեծ ընտանիք ունես։ Քեզ ո՞վ էր ասում շատ երեխաներ բերեիր։ Երբ իրար ետևից երեխա էիր շարում, իմ կարծիքը հարցրի՞ր։ Չհարցրիր, չէ՞։ Լավ՞ծ բան է, որ մեկի սխալի համար մի ուրիշը պատասխան տա։ Դե արի իմ սխալների համար էլ դո՛ւ պատասխանիր, էլի։ Կարծում ես, ես սխալ չե՞մ արել։ Արել եմ, ինչքան ուզես։ Բայց ո՞ւմ եմ նեղություն տվել։

— Երդվում եմ... Շուտ կվերադարձնեմ...

Ավելի լավ է գետնի տակն անցներ, քան թե այդ նախատինքները լսեր։ Նրա միակ հույսն այն էր, որ Անակը թողնի ու գնա։ Ինքը չէր կարող, իսկ Անակը, հակառակի պես, չէր գնում։ Թող պարտք չտա. թող էլի քաղցած մնա, թող էլի տոներին սպասեն, միայն թե գնա։ Իսկ Անակը չէր գնում։

— Բա ես փո՞ղ ունեմ,— չգիտես ինչու, վիրավորվեց Անակը։— Մոռացե՞լ ես, որ ես էլ, քեզ նման, փախել եմ իմ տիրոջից։

Բայց Բաբիկը հահախ էր դիմել նրա օգնությանը, և նա երբեք չէր մերժել։ Հիմա ի՞նչ պատահեց, ուզում էր հարց տալ Բաբիկը. բայց Անակը այնպես էր իրեն պահում, որ եթե հիշեցներ, ասես մեծագույն վիրավորանք հասցրած կլիներ հարևանին։

— Ես միշտ ժամանակին եմ վերադարձրել իմ պարտքը,—

մի տեսակ մեղավոր կմկմաց Բաբիկը, կարծես ինչ-որ ծանր հանցանք խոստովանելով։

— Օրանի հարևան չլինեինք,— անակնկալ մեղմությամբ ասաց Անակը ու ձեռքը դրեց Բաբիկի ուսին։— Կարծում ես հե՞շտ է տեսնել, թե ոնց են կողքիդ օրերով սոված մնում։

— Ես էլ չեմ դիմի քեզ,— սիրտ առավ Բաբիկը, և հույսի մի ցոլք երևաց աչքերում։— Ինչով ուզում ես երդվեմ... Բայց այս մի անգամն էլ օգնիր...

— Դե լավ, ինչ արած,— հառաչեց Անակը ու, ինքն իրենից դժգոհ, ավելացրեց.— Դու սկզբից գիտեիր, որ կգիջեմ։

— Շնորհակալ եմ,— հուզմունքից կերկերաց Բաբիկի ձայնը։— Ես գիտեմ, որ դու բարի սիրտ ունես։

— Դե որ այդքան նեղն ես զցում, ի՞նչ կարող եմ անել,— նեղացավ Անակը։— Բկիցս բռնել, բաց չես թողնում։ Ես էլ մարդ եմ, չէ՞։

— Ես երբեք չեմ մոռանա քո լավությունը... Մենք ամբողջ ընտանիքով կօրհնենք քեզ...

— Դու կարող ես չվերադարձնել պարտքդ։ Մեկ է, հետո էլի ես ուզելու։ Ես քեզ ուտելիքի պաշար էլ կտամ։ Երեխաներդ հո մեղավոր չե՞ն, որ կարճամիտ հայր ունեն։— Նա փոքր ինչ լռեց, մի ակնթարթում զրկվեց քիչ առաջվա պոռթկումներից, նորից ընկավ անտարբերության գիրկը, մի տեսակ զարմանալի դանդաղկոտություն մտավ շարժումների ու խոսքերի մեջ, ծույլ-ծույլ հորանջեց ու սկսեց էլի ծոր տալ բառերը։— Գիտե՞ս հիմա ինչ անցավ մտքովս... Չէիր ուզենա՞ աշխատել ինձ համար... Օգնել, օգնել...— Ամեն խոսքից հետո երկար լռում էր, կարծես մտքի թելը կտրվում էր, ու նա դժվարությամբ փնտրում, հավաքում էր ասելիքը։ — Տունս ավարտես... Հողս մշակես... Անասուններին կեր տաս... Ի՞նչ իմանամ, տուն է, հազար ու մի գործ կլինի... Ոնց որ թե լավ բան մտածեցի, հը՞...

— Բայց դա արգելված է օրենքով,— անհանդստացավ Բաբիկը ու ձայնն իջեցրեց չշուկի։

— Դո՛ւ գիտես,— գիտմամբ սովորականից մի քիչ բարձր խոսեց Անակը, որպեսզի ներշնչի, որ ոչ մի դատապարտելի

բան չկար իր առաջարկի մեջ։— Ուզում ես մտածիր։ Ես չեմ ստիպում։

— Բայց... եթե իմանան, ինձ էլ կարտաքսեն, քեզ էլ։

Բաբիկը սփրթնել էր։ Սիրտը սկսել էր արագ խփել։ Ասես հանցանքի մեջ էր բռնվել, և բռնողն էլ Անակն էր։ Անակը հենց նոր այնպիսի լավություն էր արել նրան, որ նա ոչ մի մեղք չէր կարող ունենալ։ Ըստ որում, լավությունը գուցե ոչ այնքան պարտք տալու համաձայնությունն էր, որքան այն, որ խնդրատուի նվաստացուցիչ վիճակից փրկել էր Բաբիկին։ Չէ, ամբողջ մեղքը իրն էր, միայն իրը, Անակը ոչ մի կապ չուներ։ Իսկ եթե իմանար կառավարչի օգնականը, որը շան հոտառությամբ զգում էր միշտ, թե որտեղ է օրինազանցություն կատարվում։ Թեև նրա շնորհիվ անբասիր կարգ ու կանոն էր իշխում քաղաքում, բայց և այնպես վա՜յ նրան, ով նրա ձեռքը կընկներ։ Բաբիկը ամենից շատ նրանից էր սարսափում։

— Ես հո չե՞մ ասում, որ բոլորի աչքի առաջ ծառայես ինձ,— ծուլորեն ժպտաց Անակը և մեծ, շատ մեծ դժկամությամբ նայեց երկնքին, ասես նրան խնդրել, աղերսել էին այդ բանն անելու— Գաղտնի՜... Գաղտնի՜...

— Իսկ եթե իմանա՞ն,— իր հարցի մեջ զիջում զգալով, վախեցավ Բաբիկը։

— Եթե իմանան, կասես հարևաններ ենք։ Բա որ մենք էլ չօգնենք իրար, էլ ո՞վ պիտի օգնի։

Անակը հույսը դրել էր այն բանի վրա, որ Արշակավանում ուրիշի աշխատանքի շահագործումը ոչ միայն արգելված էր, այլև խստիվ պատժվում էր։ Որքան էլ տարօրինակ լինի, հենց դա էր փրկությունը։ Օրենքի խստությունը ու պատժի դաժանությունը մի տեսակ հանգստացնում էին պաշտոնյաներին, բթացնում նրանց զգոնությունը։ Որովհետև ոչ ոքի մտքով չէր անցնում, որ մեկն ու մեկը, գլխից ձեռք քաշած, կհանդգնի խախտել սահմանված կարգը։ Նույնիսկ կառավարչի օգնականը հոտ չի առնի այս գործից։

— Համաձայն եմ,— շատ արագ ասաց Բաբիկը, որպեսզի ժամանակ չունենար ծանր ու թեթև անելու։

— Գիտեմ, որ ճար չունես, գիտեմ, բայց ինչո՞ւ ես

նորից շտապում,— հանդիմանեց Անակը։— Գնա մտածիր, կնոջդ հետ խորհուրդ արա, տես նա՞ ինչ է ասում։

— Չէ, չէ, համաձայն եմ,— ջղայնացավ Բաբիկը, չգիտես ում վրա։

— Տեսնո՞ւմ ես, քո կարճ խելքից կրակն ընկար,— Անակը գրկեց նրա ուսը, ու թեև տարեկիցներ էին, բայց հայրական նախատինքով օրորեց գլուխը։— Եթե այսքան երեխա չշարեիր, հիմա ստիպված չէիր լինի նորից ծառա դառնալ... Ով-ով, բայց ես հո լա՞վ գիտեմ, թե ինչ ծանր բան է ուրիշին ծառայելը... Մոռացե՞լ ես, որքան ենք տանջվել ես ու դու... է՜, Բաբիկ, Բաբիկ...

Ու Բաբիկը իրեն խորապես մեղավոր զգաց թե՛ Անակի, թե՛ իր ընտանիքի առաջ։

Գլուխ քսանյոթերորդ

Օլիմպիայի համար ամենածանր հարվածը ձմռան գալուստն էր։ Պատուհանը փակվեց հորթի՝ ձեթով մշակված ու գրեթե անթափանց կաշվով, և կտրեց նրա բոլոր կապերն աշխարհի հետ։ Մենակությունն ստացավ որոշակի ձև ու ծավալ՝ իր օթևանը, շորս պատերով ու առաստաղով։ Նույնիսկ նաժիշտներն ու սպասուհիները, որոնք կարծես միանման դիմակներ հագած լինեին, իրենք էլ չիմանալով, հալելու պես արտացոլում էին թագուհու մենությունը։

Օլիմպիային այլևս հոգեկան ոչ մի բավարարություն չէին պատճառում իր շքեղ հագուստներն ու շլացուցիչ զարդերը։ Ամեն օր նույն զգեստն էր հագնում։ Հորենական բարձր դիրքն ու հարստությունը, որոնք սկզբում պաշտպանական դեր էին կատարում, բացարձակ մոռացության էին մատնված։ Սպասում էլ արդեն չկար։ Գոնե առաջ հուսադրում էր իրեն, գիշերները, անկողնում կուչ եկած ու շունչը պահած, ականջ էր դնում միջանցքից լսվող հազվադեպ ոտնաձայներին։ Իսկ արքան չէր գալիս։ Բայց հեռավոր

հույսի ու մոտալուտ հուսախաբության հերթագայությունը դեթ ինչ-որ բանով լցնում էր նրա կյանքը։ Իսկ հիմա լրիվ ամայություն էր ու դատարկություն։

Երբեմն սրտնեղությունից մտքովն անցնում էին անթույլատրելի բաներ. կարգի բերել սենյակները, մաքրել կահույքի փոշին, ձեռագործությամբ կամ ասեղնագործությամբ զբաղվել... Սակայն դրանք այն աստիճան անվայել էին Թագուհու համար, որ նույնիսկ ինքն էր ամաչում իր թաքուն ցանկություններից։

Օլիմպիան, առանց գիտակցելու, սկսեց դաժան վարվել նաժիշտների ու սպասուհիների հետ։ Ամեն չնչին բանի համար դիտողություն էր անում, կպչում ամեն մի մանրուքից, չիթը խոթում այնպիսի գործերի մեջ, որոնց մասին նա գաղափար անգամ չպետք է ունենար, տեսարան սարքում, սպառնում հազար ու մի պատիժներով։

Եվ այն հեզ ու խոնարհ կինը, որը ժամանակին քաշվելով էր ընդունում ուրիշների ծառայությունը, հիմա դարձել էր փորձանք։ Նրա ստվերն անգամ սարսափ էր պատճառում շրջապատի կանանց։

Օլիմպիային աստիճանաբար սկսեց դուր գալ իր վատ համբավը, դաժանությունն ու անսրտությունը մի տեսակ հաղորդ էին տալիս կյանքի ծարավին։ Նա միահեծան բռնակալ էր իր իշխանության նեղ սահմաններում, որոնք չէին տարածվում փոքր օթևանից այն կողմ, իսկ հպատակները՝ մի բուռ խեղճուկրակ կանայք։

Հանկարծ, չգիտես երբ և ինչպես, նրա մեջ ծագեց բուռն գործունեության պահանջ։ Դուրս գալ օթևանի սահմաններից, խառնվել երկրի գործերին, լիովին օգտվելով Թագուհու իրավունքներից. ընդունելություններ կազմակերպել պալատում, շփվել հայ նախարարների հետ, Բյուզանդիայից հրավիրել դերասանների, փափկացնել այս կոշտ ու անտաշ պալատի մթնոլորտը։ Եվ իր ամուսնուն անպայման տեղը նստեցնել կայսրի միջոցով։ Երկար ու դառն նամակներ կգրի նրան, դժգոհություն կհայտնի հայոց արքայից, միջամտություն կխնդրի՝ իրենց փոխհարաբերությունները կարգավորելու համար, կմտերմանա ընդդիմադիր նախարարների հետ,

մանրամասն կիմանա նրանց տրամադրություններն ու մտադրությունները և տեղյակ կպահի կայսրին։ Որպես խսկական բյուզանդուհի, որի համար իր հայրենիքի շահերը բարձր են ամեն ինչից։ Տեսնենք այն ժամանակ արքան ինչպե՞ս ջանք չի թափի իրեն սիրաշահելու, ինչպե՞ս չի նկատի թագուհու բարեձև մարմինը, ինչպե՞ս սեր չի բացատրի իրեն։ Եվ ապա թող համարձակվի չքշել իր մյուս երկու կանանց, շարտաքսել՝ մեկին պալատից, մյուսին՝ ընդհանրապես երկրից։ Վերջիվերջո թագուհու թիկունքում կանգնած է մի ամբողջ հզոր երկիր, որի հետ հաշվի չնստելու համար պետք է առնվազն խելքդ թոցրած լինես։ Իսկ ի՞նչ է կարծում արքան, թագուհին այդքան շո՞ւտ կների նրան, այդքան շո՞ւտ կմոռանա նրա անուշադիր վերաբերմունքը։ Նա դեռ երկար պիտի չարչարվի, պիտի մաշկից դուրս գա, մեղքերը պիտի մեկ առ մեկ քավի, որպեսզի թագուհին մի կերպ ների նրան։

Բայց Օլիմպիայի բախտը չբերեց։ Կոստանդիանոս կայսրը Անտիոքից Արևմուտք գնալու ճանապարհին հիվանդացավ ու մահացավ Կիլիկիայի Տարսոն քաղաքում։ Կարծես եղբոր, Օլիմպիայի նշանածի մահը քիչ էր, դեռ ինքն էլ մեռավ։ Թագուհու դիրքերը խարխլվեցին, ու նա բոլորովին անտեր մնաց։ Կոստանդիանոսի հաջորդների համար նա չէր կարող նախկին նշանակությունն ունենալ։ Դա երևում էր թեկուզ և այն բանից, որ մի քանի հունասեր նախարարներ, որոնք երբեմն ծածուկ այցելում էին նրան, ոտքները միանգամից կտրեցին թագուհու օթևանից։ Նա հասկացավ, որ այլևս ոչ ոքի պետք չէր։ Անհրաժեշտ էր որևէ կերպ գլխի ճարը տեսնել։ Բայց ինչպե՞ս, ո՞ւմ միջոցով։ Մտածեց, ծանր ու թեթև արեց ու հանգեց այն եզրակացության, որ միակ հույսը էլի արքան էր։ Լավ թե վատ, էլի իր ամուսինն էր։ Նա, անկասկած, առաքինի մարդ էր, թույլ չէր տա, որ թագուհու մազին անգամ կպչեն, վիրավորեն կամ վնաս հասցնեն։ Եվ ո՞րն էր նրա առաքինության ապացույցը, այն, որ Օլիմպիային երեսի վրա՞ էր թողել, գուցե այն, որ թեկուզ մի անգամ, գոնե ձևականության համար, չէ՞ր հետաքրքրվել նրա կյանքով կամ գուցե և այն, որ երբեք իր կողքին չէ՞ր

նստեցրել, այսինքն այն գահին, որն օրենքով թագուհուն էր պատկանում։ Իսկապես, ո՞րն էր ապացույցը։ Միակ ապացույցը, որ նրա համար ծանրակշիռ էր ու անհերքելի, որին դեմ ոչ մի փաստարկ չէր դիմանա, ոչ մի որամաբանություն ուժ չէր ունենա, դա իր սերն էր։ Շատ հատարակ ու շատ զորավոր մի վկայություն։ Նա սիրում էր արքային։ Եվ հենց այդ պատճառով էր արքան առաքինի։

Այդպես նա սիրել էր իր մեռած նշանածին՝ Կոստասին։ Մի մարդ, որ առաքինության ու ազնվության տիպար էր նրա համար։ Այս հարցում էլ Օլիմպիան մի յուրօրինակ ապացույց ուներ։ Նա ընդունակ էր կոզքից դիտելու իրեն, և այդ կարողությունը նրան արգելում էր ինքնախաբեությամբ զբաղվել։ Նա հրաշալի գիտեր իր արժեքը ու երբեք չէր փորձում իր ապեղությունը թաքցնել իրենից։ Ու եթե Կոստասը նրան սիրեց հենց այնպես, ինչպես որ կար, գնահատելով նրա ներքին գեղեցկությունը, մի բան, որ Օլիմպիան նույնպես բոլորովին մտադիր չէր թաքցնելու, ուրեմն՝ նա շատ կարգին մարդ էր։ Ինչո՞ւ մեռավ, չես հասկանում։ Հարցը կարող էր այսքան պարզունակացնել ու այսքան հասարակացնել միայն նա, ով անհատակ վիշտ ուներ և անասելի խոր ցնցում էր ապրել կյանքում։

Կոստանդիանոս կայսրի մահից հետո վախը սողոսկեց Օլիմպիայի օթեանը։ Նա կարծես տեսավ, թե ինչպես այն մտավ դուռն տակի նեղ բացվածքից ու կամաց-ֆամաց, թիզ առ թիզ, գրավեց չորս կողմը ու լցվեց ամենուրեք։ Նա ցավ պատճառելու չափ հստակ զգաց, թե ինչպես այն հասավ իր ծնկներին, կրծքին, կոկորդին, հետո մինչև առաստաղը ու սկսեց խեղդել իրեն։

Նախ, նա վերջ տվեց նաժիշտներին ու սպասավորներին հալածելուն։ Նույնիսկ խղճի խայթ զգաց։ Զարմացավ, թե ինչպես էր մտքովն անցել՝ իր սիրած մարդուց վրեժխնդիր լինել, ինչ է թե՝ խելքի բերեր նրան։ Վախը վերադարձրեց իր բնական վիճակը, նա նորից դարձավ նույն հեզ ու խոնարհ կինը։ Եվ այլևս ոչ մի ճիգ չարեց մենակության կապանքներից ազատվելու։

Նա ոչինչ չէր ուտում ու ոչինչ չէր խմում, մինչև որ նա-

ժիշտներից կամ սպասուհիներից որևէ մեկը համտես չաներ հենց իր աչքի առաջ։ Թվաց, թե ինքնապաշտպանության ելքը գտել էր։ Բայց մի քանի շաբաթ հետո հոգնեց, ու նախազգուշական այդ միջոցները էլ ավելի անտանելի դարձրին նրա կյանքը։ Նա վերջ տվեց դրանց և նոր միայն քիչ թե շատ հանգիստ շունչ քաշեց։ Բախտի քմահաճույքին հանձնվելը մի տեսակ հանգստացրեց և թուլացրեց նրան։ Թող ինչ լինում է՝ լինի։ Թող լինի՛, լինի՛։ Միայն թե շուտ։

Մի գիշեր, երբ այնքան ուշ էր, որ կարծես բոլոր շնչավորները, թե՛ մարդ, թե՛ գազան, պետք է խոր քուն մտած լինեին, Օլիմպիան, սովորականի պես մահիճին երեսնիվայր փռված, հեկեկում էր և անշարժ ու հոգնած խոսքերով մտովի անիծում իր բախտը։

Նա հայտնաբերեց մի սարսափելի իրողություն։ Ջանձրացել էր իրենից։ Հենց այդպես՝ պարզապես ձանձրացել էր։ Իր վշտերից, տառապանքներից, հոգսերից, սպասումներից, վախից և առհասարակ ամեն ինչից։

Հենց դրա համար էր հեկեկում։ Ինքն իր աչքից ընկնելու համար։ Ինքն իրեն խորթանալու ու ինքն իրենից օտարվելու այս անհեթեթ զգացողության համար։ Եվ հանկարծ մի ստվեր նկատեց ննջասենյակում։ Մի պահ տարտափեց, կարծելով, թե դա իր զգացողության շարունակությունն էր, թե սեփական ստվերը անջատվել էր մարմնից ու ազատ մա՛ր էր գալիս իր համար։ Վախեցած վեր թռավ ու մի ճիչ արձակեց։

Փառք աստծո, ստվերը դեռ իր հետ էր։ Իսկ նրա դիմաց կանգնած էր մի ուրիշ մարդ։ Արքան էր, իր ամուսինը։

Օլիմպիան, որ օր ու գիշեր սպասել էր նրան, ականջ դրել միջանցքից լսվող ամեն մի ձայնին, նույնիսկ այնքան ուշագիր, որ երբեմն թվացել էր, թե հենց այդ ուշադրությունից էր ձայնն ինքն իրեն ծնվում, այսօր, հակառակի պես, չէր լսել ամենախսկական ոտնաձայնը, դռան ամենախսկական ճռռոցը։

Արքայի հայտնվելն այնքան անսպասելի էր, որ Օլիմպիան ժամանակ չունեցավ ուրախանալու։ Աբուսվելուց ուռած աչքերով նայում էր նրան, ինչպես մոլորված երեխան

կնայեր իր փրկարարին։ Նա սեղմվեց պատին, անմիջապես ինչ-որ իրական ու կոպիտ բան զգալու ներքին պահանջով, որպեսզի այս հրաշալի հայտնությունը չվերագրեր իր տեսիլքներին ու պատրանքներին։

Ճիշտ ժամանակին էր եկել արքան։ Եկել էր նրա ձանձրույթը սպանելու։ Նրան ինքն իր հետ հաշտեցնելու, ինքն իրեն վերադարձնելու։ Վերացնելու այս անհեթեթ խորթությունն ու օտարացումը։

Օլիմպիան փրկված էր ճգնաժամից։ Միայն ափսոս, որ արդեն մի քանի ժամ է, ինչ ստամոքսում սուր ծակոցներ էր զգում և սիրտն էր խառնում մի փոքր։ Բայց նա կհաղթահարի դրանք, այդ էր պակաս, որ այսպիսի մի օր թույլ տա, որ ձախորդությունը, ինչպես միշտ, ընկճի ու ծնկի բերի իրեն։

Արքան դանդաղ ու աննպատակ քայլերով պտտվում էր սենյակում, ցրված ու մշուշոտ հայացքով դիտում չորս կողմը, հենց այնպես ձեռք տալիս ինչ-որ առարկաների, կարծես ուզում էր ստուգել դրանց պնդությունը։ Ապա, ասես իմիջիայլոց, նկատեց Օլիմպիային, որն աշխատում էր թաքուն սրբել արցունքները և կարգի բերել իրեն։

Այսպես, մտամոլոր ու քունը փախցրած, նա ման էր եկել ամբողջ պալատում, մեն-մենակ իջել, բարձրացել բոլոր երեք հարկերը, ետ ու առաջ քայլել դատարկ միջանցքներով և Օլիմպիայի սենյակն էր մտել հենց միայն նրա համար, որ լույս էր նկատել դռան արանքից։ Չէր էլ իմացել, չէր էլ մտածել, թե ում կհանդիպեր դուռը բացելով։ Պարզապես լույսն էր ինքնաբերաբար ձգել նրան։

Երկիրը գնում էր ձեռքից։ Իսկ գիշերները, ինչպես ամեն մի ճշմարտություն, այնպես էլ այս մեկը, շատ ավելի ակնհայտ էր դառնում ու խոշորանում։ Ազդեցիկ նախարարները, փոխանակ վտանգի դեմ միասնական ճակատով հանդես գալու, երես թեքեցին իրենց թագավորից։ Ոչ միայն Մերուժան Արծրունին ու Վահան Մամիկոնյանը, այլև ուրիշ շատ վատեր ու անարժաններ։ Նախ՝ Աղձնիքի և Նոշիրականի բդեշխները, Մահկերտունն ու Նիհորականը։ Աղձնիքի տոհմը նույնիսկ պարիսպ քաշեց Հայաստանի կողմից՝ Զորա կոչ-

ված տեղում, դոնեբ դրեց և իր գավառն անջատեց մայր երկրից։ Ապա հայրենիքին դավաճանեցին ու Տիզբոն ներկայացան նաև Գուգարքի բդեշխը, Զորա և Կողբի գավառների նահապետները, Գարդմանաձորի տերը։ Արքայի գեմ ապստամբեցին Արցախի, Տմորիքի և Կորդիքի ամուր գավառները։ Մնաց միջնաշխարհը։

Արքան նստեց բազմոցին, մեջքով դեպի Օլիմպիան, անթարթ աչքերով նայեց մի անորոշ կետի, կարծես ուզում էր մտաբերել, թե ինչի համար էր հայտնվել այստեղ։ Առաջին անգամն էր ոտք դնում այս հարկաբաժինը, և մեղավորը դուռն տակի նեղ ու լուսավոր շերտն էր, որն ընդհանուր մթության մեջ ասես մի հսկայական խարույկ լիներ։

— Հանվիր,— ասաց նա, առանց սեփական ձայնը լսելու։

Օլիմպիան չհավատաց ականջներին։ Մարմինն ակամա մի փոքր առաջ ձգվեց, կարծես ավելի լավ ըմբռնելու համար արքայի խոսքը։ Չէ, չէր սխալվել, այսքան տառապելուց հետո պարզապես չէր կարող սխալված լինել։ Նրա ձայնը դեռ արձագանքում էր սենյակում, և այդ արձագանքը այլևս երբեք չի վերանա այստեղից։ Երկու մենակ մարդ հիմա կսփոփեն, կմխիթարեն իրար, գուցե և անխոս կհասկանան միմյանց ու լուռ դաշինք կկնքեն մեկը մյուսի հետ։ Իսկ երկու հոգին այնքան էլ քիչ չեն։ Եթե մանավանդ մեկը կին է, մյուսը՝ տղամարդ։ Եվ առավել ևս՝ եթե այդ կինն ու տղամարդը ամուսիններ են։ Դա արդեն ուժ է, մեծ, չա՜ տ մեծ ուժ է, որին անհնար է որևէ բան հակադրել։

Օլիմպիան, ուրախությունից ջփոթված, գլխով արեց, այսինքն՝ հենց հիմա կկատարի նրա կարգադրությունը, թեև արքան մեջքով էր նստած ու չէր կարող նրան նկատել։

Նա հիմա երկչոտ մարդու երկակի վիճակ էր ապրում։ Տեսնում էր, թե ինչպես վազեց, ծնկաչոք նստվեց արքայի առաջ ու սկսեց համբուրել նրա ձեռքերը, նրա այտերը, նրա աչքերը ու անդադար խոսել։ Բառերը հոսում էին, ինչպես անհանգիստ ու վարար գետի ջուրը, երբեմն անկապ, երբեմն իրար գտնելով ու իմաստ տալով իրենց միությանը, երբեմն խեղդվելով կոկորդում ու լույս աշխարհ չգալով։ Նա

պատմում էր իր կյանքի մասին, ամենատխուր տեղերում, չգիտես ինչու, ծիծաղելով, ծիծաղը լռեցնում համբույրներով, իսկ իր ներկա երջանկության մասին խոսելիս՝ տխրում։ Ըստ որում, համբույրներն անմեղ էին, ոչ կանացի, քրոջ, բախտակցի, վիճակակցի։ Նա պարզորոշ տեսնում էր այդ ամենը, լսում իր ձայնը ու անսահման հավատում։ Բայց և զարմանում էր, թե ինչո՞ւ էր մենակ կանգնած պատի տակ ու, փոխանակ միանալու իր մյուս իրական կեսին, գանդաղ հանվում էր, ասես մի սրբազան արարողություն էր կատարում։ Ու այս երկրորդը, որը չէր մասնակցում քիչ հեռվում տեղի ունեցող բաց ու անկեղծ խոսակցությանը, լրիվ մերկ կանգնել էր սառը մարմարի վրա և ափսոս, որ չէր տեսնում իրեն։ Եթե տեսներ, կիմանար, թե այդ պահին որքան գեղեցիկ էր ինքը։ Ներքին մի լույս էր ճառագում նրա բարեձև մարմնից ու երջանկության հոտ տարածում չորս բոլորը։

Սրտատրոփ սպասում էր, թե ահա ուր որ է վեր կկենա արքան, և նրանցից ամեն մեկն իր մենակությունը կընծայի մյուսին։ Ու մենակ կլինեն երկուսո՛վ։

Սակայն այս բարձր տրամադրության կողքին, գետնատարած ցավը նորից թափանցեց մարմինը, ու նորից խառնեց սիրտը։ Գուցե ուրախությունի՞ց էր այս անգամ։ Գուցե նա վաղուց կորցրե՞լ էր ուրախության ընտելությունը, և այն հիմա արտահայտվում էր այսպես անսովո՞ր ձևով։

Իսկ արքան, մտքերի մեջ խորասուզված, անշարժ նստել էր բազմոցին ու մոռացել նրա գոյությունը։ Եվ, գարձյալ գիշերվա օրենքով, դեմ հանդիման կանգնած էր ճշմարտության հետ։ Ապստամբել էր թագավորական տան սեփական իշխանությունը Ատրպատական աշխարհում։ Անձիտի տեր Սաղամուտը և Մեծ Սոփքի իշխանը գնացել էին Հունաց կայսրի մոտ։ Գլուխ էին բարձրացրել մարերը։ Աղվանքը գրավել էր Ուտին ու Շակաշենը։ Զեռքից գնացել էին Անգեղտունը ու Կասպից երկիրը՝ Փայտակարան քաղաքով։ Մնացել էր միջնաշխարհը։ Իսկ միջնաշխարհի մեծամեծները, որոնցից շատերին ինքն էր տվել պատիվ, իշխանություն ու գործակալություն, երկմտում էին, փորձում էին

գլուխ պահել ու չենթարկվել արքային։ Ուրեմն, միջնաբերդ խարդ էլ չկար փաստորեն։ Կային ընդամենը մի Արտաշատ, որտեղից այսօր չէ վաղը՝ պարսիկները կքշեն նրան, ու մի Արշակավան։ Կային ընդամենը մի Վասակ սպարապետ, որն անմիտ քաջությամբ կռվում էր թշնամու դեմ, ու մի Գնել իշխան։

Նա վեր կացավ, շրջվեց, մշուշոտ ու ցրված հայացքն ընկավ մերկ կնոջ վրա, ու զարմացած նայեց նրան։ Աչքերն ասես հարցնում էին, թե ո՞վ էր այդ կինը և ի՞նչ գործ ուներ այստեղ։

Ապա դանդաղ ու մտամոլոր դուրս եկավ սենյակից, ու գուրգ մնաց կիսաբաց։

Օլիմպիան, քարացած ու շունչը պահած, կանգնել էր սառը մարմարի վրա, մերկ ու բորիկ։

Նա չհասկացավ, թե ինչ կատարվեց։ Գուցե երա՞զ էր։ Այդ գեպքում՝ ի՞նչ էր իր մերկությունը, այսքան իրական ու անժխտելի։ Ի՞նչ էր նրա ձայնի արձագանքը, որ դեռ հնչում էր օթևանի ամեն անկյունից։ Ի՞նչ էր կիսաբաց դուռը, որտեղից սենյակի լույսը դուրս էր փախչում, ապա, մթությունից վախեցած, նորից վերադառնում։ Եվ ի՞նչ էր իր անհեթեթ վիճակը, մարմարի սառնությունը ու մարմինը սողոսկած ցուրտը։ Ի՞նչ է, էլի՞ ուրախությունից էր ստամոքսը ցավում, հեգնեց նա ինքն իրեն, էլի՞ երջանկությունից էր սիրտը խառնում։

Նա չէր համարձակվում անգամ մի շնչին շարժում անել, անգամ խորը շնչել, որպեսզի չիոստովաներ, որ ամեն ինչ վերջացած է։ Անշարժությունը հույս էր, ժամանակի և իրականության ընդհատում, անհաշտություն։

Նա ամբողջ հոգով արհամարհեց իրեն, զզվեց իր դժբախտությունից ու նորից ձանձրույթ զգաց սեփական անձից, հոգսերից ու խնդիրներից։

Մինչև կոկորդը կուշտ էր։ Հասել էր մի սահմանագծի, երբ այլևս չէր կարող ինքն իրեն հանդուրժել։ Նա, անշուշտ, գիտեր, որ օտարի գժբախտությունը, արքան էլ սկզբում կարեկցանք ու ցավ պատճառի, ի վերջո, սովորական դառնալով, անընդհատ կրկնվելով, տաղտկալի է թվում, նույնիսկ

ղղայնացնում, հակակրանք առաջացնում։ Բայց որ սեփականն էլ օրերից մի օր նույն վիճակին է հանգեցնում, նոր միայն իմացավ։ Իմացավ ու սարսափեց։ Որովհետև դրանից մահվան հոտ էր գալիս։

Բայց ինչո՞ւ էր այդ հոտն այսքան դուրեկան, այսքան զգլխիչ։ Եվ ինչո՞ւ ներկայացավ բարդու պես ձիգ հասակով, աստվածային գեղեցկությամբ, ելկար ու առատ մազերով և ինչո՞ւ հատկապես Փառանձեմի կերպարանքով։

Իսկապե՞ս Փառանձեմն էր նա մտավ հանդարտ ու խաղաղ քայլերով, տեսավ Օլիմպիայի մերկ մարմինը, նայեց կիսաբաց դռանը ու կարեկցանքով ժպտաց։ Լայն մահճի վրայից, որ երևի նախատեսված էր երկու հոգու համար, վերցրեց գիշերանոցը ու մեկնեց Օլիմպիային, որը երկյուղով նայում էր նրան ու չէր կարողանում ուշքի գալ, դուրս ելնել իր անկյունից։

Օլիմպիան արագ-արագ հագավ գիշերանոցը ու էլի մնաց անկյունում, կարծես իր համար մի սահման էր գծել, որից այն կողմ ընկած տարածությունը ուրիշներն էին գրավել։

— Նա ասում էր, որ ամենքից ավելի ինձանից է հաճույք ստանում,— հանգիստ ու մեղմ ձայնով սկսեց Փառանձեմը։ — Որովհետև չի սիրում ինձ։ Իսկ երբ չեն սիրում, թագուհի, ցավ են պատճառում իրար։ Անկողնում նվաստացնում են մեկմյանց։ Դու երևի չգիտես, որ դա է գիշերվա գերագույն հաճույքը։

Դա զուտ կանացի մենամարտ էր, սահմաններ չճանաչող, միջոցների առաջ կանգ չառնող, անգութ և անխնա։ Իսկ Օլիմպիան լուռ էր ու չէր ընդունում մարտահրավերը։

Փառանձեմը, առանց հետաքրքրասիրությունը թաքցնելու, դանդաղ պտտվում էր սենյակում և ուշադիր նայում շուրջը։ Կարծես ուզում էր կահավորանքից կռահել, թե ինչով էր ապրում թագուհին, ինչ ծածուկ մտքեր ուներ և առհասարակ ինչպիսին էր նա։

Նա գուշակում էր, որ քիչ առաջ արքան է դուրս եկել այստեղից։ Մոտավորապես գլխի էր ընկնում, թե ինչ էր կատարվել։ Կարիք չկար խորամուխ լինելու, մանրամասնու-

թյուններ իմանալու, թագուհին ամեն ինչ մատնել էր իր անճարակ ու անվստահ մերկությամբ։

Հանկարծ Փառանձեմը կտրուկ շրջվեց և, խիստ ու պահանջկոտ ձայնով, դիմեց Օլիմպիային, ժամանակ չտալով, որ նա խուսանավելու փորձ անի։

— Ես քեզ հաճախ եմ միջանցքներում տեսել, թագուհի։ Գիշերազգեստով։ Շփոթված ու մեղավոր։ Հատկապես իմ ննջարանի մոտ։ Ասա, ի՞նչ էիր անում այնտեղ։

Օլիմպիան լուռ էր։

— Ի՞նչ էիր անում իմ ննջարանի մոտ,— կրկնեց Փառանձեմը։

Օլիմպիան փախցրեց աչքերը։ Զգիմացավ նրա տիրական ու ինքնավստահ հայացքին։ Հասկացավ, որ իսկական թագուհին նա էր, ոչ թե ինքը։ Եվ, չգիտես ինչու, տասնապատիկ խաբված զգաց իրեն։ Ոչ միայն ուրիշների, այլև իր կողմից։

— Ի՞նչն էր քեզ ձգում դեպի իմ ննջարանը,— համբերատար, բայց և առանց զիջելու մտադրության, երրորդ անգամ հարցրեց Փառանձեմը։

Այդ համբերատարության մեջ ինչ-որ վիրավորական բան կար։ Օլիմպիան զգաց, որ ոչնչացնում են իրեն։ Նա այլևս ուժ չուներ դիմադրելու, ընդվզելու և տեր կանգնելու իր արժանապատվությանը։ Ոչ էլ կարողանում էր մյուս ծայրահեղության մեջ ընկնել՝ անտարբերության, այսինքն՝ լրիվ ձեռք քաշել իրենից։

Միակ փրկությունը ստամոքսի ծակոցներն էին ու սրբատխառնուքը, որոնք ստիպում էին դեռևս մինչև վերջ չհրաժարվել իրենից, հարկադրում էին ցավ զգալ, մտահոգվել ու զբաղվել իր անձով։

Նա լարված ու սսկված կանգնել էր անկյունում։ Հաստատ գիտեր, համոզված էր, որ Փառանձեմը նույն միապաղաղ տոնով չորրորդ անգամ կկրկնի հարցը, եթե պետք է՝ նաև հինգերորդ։ Այնքան անգամ, մինչև որ Օլիմպիան խնդագարվի։ Եվ յուրաքանչյուր կրկնությունից հետո պատասխանը է՛լ ավելի կդժվարանա, է՛լ ավելի պինդ կփակվի բերանը, ու ատամները ամուր կկպչեն իրար։

— Նայո՞ւմ էի գռան արանքից,— հանկարծ պոռթկաց Օլիմպիան։ Ինչքան որ ձայն էր կուտակվել՝ ոչ միայն կոկորդում, այլև հոգու խորքում, անմնացորդ դուրս թռավ բերանից, դատարկվեց ամբողջ մարմինը։— Ուզում էի տեսնել, թե ինչպես է արքան քեզ սիրում... Ինչպես է շոյում ու փաղաքշում... Ուզում էի տանջել ինձ... Ստորանալ էի ուզում... Հիմա հասկացա՞ր...

Օլիմպիան նետվեց երկու տեղանոց լայն մահճի վրա ու սկսեց հեկեկալ։ Բայց դա պարտված մարդու լաց չէր, այլ ընդհակառակը՝ հաղթած մարդու։

Փառանձեմի համար անակնկալ էր դա։ Չէր սպասում այդպիսի շրջադարձ ու այդպիսի պատասխան։ Օլիմպիան նույնիսկ դուր եկավ նրան։ Մոտեցավ մահճին, նստեց ծայրին, ձեռքերը տարավ նրա մազերին ու սկսեց անկեղծորեն շոյել։

— Արքան իզուր չի եկել քեզ մոտ, թագուհի, —ասաց նա մեղմորեն։— Տղամարդիկ չգիտեն, թե ով կարող է իրենց իսկական սեր պարգևել։ Նա չի տեսել, թե ինչեր են թաքնված քո մեջ։

Օլիմպիան լռեց, բայց չշարժվեց տեղից։ Չգիտեր ինչպես ընդունել այդ շոյանքը։ Անկեղծ կարեկցա՞նք էր դա, թե՞ շինծու։ Գուցե թակա՞րդ էր, որպեսզի հետո ավելի մեծ վիրավորանք հասցնեն։ Բայց, ինչ մեղքը թաքցներ, այդ շոյանքը դուր էր գալիս իրեն։ Վաղուց ի վեր կարիք ուներ մարդկային ձեռքի։ Երեխայի պես մխիթարվում էր այդ ջփոմից։ Եվ, չգիտես ինչու, մխիթարանքը է՛լ ավելի էր խորանում այն մտքից, որ դա հակառակորդի կարեկցանք էր ու ջերմություն...

Բայց Փառանձեմը մի ուրիշ բան չգիտեր։ Եթե իմանար, գուցե ավելի շատ փոխվեր նրա վերաբերմունքը։ Կան հարցեր, որ դուրս են սովորական տրամաբանությունից, և միայն կինը կարող է կնոջը հասկանալ։ Օլիմպիան պահանջ էր զգում գերանկեղծության, մինչև վերջ բացվելու, լրիվ դատարկվելու։ Բայց կորցրել էր պատեհ առիթը, արդեն ուշ էր, նա չպետք է դադար տար, իսկ եթե տվեց, ուրեմն, պիտի լռեր ու խոստովանությունն իրեն պահեր։

Իսկ եղելությունը հետևյալն էր. մի անգամ, երբ արքան Փառանձեմի մոտ էր ու երկար ժամանակ չէր դուրս գալիս, Օլիմպիան, որ գողի պես թաքնվում էր միջանցքի անկյուններում և ապավինում գիշերվա խավարին, մի պահ անվարան կանգնել էր դռան առաջ, առանց զգուշանալու հանցանքի վայրում բռնվելու վտանգից։ Տեսնողը կմտածեր, թե նա պատրաստվում էր վճռականորեն ներս մտնել ու մի խելահեղ բան անել։ Մինչդեռ նա, ինչ-որ տարօրինակ ու անլերծանելի մղումից դրդված, մի կոճակ էր պոկել զգեստի վրայից ու թողել դռան մոտ։ Հետո փախել էր իր օթևանը, ամուր փակվել ներսում, հանգցրել բոլոր ջահերը, և նոր միայն սիրտն սկսել էր վախից թրթռալ։ Գուցե նախնիների մեջ նման նախապաշարում է եղել, որ թնազդով փոխանցվել է նրան։ Գուցե նրանք այդ միջոցին են դիմել ամուսնուն ե՞տ բերելու համար։ Համենայն դեպս, նա մեծ բավարարություն էր ստանում այն մտքից, որ իր կոճակն այնտեղ էր, ու ոչ ոք չգիտեր, ո՛չ արքան կնկատեր, ո՛չ Փառանձեմը։ Նրան թվում էր, թե հիմարացրել էր նրանց, խաբել ու ձեռք առել։ Հաջորդ օրը անցել էր դռան մոտով, տեսել իր թողած կոճակը, և սիրտը լցվել էր մի անհուն բերկրանքով։ Ու մի տեսակ հաղթած էր զգացել իրեն։

— Ես շատ եմ ուզում, որ մտերիմ լինենք,— սրտաբաց ասաց նա, նստելով հսկա մահճի մեջտեղում, ծնկներն հավաքած ու ձեռքերով գրկած։— Չէ՞ որ երեքս էլ նույն վիճակում ենք... Ես, դու, Որմիզդուխտը... Ինչո՞ւ ատել իրար... Ինչո՞ւ միմյանց չօգնել... Եթե կա մեկը, որ ամենատուժածն է մեզանից, ապա դա միայն ես եմ... Բայց ես ինքս եմ ձեզ մեկնում իմ ձեռքը...

— Քո բարությունը մեզ ավելի է լարում իրար դեմ,— քմծիծաղ տվեց Փառանձեմը։— Եթե դու մի քիչ անապնիվ լիներիր, մենք մի կերպ կհանդուրժեինք իրար։

Օլիմպիան սխալ էր թույլ տվել, կոպիտ ու աններելի սխալ։ Նա ավելի ազնիվ ու մաքուր էր դուրս եկել, քան Փառանձեմն ու Որմիզդուխտը։ Եվ այդ առավելությունը ոչ թե սարքովի էր, այլ միանգամայն բացահայտ ու անառար-

ֆելի։ Փառանձեմը որսաց այդ սայթաքումը և անմիջապես օգտվեց նրա սխալից։

— Եթե գահն է քեզ հուզում և իմ թագը,— առանց արևէ բան կռահելու, նույն ոգով շարունակեց Օլիմպիան, խորացնելով Փառանձեմի համոզմունքը,— ես կտամ քեզ։ Երդվում եմ, առանց մի պահ անգամ տատանվելու։

— Բայց դա ուրիշնե՛րը պետք է տեսնեն, թագուհի,— ուրախ ելավ Փառանձեմը։— Դա է իշխանության էությունը։

— Ինձ համար միևնույն է,— անմեղորեն պատասխանեց Օլիմպիան ու դրանով է՛լ ավելի կործանեց իրեն։— Ես մաքուր սրտով առաջարկեցի։

— Դու իմաստազրկում ես փառքը և իշխանությունը,— զայրացավ ու բողոքեց Փառանձեմը, կարծես անձնական վիրավորանք էին նրան հասցրել ու խոցել նրա արժանապատվությունը։— Իմ փառքն ու իշխանությունը իմ որդուն են պետք, իմ ազգին են պետք, հենց իրեն, արքային են պետք։ Այդ ես եմ ամեն ժամ, ամեն պահ զգացել, թե ինչպես է արու զավակը խաղում արգանդիս մեջ։ Ե՛ս, ո՛չ թե դու։ Ես եմ նրան լողացնում, ե՛ս, և ամեն անգամ նրան մերկացնելիս, հրճվանքով եմ դիտում, թե ինչպես են օրեցօր ամրանում նրա մկանները, թե ինչպես է նա օր-օրի հասակ գցում։ Նրա երեսին արդեն աղվամազ կա, օտարուհի, աղվամա՛զ։— Նա այնպես հաղթական ու հպարտ արտասանեց իր վերջին խոսքը, որ ոչ մի առարկություն չպետք է դիմանար այդ շշմեցուցիչ և ուժեղ փաստարկին։— Ես արդեն լսում եմ, թե ինչպես է ամբոխը գոչում՝ «Կեցցե՛ Պապ թագավորը»։ Չէ, չէ, Օլիմպիա, լավ է, որ դու հեռանաս։

Փառանձեմը, տարիքի առաջխաղացման հետ միասին, վաղուց էր հրաժեշտ տվել իր փառատենչիկ նկրտումներին։ Գնելին կորցնելուց հետո գտել էր արժանի փոխհատուցումը, այն էլ՝ կրկնակի։ Ստացել էր թագ և իշխանություն։ Եվ տվողը ոչ այլ ոք էր, քան նա, ով խլել էր իր երջանկությունը և, փոխարենը, տասնապատիկ թանկ վճարել։ Վրեժխնդրության հարցը լուծված էր լիուլի։ Ըստ որում՝ շատ ինքնատիպ ձևով։ Բայց տարիներն անցան, հին կրքերը, կարոտներն ու

փափագները մաշվեցին, դեն նետվեցին, իսկ նորերն ունենալու համար այլևս չկար նախկին թափը։ Նա ամբողջովին նվիրաբերվեց որդուն, անձամբ զբաղվեց նրա գաստիարակությամբ, ուշադրություն չդարձնելով այն հորդորներին, թե դա անհարիր է պալատական կյանքին։ Որդու ու նրա ապագայի մասին երազելու և հոգալու միջոցով Փառանձեմը է՛լ ավելի կապվեց երկրի բախտի հետ, ու հիմա նրա բոլոր մտքերը առնչվում էին իրար լրացնող այդ երկու գլխավոր հանգույցներին։ Անհոգ չահելությունը հայրենիք չունի, սովորեց Փառանձեմն այս տարիներին, իսկ ծերությունը, երբ այլևս ոչինչ անձնական չի մնում, հայրենիքի հայտնագործումն է։

— Իսկ դու չէի՞ր ուզենա, որ որքան մեռներ,— հանիարծ, չարագուշակ առնությամբ, հարցրեց Փառանձեմը։

— Աստված մի արասցե,— գունատվեց Օլիմպիան։

— Բայց չէ՞ որ միայն նրա մահը քեզ կփրկեր։

— Ես չեմ ուզում փրկություն։

— Ստում ես։ Դու քո փրկության մասին ես միայն երազում։

— Ես սիրում եմ նրան։

Նա առաջին անգամ արտասանեց այդ բառերը և մեծագույն բավարարություն ստացավ իր խոստովանությունից։ Սա էլ ի՛ր ուժեղ փաստարկն էր, որ գուրգուրանքով պահել էր ամենանեղ վիճակի համար, պահել էր որպես հզոր զենք, որպես շառաչուն ապտակ հակառակորդի երեսին։

— Բայց չէ՞ որ նա ոչինչ չի տվել քո սիրո փոխարեն։ Միայն տառապանք և սդորացում։

— Նա իմ ամուսինն է,— շարունակում էր կատաղորեն պաշտպանվել Օլիմպիան։— Աստծո և օրենքի առաջ։

— Իսկ ինչո՞ւ ինքնասպան չես լինում,— մեղմ ժպտաց Փառանձեմը, առանձնապես չշեշտելով իր խոսքերը, կարծես սովորական մի հարց տալով, որ պատահաբար էր բերանից դուրս թռել։

Օլիմպիան սարսափից կուչ եկավ ու սառեց։ Ստամոքսի ցավը սաստկացավ։ Սիրտն սկսեց ավելի ուժեղ խառնել։ Նա տարակուսանքով նայեց Փառանձեմի շրթներին, որոնցից

գեռ չէր լքացել ժպիտը։ Թերևս նույնիսկ պատասխան էլ սպասում։ Այս գործնական ու հանգիստ տոնը էլ ավելի տագնապ գցեց նրա մեջ ու հիշեցրեց մահվան հոտը, որ նա այնպես պարզորոշ զգացել էր քիչ առաջ։

— Դու ինձ ճանապարհ ես հուշում,— դողաց նրա ձայնը և ահավոր ուժգնությամբ արձագանքեց ականջներում։

— Ինձ թվաց, թե այդ ճանապարհը պետք է վաղուց անցած լիներ քո մտքով։

— Գուցե ուզում ես հենց ինքդ էլ օգնե՞լ ինձ։

— Եթե դու դեմ չես, թագուհի։

— Գուցե ուզում ես ինձ սպանե՞լ։

— Իսկ եթե իրո՞ք ուզում եմ։

Փառանձեմն զգաց, որ հարցերի այդ շարանը վախի ու անվստահության խառնուրդ էր պարունակում իր մեջ։ Նա անպայման կշարունակի, կուզենա մանրամասներ իմանալ, երբեմն նույնիսկ ավելորդ, երբեմն բոլորովին անպատեհ։ Դա ձեռնտու էր Փառանձեմին։ Օլիմպիան աստիճանաբար կհանգի ճշմարտությանը և ինչ-որ չափով կընտելանա, կհաշտվի անխուսափելիության հետ։ Միայն մի բան նա չգիտեր. Օլիմպիան ինքն էր ճգնում հասկանալու անխուսափելիության չափը։

— Դանակո՞վ, թե՞ թույնով,— հանկարծ արժանապատվությամբ հարցրեց նա։

— Այստեղ տղամարդ չկա, թագուհի։

— Ուրեմն, թույնով,— անբացատրելի ջանասիրությամբ, գլխով արեց Օլիմպիան։

— Կռահեցիր, թագուհի։

— Իսկ թույնն արդեն պատրաստ է։

— Այո, թագուհի։

— Հե՞տդ ես բերել։

— Բերել եմ, այո, բերել եմ։

Նա չէր ուզենա բառը կրկնել, բայց կրկնելուց հետո միայն հասկացավ, որ այլևս չէր դիմանում այս հարցաքննությանը, ուժերը հետզհետե լքում էին իրեն։ Իսկ Օլիմպիան, մի տեսակ երկյուղալի համառությամբ, տանջող պնդաճակատու-

թյամբ, շարունակում էր հարցեր տալ։ Կարծես փոխվել էին դերերը։

— Իսկ Որմիզդո՞ւխտը,— հանկարծ հույսի մի նշույլ երևաց Օլիմպիայի աչքերում։ —Որմիզդո՞ւխտը, Որմիզդո՞ւխտը։

— Դու դա ինձ վրա թող, թագուհի։

— Եվ ես ոչ մի ազատում չունե՞մ,— անսպասելիորեն սպիտակեց ու տհաճ, շատ տհաճ ձայնով գոռաց նա։— Ինձ ոչինչ չի՞ փրկի... Եթե գոռամ, եթե օգնություն կանչեմ...

— Բոլոր դռները իմ մարդիկ են հսկում,— նրա անհավասարակշռության հաշվին Փառանձեմը նորից տիրապետեց իրեն։

— Եթե խնդրեմ, աղերսեմ, ոտքերդ ընկնեմ...

— Դա ինձ ավելի ուժ կտա։

— Իսկ զորե՞ղ է թույնը,— անսպասելի շշուկով հարցրեց Օլիմպիան։— Ես շատ չե՞մ տանջվի։

— Մի անհանգստանա, թագուհի։— Ու դյուրագրգիռ տոնով ավելացրեց.— Կարծում ես ինձ համար հե՞շտ է տեսնել ուրիշի տառապանքը։

— Իսկ ինչի՞ մեջ ես լցրել։

— Կաթի մեջ, թագուհի։

— Ես կաթ շատ եմ սիրում։

Նա վեր կացավ մահճից, կարծես բնազդաբար ուզենալով փախչել մահից։ Որովհետև մահիճը ինչ-որ տեղ զուգորդվում էր մահվան գաղափարի հետ։ Հարկավոր էր կանգնած մնալ, որքան հնարավոր է՝ կանգնած։ Դա ինքնապաշտպանության, ինքնապահպանման առաջին ու վստահելի միջոցն էր։

— Մի պայմանով... Եթե դու իմ վերջին ցանկությունը կատարես։

— Ասա, թագուհի։

— Հագցրու ինձ իմ այս զգեստը։

Դա նրա լավագույն զգեստն էր, այն, որով պետք է զուգվեր գահասրահում, արքայի կողքին նստելիս, բայց որը երբեք բախտ չունեցավ հագնելու։

Փառանձեմը կռահեց, որ նա ուզում էր ստորացնել իրեն, զոնե մի անգամ նսեմացնել հակառակորդին ու հաղթած

Մոնել։ Բայց դա բոլորովին չվիրավորեց իրեն, ընդհակառակը, սիրով ու պատրաստակամությամբ կատարեց նրա պահանջը, նաժիշտի պես հագցրեց, զուգեց իր վերջին պահերն ապրող թագուհուն։

— Թա՛գս,— հրամայեց Օլիմպիան։

Փառանձեմը սուսուփուս ենթարկվեց, բերեց թագը, խնամքով և զգուշությամբ դրեց թագուհու գլխին։

— Հեռացի՛ր,— հանկարծ ամբողջ կոկորդով մեկ գոռաց Օլիմպիան և մատը ցցեց դեպի դուռը։— Կորի՛ր այստեղից։

Սրա՞ն տեսեք, եկել է հավի ճուտ մորթելու, Պրեսորյանների պրեֆեկտ Աբլաբիոսի դստերը հանդերձյալ աշխարհն ուղարկելու։ Եվ ինչպիսի՞ անպատկառությամբ, ինչպիսի՞ լկտի ինքնավստահությամբ, կարծես դիմացը մի ոչնչություն լիներ, և ոչ թե Հայաստանի թագուհին։ Նա մինչև վերջին ակնթարթը հավատաց այս կնոջը, ներշնչվեց, որ իր մահն անխուսափելի էր, որ ուրիշ ոչ մի ելք չկար։ Նա երբեք չի ների իր դյուրահավատությունը, իր այդքան շուտ հանձնվելը, այդքան շուտ պարտվելը։ Կյանքի ծարավը անվերջանալի հոսանքներով եկավ, լցվեց Օլիմպիայի մարմինը, ուռճացավ ու ոտքից գլուխ տիրեց նրան։ Նորից հարություն առավ դաժան լինելու, վրեժ լուծելու փափագը, օթևանից դուրս գալու, բուռն գործունեություն ծավալելու պահանջը։

Փառանձեմը, ի զարմանս Օլիմպիայի, բոլորովին չշփոթվեց այս փոփոխությունից։ Պարզապես հայացքը մի փոքր լրջացավ, աչքերը խոժոռվեցին, և նա, դանդաղ ու խաղաղ քայլերով, ուղղվեց դեպի դուռը։ Դռան մոտ շրջվեց, գեմքին մի քմծիծաղ խաղաց, ու նա կծեց ներքևի շրթունքը։

— Բայց դու երեկոյան արդեն խմել ես կաթը, թագուհի,— անվրդով ասաց նա և է՛լ ավելի ճշտեց իր խոսքը.— Ընթրիքի ժամանակ։

Մի հուսահատ ճիչ թռավ Օլիմպիայի բերանից։ Նա գետին տապալվեց ու սկսեց գալարվել մարմարի վրա։ «Ո՞չ»,— գոռում էր նա անընդհատ, այդ բառի մեջ գնելով իր ամբողջ էությունը։ Փաստից առավել նրան ցնցել էր իր խայտառակ

պարտությունը, իր գոռոզ խոսքերի սնանկությունն ու ծիծաղելիությունը։

Իրեն լրիվ կորցրած, նա թավալվում էր գետնին, կրծում ձեռքերը ու խեղդվում հեկեկոցից։ Եվ ամեն անգամ, երբ նոր բան էր գլխի ընկնում, հեկեկոցն է՛լ ավելի էր ուժեղանում։ Ահա թե ինչու էր սիրտն այսօր անընդհատ խառնում։ Ահա թե ինչու էր ստամոքսի մեջ սուր ծակոցներ զգում։ Ահա թե ինչու էր մարմինը մերթ ընդ մերթ սառը քրտինքով ծածկվում։

Իսկ ո՞վ էր տվել կաթը, ո՞վ։ Ո՞ւմ ձեռքից էր վերցրել։ Բայց նա բնազդաբար հրաժարվեց սպասուհու անունն ու դեմքը հիշելու մտքից։ Որովհետև եթե մահվան շեմին, երբ ամեն ինչ անկարևոր ու չնչին պիտի դառնա, ուզում ես նման մի մանրուք հիշել, ուրեմն, գրանով իսկ խոստովանում ես քեզ, որ շատ ես ուզում ապրել։ Իսկ այդ խոստովանությունը է՛լ ավելի տանջահար կանի նրան, է՛լ ավելի սոսկալի կդարձնի մահը։

Փառանձեմը երեսը շուռ էր տվել ու հազիվ էր զսպում արցունքները։ Աստված է վկա, որ Օլիմպիան լավ մարդ էր։ Եվ աստված իրենից էլ լավ գիտե, որ լավերն են մեռնում միայն։ Լավերն են միայն զոհ գնում ամեն քայլափոխին։

Փառանձեմի միակ մխիթարությունն այն էր, որ անձնական վրեժխնդրություն չէր սա, այլ, որքան էլ այս պահին ամոթալի հնչեր նման բացատրությունը, բոլորի կամքից վեր կանգնած անհրաժեշտություն։ Կարող էր երդվել իր մինուճար զավակով, որից ավելի մեծ գանձ երբեք չի ունեցել կյանքում, կարող էր երդվել նույնիսկ այս անմեղ զոհով, որ իր համար այլևս ոչ մի արժեք չունեին գահն ու իշխանությունը։ Բայց նա պարտավոր էր հնազանդորեն կրել թե՛ մեկը, թե՛ մյուսը։ Արյան մեջ հեղեղված երկիրն էր դա հրամայում, վտանգի մեջ ընկած որդին էր հրամայում, իր ծերունազարդ հայրը, թեկուզև իր չսիրած ամուսինը, որ մարմնավորում էր հայի բախտն ու ապագան, իր սիրելի ու կիսամեռ Գնելը, և Քրիստոսի պես տանջվող մի ամբողջ ժողովուրդ։ Թող աստված ների այս նոխազերգության առջև ճղճիմացող իր մտածումները։

Օլիմպիան լռել էր։ Չէր երևում։ Մահիճն էր կանգնած Փառանձեմի և թագուհու արանքում։

Նա ուժասպառ վեր կացավ, նստեց մահճի ծայրին ու սկսեց ասասել։ Հիմար Փառանձեմ, հիմա՛ր, հիմա՛ր։ Շա՛տ հիմար։ Նա չգիտեր, թե ինչ է նշանակում ձանձրանալ ինքն իրենից։ Զղվել սեփական անձից։ Արհամարհել ու ատելանալ։ Այս վերջին սոսկալի ցնցումը այլևս տեղ չթողեց, որ Օլիմպիան կարողանար հաղթահարել խորթացման զգացողությունը։ Ուղեղը լրիվ բթացավ, անջատվեց մարմնից, և մի անսահման անտարբերություն տիրեց նրան։ Միայն թե շուտ լիներ, շա՛տ։ Կա՛մ այս կողմ, կա՛մ այն կողմ։ Բայց ո՞ւ այս ցուրտ ու խավար արանքում։

Որտեղից որտեղ ներս մտավ Որմիզդուխտը։ Նա եղել էր Փառանձեմի մոտ, իմացել, որ նա Օլիմպիայի օթևանն է գնացել, ու որոշել էր, ադիթից օգտվելով, գոնե մի անգամ այցելել թագուհուն։ Համենայն դեպս, պատշաճ կարգը անհրաժեշտ էր պահպանել։ Տես, թե ինչպես է խորամանկ Փառանձեմը գլխի ընկել այդ, իսկ ինքը, որ իրեն խելոք տեղ էր դնում, մինչև հիմա այսքան հասարակ բաներ չի հասկացել։

— Իմ քունն էլ չի տանում,— ասաց նա ու, բանից անտեղյակ, տեղավորվեց բազմոցին։

Ստամոքսի ցավը ուժեղացավ, բայց Օլիմպիան գերագույն ճիգ գործադրեց, որ ցույց չտա։ Փառանձեմը, շունչը պահած ու գույնը գցած, հետևում էր նրան։ Որմիզդուխտը, ինչ-որ տագնապալի բան զգալով օդի մեջ, հարցական նայում էր իր երկու մրցակիցներին։

— Կրկնիր խոսքերդ, Փառանձեմ,— բառերը հաղիվ արտաբերելով, խոսեց Օլիմպիան։ Ձայնը դավաճանեց նրան, սկսեց խռխռալ, ու Փառանձեմը ավելի շուտ կռահեց, քան թե հասկացավ նրա վերջին ցանկությունը։— Ասա, որ արքան չիմացավ, թե ով կարող էր իսկական սեր պարգևել իրեն...

— Նա չտեսավ, թե ինչեր են թաքնված քո մեջ,— հուզված ավելացրեց Փառանձեմը։

Օլիմպիայի ծնկները մի պահ կիսով չափ բարձրացան, մարմինն անբնական կերպով ձգվեց, աչքերը կարծես փոր-

ձեցին դուրս պրծնել խոռոչներից, շրթներն ահավոր ծռվեցին, բերանից մի խոռոց դուրս թռավ, ու նա չկարողացավ այլևս լսել իր բնազդին, չհասցրեց ոտքի կանգնել։ Անշնչացած ընկավ գետնին։

Որմիզդուխտը ճչաց ու վեր թռավ բազմոցից։ Այլայլված, մեկ մեռած Օլիմպիային նայեց, մեկ՝ քարացած Փառանձեմին։ Ամեն ինչ իսկույն գլխի ընկավ։ Ետ-ետ գնաց, կոպավ պատին, դժվարությամբ կուլ տվեց թուքը և, չգիտես ինչու, սկսեց բացասաբար շարժել գլուխը։

— Դու ճիշտ ես, ճիշտ ես, Փառանձեմ,— սարսափահար շշնջաց նա։— Դու այս հողի ծնունդն ես... Եթե դու ապրեիր Պարսկաստանում, ե՛ս ավելի ուժեղ կլինեի քեզանից... Ես հենց հիմա կգնամ, թագուհի... Կփախչեմ Պարսկաստան... Ես այլևս մրցակից չեմ լինի քեզ... Ես կգնամ... կգնամ...

Նա զգուշորեն մի քանի քայլ արեց, առանց հայացքը Փառանձեմից հեռացնելու։ Աշխատեց որքան հնարավոր է հեռվից անցնել, չմոտենալ նրան։ Հետո, վախից արժանապատվություն ու կեցվածք մոռացած, լեղապատառ դուրս փախավ սենյակից։

Փառանձեմը շարունակում էր արձանի պես կանգնած մնալ։ Դեմքին ոչ մի արտահայտություն չկար, ոչ ցավ, ոչ ուրախություն, ոչ էլ նույնիսկ անտարբերություն։

Հայացքն ինքնաբերաբար ընկավ գետնին գլորված թագին, որն ընկել էր Օլիմպիայի գլխից։ Դա ուշքի բերեց նրան ու դուրս հանեց ընդարմությունից։

Նա դանդաղ մոտեցավ, թագը վերցրեց գետնից, մի անգամ էլ նայեց խաղաղ դեմքով պառկած Օլիմպիային, ապա մեկ առ մեկ հանգցրեց ջահերը ու դուրս եկավ միջանցք։

Անշտապ քայլում էր երկար միջանցքներով, որոնք մթության մեջ ավելի երկար ու անվերջանալի էին թվում։ Անցավ տասնյակ դռների մոտով, անցավ պալատի խոր լռության միջով, իր հետ տանելով միայն սեփական զգեստի ջրշյունները։

Նա մոտավ գահասրահ, մի պահ կանգ առավ դռան մոտ, մինչև որ աչքերը վարժվեցին խավարին, ապա ուշադիր

զննեց շուրջը, կարծես առաջին անգամն էր ոտք դնում այստեղ։

Սառը հայացքով, դանդաղ շարժումներով, առանց որևէ հույզի, գլխին դրեց թագը ու հանդիսավոր քայլերով, վստահելով գիշերվա այն ճշմարտությանը, թե այս ժամերին չպետք է քաշվել թաքուն խոհերից, անգամ ամոթալի մտքերից, այլ անկեղծորեն ու մինչև վերջ, ամբողջ մերկությամբ խոստովանել իրեն, նա ուղղվեց դեպի իր գահը։

Նստեց ու վերհիշեց այս հսկա աթոռի հետ շփվելու զգացողությունը։ Կարծես վաղուց մոռացված մի մեղեդի մտաբերեց։ Նորից արձանացավ, հայացքը սառեց մի հեռավոր կետի։ Հետո այտերից արցունքներ հոսեցին, հոսեցին առատորեն ու անձայն, իրար խառնելով վիշտն ու գոհունակությունը։ Ու նա ինքն իրեն շշնջաց խավարի մեջ.

— Շնորհակա՞լ եմ, Գնել...

Գլուխ քսանութերորդ

Շապուհը հրովարտակ էր ուղարկել արքային և Վասակ սպարապետի հետ նրան հրավիրում էր Տիզբոն՝ հաշտության։ Կարճամիտ նախարարներից ոմանք ուրախացել էին հրավերի համար և մեծ հույսեր կապել հաշտության հետ։

Իսկ արքան կատաղած էր։ Վիրավոր գազանի պես մռնչում էր և ցավից վտանգ սպառնում նույնիսկ յուրայիններին։ Պալատում բոլորը ոտքերի մատների վրա էին քայլում և աշխատում էին նրա աչքին չերևալ։

Նա ոչ ոքի չէր ընդունում, ոչ էլ ինքն էր դուրս գալիս գահասրահից։ Ոչինչ չէր դնում բերանը և օր ու գիշեր վանդակի մի ծայրից մյուսը քայլում։

Պառաված շնագայլի ախորժակին տեսեք, ուզում է առանց մատը մատին խփելու, առանց դժվարություն քաշելու, առանց իրեն նեղություն տալու, խնջույք սարքել և

սեղանի ձրի զարդը դարձնել հայոց երկու մեծերին։ Ափսոս չէ՞ր առաջ։ Երբ կռվող երկու կողմերը ուժասպառ էին լինում, և ոչ մի կերպ չէր վճռվում ճակատամարտի ելքը, թշնամի թագավորներն իրենք էին մենամարտում։ Որքան ազնիվ էին իրենց նախնիները, միամիտ ու մաքուր։ Իսկ հիմա ուզում են թակարդներով կռվել միմյանց դեմ, պատրաստի վիճակում ստանալ զոհին, և հաղթում է նա, ով ավելի ստոր է ու նենգ։ Ո՞ւմ համար գաղտնիք չէ, որ ոչ ինքը, ոչ էլ սպարապետը երբեք չեն վերադառնա Տիզբոնից։ Միանգամից կդրվեն խնջույքի սեղանին ու կհոշոտվեն։

Ճիշտ է, պատերազմը արնաքամ էր անում Հայաստանը, անդամահատում նրա մարմինը, ջլատում երկրի ամբողջականությունը, սակայն էժան չէր նստում նաև Պարսկաստանի վրա։ Թույլ կողմը մեռնում էր, բայց ուժեղ կողմն էլ վերքեր էր ստանում։ Երբեմն՝ նույնիսկ լուրջ և խոր վերքեր։

Շապուհը վախենում էր վճռական ճակատամարտից, որ ստիպված էր տալ Արշակավանի նորավարտ պարիսպների տակ։ Արքայի համար ապրելու և մեռնելու հարցը մի անլուծելի հանելուկ էր, մի մութ առեղծված, որոնց պատասխանը նա կստանար միայն այդ ճակատամարտից հետո։

Սրտից արյուն կաթելով, նա մի խոնարհ հրովարտակ ուղարկեց պարսից Շապուհ թագավորին, ինչպես նաև՝ հաշտության ընծաներ։ Բայց Տիզբոն գնալու հրավերը կտրականապես մերժեց և Արտաշատ մայրաքաղաքից տեղափոխվեց Արշակավան՝ հանելուկն ու առեղծվածը լուծելու։

Վերջին օրերն էին, վերջին ժամերը։ Կամ հրաշքով կփրկվի երկիրը, կամ ոտքի տակ կընկնի։ Երկուսից մեկը, երրորդ ճանապարհ չկար։ Երրորդ ճանապարհը ուրիշների համար էր, հայինը երկուսն էին միայն։ Միա՛յն երկուսը։ Եվ եթե ուրիշները գլուխ էին պահում երրորդ ճանապարհի միջոցով, ապա հայը գոյատևում էր հենց այդ դաժան ընտրության շնորհիվ, որ նույնն էր թե՝ ընտրություն չկար։

Այս օրերին նա մի տեսակ ավելի սիրեց իր երկիրը, ավելի կապվեց իր հպատակների հետ և էլ ավելի աստվածավախ դարձավ։ Այդ ե՞րբ էր պատահել, որ ամեն գիշեր նա աղոթեր աստծուն, Արշակավանին հավասար ապավիներ

նրա զորությանը։ Ուրեմն, գործերը լավ չէին։ Լավ չէին գործերը, եթե նա, անհավատ մարդու պես, օրհասի ժամին աստծո անունն էր տալիս։ Առավել ևս լավ չէին, եթե հանկարծ, չգիտես ի՞նչ հրաշքով, զտարյուն քրիստոնյա էր դարձել ու մոռացել հին աստվածներին։ Այդ ե՞րբ էր պատահել, որ նա մեկ առ մեկ հիշեր այն շեն գավառները, գյուղերն ու ավանները, մթին անտառներն ու անդնդախոր ձորերը, որտեղ ոտք էր դրել երբևիցե, իսկ երկրում չկար մի անկյուն, որտեղ նա եղած չլիներ։ Հիշում էր քընքշությամբ ու խանդաղատանքով, կարծես վերջին հրաժեշտն էր տալիս, ներքուստ հաշտված այն մարդին, որ այլևս երբեք բախտ չի ունենա տեսնելու այդ վայրերը։ Այդ ե՞րբ էր պատահել, որ նա, ուղեղը լարած, փորձեր վերհիշել այս կամ այն առիթով հանդիպած շինականների դեմքերը, իր ծառաների անունները։ Այդ ե՞րբ էր վերջին անգամ արտասվել, այնքա՜ն վաղուց, որ երևի այդպիսի բան չէր եղել։ Իսկ հիմա, գիշերվա ուշ ժամերին, աղաղություն էր տալիս թուլացած ջղերին ու, մի անկյուն քաշված, կարծես ինքն իրենից թաքնվելով, ինքն իրենից ամաչելով, անձայն լաց լինում։ Տղամարդու արցունքներ էին դրանք, հազվագյուտ ու դժվարահոս։

Օրեր շարունակ նա չերևաց իր նոր պալատում, մարդու երես չտեսավ, ոչ մի բան չձեռնարկեց, ամեն ինչ թողնելով բախտի քմահաճույքին։ Իսկ մի առավոտ անսպասելիորեն հրամայեց ճաշկերույթ տալ տաճարում, առաջին ճաշկերույթը Արշակավանում։ Լուրը տարածվեց ջղաքով մեկ, և բոլորն ուրախացան, որ վերջապես պալատը կենդանության նշաններ էր ցույց տալիս։ Կիսաքաղց շինականները, որոնք Արտաշատից մթերք չէին ստանում այլևս, ոչ միայն չվրդովվեցին առաջիկա խնջույքից, այլ ընդհակառակը, վեհանձորեն հավանություն տվեցին։ Թող անուշ լինի, միայն թե երկրի տերերը քթները չկախեն, չխռովեն...

Պալատն իրար անցավ։ Լավ ու անհոգ օրերի հուշերը վերակենդանացան։ Օրանելի ժամանակները, թեկուզ և մի օրով, կարծես ետ եկան։ Թվաց, թե էլի ամեն ինչ առաջվա պես կարգին էր, երկիրն՝ ընդարձակ ու անառիկ, նախա-

բարները՝ սիրով ու միաբան, մառանները՝ շեն ու լի, արքան, կաթողիկոսն ու սպարապետը՝ ժողովրդի գլխին տեր ու տիրական։

Հակառակի պես, հենց այդ նույն օրը, երբ նա մեծագույն ճիգով մի կերպ գուրս էր գալիս արջային քնից և, ճաշկերույթը նախաբան դարձրած, փորձ էր անում մխրճվելու երկրի կյանքի մեջ, նա ստացավ մի ահավոր լուր, որ մինչև հոգու խորքը ցնցեց նրան։ Սամվելը, այդ չար և անդուր լակոտը, սպանել էր իր հորը, Վահան Մամիկոնյանին։ Նախ ստիպել էր նրան՝ հրաժարվել հավատուրացությունից, վերադառնալ քրիստոնեությանը, քանդել ատրուշանները ու վոնդել մոգերին, աղաչել էր ու ահաբեկել, ծնկաչոք պաղատել ու բռնացել, իսկ հետո, երբ ոչինչ չէր օգնել, կատաղության մոլուցքի մեջ դաշունահար էր արել նրան։

Ասում են, թե խելքը գլուխը գալուց հետո, սարսափած իր գործած ոճրից, կիսախելագարված, ընկել էր դոնեդուռ, բռնել սրա-նրա օձիքից և հարկադրել, որ գովեն իր արարքը, գնահատեն իր մեծ հայրենասիրությունը, հիանան ու հպարտանան իրենով, նույնիսկ սպառնացել էր շանսատակ անել, եթե չկատարեն իր պահանջը։ Իսկ երբ բոլորը նողկանքով երես են թեքել, նա, ով իրեն երկրի առաջին հերոսն էր պատկերացնում, սկսել էր փոքրոգի կերպով շորերը պատառոտել, ձայնն աշխարհով մեկ գցած լաց լինել, թավալվել գետնին և գութ աղերսել։ Եվ ամենքը, թե մեծ, թե փոքր, է՛լ ավելի են զզվել նրանից, փողոցներն ու հրապարակները դատարկվել են, լրիվ ամայացել, մարդիկ մտել են իրենց տները, դուռ լուսամուտ պինդ-պինդ փակել, որպեսզի չտեսնեն նրան։ Նա քարշ էր գալիս Տայքի շեներում ու ավաններում, կարեկցություն մուրում և ամենուրեք հանդիպում ամայության, կարծես մարդիկ վերացել էին աշխարհի երեսից ու նրան մեն-մենակ թողել իր խղճի հետ։ Իսկ խիղճը, իրախուսանք ու սատարում չստանալով, վառվում, եփվում ու բզիկ-բզիկ էր լինում։

Վա՜յ այդ լակոտին, եթե արքայի ձեռքն ընկներ։ Ինքն անձամբ կպատժեր նրան, այնքան կծեծեր, մինչև որ վերջին շունչը փչեր։ Որովհետև աշխարհում ոչինչ չկա, բացար-

Ճակատագիր ոչինչ, անգամ աստված ու հայրենիք, որոնց անունից մարդ իրավունք ունենա ծնողասպան լինելու։ Ոչ մի փաստարկ, ոչ մի տրամաբանություն, ոչ մի ապացույց, որքան էլ անհերքելի ու համոզիչ թվային, չէին դիմանա այդ սուրբ ճշմարտության առաջ։

Բայց դու շարունակությունը տես, շարունակությունը։ Ինչպես խեղդվողն է փրփուրից կառչում, ոճրագործը, խղճի ձայնը խլացնելու, իր մաշկը փրկելու համար, խորամանկ միջոցի էր գիմել։ Եթե ելք չգտներ, արդարացում չհնարեր, գիտեր, որ ոտքով-գլխով կկորչեր, այլևս չէր կարողանա ապրել։ Եվ ոչ թե ուրիշների, այլ հենց սեփական դատավճռով։ Իսկ նա, պարզվում է, շատ էր ուզում ապրել, ձեռքը հոր վրա բարձրանում էր, իսկ ինքն իր վրա՝ չէ՞ր կարողանում...

Եվ նա, այդ թշվառականը, օգնության էր կանչում արքային։ Այդ ինչպե՞ս է, որ արքան հազար ու մի ոճիր է գործում, այդ ինչպե՞ս է, որ նրա ձեռքերը արյունոտ են, այդ ինչպե՞ս է, որ նրա խիղճն անմաքուր է, իսկ ժողովուրդը այնուամենայնիվ ներում է նրան։ Ներելը կարծես քիչ է, նաև սիրում է, մեծարում, պատվանդանի վրա դնում։

Արքան այս մի անպատկառությունը ոչ մի կերպ չէր կարողանում մարսել։ Այդ վիրավորանքը, չգիտես ինչու, չափազանց կպավ սրտին։ Խե՞ղճ արքաներ։ Ձեր անուններն ամեն մի անարժան կարող է բերանն առնել։ Առանց տարբերություն դնելու ձեր անանձնական ճակատագրերի ու իրենց խիստ անձնական ճակատագրի միջև։

Ձեզ մեծագույն բախտավորությունն այն է, որ դու միայն քեզ ես պատկանում, թշվառ լակոտ։ Իսկ ես՝ գուցե բոլորին, բացի ինձանից։ Ինձ կարելի է դատել միայն մի դեպքում՝ եթե ես առաջնորդվել եմ զուտ սեփական շահերով, եթե ոճիրը գործված է իմ բնավորության արատների պատճառով։ Իսկ եթե դա անխուսափելի անհրաժեշտություն է երկրի համար, եթե այլևս ոչ մի ճար չկա երկրի գլխին կախված վտանգը կանխելու, ապա ամեն մի թափված արյան համար, դատապարտելով հանդերձ, պետք է նաև խղճալ ինձ։ Եվ ես

խղճում եմ քեզ, Արշակունի Արշակ, խղճում եմ ամբողջ հոգով ու չեմ ամաչում իմ խղճահարությունից։

Եվ եթե երկրում կա մեկը, որն իրավունք ունի, այն էլ միանձնյա իրավունք, իր վրա երբեմն կրելու նաև գահի պարտականություն, կրելու՝ սիրուց, հայրենիքի շահերից, հարյուր հազարավորների կյանքի ու երջանկության համար ստանձնած պարտավորությունից, երկրի ապագայի հանդեպ ունեցած ծանր պատասխանատվությունից, ապա դա միայն ես եմ։ Ե՛ս և ուրիշ ոչ ոք։ Եվ դա իմ մեծագույն դժբախտությունն է, որի վրա քանի-քանիսն են աչք տնկել և որի համար որքան շատ մարդիկ են ինձ նախանձում։ Թեև, եթե այդ նախանձն էլ չլիներ, կարելի էր գժվել։ Դանե դա ինչ-որ չափով մխիթարում է ինձ և ինքնախաբեության հնարավորություն տալիս։ Ուր իմանան, որ եթե վաղը ծնվի մի մարդ, ով ինձանից ավելի ճշգրիտ ծրագիր ունի երկիրը կործանումից փրկելու, ես իմ գահը կամովին կտամ նրան, առանց մի պահ իսկ տատանվելու, առանց ափսոսալու փոքր ազգի թագավորին վիճակված փուլ իշխանության ու խաղալիք գահի կորուստը։ Եվ կհավատա՞ն արդյոք, հիմարի տեղ չե՞ն դնի ինձ, այդ ո՞վ է մինչև հիմա իր միջակությունը խոստովանել և ընդունել ուրիշի տաղանդը։ Բայց եթե սիրում ես երկիրդ, եթե շա՛տ ես սիրում, չափազա՛նց շատ, այդ էլ կարող ես անել։ Մանավանդ՝ օրհասի պահին, երբ ժամանակ չկա փառքի ու իշխանության ետևից վազելու։ Բայց աստված մի արասցե, եթե մեկնամեկն իմանա իմ մտքերը, ամբողջ երկիրը միանգամից կլցվի անհայտ տաղանդներով։ Եվ առավել ևս աստված մի արասցե, եթե բացի ինձանից մեկ ուրիշն էլ հասկանա իմ ուժի և իշխանության բուն գինն ու արժեքը։

Ահա այդ գինն ու արժեքը՝ քո ճաշկերույթի սեղանը։

Բայց սա ի՞նչ սեղան է։ Ճիշտ է, պայթում է առատությունից, սակայն ովքե՞ր են շուրջը նստած։ Ո՞ւր են երկրի մեծամեծները, գահերեց իշխանները, հզոր նախարարները, կաթողիկոսը, Մերուժանը, Մամիկոնյան եղբայրները, Հայր Մարդպետը։ Ինչո՞ւ հյուրերը հարյուր հոգի չեն սովորականի պես, այլ դյուրությամբ են հաշվվում մատների վրա։ Եվ տա-

ճարն էլ այն չէ, հասարակ մի շինություն, գուրկ կամարակից խորաններից ու խորշերից, առանց կենդանագիր նկարների, առանց լուսաճաճանչ գմբեթների։

— Դահնամակում փոփոխություն չկա՞, սենեկապետ։

Վաղուց այդ հարցը չէր հնչել նրա բերանից։ Իսկ պե՛տք է, պե՛տք է, որ հնչեր։ Թեկուզ հենց իրեն հավատացնելու համար, որ ամեն ինչ դեռ չի կորած։ Դեռ Արշակավան կա, երկիր կա, ինքն էլ, փառք աստծո, ողջ ու առողջ է տակավին։

Բայց պատասխան տվո՞ղն ով էր։ Դրաստամատի ճկույթն իսկ չարժեր։ Սա հիմա պարզապես բառեր կարտասանի, հենց այնպես, մեքենաբար, առանց հավատի, առանց իր գործի կարևորությունը գիտակցելու։

— Նախարարական աթոռների հերթականությունը նույնն է, արքա։

Ասում էր, չէ՞ ե՛, Դրաստամատ, Դրաստամատ։ Ո՞ւմ հույսին թողեցիր քո արքային։ Այս ոչնչությա՞ն, որ ոչ մի բանի չի հավատում։ Եվ ի՞նչ նույնության մասին էր խոսքը, եթե արդեն վաղուց չկար նախկին գահնամակը, շողշողուն անունների շքահանդեսը, եթե ինքն իր կոտրած ձեռքով էր նորը կազմել ու մատանիով կնքել։

— Ուրախ եմ իմանալ, որ ուրեմն չի խախտված մեր միաբանությունը։ Եվ քանի որ ոչ ոք չի պատժվել, ոչ ոք չի մեղանչել գահի դեմ... ոչ թե իմ, այլ գահի... թող ամեն մարդ նստի սահմանված տեղում։

Արքան այդ սովորական ծիսային խոսքերն արտասանեց աչքերը փակ ու հազիվ լսելի, կարծես աղոթք մրմնջալով։ Եվ դա իրոք աղոթք էր նրա համար, անցյալի լիաթոք օրհնություն ու գալիքի երկչոտ մաղթանք։

Փոքրաթիվ նախարարները սուսուփուս գրավեցին իրենց տեղերը և սկսեցին լուռ ուտել։ Արքան ոչ մի բանի ձեռք չէր տալիս և ջղաձիգ ու տենդոտ հայացքով հետևում նրանց յուրաքանչյուր շարժումին։ Սրանք ուտել էլ չգիտեն, չունեն իրենց նախորդների գրայախինդ, ճոխ ու շքեղ մարմնեղությունը։ Նախորդները շատ իրական մարդիկ էին, աղմկոտ, կենսասեր, կռվարար, և ոչ թե սրանց պես խամաճիկներ։ Ու թեև հազար ու մի թոհուբոհից ու փորձությունից հետո

հենց այսքանն էին հավատարիմ մնացել գահին և, ուրեմն, արժանի էին ամենայն գրվատանքի, բայց արքան, ինչ մեղքը թաքցներ, չէր սիրում նրանց։

Իսկ ի՞նչ գիտես, որ հավատարիմ են։ Ե՞րբ հասցրիր կարդալ բոլորի հոգիները։ Արքան կասկածում էր ամենքին անխտիր։ Ամեն մեկի մեջ քողարկված դավաճանի էր տեսնում։ Նույնիսկ չէր բացառում, որ կաշիները փրկելու համար, խոսքերը մեկ արած, կհարձակվեն ու դաշունահար կանեն իրենց արքային։

Արքան երբեք չի տառապել կասկածամտությամբ։ Լայնասիրտ ու անվախ է եղել նույնիսկ այն նախարարների նկատմամբ, ովքեր բացահայտ տատանվող են եղել կամ ունեցել են օտար կողմնորոշում։ Զգուշացել է պարսկասերներից ու բյուզանդասերներից, սակայն նրանց սպառնացած վտանգից ավելի հավատացել է սեփական ուժին։ Եվ առանձնապես բանի տեղ չի դրել։

Իսկ հիմա հարց էր տալիս ու տանջում իրեն. ինչո՞ւ են սրանք հավատարիմ։ Ի՞նչ շահ ունեն։ Չէ՞ որ արքան երբեք այսքան շփոթված ու անօգնական չի եղել։ Էլ ի՞նչն էր նրանց կապում արքայի հետ։ Բոլորն էլ պետք է վաղուց փախած լինեին և, իրենց ապահովության համար, ապացույցներ տարածեին չորս կողմը, թե ոչ մի մասնակցություն չեն ունեցել նրա գործերին, ընդհակառակը, միշտ էլ հանդես են եկել արքայի դեմ։

Արքայի մտքովն սմեն ինչ անցավ, բացի մի բանից. գուցե իսկական հայրենասերները հենց այս մի բուռ իշխաններ՞ն էին... Եվ նա չզգաց, թե ինչպես հայրենասիրության մենաշնորհը աստիճանաբար սկսեց միայն իրեն վերապահել։

Արքան կարծես ջերմի մեջ լիներ, աչքերը վառվում էին մի տեսակ հիվանդագին ու անբնական փայլով, և նա պղտոր ու մշուշված հայացքով մեկ առ մեկ նայում էր սեղանակիցներին։

Ինչպե՞ս հավատաս Թագադիր ասպետ Սմբատ Բագրատունուն, եթե նա միայն պալատում է հայերեն խոսում, իսկ տանը՝ հունարեն։ Կամ՝ Գարջույլ մաղխազ Խոռխոռունուն, Թիկնապահ զորքի հրամանատարին, որը մերձավորի մատից

փուշ անգամ չի հանի, եթե դա հետագայում օգուտ չի բերելու իրեն։ Հաբուժենից Վրկեն նահապետն այնքան ծեր է, որ հաճախ մոռանում է, թե ինքն ում է կողմնակից։ Մուշկ Սահառունին խեղդվում է փառասիրությունից, ուրեմն՝ հայոց արքունիքը բոլորովին նրա տեղը չէ։ Սա՞ ով է։ Շատ ծանոթ գեմք է։ Վաչակն է, իշխան Վաչակը։ Եվ դու տես, թե ի՞նչ պատվավոր տեղ է զբաղեցրել։ Այս մեկը երախտագիտությունից հավատարիմ կլինի, թեև, անշուշտ, երախտամոռությունը կարող է նույնքան օրինաչափ համարվել։

Երբեմն նրա տենդոտ հայացքը գաղտագողի ուղղվում էր Պարգև իշխանի կողմը, որն զգաստ նստած էր բազմականին և չէր մասնակցում ճաշկերույթին։ Միջին տարիքի, հաղթանդամ նախարար էր, Արտազի տերը, լռակյաց մի մարդ, որ երբեք չէր խառնվել երկրի արտաքին ու ներքին գործերին, ոչ մի հարցում նախաձեռնություն չէր ցուցաբերել, ոչ բյուզանդասեր էր, ոչ պարսկասեր, արքունիքի հրահանգները կատարում էր բարեխղճորեն, հարկերը վճարում էր ժամանակին, արքայի պահանջով զորք էր տալիս, բայց ոչ ավելին, մի խոսքով, ոչ ձուկ էր, ոչ միս։

Ճիշտ էր որոշումը, սրտատրոփ մտածում էր արքան, հենց նրանից էլ պիտի սկսել։ Պետք է վախեցնել մնացածներին, բռան մեջ պահել, չթողնել, որ թպրտան։

Թացն ու չորը խառնվել են իրար, էլ չի ջոկվում, թե ով է բարեկամ և ով է թշնամի։ Եթե անհնար է մարդկանց հոգու մեջ մտնել, եթե անհնար է օրհասի պահին իմանալ ճշմարտությունը, ուրեմն, բոլորին պետք է հավասար աչքով նայել, նույն ձևով չափել, այսինքն՝ չհավատալ։ Համենայն դեպս, դա ավելի անվնաս է ու ավելի անվտանգ, քան չհիմնավորված հավատ ընծայելը։

Նա կուժեղացնի արքունի պահակախումբը, կավելացնի թիկնապահների թիվը, ինքն անձամբ կընտրի նրանց և անընդհատ կփոփոխի կազմը, որպեսզի չհասցնեն կաշառվել ու դավադրության մասնակից դառնալ։ Ննջասենյակը երկրորդ հարկից կտեղափոխի գետնահարկ, որտեղ մուտքը արգելված կլինի բոլորի համար անխտիր։ Նախարարներին կուղարկի իրենց տները, թող հեռու լինեն պալատից։ Խոհա-

բարին կհրամայի անձամբ ուտել իր եփած ճաշը և միայն դրանից հետո ինքը ձեռք կտա պնակին։ Գուցե ավելի ճիշտ կլինի նախարարներին ձերբակալել տունդարձի ճանապարհին և ամենքին զնդան գցել, մինչև որ արհավիրքն անցնի։

Սովորության համաձայն, թե՛ արքան, թե՛ նախարարները ճաշկերույթի ժամանակ պետք է անզեն լինեին, բայց արքան ծիրանի քղամիդի տակ դաշույն էր պահել, որպեսզի հնարավոր դավադրության դեպքում կարողանար պաշտպանվել։

Շահի հրովարտակից հետո նա արդեն ոչ ոքի չէր հավատում։ Լավ է, որ Վասակ սպարապետը հեռու էր պալատից, առյուծաբար կռվում էր մարտի դաշտերում, լավ է, որ աներհայրը, Անդովկ Սյունին, նույնպես կռվում էր սպարապետի բանակում, այլապես արքան չէր կարող երաշխավորել, թե նրանք էլ կասկածի տակ չէին ընկնի։

Եվ ամենից շատ կասկածում էր իրեն, իր ուժին, իր հետևողականությանը, իր վճռականությանը, իր անդրդվելիությանը...

Գդալների, պատառաքաղների ու բաժակների միալար ձայնն աստիճանաբար լռեց, ու արքայի տենդալից հայացքը արագ սահեց հյուրերի վրայով։

Նրանք հարցական նայում էին Պարգև իշխանին, որն արձանի պես քարացել էր բազմականին։ Նոր էին գլխի ընկել և, նշաններով կամ մեկը մյուսի արմունկին բոթելով, հասկացրել իրար, որ ինչ-որ բան կարգին չէր։

Արքան ևս տարակուսանքով մեկ նախարարներին էր նայում, մեկ այլայլված Պարգև իշխանին։ Սիրտը մոլեգին հուզմունքից քիչ է մնում դուրս թռչեր բերանից։ Աչքերի հիվանդագին ու անբնական փայլը էլ ավելի ուժգնացավ։ Եվ նա, ինչ-որ բան նկատելով սեղանի վրա, խայթվածի պես վեր ցատկեց տեղից։

— Դու չգիտե՞ս, իշխան, որ այս սեղանի շուրջը միայն արքան իրավունք ունի գործածելու ոսկի գդալ, պատառաքաղ ու բաժակ,— տաճարով մեկ թնդաց նրա ցասումնալից ձայնը։

— Ես վաղուց նկատեցի, որ իմ սպասքը ևս ոսկի է,—

գունատված կմկմաց Պարգև իշխանը։ —Մինչև հիմա չեմ հավատում աչքերիս...

— Եվ դու տեղյակ չե՞ս, թե ինչպես է այդ ոսկին հայտնվել քո առաջ,— սպառնագին հարցրեց արքան։

— Սա դավադրություն է, արքա,— հանկարծ վախից գոռաց Արտազի տերը։— Ինչ-որ մեկն ուզում է ինձ գժտեցնել իմ արքայի հետ։

— Այս ոսկին մահացու անպատվություն է արքայի հասցեին,— է՛լ ավելի բարձր գոռաց արքան, որպեսզի իշխանն այլևս չապավինի իր ձայնին։— Ընդոստության լկտի ցույց։

— Ուշքի եկ, արքա, ինչեր ես խոսում,— վիրավորանքից խորապես խոցվեց Պարգև իշխանը։— Իմ ինչի՞ն էր պետք ընդոստանալ։ Ո՞վ է քո հույսը դժվար պահերին։ Մի փոքր խումբ նախարարներ չե՞ն արդյոք։ Եվ դու գիտես, որ ես միշտ նրանց թվում եմ եղել։

— Երեսո՞վս ես տալիս հավատարմություն։ Էլ ի՞նչ հավատարմություն է այդ, եթե լեզվիդ տակ է միշտ։ Առի՞թ էիր փնտրում հիշեցնելու։ Ուրեմն, հավատարմությունն այդքան ծա՞նր է նստած ուսերիդ։ Թոթափիր, իշխան, թոթափիր։— Եվ նա ձգված ցուցամատը դայրույթով ուղղեց սեղանին։— Ահա այդ մտայնության արդյունքը։

—Գուցե ծառանե՞րն են արել,— հազիվ էր իշխանն արցունքները զսպում։— Գուցե մի ստոր դավաճան կաշառե՞լ է նրանց... Արդարամիտ եղիր, արքա...

— Իշխան, կշնաս քո օթևանը, կփակվես այնտեղ և չես հեռանա, մինչև չպարզեմ ամեն ինչ։ Բարի եղիր հենց հիմա հրաժեշտ տալ մեզ։

Արքան ծափ զարկեց, և Արտազի տեր Պարգևը, թիկնապահների ուղեկցությամբ, մեռելի գույն առած, ցլխահակ ու ամոթահար դուրս եկավ տաճարից։

Իսկ արքան, ի զարմանս բոլորի, սկսեց անվրդով ուտել, իբր թե ոչինչ չէր պատահել։ Վերցրեց մի ամբողջ հավի ճուտ, բռնեց ձեռքերով, ատամներով կրծեց, պոկեց մսերը և կերավ նախանձելի ախորժակով։

— Պետք է ասել, որ այսօրվա սեղանը իսկապես որ

արքայական էր,— զվարթ կատակեց նա։ —Վազուց այսպիսի հաճույքով չէի կերել։

Ոչ ոք չպատասխանեց նրան։ Տիրեց ծանր ու մեռելային լռություն։

— Մի ժամանակ այս սեղանին նստել են հայոց մեծամեծները,— կատաղի մոնչաց արքան։ —Մերուժան Արծրունին, Ներսես Կամսարականը, Հայր Մարդպետը... Մամիկոնյան եղբայրները... Կաթողիկոսը... Մի ստիպեք, որ կարոտեմ նրանց... Իսկ ես վստահ եմ, որ նրանք կարոտել են իրենց արքային... Հիմա մենք բաժակ կբարձրացնենք նրանց կենացը... Կխմենք մեր արժանավոր թշնամիների առողջության համար...

— Դու վիրավորեցիր քո ամենահավատարիմ նախարարներից մեկին,— ինքնավստահ տոնով իշխան Վաչակը նախատեց արքային։— Ես չեմ հավատում, որ նա մեղավոր է։ Դու ինքդ էլ չես հավատում, արքա։

— Մեղավո՞ր։ Արտաղի տեր Պարգևը մեղավո՞ր։— Արքան անսպասելիորեն սկսեց բարձր ծիծաղել։— Ինչպե՞ս կարող էր մեղավոր լինել, եթե ես եմ փոխել սպասքը։— Նախարարները սփրթնած ոտքի ելան ու ապշած նայեցին արքային։ Իսկ արքան շարունակում էր ծիծաղել, և նրա ձայնը արձագանք էր տալիս տաճարի բոլոր անկյուններից, կարկուտի պես թափվում էր առաստաղից ու խլացնում ամենքին։ Նախարարներին թվաց, թե ցնորվել էր իրենց արքան, խախտվել էր ուղեղը։ Կարեկցանքով շրջապատեցին նրան ու փորձեցին հանգստացնել։ Բայց արքան, մի ձեռքով փորը բռնած, մյուս ձեռքի ցուցամատը ապշանքից քարացած նախարարների վրա ցցած, անպատկառ ծիծաղում էր նրանց երեսին։— Ոտքերիս մատների վրա... Գողեգող... Արքայական խույրը գլխիս... Ականջներիցս կախված գինդերով... Այս կարմիր մաշիկներով... Սպիտակ զգեստիս վրա՝ ծիրանի քղամիդ... Եվ մի տեսնեիք, թե ի՞նչ հաճույք էր զգում արքան իր ստորությունից... Որպես մի հետին տակառագործ...

Նա, մեծ դժվարությամբ, աստիճանաբար լռեց, մի կերպ կանգնեցրեց սարի գագաթից գլորվող ձնագունդը, թևքով

սրբեց դեմքի արցունքները, շունչը կամաց-կամաց տեղը բերեց և զգաց, որ սիրտը անտանելի խառնում էր։ Չգիտեր՝ իր արարքի՞ց, պարսից շահի հրովարտա՞կը մտաբերելուց, թե՞ Սամվելի ոճիրը վերհիշելուց։

Խորը տեղավորվեց բազմականին, մռայլվեց, գլուխն առավ ափերի մեջ ու անշատվեց, վերացավ շրջապատից։

— Բայց ինչո՞ւ, արքա, ինչո՞ւ,— զգուշորեն հարցրեց իշխան Վաչակը։— Չէ՞ որ դա անիմաստ դաժանություն էր... Հավատարիմ մարդու հանդեպ... Այն էլ՝ այսպիսի ժամանակ...

— Դու հիմա իմ ամենաազդեցիկ նախարարներից ես, իշխան Վաչակ,— գլուխը դժկամությամբ բարձրացրեց արքան և հեգնանքով դիմեց նրան։— Էլ ինչի՞ ես դժգոհում ժամանակներից։

— Դաժանությունը խաղաղ օրերի զբաղմունք է, տեր իմ,— պոկ չէր գալիս Վաչակը։— Աղերսում եմ, ետ կանչիր Պարգև իշխանին։

— Ընդհակառակը, իշխան,— հոգնած պատասխանեց արքան։— Դաժանությունը չպետք է կապ ունենա խաղաղ օրերի հետ։

— Բայց ինչո՞ւ պատժեցիր,— համառորեն հարցապնդում էր իշխան Վաչակը,— ի՞նչ էր արել նա։

— Պատժեցի, որ չանի,— հանկարծ մեղմ և բարի ժպտաց արքան։— Այո, պատժեցի, որ չանի։

— Բայց որտե՞ղ է տրամաբանությունը, արքա...

— Հենց վճռի՛ մեջ է, իշխան, վճռի՛ մեջ,— շարունակեց ժպտալ արքան։— Տրամաբանությունը միշտ էլ վճռի մեջ է լինում, իզուր ես ուրիշ տեղ փնտրում։

Ապա վեր կացավ, ծափ զարկեց ու գոռաց խռպոտ ձայնով.

— Ո՞ւր են գուսանները։ Էլ ի՞նչ խնջույք առանց երաժշտության։

Դա նշան էր, որ սկսվում էր ճաշկերույթի երկրորդ մասը՝ գինարբուքը։ Սպասավորներն անմիջապես դատարկեցին սեղանները և բազմականների հետ միասին տեղափոխեցին ճաշարի շորս ծայրերը, որպեսզի կոչնականները նստեն

պատերի տակ, լսեն ու դիտեն զուսաններին և վարձակներին։ Տակառապետի առաջնորդությամբ ներս մտան սպիտակազգեստ մատուակները, բերեցին գինի և աղանդեր։ Բայց հասարակաց արքում տեղի չունեցավ, այսինքն՝ առաջին բաժակը, որ կոչվում էր նվաղ ուրախության, չփոխանցվեց մեկից մյուսին որպես հարգանքի ու հավասարության նշան։ Եկան զուսանները, տեղավորվեցին դռների մոտ, նվագեցին բամբիռների վրա, և նրանցից մեկը, մի կույր ծերունի, մեղմ ու հաճելի ձայնով, երգեց սիրային մի տխուր ու զղայացունց երգ։

Նախարարները մոայլ կանգնել էին տաճարի տարբեր անկյուններում։

Արքան, մտքերի մեջ խորասուզված, արցունքն աչքերին, շքեղ հանդերձները հագին, կարծես ի տես ամենքի, անշարժացել էր տաճարի կենտրոնում։

Ինչ-որ մղձավանջային բան կար սիրային տխուր ու զղայացունց երգի, անօգնական ու չփոթահար նախարարների, արտասվող արքայի և ընդհանրապես այս ամբողջ միջավայրի մեջ։

Իսկ արքան արտասվում էր, որովհետև կորցնում էր թրեն։ Մինչդեռ վերջին ժամին ես պարտավոր եմ ավելի ուժեղ լինել, քան երբևէ։ Ես կհաղթեմ ինձ, կջարդեմ, շանսատակ կանեմ իմ անձը, չեմ թողնի, որ վախն ու կասկածը կրծեն իմ հոգին, քանի որ դա պարտվելու նշան է։ Դեռ չկռված պարտվելու։ Ես հրապարակայնորեն ներողություն կխնդրեմ անմեղ իշխանից, որպեսզի իմ ուժը ցույց տամ նախ ինքս ինձ։ Ես դուրս կգամ իմ պատյանից, կիջնեմ քաղաք, կխառնվեմ ամբոխին և անձամբ կմասնակցեմ Արշակավանի պաշտպանությանը, անձամբ կմասնակցեմ զինավարժություններին, կոգևորեմ ու կքաջալերեմ իմ հավատարիմ հպատակներին։ Մինչև օրհասի ավարտը հրաժեշտ կտամ իմ մենակությանը, խոստանալով խաղաղ օրերին կրկին հանդիպել նրան՝ ինչպես հին ու մտերիմ ծանոթներ։ Այլևս երբեք չեմ մտածի, որ հայրենիք սիրելու մենաշնորհը ինձ է միայն տրված, այլ կհավատամ, որ համընդհանուր սեփականություն է այդ սերը և հավասարապես պատկանում

ի ինձ, չինականին, նույնիսկ այս խեղճուկրակ նախարարներին։ Մեռոնն ու սուրբ խաչը վկա, ես անխնա կկռվեմ իմ դեմ, կհաղթեմ ու ծնկի կբերեմ ինձ։

Արքայի մտքի թելը կտրվեց, որովհետև ներս խուժեց այլայլված սենեկապետը և շնչակտուր փոշեց հենց դռան միջից.

— Հարձակում է, արքա... Պարսիկներն ու գավառների նախարարները... Չորս կողմից պաշարել են քաղաքը...

— Սպասիր, սենեկապետ,— առանց գիրքը փոխելու արքան ձեռքի շարժումով մեղմ ընդհատեց նրան։— Համբերիր մինչև երգը վերջանա։

Հարձակումը զուգադիպեց մի դիպվածի հետ, որը գոնե այդ օրը չպետք է տեղի ունենար, բայց շարաբախտության իմաստն էլ այն է, որ այդ դիպվածը կատարվեր ոչ թե դրանից մեկ օր առաջ կամ մեկ օր հետո, այլ հենց նույն օրը, հենց միաժամանակ։

Արքան շտապում էր դեպի գլխավոր դարբասը, անձամբ ղեկավարելու պաշտպանության գործը։ Նրա ետևից, փոշու հսկայական ամպեր բարձրացնելով, քաղաքի փողոցներով արշավում էին նախարարներն ու թիկնապահները։

Վերջապես եկավ ժամը, փա՜ռք երկնավորին, որ շուտ եկավ։ Թշնամին սխալվեց, արքային աղատելով սպասողական վիճակից։ Մինչդեռ կարող էր անաբյուն հաղթանակ տանել, եթե նրան անընդհատ պահեր անորոշության մեջ։ Իսկ արքայի ուժերը դեռ լրիվ չէին ապավված։ Նա իրեն թարմ և առույգ էր զգում, վերջին օրերի մղձավանջը արդեն վաղուց մոռացության էր մատնված։ Նա փյունիկի պես հարություն էր առել ու էլի առաջվա նման լի էր եռանդով, հավատով ու վճռականությամբ։ Նա դեռ ցույց կտա, թե ինքն ինչ հրաշքների է ընդունակ։ Նա դեռ պիտի ապրի մինչև այն հրաշալի ու աստվածային պահը, երբ դավաճան նախարարները շղթայակապ կկանգնեն իր առաջ։ Էլ ինչի՞ համար էր Արշակավանի առեղծումը, էլ ինչի՞ համար էր իր գոյու-

թյան իմաստը, եթե ինքը չի շահելու այս վճռական մարտը, եթե երկրում չի տիրելու տևական խաղաղություն, եթե վերջին օտար զինվորի ոտքը չի կորվելու երկրի սահմաններից, եթե արքան չի կարողանալու գտնել իրեն, իր կորած ու մոլորված կրկնակին, որին ինքը անձնազոհաբար արտաքսել էր իր հոգուց ու մարմնից, բայց որին շատ էր սիրում ու կարոտում, եթե հանգիստ խղճով չի կարողանալու քուրձով ու մոխրով ապաշխարելու իր մեղքերը, այլևս անհրաժեշտություն չզգալով նորերը գործելու։

Հենց այս մտքերով տարված պահին նրա ուշադրությունը գրավեց մի երիտասարդ շինական, որին ձերբակալել էին երկու զինվորներ։ Զինվորները հեծյալ էին, իսկ շինականը, ձեռքերը մեջքին կապված, գլխահակ քայլում էր ձիերի արանքում։ Արքան շատ զարմացավ, որ այս թոհուբոհի մեջ կարող էր այդպիսի տեսարանի հանդիպել։ Կարծես խաղաղության մի անուշ հոտ փչեց նրա քթին, ու նա տարակուսանքով կանգնեցրեց ձին, մյուսներին նշան անելով, որ շարունակեն ճանապարհը։ Ինչ մի հանցանք պիտի գործած լիներ այս մարդը, որ անիմաստ չթվար արհավիրքի առաջ։ Եվ ինչ հաճելի էր տեսնել երեք հոգու, երկու ձիավորի ու մի ձերբակալված հետիոտնի, որոնցից մեկը՝ իր հանցանքով, իսկ մյուս երկուսը՝ իրենց առօրյա պարտականությունը կատարելով, դեռևս դուրս էին մնացել իրական ժամանակից։

Պարզվեց, որ փախստականի էին բռնել, ըստ որում, բռնել էին ոչ թե որևէ վատ բան կատարելով, այլ անհանգստանալով նրա անվտանգության համար։ Ոչ ոքի մտքով չէր անցել, թե նա ընդհանրապես է փախչում Արշակավանից։ Կարծել էին, թե գնում է յուրայիններին տեսնելու։ Բայց որովհետև երաշխիք չկար, թե ողջ-առողջ կվերադառնա, բռնի ուժով նա էին բերել նրան։

— Ուրեմն, արշակավանցի՞ ես,— համակրանքը չթաքցնելով, հարցրեց արքան։

Շինականը, որ կյանքում առաջին անգամն էր արքային դեմ առ դեմ տեսնում, երշանիկ ժպտաց ու գլխով արեց։

— Բախտդ բերել է, որ իմ զինվորների ձեռքն ես ըն-

կել,— զվարթ կատակեց արքան, խորապես շնորհակալ, որ աշխարհից անտեղյակ այս երեք միամիտները հանգստության այսպիսի երանելի պահ պարգևեցին իրեն։— Փախել էիր կնոջդ ու երեխաների՞դ տեսնելու։

Շինականը, որն ասածուց նույնպես շնորհակալ էր այս հանդիպման համար, երջանկությունից չկարողացավ ոչինչ թաքցնել ու բացասաբար շարժեց գլուխը։

— Մնողների՞դ տեսնելու։ Սիրած աղջկա՞դ։ Ընկերների՞դ էիր կարոտել։

Շինականը, ժպիտը դեմքին, ամեն հարցից հետո շարունակում էր բացասաբար շարժել գլուխը։

— Հապա էլ ինչի՞ համար էիր փախել,— զարմացավ ու տարակուսեց արքան։

— Կարոտել էի, արքա,— ուրախությունից անկեղծաբար խոստովանեց շինականը, պատրաստ իր կուռքի առաջ մինչև վերջ բացելու սիրտը։

— Ի՞նչն էիր կարոտել, որդիս,— խոժոռվեց արքան, ինչ-որ վատ բան կանխազգալով։

— Դուրսը։— Շինականն իր գաղտնիքը հաղորդեց նրան՝ ինչպես ամենամտերիմ մարդու։ Նույնիսկ մի փոքր իջեցրեց ձայնը ու, որպես վստահության նշան, առաջ մղեց մարմինը։— Դուրսն էի կարոտել, արքա։

— Քո անցյա՞լը,— անակնկալի եկած, ապշեց արքան։— Քո տառապանքնե՞րը... Նվաստացումնե՞րը... Սրա՞նք էիր կարոտել...

Ու նա բնազդաբար գլխի ընկավ, որ այս մարդը ոչ միայն չէր շեղվել իրական ժամանակից, այլև ինքն էր ժամանակը կրում իր մեջ, ինքն էր ստեղծում, երբեմն առաջ անցնելով նրանից։ Նա նման էր այն կենդանուն, որ երկրաշարժից ու ջրհեղեղից դեռ շատ առաջ գուշակում է արհավիրքը ու աշխարհով մեկ ահազանգում։ Միայն ափսոս, հազա՞ր ափսոս, որ ուշ հանդիպեց արքային, ուշ բաց արեց նրա աչքերը, ուշ խելք սովորեցրեց նրան, թե չէ արքան մի կողմ կթողներ իր զորապետներին ու խորհրդականներին, դեմուդեմ կնստեր այս ռամիկ մարդու հետ, և նրանք միասին, խելք խելքի տված, կվերլուծեին իրավիճակը, միասին ելք կորո-

նեին ու կաշխատեին ինչ-որ բան հասկանալ... Ափսոս, հազա՜ր ափսոս...

— Կարոտել էի, արքա,— միամտորեն պատասխանեց շինականը, լավ չըմբռնելով նրա խոսքերը։— Մեր տունը... Մեր սարերը...

— Ուրեմն, դո՞ւ...— ցնցվեց ու կարկամեց արքան։— Այս անմեղ հայացքո՞վ... Այս վճիտ աչքերո՞վ... Ուրեմն դո՞ւ ինձ պիտի հասցնեիր ամենամեծ հարվածը...— Եվ հանկարծ, ինչ-որ բան կռահելով, ինչ-որ վատ, շատ վատ բան, նա ցած թռավ ձիուց, մի մեծ ցատկ կատարեց, արագ մոտեցավ շինականին ու ատելությամբ բռնեց նրա օձիքից։— Իսկ եթե միայն դո՞ւ չես... Եթե ուրիշնե՞րն էլ են փախչում...

— Փախչո՜ւմ են, տեր իմ, փախչո՜ւմ են,— ուրախուրախ, կարծես նրան հանգստացնելով, հաստատեց շինականը։

— Ինչո՞ւ,— հուսահատ գոռաց արքան, երկինքն ասես փուլ եկավ գլխին, ու հողը փախավ ոտքերի տակից։— Ինչո՞ւ են փախչում։ Մի՞թե ազատությունը կարող է բեռ լինել մարդու ուսերին։— Եվ է՛լ ավելի ամուր սեղմեց շինականի օձիքը, որպեսզի ամբողջ ճշմարտությունը կորզի նրանից։— Ովքե՞ր են փախչում, ասա՜։

— Ով մեկին պարտք է, ով վնասել է մեկ ուրիշի, ով ուրիշի արյունն է թափել կամ մեկի գույքն է գրավել կամ մեկից երկյուղ ունի...

— Գողերը... ավազակները... արյունապարտները... մարդասպանները...— Արքան սկսեց մեքենաբար լրացնել նրան, կրկնելով այն խոսքերը, ինչ ինքն էր տարիներ առաջ արտասանել Արտաշատի պալատում՝ Արշակավանի նոր հրամանը հռչակելիս։ Այն խոսքերը, որ մունետիկներն էին երկրի բոլոր շեներում ու ավաններում հայտարարում՝ մարդկանց հրավիրելով Արշակավան։ Եվ ամեն մի բառից հետո արքան ցավից կծկվում էր ու փոքրանում, մի բուռ դառնում։— Գանձագողերը... խաբեբաները... զրպարտիչները... ժըլատները... կանայք, որոնք իրենց ամուսիններին են թողել ու փախել... տղամարդիկ, որոնք իրենց կանանց են թողել ու փախել...

— Եվ հատկապես...— Կարեկցանքով և արքային օգտակար լինելու մեծ փափագով, իր հերթին լրացրեց շինականը,— և հատկապես ծառաները, որ դժգոհ են իրենց տերերից...

— Ստո՛ւմ ես, շուն,— շինականին կատաղությամբ գետին շպրտեց արքան ու սկսեց անխնա հարվածել ոտքերով։— Իմ քաղաքում տերեր չկան։

— Նախկի՛ն, արքա, նախկի՛ն ծառաներ,— սկսեց արդարանալ շինականը, մտքում հայհոյելով իրեն, որ ակամա նեղացրել էր իր պաշտամունքին։— Իսկ հիմա՝ տերերս։

Արքան դադարեց ոտքով հարվածել, մի պահ, ծանր շնչելով, անշարժ կանգնեց գետնին ընկած շինականի առաջ, որ հայացքը հիացմունքով, կարեկցանքով ու ափսոսանքով ուղղել էր տիրոջը, ապա անսպասելիորեն կռացավ, բարձրացրեց նրան, չգիտես ինչու՝ հոգատարությամբ թափ տվեց նրա զգեստների փոշին, հետո ձեռքը դրեց ուսին, երկար նայեց նրա կապույտ ու վճիտ աչքերին, ապա մեղմ ձայնով ասաց. «Գնա, որդիս, աստված քեզ հետ»։

Հետո, գլուխը կախ, դանդաղ քայլերով վերադարձավ, նստեց ձին ու անշտապ քշեց դեպի քաղաքի գլխավոր դարբասը։ Եվ ապշեց, երբ տեսավ, որ դարբասը փակ էր դեռ։ Թշնամին հրաշքով չէր խորտակել այն ու չէր ներխուժել Արշակավան։ Պահակազորը, չգիտես ինչու, հերոսաբար դիմադրում էր ու կռվում պարսպի վրա։ Բոլորի դեմքին անդրդվելի հավատ կար ու հաղթելու անսասան կամք։ Արքայի ներկայությունը էլ ավելի ոգևորեց ամենքին ու տասնապատկեց նրանց եռանդը։ Զորապետները իրար ետևից գալիս, ինչ-որ բան էին զեկուցում արքային, իսկ արքան չէր լսում և շարունակում էր տխուր ժպտալ։ Քիչ էր մնում, որ խանդավառ զեկույցներն ընդհատեր և հազիվ լսելի ու ծույլ ձայնով հրամայեր՝ բաց անել դարբասները ու ներս թողնել թշնամուն։ Եվ որպեսզի այդպիսի բան չանի, նա կիսաբաց թողեց իրեն ուղղված հրաշալի խոսքերը, անակնկալ շրջեց ձին ու արագ, շատ արագ հեռացավ հակառակ ուղղությամբ

Արշակավանը պաշարվեց հայ և պարսիկ զինվորներով։ Հայը առանց վարանելու կանգնեց հայի դեմ, մեկը մյուսին ոչնչացնելու բուռն ցանկությամբ, ծարավի՝ միմյանց արյան։ Հրամանը մեկին դարձրեց դավաճան, մյուսին՝ արքայասեր ու հայրենասեր։

Օր ու գիշեր, քաղաքի պարիսպներին հենված, աշխատում էին էշ կոչված անվավոր մեքենաները, որոնց ներքևում ամրացված էին կացիններ, երկբերանի սակրեր և սրածայր մուրճեր՝ հիմքերը փորելու համար։

Թշնամին այնքան շատ էր, որ կարծես վաշկատուն մասքուիթների պես ամեն մեկը ձեռքին մի քար պիտի վերցներ, ու պիտի բոլորը միասին մի տեղ ածեին, որպեսզի, կույտ կազմելով, իմանային զորքի իսկական թիվը։

Պարսպի վրայից քարեր, նետեր ու տեգեր էր գցում քաղաքի պահակազորը։ Եռացած ջուր էին թափում ու կրակի խրձեր նետում թշնամու վրա, բայց ոչինչ չէր օգնում։ Յուրաքանչյուր մեքենա բանեցնում էին երեք հոգի, ու երբ նրանք հնձվում էին խոտի պես, անմիջապես նորերն էին նրանց փոխարինում, և մեքենաները շարունակում էին որդի նման անդադար կրծել պարսպի հիմքերը։

Քաղաքում իրարանցում էր ընկել։ Փողոցներն ամայացել էին, մարդիկ ծվարել էին իրենց տներում և վախենում էին քթները երդիկներից դուրս հանել։ Միակ ապահով տեղը, ինչպես միշտ, տունն էր թվում։ Ամեն օր նոր և հակասական լուրեր էին ծնվում, պտտվում մի թաղից մյուսը, մտնում խրճիթները և ալեկոծում մարդկանց առանց այդ էլ անհանգիստ սրտերը։ Բոլոր լուրերն էլ, որքան էլ մեկը մյուսին չբռներ, ընդունվում էին անվերապահորեն, ուրախությունից մինչև ամենածանր գուժը ընդամենը մի քայլ էր, որ մարդիկ օրական մի քանի անգամ էին անցնում։ Քանի-քանի դեպք էր եղել, որ նահանջել էր թշնամին և հենց նույն օրն էլ կոտրել պարսպի դարբասները ու ներխուժել քաղաք։ Քանի-քանի անգամ թշնամու նետից ոպանվել էր արքան ու քիչ անց դարձյալ հարություն առել։

Պաշարմանը մասնակցող նախարարների թվումն էին Մերուժան Արծրունին, Ներսես Կամսարականը, Բասենից իշխան Մանեճը, Կենան Ամատունին, Վանանդա տեր Զաքարեն, Վարձա Ապահունին, Սուրակը Անգեղ տնից, Վահեունի Վահեն, Գաբեղենից տեր Սահակը, բոլորն իրենց դրոշակներով ու զինանշաններով։

Քաղաքում համառորեն խոսում էին այն մասին, որ եթե ծառաները կամովին հանձնվեն, տերերը խոստանում են ներել նրանց և թույլ տալ, որ անպատիժ վերադառնան իրենց տները։ Գիշերները հավաքվում էին իրար գլխի, ծածուկ քննարկում նախարարների պայմանը, տաք-տաք վիճում, կոկորդները պատռելով հակաճառում իրար, թեր ու դեմ կարծիքներ հայտնում և լուսաբացի ելողմը, առանց միասնական եզրակացության հանգելու, ցրվում իրենց խրճիթները։ Տանտերը մենակ էր մնում և նոր միայն զգում, որ սենյակը լցված էր խլացնող ձայներով, որոնք վախից ոչ մի կերպ չէին ուզում դուրս գալ երդիկից։ Ժամեր, երբեմն նույնիսկ օրեր էին տևում, մինչև երանելի լռությունը, մոռանալով, որ խռովել էր, դարձյալ ապաստան էր դառնում շփոթված շինականի համար։

Բայց երբ լուր տարածվեց, թե նախարարները համաձայն են բավարարվել՝ ամեն մեկին մտրակի տասը հարված հասցնելու պայմանով, կասկածներն արդեն փարատվեցին, ու բոլորն էլ լիովին հավատացին դրան։ Պատիժը առավել հավաստի դարձրեց ներման խոստումը։ Թե չէ հենց այնպես ներում շնորհելը, եթե ոչ անհավատալի, ապա առնվազն անհասկանալի էր և նույնիսկ... անարդարացի։

Մթերքի պակասը կամաց-կամաց զգալի դարձավ։ Շինականի սեղանն օրըստօրե աղքատանում էր։ Պալատի մառաններն դռները լայնորեն բացվեցին, և մթերք մատակարարվեց քաղաքի բնակչությանը։ Սակայն տասն օր անց սնունդի այդ աղբյուրն էլ կտրվեց, և արշավանքինները մատնվեցին սովի։

Սովը ոչ թե միավորեց, այլ է՛լ ավելի անջատեց մարդկանց։ Ամեն մեկը քաշվեց իր պատյանի մեջ, թերահավա-

տուֆյամբ նայելով մյուսին, որն, անշուշտ, հոգեպահուստ ուներ և թաքցնում էր հարևաններից ու բարեկամներից։

Ստիպված եղան զանազան խոտեր ու բույսերի արմատներ քաղել և ուտել։ Կանաչ գույնն աստիճանաբար սկսեց վերանալ քաղաքից, և ամենուրեք տեր ու տիրական դարձավ գորշությունը։

Մի քանի օր անընդհատ, ամեն առավոտյան, քաղաքում հայտնաբերվեցին զինվորների դիակներ։ Բացառված էր, որ նրանք սովամահ եղած լինեին, քանի որ պալատի վերջին մթերքները հատկացված էին պահակազորին։ Ի վերջո գլխի ընկան պատճառը և հասկացան, որ գիշերներն արշակավանցիները խմբերով թաքստոց էին մտնում քաղաքի տարբեր մասերում, հարձակվում միայնակ ձիավորների վրա, սպանում նրանց, խլում ձիերը, մորթում և ուտում։

Երբեմն սովից այնքան էին համարձակ դառնում, որ նույնիսկ մոտենում էին պարիսպներին և, խարույկների շուրջը տաքացող զինվորների քթի տակ, ձի գողանում։

Քաղաքում ոչ մի կենդանի չմնաց, մարդկանց բաժին դարձան անգամ շներն ու կատուները։ Բայց որքան էլ սովը համատարած բնույթ էր ստանում, միևնույն է, ամեն օր վաղ լուսաբացին, չգիտես ինչ հրաշքով, աքլորականչ էր լսվում չորս կողմից։ Աքլորները, զվարթ ու գործնական, ձայն էին տալիս իրար ու ավետում նոր օրվա ծնունդը։ Մարդիկ ամաչում էին միմյանց խոստովանել, որ սեփական ականջով են լսել ծուղրուղուն, և ամեն մեկին թվում էր, թե միայն ինքն է այդ հրաշքի միակ վկան։

Շուտով ևս մի փորձանք պայթեց Արշակավանի գլխին։ Թշնամին կտրեց քաղաքի ջուրը, և սովն ու ծարավը, համերաշխորեն ձեռք ձեռքի տված, միասին արշավեցին տների վրա։ Հյուծված շինականները օր ու գիշեր փոս էին փորում ջուր հայտնաբերելու զուր ակնկալությամբ։ Իսկ երբ մի գիշեր անձրև եկավ, ամբողջ քաղաքը, մոռացած ահ ու սարսափ, դուրս թափվեց տներից, և ծայր առավ խելացնոր մի ուրախություն։ Ամոթի հետք անգամ չմնաց։ Մարդիկ, գրեթե ամբողջովին տկլոր, կանգնել էին հորդ անձրևի տակ և լալիս էին գալիս հրճվանքից։ Երեխաները ցնծությամբ թա-

վալվում էին ցեխերի մեջ։ Ջորացած ու ցամաքած մարմինները ամբողջովին տրվել-հանձնվել էին ջրին ու չէին հագնում։ Ասես հեթանոսական խրախճանք էր քաղաքում, կուշտ ու կուռ մարդկանց կրքերի անզուսպ պոռթկում։

Հաջորդ առավոտյան պայծառ արև ծագեց, ջորացրեց ջորս բոլորը, ջնջեց գիշերվա հիշողությունը, իսկ մի քանի օր անց ջրի նոր պաշարը ևս սպառվեց։ Սովն ու ծարավը կրկին դաշն կապեցին ու շարունակեցին իրենց ավերածությունը։ Թշնամին դեռ չէր հասցրել այնքան մարդ ոչնչացնել, որքան որ ինքը քաղաքն էր զոհեր տալիս ամեն օր։ Ստեղծված վիճակի համար հայհոյում և անիծում էին ամենքին, անխտիր բոլորին, բացի թշնամուց։ Նրան բոլորովին մոռացել էին։ Սոված ու ծարավ մարդուն երբեմն նույնիսկ թվում էր, թե պարսպից այն կողմ ազատարարներն են կանգնած, որոնք պայքարում են իր կյանքը փրկելու համար։

Քաղաքի պահակազորը և արքայի թիկնապահները, որոնք միակ կռվող ուժն էին պարիսպների վրա, ինչին թիվ էին կազմում։ Քանի պարիսպը կանգուն էր և դարբասները՝ փակ, նրանց սակավությունը չէր խանգարում։ Իսկ եթե, աստված մի արասցե, թեկուզ մի ինչին սողանցք բացվեր դեպի քաղաք, նրանք հազիվ մի ժամ դիմանային թշնամու հսկայական ուժերի դեմ։

Պալատը վերազինում էր քաղաքի բնակիչներին։ Պարզվեց, որ տարիների ընթացքում ավելի շատ զենք էր կուտակվել Արշակավանում, քան թե մթերք։ Բայց շինականները, որոնք առաջներում ևս զենք էին ստացել իշխանություններից, որպես անպետք իր մի անկյուն էին գցել ու մոռացել դրանց գոյությունը։ Իսկ հիմա, երբ վերակացուի օգնականները ստիպում էին հավաքել նետերն ու աղեղները, թրերն ու տեգերը, նիզակներն ու վաղրերը և դուրս գալ զինավարժության, շինականը տակնուվրա էր անում ամբողջ տունը և ոչինչ չէր գտնում։ Եթե գտնում էլ էր, դա արդեն ոչ թե զենք էր, այլ ժանգոտած երկաթի կտոր։

Սկզբում դժկամությամբ մասնակցում էին զինավարժություններին, բայց երբ սովն ու ծարավը բռնեցին մարդ-

կանց կոկորդներից, այլևս ոչ մի ուժ ի վիճակի չէր նրանց հարկադրելու։

Գնելը մեկ առ մեկ մտնում էր բոլորի տները, մտրակի ու ոտքի հարվածներով դուրս քշում տղամարդկանց, բայց երբ հաջորդ տունն էր գնում և, հերթական զոհի օձիքից բռնած, ելնում փողոց, տեսնում էր, որ մյուսներն արդեն չքացել էին։

Երբ օժանդակ զինվորների օգնությամբ մի կերպ հավաքում էր մի քանի հոգու ու փորձում նրանց նշանառություն սովորեցնել, ոչինչ չէր ստացվում։ Ոչ սպառնալիքն էր ազդում, ոչ էլ նույնիսկ դաժան ծեծը։ Ինչքան էլ ջանք էր թափում շինականը, ինչքան էլ դուրս էր գալիս մաշկից, մեկ է, թիրախը չէր գտնում։ Թիրախ այլևս չկար, ընդհանրապես գոյություն չուներ։

Իսկ մի օր, երբ նա սպիտակ ձին հեծած շրջում էր քաղաքում, տեսավ, որ հրապարակում ահագին բազմություն էր հավաքվել։ Ամեն մեկը եկել էր տան ամենաթանկարժեք իրը հետը բերած, հուսալով, որ կարող էր մի կտոր հացի կամ մի բաժակ ջրի հետ փոխել։ Որովհետև չար լեզուներն ասում էին, թե ոմանք իրենց տան բակերում փորել են հողը, ջուր գտել ու հիմա ծախում են առասպելական գներով։

Հրապարակում հավաքվել էր քաղաքի ամբողջ հարստությունը, թանկարժեք իրերը տխուր-տրտում նայում էին իրար և չէին անցնում մի ձեռքից մյուսը։ Ամեն մեկի բերածը մնացել էր իր մոտ։ Հաց չկար, ջուր չկար։ Բայց մարդիկ չէին հեռանում, լուռ ու անխոս կանգնել էին աշխատությունից եռ եկող երբեմնի շուկայում, կարծես համառ սպասումն ինքնին կարող էր ինչ-որ բան փոխել։

Արձանների հրապարակ էր, անշունչ ու քարացած։

Սակայն, երբ նկատեցին Գնելին, ինչ-որ շշուկ անցավ, և մարդկանց հայացքները, ասես խոսք մեկ արած, շարությամբ ուղղվեցին կառավարչի օգնականի կողմը։

Գնելը մի պահ կանգնեցրեց ձին, խոժոռ նայեց նրանց, ապա դանդաղորեն շարունակեց ընթացքը։ Բայց հրապարակից դեպի փողոց տանող հատվածի մոտ ամբոխը, ինչ-որ անըմբռնելի փոխհամաձայնությամբ, ինչ-որ լուռ ու անվեր-

ծանելի պայմանավորվածությամբ, խտացավ ու փակեց ճանապարհը։

Ձին կանգ առավ։ Գնելը շփոթվեց, որովհետև ամեն ինչ կարող էր մտքովն անցել, բացի այս մեկից։ «Ճանապարհ» — կատաղած մոլտաց նա։ Ոչ ոք չշարժվեց տեղից։ Նա իր դիմաց տեսավ կաշիների ու ոսկորների մի կույտ։ Եվ առաջին անգամ կյանքում վախեցավ, դող անցավ մարմնով։ Բայց ոչ թե նրանց ըմբոստությունից, ոչ թե նրանց սարսափելի տեսքերից, այլ ամեն մեկի ձեռքին գտնվող թանկարժեք իրերից։ Այդ իրերի անիմաստ ու անհեթեթ թանկարժեքությունից։

Նա բարձրացրեց մտրակը և սկսեց անխնա հարվածել աջ ու ձախ։ Էլի ոչ ոք տեղից չշարժվեց։ Թիրախ չտեսնող մարդկանց վրա ցավն էլ այլևս չէր աղդում։

Գնելը կարող էր ձին շրջել և այլ փողոցով դուրս գալ հրապարակից։ Բայց նա չէր էլ մտածում այդ մասին։ Եթե պետք լիներ, նրանց դիակների վրայով կհարթեր իր ճամփան։ Նա միայն այս ճանապարհով պիտի անցներ։ Պարտավոր էր։ Ոչ թե համառությունից, այլ հենց նրանց լավության համար։ Քաղաքի անխորտակելիության համար։ Հանուն վերջին ճակատամարտի։ Հանուն երկրի ու արքայի։

Եվ հանկարծ կատարվեց անսպասելին։ Ամբոխի միջից ինչ-որ մեկին հաջողվեց օդի մեջ բռնել մտրակը ու խլել նրա ձեռքից։ Գնելը, անակնկալի եկած, փորձեց սուրը հանել պատյանից, բայց ամբոխը ժամանակ չտվեց։ Չորս կողմից հարձակվեցին նրա վրա, գցեցին ձիուց ու սկսեցին ոտքերով վայրենաբար խփել, գլխին, փորին, մեջքին, ուր որ պատահեց։

Գնելը չէր կարողանում դիմադրել։ Նա միայն կծկվել էր ու ափերով ծածկել դեմքը։ Թվում էր, թե նրանք իրենց տարիների վրեժն են լուծում, իրենց ոխն են հանում նրա դաժանության համար։ Գնելն արհամարհում էր իրեն ծեծողներին, և այդ արհամարհանքից նրանց հարվածների ցավն էլ էր մի տեսակ չեզոքանում։ Խե՜ղճ ողորմելիներ։ Երիցս խաբվածներ։ Թշվառ մոլորյալներ։ Որովհետև նրանք չեն էլ կասկածում, ոչ ոքի մտքով էլ չի անցնում, որ Գնելը դա-

ժան է եղել սիրուց, ի շահ նրանց բարօրության ու երջանկության։ Ամեն մի հարվածը աղքատացնում ու այլանդակում է նրանց հոգին, ցավը կպչում է ոչ թե Գնելին, այլ նրանց որդիներին ու հետնորդներին։ Նրանք ոչնչացնում և սպանում են նախ և առաջ իրենց։ Նրանք հենց այս պահից արդեն կործանված են, և փրկություն չկա նրանց հոգիներին։

Բայց ամբոխը շուտ բաց թողեց Գնելին։ Դա է՛լ ավելի զարմացրեց նրան։ Նա մեծ դժվարությամբ նստեց գետնին, թևքերով մաքրեց երեսի արյունը և զգաց, որ ուժ չունի վեր կենալու։

Ու նրա առջև բացվեց մի ահավոր տեսարան։ Ամբոխը, նրան թողած, հարձակվել էր սպիտակ ձիու վրա։ Գետին էին տապալել ձին ու քարերով սպանում էին նրան։ Մի քանիսն արդեն զբաղված էին կրակ վառելով, որպեսզի խորովեն նրա միսը։

Գնելն այլևս չդիմացավ ու լաց եղավ։ Լաց եղավ ոչ թե սպիտակ ձիու համար, որին կապվել էր տարիների ընթացքում և հետն ընկերացել, այլ ամաչելով քիչ առաջվա Ինքն մտածումներից։ Որքան բարձր էր ամբոխը դեռ մի ակնթարթ առաջ, երբ, ինչպես թվում էր, իր վրեժն էր լուծում ու ոխը հանում։ Դու մի ասա, ոչ ոխ կար, ոչ վրեժխնդրություն։ Պարզապես սոված էին և ուրիշ ոչինչ։ Պարզապես ուտելիք էին տեսել և ուրիշ բացարձակապե՞ս ոչինչ։

Ու քաղաքում առաջին և միակ մարդը Գնելն էր, որը, սարսափից լայն բացված աչքերով, հասկացավ, թե խաղը տանուլ էր տրված։ Թշնամին, առանց իմանալու, արդեն հաղթանակել էր։ Նա կարող էր համարել, որ պարիսպները քանդված են, դարբասները՝ բացված և քաղաքը՝ գրավված։

Ձին սպանված էր, կտոր-կտոր բաժանված ու խորովվում էր կրակի վրա։ Իրար հրմշտելով, մարդիկ կիսահում միսը խլում էին կրակից և, գրեթե առանց ծամելու, ագահաբար կուլ տալիս։

Ոչ ոք չհիշեց ընտանիքի մասին։ Ոչ մեկը մի պատառ միս տուն չտարավ և բաժին չհանեց ծնողներին, կնոջն ու երեխաներին։

Թշնամու հաղթանակը կատարյալ էր։

Գնելը, որի ուղիղ և կոպիտ մազերն ընկել էին դեմքին, խառնվել արյան հետ ու կպել երեսին, աղիողորմ լաց էր լինում մի մատ երեխայի պես։

Ինչ-որ մեկը, որ երևի քիչ թե շատ կշտացել էր ուրիշների համեմատությամբ, պատահաբար նկատեց նրան, մտածեց, որ այս խեղճ մարդը, հավանաբար, լաց է լինում ձիու կորստի համար, մեղքը եկավ, գութը շարժվեց, ու մոտեցավ նրան։ Մոտեցավ ու, անցյալ օրերի բնազդներից մզված, դեռևս լրիվ չմոռացած իր երբեմնի ազնվությունը, գուցե նաև շուկայի վաղեմի օրենքներից դրդված, ձեռքի թանկարժեք իրը, որպես վարձ, խոթեց նրա գրպանը ու հանդիստ խղճով հեռացավ։

Գլուխ քսաներորդ

Արքան ու Գնելը, գիշեր ու զոր հոգսերի մեջ թաղված, մոռացել էին միմյանց գոյությունը։ Պաշարման սկզբից ի վեր բնավ առիթ չէին ունեցել հանդիպելու։

Արքան ղեկավարում էր քաղաքի պաշտպանությունը, առավոտից մինչև ուշ երեկո ձիով պտտվում է պարիսպների շուրջը, օրական երևի տասը պտույտ էր անում միևնույն շրջանով։ Կաղտնի սուրհանդակներ էր ուղարկում երկրի տարբեր գավառները և օգնական զորք խնդրում։ Դիմեց նաև Քարթլիի Միրիան թագավորին։ Հատուկ սուրհանդակ գնաց Վասակ սպարապետի մոտ, որպեսզի հնարավորության դեպքում նա էլ օգնության հասներ, թեև արքան գիտեր, որ Վասակի վիճակն էլ առանձնապես նախանձելի չէր։ Սպարապետի զորքը երկարատև ճակատամարտերից հետո հալումաշ էր եղել և հազիվ էր դիմանում։ Պատճառը, ըստ երևույթին, անընդմեջ հաղթանակներն էին, որոնք, որքան էլ տարօրինակ լինի, ոչ միայն հոգնեցրել էին, այլև ինչ-որ չափով բարոյալքել զինվորներին։

Մի անգամ արքան տեսավ, թե ինչպես իր ձին, օգտվելով հսկողության բացակայությունից, փախավ, բայց ոչ դեպի արձակ տարածությունը, այլ սկսեց վազել պարսպի երկարությամբ։ Արքան դիտավորյալ չզգուշացրեց թիկնապահներին և, բան ու գործ թողած, երկար ու սրտատրոփ սպասեց։ Եվ նրա կանխազգացումը ճիշտ դուրս եկավ։ Բավական անց հակառակ կողմից երևաց ձին։ Նա անցել էր իր սովոր ճամփան, պտտվել քաղաքի շուրջը գտնվող պարսպի օղակով ու հասել այնտեղ, որտեղից իր կարծիքով սկսվելու էր ազատ կյանքը։ Արքան տխրեց ոչ միայն նրա համար, որ մտքում որոշել էր իր բախտը փորձել, այլ է՝ եթե ձին չշեղվեր ամենօրյա ճամփից, ուրեմն՝ ամեն ինչ, իր ծրագրերն ու նպատակները, իր տանջանքն ու տառապանքը ջուրն էին ընկնելու, այլև այն պատճառով, որ դառը ու հավիտենական մի ճշմարտություն կար այս միջադեպի մեջ, ժամանակից ու մարդկային կամքից վեր կանգնած մի օրինաչափություն։

Գնելը հիմնականում զբաղված էր Արշակավանի ներքին կարգուկանոնի հսկողությամբ։ Նա, արդեն առանց ձևականության, լիովին մեկուսացրել էր անգործունյա Վարազ Գնունուն և փաստորեն ինքն էր դարձել քաղաքի միանձնյա կառավարիչը։ Նա մեկ առ մեկ մտնում էր բոլոր տները, տակնուվրա անում, ամենաչնչին քանակի մթերքն իսկ բռնագրավում, ապա հավասարապես վերաբաշխում բնակիչներին։ Արքունիքի կողմից իրեն տրվող չնչին տնտղը ևս նա միացնում էր ընդհանուր պաշարներին և օրերով գրեթե կիսաքաղց մնում։ Բայց և այնպես, լեզուն դուրս ընկած, աշխատում էր առանց ժամի ու պատարագի, մի տեսակ անընդհատ համառությամբ ու պնդաճակատությամբ։ Սովորական մահկանացուն վաղուց հանձնված կլիներ և ինքն իրենից պարտված։ Իսկ նա մարմնի խորքերում կարծես հատուկ մի տեղ ուներ, որտեղից քաղում էր իր անսպառ եռանդը։ Նա ամեն տեղ էր, ըստ որում՝ ոչ թե առանձին-առանձին, այլ ասես միաժամանակ։ Քաղաքի փողոցներում, նրա տարածած ահ ու սարսափից, զինավարժություն էին անում կյանքին ողջ-ողջ հրաժեշտ տված հյուծված կմախք-

ներ։ Թեև նա վաղուց էր հասկացել, որ թիրախ այլևս չկար այս քաղաքում, արդեն վաղուց գոյություն չուներ, բայց և այնպես իր վերջին ճիգն էր գործադրում։ Գուցե այնուամենայնիվ հրաշքով գտնվի՞... Գուցե մտրակի՞ օգնությամբ...

Մի օր, առավոտ կանուխ, երբ արքան հազիվ երկու ժամ տնած քնից նոր էր զարթնել, ննջարան մտավ Գնելը և զայրացավ, որ նա, այնուհանդերձ, ժամանակ էր գտել անկողին մտնելու։ Փառք աստծո, որ գոնե շորերը չէր հանել...

Գնելը չափազանց նիհարել էր, մնացել էին կաշին ու ոսկորը։ Հազիվ էր քարշ գալիս ոտքերի վրա։ Զգեստը հին էր, պատառոտված ու բազմիցս կարկատված։ Կոշիկները լրիվ մաշվել էին, ու նա ման էր գալիս ոտքերին հեսկ փաթաթած ու դերձանով կապած-ամրացրած։ Միայն աչքերի փայլն էր նախկինը՝ շար և մոլեգին։ Մեկ էլ՝ հարթ և կոշտ մազերը, որոնք ուղիղ գծով ընկնում էին կիսադեմին, պինդ ու դաժան մարդու տեսք տալով նրան։

— Ես եկել եմ քեզ փրկելու, արքա,— անմիջապես գործնական ասաց նա ու կանգնեց երկբացիկ դռան առաջ կախված կարմիր վարագույրի մոտ, կտորը երկու ափերի մեջ ամուր սեղմած։

— Ես գիտեի, որ կգաս,— ձեռքերը տարածած, արքան գիմավորեց նրան, ընդառաջ գնաց ու գրկեց խանդաղատանքով։— Քո անկեղծությունն ինձ ավելի է պետք, քան հազար խորհուրդ։

Որքա՜ն էր անկեղծ մարդկանց կարիքն զգացել արքան։ Ամբողջ կյանքում փնտրել էր նրանց ու չէր գտել։ Անկեղծ ոչ թե իր անձի, այլ իր բռնած գործի նկատմամբ։ Միակը ինքնահրաժարական տված այս կենդանի դիակն էր, որն օրեցօր հալվում էր մոմի պես, բայց, չգիտես բնության որ օրենքով, ինչքան հալվում, այնքան ավելի պայծառ լույս էր սփռում շորս կողմը։

Ի՞նչ էր արել նա իր խոստումների դիմաց։ Արդյոք դրանք գեղեցիկ խոսքեր չէի՞ն։ Արդյոք անուշահոտ բառեր չէի՞ն, որոնք հոգս ցնդեցին մի օրվա մեջ։ Ինչո՞վ նա օգնեց արքային, ի՞նչ հանճարեղ ծրագիր առաջադրեց, փրկության ի՞նչ ելք գտավ։ Միայն՝ սպանիր ու սպանիր։ Միայն՝ դաժանու-

թյան պահանջ։ Արքան կարծում էր, որ ժամանակի ընթացքում նա ընդունակ կլինի նաև իրական ճանապարհ ցույց տալու, միտք հուշելու, օգտակար ու գործնական խորհուրդներ թելադրելու։ Բայց պարզվեց, որ նա գայլից էր սերված, անկարող էր աջ ու ձախ նայել, միայն առջևն էր տեսնում՝ մի հարթ և ուղիղ գծով... Ճիշտ իր մազերի պես... Չափազանց նեղ ու փոքր էր տեսադաշտը, որպեսզի ի վիճակի լիներ հարցերը իրենց բարդ միասնության մեջ քննելու։ Նա պարզեցնում ու հեշտացնում էր իր գործը, վերցնում էր այդ հարցերից միայն մեկը, բացարձակացնում նրա նշանակությունը և, ցուլի համառությամբ, կոտոշներով վրա տալիս։

Չէ, մեղք էր գործում աստծո առաջ։ Հապա Արշակավա՞նը։ Փաստորեն ո՞վ կառուցեց այն, եթե ոչ Գնելը։ Ո՞ւմ համառ ջանքերով և ո՞ւմ անսահման հավատով հասակ առավ այս քաղաքը։ Եթե նա չլիներ, գոյություն չէր ունենա նաև այս վերջին պատվարը։ Թող ինչքան ուզում է հանճարեղ լինի քո հղացումը, սակայն քանի՞ դրամ կարժենա, եթե իրագործող չկա։ Ուրեմն, Գնելը կատարող էր միայն, ուրիշի մտքերն իրագործող։ Նախագիծ տուր նրան, և նա փայլուն կկառուցի։ Միտք տուր, և նա տեղնուտեղը կիրականացնի։ Իսկ ինքն անձամբ անպտուղ է, կատարյալ չբեր։

Բայց արքան երկնքից մինչև գետին երախտապարտ էր նրան ոչ միայն Արշակավանի կառուցման, այլև մի շատ ավելի պարզ ու հասարակ բանի համար. անկեղծության։ Եվ տես, թե բախտի չար ծաղրով, ո՛վ էր միակ անկեղծ մարդը։ Սակայն արքան չուզեց հիշել իրենց անցյալը, որովհետև ներկա տառապանք ունեցողների համար, ըստ որում՝ անհատակ ու անչափելի, անցյալի տեր լինելը մեծ ու աննկարելի շռայլություն էր։

— Ես կհաղթեմ... Կհաղթեմ, չէ՞, Գնել,— ցավորությունից շատախոսելու ներքին պահանջ զգաց արքան, նրա մեջ փափագ զարթնեց անվերջ լսելու իր ձայնը, անդադար հարցեր տալու և իր ցանկացած պատասխաններն ստանալու։— Մեր այսքան տառապանքը հո իզուր չանցա՞վ... Ես քեզ շատ եմ սիրում, Գնել,— հանկարծ, կարծես անտեղի, դուրս թռավ նրա բերանից և նա, առանց որևէ կապի, խանդավառությամբ

շարունակեց.— Իմ քաղաքի բնակիչները կկովեն ամեն մի թիզ հողի համար... Նրանք ուրիշ ելք չունեն... Կմեռնեն, բայց իրենց ազատությունը չեն տա... Նրանք ինձ մենակ չեն թողնի... Ամբոխն ու ես միևնույն շղթայով ենք կապված... Մեզանից ոչ մեկն առանց մյուսի փրկություն չունի... Տեսնո՞ւմ ես որքան ճիշտ էր իմ ծրագիրը... Ես հո իմ խոսքով պապի պես անտա՞ռ չեմ տնկել... Ես քաղաք եմ կառուցել, իր նմանը չունեցող քաղաք... Երկրի բախտը իմ անուժ ձեռքերից վերցրել ու իմ տկլոր, իմ քաղցած ժողովրդին եմ տվել։

— Դու կպարտվես, արքա,— անվրդով նրան ընդհատեց Գնելը։

— Կպարտվե՞մ,— զայրացավ արքան։— Եվ դո՞ւ ես ասում դա։

— Մի քանի օրից նրանք այս պալատում կլինեն։

— Իմ ննջարանո՞ւմ,— չգիտես ինչու, ցանկացավ ճշգրտել արքան։

— Քո ննջարանում,— հաստատեց Գնելը և դեռ գլխով էլ արեց։

—Ուրեմն, սա՞ է վերջը...— միանգամից խեղճացավ արքան։— Այս պա՞տը... Պատուհանից երևացող այս առո՞ւն... Ընդամենը այսքան բա՞ն...

Իսկ մի՞թե փախստական շինականի հետ հանդիպելուց հետո նա արդեն չգիտեր, որ վերջն այն էր, ինչ ավյալ ակնթարթին տեսնում էին աչքերը. պատը, առուն, փոսը, թիկնապահի մեջքը կամ սեփական երկարավուն ստվերը...

Ի՞նչ էր անում արդյոք հիմա շինականը։ Պետք չէր գլուխ կոտրել, հարկավոր էր պարզապես հետևել նրա յուրաքանչյուր քայլին և թեկուզ հենց այդ մի մարդու օրինակով ենթադրել, թե ինչպիսին կլինի քաղաքի վախճանը։

Որքան էր նա սիրում իր արքային, որքան երջանկություն կար նրա դեմքին՝ իր գերագույն տիրոջ հետ հանդիպման բախտ ունենալու առթիվ և, միաժամանակ, իր մատյանությամբ որքան դեմ էր գործում արքային։ Նրա փախուստի մեջ շատ ավելի խոր թշնամություն կար և շատ ավելի մեծ

դավադրություն, քան՝ բուն թշնամիների ու դավադիրների գործունեության։

Բայց ինչո՞ւ են ամեն օր զրնգուն դեկույցներ տալիս, վարդագույն ներկայացնում քաղաքի պաշտպանության և ներքին կարգուկանոնի վիճակը։ Ո՞րն է ճշմարտությունը թաքցնելու տրամաբանությունը, որ գործել է ոչ միայն իր, այլև մյուս բոլոր թագավորների օրոք, ոչ միայն Հայաստանում, այլև ամենուրեք։ Ինչո՞ւ ամենքից քիչ բան գիտե երկրի առաջին դեմքը, ինչո՞ւ իրականությունը նա պիտի իմանա բոլորից հետո և ամենավերջում...

— Տես ինչ պայծառ եղանակ է, արքա,— անսպասելի շշնջաց Գնելը, և արքան նկատեց, որ նրա աչքերն սկսեցին փայլել մի տարօրինակ ու տենդագին փայլով, որից միշտ վախեցել էր ինքը և շարագուշակ բան տեսել դրա մեջ։— Տես ինչ շքեղ արև է... Արագիլները տուն են վերադառնում... Գարնան առաջին օրն է, արքա... Ափսոս է կորցնել այսպիսի օրը... Այս օրը պիտի պատմություն դառնա...

— Ի՞նչ պատմություն,— հոնքերը կիտեց արքան։ Հետո դառնությամբ ու նախատինքով տարուբերեց գլուխը։— Չէ՛, դուք ինձ չսիրեցիք... Չսիրեցի՛ք, չսիրեցի՛ք... Դուք երբեք իմ լավը չցանկացաք...— Ու այդպես էլ անհասկանալի մնաց, թե նա ում նկատի ուներ։

— Ժամանակն է, արքա,— նրա ականջին մի տեսակ սիրով ու քնքշությամբ փսփսաց Գնելը, համոզված, թե նրան հաղորդում է մի մեծ գաղտնիք, որ ուրիշները չպետք է լսեն ու իմանան։— Դու պետք է մեռնես։ Հիմա քո մահն է մեզ պետք։

— Մա՞հ,— արքան սփրթնեց ու չհավատաց ականջներին։— Ի՞նչ մահ։

— Ուրիշ ելք չկա, արքա։ Դու չես դիմանա թշնամու ուժին։ Մեկ է, դու մահից պրծում չունես, հրապարակում մահապատժի կենթարկեն քեզ, օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ։ Որպես սովորական մի գերու։ Որպես պարտված մի թագավորի։— Գնելը եռանդագին համոզում էր արքային, այսքան թափ ու կիրք արքան անգամ նրա մեջ չէր տեսել

երբեք։ Այնքան հավատ ու վճռականություն կար նրա ձայնի ու խոսքերի մեջ, որ քիչ էր մնում նույնիսկ ինքը վարակվեր ու խաբվեր։— Ինչքան ուզում ես փառավոր անցյալ ունեցիր, սիրված ու պաշտված եղիր ամենքի կողմից, ինչքան ուզում ես ժողովրդականություն վայելիր, մեկ է, այդ ամենը մի ակնթարթում կմոռացվեն։ Պարտված մարդը համակրանք չի ներշնչում։ Նա վարկաբեկված է հուր հավիտյան։ Քեզ եմ հարցնում, ավելի լավ չէ՞ մարդավարի մեռնել։ Ո՞ւմ է պետք անփառունակ մահը։

— Եթե այդքան ուզում ես, գնա ինքդ սատկիր,— կատաղած մոլտաց արքան և ատելությամբ ու արհամարհանքով ոտքից գլուխ չափչփեց նրան։— Ես պարտավոր եմ դեռ ապրելու։ Ես շատ անավարտ գործեր եմ թողել իմ ետևում։

— Չէ, չէ, դու գեղեցիկ ես պարտվելու, արքա,— պատանեկան ոգեշնչությամբ հորդորում էր նրան Գնելը։— Դու չես քանդի հեքիաթը, կիսատ չես թողնի այն երգերը, որ գուսանները հյուսում են հիմա։ Չես սպանի այն առասպելը, որն անցնելու է սերնդից սերունդ։ Դու ժողովրդի հիշողության մեջ պիտի մնաս որպես մեր պատմության մեծագույն թագավորներից մեկը։

— Ես ատում եմ քո կույր մոլեռանդությունը։ Քո մթագնած, մտածելու անընդունակ ուղեղը։ Ասված է վկա, որ ես էլ սուրբ չեմ եղել, բայց իմ սայթաքումների մեջ անգամ ավելի մարդկային բան կա, քան քո մոլեռանդ հավատը։

— Չէ, չէ, արքա, հավատա ինձ,— պնդաճակատությամբ իր խոսքն էր առաջ քշում Գնելը, լսելով միայն սեփական ձայնը և արքային արդեն վազուց մեռած համարելով։— Դու պիտի հերոսանաս... Պիտի նահատակ դառնաս... Քեզ սրբերի շարքը պիտի դասեն... Քո տարելիցը պիտի մեծ շուքով տոնեն միշտ... Քո մահվան առասպելից է հարություն առնելու այս երկիրը... Աղաչում եմ քեզ, մի խանգարիր այդ առասպելն ստեղծելու... Դա ավելի կարևոր է, քան քո անցողիկ հաղթանակները մարտի դաշտերում... Անունով եմ երդվում, լսո՞ւմ ես, քո անունով, որից ավելի թանկ բան այսօր չկա ինձ համար, ես դռնեդուռ կընկնեմ և կպատմեմ բոլորին, որ դու քաջաբար կռվեցիր մինչև վերջին շունչդ,

որ քո թրի հուժկու հարվածներից սարսափահար փախչում էր թշնամին... Հասկացիր, հորեղբայր, հասկացի՛ր, քո կյանքն այլևս ոչ ոքի պետք չէ...

— Արքա կոչիր ինձ, արքա... Ես քեզ համար ի՞նչ հորեղբայր... Արքա՛, արքա՛...

— Դու պիտի կարողանաս ժամանակին հեռանալ, արքա, — ծնկի իջավ ու նրա պատմուճանի ծայրը համբուրեց Գնելը։— Հետնորդներիդ օրինակ տուր, սովորեցրու ժամանակին հեռանալ... Աղերսում եմ քեզ... Վաղվա՛ անունից... Պապի՛ անունից...

— Թքե՛լ եմ ես իմ անվան ու հիշատակի վրա։ Ես այսօր եմ ուզում թագավորել։ Իսկ դու ինձ հետ անընդհատ վաղվա անունից ես խոսում։

— Որովհետև վաղվա օրն ավելի իրական է, արքա, քան այս պահը։

— Դու մոռանում ես, որ ինձ հետ է Արշակավանը,— կարծես ի լուր աշխարհի, գաղտագած գոռաց արքան։— Իմ ծնած քաղաքը... Իմ երկունքը... Իմ միսն ու արյունը...

— Իսկ ես կարծում էի, թե դու ուրախ կլինես, որ գտա ելքը,— հուսահատաբ ասաց Գնելը և քիչ էր մնում անարդարության համար լաց լիներ։ Ուրեմն, ինքը օր ու գիշեր, քուն և դադար կորցրած, գլուխ կոտրի, հարցի ամենաճշգրիտ լուծումը որոնի, վերջիվերջո գտնի ու դեմ առնի այսպիսի երախտամոռությա՞ն։

Արքան շշմած նայում էր նրան։ Եթե այս մարդը իշխանության գլուխ կանգնի, մոխրի կվերածի շրջապատը, մահ կսփռի չորս կողմը, դիակների կույտեր կդիզի ամենուրեք, այնտեղ, որտեղ ոտք կդնի նա, ոչ մի բույս չի աճի, ոչ մի նոր միտք չի ծնվի, բոլոր ազնիվ գաղափարները կաղտոտվեն ու կապականվեն։ Եվ նրա հավատը կդառնա ամեն տեսակ հավատի ժխտում, մեծագույն անհավատություն։

— Հասկանում եմ, արքա, հեշտ բան չի մեռնելը,— վերջապես մի մարդկային խոսք լսվեց նրա բերանից, բայց աչքերի մոլեռանդ փայլը, նպատակին հասնելու համառ մտադրությունը, որ պարզապես գրված էր նրա երեսին,

նորից երկյուղ պատճառեցին արքային։— Եթե ինքդ չես կարող, ես կանեմ, արքա... Ե՛ս կսպանեմ քեզ... Միայն թե համաձայնիր...— թուքը կուլ տալով, շշնջաց նա, և նրան թվաց, թե իր անձնազոհությամբ լրիվ ապացուցեց արքային՝ նրա մահվան կարևորությունն ու անխուսափելիությունը։ Եթե պատրաստ էր ձեռք բարձրացնել իր աստծո վրա, ո՞ւմ գործն էր ավելի դժվարանում, ի՞նչը, թե՞ աստծունը։

Արքան պարզապես ապտակեց Գնելին։ Շառաչուն ապտակն իջավ նրա երեսին ու թողեց իր մատնահետքերը։ Գնելը ցնցվեց, երերաց տեղից ու հազիվ պահեց հավասարակշռությունը։ Աչքերից կայծեր դուրս թռան։ Քթից արյան մի շիթ հոսեց ու ընկավ գորգի վրա։ Նա ձեռքը տարավ երեսին, որ վառվում էր կրակի պես ու, ապերախտության այս ցույցից խոցված, արցունքի կաթիլներ թափվեցին այտերին։

— Դու ինձ այլևս պետք չես, Գնել,— հանգիստ շունչ քաշեց արքան և, չգիտես ինչու, քշտեց թևերը։— Ես ազատվեցի քեզանից։ Փա՜ռք տիրոջ, ազատվեցի։ Մնաս բարով։

Մեծ-մեծ քայլերով ուղղվեց դեպի դուռը ու դուրս եկավ ննջասենյակից։ Մի ծանր բեռ էր ընկել ուսերից, և նա չտեսնված առույգ ու թեթև էր զգում իրեն։ Կարծես բաժանվել էր չսիրած կնոջից, որի հետ տանջալի ու հոգեմաշ տարիներ էր անցկացրել նույն հարկի տակ։ Հիմա տուն չուներ, տանիք չուներ, բայց փոխարենն ուներ մի ամբողջ աշխարհ։ Ասես դուրս էր եկել հմայության ազդեցությունից, հիշել իր անունը, ծննդյան թվականը, ծնողներին, իր անցյալը, իր ով լինելը ու վերագտել իրեն։ Գնելն իր շուքի տակ էր առել նրան, զրկել ինքնուրույնությունից, սասանել հավատը սեփական ուժերի հանդեպ, ստիպել էր յուրաքանչյուր քայլը չափել իր համոզմունքների տեսանկյունից, արդյոք ի՞նչ կասի Գնելը, արդյոք հավանություն կտա՞ նրա ձեռնարկած այս կամ այն գործին։ Եվ ինչո՞վ խաբեց արքային, ինչո՞վ կաշառեց, ինչպե՞ս կուրացրեց նրա աչքերը։ Էլի շրջապատն էր մեղավոր։ Համատարած ամայության մեջ Գնելը միակն էր, որ պինդ հավատ ուներ և հասկանում էր միավորված ու ամբողջական հայրենիք ստեղծելու անհրաժեշտությունը։

Վերջ, փա՜ռք աստծո, վերջ։ Ես ազատվեցի քեզանից։ Դու ինձ այլևս երբեք պետք չես։ Մնաս բարով։

Իսկ Գնելը, որ ննջասենյակում մենակ էր մնացել, հուսախաբությունից ու չհասկացված լինելու վիրավորանքից սրբթսրբթում էր ամբողջ մարմնով ու փնթփնթում իրեն-իրեն.

— Ափսո՜ս, արքա, ափսո՜ս, որ չուզեցիր մեռնել... Իսկ առանց քո համաձայնության ես չեմ կարող քեզ սպանել... Չեմ կարող արքայասպան լինել...

Պալատի առջև հսկայական բազմություն էր հավաքվել։ Տեսակցություն էին պահանջում արքայի հետ։ Լավ՞ծ բան էր, որ ժողովուրդը երբևէ հանդգնած լինի նման պահանջ դնելու։ Սա ըմբոստության ցույց է, փսփսում էին նախարարներից ոմանք, բացահայտ խռովություն։ Խախտվել էին աշխարհի պինդ ու անսասան հիմքերը, խարխլվել էին նրա երկու հզոր սյուները, որոնցից մեկը տերերն էին, մյուսը՝ ծառաները։ Արքան էր միակ մեղավորը, այդ նա էր շինականին ներշնչել, թե իրենք դաշնակից են։ Իսկ եթե դաշնակից են, ուրեմն, իրավունքներն էլ ինչ-որ տեղ հավասարվում են։ Մինչդեռ, ըստ էության, նրանք ոչ թե դաշնակից էին, այլ մեղսակից, քանի որ նրանց համատեղ ջանքերով էին խորտակվում աշխարհի հաստատուն ու անփոփոխ պատկերացումները։ Վկա՝ Արշակավանը և այս ամբողջ արհավիրքը։

Արքան երկար չսպասեցրեց իր հպատակներին ու, համաձայն դաշնակցության չգրված օրենքների, իսկույն դուրս եկավ պալատից։ Գոնե պատշգամբ ելներ և այնտեղից խոսեր նրանց հետ։ Չէ, այդ սահմաններն էլ ջնջեց...

Արդեն քանիերորդ անգամ ամբոխն ու արքան Արշակավանում կանգնում էին դեմ-դիմաց։ Սկզբում միշտ տիրում էր մեռելային մի լռություն։ Դա կասկածի պահն էր, որ ծնվում էր տեսակների տարբերությունից։ Նրանք, առանց թաքցնելու և առանց քաշվելու, նախ զննում էին միմյանց, հեռվից հեռու շոշափում իրար, հոտոտում, ստուգում, հաղթահա-

բում իրենց ներքին անջրպետը և նոր միայն շփման մեջ մտնում։

Արքան տխրեց, որ ամբոխը մոռացել էր իր դասը։ Մի պահ տեսած սովորական լռությունից հետո մի մարդու պես չէր ողջունել նրան։ Գուցե համբերատար ուսուցչի նման կրկնի՞, հուշի՞։ Բայց մարմնով մի դող անցավ, երբ նա տեսավ, թե ովքեր են իր դեմ կանգնած։ Տեսավ նրանց հյուծված դեմքերը, փոս ընկած աչքերը, ծարավից չորացած շրթները, անզորությունից ծալվող ոտքերը, բայց այդ ամենը միավորվեց մի ընդհանուր տպավորության մեջ. ոչ ոքի զգեստը կարգին չէր նստած մարմնին, բոլորն էլ լայն էին, և այդ լայն զգեստների մեջ լողում ու կարծես խեղդվում էին մարդիկ։

Արքան ապշեց, երբ ամբոխի մեջ նկատեց նաև կանանց ու նույնիսկ երեխաների։ Եվ միայն այդ քնքուշ ու փափկասուն էակների ներկայությունից կռահեց, որ խոսակցությունը գաժան էր լինելու։

Եկել էին հաց ու ջուր պահանջելու։ Ի՞նչ կարող էր անել արքան։ Ուրիշ դեպքում, այսքան երկարատև պաշարումից հետո, թշնամին կկորցներ հույսը ու կհեռանար։ Սա էր պաշարման ծանոթ տրամաբանությունը։ Եվ քաղաքը պարենավորված էր ըստ այդ տրամաբանության թելադրած չափերի։ Բայց ի՞նչ պարզվեց։ Պարզվեց, որ սա քաղաքի ու հարձակվող բանակի սովորական բախում չէր, ոչ էլ երկու կողմերի պարզ ատելություն, ոչ էլ նույնիսկ՝ սոսկ վրեժխնդրություն։ Ավելի լուրջ բան էր։ Արքայի սխալն այն էր, որ այդ հանգամանքը սկզբից ևեթ հասկանալով հանդերձ, հաշվի չէր առել։ Հարցին մոտեցել էր սոսկ ռազմական գործչի տեսանկյունից։ Եվ հիմա պատասխան էր տալու ամբոխին։

Բայց ի՞նչ պատասխան տար, որն իր ուժով ընդունակ լիներ մրցելու հացի և ջրի նախնական պահանջի հետ։ Նա միայն մի բան կարող էր խոստանալ. կարող էր երդվել, որ ինքն էլ, իր հպատակների նման, կմնա քաղցած ու ծարավ...

— Որտե՞ղ է զորքդ, արքա,— ամբոխի խորքերից, ինչ-որ ապահով տեղից, լսվեց մեկի ձայնը։— Ինչո՞ւ է ուշանում։

— Ի՞նչ զորք,— զարմացավ արքան, որը պատրաստվել էր ուրիշ խոսակցության։

— Զորքդ, որ պիտի կռվի թշնամու դեմ,— շարունակեց ձայնը նույն թաքուն տեղից,— պաշտպանի մեր կյանքը...

— Ի-ի՞նչ,— անակնկալի եկավ ու սփրթնեց արքան։

Լեզուն կապ ընկավ, ու ոտքերը թուլացան։ Հապա հա՞ցը։ Հապա ջո՞ւրը։ Մի՞թե կարելի է սովին ու ծարավին դիմանալ։ Ինչո՞ւ մոռացան իրենց զրկանքները։ Ի՞նչ իրավունքով։ Ինչո՞ւ պիտի իր կոկորդից չբռնեին՝ հաց ու ջուր պահանջելով։ Ի՞նչ զորքի մասին է խոսքը։ Ու նա, ոտքերի մատների վրա կանգնած, վիզը երկարած, կարծես փնտրելով ձայնի տիրոջը, զայրույթով պատասխանեց նրան.

— Ուրեմն, փոխանակ դուք ինձ պաշտպանելու, փոխանակ ձեր քաղաքը ատամներով պահելու, ուզում եք, որ ե՞ս զորավիգ լինեմ ձեզ...

— Բայց դու խոստացել ես մեզ, արքա։

Արքան շշմած դիտում էր լուռ և քարացած ամբոխին, որ մի մարդու պես հայացքը հառել էր նրան, ու լսում նույն անչար ու միամիտ ձայնը։ Եվ քանի որ չէր տեսնում խոսողին, այդ ձայնն անիրական էր թվում ու մի տեսակ երկյուղ պատճառում նրան։

— Ի՞նչ եմ խոստացել,— հուսահատությունից կատաղած գոռաց արքան։— Ի՞նչ, ի՞նչ եմ խոստացել։

— Որ մենք անձեռնմխելի ենք քո քաղաքում,— հանգիստ պատասխանեց ձայնը։— Որ դու կպատժես բոլոր նրանց, ովքեր կփորձեն ոտնձգություն անել մեր դեմ։

— Ուրեմն, հույսներդ միայն ինձ վրա՞ եք դրել,— այլևս չդիմացավ ու, արդեն լացակումած, ամբոխին դիմեց արքան, հարցն ուղղելով մեկ առ մեկ բոլորին։— Միայն ինձ վրա՞։

— Մենք հո չե՞նք հնարում,— կարծես մի փոքր վիրավորվեց ամբոխի խորքից լսվող անմեղ ու ազնիվ ձայնը։— Մունետիկներն էին քո անունից հայտարարում։

— Բայց չէ՞ որ դուք եք իմ հույսը, միա՞յն դուք... Իմ մունետիկներն այդ էին ասում ձեզ... Իմ հրամանն էլ էր այդ ասում...

Արքան լրիվ կորցրել էր իրեն։ Հիստերիայի մեջ էր ընկել։ Գոռգոռում էր ու միայն ինքն էր հասկանում իր անկապ խոսքերի իմաստը։ Նա պատմում էր իր երազների, հույսերի ու ծրագրերի մասին։ Այն մասին, թե ինչպես երկիրը պիտի դառնար անկախ ու միասնական։ Մարդիկ պիտի ապրեին առանց վախի ու առանց օտարի ճնշման։ Որ նա իր մենակությունը պիտի հաղթահարեր ամբոխի հետ միասին։ Որ իրենց դաշնակցությունից պիտի ոտքի կանգներ Հայաստանը։ Որ նա շատ ներքին կռիվներ է մղել ինքն իր դեմ՝ ամբոխի ու իր միջև ընկած անջրպետը ոչնչացնելու համար։ Որ նա երկրի բախտը իր անուժ ձեռքերից վերցրել ու իր տկլոր, իր քաղցած ժողովրդին է տվել։ Որ նախարարները եղել են եսապաշտ ու հայրենիքը համարել են միայն իրենց գավառը։ Որ պարսիկն ու բյուզանդացին ի վերջո կուլ կտան երկիրը և ավարը հավասար կբաժանեն իրար մեջ։ Որ հանուն երկրի ներկայի ու ապագայի, նա գիտակցաբար իր մարդկային դեմքն է կորցրել, գործել է այնպիսի արարքներ, որոնք դեմ են եղել իր բնությանն ու սկզբունքներին։ Որ նա էլ կուզենար, բոլորի նման, ապրել այնպես, ինչպես սիրտն էր կամենում, միայն իր համար։ Որ ինչո՞ւ բոլոր արքաները պիտի վայելեն փառք ու իշխանություն, ամեն քայլափոխին ըմբոշխնեն դրանց քաղցրությունը, իսկ ինքը օր ու գիշեր, թևերը քշտած, պիտի աշխատի ու տքնի։ Որ ինչո՞ւ բոլորն իրավունք ունեն մտածելու միայն իրենց մասին, իսկ մի հոգու ճակատին գրված է՝ բոլորի հոգսերը սեփական ուսերին վերցնել ու տանել։ Գոռաց, գոռաց, ու ոչ ոք չհասկացավ նրա խոսքերի իմաստը, ոչ ոք չկռահեց, որ նա ամբոխին մեղադրում էր երախտամոռության ու դավաճանության մեջ, իսկ իրեն՝ դյուրահավատության ու ինքնախաբեության։ Եվ ամբոխի պատասխանը եղավ ընդամենը երեք բառ։

— Արքան զորք չունի,— լսվեց նույն ձայնը բազմության միջից։

«Արքան զորք չունի... Զորք չունի արքան...» Լուրը ալիքի պես տարածվեց ամբոխի մեջ, անցավ բերնեբերան, տագնապ ու իրարանցում ծնելով մարդկանց հոգիներում։

Եվ հանկարծ սկսվեց խելահեղ փախուստը։ Խուճապահար

Ամբոխը, իրեն անպաշտպան ու խաբված զգալով, վազում էր ուր աչքը կտրեր։ Փախուստը, դարավոր բնազդների թելադրանքով, թվում էր միակ փրկությունը։ Ինչ-որ սահմռկեցուցիչ բան կար այդ վազքի ահավոր անիմաստության մեջ։ Չորս կողմը պարիսպներ էին, պարիսպներից այն կողմ՝ թշնամին, որը ծարավի էր նրանց արյան։

Ճիշ ու վայնասուն էր ընկել քաղաքում։ Մարդիկ, վախից խելքները կորցրած, փնտրում էին իրենց հարազատներին, անունները գոչում, և նրանց ձայները, դեռ չծնված, մեռնում էին համատարած աղմուկի մեջ։ Ոչ մեկի մտքով չէր անցնում գնալ տուն և հավաքվել ընտանիք առ ընտանիք, քանի որ արհավիրք՝ նախ և առաջ նշանակում է, որ տուն այլևս չէր կարող գոյություն ունենալ։

Մարդիկ, դարձյալ ինքնապաշտպանական բնազդներից մղված, ճգնում էին պոկվել իրարից, որովհետև մենակությունը ինքնին թաքստոց էր ու ապահովություն, վտանգը չէր կարող հեշտությամբ հայտնաբերել առանձին մարդուն և հաշվեհարդար տեսնել նրա հետ։ Իսկ խումբը հարմար թիրախ էր, միմյանց գոյության ակամա մատնություն։

Բայց չէր հաջողվում իրարից անջատվել։ Ամբոխը քայքայվեց, մասերի բաժանվեց, և փախուստի ուղղությունները փոխվեցին։ Սակայն քաղաքի նեղ և կույր փողոցներում նոսրացած խմբերը, որոնք առանց այդ էլ ճգնում էին բաժանվել ու առանձնանալ, դարձյալ հանդիպում էին միմյանց ու այս անգամ... իրարից փախչում։

Միայն իրիկնադեմին խուճապը, ինչպես և ամեն մի ուրախություն ու ցավ, նույնպես սովորական դարձավ, մարդիկ ստիպողաբար ընտելացան դրան, ի վերջո քաշվեցին իրենց տները, որոնք, ինչպես պարզվեց, այնուամենայնիվ դեռ նրանց էին պատկանում, պինդ-պինդ փակվեցին, ու սկսվեց սպասումը, մի բան, որ ավելի ահավոր էր ամեն տեսակ գուժից ու խուճապից։

Իսկ արքան, հուսախաբությունից ու ցավից լայն բացված աչքերով, իր պարտությունն ու անզորությունը լրիվ ընդունած, քարացած դիտում էր ամբոխի փախուստը ու անձայն արտասվում։

Սա էր վերջը, բոլոր երազանքների ու տառապանքների։ Այսքան անփառունակ ու խղճալի։ Մի պահ նրա աչքերի առջևով անցան այն բոլոր ծանր ապրումները, այն անքուն ու անվերջանալի գիշերները, որ տարիներ շարունակ անբաժան են եղել իրենից, որպեսզի գումարվեն, կուտակվեն ու այս օրին արժանացնեն իրեն։

Ո՞ւմ է բախտ վիճակվել, դառը քմծիծաղ տվեց նա ինքն իրեն, այսպես անձամբ, այսքան որոշակի ու կողքից տեսնելու սեփական վախճանը, տեսնելու ինչպես թատրոնում, բեմի վրա, հանդիսատեսի համար նախատեսված ամենապատվավոր տեղից։

Էլ ի՞նչ էր մնում անելու, եթե ոչ հետևել ամբոխին ու անձամբ ևս փախչել։ Այսինքն, մարդ դառնալ, պատկանել միայն իրեն, մտածել միայն իր անձի ու մաշկի մասին։ Նա կգնա Վիրք, Միրիան թագավորի մոտ։ Հենց դրանով վրեժխնդիր կլինի ապերախտ արշակավանցիներից։ Թող իմանան, թե ինչ բան է գլխներին արքա չունենալը։ Վրեժխնդիր կլինի նաև իրենից՝ դյուրահավատության ու ինքնախարեության համար։ Եվ վրեժը կլուծի՝ նոր տանջանքներ պարգևելով իրեն, քանի որ շատ լավ գիտե, որ չի կարելի ոխ պահել հարազատ ժողովրդի հանդեպ, թեկուզ եթե մինչև վերջին մարդը դավաճանած լինեն արքային ու երես դարձնեն նրանից, քանի որ գիտե, որ հենց այդ դեպքում է արքան իր ժողովրդին ավելի պետք։ Որովհետև, եթե ոչ թե անհատը, այլ ամբոխն է կորցնում բարոյականությունը, ուրեմն, նա փորձանքի մեջ է։ Բայց արքան էլ վերջ ի վերջո մարդ է, չէ՞, ոչ քարից է շինված, ոչ երկաթից։ Օրերից մի օր պիտի իմանա՞, պիտի հիշի՞ իր մարդկային ծագումը, թե՞ ոչ։ Պիտի հասկանա՞, որ ինքն աստված չէ՝ ամենատես ու ամենաներող, այլ սովորական մահկանացու, նույնքան սովորական թուլություններով։ Հիմա, այս մեծագույն երախտամոռության առաջ, նա այդ իմացավ, հիշեց ու հասկացավ։ Եվ նա կլուծի իր վրեժը, կգնա Միրիանի մոտ...

Հանկարծ տեսավ, որ մոտ հարյուր հազարանոց ամբոխից, որ չքացել էր մի քանի րոպեում և արքայի առաջ սփռել ամայի մի տարածություն, մնացել էր զառամյալ մի

ծերունի։ Կանգնել էր պատկառելի հեռավորության վրա և համբերությամբ սպասում էր, որ արքան նկատի իրեն։

Արքան զարմանքով նկատեց ու հարցական նայեց նրանց։ Ծերունին մի քանի անգամ անձայն բացուփակ արեց բերանը, կարծես դժվարությամբ դուրս հրելով բառերը։

— Էլ ինչի՞ մեզ տեղահան արեցիր, արքա...— առանց նախատինքի, առանց մեղադրանքի, ծերունական անկիրք ձայնով հարցրեց նա։— Ինչի՞ մեզ գժտեցրիր մեր տերերի հետ... Հիմա մենք ի՞նչ երեսով պիտի նայենք նրանց աչքերին...

Արքան, չգիտես ինչու, վախեցավ այս անակնկալ հանդիպումից, իր վերջին օրերն ապրող այս ծերունու հետ դեմ առ դեմ կանգնելուց և, նրա հարցն անպատասխան թողնելով, արագ հեռացավ։

Սակայն մեջքն զգաց, որ ծերունին հետևում էր իրեն։ Նա արագացրեց քայլերը, անցավ պալատի ետնաբակը ու դարձյալ լսեց ծերունու ոտնաձայները։ Վախից ուզեց գոռալ, թիկնապահներին օգնության կանչել, բայց նաև հասկացավ, որ կարող էր հիմար վիճակի մեջ ընկնել։ Թիկնապահները վաղեվաղ կգային ու կտեսնեին ընդամենը անօգնական, զառամյալ մի ծերունու։

— Փառք աստծո, լավ թե վատ ապրում էինք,— պոկ չէր գալիս ծերունին ու շարունակում էր անվրդով խոսել։— Ինչի՞ ջահելներին սովորեցրիր չլսել իրենց տերերին։ Չէ՞ որ մի տեր էլ դու ես։ Ինչո՞ւ ինքդ քո դեմ ելար։

Արքան ուզեց ետ դառնալ ու պալատ մտնել, բայց ծերուկը կանգնած էր իր ճանապարհին։ Նա ոչինչ չէր անում, ոչ մի վտանգ չէր սպառնում. նա չէր կարող արգելել, որ արքան անվնաս վերադառնա պալատ։ Բայց արքան իր մեջ ուժ չէր գտնում շրջվելու ու թեկուզ մի ակնթարթ դեմ առ դեմ նայելու նրան։

Ստիպված շարունակեց ճամփան, զգալով, որ ծերուկը կրնկակոխ հետևում էր իրեն ու բնավ միտք չուներ իր օձիքը բաց թողնելու։

— Հիմա ի՞նչ պիտի անենք, արքա,— անմիջականորեն հարցրեց նա,— ի՞նչ պիտի լինի մեր դրությունը։

Մի ելք կար միայն, թեև ստոր ու նողկալի, բայց միակ ելքը։ Լռեցնել նրան։ Դաշույնի մի հարվածով։ Միայն թե ազատվել նրանից, նրա անկիրք ձայնից, նրա համառ հետապնդումից, իր անբաժան ստվերը դառնալու երկյուղից, նրա անկեղծ մտահոգությունից, որն ավելի շատ ընդհանուր վիճակին էր վերաբերում, քան թե սեփական անձին, և հենց դա էր արքային շփոթեցնում և հունից հանում։ Բայց քանի որ անհնար էր նրան սպանելը, ինքն անընդհատ պիտի առաջ գնար, միայն ու միայն առաջ, պատկառելի հեռավորությունից իր ծոծրակին զգալով նրա գոյությունը, նույնիսկ ծերունական շնչառությունը։

— Դու միայն մի միջոց ունես մեզ փրկելու, արքա,— քիչ անց է՛լ ավելի հանգիստ ու անկիրք ասաց ծերունին։— Եթե թողնես, որ քեզ տաննենք, հանձնենք նրանց... Գուցե մեր տերերը ներեն մեզ...

Արքան քարացավ տեղում և ոտնաձայների բացակայությունից կռահեց, որ ծերունին էլ կանգ առավ։ Երևի նույն պատշաճ տարածության վրա։ Արքային խեղճացրեց, ծնկի բերեց առաջարկի ուղղակիությունն ու անմիջականությունը։ Նա կտրուկ շրջվեց ու տեսավ մի ծերունու, որը կարծես այս մի քանի րոպեում է՛լ ավելի էր սմքել, ուժասպառվել և անհուսալիորեն ծերացել։ Ծերունու հայացքը դիմացավ, իսկ արքայինը՝ ոչ։ Նա փախցրեց աչքերը և հասկացավ, որ չի կարող ոչ զայրանալ, ոչ անպատվել, ոչ էլ հակաճառել։ Ծերունին բոբիկ էր, ոտքի բութ մատը խղճալիորեն մեծ էր ու երկար, հագել էր ցնցոտիներ, բերանի մեջ, փոքր մանկան նման, մի ատամ կար ընդամենը, և աչքերն անընդհատ արցունքակալվում էին։ Նա հասել էր մի տարիքի, երբ կարող էր մտածածն առանց տատանվելու ասել ու երջանիկ էր, որ արդեն չգիտեր, թե ինչն էր կարելի և ինչը՝ ոչ։

Արքան իր զարդերից մեկը պոկեց զգեստից, գետին գցեց ու փախավ։ Զտվեց որպես ողորմություն։ Վստահ էր, որ ծերունին ոչ մի դեպքում չէր վերցնի գետնից։ Պարզապես ուզեց նրա ուշադրությունը շեղել։ Եվ, իսկապես, ծերունին մանկական հետաքրքրությամբ սկսեց նայել փայլուն մետաղի կտորին, որ բոցկլտում, վառվում ու խենթանում էր

արևի լույսից։ Ու նա, տարված այդ անծանոթ ու հրապուրիչ խաղալիքով, գնահատելով ոչ թե դրա արժեքը, այլ պսպղունությունը, բոլորովին մոռացավ արքային։

Մի քանի օր անց էշ կոչված անվավոր մեքենաները, որոնք օր ու գիշեր որդի պես կրծում էին պարիսպների հիմքերը, կարողացան քանդել մի փոքր հատված, որը, հակառակի պես, մոտ էր դարբասին։ Կարճատև ձեռնամարտից հետո հայ-պարսկական միացյալ բանակի առաջատար գծի զինվորները ներխուժեցին Արշակավան և բաց արին դարբասը։

Թշնամին, ամբարտակը խորտակած հեղեղի նման, լցվեց քաղաք։ Ջորքը, հատկապես նրա հայկական մասը, ոչ մի անձնական հաշիվ չուներ արշակավանցու հետ, հետևաբար, չպետք է ունենար նաև վրիժառության ցանկություն։ Բայց ամիսներ տևած պաշարումը չարացրել էր նրան։ Իրար էին բախվել պաշարողի ու պաշարվածի համառությունը։ Հենց այդ համառությունն էր երկու անծանոթ կողմերի մեջ ատելություն առաջացրել միմյանց հանդեպ։ Եվ, ինչպես միշտ, հաղթողի ատելությունն ավելի բուռն էր, նա ավելի իրավացի էր, ավելի արդարացի, նույնիսկ՝ ավելի առաջատ ու տանջված։

Շինական Հաբեթնակը, բանից անտեղյակ, դուրս էր եկել տնից ու պատրաստվում էր փողոցն անցնել և գնալ հարևանի մոտ, երբ տեսավ, որ զինվորների մի ահռելի բազմություն, կարծես գետնից բուսնելով, արշավում էր ուղիղ իր վրա։ Մի ամբողջ բանակ՝ ընդամենը մի հոգու դեմ։ Դա մղձավանջային երազ թվաց նրան, նա փորձեց ճչալ ու արթնանալ քնից, բայց չհաջողեց, որովհետև սիրտը վախից պայթեց, և նա տեղնուտեղը մեռավ։ Հաբեթնակը գարձավ Արշակավանի առաջին զոհը։

Թշնամին Արշակավանում հանդիպեց մի չնախատեսված դժվարության. դիմադրություն չկար, փողոցները գատարկ էին ու ամայի, կարծես անկենդան քաղաք էր ոտք դրել նա։

Ստիպված էին առանձին-առանձին մտնել բոլոր տներն ու հաշվեհարդար տեսնել բնակիչների հետ։ Բայց դա ավելի մարդասպանության էր նման, քան թե՝ քաղաքի գրավման։

Շփոթմունք ընկավ բանակի շարքերում։ Զինվորները լցվեցին քաղաքի փողոցները ու կանգ առան, չիմանալով ինչ անել։ Մատնվեցին լիակատար անգործության։ Երանի չէ՞ր ամեն փողոցի, ամեն մի թիզ հողի համար մարտեր մղեին, թեկուզ և վտանգի ենթարկեին իրենց կյանքը, հարձակվեին դիմադրող խմբերի վրա, մահու և կենաց պայքարի մեջ մտնեին; այսինքն, պայմաններ ստեղծվեին կիրառելու կռվի հիմնական օրենքը՝ սպանությունը։ Միևնույն բանն էր՝ հակառակորդը հարձակվո՞ւմ է, թե՞ փախչում, երկու դեպքում էլ սպանելու բնազդը գրգռում և ուժ է տալիս զինվորին։ Իսկ հիմա տարօրինակ վիճակ էր։ Նա հարկադրված էր իր կոչմանն անվայել արարք գործելու, մեկ առ մեկ սպանելու։ Սպանելու անուն առ անուն, փողոց առ փողոց, հասցե առ հասցե, տեսնելու զոհի դեմքը, նրա տունը, նրա ունեցվածքը, ծանոթանալու նրա ընտանիքին։ Սարսափելին այն էր, որ նա մի տնից մյուսը մտնելու արանքում կարող էր մի փոքր հանգստանալ, զրուցել ընկերոջ հետ, մի պատառ հաց ուտել, սքանչանալ մայրամուտով, ապա հանգիստ և առանց խուճապի շարունակել իր գործը։ Շտապելու անհրաժեշտություն չկար, զոհը տեղից չէր փախչում։

Հաղթանակի առաջին ուրախ ճիչերը խեղդվեցին ու փոխարինվեցին խոր հիասթափությամբ։ Ոչ հաղթած կողմ կար, ոչ էլ պարտված։ Պալատը դատարկ էր, արքան փախել էր Վրաստան, նախարարները ցրվել էին իրենց գավառները, քաղաքի փոքրաթիվ կայազորը իսպառ ոչնչացված էր, ոչ մի պաշտոնավոր անձ չէր մնացել։

Միակ բացառությունը բանակում գտնվող ապստամբ նախարարներն ու պարսիկ զորապետներն էին, որոնք ոչ միայն չէին կորցրել վրեժխնդրության ծարավը, այլև երազում էին ժամ առաջ հիմնահատակ անել, գետնին հավասարեցնել քաղաքը ու կոտորել մինչև վերջին մարդը։ Նրանք հրաման արձակեցին անհապաղ սկսել շարդը։

Զինվորները, առանց միմյանց հետ պայմանավորվելու,

տարերային ձևով գտան ելքը։ Նրանք տներն էին մտնում հոծ խմբերով, թեև երկու-երեք հոգին միանգամայն բավական էին անզեն ու անպաշտպան մի ընտանիք ոչնչացնելու համար։ Սակայն մեծաթիվ խմբերն այն առավելությունն ունեին, որ նրանց ներխուժումը կռվի խաբուսիկ տեսք էր ստանում, դիմադրության սպառնալիքի պատրանք էր ստեղծում, և մեղքի հավասար բաժին էր ընկնում յուրաքանչյուրին։ Տներում շարժվելու տեղ չէր մնում, և ի վերջո չէր իմացվում, թե ընդհանուր քրարանցման մեջ ովքեր սպանեցին անմեղ բնակիչներին։

Շուտով ջարդի լուրը տարածվեց քաղաքով մեկ և կատարվեց այն, ինչ բանակի միակ փափագն էր։ Մարդիկ դուրս եկան իրենց որջերից և սկսեցին փախչել։ Ուժեղի և թույլի բնազդն անմիջապես գործի դրվեց։ Բնական առիթ ստեղծվեց հետապնդելու ու տապալելու զոհին։ Արշակավանցիների ակամա փախչը օգնեց զինվորներին, ու նրանք, այլևս առանց տատանվելու, անցան իրենց սովորական ու արդեն հասկանալի պարտականությանը։

Սպանդը տևեց երեք օր ու գիշեր։ Զինվորները պարտավոր էին ոչ միայն բնաջինջ անել քաղաքի բնակչությանը, այլև ավերել տները, ոչնչացնել այգիները, քանդել ճանապարհները, հիմնահատակ անել երկհարկանի ամուր պալատը, Արշակավանի շուրջ գոտևորված փոսը, որ չէին հասցրել ջրով լցնել, ծածկել պարսպի քարերով, մի խոսքով, ոչ մի բան կանգուն չթողնել։

Արշակավանը վառվում էր հրդեհների մեջ, մարդկանց ճիչն ու վայնասունը կարծես բոցերի միջից էին դուրս թռչում ու կախվում քաղաքի վրա։ Մի ակնթարթում երեխաները որբանում էին, ծնողներն՝ անզավակ դառնում, տղամարդիկ ու կանայք՝ այրիանում, երկարատև տարիների երազներն ու հոգսերը, ուրախություններն ու դառնությունները մոխիրների վերածվում, իբրև թե այսինչ մարդը ոչ էլ գոյություն է ունեցել, նրա ծանր ու դժվարին կյանքը անգամ իրականություն չի եղել։

Արշակավանցիներից մեկը, պարսիկների ձեռքն ընկած, հուսահատությունից այլ ելք չգտնելով, օգնության էր կան-

չում հայ զինվորներին... Մեկ ուրիշը, որ թրի մահացու հարված էր ստացել մարմնին, չնայած անտանելի ցավերին, անմարդկային մի համառությամբ աշխատում էր հանգցնել իր տանն ընկած հրդեհը... Մի երրորդը, փողոցի ահավոր թոհուբոհի մեջ, իր կորած հարազատների անուններն էր ամբողջ կոկորդով գոչում ու կանչում նրանց... Իսկ մի այլ մարդ, որ սեփական աչքերով տեսել էր իր ընտանիքի բոլոր անդամների մահը ու հրաշքով կարողացել էր փախչել քաղաքից, հանկարծ զգալով իր փրկության ամբողջ անիմաստությունը, կամավոր ետ էր վերադառնում...

Արշակավանցի ընտանիքներից մեկը, զգալով դրության անհուսալիությունը, մեջտեղ հանեց տան ամբողջ պաշարը, որ նախատեսված էր ապագա երկու շաբաթների համար, այն էլ՝ խիստ խնայողությամբ, պարզապես սովից չմեռնելու համար, կարգին սեղան բացեց, և տան անդամները, քար լռության մեջ, կուշտ ու կուտ կերան մինչև վերջին պատառը, հաջորդ օրվան ոչ մի փշրանք չթողնելով։

Տարբեր թաղամասեր, իրարից անտեղյակ, իրենց ներկայացուցիչներին էին ուղարկում հրամանատարության մոտ և խնդրանում հանձնվել։ Բայց նրանք ոչ միայն մերժում էին տանում, այլև տեղնուտեղը գլխատվում։ Տեսնելով, որ ներկայացուցիչները չեն վերադառնում, այդ նույն թաղամասերի բնակիչները, փոքր խմբերով, անցնում էին դիմադրության։ Սակայն արդեն ուշ էր։ Նույնիսկ շա՜տ էր ուշ։ Դիմադրությունը ճնշվում էր ամենակարճ ժամանակամիջոցում։ Թշնամու բանակը այն աստիճան ահռելի թիվ էր կազմում, որ յուրաքանչյուր անզեն արշակավանցուն ընկնում էր մինչև ատամները զինված հինգ զինվոր։

Չէ, հանձնվել չկար։ Արշակավանի տարածքի մեջ ընկած ամեն մի ջնջավոր էակ ու ամեն մի անշունչ իր ենթակա էր ոչնչացման։ Առանց խտրության, առանց բացառության։ Չխնայելով անգամ մանուկներին ու ծերերին։ Խստիվ արգելված էր ավար վերցնել, ամեն ինչ պետք է անհետանար ու վերանար քաղաքի հետ միասին, նույնիսկ՝ ամենաթանկարժեք առարկաները։ Որովհետև գրանք հիշողության սերմեր էին, որ կարող էին ցրվել երկրով մեկ ու ծիլեր արձակել։

Ով թեկուզ չնչին չափով խախտում էր այդ օրենքը, առանց դատի ու դատաստանի, իսկույն մահապատժի էր ենթարկվում։ Կազմակերպվել էին հատուկ պատժիչ ջոկատներ, որոնք անդադար հսկում էին հրամանի անշեղ կատարմանը։

Սպանդի արժանահիշատակ դեպքերից մեկն էլ այն եղավ, որ քաղաքի տարբեր մասերում, արշակավանցիների հաշիվը մաքրելուց հետո, առանց որևէ պատճառի, իրար կոյսն հայ և պարսիկ զինվորները։ Դաշնակիցներն սկսեցին անխնա կոտորել միմյանց, և այդ ընդհարումները համատարած բնույթ կստանային, եթե ճիշտ ժամանակին վրա չհասնեին երկու կողմերի հրամանատարները ու չբաժանեին նրանց։ Նախարարները, վախենալով հետագա բարդություններից, պատահական ընտրությամբ վերցրին ընդհարումներին մասնակցած մոտ հիսուն հայ զինվորի ու հրամայեցին սրախողխող անել բոլորին։

Սակայն չար լեզուները պնդում էին, որ թեև բացահայտ բախումներ այլևս չեղան, այնուամենայնիվ հայերն ու պարսիկները առիթ չէին փախցնում թիկունքից գաղտագողի հարվածելու միմյանց։

Բայց ի՞նչ օգուտ, երբ Արշակավանն արդեն հոգեվարքի մեջ էր, ճակատն այրվում էր կրակից, սիրտը վերջին կծկումներն էր անում, շնչում էր դժվարությամբ ու մեծ ճիգով։ Մեռնում էր, ինքն իր համար գերեզման ծառայելով։



Գնելը, լրիվ դատարկված ու քամված, աննպատակ քարշ էր գալիս աչքերի առջև ժամ առ ժամ կործանվող քաղաքում և սարսափով դիտում շուրջը։ Ամենուրեք տեսնում էր ավերակներ ու դիակներ։ Դիակներից մեկը նրա ուշադրությունը գրավեց ցուցամատի սպիացած վերքով։ Այդ մարդը երևի ինչ-որ պինդ բան էր կտրել դանակով ու վիրավորել ձեռքը։ Դրա համար էլ նա, երբեմնի կենդանության այս անհերքելի վկայությամբ, ամենքից ավելի մեռած թվաց նրան։

Զոհվածների մեծ մասը ծանոթ էր Գնելին։ Նրանցից շատերն էին իրենց մաշկի վրա զգացել նրա մտրակի արդար

հարվածները։ Շատերին էր նա անշահախնդիր օգնություն ցույց տվել, անձամբ մասնակցել նրանց տների կառուցման աշխատանքներին, լուծել նրանց առօրյա կյանքի բազմաթիվ կնճռոտ հարցերը, իրագործել սննդամթերքը հավասար բաշխելու դժվարին պարտականությունը, մի խոսքով, իր անձը զոհելով, տիրություն արել բոլորին։ Հանուն ինչի՞։ Այս համատարած եղեռնի՞։ Փլատակների այս թագավորության՞։ Մի՞թե սա էր իր անմարդկային չարչարանքների հատուցումը։ Եվ ո՞վ էր պատասխան տալու այս ամենի համար։ Միայն Թշնամի՞ն։ Թշնամին՝ ամենավերջում, քանի որ նա ճիշտ էր վարվել, այսինքն, իր թշնամական պարտքն էր կատարել։ Նախ և առաջ պատասխան պիտի տար արքան, իսկ հետո՝ նաև ինքը։ Ուրեմն, թերացել էր իր պարտականությունների մեջ, որոնք ինքն էր, իր կամքով, սեփական ուսերին վերցրել, չէր եղել հարկ եղածին չափ դաժան, նույնն է թե՝ բավարար խորությամբ չէր սիրել արշակավանցիներին, արմատախիլ չէր արել նրանց թուլություններն ու եսասիրությունը, այլապես ժամանակին սովորեցրած կլիներ նրանց՝ հավատի վերածելու արքայի պաշտամունքը, հլուսելու նրա հեքիաթը, երգերի մեջ հավերժացնելու նրա առասպելը, ստեղծելու նրա անձեռակերտ հուշարձանը։ Որովհետև, եթե նրան իջեցնես պատվանդանից, կենդանացնես, միս ու արյուն տաս, իմանաս, որ նա էլ քո նման սովորական մի մահկանացու է, ծննդյան ու մահվան թվականներով, մեջքի ցավով, թեկուզ և շնչին արատներով, ասենք, շատակերությամբ կամ էլ թե չէ կնամոլությամբ, վերջացա՞վ, նա այլևս անընդունակ է իր ետևից տանելու ժողովրդին, ստիպելու, որ կուրորեն հավատան իր յուրաքանչյուր խոսքին, վտանգի պահին, իր անունը շրթներին, առանց մի ակնթարթ իսկ տատանվելու, ընդառաջ նետվեն մահվան։ Գնելը չէր կարող իրեն ներել, որ ի վիճակի չեղավ իր անձնական օրինակով վարակելու արքայի հպատակներին, հետևաբար, ոչ թե հպատակներն էին մեղավոր, այլ միայն ինքը։ Նշանակում է, հենց անձնական օրինակն էր պակասավոր ու խոցելի։ Ուրեմն, նա մինչև վերջ չէր ծախսել իրեն, այլ ինչ-որ բան թաքուն-թաքուն թողել էր իր անձին։ Եվ նա պետք է չարա-

չար պատժվեր դրա համար։ Նա չգիտեր, չէր էլ ուզում իմանալ, թե արքան, որը հայելու մեջ տեսնում էր միայն իրեն, որը չէր կարողանում իր իրական արտացոլումից անջատվել, ի՞նչ պատիժ էր սահմանել ինքն իր համար և սահմանե՞լ էր արդյոք։ Գիտեր միայն, որ սեփական մեղքը ինքը պարտավոր էր քավել իր մահվամբ։ Եվ նա ման էր գալիս ավերված քաղաքի երբեմնի փողոցներով ու անհամբերությամբ սպասում, թե թշնամու նետը երբ անշնչացած գետին կտապալի իրեն։ Բայց թշնամին ավելի նենգ էր ու անսիրտ, քան կարծում էր նա։ Անթիվ ու անհամար նետերը, որոնք առանց նշանառության էլ կարող էին կպչել թիրախին, ոչ մի կերպ չէին ուզում գտնել նրան։ Հարյուրավոր մարդիկ, թաքստոցներին ապավինելով հանդերձ, զոհվում էին թունավոր նետերից, իսկ նա, որ դիտավորյալ ցցվել էր բոլորի աչքի առաջ, շարունակում էր կենդանի մնալ։ Թշնամին ուզում էր, որ խղճի խայթը հոշոտեր նրան, օր ու գիշեր կրծեր, մաշեր նրա հոգին, հիշեցներ նրա լիակատար անկարողությունը, նրա ամոթալի ու խայտառակ պարտությունը։

Քաղաքի հեռավոր ծայրամասում, որտեղ Գնելը հայտնվել էր՝ անկամորեն հետևելով սեփական ոտքերին, նա նկատեց մի խումբ բրդգզյալ մուրացկանների, որոնք, աղքատիկ կապոցները ձեռքներին, շտապում էին հեռանալ քաղաքից։

— Ո՞ւր եք փախչում,— արհամարհանքով հարցրեց նա, ավելի շատ գերի մնալով նախկին սովորությանը, քան՝ հետաքրքրությունից։— Ի՞նչ է, այս կռիվը կապ չունի՞ ձեզ հետ։

— Մենք պատերազմից օգուտ չունենք, տեր իմ,— պատասխանեց մուրացկաններից ամենատարեցը ու ստիպված կանգ առավ։ Կանգ առան նաև մնացածները։— Մեր գործը խաղաղ օրերի հետ է կապված։

— Ուրեմն, չե՞ք ուզում պաշտպանել արքային։

— Ով մեզ ողորմություն տվեց, նա էլ մեր արքան է, տեր իմ։

Այսպիսի պատասխանն առաջ կարող էր սպանիչ լինել Գնելի համար ու գործի դնել նրա մտրակը։ Բայց նա հիմա և՛ մտրակ չուներ, և՛ հավատ։ Հիմա նա ամեն անկյունում իր մահն էր փնտրում ու չէր գտնում։

Մի միտք, որ նա երկար ժամանակ որոճում էր գլխում, ենթագիտակցությունից վերածվեց պարզ ու հասկանալի բառերի, ու նա հանգիստ ընդունեց դրանց իմաստը։ Բոլորովին չվախեցավ ու չընկրկեց, ընդհակառակը, մտովի կրկնեց, որպեսզի հետո չկարողանար հրաժարվել և խույս տալ ինքն իրենից։

Նա լայն գոտու տակից հանեց փողի քսակը, երկու մատներով խայծի պես պահեց օգում ու մի փոքր լռեց, որպեսզի մուրացկաններին ժամանակ տար մինչև վերջ ըմբռնելու իրենց տեսածը։

— Եթե ես դրամ տամ բոլորիդ, շա՜տ գրամ տամ, իմ հանձնարարությունը կկատարե՞ք,— չգիտես ինչու, փոխանակ խնդրելու, խիստ ու բարկացած տոնով նա դիմեց ամենքին և շարժեց քսակը, որպեսզի նաև ձայն լսվի ու ավելի ևս արժեքավորվի իր վերջին ասածը։

— Խորհուրդ չեմ տալիս շատ վարձատրել, տեր իմ,— ասաց տարեցը, որը թեև խմբի գլխավորն էր, բայց բոլորից աղքատ էր հագնված՝ երևի իր հինավուրց մասնագիտության պատիվը բարձր պահելու համար։— Մեծ վարձատրությունը բնավ մեր սրտովը չէ։ Մենք ավելի ենք ուրախանում, երբ միայն ողորմության չափ են մեզ տալիս։

— Ուրեմն, դուք սովորական մուրացիկ չեք,— դառը հեգնանքով ասաց Գնելը։— Փչ.լիսափա մուրացկաններ եք։

— Ասա՛, տեր իմ։ Ժամանակը սուղ է։

Գնելի խամրած աչքերում հանկարծ նորից երևաց մելամանդության նախկին փայլը, հայացքը դարձավ չար ու համառ, կոշտ և հարթ մազերն ընկան երեսին, ծածկեցին դեմքի կեսը, հոգնած ու ջրակալած աչյունը կրկին ըմբոստացավ, եռ եկավ, և ապրելու ու գործելու փափագը վերակենդանացավ նրա մեջ, որպեսզի նա կարողանար լուծել իր կարճատև կյանքի վերջին ու կարևորագույն հարցը՝ ստիպել, որ ինքն ու մահը հանդիպեն իրար, այսինքն՝ իրագործել պատժի առավելագույն չափը, որին նա արժանի էր իր կատարյալ ձախողմամբ։ Ի՞նչ նշանակություն ունի, թե ուրիշները, անգամ ամենաանաչառ դատավորը, անգամ ասված, ինչպիսի պատիժ կսահմանեն քո աններելի մեղքերի համար։

Միակ արդար դատավճիռն այն է, ինչ մարդ ինքն է արձակում իր խղճի հետ միասին։ Եվ միայն ինքն է ընդունակ իր արդարացի պատիժը որոշելու։

— Դուք պետք է ամենուրեք պատմեք, որ արքայազուն իշխան Գնելը կենդանի էր,— հրամայեց նա, հավատալով իր արտաբերած յուրաքանչյուր հնչյունին, խորապես համոզված իր որոշման իրավացիությանը, ատելով ու արհամարհելով սեփական անձը։— Որ նա ստորաբար թյուրիմացության մեջ էր գցել արքային։ Ճողոպրել էր պատժից։ Որ արքան արդարացիորեն ուզում էր պատժել նրան, որովհետև Գնել իշխանը դավ էր նյութում գահին տիրելու համար։ Եվ կավելացնեք, որ ձեր աչքերով տեսաք, թե ինչպես արքան գտավ դավաճան իշխանին և իր ձեռքերով սատկեցրեց նրան։ Ու կասեք, լսո՞ւմ եք, անպայման կասեք, որ արքայի պատժից ոչ ոք չի կարող խուսափել։ Որ նա է աստծո միակ փոխանորդը այս մեղավոր հողի վրա։

— Բայց դու դեռ կենդանի ես, տեր իմ,— իր անկեղծ տարակուսանքը հայտնեց տարեց մուրացկանը, կռահելով, որ Գնել իշխանը հենց սա է որ կա։

— Հիմա...— խոնավ աչքերով ու դողդողացող շրթունքներով խնդրեց Գնելը։— Ժամանակ տվեք մի քիչ... Հիմա, հիմա...

— Իսկ ո՞վ է քեզ սպանելու, տեր իմ։

— Արքան,— առանց տատանվելու պատասխանեց Գնելը, ինքնըստինքյան հասկանալի համարելով դա։ Ապա աչքերը հառեց երկնքին, որն արտակարգ կապույտ էր ու աններելիորեն մեծ, և շշնջաց.— Ես միայն սրանով կարող եմ իմ մեղքը քավել, արքա... Գոնե շնչին չափով ավելացնել քո փառքը...

Եվ ինչո՞ւ կենդանի մնար, ի՞նչ իրավունքով, եթե չկարողացավ հիմնավոր փաստարկներով ու գործնական ապացույցներով ներշնչել արքային՝ իր անժխտելի պիտանիությունը, ընդունակ չեղավ իր մտքերը, որոնք միակ ճշմարիտն էին ու անսխալը, մինչև վերջ ներարկել նրա մեջ, անուժ գտնվեց նրան ամուր կանգնեցնելու իր նախանշած ու հայտ-

նաբերած եզակի ճանապարհի վրա, որը երկիրը կհաներ փակուղուց, կդարձներ միավորված ու հզոր, երջանիկ ու անպարտելի, ի վիճակի չեղավ իր ազդեցության տակ առնել նրան, հարկադրել, որ չչեղվի իր ոչ մի խոսքից, քանի որ ոչ թե փառասիրությունն էր առաջնորդում Գնել իշխանին, այլ արքայի ու երկրի հանդեպ ունեցած անմնացորդ նվիրվածությունը, խորին համոզմունքը իր հայացքների իրավացիության մեջ, և ի՞նչ փառասիրություն, եթե նա չկար, գոյություն չուներ, կենդանի դիակ էր ընդամենը, հրաժարված իր անցյալից, երջանկությունից և ընդհանրապես անձնական կյանքից։ Չկարողացավ թեկուզ համոզել նրան, որ հանուն առասպելի, հանուն հեքիաթի, հանուն երգերի, այսինքն՝ երկրի ապագայի, համաձայնի վերջ տալ իր կյանքին։ Եթե արքան ուժ չի գտնում իր մեջ, ապա Գնելը, ի սեր արքայի, պատրաստ էր նույնիսկ ինքը սպանել նրան։ Երկիրը հեքիաթներն ու առասպելներն են պահում, ոչ թե ճակատամարտերը և անցողիկ հաղթանակներն ու պարտությունները։ Երկիրը պիտի երգեր ունենա, որ անցնում են շուրթից շուրթ, սերնդից սերունդ։ Եվ, վերջապես, երկիրը պետք է ունենա հիշելու արժանի տարելիցներ, որոնք սրբությամբ նշվում են յուրաքանչյուր տարի, վերակենդանացնելով, վերանորոգելով, հավերժական դարձնելով ազգի հիշողությունը։ Չէ, նա չհասավ այդ ամենին, չկարողացավ ստեղծել Տիգրան Մեծի կիսատ մնացած առասպելի շարունակությունը և փոխանցել հաջորդ հայոց արքային, Պապ թագավորին։ Եվ նա պիտի մեռնի, այո՛, պիտի մեռնի իր այդ խոշոր մեղքի համար։

Ո՞վ էր Սամվելը։ Մի երրորդական-չորրորդական դեմք։ Բայց նա ավելի իմաստուն եղավ, քան ծիրանակիր արքան, դարձավ տառապանքներով լի մեր կյանքի միակ պայծառ անձնավորությունը։ Մեր բոլորի անունները մոռացության կմատնվեն, կթաղվեն պատմության փոշիներում, բայց նրա հիշատակը երբեք չի մեռնի։ Որովհետև նա ծնե՛ց իր հեքիաթը։ Երկնեց իր առասպելը։ Հյուսեց իր երգը։ Անմահություն ապահովեց իրեն և ինչ-որ չափով՝ նաև իր ժողովրդին, իսկ ազգի կենսագրությունը նրա պես մարդիկ են ստեղծում, ոչ թե՝ իմ ու Արշակի։ Ուրեմն, չի փոխվի վճիռը։ Փառք երկնա-

վորին, որ չի փոխվի։ Եվ մահը կմնա որպես մեր հանցանքների միակ արժանի պատասխան։

Նա նկատեց, որ փլատակների ու մոխիրների մեջ մի ծաղիկ էր հրաշքով կենդանի մնացել։ Ամբողջ կյանքում անտարբեր էր անցել ծաղիկների կողքով, չէր զգացել նրանց հոտը ու չէր տեսել նրանց գեղեցկությունը։ Համարել էր տղամարդուն անվայել հակում։ Բայց հիմա կռացավ, պոկեց գետնից ու մահվան մեծագույն ճշմարտության առաջ չամաչեց դյուրազգայուն ու քնքուշ լինելուց։ Սակայն հոտ չքաշեց, պարզապես չգիտեր, որ պետք է այդպես վարվել։ Դրեց գոտու տակ։ Հետո բաց արեց քսակը, հանեց դրամները և հավասարապես բաշխեց մուրացկաններին։

Որքան պինդ էր քարը, որքան փխրուն էր հողը, որքան կապույտ էր երկինքը, որքան մահաբեր էր սուրը, որքան սառն էր ջուրը, որքան այրող էր կրակը, որքան բարձր էին Թոնդուրեկն ու Եղջերասարը, որքան մոտիկ էր այս ավերված տունը և որքան հեռու՝ այն մյուսը...

Ահա այն անառարկելի ու սուրբ ճշմարտությունները, ապրելու այն ուշացած հաճույքը, որ նա հասկացավ և զգաց կյանքի ու մահվան սահմանագծին։ Եվ նա մտովի հրաժեշտ տվեց շատ որոշակի և շատ ստույգ բաների. պնդությանն ու փխրունությանը, բարձրությանն ու ցածրությանը, մոտիկությանն ու հեռավորությանը... Որովհետև նույնքան ստույգ ու որոշակի էր իր բաժանումն այդ ամենից։

— Ես կմեռնեմ այն ժայռերի մոտ,— հանկարծ, գործնական և չոր, նա դիմեց մուրացկաններին։— Ուշադիր նայեք... Լավ հիշեցեք... Որպեսզի չխառնվեմ մյուս դիակներին... Եվ երբ վերադառնաք, հեշտությամբ ջոկեք ինձ... Ով ձեր խոսքին չհավատաց, կբերեք, ցույց կտաք իմ դիակը... Նախարարներն անպայման ինձ կճանաչեն...

Նա մեկ առ մեկ գրկեց բոլոր մուրացկաններին, ամուր սեղմեց կրծքին և արագ հեռացավ դեպի ժայռերը...

Մուրացկանները, օգտվելով կարճատև դադարից, անցան իրենց գործին։ Դիակների վրայից սկսեցին հավաքել այն ամենն, ինչ կարող էր պիտանի լինել իրենց։ Կապոցները

լցվեցին կոշիկներով, գոտիներով, գդակներով, ուլունքներով, ապարոշներով, վարսակալներով... Խուճապ և շտապողականություն չկար նրանց շարժումների մեջ, այսինքն, չկար այն գիտակցությունը, թե վատ բան են անում։ Ոչ մեկը մտադիր չէր գողանի պահելու իր արարքը։ Որովհետև աշխարհի երեսին ամեն ոք իր աշխատանքն ունի ու իր մասնագիտությունը, որ ասված է բաժին տվել նրան։

— Սրա գրպանում հաց կա,— ուրախացավ մի կին և դագարեցնելով փնտրտուքը, նստեց մի քարի վրա ու սկսեց ախորժակով ուտել։

Միակ մուրացկանը, որ երևի ավագության իրավունքով չէր մասնակցում այդ գործին, տարեցն էր։ Նա նայում էր ժայռերի կողմը ու համբերությամբ սպասում։ Նա անպայման կվերադառնա ու կկատարի իշխանի խնդրանքը, թեև տարօրինակ էր և նույնիսկ անընդունելի, որ ողորմության դիմաց ծառայություն պահանջեն։ Ստացվում է, որ դա վարձատրություն էր, ոչ թե ողորմություն, մի բան, որ անպատվաբեր էր ամեն տեսակ պարտավորություններից ազատ ու ինքնազլուխ մուրացկանների համար։ Չլինի՞ թե շատ էր ծերացել, և այս թուլությունը առաջին նախանշանն էր իր անկարողության։ Նա կորցրել էր նախկին դիմացկունությունը, շուտ էր հոգնում, դժվարությամբ էր վերելքներ բարձրանում, ծանր էր շնչում, հանգամանքներ, որոնք հակացուցական են ամեն մի մուրացկանի համար։ Նա վստահ էր, որ եթե առաջարկի վերադառնալ ու կատարել իշխանի խնդրանքը, ընկերները կհամաձայնեն, որ նա խախտում է մուրացիկության դարավոր օրենքները ու գլխի կընկնեն, որ ժամանակն է նրան զրկելու ավագության իրավունքից։

— Այս մարդը վերջացրեց իր գործը,— ասաց նա, ափսոսալով, որ երևի ստիպված կլինի դժվել իր խաստումը։

Մուրացիկները հավաքեցին իրենց ունեցվածքը և շտապեցին հեռանալ մեռած քաղաքից։

Նրանք փնտրում էին խաղաղ վայրեր, որոնց տարածությունը օրըստօրե նեղանում էր ու փոքրանում։

Արշակավանը, գեռ տասը տարեկան չդարձած, վերացավ աշխարհի երեսից։ Արևելքի և արևմուտքի խաչմերուկներում, Տրապիզոնից Մասիսի ստորոտով մինչև Պարսկաստան ընկած ճանապարհին, Հովիտ կոչված Կոզ գավառում այդպիսի քաղաք այլևս գոյություն չուներ։

Նախարարների հրճվանքին չափ ու սահման չկար։ Բոլորն էլ կարծես հարբած լինեին ուրախությունից։ Սան էին գալիս գեռնին հավասարված երբեմնի քաղաքում ու մեծագույն բավականությամբ դիտում իրենց փառավոր հաղթության պտուղները։

Սա ուրիշ տեսակ հաղթանակ էր, որի համար բոլոր ազգերի ու տերությունների հպատակները, տեր թե ծառա, պիտի շնորհավարտ լինեին իրենց։ Այսուհետև աշխարհն ու կյանքը կդառնան առաջվա պես պարզ ու հասկանալի, ամեն մարդ կիմանա, թե ով ինչ է անելու, աստծո սահմանած կարգերը նորից ուժի մեջ կմտնեն, և կվերականգնվի հավասարակշռության օրենքը, մի կողմում՝ տերերը, մյուսում՝ ծառաները։ Եթե մեկը մտածում է, մնացածներն այլևս կարիք չեն ունենա նույն բանն անելու։ Նա կմտածի բոլորի փոխարեն։ Լիովին բավական է, որ միայն մեկը հասու լինի ճշմարտությանը, իսկ մյուսներն իրենց գործերով զբաղվեն։ Պարտականությունների ճիշտ բաշխում է պետք։ Ի՞նչ կստացվի, եթե ոչ տեր գոյություն ունենար, ոչ էլ ծառա։ Կամ թե չէ՝ մարդը միաժամանակ լինի և՛ տեր, և՛ ծառա։ Այս անբնական վիճակին չեն դիմանա ոչ միայն իշխանները, այլև շինականները։ Օրերից մի օր նրանք կընդվզեն ու կպահանջեն, որ տերերը տիրություն անեն։ Որովհետև եթե մեկը կարող է իշխելու իր իրավունքը պաշտպանել, ապա մյուսը, նույն հաջողությամբ, կարող է իշխվելու՞ իրավունքը պնդել։ Կարևորը իրավունք ունենալն է, և ոչ թե տեր կամ ծառա լինելու հանգամանքը։ Արքայի ճակատագրական սխալն այն էր, որ նա, վերացնելով այդ հավերժական բաժանումը, մարդկանց փաստորեն զրկեց իրենց գլխավոր հարստությունից՝ իրավունքից։

— Այս պատը կանգուն է դեռ,— զայրացավ սիրուն Մերուժանը, որը, ի տարբերություն պաշարման ընթացքում նույն զրկանքները կրած մյուս իշխանների, շողում էր մաքրությունից ու պճնասիրությունից, որոնք ոչ թե թուլության նշան էին, այլ երկաթյա կարգապահության։— Ինչո՞ւ է այդպես առողջ ցցված։ Ջասացի՞ քարը քարին չթողնեք։

Նա երբեք չէր կեղծել, երբ ասում էր, թե վախենում է դավաճանությունից։ Բոլորովին հեշտ բան չէր արքային լքելն ու թշնամու հետ դաշնակցելը։ Բայց նա վստահ էր, որ արքա՞ն իրեն ստիպեց դիմելու այդ քայլին։ Նա չուզեց լսել բանականության ձայնը ու կողմնորոշվել դեպի երկու հզոր հարևաններից մեկնումեկը։ Հույսը դրեց իր նվազ ուժերի վրա։ Պարզվեց, որ շինականը պիտի փրկի երկիրը, այսինքն, արքան խառնեց ամեն ինչ, ստեղծեց անբնական ու շփոթ մի վիճակ, որովհետև շինականը ոչ թե փրկել, այլ միայն կերակրել կարող էր երկիրը։ Ու երբ մեղավորը գտնված էր, ու նրա հանցանքը բոլոր կողմերից ապացուցված, Մերուժանն արդեն հանգիստ էր ու այլևս խղճի խայթ չէր զգում։

Երկիրը միայն ինքը կարող էր փրկել կործանումից։ Ինչո՞ւ կեղծ համեստություն անել ու բացահայտորեն չխոստովանել այդ։ Նա իր նպատակին կհասնի հենց թշնամու օգնությամբ։ Ո՞վ է ասում, թե պարսիկը թշնամի չէ։ Բայց ո՞վ է ասում նաև, որ թշնամուն օգտագործելը պակաս հեռատեսություն է ու խորամանկություն, քան Արշակավան կառուցելը։ Նա պարսից թագավորի ձեռքից կստանա Հայաստանի թագը և նոր միայն ցույց կտա, թե ինչի է ընդունակ ինքը։ Ի՞նչ արժեք ունի հավատուրացությունը, եթե խոսքը վերաբերում է ավելի էական բաների, ապրելուն ու մեռնելուն։ Նա դավաճան կհամարվի միայն այն դեպքում, եթե ձախողվեն իր ծրագրերը։ Այն ժամանակ ոչ ոք չի ուզենա լսել, թե ինչ ազնիվ մղումներից էր նա ծավալել իր գործունեությունը։ Իսկ եթե գլուխ բերի ծրագրերը, ոչ մեկի մտքով չի անցնի այպանել նրան։ Դա է աշխարհի օրենքը։ Հաղթողին սիրում են, պարտվածին՝ ատում։

— Եթե իմանամ, որ որևէ մեկը փորձել է խղճահարու-

թյունից թեկուզ մի երեխայի կյանք փրկել,— սպառնում էր Արշարունիքի և Շիրակի տեր Ներսես Կամսարականը,— երդվում եմ, որ նա չի պրծնի իմ սրի հարվածից։

— Բռնագրավված մթերքը ոչնչացնե՛լ,— հրամայում էր Արտազի Պարգև իշխանը, որը, արքայի հասցրած վիրավորանքից խոցված, անցել էր դավաճանների կողմը և Արշակավանի ամենակատաղի պաշտպաններից՝ դարձել նրա ամենաեռանդուն թշնամիներից մեկը։— Ամեն մի պատառից մի նոր հիշատակ կծնվի... Վառե՛լ, մոխրի՛ վերածել...

— Այս քաղաքի գանձերն էլ պետք չեն,— իր հավատարմությունն էր ճգնում ապացուցել Արշակավանի նախկին կառավարիչ Վարազ Գնունին, որը նոր պաշտոն էր ակնկալում հաղթողներից։— Ով հանդգնի թեկուզ մի չնչին բան յուրացնել, կարժանանա ամենածանր պատիժների... Ոչ մի բան չպիտի հետագայում մասունք դառնա...

— Կոտրե՛լ ջրի խողովակները,— համերաշխորեն նրանց ձայնակցում էին մյուս նախարարները։— Առուների հունը փոխե՛լ... Ոչնչացնե՛լ ցանքերը... Ոչ մի տեղ կանաչ գույն չտեսնի մարդու աչքը... Այս հողը պիտի անջրդի անապատ մնա հավիտյան...

Եվ վախից ու ատելությունից նորից էին սպանում մի անգամ արդեն մեռած քաղաքը։ Կյանքի ամենաչնչին արտահայտությունը, քարի վրա մնացած քարը, ոչնչացնում էին տեղնուտեղը։ Եթե որևէ առարկա դեռևս ինչ-որ չափով պահպանում էր իր ձևը կամ, ասենք, կիսաջարդված էր ու թեկուզ մի մանրամասնով ակնարկում էր իր նախկին ամբողջականությունը, իսկույն ջարդուփշուր էր արվում։ Փլատակները, որոնք նույնպես նախկին կենդանության հիշողությունն էին, զինվորները գիշեր-ցերեկ քանդում էին։ Ավերակներն էին քանդում և հավասարեցնում հողին։ Մի ահավոր աննպատակ աշխատանք էր ծավալվել չորս կողմը։ Եվ այդ աշխատանքը է՛լ ավելի անմիտ ու անիմաստ էր դառնում, երբ արվում էր եռանդով ու ջանասիրությամբ։

Մարդկանց մասին խոսք անգամ չէր կարող լինել։ Արշակավանցի այլևս գոյություն չուներ։ Քաղաքում սփռված հազարավոր դիակները լցնում էին նախկին պարիսպների

շուրջը գոտևորված փոսի մեջ, և այդ ընդհանուր գերեզմանում թաղում բոլորին։

Իսկ եթե որևէ արշակավանցի հրաշքով փախել էր ու ապաստան գտել մի այլ տեղում, նախարարները չափազանց մեծ վարձատրություն էին խոստանում մատնիչներին։

Եվ մատնությունը կամաց-կամաց նորից գլուխ էր բարձրացնում։ Փախստականները հանձնվում էին հաղթողներին ու կենդանի-կենդանի թաղվում իրենց համաքաղաքացիների հետ, որոնց մեծագույն առավելությունը, ինչպես պարզվեց, մեռած լինելն էր։

Բայց վրեժի ամենաքաղցր հատուցումը և իրենց մեջ տարիներով կուտակված թույնն ու մաղձը թափելու լավագույն հնարավորությունը նախարարներն ստացան ոչ այնքան հազարաժորների, որքան մի հոգու մահով։ Դա խեղճուկրակ մի մարդ էր, ոչ աղքատ, ոչ հարուստ, ոչ լավ հագնված, ոչ էլ վատ, մեծ ընտանիքի տեր, հոգսերի ու գործերի մեջ թաղված։ Նա վաղուց է, ինչ ոչինչ չէր հասկանում աշխարհից։ Ու երբ նրան պակեցին տնից, կարեցին առօրյա աշխատանքից, կապկպեցին ու տեղափոխեցին հեռավոր Արշակավան, ամեն ինչ է՛լ ավելի խճճվեց նրա ուղեղում։

— Ա՜, վերջապես բռնվեցիր,— հրճվանքից խենթացավ Մերուժան Ալծրունին և մեծագույն ոգևորությամբ ու հանդիսավորությամբ դիմեց իր գործընկերներին.— Սա՛ է գլխավոր մեղավորը... Ամենախոշոր հանցագործը... Արքայի ամենամտերիմ ընկերը... Սրա հետ էր արքան ուզում ճատրակ խաղալ... Սա՛ է բոլոր չարիքների հեղինակը... Այս մեծ սպանդի հրահրիչը... Սրա հետ էր արքան լուծում ամեն տեսակի հարցերը...

Եվ նախարարները, մոռացած դիրք ու կոչում, շրջապատել էին կապկպված գերուն և լուտանքներ էին թափում նրա գլխին, փողոցային հայհոյանքներ շպրտում նրա երեսին, պատռավ կանանց պես անիծում, թքում, մազերից քաշում... Իսկ Եփրեմ աղատի պատկերացումներն աշխարհի մասին է՛լ ավելի էին խառնվում ու խճճվում։ Քիչ էր մնում, որ նա մի երկու բան պատմեր իր հոգսերից, որովհետև այդ հոգսերն էին իր անմեղության միակ ապացույցը։ Մազ էր

մնում, որ խնդրեր կանչել իր ազգաներին ու ազգիկներին, որոնցից յուրաքանչյուրը փեղեցկության, ազնվության ու աշխատասիրության մի տիպար էր, որովհետև նրանց գոյությունն էր այս հարցերի հետ ոչ մի առնչություն չունենալու իր միակ վկայությունը։ Եվ պատմեր, անվերջ պատմեր, թե արքայի հետ ճատրակ խաղալու ազատությունը որքան ծանր էր նստում իր ուսերին, քանի-քանի գիշերներ էր նա լուսացրել նրա ընդունարանում, որքան սրտատրոփ պահեր էր ապրել սպասման մաշող ու մաշվող ժամերին, որոնք իզուր են անցել ու իրենց անիմաստությամբ է՛լ ավելի տանջահար արել իրեն։ Ու թե ինչպես իրենց ընկերությունը և՛ թանկ էր իր համար, և՛ ուժերից վեր, և՛ ձգող, և՛ ճնշող։ Բայց որովհետև ամեն ինչ այնքան էր գլխիվայր շրջվել նրա կյանքում, որ նա լեզուն կծեց ու վախեցավ, թե գուցե իրեն պատժեն... արքայի հասցեին վիրավորական բաներ ասելու համար։

— Մենք քեզ համար կհնարենք աշխարհի ամենածանր պատիժը,— խոստացավ Մերուժան Արծրունին և նույն հանդիսավորությամբ հայտարարեց բոլորին.— Արքան այլևս երբեք ճատրակ չի խաղա Եփրեմ ազատի հետ...

Ու Եփրեմը, այդպես էլ ոչինչ չհասկացած, իր հետ ոչ մի կապ չունեցող ջրապտույտի մեջ ակամա ընկած, դեմքին տանջալի մի հարցական, զինվորների ուղեկցությամբ ի ծխացող ավերակների միջով գնաց բարեխղճորեն կրելու աշխարհի ամենածանր պատիժը...

Ու նախարարները նոր միայն իրենց հաղթանակը վերջնական համարեցին։



Պատմիչն ասում է.

«Իսկ հայոց նախարարները, հավաքվելով, գիմեցին թագավորական դատաստանի Արշակավանի վրա, որով կատորեցին աղամարդկանց և կանանց, բացի ծծկեր երեխաներից, որովհետև նրանք յուրաքանչյուրը կատաղած էին իրենց ծառաների և հանցավորների դեմ։ Այս բանը թեպետ իմացավ

Մեծ Ներսեսը, բայց չկարողացավ կոտորածից առաջ հասնել, այլ հասավ վերջում, երբ կոտորվածների երեխաներին բաժանելով ուզում էին գերի տանել, ինչպես հեռավոր թշնամիների երեխաների։ Մեծ Ներսեսը նրանց ազատեց և հրամայեց քթոցներով կրել մի գոմ, նրանց համար սնուցիչներ և սնունդ նշանակեց։ Հետո նրանք մեծանալով ավան կազմեցին, որ այս պատճառով կոչվեց Որթք (քթոցներ)։

Գլուխ երեսուներորդ

Շապուհի երկրորդ հրավերը ևս արքան կարող էր անարձագանք թողնել, ինչպես որ վարվեց առաջին դեպքում։ Բայց Վրաստանից վերադառնալուց հետո նա զգաց, որ սկսել էր խոր ճգնաժամ ապրել։ Ըստ որում, նման եզրակացության հանգելու ոչ մի հիմք արտաքինից կարծես թե չկար։ Վրաց Միրիան թագավորը նրան ոչ միայն ապաստան էր տվել, այլև տրամադրել էր բավական պատկառելի քանակությամբ զորք, որի օգնությամբ արքան հաշվեհարդար էր տեսնում դավաճան նախարարների հետ։ Առավել ևս տարօրինակ թվաց, որ հաջողությունից թեավորված արքան հանկարծ ցանկություն հայտնեց հաշտվելու ախոյանների հետ, բացի, անշուշտ, հավատուրացներից։ Շատերը նրա այդ քայլը մեկնաբանեցին որպես հեռատեսություն, որովհետև եթե նա նույնիսկ լիակատար պարտության մատներ նրանց, մնալու էր բացարձակ մենակ։ Իսկ նրանք, լավ թե վատ, իր նախարարներն էին։ Ըստ երևույթին, նրա փափագը շատ էր մեծ ու անհետաձգելի, այլապես ինչո՞վ բացատրել, որ միջնորդության համար նա ընտրեց հայոց նախկին կաթողիկոս Ներսեսի թեկնածությունը։ Նոր կաթողիկոսը՝ Զունակը, որ նրա դրածոն էր, ոչ մի հեղինակություն չէր վայելում երկրում, մի բան, որ միանգամայն արքայի սրտովն էր։

Ներսեսը հեշտությամբ համաձայնություն տվեց ու անմիջապես ներկայացավ արքային։ Բուռն գործունեություն ծա-

վալելու տենչը դեռ վերջնականապես չէր մեռել նրա հոգում, և նա պատրաստ էր ներելու թեկուզ իր ամենամեծ հակառակորդին, գնալու ամեն տեսակ զիջումների, միայն թե հնարավորություն ունենար ծախսելու ներսում կուտակված անհատնում եռանդը, որ խեղդում էր նրան և փորձանք դառնում այն գյուղի գլխին, որտեղ նա ապրում էր Վրիկի ու նրա ընտանիքի հետ միասին։ Բոլոր համագյուղացիները, նրա համառ ու հետևողական ջանքերով, հարկադրված էին երջանիկ լինել, քանի որ մարդն ընդհանրապես ծնված է բախտավոր ապրելու համար։ Երջանկության իր պատկերացումները նա բռնի ուժով թելադրում էր նրանց և անասելի բավականություն ստանում՝ իր քրտնաջան ու անշահախնդիր աշխատանքի պտուղները տեսնելով։ Ու ինքն էլ էր իրեն երջանիկ զգում, իր չարչարանքների դիմաց չպահանջելով ոչ երախտագիտություն, ոչ էլ մեծարում։ Ուր իմանար, թե գյուղն ինչպես ազատ շունչ քաշեց, երբ նա, գործունեության նոր հորիզոնների հոտն առած, ճամփա ընկավ դեպի Արտաշատ։ Բոլորը, թե՛ փոքր, թե՛ մեծ, ցնծում էին հրճվանքից և իրենց ուսերից թոթափում ուսուցչապետի պատգամներն ու հրահանգները։

Մարդկային զսպված արատները, ուրիշ դեպքում ամենօրյա արտահայտության հնարավորություն ունենալով, գուցե և որակ չկազմեին, բայց քանի որ արհեստականորեն սանձված էին Ներսեսի կողմից, միանգամից պայթեցին ու առատորեն հորդեցին նրա բացակայության օրոք։ Եվ գյուղը, որտեղ միշտ համերաշխություն ու խաղաղություն էր տիրել, վկա եղավ բազմաթիվ գողությունների, առևանգումների և նույնիսկ սպանության...

Ներսեսն այնպիսի անքեն և բարեհոժար տեսքով ներկայացավ արքային, որ նա շատ զարմացավ։ Մինչդեռ պատրաստվել էր նրա սիրտն առնելու, եթե հարկ լիներ, նույնիսկ ափսոսանք հայտնելու իրենց մեջ ծագած թյուրիմացության համար, այսինքն, փաստորեն, արքային պատշաճող սահմաններում, ներողություն խնդրելու նրանից։ Բայց Ներսեսը միտք էլ չուներ այդպիսի բաներ ակնկալելու։ Նա զգում էր գործելու անսպառ կորով, որին պետք էր ժամ առաջ հա-

գուրդ տալ։ Գյուղը փոքր էր, նա այնտեղ շնչահեղձ էր լինում, անհրաժեշտ էր հնարավորին չափ լայն ասպարեզ, մեծ հաշիվներ ու կրքեր, խոշոր խնդիրներ ու բախումներ։ Եվ նա, արքայի առաջարկը լսելուն պես, խոկույն համաձայնություն տվեց և անցավ գործի։ Արքան չկարողացավ թաքցնել հիացմունքը ու անկեղծորեն ափսոսաց, որ այսպիսի մարդու նախանձելի ու հսկայական եռանդը, որ ընդունակ էր սարեր շուռ տալ, ոչ միայն պետք չէր եկել, այլև խանգարել էր իրեն։ Ոչ մի կերպ գլուխ չհանեց այն առեղծվածից, թե ինչու եռանդաշատ մարդիկ սովորաբար չեն կարողանում միավորվել, իրար գումարել իրենց ուժերը ու հրաշքներ գործել, ընդհակառակը, նրանցից յուրաքանչյուրը, որպես օրենք, գոյություն ունի միայն իր համար ու խաչընդոտ է դառնում մյուսին, այսինքն, նրանք փաստորեն չեզոքացնում են իրար, ու ի վերջո ստացվում է, որ ամեն ինչ պետք է սկզբից սկսել։ Նույնը չեղա՞վ իր, Ներսեսի ու Մերուժանի դեպքում, երեք թափով ու ավյունով լի մարդ ու երեք բոլորովին տարբեր ուղղություն, միմյանց հակասող ու բացառող։

Ներսեսը, փեշերը հավաքած, դես-դեն ընկավ, ունեցավ տասնյակ հանդիպումներ, անդադար լեզու թափեց բոլորի հետ, դիմեց ամեն միջոցի, հարկ եղած դեպքում նույնիսկ աղերսեց, ու նրա հաստատակամ ջանքերն ի վերջո պսակվեցին հաջողությամբ։ Նախարարները, որոնք առանց այդ էլ մեծ կորուստներ էին տվել ճակատամարտերում, ստիպված համաձայնեցին, պայմանով, որ հաշտությունը պատվավոր լինի երկու կողմերի համար։

Արքան ընդունելությունը նշանակեց հայոց հնագույն մայրաքաղաք Արմավիրի լքված պալատում։ Պայմանավորված օրը Երասխաձորի հին ճանապարհը լցվեց ձիավորներով, որոնք երկրի բոլոր կողմերից հանդիսավորությամբ գալիս էին դեպի հաշտության ժամադրավայրը։

Պալատը, որ գտնվում էր Սոսյաց անտառի բացատներից մեկում, անձրևներից ու քամիներից ծեփաթափ էր եղել, մերկացել էին աղյուսե պատերը ու անկյուններում տեղ տվել սարդոստայններին։ Պալատի շուրջը կառուցված պարիսպը գրեթե քայքայվել էր և ավերակների վերածվել, իսկ անտեր

ու անխնամ շրջակայքը ծածկվել էր վայրի բույսերով ու անհոտ ծաղիկներով։

Նախարարները զարմանքով էին դիտում փլատակների տպավորություն թողնող պալատը ու տարակուսում, թե ինչի՞ց դրդված արքան ընտրեց հատկապես այս վայրը։

Ինչ-որ ծանր ու ճնշող բան կար այս ընդհանուր լքվածության մեջ, անկելանոցային մի տխրություն ու ծերունական ցրտություն։ Մի ժամանակ ինչե՞ր ասես չեն տեսել պալատի պատերը, թեկուզ՝ պատերին մնացած այս որմնանկարների պատառիկները, որքա՞ն շատ մարդկային կյանքեր են մաշվել այս բարձրադիր առաստաղների տակ, ու հիմա նրանց ոգիներն են սավառնում օդում։ Երբեմնի շքեղության, փուչ կրքերի, սին հոգսերի և իզուր անցած ապրումների հետքն անգամ այլևս չէր երևում։ Իսկ որ դրանք փուչ էին ու սին՝ վկա այս հսկա գերեզմանատունը, նրա միջանցքներում անարգել սուլող քամին, խոնավության գաղջ հոտը և սրահների անհեթեթ մեծությունն ու դատարկությունը։

Նախարարների տարակուսանքը է՛լ ավելի խորացավ այն մտքից, թե ինչո՞ւ, նման հանգիստավոր մի առիթով, ոչ միայն գոնե մասամբ չէին վերանորոգել պալատը, այլ նույնիսկ հարմարավետության տարրական պայմաններ չէին ստեղծել։ Ոչ նստարան կար, ոչ սեղան, ոչ գորգ։ Գոնե գիմավորողներ լինեին, մի-մի թաս ջուր թափեին ձեռքներին։

Նրանք մռայլվեցին, փոքր խմբերով ցրվեցին պալատի տարբեր անկյունները և, շտապուշակ լռության մեջ, սկսեցին սպասել արքային։

Իսկ արքան ուշանում էր։ Մութը կամաց-կամաց սողոսկեց չորս բոլորը, և պարզվեց, որ ջահեր չկային։ Ուտելու բան ևս չկար։ Բակի ջրհորը վաղուց ցամաքել էր, ու նրա ցեխաածածկ հատակը վխտում էր գորտերով։ Նախարարները հետզհետե է՛լ ավելի ամպոտվեցին, անհամբեր դարձան ու կորցրին իրենց ինքնավստահությունը։

Իսկ երբ ճարահատյալ որոշեցին վերադառնալ, հանկարծ խավարի միջից լսվեց «գա՜վ» մի ավանակ բացականչությունը, և մի ահավոր իրարանցում ընկավ պալատում։ Ոչ ոք չէր

հասկանում, թե ինչ կատարվեց, ինչից պետք էր պաշտպանվել և ում դեմ կռվել։ Ու մինչ գլխի կընկնեին, որ արքայի զինվորներն էին ուխտադրժորեն հարձակվել ու անխտիր կոտորում էին ամենքին, արդեն շատ ուշ էր։ Պալատը շրջապատված էր, ու փախուստի բոլոր ճամփաները փակ էին։ Ձիերի խրխինջն ու մարդկանց ճիչերը խառնվել էին իրար ու կարծես ավելի էին սաստկացնում մթությունը։ Եվ թվում էր, թե այս մղձավանջը ոչ թե որոշակի հասկացության, դավադրության և ուխտադրժության հետևանք էր, ուներ նախապատմություն և նման անսպասելի ավարտ, այլ հենց ինքը խավարն էր ձևավորել ու ծնել իր միջից։ Գիշերը կանցնի, լույսը կծագի, և ծանր երազն ու զառանցանքը կչքանան։ Եվ, իսկապես, առավոտյան արդեն ամեն ինչ խաղաղվել էր, նորից կուսական լռություն էր տիրում ամենուրեք, բայց տարօրինակ է, որ ամբողջ շրջակայքը ծածկվել էր դիակներով։ Եվ պալատը, ի տես այս անթիվ ու անհամար զոհերի, էլ ավելի լքված ու մեռած էր թվում։

Արքան, որ սրտի դողով սպասում էր լուրերի և պատրաստվում տոնելու իր հաղթանակը, մեծ հիասթափություն ապրեց։ Եվ իր անկումն զգաց հենց այն պահից, երբ հայտնեցին, թե նրա հրամանը լիովին կատարված էր։

Առաջ, երբ նա ուրիշի արյամբ կեղտոտում էր ձեռքերը, մխիթարվում էր ոճրի անխուսափելիությամբ, երկրի համընդհանուր շահերի հրամայական պահանջով, ավելին, ինքն էլ էր ինչ-որ չափով զոհ դառնում, վերածվում ողբերգական դեմքի և, հետևաբար, արժանանում համակրանքի ու կարեկցանքի։ Նա կարող էր հանգիստ խղճով ասել, որ մինչև հիմա ոչինչ չէր արել ի շահ իրեն։ Ուրեմն, իր մասնակցությունն ավելի խորհրդանշական էր, քան իրական։

Բայց սա... Սա արդեն վրեժխնդրություն էր։ Ոչ մի կասկած։ Նենգ և ստոր դավադրություն։ Անձնական հաշիվ էր սա, որ չուներ և ոչ մի արդարացում։ Իր մղած վերջին մարտերը ևս սեփական շահերից էին թելադրված։ Նա կռիվ էր տալիս ոչ թե երկրի, այլ ի՛ր թշնամիների դեմ։ Իսկ երբ թշնամին դառնում է միայն քոնը, ուրեմն, դու այլևս անելիք

չունես։ Իրերդ պիտի հավաքես, հրաժեշտ տաս ամենքին, ինչպես նաև ինքդ քեզ, և սուսուփուս ճամփա ընկնես։

Ծրագրեր չկային այլևս։ Մտահղացումներ նույնպես չկային։ Ամեն ինչ ծախսված էր ու սպառված։ Դրանց դիմաց արքան ու սպարապետը կարող էին դնել միայն իրենց անմնացորդ նվիրվածությունը, կույր հավատն ու անձնազոհ քաջությունը։ Բայց մի՞թե նրանք շարքային զինվորներ էին, որ բավարարվեին սոսկ այդ հատկանիշներով։ Հարկավոր էր համարձակ նայել ճշմարտության երեսին և, ի սեր իրենց փառավոր անցյալի, ի սեր այդ անցյալի իմաստավորման, խոստովանել, որ իրենք իրենց գործն արդեն արել, ավարտել էին։ Նոր և թարմ ուժեր էին հարկավոր, որոնք ընդունակ լինեին գաղափարներ ծնելու, ուղի ցույց տալու։ Լավ թե վատ, նրանք անցան իրենց ճանապարհը և հիմա, սեփական սնանկությամբ, կարող էին վնաս պատճառել այն ամենին, ինչին նվիրել էին իրենց ողջ կյանքը։

Գուցե ճիշտ էր Գնելը, որ մարդ պետք է իմանա հեռանալու ճիշտ պահը, իր մեջ ուժ գտնի ասպարեզը ժամանակին զիջելու։

Մեր ու հիվանդ փղերի նման հեռանալ ու մեռնել աչքից հեռու մի տեղ, որովհետև հսկաների մահը կարող է խարխլել ամեն մի կենդանի արարածի հավատը ու մատնել կյանքի ունայնությունը։

Մեզ չվիճակվեց զգալու փառքի ու իշխանության հաճույքը։ Մենք աշխատեցինք օր ու գիշեր, քուն ու դադար չունեցանք, ուրախություն ու վայելք չտեսանք, մեզ բաժին ընկան միայն տառապանքն ու չարչարանքը։ Ուրեմն, ի՞նչ հնք թողնում, որ դեռ աչքներս էլ ետևում մնան։

Պապը, որ փախել ու ապաստանել էր Բյուզանդիայում, արդեն հասուն երիտասարդ է։ Տա աստված, որ իմ տված դասերը զուր անցած չլինեն, և նա ոչ թե ձեռնունայն, այլ մտահղացմամբ գա ու տիրի գահին։ Մուշեղը նույնպես խելահաս պատանի է, ձերբազատված՝ Սամվելի վատ ազդեցությունից։ Տա աստված, որ քո քաջությունն ու տաղանդը փոխանցված լինեն նրան, սպարապետ, և նրանք երկուսով մեր արժանի հաջորդները դառնան։ Մի՞թե մեր տանջանքն

ու տառապանքը գոնե մեր որդիների շնորհիվ չեն հատուցվի։ Դրանք այնքան մեծ էին և այնքան խորը, որ հենց իրենք են ծնում հատուցման անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը։ Եվ մեր որդիները, եթե նույնիսկ անընդունակ լինեն, ստիպված են գերազանցել իրենց հնարավորությունները և, թեկուզ հենց մեր տառապանքների թելադրած տրամաբանությամբ, հատուցել իրենց... քիչ էր մնում ասեի՝ դժբախտ ծնողներին։ Բայց ես դժբախտ չեմ համարում մեզ։ Եթե կուզես իմանալ, մենք երջանիկ ենք ապրել մեր կյանքը։ Մի՞թե լեզուդ կպտտվի հակառակը պնդելու։

... Պարսիկները գրավեցին Արտաշատ մայրաքաղաքը, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Երվանդաշատ, Զարեհավան, Զարիշատ և Վան ամուր ու մեծ քաղաքները, կործանեցին դրանց պարիսպները, փայտաշեն տներն այրեցին, քարաշենները քանդեցին, քարուքանդ արեցին ու հիմնիվեր ավերեցին ամեն ինչ։ Գերի տարան հազարավոր հայերի ու հրեաների, որոնց Հայաստանում էին բնակեցրել Արշակի հեռավոր նախնիները։ Գերիներին հավաքեցին Զարեհավան քաղաքի ավերակներում, և Շապուհը հրաման տվեց՝ բոլոր չափահաս տղամարդկանց փղերի ոտքերի տակ գցել, իսկ կանանց ու երեխաներին սայլերի ցցերի վրա հանել։ Փախած նախարարների ու ազատների կանանց բանտարկեցին տարբեր բերդերում, պայման դնելով, որ եթե նրանց ամուսինները չվերադառնան ու չծառայեն արքայից արքային, նրանք չարաչար մահով կսպանվեն։ Այնուհետև սկսեցին քանդել եկեղեցիները ու բռնությամբ ստիպել մարդկանց, որ մազդեզական կրոնն ընդունեն։ Եվ ամենուրեք սնկերի նման բուսան ատրուշանները, ու կրակի հավատը դարձավ պարտադիր։

Արքան ու սպարապետը, մի վայրից անընդհատ մյուսը փախչելով, իրենց իսկ երկրում փախստական դարձած, ամեն օր լսում էին այդ ծանր ու սահմռկեցուցիչ լուրերը, լո՜ւմ, լո՜ւմ և լռությամբ խոստովանում իրենց անզորությունը։

Բայց մի օր Վասակն այլևս չդիմացավ, առավոտ կանուխ, առանց իմաց տալու, մտավ արքայի համենատ ու անշուք կացարանը, որը հայտնի չէր, թե քանի օր էր նրան

պատկանելու, և հենց դռան շեմից, կարծես մի մեծ հայտնություն արած, ասաց նրան.

— Շապուհը քեզ աղ է ուղարկել... Եվ կնքել վարազագիր մատանիով...

Այսինքն... Վարազագիր մատանին մատի վրա կրելու մի օղ էր, որի մեջ ագուցված էր թանկագին մի քար՝ վրան փորագրված տիրոջ անունը և պարսից թագավորների զինանշանը՝ վարազը, և որը ծառայում էր իբրև կնիք։ Այդ մատանիով կնքված աղը ամենասրբազան և անսուտ երդման նշանն էր։

Բայց մի՞թե կնքված աղը նոր էին ստացել և մի՞թե բազմիցս չէին խոսել այդ մասին, խելք խելքի տված չէին քննարկել իրադրությունը, չէին հայհոյել անաստված Շապուհի նենգ խորամանկությունը, չէին տեսել նրա լարած ծուղակը ու չէին որոշել մերժելու նրա հրավերը։

Արքան և սպարապետը երկար նայեցին իրար, կարծես փոխադարձաբար զննում և փորձում էին կարդալ մեկը մյուսի մտքերը։ Նրանց հայացքներում մի պահ նույնիսկ թշնամանք երևաց։ Ըստ երևույթին, լրիվ հասկացել էին իրար և այլևս հնար չունեին որևէ բան թաքցնելու։ Եվ հենց այդ պարզությունը, երբ ամեն ինչ ասես ափի մեջ է դրված, նրանք չէին կարողանում ներել միմյանց։ Որովհետև մի հոգու համար ավելի հեշտ էր ճշմարտության երեսին չնայել, քան՝ երկուսի։ Ու նրանք խանգարում էին իրարու, մեկը մյուսի դեմքին տեսնում էր այն, ինչ ինքը խնամքով թաքցնում էր իրենից։ Ու երևի մտածում էին բաժանվել, գողունի հեռանալ, բեռ չդառնալ իրար վրա, որպեսզի մեկնումեկը հանկարծ բարձրաձայն չասեր այն, ինչ մյուսն էր մտածում։

Հանկարծ, արքան ու սպարապետը, մեկը՝ բարձրահասակ ու հաղթանդամ, մյուսը՝ կարճ ոտքերով ու կարճ ձեռքերով, ամուր գրկախառնվեցին։ Ու թեև մինչև Տիզբոն դեռ երկար ճանապարհ պիտի կտրեին միասին, դեռ շատ փորձություններ պիտի կրեին իրար հետ, բայց, չգիտես ինչու, նախընտրեցին միմյանց հրաժեշտ տալ նախօրոք։ Որպես արքա ու սպարապետ։ Եվ անպայման այստեղ, հայրենիքում։

✦✦✦

Երկրի փաստական իշխանությունն անցավ Փառանձեմ թագուհու ձեռքը։ Նա Մուշեղ սպարապետին ճանապարհեց Բյուզանդիա, հունաց կայսրին համոզելու, որ օգնական զորք տա Պապին և նրան Հայաստան ուղարկի թագավորելու։ Ներսեսը, որ Արմավիրի կոտորածից հետո հուսախաբվել էր և պատրաստվում էր գյուղ վերադառնալ, թագուհու խնդրանքով միացավ սպարապետի պատվիրակությանը։ Նա մեծ հույսեր ուներ, որ Պապի թագավորության օրոք նորից կստանա կաթողիկոսության աստիճանը ու տեր կկանգնի քայքայվող եկեղեցուն, մարդասիրական ու լուսավորչական իր առաքելությունը կիսատ չի մնա ու մինչև վերջ կիրագործվի։ Իսկ Փառանձեմը հավաքեց մոտ տասնմեկ հազար ազատների և, պարսից զորքից խույս տալով, ամրացավ Արտագերս բերդում։

Արտագերսը գտնվում էր Երասխաձորում, Արաքս գետի ձախ ափին, լեռան լանջին և ուներ եռաշարք ատամներով պարիսպներ ու բուրգաձև աշտարակներ։ Հայաստանի ամենաանառիկ ու անմատչելի բերդերից մեկն էր, որ երեք կողմերից շրջապատված էր թեք ու անանցանելի ժայռերով, իսկ չորրորդ կողմում Արաքսի խոր և մութ անդունդն էր։ Բերդում երկու գետնուղի կար, որոնցից մեկը դուրս էր գալիս սարի վրա, իսկ մյուսն իջնում էր մինչև ձորը, որտեղից տիկերով ջուր էին բերում բնակիչները։

Պարիսպների առաջին գոտում ապրում էին զինվորները, երկրորդում, որ աչքի էր ընկնում արհեստանոցների ու թոնրատների առատությամբ, ժողովուրդն էր բնակվում, իսկ երրորդում՝ թագուհին և իշխանական գերդաստանները։

Պարսիկները շուտով պաշարեցին Արտագերսը, բանակ զարկեցին ձորերի շուրջը և մնացին տասնմեկ ամիս։ Սակայն բերդը չկարողացան զենքի ուժով գրավել։

Մերուժան Արծրունին, որն իր արարքների արդարացումը գտնելուց հետո բոլորովին սանձարձակվել էր ու դրանով իսկ իմաստազրկել իր իսկ արդարացումը, Փառանձեմին վախեցնելու համար դիմեց մի չլսված ոճրագործության։ Նա հրա-

մայեց, որ Ցոռպի Վան քաղաքի միջնաբերդում բանտարկված Համազասպուհին, որ ծնունդն էր Մամիկոնյան զարմի և Բյուզանդիա փախած Ռշտունյաց գավառի տիրոջ՝ Գարեգինի կինը, մազդեզական կրոնն ընդունի, այլապես նրան կկախի պարսպի աշտարակից։ Համազասպուհին, ինչպես և ենթադրում էր Մերուժանը, հանձն չառավ հավատափոխությունը։ Նրան հանեցին ժայռի բարձր կատարին գտնվող աշտարակը, որ նայում էր ծովակի կողմը, լրիվ մերկացրին և, ոտքերին կապ գցելով, գլխիվայր կախեցին։ Համազասպուհին մեռավ, բայց ծյունի պես ճերմակ նրա մարմինը այդպես կախված մնաց աշտարակից՝ ի տես բոլոր անցորդների։ Սարսափը և կնոջ մարմնի կուրացուցիչ սպիտակությունից ծնվող հիացմունքը խառնվում էին մարդկանց սրտերում, պայքարում առաջնության համար, ու ի վերջո հաղթում էր հիացմունքը։ Համազասպուհու պառավ դայակը, մի կարճ պարեգոտ հագած, օր ու գիշեր կանգնած սպասում էր բարձրաբերձ ժայռի տակ, մինչև որ սանիկի մարմինն սկսեց քայքայվել։ Վերևից ընկնում էին նրա ոսկորները, որոնք նա հավաքում էր փեշի մեջ, որպեսզի տիրուհուն անգերեզման չթողնի։

Փառանձեմն անդրդվելի մնաց։ Նա գիտեր, որ հիմա երկրի բախտը իրեն էր հանձնված, երբեմնի թույլ ու անպաշտպան արարածին։ Այդ ե՞րբ էր։ Ու ե՞րբ էր արդյոք։ Նա ոչ միայն չէր նախանձում իր հեռավոր նմանակին, այլև ամբողջ հոգով արհամարհում էր նաև Գնելի կնոջը, ամուսնու կորստյան դիմաց հատուցում ստանալու նրա ձգտումները, նրա փառատենչիկ նկրտումները։ Նա իրեն ճանաչում էր միայն որպես մայր ու որպես թագավորի կին, այն էլ՝ մի փոքր գիրացած ու մի քիչ էլ տարիքն առած վիճակում... Իր կյանքի մնացած մասը չէր ընդունում։ Եվ զգում էր, որ յուրովի սիրում էր Անհուշ բերդում տառապող իր ամուսնուն։ Ափսոս, հազա՞ր ափսոս, որ ժամանակին նեցուկ չկանգնեց արքային, չհասկացավ նրան և նույնիսկ խանգարեց՝ կանացի իր մանր ու ճղճիմ հաշիվներով։ Իսկ երբ տղամարդն ու կինն են դաշինք կնքում, ապա դրա զորության դեմ աշխարհում ոչ մի ուժ չի դիմանա։ Փառանձեմն էր մեղքերը

կքավի այստեղ, Արտագերսում ու, թեև ուշացումով, նույն նիսկ մեծ ու աններելի ուշացումով, կարացուցի, որ ինքն արժանի է Արշակի կինը կոչվելու։

Նա իր հարությանն համար պարտական էր որդուն։ Այդ նա էր, որ մորն ստիպեց մոռանալ իր անձնական կյանքը ու ամբողջովին նվիրվել նրան։ Հակառակ արքունի սովորությանը, թագուհին չհամաձայնեց որդուն հանձնել դայակների գաստիարակությանը և ինքն անձամբ զբաղվեց իր զավակով։ Ինքն էր նրա փխրուն մարմինը գրկում խանձարուրով, դնում մսուրի նման բոլորշի օրոցքի մեջ ու ճոճում... Ինքն էր կերակրում, կուրծք տալիս, լողացնում... Տեսել էր նրա առաջին ինքնուրույն քայլը... Սովորեցրել հունարեն կարդալ ու գրել... Վիրավորվել էր, երբ նա, հասուն տղա դառնալուց հետո, ամոթից թույլ չէր տվել, որ մայրն իրեն լողացնի... Այդ ամոթը երկար ժամանակ չէր ներել նրան... Խանդել էր, զգալով որդու հետաքրքրությունը աղջիկների նկատմամբ... Ու զարմացել, թե ինչու է քաշվում իր գուրգուրանքներն ընդունել... Ոչ միայն մարդկանց ներկայությամբ, մի բան, որ մայրը պատրաստ էր մի կերպ հասկանալու, այլև մենակ եղած ժամանակ...

Ամեն շաբաթ սուրհանդակներ էին գալիս Պապի և Մուշեղ սպարապետի կողմից, սիրտ տալիս հայոց աշխարհի տիկնոջը, թե՝ պինդ կաց, որդիդ գալիս է շուտով և կայսերական գունդ է բերում օգնության, մի քիչ էլ, մի փոքր էլ համբերիր...

Համբերում էր, ի՞նչ պիտի աներ։ Սև ու հասարակ մի զգեստ հագին, զարդերը դեն նետած, նա անընդհատ տաքի վրա էր, շրջում էր բերդում, ոգևորում զինվորներին, անձամբ կապում վիրավորների վերքերը ու խնամում նրանց։ Մասնակցում էր զինվորական խորհուրդներին և, ականջները սրած, աշխատում էր ինչ-որ բան հասկանալ ու օգտակար լինել։

Եվ միայն ուշ գիշերներին, երբ առանց հանվելու պառկում էր կոշտ մահճին, գողունի լաց էր լինում ու սարսափով մտածում, թե ինչ կլինի, եթե հանկարծ հունաց կայսրը, գոթերի հարձակման սպառնալիքից զգուշանալով, չկարողա-

նա Փոքրին Հայաստան ուղարկել։ Ի՞նչ պիտի անի ինքը, ինչպե՞ս պիտի երկիրը ղեկավարի, ինչի՞ց պիտի սկսի, խելքը պիտի հասնի՞ և ուժերը պիտի պատե՞ն արդյոք։

Իսկ Գա՞պը։ Ի՞նչ երաշխիք, թե նա ընդունակ է երկիրը կործանումից փրկելու։ Որքան էլ սիրեր որդուն, այնուամենայնիվ, պարտավոր էր, զգացմունքները մի կողմ թողած, այդ հարցը տալ իրեն։ Հայոց արքաները ժամանակ ու հնարավորություն չունեն ղեխ կյանք վարելու, նրանք աշխատավոր ու սնաղործ արքաներ են, քրտինքն անպակաս է նրանց ճակատից, հոգսը մշտական բույն է դրել նրանց աչքերում։ Արդյոք նա գիտե՞ այս ամենի մասին ու ներքուստ պատրա՞ստ է իր ճակատագիրն ընդունելու։ Եվ կարո՞ղ է պատասխան գտնել այն հարցերին, որ ծնվում են ամեն ժամ ու արքայի կոկորդից բռնում։

Զմոռանաս հորդ, Պապ։ Քո հայրը մեծ մարդ էր։ Քաջ ու առաքինի։ Հպարտացիր նրանով։ Անպայման հպարտացիր։ Երդվում եմ քո ծնունդով, երկունքի իմ սուրբ ցավերով, քո առաջին ճիչով, որ դու ունես այդ իրավունքը։ Այդ ես եմ ասում, Պապ, մի մարդ, որ երբեք կուրորեն սիրահարված չի եղել նրան, ընդհակառակը, երբեմն սխալմամբ ատել է նույնիսկ ու հանիրավի խանգարել։ Ուրեմն, առավել ևս հավատա ինձ ու գնահատիր խոսքերս։ Թող նրա կյանքը պատգամ լինի քեզ։ Թող ապրել սովորեցնի։ Կառուցելով ու տառապելով իմաստնանալ։ Ու եթե քեզ էլ չհասկանան, ինչպես քո հորը, դու էլ ես մենակ մնալու։ Բայց թող մի պահ անգամ դեմքիդ տխրություն չիջնի։ Կհասկանան տասը տարի անց, հարյուր տարի անց, հազար տարի անց, բայց անպայմա՞ն կհասկանան։ Միայն թե արժանի լինես դրանց։ Մնաս բարով, իմ փոքրիկ, իմ որբ արքա։ Փառանձեմը կանխազգում էր, որ այլևս երբեք չի տեսնի որդուն։ Ամիսները ձգվում էին, և հուսահատությունը սողոսկում էր Արտագերսի բոլոր անկյունները։ Պարսիկներն իրենց մտադրությունից ձեռք քաշելու ոչ մի նշան չէին ցուցաբերում ու չէին վերացնում պաշարումը։ Իսկ ընդունված ու փորձված օրենք էր, որ երկու կողմերի համաձայնությունից միշտ շահում էր պաշարողը, և ոչ թե պաշարվածը...

Տասներեքերորդ ամսին աստվածային պատուհաս պա-թեց ամրոցում ապաստանած գաղթականների գլխին։ Ժան-տախտ ընկավ բերդում։ Օր օրի մեռնում էին նրա բնակիչ-ները, և ոչ մի ճար ու դարման չկար նրանց բուժելու։ Մահը անգթաբար հնձում էր հարյուրավորների կյանքը, ծաղրելով մի տարուց ավելի տևած նրանց չարչարանքներն ու զրկանք-ները։ Չէին հասցնում դիակները թաղել, մանավանդ, որ ամրոցի սահմանափակ տարածության մեջ տասնմեկ հա-զար զինվորի և վեց հազար կանանց ու երեխաների համար փոսի տեղ չկար...

Պարսիկները չէին հասկանում, թե ինչու բերդի գաղտնի անցքերից հայերը խումբ-խումբ դուրս էին գալիս և, փո-խանակ փախուստի փորձ անելու, ուղիղ գնում էին դեպի թշնամու բանակը և, դեռ նետահար չեղած, հանկարծակի մեռնում նրանց աչքերի առաջ։

Պարզապես ուզում էին իրենց վերջին վրեժը լուծել, վա-րակ տարածել պարսիկների մեջ, որոնք այս բոլոր տան-ջանքների անմիջական պատճառն էին։ Եվ որովհետև վա-րակը, հակառակի պես, չէր կպչում թշնամիներին, նրանք այդպես էլ զարմացած էին մնում ու չէին կարողանում բա-ցատրություն գտնել։

Աստծո ձեռքը Փառանձեմի վրա էր, նա անդադար շփվում էր մահապարտ հիվանդների հետ, բայց չէր վարակվում։ Ամբողջովին իրեն մոռացած, լրիվ ինքնահրաժարված, կա-րողանում էր թե՛ կազմակերպչի, թե՛ բժշկի, թե՛ քահանայի դեր կատարել։ Բայց անողորմ մահը մի ամիս անց անխտիր կոտորեց բոլորին, ու կենդանի մնաց միայն մի մարդ, հայոց աշխարհի տիկինը։ Եվ նա հասկացավ, որ դա ոչ թե աստծո ողորմությունն էր, այլ մեծագույն պատիժը։ Ուրեմն, անց-յալի մեղքերն ավելի ծանր էին, քան թե այդ մեղքերը քա-վելու նրա եռանդուն ջանքերը։

Նա մնաց հսկա ու դատարկ ամրոցում, բոլորովին մե-նակ, անթաղ դիակներով շրջապատված։ Ցերեկները փակ-վում էր պալատում, իսկ գիշերները, ջահը ձեռքին, ուրվա-կանի պես մաղ էր գալիս բերդի փողոցներում, լռության մեջ լսելով միայն սեփական ոտնաձայները։ Վառում էր ամրոցի

բոլոր ջահերը, ստուգում դարբասների ամրությունը, բաց անում բոլոր փակ դռները, փոխում նետերից պատառոտված արքայական դրոշակը՝ ոսկեհյուս արծվի զինանշանով։ Եվ քանի որ արդեն ազատ ժամանակ ուներ, հարկադրված հետևում էր իր վայելչությանը, հագնում թագուհուն պատշաճող գգեստներ, խնամքով հարդարում մազերը, դնում իր թանկարժեք զարդերը, որպեսզի մինչև կյանքի վերջին պահը, մինչև վերջին շունչը, արժանի լինի հայոց աշխարհի տիկին կոչվելու։ Դա ծանր պարտականություն էր, որ նա կատարում էր բարեխղճորեն ու երկրի արժանապատվությունը պահպանելու գիտակցությամբ։

Թշնամին տարակուսանքով էր դիտում, թե ինչպես ամրոցի վրա մեծ երամներով շարագուշակ պտույտ էին գործում գիշատիչ սև անգղները, անարգել վայրէջք կատարում ու անհետանում եռաշարք պարիսպների ետևում։ Բայց, միաժամանակ, նրանք ամրոցից լսում էին փողի զրնգուն ձայն, թմբուկների որոտ և ամեն օր տեսնում բերդի գլխին ծածանվող նոր դրոշակը։ Գիշերները բերդը և հատկապես պալատը ողողվում էին լույսերով և վանում բոլոր կասկածները։ Երբեմն լսում էին նաև թագուհու կրակոտ խոսքը, որով նա քաջալերում և ուժ էր տալիս իր զինվորներին։

Եվ հիմա էլ, փողը փչելուց ու թմբուկները զարկելուց հետո, գիշերաշրջիկ թագուհին, ջահը ձեռքին, մեն-մենակ կանգնել էր պարսպի մոտ կուտակված դիակների արանքում և, որքան որ ուժ ուներ կոկորդում, գոռում էր արցունքն աչքերին.

— Իմ քա՜ջ զինվորներ, ուրախ լուր եմ բերել ձեզ... Մեր նոր արքան մի քանի օրից ժամանում է կայսերական գնդի հետ... Մեր տառապանքը կհատուցվի արժանի հաղթանակով... Երկիրը կմաքրվի անօրեն պարսիկներից... Դավաճանները կստանան իրենց անխուսափելի պատիժը... Մենք կլուծենք Անհուշ բերդում մեռնող մեր սիրելի արքայի վրեժը... Մորթազերծ արված Վասակ սպարապետի հիշատակը կհավերժացնենք մեր զենքի գործած հրաշքներով... Ձեր նոր ու նախկին արքաների անունից շնորհակալություն ձեզ, իմ խիզախ արծիվներ... Իսկ ես խոստանում եմ մեկ առ

մեկ հիշել բոլորիդ անունները... որպես սիրո, հարգանքի ու երախտագիտության տուրք... Գեցցե՞ Պապ թագավորը...

Ձայնը կոկորդում կիսատ մնաց, և նա սարսափով գլխի ընկավ, որ ինչ-որ մեկը, չափազանց կենդանի մի մարդ, իսկապե՞ս լսում էր իրեն։ Լսում էր խիստ մեծ ուշադրությամբ ու նույնքան մեծ զարմանքով։ Փառանձեմն աչքերին չհավատաց, ու նրան թվաց, թե դա մեռելներից մեկն էր, որ հրաշքով հարություն էր առել, որպեսզի մենակ չթողնի իր թագուհուն և, թեկուզ մի ունկնդրի գոյության շնորհիվ, նրան փրկի այս կեղծ ու հիմար վիճակից։ Բայց մարդը չէր շարժվում ու քարացել էր աստշանքից։ Երևի նա էլ, իր հերթին, չէր հավատում տեսածին։ Ու դիակների կույտերի մեջ ցցված այդ երկու գերիրական մարդիկ կասկածանքով նայում էին միմյանց ու վախենում նույնիսկ մի չնչին շարժում անել։ Տեսիլք էր սա, պատրանք էր, աչքերի խաբկանք... Մթությունից ծնված զառանցանք...

Փառանձեմը ճանաչեց նրան ու սարսռաց երկյուղից։ Մերուժանն էր, հայի դեմքով, հայի աչքերով, հայի քթով ու պարսկական զգեստներով։ Արծրունյաց սիրուն նախարարը, որ լավ գիտեր գետնուղիների տեղը։

Մերուժանը չկարողացավ իր հիացմունքը զսպել և գլուխը հարգանքով խոնարհեց թագուհու առջև։ Այն, ինչին նա ականատես էր եղել քիչ առաջ, վեր էր սովորական տրամաբանությունից ու մարդկային ուժից։ Առավել ևս՝ թույլ, միայնակ ու անօգնական կնոջ։

Նա անխոս մոտեցավ դարբասին, քաշեց հսկայական սողնակը ու, դժվարությամբ հրելով, բաց արեց երկաթե ծանր դռները։ Ապա, առանց ետ նայելու, գլխիկոր հեռացավ ու անհետացավ խավարում, չուզենալով տեսնել թագուհու նվաստացումը։

Իսկ հայոց աշխարհի տիկինը, Փառանձեմ թագուհին, ջահը ձեռքին մի պահ կանգնեց բաց դռների մեջ, կարծես բերդի պահպանության իր վերջին պարտքը կատարելով, ապա, գլուխը բարձր ու հաստատ պահած, ընդառաջ գնաց իր ճակատագրին։ Մի ամբողջ հզոր բանակ, հազարավոր զինվորներով ու հազարապետներով, անթիվ ու անհամար

ղենքերով և դրոշակներով, տառերեր ամիս անց գերի վերցրեց ընդամենը մի կնոջ։ Ինչպես ինքն էր ասում՝ մի փոքր գիրացած ու մի քիչ էլ տարիքն առած...

Պատմիչն ասում է.

«Երբ Փառանձեմ տիկնոջը բերին հասցրին պարսից աշխարհը և Հայաստանի բոլոր գերությունն ու գանձերը և Փառանձեմ տիկնոջը թագավորի առաջ հանեցին, պարսից թագավորը մեծ շնորհակալություն հայտնեց իր զորավարներին։ Պարսից Շապուհ թագավորը կամեցավ նախատինք հասցնել Արշակունյաց տոհմին, հայոց աշխարհին և թագավորությանը։ Հրամայեց կանչել իր բոլոր զորքին, իր մեծամեծներին, ստորին պաշտոնյաներին և իր տիրած աշխարհի բոլոր մարդկանց, և այս բազմության մեջ բերել Հայաստանի տիկնոջը՝ Փառանձեմին։ Եվ հրամայեց հրապարակում շինել ինչ-որ սարք, որի վրա գցել տվեց տիկնոջը, և արձակել նրա վրա՝ անասնական պիղծ խառնակության համար։ Այս կերպ սպանեցին տիկին Փառանձեմին։ Իսկ գերիների ամբողջ բազմությունը տարան բնակեցրին մի մասը Ասորեստանում, մյուս մասը՝ Խուժաստան երկրում»։

Անհուշ բերդը, որը կոչվում էր նաև մոռացության բերդ, գտնվում էր Խուժաստան երկրում, Ծիբատանից դեպի Տիզբոն տանող ճանապարհին։ Անցորդները, որպես կանոն, մի քանի մղոն հեռավորությունից շեղում էին իրենց ճամփան, որպեսզի խուսափեն այդ մռայլ շինության հետ հանդիպելուց։ Մահվան հոտ էր գալիս բերդից ու նրա ամայի շրջակայքից։ Կյանքի ամեն մի շնչին արտահայտություն հավերժորեն երես էր թեքել աշխարհի այս անհրապույր ու երկյուղ ներշնչող անկյունից։ Նույնիսկ վայրի բույսերն ու մացառները, որ սովոր էին ամենուրեք տարածություն նվաճելու, կարծես խորշում էին այս վայրերից։ Օձերը, մողեսներն ու

կարիճները, որ վխտում էին համանման տեղերում, չգիտեմ։ Ինչու, երբեք բնակություն չէին հաստատում այստեղ։ Մի ափ հող անգամ անհնար էր գտնել մի քանի մղոնի վրա, որովհետև վառված քարերի ու խանձված ժայռերի թագավորություն էր չորսբոլորը։ Եվ այդ քարերն ու ժայռերը կարծես իրենց համատարած հաղթանակի կոթողն էին կերտել, ու բերդն ասես ոչ թե մարդկանց ձեռքերով էր կառուցված, այլ ի սկզբանե ստեղծված էր հենց բնության կողմից։ Միայն մարդիկ էին դիմանում այս ամայի ու դաժան անապատում, բերդի բնակիչները՝ բանտարկյալներն ու նրանց պահապանները։

Պահապանները չարացել էին կատաղի շոգից ու մշտական ծարավից։ Նրանց ականջներում գետի խշշոց կար ու տերևների սոսափյուն, որոնք խելքահան էին անում ու գազազեցնում էին բոլորին։ Եվ նրանք, երևակայությունից իսպառ զրկված, նախանձում էին ոչ թե զովասուն լեռնալանջին կամ անտառի փեշին բնակվող իրենց արյունակիցներին, ոչ թե հարուստներին կամ այլ տեղերում ծառայող զինվորներին, այլ բերդի բանտարկյալներին, որոնք ապրում էին խոնավ նկուղներում, արևի երես չէին տեսնում և, այդ բոլոր առավելություններով հանդերձ, նույնիսկ արժանանում էին պահպանության։

Բերդի մյուս բնակիչները, որոնք ցմահ բանտարկյալներն էին, դատապարտված էին լիակատար մոռացության։ Ոչ ոք իրավունք չուներ հիշելու կամ հիշեցնելու նրանց գոյությունը։ Ով հանդգնում էր խախտել այդ սրբազան օրենքը, վտանգի տակ էր դնում իր կյանքը։ Ահա թե ինչու, Անհուշ բերդը ըստ էության անիրական էր, նա ապրում էր միայն մարդկանց երևակայության մեջ, և նրա անունը ահ ու սարսափ էր պատճառում ամենքին։ Դա մեծերի համար մինչև օրս ստեղծված միակ հեքիաթն էր, և այդ հեքիաթին կուրորեն հավատում էին բոլորը։

Մինչդեռ բերդի նկուղներում կենդանի մարդիկ էին տառապում։ Եվ ամենասոսկալին այն էր, որ նրանք արդեն վաղուց է, ինչ տեղյակ չէին իրենց տառապանքի մասին։ Նկուղների հատակին ամրացված էին հաստ ցցեր, որոնց վրա

շարժական օղակներ կային։ Երկաթե շղթաների մի ծայրը միացած էր այդ օղակներին, իսկ մյուսը կապված էր բանտարկյալների ոտքերին ու ձեռքերին։ Նրանք վարժվել էին շղթաների ծանրությանը և հաշտվել իրենց ճակատագրի հետ։ Նրանց աչքերում վախեցնող մի խաղաղություն կար ու ահավոր անտարբերություն։ Երբեմն, մի քանի օր շարունակ, լսվում էին ինչ-որ մեկի հուսահատ աղաղակները, և բանտարկյալները, առանց որևէ հույզի, արձանագրում էին իրենց մտքում, որ նոր բնակիչ է հայտնվել բերդում։ Սակայն մի քանի օրից տհաճ աղմուկը դադարում էր, ու նորից հնչում էր երկաթե շղթաների հանգստացնող և ախորժալուր ձայնը։

Բերդում, առանց միմյանց երես տեսնելու, հարևանություն էին անում գահընկեց թագավորներն ու հասարակության տականքները, մեծամեծ պաշտոնյաներն ու հռչակավոր ավազակները, ապստամբ իշխաններն ու մարդասպանները։ Լիակատար հավասարություն էր տիրում զնդաններում. նույն շղթաները, նույն ցնցոտիները, նույն ջրիկ ճաշերը և նույն ճակատագիրը։

Հայոց արքան, որն ամեն ինչ կորցրել էր ու փոխարենն իր մոռացված անունը գտել, Անհուշ բերդի հին բնակիչներից մեկն էր արդեն։ Փորձառությունը նրան սովորեցրել էր խորամանկել բախտի հետ։ Երբ զգում էր, որ ուժերը լքում են իրեն և հուսահատությունը փորձում է բռնել իր կոկորդից, նա դիմում էր ամենապարզ միջոցի. ցերեկները քնում էր, իսկ գիշերներն արթուն մնում։ Դառնում էր միակ մարդը, որ չի ապրում բոլորի պես։ Եվ ժամանակների այդ անհամապատասխանությամբ նա խլում էր կապերը բերդի համընդհանուր կյանքից, առանձնանում մյուսներից և ստեղծում իր ուրույն աշխարհը։

Նրա դիմաց, քարե ցածրիկ պատվանդանի վրա, դրված էր Վասակ սպարապետի պաճուճենապատանքը։ Շապուհը մորթազերծ էր արել նրան, խոտով լցրել նրա մորթին ու դրել Արշակի առջև, որպեսզի նա բնավ չմոռանա իր անցյալը։ Որովհետև բոլոր բանտարկյալները, վաղ թե ուշ, գրկվում են անցյալի հիշողություններից և դրանով իսկ փոր-

Նում իրենց։ Սպարապետի մեջքից, որպես ծաղր ու նվաստաց-ցում, կախված էր սրի դատարկ պատյանը։ Նրա մագաղաթ-յա դեմքը, պարապ աչքերը, կախ ընկած ձեռքերը ու սպարա-պետական մաշված համազգեստը Արշակին թույլ չէին տա-լիս մղձավանջից ազատվելու և տառապանքը, մյուսների նման, վերածելու սովորության։

Նրա երկարած մորուքն ու մազերը է՛լ ավելի էին ընդ-գծում հայացքի պղտորությունն ու խախտվածությունը։ Մար-մինն արդեն վաղուց էր մեռել, և միայն միտքն էր տենդա-գին գործում։ Օր օրի աշխարհը փոքրանում ու տեղավոր-վում էր նրա մեջ։ Եվ մի մարդու մեջ տեղավորված աշխարհն ավելի լայն էր թվում ու ավելի հասկանալի։ Մի քիչ էլ, ու նա կարծես կըմբռնի կյանքի իմաստը, կիմանա, թե ինչո՞ւ է ծնվել, ինչո՞ւ է տառապում և ինչո՞ւ, հողից սերված լի-նելով, դարձյալ հող է դառնալու։ Նա խորասուզվում, կորչում էր իր էության մեջ, ապրում զուտ ներանձնական կյանքով, և ամեն օր նոր աշխարհներ էին ծնվում ու փլվում նրա ուղե-ղում։ Եվ նա վստահ էր, որ ինքը միակ կենդանի մարդն էր մոռացության բերդում, այնքան կենդանի, որ նույնիսկ կա-րող էր իր սիրելի սպարապետի փոխարեն էլ ապրել...

Մինչդեռ Անհուշ բերդը հենց ինքն էր անիրական։ Նա գոյություն ուներ միայն մարդկանց երևակայության մեջ, և նրա անունը ահ ու սարսափ էր պատճառում ամենքին։ Դա մեծերի համար մինչև օրս ստեղծված միակ հեքիաթն էր, և այդ հեքիաթին կուրորեն հավատում էին բոլորը...

Դրսում լույս է, սպարապետ... Արև, շող... Այդ մասին ինձ պատմել է մի բարի զինվոր... Նա ազնիվ աչքեր ուներ և չէր կարող ինձ խաբած լինել... Մարավը խեղդում է մարդ-կանց... Քրտինքը ջրի պես հոսում է նրանց մարմիններից... Անշարժ օդից կորվում է նրանց շունչը... Ճգնում են սեփա-կան ստվերի տակ կանգնել... Իսկ այստեղ՝ գո՛վ, հանգի՛ստ, ապահո՛վ... Ես ու դու պետք է շնորհակալ լինենք այդ ազ-նիվ ու բարի զինվորին, որն այսքան թանկ տեղեկություն-

ներ վստահեց մեզ... Նրա խոսքերից հետո միայն մենք զնահատեցինք մեր վիճակը... Եվ ասված է վկա, որ այդ օրվանից ի վեր գժգոհելու ոչինչ այլևս քիչ ունենք... Մենք ստացանք այն երանելի խաղաղությունը, որ երազում էինք տարիներ շարունակ... Եվ արին արժանի էինք լիովին... Մենք այս խաղաղությունը վաստակեցինք մեր ճակատի քրտինքով, մեր քրանաջան աշխատանքով ու մեր անշահախնդիր ծառայությամբ...

Բախտս բերեց, Վասակ... Ես ազատվեցի իմ մենակությունից... Մարդկանց մեջ ապրելու մենակությունից... Իսկ սա... Սա բացարձակ մենակություն է... Մաքուր և անարատ... Սա մարդու մենակություն է... Իսկ այն մեկը՝ արքայի... Դրա համար էլ ես սիրեցի իմ շղթաները...

Ես շատ բան եմ տեսել կյանքում... Կամ շատ լավ, կամ շատ վատ... Արքայի համար միջինը չկա... Իմ ուրախությունն էլ էր մեծ, տխրությունն էլ... Իմ սերն էլ էր խոր, ատելությունն էլ... Մի՞թե այս ծայրահեղությունները դու կարող ես մարդկային համարել... Դրանք ծերացրել ու մաշել են ինձ... Նաև աղքատացրել, դատարկել են իմ հոգին... Ես բնավ չեմ իմացել, թե ինչ բան է հասարակ և սովորական զգացմունքը... Նույնիսկ անուն չեմ ունեցել... Ինձ կոչել են միայն արքա... Զուրկ եմ եղել ընկերներից... Ո՞վ է այն խելագարը, որ կհամաձայնի ընկեր լինել արքային... Իսկ թշնամի՝ որքան ուզես... Չեմ կարել կնոջս ձեռքով պատրաստված հաշը... Չեմ զգացել այդ հաճույքը... Մինչդեռ ասում են, որ դրանից մեծ երջանկություն չկա աշխարհում... Ոչ ոք չի փորձել արքայի մեջ տեսնել մարդուն... Իսկ ես ընդվզել եմ դրա դեմ ու հաճախ արքայավայել չեմ պահել ինձ... Նույնիսկ թշնամիներս անձնական չէին... Էլի արքային էին պատկանում... Ոչինչ չի եղել իմ սեփականը... Անգամ պալատը իմ տունը չէր, այլ ժամանակավոր հանդրվան... Բայց ամենից ահավորը, որ ես տեսել ու զգացել եմ երբևիցե, ամբոխի մենակությունն էր... Ոչ թե անհատի, այլ բազմության... Ինձ թվացել է, թե ես իմ մենակությունը կարող եմ միայն ամբոխի հետ հաղթահարել... Իսկ իրակա-

նում, ոչ միայն չեմ հաղթահարել, այլև նրա մենակությունն էլ եմ կիսել... Սա էր մեր դաշինքի միակ արդյունքը...

Իսկ հիմա... Գիտե՞ս հիմա որն էր իմ միակ երազանքը... Հասնել այս դիմացի պատին... Գոնե մի անգամ շոշափել... Երեսս դնել խոնավ քարերին... Զգալ մամուռի ու բորբոսի գաղջ հոտը... Այ տես, ես կարող եմ այս երեք պատերին մոտենալ... Բայց սրան չեմ հասնում... Կարճ է շղթան... Տես, պառկած ձգում եմ ձեռքս, քիչ է մնում պոկվեմ մարմնիցս, բայց էլի չեմ հասնում... Կա՞րճ է, կա՞րճ է շղթան...

Սա ի՞նչ ճիչ էր... Ո՞ւմ հուսահատ ձայնն էր... Ո՞վ գոռաց այդպես ողբագին... Զգացի՞ր, որ դա մարդու պոռթկում էր, ոչ թե արքայի... Էլ ինչպե՞ս չսիրեմ իմ այս նկուղը, որն իմ անձը վերադարձրեց ինձ... որն իմ տունը դարձավ... իմ վերջնական օթևանը, որ ոչ ոք չի կարող խլել ինձանից...

Կա՞րճ է շղթան...

Ուտելու բան չբերեցին դեռ... Կարծում են, որ արքաները սով չեն զգում... որ նրանք պարտավոր են միայն ուրիշների մասին մտածել... Բայց ես ազատ եմ, սպարապետ... շատ ազատ եմ... անսահման ազատ... այսքան ազատ չեմ եղել երբեք... Գիտե՞ս ինչից զգացի դա... որ հիմա շուտ-շուտ եմ սովածանում...

Դու չկարծես, թե ես միշտ այսպես անբախտ եմ եղել... Չհավատաս ցնդած բանտարկյալի ամեն խոսքին... Ես եղել եմ մեծ ու երջանիկ թագավոր... Իմ երկիրը հզոր էր ու միասնական... Նախարարները՝ միաբան ու համերաշխ... Պարսկաստանն ու Բյուզանդիան դողում էին իմ առաջ... Ամեն կերպ ճգնում էին բարեկամություն հաստատել հայոց արքայի հետ... Իրենց քույրերին նվեր էին ուղարկում ինձ... Տեսակցություն խնդրում ինձանից... Հողեր ու երկրներ զիջում ինձ... Բայց ես ի՞նչ անեմ, որ երբ ծնվեցի, չար մարդիկ ինձ փախցրին օրորոցից... Ինձ փոխեցին... Իմ փոխարեն մի ուրիշ նորածին դրեցին ճոճքի մեջ... Եվ այդ օրվանից ամեն ինչ շուռ եկավ իմ կյանքում...

Պատանքդ ո՞ր տեղ ծակվել է, Վասակ... Խոտը երևում է միջից... Երբ մաշկդ լրիվ փչանա, ես խոտերը կհանեմ, կփռեմ գետնին ու կպառկեմ վրան... Փափուկ կլինի...

Հեյ, ո՞վ կա այդտեղ... Ես քո դեմքը չեմ տեսնում... Ո՞վ ես դու... Ո՞վ է ամեն օր դռան ետևից ինձ խոստանում փախուստ կազմակերպել... Ես չեմ սիրում անծանոթ ձայներ... Ես պետք է քեզ տեսնեմ, որպեսզի հավատամ... Առանց մարմնի չի կարող մարդկային ձայն գոյություն ունենալ... Ի՞նչ ես դու, քամու՞ ոռնո՞ց, դռան ճռճռո՞ց, տերևների սոսափյո՞ւն... Եթե փախչեմ, ես, անշուշտ, մեծ վարձատրություն կտամ քեզ... Իմ հպատակները արգեն իսկապես կերգրպագեն ինձ... Նոր միայն կծնվի իմ իսկական առասպելը... Գուսանները կավարտեն՝ արքային նվիրած իրենց երգերը... Ժողովուրդը կհյուսի իր արքայի հեքիաթը... Բայց ծիծաղս գալիս է, սպարապետ... Թող, որ մի կուշտ խնդամ... Այ, այսպես, աչքերիցս արցունքներ թափելով... Ես մատնեցի նրան... Ստորաբար մատնեցի... Որովհետև ինձ հանցանքի մեջ բռնեցի... Զգացի, որ տատանվում եմ... Սանր ու թեթև եմ անում... Այդ թշվառականը նորից ընտրություն էր դնում իմ առաջ... Ստիպում էր, որ նորից ղեկավարեմ երկիրս... Պատկերացնո՞ւմ ես, ի՞նչ լկտիություն, ի՞նչ անպատկառություն... Իսկ եթե Պա՞պն է առոք-փառոք նստած իմ գահին... Տիրան թագավորի օ՞րն ընկնեմ... Ես չէի կարող իմ հոր նման վարվել ու խանգարել իմ որդուն... Լավ արեցի, որ մատնեցի... Ինչքան ուզում ես ինձ մեղադրիր, մեկ է, չեմ զղջում... Թող սովորի հավատարիմ լինել իր արքային... Եվ իմ արարքը թող տիրասիրության դաս լինի շատերին...

Ուտելու բան այդպես էլ չբերեցին... Տեսնես այսօր ի՞նչ են տալու... Սիսեռո՞վ ապուր, թե՞ կորկոտով... Ես սիսեռովն ավելի շատ եմ սիրում...

Դու մի՛ մտածիր, թե իմ կյանքը ձանձրալի է ու միօրինակ... Այն, ինչ կորցրել եմ, երազներում եմ տեսնում ես... Պարզապես իրականությունը իր տեղն է փոխել... Ուրիշ հարթության վրա է ապրում ու ծավալվում... Եվ ինչո՞ւ դժգոհեմ, եթե այնտեղ ես ավելի երջանիկ եմ և ուժեղ... Եվ մի՞թե մեր ամբողջ կյանքը չանցավ երազների մեջ... Քի՞չ ենք ես ու դու երազել.. Հապա ի՞նչ էր կենտրոնացած հայրենիք ունենալու մեր տենչանքը... Մեր ամենօրյա ջանքերն ու ճիգերը... Մեր կրած զրկանքները... Մեր անմնացորդ

նվիրվածությունը... Մեր ինքնամոռաց աշխատանքը... Հանուն երազանքի չէի՞ն միթե... Իսկ ի վերուստ մեզ պարտադրված անողոքությո՞ւնը... Երկրի համընդհանուր շահերից բխող դաժանության անհրաժեշտությո՞ւնը... Դեռ հարց է, թե ո՞ւմ մեջ ավելի գութ և խիղճ կար, մե՞ր, թե՞ մեզ մեղադրողների... Եվ եթե մենք չխորշեցինք մեր բնության դեմ գնալ, արդյո՞ք մեր երազների իրականացման համար չէր... Բայց այդ երազներն էլ մերը չէին միայն... Մենք երազում էինք հազարավորների փոխարեն... Մենք դաժան էինք, որպեսզի մյուսները խղճամիտ լինեն... Մենք ամբողջ պատասխանատվությունը մեր ուսերին էինք վերցրել, որպեսզի մյուսները հանգիստ ու ապահով ապրեն... Իսկ հիմա մեր երազները մեզ են պատկանում... Մի՞այն ինձ ու քեզ...

Երեկ գիշեր պարսից թագավորն ինձ իր մոտ հրավիրեց։ Նա դիմել էր քավդյաններին, որոնք աստղերի և մոլորակների շարժումներով գուշակություններ են անում, և հարցրել, թե ինչպե՞ս վարվի հայոց արքայի հետ։ Հավատա՞ հնազանդ լինելու նրա խոստումներին։

Շապուհը, նրանց խորհրդով, արագավազ ուղտերով մարդիկ էր ուղարկել Հայաստան, որպեսզի հող և ջուր բերեն այնտեղից։ Սենյակի կեսը ծածկել էր այդ հողով ու վրան ջուր ցանել, իսկ մյուս կեսը թողել բնիկ երկրի նույն հողը։

Ես այդ չգիտեի, Վասակ... Այսինքն գիտեի, բայց կարծես խոր քուն էի մտել ու մոռացել... Ասես երազում մի ուրիշ երազ էի տեսնում...

Պարսից թագավորը, ձեռքս բռնած, ինձ հետ միասին ճեմում էր ընդարձակ սենյակում։ Պարսկական հողի վրա նա հարցրեց ինձ. «Արշակ թագավոր հայոց, ինչո՞ւ ինձ թշնամի եղար, ես քեզ որդու նման սիրեցի, իսկ դու, փոխարենը, իմ դեմ պատերազմեցիր»։

«Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ, —ասում էի ես, կողքից պարզ տեսնում էի ինձ և զարմանքով ու սարսափով լսում իմ խոսքերը։ Քիչ էր մնում արքունացնեի ինձ, որպեսզի աղատվեմ մղձավանջից։ Իմ ու Շապուհի երազները խառնվել էին իրար։ Ես ընկիր էի նրա երազի մեջ։ Հրաշքով

նրա նրազն էի տեսնում և ոչ թե իմը։— Պատժիր ինձ, և դու արդարացի կլինես»։

Մենք շարունակեցինք ճեմել, ու երբ ես իմ ոտքերի տակ զգացի հայկական հողը, պոկեցի ձեռքս, շրջվեցի ու ասացի նրա երեսին. «Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ ձեր պարթև տերերից հափշտակված բարձին ես նստել, և ես չեմ ձերի քեզ ու քո որդիներին իմ նախնիների վրեժը»։

Այսպես շարունակվեց մինչև առավոտ։ Իմ երազից փոխադրվում էի նրա երազը և ընդհակառակը։ Երբ պարսկական հողի վրա էի, ընկնում էի նրա ոտքերը, ներողություն խնդրում, զղջում հանդուգն խոսքերիս համար։ Իսկ երբ հայկական հողն էի զգում, ըմբոստանում էի, այպանում նրան ու սպառնում վրեժխնդրությամբ։

Ու ես երկրորդ անգամ ընկա Անհուշ բերդը։ Թույլ չտվեցի, որ շղթայակապ անեն ինձ։ Ես ինքս կապեցի իմ շղթաները։ Ավելի ամուր և ավելի վարժ, քան զինվորները կարող էին անել։ Նրանք զարմանքով էին նայում, որովհետև այնպես էի ինձ պահում, որ կարծես վաղուց ապրած լինեի այս բերդում...

Ինձ այդպես նախատինքով մի՛ նայիր, սպարապետ... Գիտեմ, որ դու վաղուց է, ինչ երազներ չես տեսնում... Վաղուց է, ինչ չես ապրում... Բայց չէ՞ որ ես եմ ապրում քո փոխարեն... Քեզ հետ միասին... Եվ քո երազներն էլ ես եմ տեսնում... Դու ինձ տվե՛լ ես այդ իրավունքը... Ես այն նվաճել եմ մեր համատեղ կյանքով... Մեր ընդհանուր ձգտումներով ու տենչերով... Ու ես հիմա կպատմեմ այն երազը, որ քեզ խոստանում եմ տեսնել այս գիշեր... Համբերիր, քիչ մնաց մինչև մթնելը... Առաստաղի տակ բացված այս լուսամուտը, որի վրա ավելի շատ երկաթ կա, քան երկինք, արդեն մոտեցնում է գիշերվա գալուստը...

Այս գիշեր, երբ մի քանի աստղ գողունի կմտնեն այս նեղ վանդակի մեջ, Շապուհը քեզ էլ կկանչի և հարց կտա. «Աղվես, այդ դո՞ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ շարչարեց, դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին։ Հիմա ի՞նչ կասես, թե որ քեզ աղվեսի մահով սպանեմ»։ Եվ ես երդվում եմ ամենայն սրբությամբ, որ դու

այսպես կպատասխանես նրան. «Ուրեմն, մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ հիմա աղվե՞ս։ Բայց մինչ ես վայսակն էի, ես հսկա էի, մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մի այլ լեռան վրա։ Երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ լեռն էի գետին տանում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին տանում»։ Ես Շապուհին կստիպեմ, որ նա հարցնի քեզ. «Դե ասա, իմանանք, այդ ի՞նչ լեռներ են, որ դու գետին էիր տանում»։ Ես քեզ չեմ զրկի նրան պատասխանելու հաճույքից. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ հունաց թագավորը»։

Տեսնես հիմա ի՞նչ են անում Հայաստանում, սպարապետ... Կարոտել եմ... Եվ քո կարոտը խառնել իմ կարոտին... Զորերը առաջվա պես խո՞րն են դեռ, և լեռները՝ նախկինի նման բարձրի՞կ։ Սիրանիները էլի հարսնանո՞ւմ են գարնանը։ Նոր հնձած խոտի թարմ հոտը խելքահան չի՞ անում նորից։ Հեռուներից վերադարձող թռչունները անսխալ գտնո՞ւմ են հայկական երկինքը։ Հղի կանայք դարձյալ ծնո՞ւմ են արու զավակներ։ Շարունակո՞ւմ է ցեղը բազմանալ։ Շինականների խմբապարը չի՞ դղրդացնում գետինը։ Հայի աղոթքը հասնո՞ւմ է արդյոք աստծուն։ Ձմեռները էլի խի՞ստ են և ամառները շո՞գ։ Ձինվորի սուրը դիմանո՞ւմ է թեկուզ կարճատև դադարին, չի՞ թպրտում պատյանի մեջ, չի՞ փորձում դուրս ցատկել։ Ամուր մնո՞ւմ է մարդու և մետաղի հրաշագործ դաշինքը։ Եվ ո՞ւր է արդյոք Հայաստանը, ո՞րն է հիմա, ի՞նչ սահմանների մեջ։ Ո՞րն է նրա հյուսիսն ու հարավը, որտե՞ղ են նրա արևելքն ու արևմուտքը։ Ո՞վ է նրա թագավորը։ Եվ, ընդհանրապես, երկիրը կա՞ արդյոք։ Է՛, սպարապետ, անիմաստ հարցերի մի շարան փռեցի քո ոտքերի տակ։ Ի՜հարկե կա, ի՜հարկե ամեն ինչ նույնն է, իսկ և իսկ առաջվա պես, ու իմ հարցերի անմտությունը է՛լ ավելի է զգալի դարձնում այն ցավը, որ միայն ես ու դու չկանք։ Նոր ծնված մանչուկի են կնքում և նրա համար անուն են ընտրում՝ առանց մեր մասնակցության։ Նոր հաղթանակներ են տանում թշնամիների դեմ, սակայն մենք բացակա ենք մերոնց շարքերում։ Չէի՞ր ուզենա թեկուզ ամենահետին զինվորը լինել այդ մարտերում։ Կռվի թեժ օրերին անգամ էլի մի արանք

են գտնում հարսանիք անելու, բայց մենք չենք կարող նրանց հրավերն ընդունել։ Ոսոխը քանդում է, իսկ հայը կառուցում է նորից, սակայն ոչ ես եմ այդ տեսնում, ոչ էլ դու։ Երբեմն էլ երևի հիշում են ինձ ու քեզ, բայց հիշում են... առա՜նց մեզ։

Դու մի ասա, ոչ ոք էլ ինձ չի առաջարկել փախչելու... Պարզապես պահապաններն են մտնում զնդանները և ճաշ բաժանում... Նրանց ձայներն են ինձ թյուրիմացության մեջ գցել... Ես երբեք մինչև վերջ չեմ ուտում, սպարապետ... Միշտ բաժին եմ թողնում քեզ... Որպեսզի ինքդ էլ համոզվես, որ կենդանի ես դեռ...

Ես իմ բաժին ջուրը չեմ խմի այսօր... Կլվամ ու կմաքրեմ քո պատանքը... Եվ իմ մտքով անընդհատ կանցնի ձեռք տալ քո պատմուճանին... Այն հույսով, որ քո շինած փայտե արձանիկներից մեկը գտնեմ ու հիշատակ վերցնեմ քեզնից... Բայց գիտեմ, որ ձեռք չեմ տա, վախենալով, որ գրպանդ հանկարծ դատարկ կլինի...

Դու հաճախ ես խնդրել, որ քեզ պատմեմ քո որդու մասին։ Եվ դու ամեն անգամ հպարտացել ես նրա քաջագործություններով։ Եվ հատկապես հուզվել ես այն բանից, որ Մուշեղ սպարապետը գերեվարել է Շապուհի կանանոցը, բայց ոչ միայն չի անարգել, այլև, ժանվարների վրա նստեցրած, վերադարձրել է Տիզբոն։ Իսկ Շապուհը, զարմացած նրա բարության, քաջության և ազնվության վրա, բաժակ է բարձրացրել ուրախության ժամանակ և ասել. «Ճերմակաձին թող գինի խմի», որովհետև Մուշեղը մի ճերմակ ձի ուներ։ Շապուհը իր գավաթի վրա նկարել է տվել Մուշեղի պատկերը՝ ճերմակ ձի հեծած, և խնջույքների ժամանակ այդ գավաթը դնում էր իր առաջ ու շարունակ նույն բանը կրկնում. «Ճերմակաձին թող գինի խմի»։

Մարտերից մեկում նա գերել է նաև Շապուհի դաշնակիցներից մեկին՝ Աղվանից Ուռնայր թագավորին։ Բայց նիզակի կոթով ընդամենը խփել է նրա գանգին ու բաց թողել։ Եվ գիտե՞ս ինչու։ Որովհետև իրեն իրավասու չի համարել հավասար լինել մի մարդու, որ թագ է կրում։ Ուռնայրին կարող էր գերի վերցնել միայն նա, ով նույնպես թագ

ունի։ Իսկ Մամիկոնյանները, լսո՞ւմ ես, սպարապետ, խորին պատկառանք ունեն թագի նկատմամբ, եթե այն նույնիսկ թշնամու գլխին է դրված։

Այսինքն... Այսինքն, նա շարունակում է իր նախնիների նույն սխալը գործել։ Անազնվության դեմ կռվում է ազնվությամբ, միամտաբար կարծելով, թե այդ հակասության մեջ է հայի ուժը։ Մինչդեռ դա մեր թուլությունն է, սպարապետ։ Վկա՝ ես ու դու, Անհուշ բերդը, իմ շղթաները և քո պաճուճենապատանքը... Առնականության պակասն է խանգարում բոլորիս... Ատելության անկարողությունը... Մարդկայնության գերառատությունը... Բարոյական հաղթանակների աստվածացումը...

Իմ զնդանը երևի միջանցքի վերջում է... Հապա էլ ինչո՞ւ են իմ ճաշը միշտ ուշացումով բերում... Երբեմն այնքան սոված եմ լինում, որ վախենում եմ շղիմանամ ու քո բաժինն էլ ուտեմ...

Ի՞նչ օր է այսօր... Տարվա ո՞ր եղանակն է... Օրվա ո՞ր ժամը... Ինչքան խնդրում եմ, չեն ասում ինձ... Չլինի՞ հայերեն եմ հարցնում, և նրանք չեն հասկանում ինձ...

Վերջապես ես ժամանակ ունեմ ինքս ինձ հետ խոսելու... Վաղուց է, ինչ չէի հանդիպել ինձ... Ընկերություն չէի արել ինձ հետ... Բարև, Արշակ... Ինչպե՞ս ես... Ողջ առո՞ղջ ես դեռ... Եթե սոված ես, ու քաղցից մշուշվում և մթնում են աչքերդ, ուրեմն, կենդանի ես... Գոհ եղիր դրանով... Ուրախացիր ու ցնծության սաղմոս ձոնիր երկնավորին...

Ես հիմա քեզ կպատմեմ քո քաղաքի մասին։ Ուշադիր լսիր ու սրիր ականջներդ։ Ոչ այն քաղաքի, որ կործանվեց, այլ նոր Արշակավանի, որ ես ամեն օր տեսնում եմ իմ երազներում։

Իմ նոր քաղաքում նորածիններն անմիջապես ոտքի կելնեն ու կքայլեն... Խմբով կմտնեն գետը, կլողան, կպառկեն ավազների վրա և արևի լոգանք կընդունեն... Ննդյան հենց առաջին օրը նրանք կգնան անտառ, որս կանեն, և ամեն մեկը մի-մի վայրի ոչխար կխորովի ու կուտի... Ծառեր կտապալեն ուսով ու տներ կկառուցեն իրենց համար... Հսկաներ կծնվեն իմ նոր քաղաքում, այս շղթանե՞ր վկա,

Արշակունի Արշակ, հսկաներ... Եվ այդ հսկաների արարիչը ե՞ս եմ...

Ծարավ եմ, սպարապետ... Կոկորդս չորացել է խոսելուց... Եթե չդիմանամ ու խմեմ այս թասի ջուրը, դու չվիրավորվես... Վաղը անպայման կլվամ պատանքդ... Խոսք եմ տալիս, էլ չեմ հետաձգի... Եթե մարդ շատ է ծարավ, ջրի մի մասը, որպես կանոն, թափվում է զգեստի վրա կամ հոսում գետնին... Իսկ երբ քիչ է ծարավ, ոչ մի կաթիլ կորուստ չի լինում... Տեսա՞ր ինչքան ջուր թափվեց... Ուրեմն, իմացիր, թե որքան էի ուզում խմել...

Շղթան կարճ է... Կա՞րճ է շղթան...

Այս մի շղթան թուլանում է... Պետք է զգուշացնել նրանց... Միայն թե մի տեղ նշան անեմ, որ չմոռանամ...

Նկուղի հեռավոր անկյունում, շղթաները կողքին հավաքած ու երկու ձեռքերով պինդ բռնած, գետնին պառկել էր Արշակը և անթարթ աչքերը հառել առաստաղին։ Նա կորել, անհետացել էր իր էության խորքերում։ Սա այն պահն էր, երբ աշխարհներ էին ստեղծվում ու փլվում նրա ուղեղում։ Նա ապրում էր գերիրական կյանքով և ասես նորից ու նորից մոտեցել էր առեղծվածի լուծմանը։ Շուտով, շատ շուտով, նա կհասկանա իր ծննդյան, իր կրած տառապանքների ու վերահաս մահվան իմաստը։ Բայց հայտնության խոստումը անընդհատ հետաձգվում էր մյուս օրվան, չպատճառելով ոչ մի ափսոսանք և հուսախաբություն։ Երջանիկ էր այս շղթայակապ մարդը, որովհետև կարողանում էր ձև ու մարմին տալ այն ամենին, ինչ իր կամքն էր թելադրում։ Դա ոչ թե սոսկ երևակայություն էր, այլ շատ ավելի մեծ բան, որին միայն միտքն էր ընդունակ հասնելու։ Մարմինն այստեղ էր, այս սառը ու խոնավ հատակին, իսկ միտքը թռչում էր հեռուներում։ Նա կառուցում էր երկիրը, ստեղծում միավորված և ուժեղ հայրենիք, ամրացնում նրա սահմանները, խորտակում ներքին ու արտաքին թշնամիներին, մեկը մյուսից իմաստուն որոշումներ արձակում, մեղվի համբերատար և տքնաջան

աշխատանքով հյուսում ներդաշնակ հանրություն, իսկ երեկոյան, խոնջացած ու վաստակած, վերադառնում էր Անհուշ բերդը, ծեծում դարպասները։ Ներս մտնում, փոխում շորերը ցնցոտիներ հագնում, իջնում զնդան և կապում իր շղթաները։ Ի՞նչ երևակայություն, եթե նա հոգնում էր, լարվում, հուզվում երբեմն նույնիսկ անհաջողություն կրում, կասկածում ու տատանվում, իսկ երբ մարմինն էր դառնում նրա լիիրավ տերը, նա անմիջապես մոռանում էր գերիրականի գոյությունը, սովածանում և մրսում, երազում դիմացի պատին հասնել, գեթ մի պահ դեմքը դնել խոնավ քարերին, ու եթե նրան պատմեին, թե քիչ առաջ ուր էր նա սլացել մտքով, ոչ մի կերպ չէր հավատա ու ոչինչ չէր կարողանա մտաբերել։

Նա չլսեց թե ինչպես նիուղի երկաթե ծանր դուռը աղմուկով բացվեց, և ներս մտավ բարձրահասակ ու հաղթանդամ մի մարդ։ Նա մի անվստահ քայլ արեց, սպասեց, որ աչքերը վարժվեն մթությանը, ապա հայացքով փնտրեց բանտարկյալին գտավ ու արձանի պես գամվեց տեղում։ Սո՛ւս, քնած է արքան։ Նա այդպես անշարժ կկանգնի և շունչը կպահի այնքան ժամանակ, մինչև որ արքան արթնանա քնից։ Երբ պահապանները դուռը հռնչացնելով փակեցին նրա ետևից ու կրճատեցին նկվորը տխրեց, որ այլևս չի կարողանում իր պարտականություններն անբասիր կատարել ու հսկել տիրոջ քունը։ Բայց տերը երևի խորն էր քնած, ու ոչ մի աղմուկ չէր ազդում վրան։ Նկվորը ուշադիր նայեց շուրջը, տեսավ արքայի ցնցոտիներն ու շղթաները, հողե մերկ ու անհարթ հատակին նետված ջրի խեցեղեն տձև անոթը, կեղտոտ ամանում կիսատ մնացած ապուրը, և հազիվ զսպեց արցունքները։ Սակայն նա իրավունք չուներ արտասվելու և խղճալու արքային, որովհետև իր առավելությունն էր ընդգծում դրանով։ Ինչ դրության մեջ էլ գտնվեր արքան, ինքը նրա հպատակն էր ու ծառան։ Այս վիճակում անգամ ի՞նքն էր խղճալի, ո՞չ թե տերը։ Կիսախավարում ինչ-որ ստվեր զգաց կողքին և կտրուկ շրջվեց։ Հանկարծ տեսավ քարե ցածրիկ պատվանդանին բարձրացած Վասակ սպարապետի ուրվականը և սարսափից սփրթնեց։ Նրանք կանգնած էին դեմ-

դիմաց և ակնապիշ նայում էին իրար։ Եկվորը, թուքը դժվարությամբ կուլ տալով, ձեռքի մի անորոշ շարժում կատարեց, կարծես ուզում էր շոշափել ուրվականին և ստուգել՝ տեսի՞լք էր դա, թե՞ իրականություն։ Բայց սիրտ չարեց և զգուշությամբ մի կողմ քաշվեց։ Ու նոր միայն նկատեց, որ արքայի աչքերը բաց էին։ Բայց նա չէր ուզում տեսնել եկվորին։ Չէր ուզում լսել նրա ոտնաձայները։ Վերացել, անջատվել էր իր կեղևից ու միայն մարմինն էր թողել զբաղանում, որպեսզի միամիտ պահապանները կարծեին, թե ճանճ անգամ չի կարող փախչել իրենց ձեռքից։

Եկվորը, շունչը պահած, մոտեցավ տիրոջը, կռացավ մի փոքր ու շշնջաց.

— Արքա...

Արքան չպատասխանեց։ Նա ճակատամարտ էր տալիս Շապուհի դեմ։ Եթե դա երևակայություն էր և ոչ իսկություն, ապա էլ ինչո՞ւ էր պարտվում։ Չէ՞ որ երևակայության մեջ հաղթում են միայն։ Հայոց զորքը նահանջում էր և մտնում վահանափակի մեջ։ Չորս կողմից կանգնած էին վահաններով զինված շարքեր, որոնք, բերդի պարիսպների նման, պաշտպանում էին իրենց մեջ պատսպարված բանակը։ Զորքը վերակազմվում էր, և ջղյա ու կաշյա պահպանակներ հագած զինվորները նորից անցնում էին հարձակման...

— Ես եմ, արքա.... Դրաստամատը... Քո սենեկապետը...

Արքան հարցական նայեց նրան, ապա հայացքը դժգոհությամբ շրջեց, աչքերը նորից հառեց առաստաղին ու այս անգամ տեսավ իր մահը։ Նրան հագցրել էին դրաստ և վարտիք։ Զգեստը չափից ավելի մեծ էր, ծալ-ծալ իջնում էր ներքև ու փաթաթվում մարմնին։ Մեծ պատմուճանի վրա ամրացրել էին գոտին, որից սուր էր կախված։ Ազդրին կապել էին փոքր թուրը, բայց վարտիքի ծալքը հասնում էր թրին և ծածկում մինչև սրունքները։ Արշակին զցել էին մի նեղ ու անվերջանալի միջանցք, և ասպարակիր զինվորները շրջապատել ու ամեն կողմից քաշքշում էին նրան։ Իսկ նա, զգեստի մեջ լող տալով, օդի մեջ թափահարում էր ձեռքերը և փորձում բռնել վենքերը։ Բայց չէր կարողանում, որովհետև

ամեն շարժման հետ ուշում էր պատմուճանը, ու նրա լայն ծալքերը մեկ սուրն էին թաքցնում, մեկ թուրը...

— Մի՞թե չճանաչեցիր, արքա... Ես եմ... Քո ծառան...

— Լավ արեցիր, որ եկար,— անորոշ ժպտաց արքան, ու նրա գլուխը թուլացած ընկավ ուսին։— Երբեմն ես ձանձրանում եմ մենակ...

— Հիշո՞ւմ ես, ասացի կգամ...— Հուզմունքից խռպոտվեց Դրաստամատի ձայնը, և նա լցվեց իր վիթխարի մարմնին չհամապատասխանող քնքշությամբ։— Դու խոստացար, որ եթե անհրաժեշտ լինեմ, իմաց կտաս ինձ... Պետք չէ, խընդրեցի ես քեզ... Ես կզա՛մ... Կզա՛մ...

— Բայց դու ինչպե՞ս հանդգնեցիր խախտել արքաների սահմանած կարգը,— հանկարծակի նստեց Արշակը, շղթաները խնամքով գարսեց փեշի մեջ, և հայացքն ու ձայնը սաստիկ խստացան։— Անհուշ բերդում բանտարկվածը հավիտյանս կտրվում է աշխարհից։ Ոչ ոք իրավունք չունի նրան հիշելու։ Ես չեմ թույլ տա, որ ինչ-որ սենեկապետ ոտնակոխ անի որևէ արքայի հրամանն։ Թեկուզ և ի՛նձ համար։

Եվ քանի որ հայոց արքան զայրացել էր մի ուրիշ արքայի հրամանը անտեսված լինելու պատճառով, Դրաստամատը մեղավոր զգաց իրեն, որովհետև դրանով ակամա վիրավորանք էր հասցրել հենց իր տիրոջը։ Եվ նա, մի կողմ թողած սեփական վիշտն ու կսկիծը, ստիպված եղավ հարգալիր ձգվել ու մանրամասն բացատրություն տալ։

— Ես գերի ընկա պարսիկների ձեռքը, արքա։ Հետո մտա պարսկական բանակ և մասնակցեցի քուշանների դեմ մղվող պատերազմին։ Մի անգամ պատահաբար փրկեցի արքայից արքայի կյանքը։ Նա կանչեց ինձ և հարցրեց, թե ինչ վարձատրություն կկամենայի։ Ու թեև ես գիտեմ, որ մահապարտ է նա, ով արյաց արքային կհամարձակվի հիշեցնել Անհուշ բերդի և նրա կալանավորների մասին...

— Հասկացա, սենեկապետ, հասկացա,— դժգոհությունից դեմքը թթվեցնելով, ընդհատեց նրան Արշակը։— Ես միշտ էլ չեմ ախորժել քո չոր և հանգամանալի զեկույցներից։ Ուրեմն, դու, վտանգի ենթարկելով անձդ, արյաց արքային

խնդրեցիր գոնե մի օրով այցելել ինձ... Իզո՜ւր... Դու պիտի վարձատրություն պահանջեիր...

Դրաստամատը տարակուսանքով նայում էր արքային և զարմանում, թե ինչու իր գալուստը ոչ մի ուրախություն չպատճառեց նրան։ Եվ մի փոքր խոցվեց սիրտը, որ իր այսքան զոհողությունները փաստորեն անպատասխան մնացին, նույնիսկ արժանացան նախատինքի։ Նա վախենում էր, որ արքան վնդի իրեն և թույլ չտա իր կարոտն առնելու։ Իսկ Դրաստամատը, որքան էլ դա իր համոզմունքներին հակասեր, որքան էլ իր պաշտոնական նախկին պարտականություններին անհարիր լիներ, կարոտել էր արքային։ Ավելի ճիշտ, իր անցյալն էր կարոտել։ Եվ կարոտը է՛լ ավելի էր սրվում այն ուրախալի մտքից, որ ինքը դարձյալ հարկավոր էր նրան, մի բան, որ միշտ եղել էր իր կյանքի գլխավոր իմաստը։ Ինչ մեղքը թաքցներ, երբ չէր զգացել իր անհրաժեշտությունը արքայի կողքին, հազվադեպ էր հիշել նրան...

Դրաստամատը ծնկի իջավ և մտաբերելով, որ իր հայտնվելու ու հեռանալու պահերը սովորաբար ինքն էր որոշում և ոչ թե արքան, սիրտ առավ դրանից, գոտու տակից հանեց բանալին ու սկսեց քանդել նրա կապանքները։

Արշակը շշմած նայում էր կապանքներից աղատված ձեռքերին ու ոտքերին։ Նա ձեռքերը դանդաղ, շատ դանդաղ բարձրացրեց ու մի ակնթարթ պահեց օդի մեջ, մերթ մեկն ուշադիր զննելով, մերթ՝ մյուսը։ Հետո դեմքը ծամածռվեց ցավից, և նա գոռաց տագնապով.

— Ձեռքերս ծանրացան, սենեկապետ...

Դրաստամատը հոգատարությամբ շփեց նրա դաստակները, բայց Արշակը ձեռքերը կոպտորեն խլեց նրանից և կտրուկ վեր կացավ։ Ու երկար, շատ երկար նայեց այն չորրորդ պատին, որը միշտ անհասանելի էր եղել իրենց։ Շրթունքներին մի առեղծվածային ժպիտ խաղաց, ու նա քայլերը դանդաղորեն ուղղեց դեպի պատը։ Մի պահ ակամա կանգ առավ, ու աչքերում մի անասելի վախ երևաց, որովհետև դա այն ճշգրիտ տեղն էր, որտեղից անդին չէին ձգվում շղթաները։ Մարմինն առաջ մեկնվեց, իսկ ձեռքերը

մնացին ետևում։ Դա այն շարժումն էր, որ կրկնվել էր տարիներ շարունակ, ու նրա մեջ արմատավորված բնազդը հիմա փորձում էր հաղթել գիտակցությանը։ Բայց նա կորցրեց հավասարակշռությունը ու հազիվ կարողացավ ոտքերի վրա մնալ։ Եվ հենց այս չնախատեսված հանգամանքն էր, այս նորությունն էր, որ փրկեց նրան։ Նա հասկացավ, որ կարող էր շարունակել ճամփան։ Մոտեցավ պատին, շոշափեց դուրս ցցված քարերը, ուզեց դեմ տալ երեսը, իր բոլոր չիրականացած իղձերի կարոտն առնել, բայց անսպասելիորեն շրջվեց և հուսախաբ մրթմրթաց ինքն իրեն.

— Նույն պատն է... Ոչ մի տարբերություն...

Նեղացած հայացքն ընկավ Դրաստամատի վրա, է՛լ ավելի մռայլվեց, լարեց ուղեղը, ճգնելով հասկանալ, թե ինչ է կատարվում։ Ո՞վ էր այս մարդը։ Ինչո՞ւ չէր ուզում ստորացնել, վիրավորել անօգնական բանտարկյալին։ Որտե՞ղ էր լայն պատմուճանի մեջ լող տվող ու ձեռքերն օդի մեջ թափահարող արքան։ Ինչո՞ւ էր դեռ կենդանի։ Ի՞նչ եղավ վահանափակում վերակազմված զորքը։

— Դրաստամա՛տ,— հանկարծ սիրով ու ջերմությամբ գոչեց նա։

Դրաստամատը, որ մինչև հիմա անհամբերությամբ սպասել էր այդ կանչին, ծնկի նետվեց արքայի առջև, փաթաթվեց նրան և սկսեց հեկեկալ։ Հեկեկում էր կյանքում առաջին անգամ, ու նրա վիթխարի մարմինը ցնցվում էր անընդհատ։ Տարիներով զսպված արցունքներն ու խեղդված հույզերը խորտակել էին բոլոր արգելքներն ու պատնեշները և դուրս հորդել, կարծես ափսոսալով զուր անցած ժամանակի և ուշացած պոռթկման համար։ Սա այն միակ բացառիկ դեպքն էր, երբ նա չանհանգստացավ, որ խախտում էր պաշտաճ կարգը և, արտասվելով, փաստորեն իրեն հավասարեցնում արքային։ Իսկ արքան գրկել էր նրա ուսը, գլուխը սեղմել ազդրին և մխիթարական խոսքեր էր մրմնջում թե՛ իրեն, թե՛ նրան։ Մի ակնթարթում հազար ու մի հուշ ծնվեց նրա աչքերի առջև, տեսավ ծանոթ ու հարազատ դեմքեր, լսեց սիրելի ու հեռավոր ձայներ, հանդիպեց իր թշնամիներին, որոնց վաղուց էր ներել ու որոնց նկատմամբ չուներ

այլևս ոչ մի քեն, շրջեց իր երազների երկրում, դիտեց մայրամուտը, սքանչացավ նրա հրաշք գույներով և, դաշտում կանգնած, չուեց ոտքերը, ձեռքերը տարավ բերանին ու կանչեց իրեն. Արշա-ա-ա՜-կ...

— Հը՞, ի՞նչ եղավ, ի՞նչ կատարվեց, ի՞նչ հասկացար, Դրաստամատ...

Զնդանի երկաթե ծանր դուռը նորից ճռնչալով բացվեց, և մի քանի պահապան ներս բերին ցածրիկ սայլակի վրա դրված մի մեծ տակառ, որից գոլորշի էր բարձրանում։ Երբ պահապանները դուրս եկան, Դրաստամատն իսկույն ոտքի կանգնեց, հույզերի զեղմանը հատկացված ժամանակն սպառված համարելով։ Սկսեց հանվեցնել արքային։ Արքան ձայն չհանեց և թույլ տվեց, որ սենեկապետը վարվի այնպես, ինչպես հարմար է գտնում։ Դրաստամատը բռնեց նրա ձեռքից ու տարավ դեպի տակառը։ Արշակը լռելյայն հասկացավ, թե ինչ էր պահանջվում իրենից։ Հնազանդորեն մտավ տակառի մեջ, բայց մտնելն ու ճղճղոց գցելը մեկ եղավ։

— Տաք է ջուրը... Վառվեցի...

Դրաստամատը բանի տեղ չդրեց նրա բողոքները և, խիստ գործնական տեսք ստացած, սկսեց վարժ շարժումներով լողացնել տիրոջը։ Արշակն ստեպ-ստեպ փորձում էր դուրս գալ տակառից, բայց սենեկապետը հայրական համբերությամբ զսպում էր կամակոր տիրոջը և բռնի ուժով նրան հրում տակառի մեջ։

— Ի՞նչ ես անում...— գոռգոռում և հայհոյում էր Արշակը։— Աչքերս օճառ մտավ... Ականջներս ջուր մի՛ լցրու...

— Համբերիր, արքա,— հանգստացնում էր Դրաստամատը։— Հիմա կվերջանա... Այս մի թասն էլ, և կվերջանա... Մի թաս էլ մնաց... Ազնիվ խոսք... Ընդամենը մի թաս...

— Խաբում ես... Ես չգիտե՞մ, որ խաբում ես... Ամոթ քեզ, Դրաստամատ... Ես այլևս քո ոչ մի խոսքին չեմ հավատա... Թո՛ղ, ի՞նչ ես անում...

Երբ նա դուրս եկավ տակառից, փնթփնթում էր ծերուկի պես և դեմքը շուռ էր տվել Դրաստամատից։ Խռովել էր, չէր ուզում նրա երեսը տեսնել։ Սենեկապետը մի մեծ սավանով

փաթաթեց նրան, սրբիլով շորացրեց գլուխը, ապա հագցրեց նոր և մաքուր զգեստներ։

Արշակը վերածնված զգաց իրեն։ Մարմինը թեթևացել ու սավառնում էր օդում։ Շնչառությունը բացվել էր, և արյունն արթնացել էր խոր քնից։ Պատմուճանն այլևս չէր ծանրանում մարմնի վրա։ Ուղեղը գործում էր ցավ պատճառելու չափ հստակ։ Ճշմարտություններն ազատվել էին իրենց պատյանից ու մերկացել։ Զնդանն արդեն դժոխք էր թվում նրան։ Շղթաները խորթ էին ու օտար։ Անհուշ բերդը գտնվում էր Խուժաստան երկրում, Եկբատանից Տիզբոն տանող ճանապարհին։ Այս խեցեղեն տձև անոթը իրենն էր։ Ինչպես նաև՝ պղնձե այս ամանը, որ միշտ դատարկ էր լինում։ Սա Վասակ սպարապետի պաճուճենապատանքն էր, խոտով լցված նրա մորթին։ Դրաստամատն ամենահարազատ մարդն էր իր համար։ Իսկ գերիրական կյանքը ուտելիքով լեցուն երկրավուն այս սեղանն էր, որ պահապանները բերեցին ու դրեցին զնդանի մեջտեղում։ Եվ Արշակը նոր միայն զգաց ու լրիվ գիտակցեց իր վիճակը։ Մինչդեռ վաղուց էր մոռացել։ Մինչդեռ չգիտեր պարզապես։ Տխուր-տրտում նայեց անկյունում նետված ցնցոտիներին, որոնք իր էության անբաժան մասն էին, ու խղճաց իրեն։ Համեմատեց իր անցյալն ու ներկան։ Տեսավ ծիրանակիր թագավորին ու շղթայակապ բանտարկյալին։ Այսուհետև նա անընդունակ կլինի մարմինը թողնելու զնդանում և հոգով ու մտքով տեղափոխվելու այլ աշխարհներ։ Կդառնա այս բերդի մշտական բնակիչը։ Կիմանա, որ չորրորդ պատի մեջ ոչ մի անհասանելի ու առեղծվածային բան չկա։ Դրաստամատը շուտով կգնա, ու նա նորից կմատնվի ահավոր մենակության։ Երանի՜ չգար։ Ընդհանրապես չգար։ Չպարգևեր այս արթնացումը, այս երջանիկ ակնթարթը։ Երանի ինքը չապրեր վերածնունդի այս պահը, չբաժանվեր իր շղթաներից ու ցնցոտիներից։ Որովհետև այդ կարճատև բաժանումն անգամ համազոր էր մահվան։ Քանի-քանի տարի էր պետք, որպեսզի նա նորից վարժվեր դրանց, ընտելանար այս դժոխքին ու վերագտներ այն երանելի վիճակը, որ նվաճել էր հազարավոր միանման օրերի ընթացքում և կորցրել մի քանի րոպեում։

— Ես քեզ շնորհում եմ ամենամեծ պատիվը, սենեկապետ,— հանդիսավորությամբ ասաց արքան, ախորժելով մաքուր զգեստների շփումից և կուշտ ուտելու իրական հնարավորից։— Ես թույլ եմ տալիս, որ քո ոտքերից մեկին կարմիր մաշիկ հագնես... Ես հաճույքով երկուսը կտայի քեզ... Բայց դու լավ գիտես, որ երկու կարմիր մաշիկ հագնելու իրավունքը արքան ունի միայն։

— Շնորհակալ եմ, արքա,— հուզվեց Դրաստամատը, վարակվելով տիրող յուրաքանչյուր խոսքում հնչող հավատից։— Դա մեծ պատիվ է ինձ համար։

Արշակը, քաղցից փայլող աչքերով, նետվեց դեպի սեղանը, նստեց ծայրին, և մտքովն իսկ չանցավ հրավիրելու սենեկապետին։ Եթե հրավիրեր, միանգամից փուլ կգար հեքիաթը, կիմաստազրկվեր խաղի խորհուրդը։ Նա մոտ քաշեց ճաշի ընդհանուր ափսեն, լիքը լցրեց իր պնակը, մի մեծ կտոր միս դրեց բերանը ու, գրեթե առանց ծամելու, կուլ տվեց։ Հետո հայացքը մի պահ սառեց սեղանի առատ բարիքների վրա, որոնք ինչ-որ հուշ զարթնեցրին, ու նա արձանի պես քարացավ նորից։

— Գահնամակում փոփոխություն չկա՞, սեննկապետ...

— Նախարարական աթոռների հերթականությունը նույնն է, արքա...

— Ուրախ եմ իմանալ, որ ուրեմն չի խախտված մեր միաբանությունը։ Եվ քանի որ ոչ ոք չի պատժվել, ոչ ոք չի մեղանչել գահի դեմ... ոչ թե իմ, այլ գահի... թող ամեն մարդ նստի սահմանված տեղում։

— Հրամանդ ի կատար, արքա։

Արքան, որքան էլ տարօրինակ լիներ, ոչինչ չէր ուտում, միայն կում-կում գինի էր խմում։ Տեսնում էր ազնիվ օթոցներով ծածկված սեղանը և նրա շուրջը շարված կիսարոլոր ու շքեղ բազմականները։ Լսում էր տասնյակ գդալների, պատառաքաղների ու դանակների համերաշխ չխկչխկոցը և կոչնականների ծնոտների միասնական կափկափյունը։ Տաճարապետի ուղեկցությամբ ներս էին մտնում սպասավորները, ձեռքներին՝ սկավառակներ ու ափսեներ։ Տակառապետի առաջնորդությամբ ելումուտ էին անում սպիտակազգեստ

Մատովակները։ Պատի տակ նստած գուսանները հնչեցնում էին ներբողական նվագներ, ու վարձակներն իրենց պարով մարմնի գովքն էին երգում ու փառաբանում կյանքի քաղցրությունը։

— Ո՞վ է Հայաստանի թագավորը,— հանկարծ հարցրեց արքան։

— Քո որդին, արքա... Պապը...

— Ի՞նչ է անում Փառանձեմ թագուհին։

— Առոք-փառոք ապրում է որդու հետ...

— Ո՞վ է կաթողիկոսը։

— Ներսեսը, արքա...

— Իսկ սպարապետը Մուշե՞ղն է դարձյալ։

— Մուշեղն է, արքա։

— Իսկ Գնե՞լը։ Վախեցեք այդպիսի մարդկանցից, Դրաստամատ։

Ամեն անգամ, պատասխանը լսելուց հետո, նա ոչ մի վերաբերմունք չէր ցուցաբերում և միայն գլխով էր անում։ Թվում էր, թե հարցերը տալիս էր հենց այնպես, հավուր պատշաճի։ Միայն Փառանձեմի մասին տեղեկությունն ստանալուց հետո հարևանցի մի հայացք գցեց Դրաստամատի վրա, ապա շարունակեց կում-կում խմել։

Դրաստամատը ոգևորված պատմում էր, թե ինչպես նիզակավոր գնդերը մոլեգնաբար հարձակում էին գործում Շապուհի զորքերի վրա և ախոյաններին տապալելիս աղաղակում «Ա՛ռ, քաջ Արշակ»։ Ամեն մի սպանված թշնամու նվիրում էին իրենց նախկին թագավորին, բացականչելով. «Մատաղ եղիր Արշակին»։

Արքան կարծես չէր լսում ու շարունակ մեքենաբար գըլխով էր անում։ Մինչդեռ մտովի խորհուրդներ էր տալիս որդուն։ Հիշեցնում էր իր տված դասերը։ Արդյոք նա կարողանո՞ւմ էր գանազանել հեռավոր թմբուկների զարկերը։ Զոկո՞ւմ էր իշխանության, դավադրության, քծնանքի, աշխատանքի, մենակության, դաժանության ձայները։ Թե՞ իզուր անցան հոր ջանքերը։ Սգում էր կնոջ մահը և ուշացումով, աններելի ուշացումով խոստովանում, որ շատ է սիրել նրան։ Պարզապես ծանր ու հոգսաշատ տարիները թույլ չեն

տվել զգալու իրենց համատեղ կյանքի երջանկությունը։ Ներիր ինձ, Փառանձեմ, ներիր, եթե այն աշխարհում էլ դեռ խռով ես մնացել ինձանից։ Աղերսում էր Ներսեսին, որ նեցուկ կանգնի Պապին, չկարծի, թե այդքան հեշտ է թաղել հայոց թագավորությունը և հասկանա, որ եկեղեցին պետք է ոչ թե հակադրել, այլ զուգակցել երկրի միասնական շահերին։ Իսկ Մուշեղին նախատում էր Շապուհի գերված կանանոցը և Աղվանից Ուռնայր թագավորին ազատ արձակելու համար ու ավագի իրավունքով սովորեցնում, թե առանց ատելության հաղթանակ չկա ու չի կարող լինել...

— Ի՞նչ կա Արշակավանում, սենեկապետ,— վերջապես, իր տատանումները հաղթահարելով, արագ հարցրեց արքան, կարծես վախենալով, որ հանկարծ միտքը չփոխի։ Ապա գինուց կարմրած աչքերը սպառնալից հառեց Դրաստամատին։— Ասա՛, ասա՛, դու ինձ մի խնայիր։ Դու այսօր պարտավոր ես ավելի անկեղծ լինել, քան երբևէ։

— Հետքն անգամ չի մնացել, արքա,— անցյալի լավ օրերի նման՝ անհույզ և շիտակ պատասխանեց Դրաստամատը։— Միայն հող ու մոխիր... Անտեր շներ են թափառում... Ճրագալույսին ոռնում են երկար...

— Հետո՞, սենեկապետ,— անհամբեր հարցրեց արքան ու անակնկալ գոռաց.— Հետո՛, հետո՛...

— Բայց գալիս են, արքա, գալիս են,— կարծես տիրոջ ձայնից ներշնչված, ոգևորվեց Դրաստամատը, իրեն հանցավոր զգալով, որ այլևս անկարող է նախկին չոր ու ցամաք սենեկապետը մնալ։— Երկրի բոլոր կողմերից շինականներ են գալիս... Սրբավայր է դարձել ամայի տափաստանը... Զինվորները քշում են նրանց, պատժում, մտրակում, զնդան գցում... Բայց էլի՝ գալիս են...

— Տեսնո՞ւմ ես, իմ ազատ քաղաքի գաղափարից է հառնելու այս երկիրը, սենեկապետ,— արքայի թախծոտ աչքերը խոնավացան, ու նա արդեն բնավ չէր կասկածում, որ սա էր իր կյանքի ամենաերջանիկ պահը, իր կրած տառապանքների, իր ծանր վախճանի միակ արժանի հատուցումը։— Սիրո, հավասարության ու աշխատանքի գաղափարից... Թող հայոց նախարարները ոռնան, մռնչան կատաղությու-

նից, թող ես փտեմ այս գարշահոտ զնդանում, բայց ես հո՛ւշը ստեղծեցի, սենեկապետ, հո՛ւշը... Եվ այդ հուշը անցնելու է սերնդից սերունդ— Ու, արդեն զվարթ, արդեն անհոգ, խանդավառությամբ կրկնեց իր վաղեմի հարցը.— Հը՞, ի՞նչ եղավ, ի՞նչ արեցի, ի՞նչ հասկացար, Դրաստամատ։

— Դու հանդգնեցիր առաջ անցնել ժամանակից, արքա,— ջանասիրաբար բացատրեց Դրաստամատը, նորից մտնելով իր սիրելի դերի մեջ։— Քեզ ոչ ոք չէր կարող հասկանալ։ Անգամ ժողովուրդդ։ Դու մենակ մնացիր։

— Իսկ ես, սենեկապետ, ես մինչև վերջ հասկացա՞ իմ ժողովրդին։— Ապա մոայլվեց, վեր կացավ, պատից վերցրեց պահապանների բերած ջահը, մոտեցավ սպարապետի պաճուճենապատանքին ու լուսավորեց այն։— Մենա՞կ... Շա՞տ մենակ... Այնքան մենակ, որքան արքաները կարող են լինել միայն... Ասա՛, ասա՛, ինձ մի խնայիր... էլ ի՞նչ կատարվեց, ուրիշ ի՞նչ հասկացար...

— Բայց դու միայն գլխով առաջ անցար ժամանակից, արքա, միայն գլխով,— արհեստ և համոզմունք դարձրած ուղղամտությամբ շարունակեց Դրաստամատը։— Իսկ հոգով ու մարմնով կապված էիր քո ժամանակին։ Որպես բիրտ և դաժան մի բռնապետ։ Այս հակասությունն էր քո ողբերգությունը, արքա...

— Շնորհակալ եմ, սենեկապետ։ Շնորհակալ եմ քո անկեղծության համար։

Նա ջահը նորից ամրացրեց պատին և, չգիտես ինչու, անհանգիստ սկսեց շուրջը դիտել, կարծես ինչ-որ կարևոր բան էր փնտրում։ Ապա լուռ պտտվեց զնդանում, անընդհատ ոտքերի տակ նայելով։ Նա շփոթված մոտեցավ Դրաստամատին, մեղավոր մի հայացք գցեց վրան և անօգնական թոթվեց ուսերը։

— Բայց ես քեզ ի՞նչ նվիրեմ, Դրաստամատ... Ի՞նչ հիշատակ թողնեմ քեզ... Գուցե այս պատա՞նքը... Սակայն նա օդի ու ջրի պես պետք է ինձ... Ներիր, որ չեմ կարող տալ... Առանց նրա ես կգժվեմ մենակությունից... Գուցե այս թա՞սը... Բայց նա ժանգոտ է ու տձև... Գուցե իմ ցնցոտինե՞րը... Բայց դրանք կեղտոտ են և արքային ոչ վայել...

Եթե հրաժեշտի ժամը գա,— հանկարծ ուրախացավ նա, որովհետև մտքում արդեն ընտրություն էր արել,— ես քեզ կնվիրեմ իմ շղթաները... Խոստացիր, որ լավ կպահես... Չես թողնի, որ ժանգոտվեն... Ամեն օր ձեթ կքսես... Ու գիշերները քնելիս գլխիդ տակ կդնես... Որպեսզի հիշես ինձ... Չմոռանաս արքայիդ...

— Երախտապարտ եմ, արքա... Ես գիտեմ, որ այդ շղթաների մեջ քո մասնիկն էլ է ապրում...

Արքան մոտեցավ սեղանին, մի խնձոր վերցրեց, ապա սկսեց ինչ-որ բան որոնել։ Դրաստամատը գլխի ընկավ, որ նա դանակ էր փնտրում։ Գտավ, վերցրեց դանակը, բայց չտվեց տիրոջը։

— Ծ՛ս,— շշուկով խնդրեց նա։— Ծ՛ս կմաքրեմ... Ինքս...

Արքան նայեց նրա աչքերին, ժպտաց, բացասաբար շարժեց գլուխը և դանակը վերցրեց նրա ձեռքից։ Ապա, քթի տակ ինչ-որ երգ մմռալով, ման եկավ կիսամութ զնդանում և սկսեց կեղևել խնձորը։ Նա այդ անում էր մեծ զգուշությամբ և ուշադրությամբ, կարծես մի հանդիսավոր և սրբազան արարողություն էր կատարում, կարծես բագինի վրա զոհ էր մատուցում աստվածներին։

— Քեզ համար եմ մաքրում, Դրաստամատ... Միշտ ինձ են ծառայել միայն... Իսկ ես ամբողջ կյանքումս երազել եմ, որ գոնե մի անգամ ինքս ուրիշի ծառայեի... Շնորհակալ եմ, սենեկապետ... Շնորհակալ եմ, որ չես մերժում արքայիդ ծառայությունը...

Հանկարծ հասակով մեկ նա փլվեց գետնին, խնձորը ձեռքին կուչ եկավ, և մի ահավոր մռնչոց լցվեց զնդանը։ Դրաստամատը պատից պոկեց ջահը, խուճապահար մոտ վազեց, ծնկի իջավ ու տեսավ, որ մրգի դանակը ցցված էր արքայի կրծքին։ Իսկ նա, աշխարհին ուղղված իր վերջին աղաղակն արձակելուց հետո, խաղաղ պառկած էր մերկ ու անհարթ հատակին, ու բաց աչքերի մեջ նույն հարցն էր քարացել. հը՞, ի՞նչ եղավ, ի՞նչ կատարվեց, ի՞նչ հասկացար, Դրաստամատ։

— Գոնե կուշտ ուտեիր, արքա,— արցունքն աչքերին, ափսոսանքով շշնջաց Դրաստամատը։— Տես, ի՞նչ փառավոր սեղան է... Որքա՜ն գինի կա սափորների մեջ...

Պերճ Զեյթունցյան, ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ, Перч Зейтунцян, АРШАК ВТОРОЙ (На армянском языке). Издательство «Советакан грох», улица Теряна, 91, Ереван — 1977.

Խմբագիր՝ Զ. Մ. Ղազարյան, նկարիչ՝ Վ. Կ. Մանդակունի, գեղ. խմբագիր՝ Զ. Ե. Գասպարյան, տեխ. խմբագիր՝ Ա. Վ. Սահակյան, վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ԻԲ—415: Հանձնված է շարվածքի 30/V 1977 թ.: Ստորագրված է տպագրության 14/X 1977 թ.: Թուղթ № 1 84×108 1/32, տպագ. 16,62 մամ.= =27,93 պայմ. մամ., հրատ. 23,7 մամ.+ 1 ներդիր: Պատվեր 1187: Տպաքանակ 30000: ՎՖ 06590: Գինը՝ 1 ռ. 80 կ.

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65:

Типография № 1 Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул. Алавердяна, 65.